

ՏՈՒԹ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԷՅԵԱՆ

**ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ
ԳՈՅԱՄԱՐՏԸ**



1959

Տպ. ՍԵՒԱՆ, ՊԵՂՈՒԹ

Սասունցի մըն է հեղինակը — Սասնոյ Շէնիկ գիւղէն:

Հարազատ Սասունցի մըն է, այսինքն հարուստ ժառանգորդը ցեղային ենթագիտակցական հարստութիւններու, որոնք զինք բերած են գրելու, ինչպէս որ տարած են կռուելու Սերոբները, Գէորգ Զաւուշները եւ անոնց ձեռները:

Ուշագրաւ գիրք մըն է ասիկա — «ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԳՈՅՍՄԱՐՏԸ»: Նիւթը՝ Սասունցիներու — Դաւիթներու եւ Մհերներու իրական ու պարզ ժառանգորդներուն — գերմարդկային ապստամբութիւնն է (հեղինակին բառով՝ «Գոյամարտ»), 1915 թուի Փետրուարի 4-էն մինչեւ Յուլիսի 27-ը (մօտաւորապէս եօթ մահսներ): Հայկական մեծագոյն հերոսամարտերէն մէկն է ասիկա. շքեղ՝ իր կերպով, իր խիզախութեամբ, իր տարօնականութեամբ:

Արդիւնքով: Պարտութիւն Տարօնի մէջ, 1915 թուականին: Յաղթութիւն Այրարատեան նահանգին մէջ, 1917-1921 թուականներուն:

Սասուն ցանեց, Այրարատը հնձեց: Թող ապագայ խղճահար եւ ճշմարիտ պատմագիրը վերծանէ այս մեհնագրութիւնը:

* * *

Այս գիրքը վէպ մը չէ, պատմագրութիւն մը չէ, ոչ ալ յուշագրութիւն. բայց անտարազելի այս գործը ունի վէպի մը կառուցումն ու գնացքը, պատմագրութեան մը վաւերականութիւնն ու դատողութիւնները եւ յուշագրութեան մը կենդանի անմիջականութիւնը: Աւելին՝ անոր հեղինակը այս գործին համար տառապած է այնքան որքան Ս. Աբովեան իր «Վէրք»ին համար: Ըսել կ'ուզենք՝ բժիշկ Երէցեանի գործը շաղախուած է կեանքի կրակով ու սիրտի տենդերով:

Այս գործին հեղինակը (արդէն 60-ը անցած), հակառակ աստիճանով համարարանական եւ ասպարէզով բժիշկ մը ըլլալուն, գիւղացի մըն է, Սասունցի՝ գիւղացի, անարբագրելի պարզութեամբ եւ տարերային նախնականութեամբ: Գրական-գեղարուեստական օրէնքներուն անդիտակ՝ աշուղի մը յանդգնութեամբ ու արուեստով իջած է կրկէս, նուազելու ի՞ր կերպով, եւ եթէ Սայեաթ Նովան չէ եղած, եղած է աւելի քան Աշուղ Ջիւանին:

«ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԳՈՅՍՄԱՐՏԸ» նիւթով եւ արուեստով այնքան նմանութիւններ կը բերէ իրմէ մէկ ու կէս հազարամեակ առաջ ստեղծագործուած Փաւստոսի, Եղիշէի եւ Յովհան Մամիկոնեանի գործերուն:

Անոնց պէս է՝ պատմութիւն, բանաստեղծութիւն եւ Ո՛րի: Եղիշէ պատմագրի պէս կրնանք ըսել՝ «մեծ է ոգի բան զմարմին»:

Տեղը չէ այս գիրքը ընդարձակ վերլուծման ենթարկելու, իր արուեստը, իր առաւելութիւններն ու իր թերիները մասնանշելու: (Ունի՞ թերիներ, արուեստէն առաջ՝ մօտեցումի՞...): Ատիկա կ'ուզէ երկար ժամանակ, եւ հաւանորէն մենք առիթը ունենանք այս գործին անդրադառնալու:

Այս գործին մէջ կան շարք մը էջեր, ուր բարձրագոյն գրականութիւն մը իրագործուած է, անմահ էջեր՝ որ պիտի զարդարեն մեր գրականութիւնը:

Ուրախութիւն է յայտնել թէ այս գործը ունի իր յաջորդ մասերը. հազարաւոր էջերէ բաղկացած, որոնք կը սպասեն իրենց իւրոյս ընծայման բախտաւոր ժամանակին:

Մինչ այդ՝ մեզի կը մնայ հեղինակին անդրանիկ այս հատորը մատուցանել հայ գրականութեան սեղանին եւ ըսել՝

«Ճաշակեցէք եւ տեսէք, զի քաղցր է...»:

ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆԵԱՆ



Ահա՛ լեռնաշխարհը կը ցնցուի հրաբխային ուժով մը. բոցավառեր են հորիզոնները, և արծիւները, թառած լեռներու բարձունքներուն, կորովաբիւր կը դիտեն Դուրանի հարթավայրը և տիգրիսեան գետահովիտը:

Այո՛, երամն է հերոսներու, որոնք բոցեղէն ամպերու մէջէն իրենց աստուածային ցասումը կը թափեն արիւնարբու ջուրին վրայ, որ կը փորձէ բարձրանալ լեռնաշխարհ՝ կոտորելու և աւերելու արծիւներուն բոյնը:

Արիւնի ծովուն մէջ, լեռնաշխարհը ուժանակային կղզի մըն է և կուրծք կու տայ չորս կողմէն եկած դժոխային կոհակներուն, որ կ'ոռնան կատաղութեամբ իր կողերուն վրայ...:

Ահա՛ կուրղըքի լեռնաշղթային վրայ, հրացայա աչքերով հսկաներ, որ կեանքի և մահուան փոթորիկի մէջէն, հուժկու բազուկներով, դէպի վար կը շարտեն թուրք-քրտական հորդանները, որ Դուրանէն կ'ուզեն բարձրանալ լեռնաշխարհ...:

Ահա՛ Ծովասարի բարձունքէն, կորիւններու դղրդագին գուպարը, որ կը շանթահարէ զինուորական ու աշխրեթական ոյժերը: Եւ կերինի, կապլորի, Տարկոշի ոյժերը, առնական արիութեամբ ու հզօր թափով, տիգրիսեան գետահովիտին վրայ հրեղէն փոթորիկներ կը վազցնեն...:

Ահեղ այս մարտին մէջ, լեռնաշխարհը, որ իր գերագոյն ճիգերն է հրապարակ հաներ ընդդէմ բոլոր պղտոր հեղեղներու, կը կառավարուի վիթխարի Անտոքի հեղինակութեամբ, կեզրոն՝ առասպելական քաջերու: Եւ ի՞նչ հոյակապ խիզախում ու ի՞նչ արիութիւն կանգնիլ ահարկու վտանգին դէմ և խաղալ կեանքին հետ ցաւագինօրէն՝ լեռնաշխարհի բոլոր ճակատներուն վրայ: Կը անքայ հայկական զէնքը բոցերու մէջէն, և թուրք-քրտական թնդանօթներն ու գնդացիրները որոտումի փոթորիկէն կը տառապին:

Ծանր է այս գոյամարտը, երկար պիտի չկրնայ տեւել. գոյամարտի ոյժերու հերոսական թախչքները կրնան դարեր ներշնչել, բայց չեն կրնար հայ ժողովուրդի բնաջնջման մահավճիռը փոխել. այդ թախչքները, շղթայի մը օղակներուն նման, պիտի կտարտուին հրեղէն փոթորիկներու մէջ, ինչպէս ամպերու շերտերը՝ ցուրտ ու դաժան հողմերէն...

Այո՛, ուժգին և ահարկու բախումներու մէջ, գոյամարտի ոյժերը կրնան փշրուիլ, իսկ սմանք ալ, կրնան խուսափիլ ու տարբեր հորիզոններու վրայ նոյն թախչքները գործել. եթէ չեն կրնար փոխել հայ ժողովուրդի մահավճիռը, նոյն մահավճիռը պիտի տարածեն թուրք և քիւրտ կեանքին վրայ...

Ահա՛ զինուորական հրամանատարներն ու աշիրեթապետերը, որոնք զինուորական և աշիրեթական ոյժերը Տարօնի և Տիգրիսի գետահովիտներէն կ'առաջնորդեն դէպի լեռնաշխարհը, խաղալու համար այն մեծ ողբերգութիւնը, հայկական կեանքի վրայ, որ ծրագրուած է Բարձր Դրան որջին մէջ, և որ այնքան վայրագօրէն գործադրուեցաւ հայկական զանգուածներու վրայ՝ զանազան նահանգներու մէջ:

— Հիւսնի՛ պէյ, կառավարութիւնը խտաիւ կը հրահանգէ, առանց ժամանակ կորսնցնելու, քանդել այս աւազակային որջը, — ըսաւ Նուրի պէյ. կը կարծէ՞ք թէ որեւէ դժուարութիւն կըրենք, լռեցնելու համար այս աւազակները:

— Հրահանգելը դիւրին է, Նուրի՛ Պէյ, բայց խնդիրը հրահանգը գործադրելն է, զոր այնքան ալ դիւրին չեմ գտներ. յամենայն դէպս, մտահոգիչ պարագայ մըն է, և զգուշութեամբ պէտք է շարժիլ, — պատասխանեց Հիւսնի Պէյ:

— Ի՞նչ կ'ըսէք, մեր երկրի բոլոր սահմաններուն վրայ, կռիւի մէջ ենք. այդ մեզ չի մտահոգեր. այս փոքրիկ աւազակային որջէ՞ն պիտի մտահոգուինք: Պէ՛տք է անվարան քալենք. թերեւս կորուստներ ունենանք. նոյնիսկ կորուստներու գնով ալ ըլլայ, պիտի փճացնենք այդ որջը: Մենք Դուրանը հեշտութեամբ կերանք. այժմ մեր թիկունքը ապահով է. նոյնպէս տիգրիսեան գետահովիտէն ու զանազան շրջաններէն եկող ոյժերը մաքրեր են իրենց թիկունքը և ապահով կը քալեն լեռնաշխարհի վրայ. ինչքան ալ ոյժ ունենայ այդ աւազակաբոյնը, ներխուժող ոյժերու հատուածներուն տակ պիտի սչնչանայ. և ի՞նչ ոյժ կրնայ ունենալ գողերու և աւազակներու այդ խրճ-

ժակը...

— Նուրի՛ պէյ, դուք կը մոռնաք կ'երեւի որ Դուրանի և Տիգրիսի գետահովիտները մաքրագործելու առնչատեղը խուսափեցան մահէն և բարձրացան լեռնաշխարհը. այնպէս որ լեռնաշխարհը բաւական ոյժ ունի. այդպէս արհամարհանքով պէտք է մօտենալ խնդրին, որպէսզի չկրկնուի մեզմէ առաջ լեռնաշխարհը ճնշելու գացողներուն սխալը:

— Ինչ որ ալ ըլլայ, մե՛նք պիտի քանդենք այս աւազակաբոյնը, և մեզի կ'օգնեն մեր թնգանօթներն ու գնդացիները, որոնցմէ բարեբախտաբար զուրկ են այս աւազակները, — ըսաւ Աթըֆ Պէյ, զայրացկոտ թոնով մը:

— Անշուշտ պիտի քանդենք. կառավարութեան հրամանը պիտի գործադրուի ի՛նչ գնով ալ ըլլայ, միայն թէ աշիրեթական ոյժերը պէտք է զգուշանան ինքնազլուխ և ձախող շարժումներ ընելէ և բարոյալքում առաջացնելէ:

— Ծի՛ղդ նկատեցիք, Հիւսնի՛ պէյ, — ըսաւ Նուրին. մենք քաջալիբեցինք անոնց սանձարձակութիւնը, որպէսզի մարզուին սպաննելու և ջարդելու գործին մէջ. արդ իբրեւ պատրաստի ջարդարարներ, պէտք է արժեցնեն զիրենք: Այո՛, Դուրանը անխնայ սրբեցին, շնորհակալ ենք իրենցմէ. բայց պէտք է նոյն դերը խաղան և հոս՝ լեռնաշխարհի՛ մէջ:

— Բայց տեսա՛ք, պէյիմ, երբ Դուրանի մէջ մէկ քանի տեղեր հրազէն պայթեցաւ, աշիրեթական ոյժերը ծանր կորուստներու ենթարկուեցան, և խուճապը մտաւ իրենց հոգիի խորը. լա՛ւ էր որ զինուորական ոյժերը շուտ հասան օգնութեան. կռուող ոյժերը քիչ էին, իրենց ռազմամթերքը շուտ սպառեցաւ. հակառակ պարագային, աղէտը մեծ պիտի ըլլար:

— Այո՛, Հիւսնի պէյ, աղէտը աւելի մեծ պիտի ըլլար, եթէ չդիմէինք նենգութեան, դաւադրութեան և խաբէութեան և եթէ նախապէս ծանր գլուխները և երիտասարդ ոյժերը, խորհրդակցական և կամ զինուորական պատրուակին տակ, ձեռք չանցընէինք ու չփճացնէինք... Այդ նոյն բանը, դժբախտաբար, չկրցանք ընել լեռնաշխարհի համար, և այժմ պարտաւոր ենք, ծանրագոյն գոհողութիւններու գնով այդ որջը մաքրել... Բայց հոգ չէ, չորս կողմէն օղակուած է. մէ՛կ ուժեղ զորո՛հ, և անոնք մեր քաջերու ոտքերուն տակ կը փոշիանան:

— Այնքան ալ դիւրին չէ, Նուրի՛ պէյ. բռնած են իշ-

խող և անառիկ դիրքերը, և մենք պէտք է քալենք դէպի այդ անառիկ դիրքերը, ուրկէ կրակ կը ժայթքէ...

— Այլ ճամբաներ կը փորձենք:

— Բոլոր ճամբաներն ալ այդ դիրքերու տիրապետութեան տակն են, պէյիմ:

— Հիւսնի՛ պէյ, կարծեմ ճակատները բաւական երկար են. և անոնք այնքան ոյժ չունին, որ բոլոր անցքերը պաշտպանեն. մեր ոյժերը շատ են. որեւէ կէտէ աննկատ կը թափանցեն ներս և կը պայթեցնեն այդ աւազակաբոյնը, ատոր ես վստահ եմ, — ըսաւ Նուրի պէյ և դառնալով խօսքը ուղղեց աշիրեթապետներուն. — Աշիրեթապետե՛ր, ձեզի կ'ըսեմ. աշիրեթական հեծեալ զօրախումբերը նոյն գրոհը պիտի փորձեն լեռնաշխարհի վրայ, ինչ որ ըրին Դուրանի և տիգրիսեան գետահովիտներուն մէջ:

— Դժուար է նոյն գրոհը փորձել, Նուրի՛ պէյ, — ձայնեց Ֆալամազը. լեռնաշխարհը մատչելի չէ ձերուն: Դաշտը դուրան էր. հոն իր ոյժերէն զրկուած ու շուարած բազմութեան մը հետ գործ ունէինք. հոս՝ վայրը լեռնային է և անառիկ, ու մեր գործը անսնց հետ է, որոնք զինուած մտեր են դիրքերը և մեզի կը սպասեն...:

— Ծի՛շղ հոս է որ աշիրեթները, Ֆալամա՛զ, իրենց քաջութիւնը պէտք է ցոյց տան և ո՛չ թէ անզէն բազմութիւններ սրածեն և հպարտանան, — ըսաւ Նուրի պէյ դառն թոնով մը:

— Ա՛ն Նուրի պէյ, այդ դուք է որ կը խօսիք, — բացականչեց Ֆալամազը զարմացած. դժբախտաբար ձեզմէ սորվեցանք. միակ տարբերութիւնը մեր և ձեր մէջ այն է որ մենք բազուկները արձակ անզէն բազմութիւններ կոտորեցինք. իսկ դուք անզէն և կապուած ազամարդոց հազարաւոր կարաւաններ ջարդեցիք... Հոս զգո՛յճ պէտք է ըլլալ, հրամանատար պէյ. իրար չխտրենք. մարդիկ, որոնք այս լեռներու կատարներու վրայ թառած են, մահը առած իրենց ակռաներուն տակ, դատան նայուածքով մը մեր շարժումներուն կը հետեւին: Այդ անառիկ դիրքերէն դնդակ կը սուլէ, որուն դէմ ո՛չ ձեր Ահմէտն ու Մեհմէտը և ո՛չ ալ մեր Ամարն ու Մըհմէտն առանց վախի չէ որ կը քալեն...:

Ահա լեռնաշխարհը, որ եռացած կաթսայի մը նման կ'եր-

դէ, և դոյամարտի ոյժերը իրենց դիրքերուն մէջ կոտորութիւն կը ծամեն...:

— Մամիկոնեան, կը թուի թէ մնացած տեղերու հաշիւը մաքրուած է որ չորս կողմէն զինուորական և աշիրեթական ոյժերը լեռնաշխարհին շուրջ կը խմբուին, — ըսաւ Մանուկը մտահոգ:

— Այո՛, դժբախտաբար Դուրանը քանի մը օրէն մաքրուեցաւ... Մուշաշէնը շաբաթէ մը աւելի դիմադրեց ահաւոր խարոյկի մը մէջ ու լռեց՝ հրդեհի մը աւերակներուն տակ... Տիգրիսեան գետահովիտը, ինչպէս և այլ տեղեր, անխնայ կոտորուած են, — պատասխանեց Մամիկոնեան վշտաբեկ ձայնով մը:

— Լեռնաշխարհը եւս պիտի մաքրուի... չորս կողմէն լեռնաշխարհի վրայ թաւալող խոշոր ոյժերու ճնշումին անկարող ենք երկար դիմանալ, որովհետեւ միջոցներ չունինք:

— Այո՛, բայց պիտի աշխատինք մեր կեանքը սուղ ծախել և անխնայ ըլլալ թշնամիի մը հանդէպ, որ վատ է, անխիղճ և անբարոյական...:

— Անշուշտ այնքան, որքան օգնեն մեզի մեր միջոցները, և քանի որ Մուշաշէնի պետական զինապահեստները գրաւելու փորձ չըրինք, պէտք է մեր լեռնային հանգոյցներու մէջ ջանանք թշնամին օղակել և պէտք եղած ուղղամթերքը անկէ առնել:

— Այո՛, Մանուկ, — ըսաւ Մամիկոնեան, եթէ միայն հնարաւոր ըլլայ. դժբախտաբար մեր ուղղամթերքի պարենաւորման համար ուրիշ ճամբայ չկայ...:

— Լեռնաշխարհը ուժեղ կերպով կը թնդայ... չորս կողմէն կրակի տակ առնուած է. զինուորական և աշիրեթական ոյժերը անընդհատ անոր դիրքերուն վրայ կը խուժեն. դիրքերէն մահ կը շղթայագերծուի, թշնամին ինքն իր վրայ կը կը թաւալի ու դէպի վեր կը բարձրանայ...:

Ահա կուրդըքի լեռնաշղթան յարձակման ենթարկուած է. այդ լեռնաշղթայի պաշտպանութեան հրամանատարը Մամիկոնեանն է, հոյակապ ազամարդ մը, որ իր դիրքերու վարիչները կը խրախուսէ... «Քաջի՛ր, Դուրանի ճակատագիրը լեռնաշխարհին կը սպառնայ, գիտէք այդ ողբերգութիւնը... կ'ուզէ՞ք նոյն ողբերգութեան զոհ երթալ և լեռնաշխարհը:»

—Ո՛հ, — պատասխանեցին կարիճները. այն ատեն միայն, երբ այդ գարշահոտ հեղեղը յաջողի անցնիլ մեր դիակներու վրայէն. . . :

—Լա՛ւ, անցէք ձեր դիրքերը, հրահանգեցէք կռուող սյօերուն՝ ըլլա՛լ զգոյշ և պաղարիւն, մասնաւորաբար աջ և ձախ թեւերու վերջին դիրքերը պէտք է ուշագրութիւն դարձնեն հեծելագործի շարժումներուն վրայ. չըլլայ թէ անոնք մեր թիկունքը անցնին: — Եւ թող սպասեն ազդանշանի. . . :

Եւ յարձակումը սկսաւ: Նուրի պէյի սյօերն են, որ կուր-դըքի լեռնաշղթան կ'ուզեն գրաւել. . . :

Մամիկոնեան տուաւ կռիւի ազդանշանը. կռիւը ծանր է. . . :

—Վարդա՛ն Վարդա՛ն, թշնամին ուժեղ յարձակումով մը կ'ուզէ դիրքերը գրաւել. հետեւակազորքն ու հեծելագործը միահամուռ գրոհի են անցեր, լեռ ու ձոր կը թնդայ կռիւի աղմուկէն, — ըսաւ Առքոն քրտինքը սրբելով:

—Այո՛, զէնքի որոտէն աշխարհը կը ցնցուի, և ականջներս կը խլանան, կը տեսնե՞ս, Առքո՛յ, ի՞նչ ահուկի դնդակ կը մաղուի մեր դիրքերուն վրայ, կարծես աշխարհը պիտի քանդուի այս տեղատարափէն. բայց հոգ մի՛ ըներ, Առքո՛յ, այդ բոլորը ի զուր կը վաանուի. մեր քաջերը լաւ կը փոխադարձեն անոնց գնդացիրային և թնդանօթային կրակին, — ըսաւ Վարդանը:

—Ապրի՛ք, աղանե՛ր, աղամարդու նման աշխատեցէք, ասոնք պէտք է իրենց նախորդներէն աւելի բախտաւոր ըլլան. ասո՛նց եւս նահանջի ճանապարհը պէտք է ցուցնել, — թեւագրեց Հայրոն և աւելցուց. — կուրդըքը մեր զէնքի որոտէն կը հեւայ. պէտք է մեր երգէն ալ հեւայ:

—Այո՛, այո՛, — հաստատեց Պողոսը, կռիւը առանց երգի անհամ է. ո՞ւր է Աքելը: Աքել՛, սկսիր և քու հրահանգն կրգի-բովդ կռիւին թափ տուր:

Ու Աքելը սկսաւ. երգը տարածուեցաւ. . . : Երգը հետզհետէ կը փոթորկի, կ'ալեկոծի, կ'արձագանգէ հորիզոններու վրայ. կը փոթորկուի և իրենք ու կը պոռան «ի զուր թող հանցնի՛ մեզնից մի գնդակ». . . :

—Ապրի՛ս, Մանո՛ւկ, գնդակը չվրիպեցաւ, և այն շունը կոնակին ինկաւ ու թաւալգլոր գնաց դէպի վար:

—Է՛յ, հէ՛յ, դեռ ի՞նչ շուներ, Սագո՛յ, պիտի իյնան և թաւալգլոր երթան դէպի վար, եթէ Աստուած մեր զէնքին յաջողութիւն տայ:

—Կու տա՛յ, կու տայ, Մանո՛ւկ, հոգ մի՛ ըներ, — ըսաւ Սագոն և աւելցուց. — Կարծես թշնամիի յարձակման թափը կտարեցաւ. . . զօրքը երկրորդ յարձակում մը կը փորձէ, անշուշտ հրամանատարներու և սպաներու խրատուսանքէն մղուած. հետեւակազորքը կեդրոնի վրայ կը խուժէ, իսկ հեծելագործը թեւերու վրայ կ'արշաւէ. բայց նորէն պիտի ընկրկին մեր համազարկէն:

—Տղա՛ք, տաքցուցէ՛ք կռիւը, — պոռաց Սսէն. թշնամին եթէ գիտէ զինուորական գալարափողերու առջեւ պարել, մենք եւս գիտենք Մամիկոնեանի հրահանգը գործադրել. . . :

—Տո՛յ, այս ի՞նչ առիւծի մոնչիւն է ինկեր դիրքերը, մերոնք այսօր երեւի կատաղութեան գինի են խմեր, — ըսաւ Մուշեղը խնդալով. կարիճ եղէք, տեսնե՛նք թէ այսօր որո՞ւն մայրը պիտի հպարտանայ. . . :

— Ի հարկէ երբ թշնամին յարձակում գործէ, Մուշե՛ղ, մենք պէտք է կատաղութեան գինի խմենք որ կարենանք խորտակել այդ յարձակումը, — ըսաւ Մակար. — տե՛ս, մեր յամառ դիմադրութեան շնորհիւ է որ հետեւագործը ընկրկումի նշաններ ցոյց կու տայ, իսկ հեծելագործը տեսակ մը չփոթ վիճակ ունի, և հիմա տեղն է Աքել երգել «Այս անգամին ալ ցոյց տանք թշնամոյն». . . :

—Այո՛, այո՛, — պատասխանեց Աքել խանդավառուած և սկսաւ երգել. . . :

—Ապրիս, Աքել՛. լա՛ւ երգեցիր, ձայնդ անսպառ:

—Է՛յ հէ՛յ, Աքելը տաքցաւ. «Թո՛ղ մեր հրացանի որոտման ձայնէն» կ'երգէ, բոլորս միասին ձայնակցինք «խափանի սուլ-թան երլաղզի քէօշկէն», — առաջարկեց Ասնէի Սարգիս և սյօ տուաւ հրացանին:

—Ա՛խ թէ գնդացիր մը ունենայի. . . Սիմո՛ն, ի՞նչպէս պիտի քաղէի այս մտէ անտառը, — հառաչանքով մը ըսաւ Սողոմն:

—Սպասէ՛, մինչեւ թշնամիէն գրաւենք. . . :

—Ի՞նչ օգուտ, քանի՞ անգամ է որ կը գրաւենք, բայց

անգործածելի վիճակի մէջ կը թողուն մեզի այդ սրիկաները...

— Այ հայ, «Յառաջ խիղախենք իբրև նահապետ» Աբրէի ձայնն է. Սահա'կ, Պետոյի դիրքէն է որ կու գայ. երեւի յարձակման կ'ուզեն անցնիլ:

— Ժամանակը չէ, Արշո'յ. թշնամին եթէ ընկրկուծի նշաններ ցոյց կու տայ, բայց յարձակման թափը կրնայ կրկնուիլ, երբ վայրկեանը գայ. Մամիկոնեան ինքը կը հրահանգէ, — դիտել տուաւ պաղարիւն Սահակը:

— Մամիկոնեա'ն, դիրքերը կատաղութենէն իրենք զիրենք կը կրծեն, յարձակման հրամանի կը սպասեն, — ըսաւ առնական դիմագիծով երիտասարդ Տիգրանը, զինուորական բարեւի կեցած:

— Տիգրան, խոհեմութիւն չէ. դեռ երկար կռիւներ պիտի ունենանք, պէտք է խնայողաբար գործածենք ե'ւ անձր ե'ւ զէնքը. այն ինչ որ կատարուեր է և կը կատարուի այսօր, նախափորձն է տակուին իրարու սթըր կշռելու...:

Այս յարձակումը, սարսափ ձգելու համար է, մանուանդ որ թշնամին ընկրկուծի նշաններ ցոյց կու տայ:

Կրնայ թշնամին դիմամբ ընկրկուծի նշաններ ցոյց տալ, որպէսզի մենք յարձակման անցնինք և թակարգը իյնանք:

- Չե'մ կարծեր:
- Հը՞, Պետրո'ս, ի՞նչ կայ:
- Մամիկոնեա'ն, դիրքերը յարձակման հրամանին կը սպասեն, — պատասխանեց Պետրոսը:
- Ի՞նչ անխոհեմութիւն...:

— Արիութիւնը շղթայի տակ չ'իյնար, Մամիկոնեա'ն, — ըսաւ Պետրոս. կը լսէ՞ք նահանջի գալարափողը. արդէն թշնամին կը նահանջէ. տուէք յարձակման հրամանը:

Եւ Մամիկոնեան տուաւ յարձակման հրամանը, բայց պատուիրեց որ զգոյշ ըլլան. չըլլայ թէ թշնամին կեղծ նահանջով մը թակարգ լարէ...:

Ու դիրքերը անցան յարձակման...:

Մենք պէտք է կոկորդ կոկորդի քանք և խեղդենք այս

շուները, որ մեր կատաղութիւնը իջնէ. թէ ոչ գնդակը մեր կատաղութեան թարգման չի կրնար ըլլալ, — ըսաւ Ախոն:

— Ախո'յ, ըսէ այդ շուներուն, թո՛ղ չփախչին, թո՛ղ կենան, իրարու հետ սղջագուրուինք. ո՞ւր կը փախչին, պետութեան հացը հարամ ըլլայ, — կը պոռայ Սանդրոն:

— Անգամ մը Քիւրաթի այս լամուկներուն նայեցէք, նապաստակի նման կը փախչին. սրիկանե'ր, Դուրանի մէջ առիւծի նման կը մռնչէիք, իսկ հոս ծեծուած շուներու նման կը կաղկանձէք, — արհամարհանքով մը ըսաւ Արթիւրը:

— Ի՞նչ է որ դուն կ'ըսես, Արթի'ն, ասոնք կապուած բազուկներ կամ անզէն բազմութիւններ ջարդել աղամարդութիւն կը նկատեն. ասոնք պէտք է անխնայ կոտորել. շանորդիք լեղապատառ եղած են. ոմանք ո՛չ կրնան փախչիլ և ոչ ալ կրնան հրացան գործածել. ասոնցմէ աղամարդութի՞ւն կը սպասես, — վրայ բերաւ Չոլոն խնդալով:

— Յառա՛ջ մինչեւ Մուշաշէն, պէտք է Մուշաշէնը գրաւենք, — կը պոռայ երիտասարդ ռազմիկ Օսէն սրունքներուն սթ տալով:

— Յառա՛ջ, — կը ձայնէ արիասիրտ Ախոն. խուճապահար եղած այս ջոլիբը, որ կորսնցուցեր է ինքզինք և ցրուեր աջ ու ձախ, պէտք է մանգաղէ անցընել:

— Տո՛յ, ասոնց մէրը... իւրաքանչիւրի ձեռքին տաս-քսան անմեղներու արիւնը կայ. դեռ պէ՞տք է խնայել, — կը մուտայ Պետրոսը՝ ակօսները իրարու վրայ կրծակելով:

— Յառա՛ջ դէպի Մուշաշէն, — կ'աղմկէ վառվառն երիտասարդ Աբրէն, արիւնոտ դաշոյնը ձեռքին մէջ շողացնելով. — կը կարծեն թէ եթէ իջնեն Մուշաշէն, պիտի ազատին մեր ձեռքէն:

— Այո՛, այո՛, դէպի Մուշաշէն, — պոռաց անվախ Արշոն, պէտք է գրաւենք Մուշաշէնը և թալլենք պետական զինապահեստները:

— Համաձա՛յն ենք, համաձա՛յն ենք, — ըսին աջէն ու ձախէն տաքարիւնները. ո՛չ, պէտք է հա դառնալ, — առարկեցին ուրիշները, — յանդուգն ձեռնարկ է, կրնայ ազիտալի հեռեւանքներու երթալ:

— Է՛հ, — կը պոռայ Նիկոյի Գրգոն, բարձր ու հաստ ձայնով

մը. — Ե՛տ դարձէք, Ե՛տ դարձէք, Մամիկոնեան կը հրահանգէ
եա դառնալ, լուր տուէք բոլորին որ թո՛ղ եա դառնան...:

Ու անոնք եա դարձան: Մամիկոնեան ճերմակ նժոյգի
վրայ նստած, դիրքերը կ'այցելէ և վարիչներու հետ կը խօսի:

— Ի՞նչ կորուստ ունինք այսօր, — հարցուց Մամիկոնեան՝
Մանուկին:

— Տակաւին յայտնի չէ, միայն գիտեմ որ Նիկոյ Մանոն
սպաննուեցաւ:

— Մանո՞ն. մե՛ղք, — ըսաւ Պետրոս. լուսահոգին մեզ շատ
կ'անհանգստացնէր որ պահք չէինք պահեր. ինքը պահեց և
առ ի վարձատրութիւն՝ եղաւ այսօրուան առաջինը մեր զօ-
հերէն:

— Արդէն ցանկութիւն ունէր, մեր գոյամարտի առաջին
զօհերէն ըլլալու և եղաւ. ուրի՞շ, — հարցուց Մամիկոնեան:

— Կան և միքանիներ ալ. սմանք դիրքերուն մէջ և ո-
մանք ալ յարձակումի պահուն ինկան, — պատասխանեց Պետոն:

— Իսկ թշնամի՞ն, հարցուց Մամիկոնեանը սրանեղած և
մտախօհ:

— Թշնամին բաւական կորուստներ ունի, — պատասխանեց
Ախոն. և նկատելով Մամիկոնեանի արամադրութեան բեկումը
աւելցուց. — Փա՛ռք տանք Աստուծոյ որ այսօրուան ծանր
կռիւէն քիչ փնասով դուրս եկանք. երանի՛ թէ ամէն օր այս-
օրուան յաջողութիւնը վիճակուէր մեր զէնքին...:

— Մամիկոնեա՛ն, ճիշդ է յարձակումը մեզի արժեց քանի
մը զօհեր. բայց թշնամին ալ խուճապահար փախաւ, և այն
սարսափը, զոր թշնամին ապրեցաւ, իր արժէքը պիտի ունենայ
մեր հետագայ գործունէութեան մէջ. պէտք չէ ընկճուիլ կո-
րուստներու առջև. այդ կորուստները պիտի ըլլան արդէն,
ուզենք թէ չուզենք, — ըսաւ Առքոն:

— Յարձակումը մեզի ձեռնառու չէ. մենք պէտք է ինքնա-
պաշտպանութեան կռիւ մղենք, — ըսաւ Մամիկոնեան:

— Երբ արիւնը կառաղուծենէն յորդի, դժուար է զսպել,
— առարկեց Չոլոն:

— Բայց անխոհեմութիւնն ալ սուղի կը նստի. պարտա-
ւոր ենք խնայողութեամբ շարժիլ. դէպքերը երթալով կը
ծանրանան և մեծ աղէտներու նախօրեակը կ'ապրինք, — պա-
տասխանեց Մամիկոնեան:

— Մամիկոնեա՛ն, ի՞նչ տեղեկութիւն ունիք կեդրոնէն
և միւս գիծերէն, — հարցուց Մանուկը:

— Կեդրոնէն կը տեղեկացնեն որ Մովսսարի գիծին վրայ,
Արծրունին ընդհարում ունեցեր է աշիրեթական ոյժերուն հետ.
Երկուստեք կան կարեւոր կորուստներ. մերոնք յաջողեր են
աւարի առնել աշիրեթական ոչխարի հօտերն ու նախիրները:

Կեփիցի գիծին վրայ, Իշխանեանը նոյնպէս բախումներ
ունեցեր է թշնամի ոյժերուն հետ, որոնք նահանջեր են բաւա-
կան աւար ձգելով մերոնց ձեռքը:

Կապլորեան գիծին վրայ, Խորխոռունին ընդհարումի մէջ
է, տիրիսեան գեառնովիտէն եկող զօրքի և խուժանի հետ, և
կռիւը կատաղութեամբ կը շարունակուի:

Տարկոեան գիծին վրայ, Սասունին կ'իշխէ Տիգրիսի ա-
կունքներուն. զօրք թէ աշիրեթ որքան կը շարժին դէպի վեր,
կ'իյնան անոր կրակին տակ և կը քշուին դէպի վար:

Միրիկիսարի գիծին վրայ, Իշխանագունը յաջող կերպով
եա է մղեր թշնամիի յարձակումները, բայց ունեցեր է քանի
մը զօհեր:

Կռիւը երթալով բոլոր գիծերուն վրայ մեծ համեմա-
տութիւններ կ'առնէ. թշնամին զանազան շրջաններէն, բոլոր
գիծերուն վրայ ալ, մեծ ոյժեր կը կեդրոնացնէ, ինչ որ կը
նշանակէ թէ այլ տեղեր Հայերու հաշիւը մաքրուած է...:

— Իսկ ի՞նչպէս կ'ընթանայ գիծերու պարենաւորման
գործը, — հարցուց Չոլոն:

— Պարենաւորումը լաւ է, — պատասխանեց Մամիկո-
նեան. — անգէն երիտասարդներու և կիներու կորուստները
շարունակ հաց, միս և այլ պիտոյքներ կը հասցնեն գիծերուն.
Կանանց խումբերը գիրքէ գիրք կը պաշտին և կը խրախուսեն
կռուողները. շատ անգամ կը յանդիմանեն, նոյնիսկ կ'ապաա-
կեն այն կռուողները, որոնք կը շուարին կամ կը տատամսին:
Դուք լսեցիք Մոսէի տան Եւան, այդ մեծ ու հոյակապ հայ մայ-
րը, որ կ'ըսէր. «Ոյժ տուէք ձեր բազուկներուն. երբ մեզի
պէտք ունենաք, մենք պատրաստ ենք գիրքերը պահելու...»:

Իշխանագունի գիրքերը պաշտած տանն, Խըզամ, այդ
փառահեղ կիներ, կ'ապաակէ գինուոր մը, որ դանդաղ կը շար-
ժէր, և հրացանը առնելով գիրք կը մանէ, «տե՛ս, այսպէս կը
կռուին» կ'ըսէ ու կը սկսի կռուիլ: Մովսսարի գիծին վրայ, Մա-
քէն, այդ կատաղած վագրը, յարձակումի պահուն սուրը ձեռքը,

ամենէն առաջն է. միշտ կը նեղուի դէպի վառնգը առանց վախի, իսկ Հուսէն կը սպառնայ սպաննել իր աղան, որ պահակութեան ատեն վայրկեան մը քնացեր է. . . . կեփինի գիծին վրայ Խանըմ վէրքերը կը կապէ և կը յանդիմանէ վիրաւորները՝ ըսելով. «Դուք պողպատէ ձուլուած էք. պէտք չէ գնդակը ձեր մարմինն վրայ վէրք ձգէ. . . »: Իսկ Աջոն և Անթառամը մինչև առաւօտ կը շրջին. շատ անգամ պահակները կը խարազանեն, եթէ աչալուրջ չհսկեն. այդ գիծին վրայ կանանց հետախուզիչ մարմինը ձերբակալեր է քիւրտ լրտես մը և յանձներ Իշխանեանին, որ կարեւոր տեղեկութիւններ առած է անկէ:

Կապուրի գիծին վրայ, Նազէն, գիշերային այդ գայլը, կռիւի երգեր կ'երգէ և կ'ազդարարէ թշնամիին թէ «ի՛նչ խելագարի նման եկեր էք և լեռնաշխարհի հանգոյցներու մէջ ձեր պիղծ գիակաները կը թողուք. հեռացէ՛ք այս տեղերէն և մի՛ պղծէք այս սուրբ հողը. . . »:

Տարկոսեան գիծին վրայ, Անին և իր խմբակը ցերեկները կը հեռուին դէպքերուն, կը հսկեն մատակարարութեան, իսկ գիշերները գիրքերը կը պաշտին. երբեմն պահակութիւն կ'ընեն, որ, կռուող ոյժերը քիչ մը հանգստանան. երբեմն ալ հետախուզութեան կ'երթան, և այդ հետախուզութեան շնորհիւ, կը նշմարուի թշնամի ջնկատ մը, որ գետի ընթացքով կ'ուզէ մանել լեռնաշխարհի ծոցը: Զոհասը կ'առնուի համազարկի տակ. ոմանք կը սպաննուին, ոմանք կը վիրաւորուին և գերի կ'իյնան, իսկ միւսները կը փախչին:

— Ապրի՛ն մեր քոյրերն ու մայրերը, որ աղամարգոցմէ վար չեն մնար, — կ'ըսէ Ախոն:

— Այդպէս պէտք է որ ըլլան, — կը պատասխանէ Չոլոն. — ժամանակը չէ անհոգ գանուելու. վառնգը ընդհանուրին է, և այդ վառնգը պէտք է դիմագրաւել ընդհանուր ոյժերով:

— Շատ պէտք չէ յոգնեցնել կիները, — կը խրատէ վարդան. — անոնք կերակուր և ջուր կը հասցնեն, վէրքերը կը կապեն, հիւանդները կը խնամեն, տատանուողները կը խրախուսեն և տակաւին գիշերային պահակութիւն ալ կ'ընեն. . .

— Հոգ մի՛ ընէք, մեր կանայք յոգնիլը ի՛նչ է չեն գիտեր. աւելի ուժեղ են քան մենք, — կ'ըսէ Առքոն. — ամէն բան կրնան ընել. մանաւանդ լաւ կռուողներ են. ափսո՛ս որ զէնք չունին, որպէսզի գինենք այդ էգ գայլերը:

Մամիկոնեան կը խորհրդածէ.

— Դիրքերը ուխտատեղի են դարձեր ժողովուրդին համար. անոնք գիշեր թէ ցերեկ անընդհատ կը խուժեն դէպի դիրքերը, տեսնելու կռուող ոյժերու աշխատանքը և կռիւ. ոմանք նոյնիսկ դիրքերէն քիչ հեռու կը գիշերեն. մեծ խնամք կը տանին դիրքերուն, ինչպէս Շաքէն կ'ըսէր. «Մենք պիտի ընենք մեր կարելին, ամէն ինչ հասցնելու դիրքերուն. դո՛ւք ալ պէտք է ընէք ձեր կարելին, բարձր պահելու դիրքերուն պատիւը. . . »:

— Այո՛, պէտք է բարձր պահենք դիրքերու պատիւը, — կ'արձագանգէ Ախոն. — թշնամիի սղնայարը պէտք է ջարդուի մեր դիրքերուն առջև, և պէտք չէ անիկա կուրգըքէն անցնի լեռնաշխարհին ներսը:

Մամիկոնեան ներշնչուած կը պատգամէ.

— Բնութիւն ալ գիտակցութիւն ունին այն մեծ աղէտին, որ կը սպառնայ մեզի. Դուրանի ախուր աւերակները մեր աչքին առջևն են. նոյն բանը կը սպասէ լեռնաշխարհին. այդ մեծ աղէտը կը տեսնեն և կանայք, որ կանգնած են մեր կողքին, ոյժ և վստահութիւն կը ներշնչեն մեզի. կանանց գաղտնի կազմակերպութիւնը հրահանգած է իր անդամներուն գընդակահարել այն աղամարգերը, որոնք բարձր չեն պահեր իրենց զէնքի պատիւը կամ թշնամիի ոյժին առջև վախի զգացում կ'առնենան, կը տատամսին ու բարոյալքում առաջ կը բերեն. . . :

— Տղա՛ք, զգո՛՛յշ, զո՛հ չերթաք կանանց գնդակին, — ըսաւ վարդան խնդալով:

— Կիներու կատաղութենէն պողպատը կը ծակի. վա՛յ անոր, որ ինկաւ անոր սասակութեան տակ, — վրայ բերաւ Արթինը:

— Աստուած խնայէ մեզի այդ պատուհասը, — ըսաւ Մանուկ, և բոլորը սկսան բարձրաձայն խնդալ. . . :

— Մամիկոնեան, հետախուզիչ խմբակը վերադարձաւ. կը յայտնէ որ թշնամին նոր ոյժերով կը յառաջանայ. իջեր են մինչև Մուշաչէնի ետեւ, Դարէի հովիտը. վերադարձին քշեր են քիւրտ աշիրէթի մը հօտը, որ Մուշեղեան բերդին վերերը կ'արածի եղեր, — ըսաւ Պետոն բարեւի կեցած:

— Լա՛ւ. յայտարարեցէ՛ք բոլոր գիրքերուն որ պատրաստ ըլլան. գիրքերու յարգարման ուշադրութիւն գարձնեն. եկող թշնամին անխնայ գնդակ պիտի թափէ. գիրքերը ապահով պէտք է ըլլան. փամփուշտի խնայողութիւն ընեն, որուէ տակն յարձակման պիտի չանցնին, մինչեւ որ հրաման չտրուի... Ի՞նչպէս է զինուորներու վիճակը:

— Լաւ է, ուտելիքը առատ է և արամադրութիւննին՝ քարձր:

— Բերուած աւարէն՝ իւրաքանչիւր գիրքին մէկ-մէկ մտացու տուէք. գգո՛յշ, չըլլայ թէ զբաղիք խորովածով և մոռնաք պահակութիւնը. պահակները կէս ժամ հեռու պէտք է ըլլան գիրքերէն և թշնամիին գալը անմիջապէս լուր տան գիրքերուն, — հրահանգեց Մամիկոնեան:

Իրիկուն է. կուրգըքի լեռնաշղթան բռնկած է. կրա- կէ գիծ մը կ'երկարի գիրքերու երկայնքին. խորոյկներ են. խորոված կը պատրաստուի: Ռազմիկները կ'ուտեն, կը խմեն, կ'երգեն ու կը պարեն. գիրքէ գիրք այցելութեան կ'երթան, իրարու վիճակը կը հարցնեն, իրար կը հիւրասիրեն, կը կա- տակեն, պատմութիւններ կը պատմեն, նախատեսումներ կ'ընեն:

— Հը՞, ի՞նչպէս էք, տղանե՛ր, — կը հարցնեն ոմանք:

— Շատ լաւ ենք, շնորհակալ ենք, — կը պատասխանեն ուրիշները:

Աւելի տաքարիւնները ձեռքերնին կը շփեն ու կ'աղմը- կեն՝ «Կոխ՛ւ կ'ուզենք, կոխ՛ւ...»: «Շատ մի՛ աճապարէք, — կը թելադրեն փորձառուները, — կռիւը շուտով կու գայ»:

— Ուրկէ՞ կու գայ այս երգի ձայնը:

— Չոլոյի գիրքէն է. «Սասուն ելաւ ապստամբեց» կ'եր- գեն:

— Այո՛, «ապստամբեց», չէ՛ր կրնար չապստամբիլ, բայց վախճանը տեսնենք:

— Վախճա՞նը. ինչ որ կրնանք՝ կ'ընենք. մնացածը՝ ս'ըր բարակ է, թող հոն կարի, — ըսաւ Սողոմ՝ խորովածը կուլ տալով:

— Դժո՛խք թէ կը կարի, միթէ՞ մեզմէ արիւն կը հոսի, իսկ թշնամիէն ջո՞ւր, — ջղայնացած պոռաց Սիմոն:

— Տգա՛ք, մեր թշնամին թէեւ վախկոտ և անարի է, բայց իր միջոցները առատ են. մենք չունինք այդ միջոցները,

և սակայն մեր արիութիւնն ու յանդգնութիւնը կը լեցնեն այդ պակասը. կարծեմ բոլորդ ալ կշտացած էք խորովածէն. ժամա- նակն է պարի. Գարրիկ և Պետրոս շատոնց սկսած են. պարը տաքցեր է և մեզի կը սպասէ, — ըսաւ Մակարը, նստած տեղէն վեր ցատկելով:

— Իրաւունք ունին, — պատասխանեց Գուրգէն. — վաղը ծանր կռիւ ունինք, և պէտք է որ այսօր կռիւի նախատեսակը կատարենք:

— Անշո՛ւշտ, անշո՛ւշտ, պիտի պարենք կռիւի պարը, պատասխանեց Մխոն. — Լա՛ւ ցնցեցէք ինքզինքնիդ. ինչպէս կատաղի կը պարենք, այդպէս ալ կատաղի կը կռուինք. մենք արիութեամբ սկսած ենք կռիւը և արիութեամբ ալ պիտի վեր- ջացնենք:

— Ապրի՛ս, Մխոյ, լա՛ւ կը խօսիս, — խանդավառուած ըսաւ Պողոսը. — մենք արգէն կռիւի համար ծնած ենք, մեր կորովն ու արիութիւնը երթալով կ'աճին, բայց զանոնք գործա- ծելու միջոցները կը պակսին:

— Շիտակ է, Պողո՛ս, թող տան մեզի առատ փամփուշտ, և մենք կը կանգնինք բոլոր պղտոր հեղեղներուն դէմ...:

— Շատ մի՛ յոխորտար, Մուշե՛ղ. ժամանակ չկայ վատ- նելու. եթէ խորոված չես ուտեր, ելիր պարէ, քանի չէ լուս- ցած, — գիտել տուաւ Արտաշը:

— Արտա՛շ, Արտա՛շ, պարերու լաւագոյնը վաղը պիտի պարենք, երբ հրացանը որոտայ:

— Այո՛, պարերու լաւագոյնը կռիւի մէջ է որ կը պա- րուի. և հոն ալ այս եռանդն ու աշխոյժը պիտի ցուցադրենք, որ թշնամին սարսափի...:

Կռիւի նախատեսակն է:
Ու պա՛րը հոյակապ, որ դէպի մահը կ'երթայ...:

Գիշեր է...:
— Սուրէ՛ն, Պետոն կանչէ, — ըսաւ Մամիկոնեան, որ նստած էր կուրգըքի լեռնաշղթայի Տքանեղիւքրան կատարի բարձր ժայռի մը վրայ և լուսնակ գիշերով կը դիտէր Տարօնի աշխարհը, Չխուրայ դաշտը, Սուրբ Կարապետի իննակնեան լեռ- ները, Սերկիի սարը ու Չարպհուրի լեռնաշղթաները ու կը

խոհար և միեւնոյն ասեան մտիկ կ'ընէր Ողական բերդի ջրվէ-
ժի ձայնը:

Ու Պետոն եկաւ:

— Պետո՛յ, ի՞նչպէս են դիրքերը, — հարցուց Մամիկո-
նեան:

— Դիրքերը լաւ են. կերան, խմեցին, երգեցին, պա-
րեցին. հիմա ալ իւրաքանչիւր դիրք զբաղում մը սենի. Չոլոյի
դիրքը զինուորական մարզանք կ'ընէ. վարդանի դիրքը յարձակ-
ման յատակագիծը կը պատրաստէ. Արթինի դիրքը նահանջի
գիծը կը ճշդէ. Մանուկի դիրքը քաջութեան պատուանշան կը
բաշխէ. Ախոյի դիրքը վրէժի կատաղութենէն բռնուած է. Առ-
քոյի դիրքը հաշիւ կ'ընէ թէ վաղը քանի՞ հոգի պիտի լռե-
ցնեն. Հայրոյի դիրքը յուզումի խօսքեր կը յղանայ վաղուան
նահատակներուն, — ըսաւ Պետոն:

— Իսկ պահակները ի՞նչպէս են:

— Պահակներն ալ լաւ են. աչալուրջ կը հսկեն, երկու
ժամը անգամ մը կը փոխուին:

— Հրահանգեցէ՛ք դիրքերուն՝ հանգիստ թող ընեն որ
կազդուութիւն, որպէսզի վաղուան լարուած վիճակին տոկան...:

Լուսարաց է:

— Մամիկոնեա՛ն, — ձայնեց Ախոն. — պահակները կը
տեղեկացնեն որ թշնամին կու գայ, հետեւակն ու հեծելազօրքը
բռներ են ամբողջ լեռնամուտերը և ժամէ մը հոս կ'ըլլան:

— Այդքան շա՞տ են:

— Կ'ըսեն թէ շատ են, — պատասխանեց Ախոն:

— Լա՛ւ, ըսէ՛ք դիրքերուն որ պատրաստ ըլլան. թըշ-
նամին բուռն յարձակում պիտի գործէ մեր դիրքերուն վրայ
և ծանր զոհողութիւններու գնով, պիտի աշխատի դիրքերէն
անցնիլ և հոսիլ լեռնաշխարհ: Սամսոնի կողմէ բռնուած քիւրա
լրտեսները այդպէս կ'ըսեն: Պատուիրեցէ՛ք դիրքերուն, մին-
չեւ որ գալարափողերը չհնչեն, թշնամին վրայ յարձակումի
չանցնին և դիրքերուն չմօտենան, և մինչեւ որ հրաման չաը-
բուի, դիրքերը կրակ չբանան: Համբերութիւն թող ունենան.
գնդակին խնայեն ու պաղարիւն ըլլան. թշնամին թիւէն, հա-
մազարկէն ու աղմուկէն չազդուի. բարեւեցէ՛ք կռուող ոյժե-
րը, քիչ վերջ կ'այցելեմ դիրքերը, — հրահանգեց Մամիկոնեան:

Ահա Մուշաշէնէն, Դուրանէն և այլ տեղերէն, օգնական ոյ-
ժերը կը շարժին, զօրք թէ աշայիր. զօրասիւն առ զօրասիւն իրա-
բու ետեւէ կը բարձրանան լեռնաշխարհ՝ զանազան կէտերէն: Հե-
ծելազօրքը, աջ ու ձախ թեւերէն, կ'ընկերանայ հետեւազօրքին:
Հրամանատարները, զինուորական թէ աշիրեթական, ձի նստած,
առջեւէն կ'երթան մտախոհ և լուռ... Վերջապէս հրամանատար
Րիֆաթ պէյը, խղելով լուրթիւնը, հարցուց աշիրեթապետ Րըզու-
զին, թէ ի՞նչքան ոյժ կրնայ ըլլալ որ կը պաշտպանէ Կուրգըքի
լեռնաշղթան:

— Ձե՛մ գիտեր, պէյիմ, — պատասխանեց աշիրեթապետը. —
հաւանաբար շա՛տ են, որ կառավարութիւնը միշտ օգնական զօրք
կը զրկէ լեռ:

— Կը կարծէ՞ք թէ ունենան այնքան ռազմամթերք, որ կա-
րենան դիմանալ երկար կռիւներու:

— Ո՛վ գիտէ, թերեւս, բայց լրտեսները կը տեղեկացնեն,
որ կռիւներու ընթացքին, միշտ փամփուշտի խնայողութիւն կը
յանձնարարուի:

— Մե՞թէ այդ բոլորը, որ դիրքերու մէջ են, կանոնաւոր
զէնք ունին, և ուրիշ՞ ձեռք բերած են:

— Ձե՛մ կարծեր, պէյիմ, մէկ մասը անոնցմէ անկանոն զէն-
քեր ունին և կ'ըսուի թէ կրնան իրենք պատրաստած ըլլալ: Իսկ
կանոնաւոր զէնք, ուրիշ՞ ձարած են, յայտնի չէ, հաւանաբար
Ռուսիայէն բերուած է...:

— Եթէ այդպէս է, մենք այսօր յարձակումի պէտք է եր-
թանք, և առանց կանգ առնելու դիրքերը զբաւենք, — ըսաւ վրձ-
ռական թոնով մը, նորահաս սպայ Վելիտը:

— Կը յուսամ որ այդպէս պիտի ըլլայ և թերեւս մեր ոյժի
երեւումը ու յարձակումը բաւական պիտի ըլլան, որ այդ աւա-
զակները խուճապահար լքեն դիրքերը ու փախչին:

— Ո՛չ, հրամանատար պէյ, կռիւներու մէջ թրծուած յեղա-
փոխական մարդիկ են, որ ինքնապաշտպանութեան կռիւը կը վա-
րեն. դժուար թէ անոնք մեր ոյժերու երեւումով, լքեն իրենց դիր-
քերը: Չեղի պէս կը մտածէր ե՛ւ Նուրի պէյը, և սակայն առաջին
յարձակումին ընկրկեցաւ, գլուխն ալ վրայ տուաւ, ինչպէս և շատ
մը զինուորներու կեանքը, — ըսաւ յիսնապետ ձեմալը, որ Նուրի
պէյի կռիւին մասնակցեր էր:

3399



— Ահա՛ Բիֆաթ պէյ, այդպէս պէտք չէ կարծել, — մէջ մտաւ քիւրտ աշիրեթապետ Ամարը: — Պէյի՛ւմ, անոնք զիտակցարար կը կուռին, որոհեաւեզ գիտեն թէ ի՞նչ պիտի ըլլայ իրենց վիճակը, անոնք տեղեկութիւն ունին այն բոլորին մասին, ինչ որ կատարուած է լեոնաշխարհէն դուրս. մեռնելու համար նստած են զիրքերը, եւ մի՛ կարծէք, որ այնքան զիւրաւ լքեն ու հեռանան:

— Մի՛ չափազանցէք, Ամա՛ր աղա, — ջղայնացած պատասխանեց Բիֆաթը: — Քանի մը աւազակներ են թառեր այդ լեոններու կատարը. եւ ասո՞նք են որ դէմ պիտի կարենան կենալ Օսմանեան Կայսրութեան. այսօր անոնց հաշիւը պիտի մաքրուի. հեծելազօրքը թեւերէն թող քալէ նահանջի զի՞ծը կարելու համար, իսկ կանոնաւոր զօրքը եւ քրտական հետեւակ ոյժերը ճակատին յարձակում պիտի գործեն, եւ կանգ պիտի չառնեն, մինչեւ որ զիրքերը չգրաւուին...:

— Լա՛ւ, Բիֆաթ պէյ, ո՞վ ըսաւ թէ կը չափազանցենք. այս լեոններու կատարներուն վրայ միայն քանի մը աւազակներ կան. իսկ այս լեոնային ժողովուրդը, զոր հաշուի չէք առներ, — ըսաւ աշիրեթապետը, յուզուած ձայնով մը:

— Ժողովուրդը, հա՛ հա՛ հա՛, — բարձրաձայն խնդաց Բիֆաթը. — ժողովուրդը նո՛յն ժողովուրդն է, ինչ որ տեսանք այլ տեղեր:

— Ա՛յ հա՛յ, — բացականչեց Ամար աղան. — կը սխալիք, հրամանատար պէյ: Այո՛, եթէ անդէն ըլլայ եւ կապուած, բայց, պէյի՛ւմ, ո՛չ անդէն են եւ ո՛չ ալ կապուած. զո՞րչ, չգործէք նուրի պէյի սխալը...:

— Է՛հ, կը տեսնենք...:

— Է՛հ, կը տեսնենք...:

— Բայց ըսէ՛ք քրտական հեծելազօրքին, որ անցեալ անգամուան խուճապը չձգէ, որպէսզի զօրքը չբարոյալքուի:

— Ներեցէ՛ք, Բիֆաթ պէյ, խուճապը ո՛չ թէ քրտական հեծելազօրքն է ձգեր, այլ կանոնաւոր զօրքը, սխալ է բացատրուած ձեզի: Այդպէս չէ՞, Բըզո՛ւզ:

— Ամա՛ր աղա, չքննենք այդ օրուան ձախողութեան պատճառները. այսօրուան յաջողութեան համար աշխատինք:

— Ինձի կը թուի թէ այդ օրուան ձախողութեան պատճառը հետեւեալն է. հեծելազօրքն ու հետեւապարքը, մէկը միւսի վզին ուղեր է նետել կուռին ծանրութիւնը, եւ երկուքն ալ ընկրկեր են, — ըսաւ վելիտը՝ բանգէտի մը հովեր առնելով:

— Ես ալ այդպէս կը կարծեմ, — հաստատեց Բիֆաթ՝ վելիտին ըսածը. — բայց այսօր այդ բանը պէտք չէ կրկնուի...:

Ու Մամիկոնեան ճերմակ նժուղը նստած, անցաւ զիրքերէն, եւ տուաւ զիրքերու վարիչներուն իր հրահանգները...:

— Հը՛, Սողո՛յ, ամբողջ զիշերը անհամբեր սպասեցինք, վերջապէս լուսցաւ. ի՞նչ նորութիւն, — հարցուց Սիմոն հրացանը ուսէն իջեցնելով:

— Նորութի՞ւն. չե՞ս տեսներ, Սիմո՛ն, ահա զօրք է որ կու գայ, — ու ձեռքով ցոյց տուաւ զիմացի լեոնամուտերն ու հովիտները, ուր մըջիւնի կարաւաններու նման, զօրասիւնները կը վխտալին:

— Թո՛ղ դան, թո՛ղ դան, արդէն իրենց կը սպասենք, — պատասխանեց Սիմոն, եւ աւելցուց. — Կարո՛յ, ի՞նչպէս ես, կը տեսնե՞ս այս նախիրը որ կու գայ, ամբողջ մասցու են:

— Այո՛, անոնք մասցու, մենք մատաղցու. բայց կարծեմ, մատաղցուն աւելի կ'արժէ քան մասցուն, այնպէս չէ՞...:

— Այսօրուան բախումին մէջ յայտնի կ'ըլլայ. բայց ի՞նչ քան զօրք է, եւ միայն հետեւակը չէ. ահա՛ հեծելազօրքն ալ, որ հետեւապարքի աջ ու ձախ կողմերէն կը քալէ. երեւի նպատակ ունի մեր թեւերը հարուածելու, եւ անցնելու թիկունք: Սիմո՛ն, թշնամին անվարան կը յառաջանայ. կը կարծէ թէ մեր զիրքերը պարպուած են. ահա գալարափողերը սկսան հնչել, յարձակման նշան է. ե՛տ համազարկի սկսան. հեծելազօրքը զրոհի անցաւ: Տըզա՛ք, եթէ քիչ մըն ալ սպասենք, կը լեցուին մեր զիրքերը. ի՞նչ ահուկի ազմուկ է, գնդացիներն ալ իրենց կոխնը ձգեր են, զիւրացնելու զօրքի յարձակումը: Պա՛հ, այս ի՞նչ ձայն է, է՛յ է՛յ, թնդանոթ է, մեր զիրքերը քանդել կ'ուզեն, — ըսաւ Միսոն ու մատը դրած հրացանի բլթակին, սպասեց ազդանշանի:

— Պետո՛յ, մինչեւ ե՞րբ սպասենք, թշնամին կը մտնէ զիրքերը, — ըսաւ Արշոն, համբերութիւնը հատած:

— Մի՛ աճապարեր, Արշո՛յ, տակաւին ժամանակ կայ. Մամիկոնեանը կռիւի ազդանշանը պիտի տայ:

Ու Մամիկոնեանը տուաւ կռիւի ազդանշանը:

— Համազա՛րկ, — պոռացին զիրքերու վարիչները, եւ զիրքերը անցան համազարկի:

— Կը վազէ՛ք, դէ՛հ հիմա վազեցէք. ինչո՞ւ չէք վազեր, փուտեր էք գետին, ու չէք շարժիր, — կը մուրտայ Սողոն, կը կրակէ ու կը հայհոյէ...:

— Հը՛ Կարոյ, ի՞նչպէս կ'ընթանայ կռիւր, տաքեր է, չէ՞ ուշադրութիւն բրէ չհալիս, — բտա Սիմոն քթին տակէն խնդալով:

— Կռիւր լաւ կ'ընթանայ. հեծելազօրքը թիկունք կ'ուզէր անցնիլ, բայց ընկրկումի մէջ է, որովհետեւ քանի մը հոգի իրենցմէ թաւալլոր դացին... Երեւի պիտի նահանջէ, չի դիմանար կըռիւի ծանրութեան...:

— Այո՛, կա՛մ պիտի նահանջէ, կա՛մ թաւալլոր պիտի երթայ. տե՛ս, հեռեակազօրքի յարձանքները ինչպէս կը փլին, եւ յարձակման շղթան կը կտարտի մեր քաջերու համագարկին տակ, սակայն զալարափողերը յարձակում կը շեփորեն. այդ սրիկայ փողահարները չե՛ն յոգնիր, գլուխնիս տարին: Ապրի՛ս Տիգրան, լռեցուց մէկը այդ շուներէն եւ ձայնը կոկորդին մէջ մնաց, իսկ սա շունը նայէ, Միսո՛յ, կը յանդգնի դիրքերուն մօտենալ... կեցցես, Միսո՛յ, զանկը օդին մէջ թռաւ... մնաց ասանց ուղեղի, եւ զնաց ազահանք, — բտա Գուրգէնը եւ խանդավառ պոռայ. — Է՛յ հէ՛յ, ու զեռ քանինե՛ր պիտի երթան ազահանք...:

Հրամանատարներ Րիֆթի եւ Շէվքէթ, Կուրգըքի լեռնաշղթայի սպահով բարձունքի մը վրայ կեցած, կը հետեւին կռիւն եւ Տելաւներէն, Փեթարի լեռներէն, Ամպրէյի հովիտէն, Կեղկէսքէն, ձանձիկէն յառաջացող նոր ոյժերը յարձակման մէջ կը նետեն. կը ջղայնանան որ իրարու ետեւէ շղթայաղերձում յարձակումները կը փշուրին ու դիրքերը տակաւին կանդուն կը մնան: Անոնք խիստ յանդիմանութիւն ուղղեցին սպաններուն եւ աշիրեթապետներուն, որ թոյլ կը շարժին, եւ կորովի կերպով առաջ չեն մղեր ոյժերը, որպէսզի այդ «աւազակային» բոյները անմիջապէս լռեցնեն: Անոնք կարուկ հրամաններ արձակեցին աջ ու ձախ:

Յարձակումը նոր թափ մը ստացաւ, եւ կռիւր կատաղի բնոյթ մը առաւ...:

Երիտասարդ սպաներ Վելիտ, Փուստ, հարիւրապետ Թեմզին, Օսման չաւուշը կը քաջայերեն զօրքը. «Ձե՛զ, տեսնե՛ք, քաջե՛ր. պետութեան ոյժը ընկրկում չի ձանձնար, մեր առջեւ քանի մը սարուկ Հայեր կան, շուտով պէտք է անոնց հաշիւը մաքրել. դիտցէ՛ք որ Մարզարէն հեռուէն, հրացայտ աչքերով, ձեզի կը նայի, եւ կայսերական տունէն ձեզի վարձատրութիւն կայ, ձեր քաջութեան համար...»:

Աշիրեթապետեր Բըզուզը, Սէրտը, Նատոն, Փալամազը, Ամար ազան եւ ուրիշները նոյնպէս իրենց ոյժերը կը խրախուսեն.

«Երիտասարդ քաջեր, յառա՛ջ... աշխատեցէ՛ք բարձր պահել աշիրեթական սրտիւր, դո՛ւք, որ ձեր ձիերու սմբակներուն տակ Եփրատեան եւ Տիգրիսեան գետահովիտներու հայ ազգաբնակչութիւնը անխնայ արսրեցիք, այս լեռնային վայրենի զոդերո՞ւն պիտի խնայէք...»:

Ու հեռեակազօրքը, հեծելազօրքը միտսին կ'ազմկեն. «Յառա՛ջ... Մարզարէն հրացայտ աչքերով ձեզի կը նայի...», ու կը թաւալլին զէպի դիրքեր, հայհուցներով եւ պոռչաութեամբով: Թընդանօթներն ու զնդացիները աւելի եւս սաստկացուցին իրենց կըրակը: Ազիրտալի ու խրացուցիչ ժխոր մը կը դալարուի Կուրգըքի լեռնաշղթային վրայ՝ խեղդելով ցաւի ձիչերն ու հոնդիւնները ինկածներուն...:

— Այս շանորդի փողահարները տակաւին յարձակում կը շեփորեն. կարծես թէ կոյր են, չեն տեսներ մեր ընկրկումը եւ դիրքեր գրաւելու անկարելիութիւնը, — կը արտնջայ Չոփուր Ալին:

— Կը թուի թէ մեր զինուորականները, Ալի՛, բան չեն հասկընար զինուորական գործէն. կը տեսնեն որ դժուար է դիրքերը գրաւել եւ սակայն զինուորները առաջ կը մղեն, որ կտարուին, — բտա Հիւսէյն:

— Հապա այս շանորդի քրտական հեծելազօրքը... երբ ձիերը քշեն, կարծես թէ թշնամին ու իր դիրքերը հիմա պիտի փոշխանան իրենց ձիերուն սմբակներուն տակ, իսկ երբ թշնամիի դիրքերն են, համագարկ մը կը արուի, ետ կը գանան ու սարսափահար կը փախչին, կը քանդեն ճակատը եւ կը բարոյալքեն մեր կուռոյ ոյժերը...:

— Մեր առջեւ բարբարոս եւ վայրենի ժողովուրդ մը կայ, Սալի՛լ, որուն հետ գլուխ ելլելու համար տղամա՛րդ պէտք է. ասիկա ո՛չ Գուրանն է եւ ո՛չ ալ Տիգրիսեան գետահովիտը, կամ այլ շրջաններ, որոնց բնակչութիւնը խարեցինք եւ դիւրութեամբ կերանք, եւ հոս ալ կը փսխենք, մեր քիթէն ու բերնէն կու դայ...:

— Ճի՛շդ է, Մուսա՛, տղամա՛րդ պէտք է ասոնց հետ գլուխ ելլելու համար. սրիկաները լաւ կուռոյներ են, վախի դադափար չունին, կարծես թէ անխոցելի են. կը զարմանամ ո՛ւր կ'երթան մեր այս զնդակի տեղատարափները: Այս տեղատարափին տակ պէտք էր այդ դիրքերը շատոնց լսած ըլլային...:

— Այո՛, բայց ո՛չ միայն չլռեցին, այլեւ մեր մէջը լացուցին. դիտէ՛ք, ինչքան կորուստ ունինք այս յիմար եւ յաճախակի յարձակումներուն հետեւանքով, — զժգոհութեամբ մը բտա Հիւսէյն:

— Տղայ՝ Հիւսէյն, կոտորուած ենք որս'ւ հող: Արդէն բերուած ենք հոս կոտորուելու համար: Չտեսա՞ր, հարիւրապետ Րեմզին փառք կ'երազէր խեղճ զինուորին արեան զնով, մինչեւ որ զընդակ մը իր կուճքը ծակեց. զիշեր-ցերեկ պատուանշան կ'երազէր, բայց զնդակ գտաւ...:

— Հապա Օսման չաւուշը չե՛ս բեր, Ալի՛. այդ պոռոտախօս չունը, որ որպէս թէ մեզ կը խրախուսէր, «ի՞նչ են այդ ստրուկ Հայերը, որոնցմէ կը վախնաք. յառա՛ջ տեսնեմ» կը պոռար շարունակ, երբ ծունկերը կ'թոռեցան եւ քիթ ու բերնին զնաց այդ «ստրուկ» Հայերու զնդակէն:

— Յառա՛ջ, յառա՛ջ պոռալէն սղայ Ֆուատը մեր ականջները խլացուց, մինչեւ որ հրաշքի զնդակ մը շրջեց զինք կանակին վրայ եւ ձայնը կարեցաւ մեր ականջներէն. իսկ մեծախօս Աէիտը, որպէս թէ կ'արհամարհէր թշնամիի համազարկը. քչեց իր ձին, կարեց զիրքերու զիծը, անցաւ թիկունք, բայց թաւալլոր զնաց, ինք եւ իր ձին Ծիծառներու ձորը: Աւանակը կը կարծէր որ Դուրանի անգէն հայ զիւղերու մէջ է:

— Ահմէ՛տ, Բըրուզը ինչո՞ւ չես բեր, որ վախէն կը դողար. այդ չունը ի՛նչքան արիւն լակեց Վարդույի եւ Դուրանի մէջ. ինկաւ թշնամիի համազարկին տակ, կորսնցուց ինքզինքը, չկրցաւ փախչիլ նոյնիսկ եւ զնդակէ մը ջախջախուեցաւ զանկը:

— Մեհմէ՛տ, Մեհմէ՛տ, կը լսե՞ս, նահանջի փողը կը հնչէ. տե՛ս, ամբողջ զօրքը կը նահանջէ, իսկ հեծելազօրքը արդէն երկար ճամբայ կարեց, փախի՛ր, քանի թշնամին չէ հասած, — ըսաւ Ահմէտ զողացող ձայնով մը եւ գունատ:

— Ա՛հ վերջապէս հազարապետ Շելքէթը, կորուստներու ծանրութենէն չմտած, նահանջի հրամանը տուաւ. լաւ կ'ըլլար որ զնդակ մըն ալ իր ճակատը առնէր, ինչպէս կերաւ Րիֆաթը: Շատորդիք քրտական հեծելազօրքը փոխանակ կեղրոնի ճակատը մղելու, նեակեր են թեւերու վրայ. զօրքը կրեց կոխի ամբողջ ծանրութիւնը, եւ կոխի տաք ատեն, հեծելազօրքը լքեց ճակատն ու փախաւ. ասիկա գաւաճանութիւն է, — ըսաւ Մեհմէտ վրդովուած, աւելցնելով՝ — այդ չուները պէտք է կոտորել...:

— Քալէ՛, հերիք է տրանջաս, — ըսաւ Սալիլ, — շիտակ խօսելու ժամանակը գտար. փախի՛ր, որ զլուխդ ազատես. չե՞ս տեսներ Գառըմ ինչպէս կը թռի, կարծես նժույզ ձի է, զնդակ անգամ չի հասնիր...:

— Ալի՛, ձորով, Ալի՛, ձորով. կողերէն ու լեռնամուտերէն փախուտար դժուար է, — կը պոռայ Հիւսէյն:

— Տղա՛ք, ձորը բռնուած է, այս կողմէն եկէք, — կանչեց Մուսան: — Ապս'ւտ, այս կողմ, վա՛յ, Ապուար հողը զրկեց...:

— Տօ միայն Ապս'ւտը, շատերը հողը զրկեր են եւ շատերը զեռ պիտի զրկեն: Աստուած իմ, այս ի՛նչ պատուհասի եկանք...:

— Փախի՛ր, Ահմէ՛տ, ոյժ տուր սրունքներուդ, փախչի՛ն ալ քաջութիւն մըն է. ո՛վ կրցաւ իր մորթը ազատել: Պիլալը ո՞ւր է:

— Պիլա՞լը, վիրաւորուեցաւ սրունքէն եւ մնաց...:

— Փախէ՛ք, թշնամին կը հասնի, — պոռաց Սալիլը. — տեսէ՛ք ուրիշները ո՛րքան հեռացեր են եւ զնդակի հասողութենէն դուրս են ելեր:

— Այդպէս չ'ըլլար, Սալի՛լ, — ըսաւ Մուսան. — մաս մը մեզմէ պէտք է զերք բռնէ թշնամիին հետապնդումը զապրեցնելու համար, որպէսզի միւսները հնարաւորութիւն ունենան փախչելու:

— Ի՛նչ ապուշ-ապուշ կը խօսիս, ո՞վ է յիմարացեր, որ նորէն պիտի դառնայ եւ կենայ եկող հեղեղին գէմ. փախի՛ր. չե՞ս տեսներ, ո՛չ զլուխ կայ եւ ո՛չ ալ ստք. ալ որս'ւ պիտի մտիկ ընէ այս քառսին մէջ...:

Եւ հարցուցէք թէ ինչո՞ւ կը փախչին...:

— Օ՛ր կը փախչին, որովհետեւ զնդակը կը սուլէ...:

— Իսկ ո՞ւր են ձնճի Հոճաներ, Քէօս Նամըզներ, Փուշտ Չէլէպլներ, Թոփալ Տինտարներ, Սնդիր Ալիներ, ձէնկճի Թոսուններ, Քեաֆթաու Սելիմներ եւ իրենց նմաններ...:

— Ի՛նչ կը հարցնէք. անոնք կապուած բազուկներու կամ անդէն բազմութիւններու համար են, որոնք սովոր են հաշիշով զինուորացիները ջարդարար խմբակներ ու խուժաններ, կապուած բազուկներ եւ անդէն բազմութիւնները վայրագօրէն յօշոտելու համար...:

Քրտական հեծելազօրքը խուճապահար կուրղըքի լեռնաշղթայի զառիթափերէն գահավէժ իջաւ Դուրանի սահմանները...:

— Հը՛, Հըսս՛յ, Հըսս՛յ, քիչ մը կամաց քչէ. ի՞նչ, լեղի՞դ պայթեցաւ...:

— Ահմատոյ, չե՞ս տեսներ, զնդակ կը սուլէ, եւ ես անոր վժժիւնէն չեմ ախորժիր:

— Դուրանի մէջ, առիւծի պէս կը մոնչէիր, հպարտութիւնդ աշխարհը չէր կրնար վերցնել: Դողահար մայրերու սղրուկոճը եւ մանուկներու աղեխարշ ճիշերը չազդեցին քու քար սրախդ. Հրկիզուած մարագներու եւ տուներու մէջ սղջ-սղջ այրելու դատապար-

տրւած բազմութիւններու զարարումներէն, ցաւի խժարուր պոսթ-
կումներէն ու հոնդիւններէն կ'ախորժէիր, բայց զնդակի մը վժժիւ-
նէն չես ախորժիր...:

— Այո՛, որովհետեւ անոր վժժիւնին մէջ մահուան դժնետե-
սիլ եւ սառն դէմքը կը տեսնեմ:

— Ա՛հ, հասկնալի է. Շրմոն ալ, Կուրզըքի զատիթափերուն
վրայ կը դողար, երբ զնդակը կը սուլէր. ինչո՞ւ կը դողաս կը հար-
ցնէինք, «ցուրտ է» կը պատասխանէր, եւ Շրմոյի նման, շատերը
իրենց վախէն կը դողային. ու այս խուճապահար փախուստը վա-
խէն է, որովհետեւ լեռնային այդ ժողովուրդի բազուկները կապ-
ուած չեն եւ զնդակ կը սուլէ...:

— Մըհէ՛, գիրքերը պիտի գրուէինք եւ լեռնաշխարհը Գու-
րանի վիճակին պիտի հասցնէինք. ո՞ւր է, բան մը չըրինք եւ փա-
խանք:

— Սերտո՛յ, դուն տակաւին անփորձ ես. ճի՛շդ է, մենք
Գուրանը կերանք, որովհետեւ եփուած կերակուր էր. հոս կը տես-
նես որ փշոտ է եւ մեր կոկորդը չի կրնար կլլել այդ փուշը...:

— Հա՛, Փարամազ, ո՛ւր մնաց քու տղամարդութիւնդ:
Գուրանի մէջ բազմաթիւ մարդիկ կրունկներուդ տակ մեռան.
մոռցեր ես որ թէ՛ կը արտրէիր եւ թէ՛ կը պոսայիր. «մըջիւն կը
սպաննեմ, մըջիւն»: Լեռնաշխարհի այդ մըջիւններէն է որ սար-
սափած՝ նապաստակի նման փախար խեղճորոյս մինչեւ Գուրան:

— Բայց չէ՞ որ դուն ալ ինձի հետ ես, Բըզկո՛յ, երբ դէպի
գիրքեր կ'երթայինք, լեզուդ քիմքիդ կ'պած էր, չէիր խօսեր... Իսկ
հիմա, լեզուդ արձակուեր է, ի՛նչ բսել կ'ուզես:

— Ի՛նչ բսել կ'ուզեմ. լա՛ւ, բսել կ'ուզեմ, որ մենք տղա-
մարդ չենք: Ամօ՛թ մեզի. յայտնի է որ մենք կապուած բազուկնե-
րու եւ անդէն բազմութիւններու վրայ միայն կրնանք յարձակիլ:
Մտածեցէ՛ք թէ ինչե՛ր բերինք մենք այս խեղճ եւ անմեղ ժողո-
վուրդի գլխուն, եւ բոլորովին ի դուր տեղ. եւ ինչո՞ւ «պետական
հրաման է» պիտի բուռի. լա՛ւ, նոյն պետական հրամանը պէ՛տք է
գործադրենք եւ լեռնաշխարհին մէջ. քանի՞ անգամ է կ'երթանք ե՛ւ
մենք, ե՛ւ զօրք, ու անամօթարար կը փախչինք, լեռնաշխարհի կո-
ղերուն վրայ ձգելով մեր ստտակները: Ինչո՞ւ կը փախչինք, որով-
հետեւ հան բազուկները կապուած չեն եւ զնդակ կը սուլէ... Ա-
մօ՛թ մեզի... Սէխա եւ Բըզուզ քար ու քանդ ըրին Գուրանը: Հե-
րոսութեան թեւեր էին առեր, բայց տեսա՛ք թէ ի՛նչպէս շան պէս
կազկանձեցին եւ ինկան լեռնաշխարհի կողերուն վրայ: Մուսայի

եւ Սասըմի հեծելազօրքը մինչեւ Վասպուրականի շրջանները արիւն
վազուց, բայց ամայութեան ձորին մէջ, ոչխարի նման կոտորուե-
ցաւ. մենք ամարդ ենք, եւ մեր դաւադրութեան մեղքն է որ կը քա-
ւենք: Դաւադրութեամբ ձեռք բերուած յաջողութիւնը ոչինչ է, յի-
մարնե՛ր...: Ա՛յն շարիքը, զոր չգիտայեթեցին Հասանոն ու իր
նման աւագակները, Գուրանի մէջ. ինչո՞ւ չմեցան լեռնաշխարհի
կողերուն վրայ. շատերը իրենցմէ, իրենց ձիերուն հետ, թաւաղլոր
դացին եւ փճացան. շատերը նապաստակի նման կը դողային, եւ
զնդակի տակ հալեցան: Գուրանի մէջ իրենց բազուկը կը գործէր
կատաղօրէն: Լեռնաշխարհին մէջ ինչո՞ւ այդ բազուկը չգիտցաւ
հարուածել եւ փշրուեցաւ կաւի նման...:

— Բըզկո՛յ, գիտես թէ ինչո՞ւ... ալ ի՛նչ պէտք կայ հարցնե-
լու. բայց բարեկամարար խորհուրդ կու տամ քեզի, այդ մասին,
ուրիշ անգամ չխօսիս. կրնայ պատահիլ քեզի հետ նոյն բանը, ի՛նչ
որ պատահեցաւ Ամարին հետ. Ամարն ալ դէպքերու ազդեցութեան
տակ կորսնցուցեր էր ինքզինք, եւ տեղի-անտեղի, միշտ կը պախա-
րակէր ուրիշները. կարծես թէ Հայերու կողմէ վարձուած՝ անոնց
իրաւունքներու պաշտպանը ըլլար, մինչեւ որ զնդակով մը լու-
ցուցին գինք. ի հարկէ բազմաթիւ անգամներ զգուշացնել ետք այդ
սպուշը...:

— Հա՛ Փարամազ, սպաննալիք է, որ կը կարգաս, հոգ չէ.
տախկա պատճառ մը չէ որ չիտակը չխօսիմ. տղամարդը մեռած է
մեր մէջ. ո՛չ սիրտ ունինք, ո՛չ խիղճ, ո՛չ արժանապատուութիւն
եւ ո՛չ ալ գիտակցութիւն: Մենք ամարդօրէն պատուհասեցինք ան-
մեղ ժողովուրդ մը եւ Աստուած ալ կը պատուհասէ մեզ. թէ ոչ,
ուրիշ՞ այդքան խուճապ երեւան եկաւ մեր հոգիի խօրը, երբ կը
կարձէինք որ իւրաքանչիւրիս մէջ առիւծ մըն է որ կ'ապրի... եւ
մեր երգիչները չկրցան արթնցնել զայն, կրակոտ կոխի երգերովը
անգամ...:

— Նայէ՛, Գուրգէ՛ն, մեր իւրաքանչիւր համազարկին, ի՞նչ-
պէս իրար կը խառնուին թշնամիի յարձակման ալիքները, — ըսաւ
Մխոն:

— Ոչ միայն իրար կը խառնուին, այլեւ դեղնած տերեւներու
նման կը թափին, Մխո՛յ, աւելի շատ ուշադրութիւն պէտք է դար-
ձնել սպաններուն եւ ջանայ զնդակով մը քաջալերանքը խեղդել ի-
րենց կոկորդին մէջ. սպանե՛ր, որ կը խարեն այս խեղճ գինուոր-
ները եւ կը քչեն զնդակի բերան: Ա՛հ այսպէս, ապրի՛ս Արբէ, լաւ

չընկեր այն սպան, որ սուրբ ձեռքը զօրքը առաջ կը մղէր. դնա՛, քու մէկըր...: Տղա՛ք, հրամանատարները չեն երեւիր, ո՛ւր են կձկուած արդեօք. Չոլոն կը յանձնարարէ որ մասնաւոր ինամք տա- նինք իրենց. կը նայիմ չեմ տեսներ, կամ չեմ ճանչնար, ա՛խ թէ անգամ մը, աչքս դպէր իրենց, — ըսաւ Արքէ ահուաները կրճտե- լով:

— Տօ՛ սա ձիաւոր շուներուն նայեցէք, շիտթեր են — եւ չեն գիտեր ո՛ր ուղղութեամբ շարժին. Արա՛մ, ճամբայ ցոյց տուր, տես՛ս այն սեւ ձիաւորը քու գնդակին կը սպասէ. ա՛յ հա՛յ, աղա- մարդու հարուած է, ապրի՛ս, Արա՛մ, ձեռքդ դարար մնայ. թա- ւարդըր գնաց գէպի ձորը եւ ձին խրանած կը փախչի:

— Չոլո՛յ, Չոլո՛յ, կարծեմ հրամանատարը տօնիկա ըլլալու է, գնդացիքի բլուրին վրայ, գնդացիքի քով կանգնած է, — ըսաւ Պետրոս, գնդացիքի բլուրը ցոյց տալով:

— Լա՛ւ, — ըսաւ Չոլոն, ուշադրութեամբ նայելով: — Պետ- րո՛ս, դուն գնդացիքը գործածողին զարկ, ես ալ քովը կեցողին կ'աշխատիմ գնդակ մը հասցնել:

— Կեցցես, Չոլո՛յ, կեցցես! — սրտաց Պետրոս խանդավառ, — շունը գլորեցաւ եւ գնդացիքն ալ լսեց: Գարբի՛կ, դեռ կեցեր ես, «Թող մեր հրացանի որտաման ձայնէն» չերգե՞ս:

— Իրաւունք ունիս, Պետրո՛ս, ճի՛շդ տեղն է, — ըսաւ Գար- րիկ, եւ սկսաւ երգել:

— Ի՛նչ լաւ է, մեր իւրաքանչիւր գիրքէն կրակէ շանթ մըն է որ կը թռի եւ թշնամիի յարձակումը կը բղկտուի մեր հարուածնե- րուն տակ, — ըսաւ Ախոն եւ սրտաց. — Տուէ՛ք համազարկի, թող շէկոխ, մտնայ իր ծծած կաթը եւ չգիտնայ թէ ուրկէ՛ եկաւ հոգիով բորոտ այս ջուրըր:

— Ախո՛յ, յարձակման թափը կը թուլնայ, — նկատեց Սան- գրոն, թշնամին փոխանակ գէպի առաջ գալու, գէպի ետ կ'երթայ:

— Տղանե՛ր, թշնամին կը նահանջէ, — ըսաւ Մանուկը. — բռնեցէք համազարկի, թո՛ղ գետինը ճանկոտեն... Իսկ հեծելազօրքը խուճապահար կը փախչի, առէ՛ք կրակի տակ. թո՛ղ փոխեն, ի՛նչ որ կերեր են Դուրանի մէջ այդ շուները:

— Ա՛յ, նահանջի գալարափողը կը հնչէ, — ըսաւ Սողոն, — մտի՛կ բրէք, ճի՛շդ է, նահանջի գալարափողն է, թշնամին կը փախչի. պէտք է հալածել:

— Ի հարկէ, երբ թշնամին կը նահանջէ, մենք պէտք է յար- ձակինք, այնպէս չէ՞, Մակա՛ր, — հարցուց անհանդիստ Արչոն:

— Ատիկա Մամիկոնեանի գիտնալիքն է, Արչո՛յ, — պատաս- խանեց Մակար:

— Է՛հ, մի՛ փախչիք, մի՛ փախչիք, ո՛վ պիտի փրկէ պետու- թեան վարկը, եթէ դուք փախչիք... եւ ինչո՞ւ եկած էիք, եթէ պիտի փախչիք... Հա՛ լեռնաշխարհը կ'ուղէիք աւերել. այսպէս կը թափին ձեր գիտնները անոր կողերուն վրայ, — կ'ըսէ պաղա- րին Արթին ու կը խնդայ:

Եւ գիրքերը կ'երգեն, կ'աղմկեն ու յարձակում կ'ուզեն:

Ու Մամիկոնեանը առաւ յարձակման հրամանը:

Եւ ուղմիկները մրրիկի նման թռան իրենց գիրքերէն, կար- ծես գառաղեղին մէջ շղթայուած առիւծներ ըլլային, որ իրենց որ- սին վրայ խոյանալու առիթը կը գտնէին:

Ահա Վարդան հասաւ գնդացիքի բլուրը. գնդացիքը ձգեր փախեր են, բայց աւրուած վիճակի մէջ:

— Նայէ՛, — ըսաւ Պետրոսին, — տես՛ս, այս շուները ի՛նչպէս փռուեր են գետին. երեւի իրենց տուները տեղ չկար ստակելու, ե- կեր են հոս ստակեր, սղծելու համար այս սուրբ հողը:

— Տո՛յ, կիները մեզմէ աւելի կատգած են, — ըսաւ Պետոն. — Չինոն հարիւրապետի մը սուրը ձեռք առած, յարձակման թափ կու- տայ. Սութէն Ջրաբաշխ ձորին բերանը բռնեց. այդ ուղղութեամբ փախչող զօրքը կորուստներ տուաւ եւ փոխեց իր ուղղութիւնը լեռ- նամուտի կողերէն. այս անգամ ինկաւ մեր կրակին տակ. Անգինը սպաննուած զինուորի մը գալարափողը վերցուցած, զինուորական հրամաններ կ'արձակէ. Սառէն վիրաւոր զինուորներու հաշիւը կը մաքրէ. Լէյլան կատաղութեամբ հասաւ զինուորի մը ետեւէն, որ չէր կրնար փախչիլ, վախէն ոտքերը իրար կը խանուէին, հրա- ցանի կոթով ուժեղ հարուած մը տուաւ վզին, փոսեց գետին եւ ա- ռաւ աքացիի տակ...:

— Տղանե՛ր զո՞յժ, յետասպահ սյժերը կրնան գիրք բռնած ըլլալ. չըլլայ թէ թակարդ իյնաք, — ըսաւ Չոլոն, յանձնարարելով աշալուրջ գանուիլ:

— Հող մի՛ ըներ, Չոլո՛յ, — ձայնեց Մանուկ. — եթէ ըլլան իսկ, այս խուճապը գանոնք եւս կը բարոյալքէ եւ հոսանքին կը խառնէ:

— Ախոյին նայեցէք, — ըսաւ Սանգրոն. — ինկած է սոցալի մը ետեւէն, որ չի կրնար փախչիլ, վախէն ծունկերը կը կթոտին. ահա սուրի հարուած մը իջեցուց գանկին, ու խեղճը փլաւ ինքն իր վրայ եւ հողը կը ճանկոտէ...:

— Վնաս չկայ, զնաց դրախտ, իր բրած քաջագործութիւններուն վարձատրութիւնը ստանալու համար, — ըսաւ Չոլոն խնդալով եւ բարի ճանապարհ մտախօսեց:

— Է՛հ, ետ դարձէ՛ք, ետ դարձէ՛ք. Մամիկոնեան կը հրահանգէ անմիջապէս ետ դառնալ, — պոռայ Արթին:

— Այո՛, պէտք է ետ դառնալ: Կը տեղեկացուի որ Մուշաշէնէն օղնական ոյժեր դրկուած են թշնամիին, հաւանաբար ետ դառնան եւ միացեալ ոյժերով յարձակումի անցնին, — ըսաւ Առքոն. — պատրաստ պէտք է ըլլանք... Ե՛տ դարձէ՛ք, — պոռային շատերը, մանաւանդ բարձր ձայն ունեցողները:

Եւ անոնք ետ դարձան բեռնաւորուած թշնամիէն լքուած աւարով...:

— Սուրէ՛ն, կանչէ՛ դիրքերու վարիչները, — հրամայեց Մամիկոնեան:

Ու անոնք եկան:

Մամիկոնեան հարցուց. — Ի՞նչքան կորուստ ունինք այսօր:

— Յարձակման ընթացքին Գալէն սպաննուեցաւ եւ երկու հոգի ալ վիրաւորուեցան. իսկ դիրքերու մէջ եօթ հոգի ունինք:

— Այո՛, այդ ծանր կուրս մեզմէ ութ զո՛հ խլեց, — ըսաւ Չոլոն տխուր շեշտով մը:

— Անոնք եւս իրենց անխոհեմութեան զո՛հ դացին, կը կենան դիրքերու մէջ եւ կը կուռին, հակառակ վարիչներու սաստերուն, — աւելցուց Առքոն:

— Հասկցայ, — ըսաւ Մամիկոնեան, — թշնամին արհամարհել կ'ուզէին եւ իրենց կեանքը վրայ տուին. յանձնարարեցէ՛ք բոլոր կուուղ ոյժերուն, որ իրենց կեանքը իրենց չի պատկանիր: Անոնք որ անպուշտութեան եւ տաքարիւնութեան հետեւանքով իրենց կեանքը վրայ կու տան, կը նկատուին իրր դասալիք, որ կուռի զի՛ճէն շուտ կ'ուզեն դուրս ելլել. այդպիսիներ, իրր պատիժ, իրենց դիակին վրայ պիտի կրեն հեաքը յեղափոխական զնդակին. այդ հրահանգը դրաւոր պիտի տրուի բոլորին եւ միշտ աչքի առջեւ պիտի ունենաք դայն:

— Ճի՛շդ է. ինկածներէն իւրաքանչիւրը մեզի համար արժէք մըն է. ինչո՞ւ հետագայ կուռներուն ալ չմասնակցէին, երբ իրենց բազուկը մեզի անհրաժեշտ է, — գանդատեցաւ Վարդան:

— Տղաներ, խնայեցէ՛ք ձեզի, ջանացէ՛ք զո՛հ չերթալ սխալանքի եւ անհամբերութեան, — թելադրեց Ախոն:

Մամիկոնեան հարցուց. — Ի՞նչքան զո՛հ ունի թշնամին:

— Հազարապետ մը, քանի մը սպայ եւ շատ մը զինուորներ, բացի աշիրեթական կորուստներէն, — պատասխանեց Մանուկ:

— Ծնորհակալութիւնս կը յայտնեմ եւ կը զնահատեմ ձեզ. կը ցանկամ որ միշտ այդպէս յաջող, կարիճ եւ կարգապահ ըլլաք, — ըսաւ Մամիկոնեան:

— Ի՞նչ լուր կայ, Մամիկոնեա՛ն, կեդրոնէն եւ դիժերէն, — հարցուց Չոլոն:

— Կեդրոնը կը տեղեկացնէ. Ա. — Ծովասարի գիժ. — Արիւնահակ կուռներ տեղի կ'ունենան. Արծրունին հրաշքներ կը գործէ. թշնամին քշեր են գէպի Ամայութեան ձոր, պաշարեր եւ կոտորեր:

Կուռի տաք ընթացքին, Մաթոն իր ոյժերով աննկատ կ'անցնի թշնամիի թիկունք, եւ ազգանշան կու տայ Ստեփոյին, Փուրթոյին, Էլոյին եւ Մարտոյին, որոնք նոյնպէս աննկատ դիրքերէն դուրս կ'ելլեն եւ թշնամիին թեւերը կը պաշարեն. Կակոյի, Մագոյի եւ Սենոյի գիրքերը ճակատէն կը զրազեցնեն թշնամին, որ մեր դիրքերու թուլացած կրակէն ոչեւորուած, կը սկսի յառաջանալ. բայց շուտով չորս կողմէն համազարկի տակ կ'սանուի. եւ խուճապահար զօրք ու հեծելազօրք, կը նահանջեն գէպի Ամայութեան ձոր, կը պաշարուին ու կը կոտորուին:

— Կեցցե՛ն Ծովասարի մեր կորուստները, — բացականչեցին խանդավառ. — իսկ մենք ի՞նչ կորուստ ունինք, Մամիկոնեա՛ն:

— Դժբախտաբար, Էլոն եւ Հինդ կարիճներ զարնուած են: — Ափսո՛ս, — լսուեցաւ աջէն ու ձախէն:

— Ի՞նչ տխրութիւն պատեց ձեզ, — ըսաւ Չոլոն: — Այդպէս է, ո՛վ սուր վերցնէ, սուրով կ'երթայ. թշնամիին ձեռքերը կապուած չեն. դուք կ'ուզէք թշնամին կոտորել եւ չէք ուզեր որ ձեր քիթն անգամ արիւնի...:

— Իսկ հեծելազօրքը զինուորակա՞ն է թէ աշիրեթական, — հարցուց Ախոն:

— Քրտական հեծելազօրքը կատրմի եւ Մուսայի շուներէն բաղկացած է, — պատասխանեց Մամիկոնեան:

— Այդ կուռին մէջ մեծ զործ տեսեր են եւ կինները, — շարունակեց Մամիկոնեանը. — Օրիորդ Արծրունին Մաթոյի հետ է եղեր եւ մեծ քաջութիւն է ցոյց տուեր: Մաքէն կատաղի վազրի մը նման, աջ ու ձախ կը ցատկոտէ եղեր, եւ թշնամիէն ո՛վ որ վատարար կը խնդրէ, որ իր կեանքը խնայուի, սուրի մը հարուած կ'ըջեցընէ վիզին, ըսելով. «Կ'ատեմ մարդիկ որ կեանք կը մուրան...»:

— Կեցցէ՛ Մաքէն, — պոռայ Ախոն:

— Կեցցէ՛ Մաքէն, — պոռացին բոլորը, եւ սկսան ծափա-
հարել:

Մամիկոնեան շարունակեց.— Ծատ յանդուզն եղած են Վիկ-
տորիան եւ Օդիտան, գերազանցեր են բոլոր հին գայլերը: Այդ ազ-
ջիկները հաճոյք կը զգան միշտ վտանգի մէջ մտնելէ, եւ երբ կը
զգուշացունին, կը պատասխանեն. «մի կարծէք որ կիները հերոս-
ներէն վար կը մնան» եւ իրենց հարուածը պարապ չէ անցեր:

— Ապրին՝ մեր աղջիկները. մէջքերնին ամուր, գլուխնին
բարձր եւ նայուածքնին հրեղէն թող ըլլան, — ըսին ու ծափահա-
րեցին ամուր եւ երկար:

Մամիկոնեան կը շարունակէ.— Դիրքեր ուտելիք տանողները
կը տեսնեն որ դիրքերը պարապ են. կը վազեն կռիւի վայրը. «Հա
ուտելիք բերած էք մեզի», կ'ըսեն կուռողները, «բայց մենք արդէն
կշտացանք»: «Ապրին մեր քաջերը» կ'ըսեն ուտելիք տանողները,
«ի հարկէ, եթէ ձեզ դիրքերը չգտնենք, կը փնտռենք եւ օգնութեան
կը հասնինք»: Ու անոնք կը սկսին դիակներու մէջ շրջիլ եւ վիրա-
ւորներու հաշիւը ամբողջացնել: — «Հեռո՛ւ կեցէք», կ'ըսէ Մըթոն,
«թող այդ պիղծ արիւնը չլեցուի ձեր վրայ»: «Կը մկրտուինք արիւ-
նով, որպէսզի վազը արիւն թափենք», — կը պատասխանեն աղ-
ջիկները:

— «Աղջի՛ Ծուշան, ի՞նչ կ'ընես, — կը հարցնէ Մարտոն:
«Այս աւանակի բերանը բաց է մնացեր, հող կը լեցնեմ որ չզը-
ռայ...»: «Հո՛ս եկէք, մի՛ շարշարէք դիակները, դիակները մեղա-
ւոր չեն, այն ինչ որ մեղաւոր էր անոնց մէջ, հիմա արդէն չկայ»:

Ծուշա՛ն տես, ի՞նչպէս քիթ ու բերնին գնացեր է այս շունը,
արդեօք քանի՞ հայ կերած է Դուրանի մէջ:

— Սպասէ՛ Փեփրան, ես այս խոշոր քարը անոր գանկին ի-
ջեցնեմ. սրիկանե՛ր, կը կարծեն թէ հոս Դուրանի խարուած ժողո-
վուրդը պիտի գտնեն. այսպէս շանսատակ կ'ըլլաք:

— Նայեցէ՛ք, նայեցէ՛ք, — կ'ըսեն իրարու, — ի՞նչպէս թա-
ւալվոր զացեր են այս շունները. այժմ մեր անմեղ զոհերու հօգի-
ները կրնան հանգիստ ըլլալ. իսկ այս սատկած ձիերու մեղքը ի՞նչ
է...:

— Անո՛նք ալ իրենց տէրերու յանցանքին զոհերն են, — կ'ը-
սէ գեղանի Չարէն: Եւ պէտք է բոլոր թուրքերն ու Քիւրտերը այս
վիճակին ենթարկուին, — ըսաւ Սանէն ցասուժով մը:

— Ու ատոր համար մեր կուռողներուն պէտք է ոյժ եւ յա-

ջողութիւն մաղթենք, — պատասխանեց Ծողիկը, շողի նման աղջիկ
մը. — ասոնց մայրերուն սիրտը թո՛ղ ցաւի, որ հասկնան մեր մայ-
րերուն ցաւը. թո՛ղ քիչ մըն ալ իրենք լան...:

— Այո՛, Ծողիկը իրաւունք ունի, հայ մայրերը շատ են լա-
ցեր. քիչ մըն ալ թող ուրիշներ լան...:

Մամիկոնեան դարձեալ շարունակեց.— Կեփիմի գիծը.— Իշ-
խանեանը զիշերային յարձակումի է գացեր. թշնամին անակնկալի
եկած, սարսափահար փախեր է, ձգելով բաղձաթիւ մեռեալ եւ վի-
րաւոր Սպիտակ սարին շուրջ: Կրողիկ եւ Հեպիկ նախապէս կտրեր
են նահանջի գիծը. ձանոն եւ Ծերոն յարձակեր են բանակատեղիի
վրայ. թշնամին ինկեր է երկու կրակի մէջ, եւ քշուեր է զէպի ան-
զընդախոր ձորեր:

— Կեցցէ՛ Իշխանեանը եւ իր կտրիճները, — պոռացին այս
ու այն կողմէն եւ ծափահարեցին:

— Իսկ ի՞նչ կորուստ ունինք այդ զիշերային յարձակումէն,
— հարցուց Առքոն:

— Երեք կորուստ ունինք, — պատասխանեց Մամիկոնեան,
— կը կարծուի որ մերոնց զնդակէն ըլլայ...:

— Մե՛ղք, ի՞նչ անզգուշութիւն, — ըսաւ Պետոն:

— Կրնայ պատահիլ, — հաստատեց Մանուկը. — զիշերային
յարձակումները նման անակնկալներ կրնան ծնիլ...:

— Այդ զիշերային յարձակումին մասնակցեր են եւ կիները,
— յարեց Մամիկոնեան:

— Կիներ՞ըր, — հարցուցին բոլորը:

— Այո՛, Աջոն, Անթառամ եւ իրենց խմբակը՝ տղամարդու
հազուստ հազած...:

— Հետաքրքիր է թէ ի՞նչպէս է պատահեր, — հարցուց Պե-
տոն:

Մամիկոնեան անցաւ զեկոյց տալու. — Գիշերային յարձակ-
ման հետեւանքով թշնամին խուճապահար կը փախչի, մէկ մասը
զէպի Վրէժի ժայռ. այդ պահուն կանանց խումբը վերէն կ'իջնէ,
ուր դացած էր հետախուզութեան, համազարկ մը կու տան եւ
«անձնատո՛ւր, անձնատո՛ւր» կը պոռան. ոմանք գինաթափ կ'ըլլան,
ոմանք կը փախչին. Աջոն կը հետապնդէ եւ գիրկընդխառն կռիւի կը
մտնէ երկու զինուորի հետ. մէկը կը սպաննէ, իսկ միւսէն կը վի-
րաւորուի:

— Է՛հ, վէրքը ծա՞նր է, — կը հարցնէ Չոլոն:

— Ո՛չ, դաշոյնի մը վէրք է թեւէն:

— Իսկ ի՛նչ եղաւ վերաւորողը, — կը հարցնէ Ախոն:

— Տիկին Ռեպուշի գնդակէն կ'իյնայ:

— Ապրի՛ն մեր կիները, — ըսին միարեւրան եւ ծափահարեցին:

— Իսկ ի՛նչ եղան զինաթափուածները, — հարցուցին դարձեալ:

— Ձինաթափուածնե՞րը. Վրէժի ժայռին քովը կը մնան, — ըսաւ Մամիկոնեան խնդալով:

Կապլորի գիծը. — Խորխոռունին զօրաւոր ընդհարումներ է ունեցեր Տիգրիսեան գետահովիտէն եկած զինուորական եւ աշխրեթական ոյժերու հետ եւ փոխուստի է մատներ: Մեր թաւուցիկ մարտական խումբերը լեռներէն կ'իջնեն ամէն զիշեր եւ սարսափի մէջ կը պահեն Տիգրիսեան գետահովիտը: Աւոն իր ոյժերով, անցեալ դիշեր, երեք քրտական գիւղեր է վառեր, որոնք Հայերու հանդէպ խիստ են վարուեր:

— Լա՛ւ են բերք, ապրի՛ն մեր տղաները, — ըսաւ Պետոն:

— Այո՛, եւ պէ՛տք է անխնայ ըլլալ, — աւելցուց Չուրն:

— Իսկ Ձուռոն զինուորական փոխադրիչ գունդի մը վրայ յարձակում է գործեր. փոխադրիչ գունդը կորուսաներ տալով փախեր է եւ ուղղամթերքը գերի է առեր. մէկ մասը փոխադրեր է եւ մէկ մասն ալ փճացուցեր է, որովհետեւ փոխադրելը հնարաւոր չէ եղած:

— Ափսո՛ս, մենք արդէն ուղղամթերքի պէտք ունէինք, — ըսաւ Ախոն:

— Ուրիշ անգամ մըն ալ կը կտրէ աշխրեթական հեծեալ ոյժին ճանապարհը, կ'առնէ համադարկի տակ. ոմանք կը սպաննուին, իսկ միւսները խելակորոյս կը ցրուին: Մատին մեկնաստանի վանամայրը, վանքի պարիսպներուն ետեւէն կը խնդար քիւրտ խուժանին վրայ, որ վանքին պատերը կը կրծէր, եւ Աղճէի ու Շառոյի գնդակներէն թաւաղլոր կ'ոռնայ. վանքին ջուրը կը կարուի եւ ջուրին պակասէն ստիպուած՝ մութ ու անձրեւոտ դիշեր մը, կը ճեղքէ պաշարման օդակը եւ իր ոյժերով կ'անցնի Կապլորի գիծը, սակայն Շառոն՝ Մշկեղի իշխանը կ'իյնայ դաւադրաբար...:

— Մե՛ղք այդ հսկային, — կ'ըսէ Վարդան:

— Յետո՞յ, — կը հարցնէ Չուրն:

Մամիկոնեան կը շարունակէ պատմել. — Տիկին Շամամ գիշերային հետախուզութեան կ'երթայ,՝ կը պաշարուի թրքական նոր հասնող ոյժերէն. կը սկսի կատաղի կռիւ մը. մերոնք ստիպուած

կ'ըլլան նահանջել, վախնալով ո՛չ այնքան աննպաստ կացութենէն, որքան փամփուշտի պակասէն. եւ կը քալեն դէպի Խորխոռունի առաջացած դիրքերը, բռնելով կարճ ճանապարհը, որ կ'անցնի աշխրեթական գիրքերու մէջէն. զօրքը կը ճնշէ իրենց վրայ. իրենք յարձակում կը գործեն քրտական գիրքերուն վրայ. Քիւրտեր կը կարծեն որ իրենց թիկունքը կտրուած է, դլուխնին կը կորսնցնեն, եւ առանց կռիւի կը փախչին: Արեւ չծաղած կիներ կը հասնին Խորխոռունի դիրքերը, Շամամ ազդրէն վերաւոր, Ռեհան եւ Մէյմոն կը սպաննուին, միւսները անվնաս կ'ազատին:

— Այդ ի՛նչ անկարարելի հերոսութիւն, — բացականչեց Մանուկը, թէ՛ զարմացած եւ թէ՛ հիացած:

— Ա՛հ Չուր՛յ, Պետո՛յ, ձեր աչքերուն մէջ արցունք կը տեսնեմ, — կ'ըսէ Ախոն:

— Հոգ չէ, Ախո՛յ, — կ'ըսէ Վարդանը. — ուրախութեան արցունք է. յուզումէն կու գայ: Իսկապէս վերին աստիճանի ներշնչող, յուզիչ եւ քաջալերիչ երեւոյթ է...:

Մամիկոնեան կ'աւելցնէ. — Թուրք-քրտական ոյժերը երբ կը ճշդեն թէ այդ ծանր կռիւը մղողները խումբ մը կիներ են եղած, կը բարոյալքուին այդ արտակարգ յանդգնութենէն...:

Ծիրնկատարի գծին վրայ, իշխանագունը շատ բուռն կռիւներ է ունեցեր զինուորական եւ աշխրեթական ոյժերու հետ. մերոնք շատ ծանր կացութիւն են ապրեր, մինչեւ որ կրցած են ցրուել եւ զած յարձակումները, որ երբեմն սուխնամարտի յանգեր է. մեծ քաջութիւն են ցոյց տուեր Ստեփոն, Իսրոն, Սարգիս, Աւէն, Խորենց եւ ուրիշները, մանաւանդ կիներէն Շուշան, Խրզալ, Խրզամ իրենց յանդգնութեամբ եւ կտրիճութեամբ, ոյժ եւ եռանդ են ներշնչած կռուողներուն. վերջապէս թշնամին նահանջեր է ծանր կորուսաներ տալով. մերոնք հետապնդած են զանոնք, մինչեւ Մեղուի ժայռ եւ մինչեւ Առաքելոց վանքի շրջակայքը. նոյնիսկ ոմանք ուղեր են իջնել մինչեւ Մուշաչէն. բայց իշխանագունը թոյլ չէ տրգեր են իջնել մինչեւ Մուշաչէն. բայց իշխանագունը թոյլ չէ տրգուցուած, որովհետեւ Գեղաչէնի ուղղութեամբ կատարուած հետախուզութիւնը ցոյց տուած է որ Տափըքի գծով զօրք կը յառաջանայ, եւ կրնայ հասնիլ Աթանազիէի ձոր, ու կտրել իշխանագունի ոյժերու թիկունքը:

— Կը հուսատամ, որ պիտի կրնային Մուշաչէնը զրաւել, որովհետեւ Մուշաչէնը դատարկուած է իր զինուորական ոյժերէն, քանի որ այդ ոյժերը զանազան ուղղութեամբ դէպի լեռնաշխարհը կը քալեն, — կ'ըսէ Ախոն:

— Հաւանարար գրաւէին Մուշաշէնը, բայց Տափըքէն եկած ոյժը պիտի կորէր ե՛ւ անոնց թիկունքը, ե՛ւ մեր թիկունքը, ու պիտի ստեղծուէր ծանր կացութիւն մը, ե՛ւ մեզ համար, ե՛ւ ժողովուրդի համար, — ըսաւ Մանուկ:

— Լա՛ւ է ըրեր Իշխանագունը, որ այդ յանդուզն ձեռնարկին դէմ է գացեր, թէ ոչ թակարդ կ'իյնային եւ հետեւանքները ծանր պիտի ըլլային, — աւելցուց Չոլոն:

— Այդ կռիւին մէջ ունեցեր ենք տասնեւմէկ զոհ. Գէս Ռնտան Կիրոյ, Բոշկէտան Մկրոյ, Մուրոյտան Օհան եւ ուրիշներ... , — յուզուած եզրակացուց Մամիկոնեան:

— Ափսո՞ս, — բացականչեցին աջէն ու ձախէն:

— Է՛հ, յետո՞յ, — հարցուց Չոլոն:

Մամիկոնեան շարունակեց իր զեկուցումը. — Տարկոշեան գիծը. — Մասունին ուժեղ է, թշնամիի շարունակական յարձակումները կորուստներով ետ է մղուեր. Գէորդն ու Մանգոն, Թորոն ու Կարոն, Թաթարն ու Ֆարէն անզուսպ են դարձեր. «Չուկերը անօթի են Տիգրիսի ափունքներուն մէջ, թուրք-քրտական այս ողորմելի խուժանը հոն պէտք է թափուի»... կ'ըսեն Միրոն ու Թըմոն. — Ո՛հ, — կ'ըսեն Թորոն ու Կարոն. մեղք է կ'ապականուի ջուրը, այդ խուժանը պէտք է գնդակահարուի եւ հրդեհուի: Ի՛նչ ձեւ կ'ուզէք, մտածեցէք, — կ'ըսէ Թաթարը, ձեռքս ինկածները կը սպաննեմ, կը կարեմ. թող կեր ըլլան վայրի թռչուններուն ու դազաններուն:

Մերոնք նահանջող թշնամին կը հետանդեւն եւ կը տեսնեն որ հեռուն, ընկուզենիներու գիւղին վրայ, դրօշակ մը կը ծածանի. հետախուզութեան կը զրկուին քանի մը հոգի, հասկնալու համար թէ ի՛նչ է. հեռագիտակը ցոյց կու տայ, որ դրօշակը կարմիր է. սակայն վրան ո՛չ աստղ կայ եւ ո՛չ մահիկ. գացողները կը ճշդեն որ հայկական դրօշակ է, կիներ են, Անիի խումբի մարտիկները: Թըշնամին նահանջի ժամանակ, դալարուն ձորով կը յառաջանայ. թըշնամիին նահանջի գիծը կտրելու համար, ճանապարհը դժուար կ'ըլլայ, մինչեւ կը հասնին Ընկուզենիներու գիւղին սահմանները, զօրքը բաւական հեռացած կ'ըլլայ Ընկուզենիներու գիւղէն. համազարկ մը կու տան գիւղին վրայ, գիւղ եղածները կը փախչին, եւ գիւղը կը գրաւեն. դրօշակ են պարզեր, անկախութիւն են յայտարարեր. կռիւի պարը կը խաղան եւ կ'երգեն:

— Կեցցէ՛ մեր կանանց անկախութիւնը, — կը պոռայ Ախոն խնդալով:

— Ապրի՛ն մեր կիները, — կը կրկնէ Չոլոն. — մեզմէ առաջ

անկախութիւն ստեղծեցին. ծափահարեցէ՛ք, — կը հրահանգէ Մանուկը, — քրտական գիւղը Հայաստանի են վերածեր. ալ ի՞նչ կ'ուզէք... :

— Լա՛ւ են ըրեր, շատ լաւ են ըրեր, — կ'ըսեն Արթինն ու Առքոնն ու կը ծափահարեն խելայեղօրէն, բոլորը միասին:

— Հը՛, յետոյ ի՞նչ կ'ըլլայ, Մամիկոնեա՛ն, — կը հարցնէ Պետոն:

Մամիկոնեան կը սպասասխանէ. — Կը սպասեն որ շարակաւորներ երթան եւ աւարը փոխադրեն... վտանգաւոր տեղ են ինկած. Մասունին հրահանգեր է անմիջապէս ետ դառնալ, որովհետեւ թշնամին նոր ոյժեր է ստացեր եւ յարձակումի կը պատրաստուի՝ սուբհանդակ Մուրոյի տեղեկութիւններուն համաձայն: Թորոն եւ Կարոն զրկուած են օգնելու կանանց. բայց կիները չեն ուզեր զիւրը ձգել. «Վտանգէ փախչող չենք, եւ զիւրը կը թողունք արիւնի գնով միայն», կ'ըսեն:

— Բայց այս գիւղը մեր կռիւի գիծէն դուրս է, — կ'առարկեն Կարոն եւ Թորոն:

— Այո՛, բայց մենք կռիւի գիծը բերինք հոս, — կը պատասխանեն կիները:

— Աննպատակ է հոս կռիւի մտնել. ստիպուած կ'ըլլանք մեր ոյժերը թափել ձոր եւ ատիկա ձեռնտու չէ մեզի, — կ'ըսէ Կարոն:

— Ո՛ւր որ ալ ըլլանք, մենք հաշտուած ենք մեռնելու հետ, — կը պատճառարանեն կիները:

— Ճի՛շդ է, մենք հաշտուած ենք մեռնելու հետ, բայց մեր նպատակն է թշնամին ալ մեռցնել մեզի հետ. եւ որովհետեւ մենք քիչ ենք, ատոր համար յարմարագոյն զիրքերը պէտք է ընտրենք՝ աւելի շատ թշնամին մեռցնելու, քան թէ մենք մեռնելու... : Յետոյ կը մոռնաք, որ դուք հրամանի տակ էք, ինքնազուխ զօրծելու իրաւունք չունիք. Մասունին որքան ալ գնահատէ ձեր յանդգնութիւնը, այնուամենայնիւ պիտի վշտանայ ձեր անհնազանդութեան համար:

Վերջապէս Կարոն եւ Թորոն համոզելով կիները, կը հեռացնեն գիւղէն, որմէ չէին ուզեր բաժնուիլ, իրրեւ իրենց անկախութեան եւ ազատութեան առաջին խարխախը:

— Դէ՛հ, ի հարկէ դժուար է այդքան շուտ բաժնուիլ իրենց անկախութենէն. ով որ ալ ըլլայ պիտի ցաւի... , — կը խորհրդածէ Ախոն:

— Անշուշտ լաւ են անկախութիւնն ու ազատութիւնը, բայց զժրախտաբար երկուքն ալ չկան... — ըսաւ արտում գինուոր մը։
 — Եւ զժուար է գանել... — եզրակացուց ուրիշ մը։

Անտոքի լեռնաշղթան ծանր նստած, կը դիտէ իր շուրջի անցուզարձը. ու կը խոհայ... Ի՞նչ փառահեղ է առասպելական քաջերու այդ յենարանը, որ խորհրդանիշն է հայ ցեղի անմեռ ոգիին, եւ անոր յաւերժական գոյութեանը. դարեր են անցեր, ու դարեր պիտի անցնին, իրենց դաժանութիւններով, բայց անիկա կայ ու կը մնայ, ինչպէս հայկական ոգին...:

Մըքան ալ ծանր ըլլան աղէտներն ու փոթորիկները, Դաւթի սուրբ պիտի փայլատակէ. Մամիկոնեանց հերոսներու գուպարը պիտի արձագանդէ հորիզոններու վրայ, Մեծ Գրգոյի ստնածայնը պիտի լսուի. Գէորգն ու իր կորիւնները պիտի մոնչեն. Արծիւը պիտի սուտանի...: Ահա Արծրունին, Մամիկոնեան, Իշխանագուն, Վահագնեան, Իշխանեան, Սորխոտունի, Ազատեան, Արցախեան, Վիշապեան, Ասպետեան եւ իրենց կորիւնները, որոնք սերունդն են առասպելական քաջերու, եւ որոնք պիտի իյնան ասեղ կոիւններու մէջ, եւ նորերը պիտի գան, աւելի հզօր, աւելի շքեղ ու աւելի հոյակապ, ինչպէս է ինքն Անտոքը, ներշնչողը մեծութիւններու եւ մեծագործութիւններու...:

Ահա՛ Անտոքի վիթխարի հեղինակութեան տակ, եւ անոր փէշերուն վրայ, գոյամարտի կռիւ մղող մարմինը, որ որոշումներ տալու ծանր երկունքի մէջ է...:

Ազատեան.— Արցախեանը սխալ կը մտածէ. բոլոր զիծերէն յաղթանակի լուրեր կու գան, եւ սակայն կ'ուզէ ճակատը սեղմել նեղ օղակի մը վրայ. այդ նեղ օղակին մէջ արդէն մենք կը խեղդուինք, առանց թշնամիի նոյնիսկ։

Ասպետեան.— Այնքան ալ սխալ չէ Արցախեանի մտածումը. այդ տարածուն վիճակը մենք չենք կրնար պահել. թշնամին նոր ոյժեր է ստացեր, եւ աստիճանաբար կը թափանցէ լեռնաշխարհէն ներս։ Զինեքուրի զիծէն, Աթանազինէի ձորէն, Սարցն գոմերու հովիտէն, Սուշրաջրմէն, Տիգրիսի ախունքներէն եւ հարաւային փէշերէն այդ անցքերը զժրախտաբար բաց են, եւ եթէ չկանխենք, մեր զիծերու թիկունքը կը վտանգուի եւ մեր ոյժերը իրարմէ կը բաժնուին։

Վիշապեան.— Այդ թափանցումը բոլորովին կը փոխէ կա-

ցութիւնը. մենք չենք կրնար պահել մեր զիծերը երբ թիկունքը վտանգուած է. ճիշդ է, Մամիկոնեանը, Արծրունին, Սորխոտունին, Իշխանագունը, Իշխանեանը, Սասունին հրաշքներ կը գործեն, որովհետեւ թիկունքը ապահով է, իսկ երբ թիկունքը վտանգուած է, անշուշտ պաշարուող ոյժերու վիճակը ծանր կ'ըլլայ. այդպէս չէ՞, Վահագնեան։

Վահագնեան.— Դժբախտաբար այո՛. անկախ մեր կամքէն, պիտի թողունք մեր կռիւի ներկայ զիծերը։ Եթէ մենք ոյժ ունենայինք, այդ զիծերը աւելի պիտի ընդլայնէինք. բայց որովհետեւ այդ ոյժը կը պակսի մեզի, ներկայ վիճակը նոյնիսկ պահելու հնարաւորութիւն չկայ. մենք գործեցինք սխալ մը, եւ այդ սխալի հետեանքն է որ կը կրենք այժմ, եւ դուք դիտէք թէ ի՞նչ է այդ սխալը. հակառակ իմ պնդումներուս, որ պէտք է Մուշաշէնի վրայ յարձակէինք եւ պետական զինապահեստները զբաւէինք, դէմ գնացիք. նկատելով իրբեւ վտանգաւոր ձեռնարկ. մինչդեռ միայն Մամիկոնեանի եւ Իշխանագունի ոյժերը կը բաւէին այդ ձեռնարկը ի վրուի հանելու. չկատարեցինք այդ վտանգաւոր ձեռնարկը, եւ ատոր համար այսօր վտանգուած է մեր կացութիւնը. բազմաթիւ երիտասարդ կուուող ոյժեր ունինք, որոնք սակայն զէնք չունին։

Արցախեան.— Ճի՛շդ է, եւ դէմ էի նման ձեռնարկի մը, ու այժմ ալ դէմ եմ. այդ ձեռնարկը կրնար մեզ հեռուներ տանիլ, եւ մենք Մուշաշէնի հարցով զբաղած առեն, թշնամին կրնար զանազան զիծերէ լեռնաշխարհը մտնել. այդ մտահոգութեամբ էր որ մենք դէմ կ'երթայինք նման ձեռնարկի մը. կրնայ ըլլալ որ մենք սխալած ըլլանք, բայց այսօր այդ հարցը խնդրոյ առարկայ չէ. խնդրոյ առարկան՝ զիծերը սեղմելն է՝ թիկունքը ապահովցնելու համար։

Ասպետեան.— Լա՛ւ, բայց այդ պէտք է ըլլայ կռիւի հարկադրանքով, որպէսզի չըսուի թէ մենք յաղթական էինք բոլոր ճակատներուն վրայ, եւ լքեցինք ճակատները առանց պատճառի...:

Վահագնեան.— Արդէն կռիւի հարկադրանքով է որ կը թողունք զիծերը եւ ո՛չ թէ կամովին. թշնամին կը սպառնայ մեզի թիկունքէն։

Վիշապեան.— Պէտք է հսկել այն անցքերուն, ուրկէ թշնամին կրնայ ներս թափանցել եւ սպառնալ թիկունքէն։

Ասպետեան.— Թշնամին արդէն ներս թափանցած է զանազան կէտերէ։

Վիշապեան.— Պէտք էր այդ կէտերը հսկողութեան տակ առնուած ըլլային։

Վահագնեան.— Այդ կէտերը հսկողութեան տակ առնելու համար, պէտք էր ճակատներու ոյժերը այդ կէտերուն վրայ փոխադրուէին:

Արամեան.— Ինչո՞ւ:

Վահագնեան.— Որովհետեւ մեր ոյժերը անբաւարար են այնքան լայն շրջագիծի մը համար: Պէտք էր դիժերը սեղմել...:

Ու օղակը կը սեղմուի...:

Պէտք է ընել ինչ որ հնարաւոր է...:

Եւ հրահանգուեցաւ բոլոր դիժերուն լքել իրենց դիրքերը, անցնիլ նշանակուած նոր դիրքերուն եւ զգոյշ ըլլալ՝ չիջնալու պաշարման տակ...:

Կուրղըքի լեռնաշղթային վրայ, Մամիկոնեան ճերմակ նըժոյզը նստած, դիրքերը կը պտըտի. կը նայի դիրքերուն, հեռաւոր հորիզոններուն, Գուրանի հարթավայրին, Քարթի մենաստանին, Եփրատի եւ Արածանի ոլորապտոյտ խաղերուն, եւ մտիկ կ'ընէ Ողական բերդի ջրվէժի ձայնին ու կը խոհայ...: Ընկճուած է, որովհետեւ հրահանգուած է դիրքերը թողուլ...:

— Սուրէ՛ն, դիրքերու վարիչները կանչէ ինձի, — ըսաւ Մամիկոնեան տխուր ձայնով մը:

Ու դիրքերու վարիչները եկան:

Մամիկոնեան.— Ընկերներ, կեդրոնէն հրահանգ կայ՝ անմիջապէս թողուլ Կուրղըքի դիժը եւ շարժիլ Անտոքի ուղղութեամբ:

— Ի՞նչ է պատահեր, — հարց տուին աջէն ու ձախէն.— բարի՛ ըլլայ:

Մամիկոնեան.— Թշնամին կը սպառնայ կտրել մեր թիկունքը, եւ մենք կը մնանք այս լեռնաշղթային վրայ պաշարուած...:

Չոլոյ.— Թշնամին կը սպառնայ կտրել մեր թիկունքը, ո՞ր կողմէն:

Մամիկոնեան.— Արեւելքէն՝ Տափըքէն, Աթանաղինէի ձորէն. հարաւէն՝ Տիգրիսի ափունքներէն. արեւմուտքէն՝ Չինեքուրէն եւ Սուլբայ հովիտէն. թշնամին նոր ոյժեր է կեդրոնացուցեր լեռնաշխարհին վրայ, Տիգրանակերտի, Սղերդի, Հայնէի, Հաղրոյի, Հաղոյի, Շէնի, Ճապաղջուրի, Լճէի, Բալուի, Քղիի, Սարբերդի, Պիթլիսի, Վանի, Էրզրումի եւ Մուշաչէնի բոլոր ոյժերը կեդրոնացուցեր է լեռնաշխարհի շուրջ, չհաշուելով քրտական աշիրէթներն ու խուժանը: Պէ՛տք է աճապարենք, քանի չենք պաշար-

ուած...:

— Քանի որ դիրքերը կը լքենք, կը նշանակէ թէ կորսուած ենք, — ըսաւ Չոլոն, բոլորովին դունատ եւ թախծոտ շեշտով մը:

— Հա՛յ հա՛յ, Չոլոն նոր դիտէ որ կորսուած ենք, — դիտել տուաւ Ախոն, — շատոնց պէտք էր որ այդ դժբախտութիւնը հասկընայինք...:

Վարդան.— Լաւ, թողունք, բայց ո՞ւր պիտի երթանք:

Մամիկոնեան.— Անտոք:

Վարդան.— Յետո՞յ...:

— Այ ի՛նչ յետոյ... յետոյ ի վերին Երուսաղէմ, — խնդալով ըսաւ Պետոն:

— Գնա՛ բերանդ լուս, Պետո՛յ. քեզ ո՛վ կ'ընդունի հոն. մեզ հոս չեն ընդունիր, ո՞ւր մնաց այնպեղ, — մէջ մտաւ Ախոն:

— Մի՛ վախնաք տղաներ, — աւելցուց Չոլոն. — եկած ենք դժոխք, եւ պիտի երթանք դժոխք. չեմ կարծեր թէ դժոխքը այս տեղէն աւելի վատ ըլլայ:

— Պէտք չէ՛ դիրքերը թողուլ, — ըսաւ Գարրիկ, յայտնապէս բարկացած:

— Կը պաշարուինք եւ կը կոտորուինք, Գարրիկ, ի՞նչ կ'ըսես դուն:

— Առքո՛յ, երթանք Անտոք, հոն եւս պաշարուած վիճակի մէջ ենք, — առարկեց Գարրիկ:

— Այո՛, Գարրիկ, բայց հոն մեր թիկունքը ապահով է, — վրայ բերաւ Արթին, — եւ մեր ոյժերը ամփոփ կ'ըլլան:

— Է՛հ լեռնաշխարհի դուռները կամովին բանանք թշնամիին առջեւ ու երթանք Անտոքի կատարին եւ ապա բարձրանանք երկինք...:

Մամիկոնեան.— Կամովին չէ որ կը թողունք, Ախո՛յ, այլ հարկադրանքի տակ է որ կը բաժնուինք մեր դիրքերէն, ուր թէեւ քանի մը զոհեր ունեցանք, բայց փառաւոր յաղթանակներ եւս տարինք:

Ախոյ.— Ճի՛շդ յանուն այդ յաղթանակներուն պէտք չէ որ թողունք դիրքերը, եւ եթէ պաշարուինք, կը ճեղքենք պաշարման օղակը եւ կ'իջնենք Գուրան:

Մամիկոնեան.— Կ'իջնենք Գուրա՞ն... Ախո՛յ, դժբախտաբար, հայկական Գուրան չկայ այլեւս, Գուրան ծայրէ ի ծայր կը հեւայ Բաղրեւանդէն, Հարքէն, Ապահունիքէն, Վասպուրականէն, Խնուէն ու Վարդոյէն եկած քրտական աշիրէթներով, որոնք մեր

մահը կը փնտռեն, եւ ո՛չ թէ մեզ կը հիւրասիրեն:

Հայրոյ.— Փոխանակ իջնելու Դուրան եւ մեռնելու, կ'երթանք Անտոք, եւ մեր ժողովուրդին հետ միասին կը մեռնինք:

Մամիկոնեան.— Հրահանգեցէ՛ք կռուող ոյժերուն, թո՛ղ պատրաստուին ճամբայ ելլելու, քանի ուշ չէ:

Մանուկ.— Մեր միւս զիժերուն եւս նոյն հրահանգը գացե՞ր է:

Մամիկոնեան.— Այո՛:

Ու ահա շարժում եւ ժխոր դիրքերուն մէջ:

— Ինչո՞ւ կը թողունք զիրքերը:

— Ի՞նչպէս թողունք զիրքերը:

— Մե՛զք որ կը թողունք զիրքերը:

— Հրամայուած է եւ պարտաւոր ենք:

— Պէտք է աճապարել, քանի չէ կտրուած մեր թիկունքը:

— Շէնքը վտանգի տակ է, զե՛ս զիրքերու մասին կը մտածէք:

— Ի՛հ ուրեմն, «մնաք բարի» ըսենք զիրքերուն, Դուրանին, զիմացի լեռներուն, Քարկէի մենաստանին, Արածանիին ու Մեղրազեանին. թերեւս անգամ մըն ալ չտեսնենք Մշոյ աշխարհը:

Ու անոնք ծանր սրտով լքեցին զիրքերը. Մամիկոնեան ճերմակ նժոյզին վրայ նստած, առջեւէն կը քայլէ. զինուորներ կը հետեւին զինուորական շարքերով եւ յուզուած կ'երգեն «Ձէնքի շարժումէն ցնցուած է երկիր»...:

Ախոյ.— Տղանե՛ր, թշնամին վաղը պիտի լեցուի մեր զիրքերը եւ պիտի զարմանայ թէ ինչո՞ւ լքեր ենք:

Սանդրոյ.— Ու պիտի հպարտանայ, թէ ի՛նչպէս զրաւեց:

Չուրոյ.— Անչո՛ւշտ, եւ մեր ոսկորները կրծելու փոխարէն, թո՛ղ կրծէ այն կերուած ոչխարներու ոսկորները, զոր թողուցինք զիրքերուն մէջ:

Պետոյ.— Մի՛ մտածէք. երբ ալ ըլլայ, անոնք մեր ոսկորները պիտի կրծեն:

Ախոյ.— Միթէ մենք քի՞չ կրծեցինք իրենց ոսկորները. խեղճ հրամանատար Րիֆաթի ոսկորները զեռ արեւուն տակ կը ճերմըկնան:

Չուրոյ.— Հապա Նուրի պէ՛յի, Օսմանի, Բեմզիի, Սէիտի եւ Բրզուզի ոսկորնե՞րը... եւ զինուորները յաճախ կ'երթային անոնց վրայ ջուր թափելու, որ արեւէն չչորնան...:

— Իսկ մեր ոսկորները ո՞վ պիտի ջրէ, — հարցուց Վարդան:

— Ո՛վ որ կրծեց, թո՛ղ անիկա ջրէ, — պատասխանեց Մանուկը:

— Մամիկոնեա՛ն, տե՛ս, այն ի՞նչ է որ կը շարժի Վաղքի մարդերուն մէջ, — ըսաւ Պետոն, ձեռքը երկարելով դէպի Վաղքի մարդերը՝ ցոյց տալու համար այն սեւ ու մութ զանգուածը, որ կը շարժկաի...:

— Չո՛րք է, — բացականչեց Ախոն, ներուժ նայուածքով մը զիտելով Վաղքի մարդերու խլրաուն զանգուածը:

— ձի՛չք է, գորք է, — հաստատեց Չուրոն:

— Եւ շատ են, — ըսաւ Մանուկը, հեռադիտակով ուշի-ուշով քննելէ ետք, — եւ ո՛չ միայն գորք, այլեւ հեծելազօրք եւ խուժան: Աճապարեցէ՛ք. թշնամին կ'ուզէ մեր նահանջի զիժը կտրել, եւ կը սպաննայ Շէնքին:

Պետոյ.— Առանց կանոց առնելու կը քայլէ, քիչ է մնացեր որ իջնէ Գորշ ժայռի ձորը:

Չուրոյ.— Միտք ունի անպատճառ Շէնքը զրաւելու: Եւ մենք թոյլ պիտի տանք որ Շէնքը զրաւուի առանց կռիւի:

— Ի՛հ, տակաւին չմեռանք, — պղաւեց Վարդան, — այդքան ալ զիւրին չէ մեր տունն ու տեղը թշնամիին թողուլ:

Մանուկ.— Մամիկոնեա՛ն, կարգադրէ, քանի ուշ չէ:

Ու Մամիկոնեան հրահանգեց.

— Վարդա՛ն, ձեր ոյժերով անցէք Կարմիր հողերու զիժը: — Չուր՛ոյ, զուք ձեր ոյժերով Ալճի բլուրները բռնեցէք: — Պետո՛յ, զուք Այգլի բարձունքները պահեցէք: — Մանուկ եւ Ախո՛յ, բռնեցէք Դարէի բլուրները, որ կ'իջիսէ ՔնՓանի ձորի վրայ: Առքոյ իր ոյժերով անջրդի արտերու զիժը: Սանդրոն ու Արոն Աւսուրքի բարձունքները: Արթին եւ Մկրոն Գորշ ժայռի այս կողմի լեռնամասը: Մնացած ոյժերը թող ինձի հետ քալեն: Աճապարեցէ՛ք, քանի թշնամին չէ գրաւած նշանակուած զիրքերը:

Ու անոնք վազէ վազ բռնեցին նշանակուած զիրքերը, այսինքն Կուրդքի Աւսուրքի գիժը:

Ու կռիւը սկսաւ. ծանր կռիւ է. լեռ ու ձոր ձայն կու տան. չորս կողմէն վժժիւնը կու գայ. զնդակներու եւ համազարկերու որոտէն մարդ կը խլանայ. զնդակի տեղատարափէն հող ու քար կը բզկտուին... ու վայրենի պոռչուածքներ եւ գոռում-գոռումներ ժը-

խորը աւելի ծաւալուն եւ սարսափազդու կը դարձնեն. իսկ Վաղքի մարգերէն ու բարձունքներէն թնդանօթները անդադար կ'որոտան:

Ու Մամիկոնեան կը խրախուսէ... «Ի՛մ քաջեր, թշնամին ուժեղ է. զինուորական խիտ շարքերը իրարու ետեւէ կու դան, աշխրէթներ լեռ ու ձոր բռներ են, հեծելազօրքը շուրջառիկ շարժումներ կ'ընէ. կռիւր ծանր է եւ աւելի պիտի ծանրանայ. ինչ զինով ալ ըլլայ, պիտի աշխատինք եթէ ոչ ցրուել, զոնէ կեցնել յարձակումը. Աթանազինէի գիծին վրայ նոյնպէս ուժեղ կռիւ է. դժուար թէ Իշխանազունի ոյժերը մեզի օգնութեան հասնին. պէտք է դիմանալ մինչեւ կեդրոնէն Վահագնեանի կամ Վիշապեանի ոյժերը գան: Կարի՛ճ եղէք. Աստուծոյ կամքով Կուրղըքի յաղթանակը այս անգամ հոս պիտի շահինք:

— Գուրգէն, ծանր օր է. թշնամին ընկրկում չի ցուցներ եւ կը յառաջանայ: Կը լսե՞ս, մօնչիւնը ինկեր է Չոլոյի դիրքերը. երեւի նեղն են որ ոյժ տուած են մալղէրին, — ըսաւ Մխոն՝ հրահանը լեցնելով:

— Քրտինքը մեզ կը խեղդէ, Մխո՛յ, հրացանն ալ տաքցեր է, կարծես պիտի պայթի. կռիւն ալ տաքցեր է, ու պիտի հալեցնէ մեզ. դիմացի մացառէն խումբ մը զինուորներ մեզ շատ կը նեղեն, պէտք է ջանալ մացառը կողմնակի կրակի տակ անել, որպէսզի փախչին, — ըսաւ Գուրգէն ու տեղէն շարժեցաւ քանի մը ընկերներով:

— Տղա՛ք, Գուրգէնը գնաց, — պոռայ Սադոն. — տուէ՛ք մացառին, թող զբաղին մեզմով, որպէսզի Գուրգէն վրիպի իրենց ուշադրութենէն: Ապրի՛ս, Գուրգէն, հասա՛ւ նպատակին, արդէն կողմնակի դանոնք կը ծեծէ, եւ ահա լքեցին մացառը ու փախան. Գուրգէն ու իր ընկերները մացառը զբաւեցին:

— Այս ի՛նչ ահռելի յորձանք է. թշնամին կատղեր է, սար ու ձոր քանդել կ'ուզէ. զնդակի տեղատարափէն առաջ եկած փոշիի ամպերէն աչքերնիս բան չի տեսներ, — կը տրտնջայ Չորոն. — Տղա՛յ Աբրէ, կռիւի ծանրութիւնը ինկած է Չոլոյի դիրքերուն վրայ, լաւ է, Գորշ ժայռի լեռնամուտէն կողմնակի ծեծեցին. ճնշումը թեթեւցաւ, եւ զօրքը իր ոյժը դարձուց դէպի անջրդի արտերու գիծը...:

— Ու Առքոյի ոյժերը բաւական յոգնեցան, մինչեւ որ խուժումի ընթացքը փոխեցին Գորշ ժայռի ձորի վարի ուղղութեամբ. այժմ թշնամին սեղմուեր է Գորշ ժայռի ձորին մէջ, մէկ կողմէն Չոլոյի ոյժերը Ալճի բլուրներէն, միւս կողմէ Առքոյի ոյժերը ան-

ջրդի արտերու գիծէն կրակի տակ են առած. թշնամին բաւական կորուստ ունի, կը դալարուի ինքն իր վրայ, կը դառնայ դէպի Ալճի բլուրները, եւ բլուրներու արանքէն կը յաջողի թափանցել ներս: Չոլոյի դիրքերու մէկ մասը պաշարման վտանգի տակ կ'իյնայ, բայց Մամիկոնեան եւ իր կորիւնները մէկ կողմէն, Վարդանի ոյժերը կը հասնին միւս կողմէն, եւ թշնամին երեք կողմէն իյնալով համազարկի տակ՝ կորուստներով կը նահանջէ դէպի ձոր, եւ կը բռնէ այս անգամ ձորի վերի ուղղութիւնը, դէպի Գորշ ժայռեր, — ըսաւ Աբրէն խորունկ շունչ մը քաշելով. — այս լարուածութիւնը մարդս ուժասպառ կ'ընէ. բայց ահա՛, ահա՛, Գուրգէն, տե՛ս, հեծելազօրքը Գորշ ժայռի տակէն բարձրանալով կ'իջնէ Գորշ ժայռի այս կողմի լեռնամուտին գլուխը, Արթինի եւ Մկրոյի դիրքերէն վեր, եւ կ'արշաւէ դէպի Կարմիր հողերու գիծը, ջանալով կարել ըստը կռուող ոյժերու թիկունքը: Լա՛ւ որ Վարդանի ոյժերէն մէկ մասը, Գարբիկ եւ Պետրոս, իրենց ընկերներով այդ գիծի վրայ կը հսկէին. ուժեղ համազարկի տակ առին. Արթինի եւ Մկրոյի ոյժերէն մաս մը, նոյնպէս իրենց հրացանները այդ կողմ դարձուցին. տրուած համազարկերէն հեծելազօրքը քանի մը հողի կորսնցուց, ու նորէն դարձաւ դէպի ձոր, եւ քանի կը փորձէ բարձրանալ, նորէն կը ծեծուի եւ կը քշուի դէպի ձորը: Գարբիկ եւ Պետրոս հետապնդելով խուճապահար հեծելազօրքը փակեցին Գորշ ժայռի ձորի վերի անցքը, եւ սկսան ձորի մէջ ծեծել: Անջրդի արտերու գիծէն Առքոյի ոյժերը նոյնպէս քշեցին թշնամին դէպի ձոր, եւ փակեցին ձորի վարի անցքը: Ու Մամիկոնեան կը հրամայէ ծեծել ձորը եւ չթողուլ թշնամին որ ձորէն բարձրանայ:

— Ապրի՛ն մեր տղաները, — պոռայ Աբրէն խանդալառուած, — ահա այսպէս կը բանտարկեն. թշնամին կա՛մ պիտի նահանջէ եւ կա՛մ պիտի փճանայ...:

Զինուորական գալարափողերը աւելի ուժեղ սկսան հնչել, թուրացած յարձակման նոր թափ մը տալու համար. հրամանատարներ ձեփախէ իրենց Ետեմ զօրքը կը խրախուսեն, եւ կը սպառնան տատանուողներուն՝ զինուորական ատեանին տալ: Քրտական հեծելազօրքը այդ անյաջողութենէն վիրաւորուած կը զգայ ինքզինքը եւ վճռական գրոհի կ'ուզէ անցնիլ...:

— Սրիկանե՛ր, մեզ կը հաւատացնեն թէ մեր առջեւ քանի մը աւազակներ կան. ասիկա քանի մը աւազակի դո՞րժ է:

— Տո՛, ի՛նչ աւազակ, Մեհմէ՛տ, ասիկա կատարեալ դժոխք

է, որ մեզ կը լափէ. գիտե՞ս ինչքան կորուստ ունինք. եւ դուն ալ հաւատացիր որ մեր գործը քանի մը աւազակներու հետ է, — ըսաւ Ախտար, ահաանքը կը ճտեղծուի եւ հայհոյելով ստախոսներուն...:

— Է՛հ, ընկերներ, գոչը եղէք, մեր առջեւ փորձառու գայլեր կան, մեր գործը իսկական հերոսներու հետ է եւ ո՛չ թէ աւազակներու. աւազակները անոնք են, որոնք ափեղցփեղ կը խօսին եւ մեզ կը խաբեն: Ծանորդի Ալի շաւուշը մտրակով զինուորները առաջ կը քշէր որ կոտորուին, մինչեւ որ զնդակ մը պատուեց փորը եւ ազիքները գետին թափեցան: Իսկ հարիւրապետ Ֆելզին այնպէս մը շրջեցաւ կանակին, որ գանկը դարնուեցաւ քարի մը եւ ձեղքուեցաւ: Տիգրանակերտի շրջանին մէջ խեղճ Հայերուն արիւնը ծծեց. կը կարծէր հոս ալ նոյն խաղը պիտի խաղայ, բայց մէքը լացուցինք...:

— Հապա այդ շուն Եւփիին, չես բեր թոֆիք, ի՞նչպէս կը դողար մացառին տակ կծկուած. շան լակոտը Պշերիկի եւ Սլիվանի շրջանները մոխիր դարձուց, բայց հոս, այս ձորին մէջ, փսխեց... խօզի նման կը խորզար երբ զնդակ մը կողերը ծակեց...:

— Այս ձորը շատերու գերեզման դարձաւ եւ տակաւին շատերուն ալ պիտի դառնայ. այս զինուորական շուները կարծես մեզ գիտամար բերեր ու կոխեր են այս ձորին մէջ, որ կոտորուինք:

— Այո՛, կա՛մ պիտի կոտորենք կա՛մ պիտի կոտորուինք. այնպէս կ'երեւի որ պիտի կոտորուինք, որովհետեւ մեր տղամարդու թիւերը հոս չ'անցնիր. մեզի պէտք են անգէն բազմութիւններ, որ գայլի նման յոշոտենք եւ հերոսութեան երգեր երգենք:

— Ի՛նչ շուարեր էք, — պղտեց դող Ահմէտ, — կարծես թէ պետութիւն մըն է մեր առջեւ. պիտի յարձակինք, նորէ՛ն պիտի յարձակինք. ո՛վ մեզմէ ինկաւ, թո՛ղ իյնայ, բայց պիտի լռեցնենք այս շուն Հայերը, որ համարձակեր են գէնք վերցնել մեր գէմ, եւ ի՞նչ է իրենց ոյժը. եթէ մէկ երկու համազարկ ալ տան, արգէն կը մնան առանց փամփուշտի...:

— Հա՛, նորէն սկսար պոռոտախօսութեան, համարձակեր են գէնք վերցնել մեր գէմ, Ահմէտը վիրաւորուեր է...: Այո՛, գէնք վերցուցեր են, եւ մեր մէքն ալ լացուցին. նայէ՛, տե՛ս, ի՞նչքան կորուստ ունինք, եւ ի՞նչքան կորուստ պիտի ունենանք մինչեւ կաբենանք լռեցնել. տղամարդու թիւերը հոս է. կապեն բազուկները, զնն առջեւ, որպէսզի տղամարդու թիւն ծախես. ահա յարձակումի փոքր կը փչէ, քալէ՛ տեսնեմ, դաս մը տուր ասոնց, համարձակեր են գէնք վերցնել մեզի գէմ...:

— Թոստ՛ւն, կը լսե՞ս, «յառա՛ջ» կը հրամայէ ձեւակթը, չչարժի՞ս...:

— Թո՛ղ տուր, Իպրահիմ, Աստուած սիրես, ձեւակթի մէքն ալ. կը կարծէ թէ Սղերդի շրջանն է, հաւու միս ուտէ եւ աղջիկ խաղցնէ: Նախ թող ինքը շարժի. այս խեղճերը որ ինկած են, յառաջ երթալու զոհերն են, եւ երեւի կարգը մեզի է: Սա Նեախմին նայեցէք. ի՛նչպէս Հայերը կը լեցնէր մարազներու մէջ եւ կը վառէր. ինչո՞ւ հոս նոյն բանը չ'ընեն. կծկուեր է ձորի մէջ եւ հրաման կ'արձակէ... «յառա՛ջ», ու խեղճ զինուորը կը քալէ զնդակի գէմ եւ կ'իյնայ, որպէսզի վեհափառ Սուլթանը, երլարդի պալատին մէջ ոսկիէ բաժակով զինի խմէ եւ զուարճանայ...:

— Ծատ մի՛ տրանջար, Թոստ՛ւն. թագաւորը եթէ զինի կը խմէ, մենք ալ արիւն կը խմենք. մեր խմածը աւելի կարմիր է եւ աւելի զինուորացու. միայն թէ այս շանորդի Հայերը կծծի են, այնքան ալ զիւրութեամբ իրենց արիւնը չեն տար մեզի. շատ շրջաններ գոռարութիւն չ'անցնին, եւ մենք առատօրէն խմեցինք այդ կարմիր հեղուկէն. իսկ հոս մեր զնդակի տեղատարափը ի զուր կ'անցնի. բայց իրենց համազարկէն մերոնք խտտի նման կը թափին. այս շանորդի Հայերու զնդակին մէջ մասնաւոր ոյժ մը կայ, եւ աւելի շատ կը քաղէ զանոնք, որոնք աւելի շատ Հայու արիւն ունին իրենց շալակին...:

— Հապա ինչո՞ւ Նեախմին եւ ձեւակթին չի հանդիպիր, — հարցուց Թոստուն:

— Անգամ մը թող յարձակումի անցնին, եւ իրենք զիրենք ցուցնեն, տես թէ ի՞նչպէս խարխուլ նաւակի նման կ'իջնեն ջուրի յատակը:

— Իսկ սա քրտական հեծելազօրքն ու խուժանը ի՞նչ գործի վրայ են:

— Թո՛ղ տուր այդ սրիկաները. անոնք ո՛ւր, կոխ ընել ո՛ւր. ասոնք թալանի սորված մարդիկ են, մեզի հետ եկեր են թալանի համար միայն. կ'աղմկեն, կը վազեն, բայց երբ մէկ-երկուքը իրենցմէ շրջին, խուճապահար կը փախչին, եւ այսպէս կը թուլցնեն մեր զօրքի բարոյական կորովն ալ:

Քրտական հեծելազօրքը այս անյաջողութիւններէն եւ կորուստներէն շուարած, նոր գրոհի մը կամքը կը դարբնէ ու պատասխանատուութիւնը կը փնտռէ...:

— Չաթո՛յ, Չաթո՛յ, մենք բոլորովին աշիրեթական պատիւը

ձգեցինք, — ըսաւ Շաւէշ ջղային թոնով մը:

— Ի՞նչ կը խօսիս, Շաւէ՛շ, մենք ինչո՞ւ ձգեցինք աշխրեթա-
կան պատիւը:

— Հապա ի՞նչ են այս քանի մը քոսոտ Հայերը, որոնց հետ
դու չենք կրնար ելլել եւ որոնք այսքան զոհ խլեցին մեզմէ:

— Ո՛վ կ'արգիլէ ձեզ, եթէ իրենց հաշիւը մաքրէք:

— Ո՞վ, դո՛ւք. քանի մենք կը յարձակինք, դուք կը նահան-
ջէք...:

— Ի՞նչ ըսել կ'ուզէք, — հարցուց Չաթոն վիրաւոր թոնով
մը:

— Կ'ուզեմ հասկնալ թէ ինչո՞ւ էք եկեր:

— Հա՛, այդպէ՛ս. եկեր ենք որ կոտորենք, իսկ երբ կը կո-
տորուինք, մենք հոս գործ չունինք...:

— Է՛հ հասկնալի է... Հայկական շրջանները անխնայ փճա-
ցան մեր ստաբերուն տակ, կատղած դալլ էինք դարձեր եւ անզէն
բազմութիւնները վայրագորէն կը բզկտէինք: Հոս ի՞նչ պատահե-
ցաւ, որ նոյն բանը չենք կրնար ընել. հա՛, զնդակը կը սուլէ... ու
կապուած բազուկներ չկան... ամէն տեղ անպատիւ խաղ մը խաղ-
ցանք, հոս գէթ պատուով դուրս դայինք, որ զոնէ ծածկէր այդ
բոլոր անպատուութիւնները...:

— Շաւէ՛շ, ես մարդ չունիմ կոտորել տալու:

— Մարդ չունի՞ս. Վարդոյի, Խնուսի, Ալաշկերտի, Մա-
նազկերտի, Պուլանքներու եւ Չխուրայ ու Գուրանի մէջ բազմա-
թիւ ճիւղերներով արքայական պտոյտի ելած էիր. այդ շրջանները
դողացին ու ոչնչացան ձերիներու բարբարոսութիւններէն. հոն
մարդ ունէիք, իսկ հոս ի՞նչ եղան ձեր մարդիկը...:

— Պէտք էր մինչեւ հիմա նկատած ըլլայիք որ կառավարու-
թիւնը կռիւի ծանրութիւնը կ'ուզէ նետել քրտական ոյժերու վրայ,
որպէսզի քրտական ոյժերը փճանան:

— Հա՛, ատիկա նոր միտք է... մասնաւոր դաւադրութիւն
մը չեմ տեսներ քրտական կեանքին հանդէպ. կռիւներու մէջ եթէ
մենք կ'ունենանք զոհեր, նոյն զոհերը կ'ունենան եւ կառավարական
ոյժերը. այնպէս որ ձեր կասկածները անհիմն են...:

— Շաւէ՛շ, հերի՛ք է. զնդակէ վախցող չենք, այդպէս մէկ
աչքով մի՛ նայիր մեզի. ոյժերու խնայողութիւնը լաւ է. կ'ուզե՞ս
որ մեր ոյժերը քամիին տանք... Ի՞նչ ես բռներ Չաթոյի փողպա-
տը, ի՞նչ կ'ուզես. մենք կը քալենք քեզի հետ. անիկա քիչ մը ան-
հանդիստ է. իսկ եթէ քիչ մը աւելի երթաս եւ տաղտուկ պատճա-

ռես իրեն, մեր զնդակը քեզի կը դառնայ, — ըսաւ Հասանոն դայ-
րացած:

— Հասանո՛յ, Հասանո՛յ, տղամա՛րդ ես, զնդակը հո՛ն դար-
ձուր, հո՛ն, ուր Մամիկոնեան եւ իր կորիւնները կը մոնչեն, ու
մեզի կը սպասեն, որ իրենց մահը տանինք... անոնք շատ լաւ դի-
տեն, թէ մենք ի՛նչ վայրագութիւններ գործեցինք իրենց անզէն
ժողովուրդի դիմուն. եւ ատոր համար է որ իրենց համադարկերը
աւելի շատ քրտական ոյժերու վրայ կը կեդրոնացնեն. ո՞ւր կը
փախչինք. տղամարդու նման պէտք է քալենք եւ հաշիւ տանք մեր
ըրածին... որպէսզի չթքեն մեր ետեւէն եւ անպատիւ չորակեն
մեզ...:

— Տղանե՛ր, Մամիկոնեանը բոլորովին փոխուեր է, — ըսաւ
Հայրոն. — կարծես երկինքէն իջած է. աստուածային կերպարանք
է առեր. աչքերը կը շողան, եւ անընդհատ դիւբէ դիւբ կ'անցնի ու
կը խրախուսէ:

— Այո, — պատասխանեց Տօնէն, — որովհետեւ դալարա-
փողերը նոր յարձակման մը հրամանը կու տան. սրիկաները չեն ե-
րեւիր ալ որ լռեցնենք. իսկ սա հրամանատարները ո՞ւր են կձկուած.
չկան մէջտեղ...: Ահա փրթաւ փոթորիկը. ի՛նչ գոռում-գոչում է.
Թնդանութիւններու որոտը, զնդակներու կռիւնքը, բազմահազար հրա-
ցաններու տրաքոցը, զնդակի տեղատարափը փոշիի ամպեր կը
բարձրացնեն, ու ոչինչ կը տեսնենք. կարծես աշխարհի վերջն է:

— Աշխարհի վերջը չէ, մեր վերջն է, Տօնէ՛, աշխատեցէ՛ք.
կա՛մ պիտի մեռնինք, կա՛մ պիտի մեռցնենք. մեռնողներու վերջն
է, — ըսաւ Սաֆարը. — Թո՛ղ ըլլայ ինչ որ պիտի ըլլայ, եւ եթէ
չըլլայ, պիտի ընե՛նք. այսպէ՛ս լաւ է. դայը փոթորկոտ օր կը
փնտռէ, ու մենք հրեզէն փոթորիկի մէջ ենք...:

— Միտո՛յ, դալարափողերը տաքեր են. հեծելազօրքը երկու
թեւերու վրայ գրոհի է անցեր, հետեւահազօրքը ալիք-ալիք կը թա-
ւալի, կը բարձրանայ դէպի դիւբերը: Անջրդի արտերու դիծը կըրակ
է կտրեր: Գորշ ժայռի դիմացի լեռնամուտը նոյնպէս. թշնամին
սեղմուած է վերէն եւ վարէն, Գորշ հովիտին մէջ, եւ յորձանք կու
տայ դէպի Չոլոյի դիւբերը. կտրիճ պէտք է աշխատինք եւ զգոյշ
ըլլանք. չըլլայ թէ աժան երթանք...:

— Պա՛հ, այս կռիւի փոթորիկին մէջ կիները մեզի հաց եւ
ջուր կը հասցնեն, ապրի՛ն կրները, — դարձացած ըսաւ Կիրոն, եւ
հարցուց. — Աղջի՛ Անդին, ի՞նչպէս կըցաք հասնիլ դիւբերը զնդա-

կի այս տեղատարափին տակ:

— Օգտագործեցինք ձոր, քար, թուփ ու ծառ. կատուի ըզ-
գուշութեամբ, վազրի ձկունութեամբ, զիկ-զակ, մինչեւ հասանք
գիրքերը:

— Բոլոր գիրքերուն ալ հաց եւ ջուր գնա՞ց:

— Այո՛:

— Ոչ ոքի բան չպատահեցա՞ւ:

— Միայն Շուշանը վիրաւորուեցաւ սրունքէն. ետ դարձու-

ցինք:

— Գիւղը ի՞նչպէս է:

— Լա՛ւ է. Մամիկոնեան հրահանգեր է, որ գիւղը պէտք է
պարպուի եւ ժողովուրդը շարժի Անտոքի ուղղութեամբ:

— Լա՛ւ է ըրեր. շո՛ւտ վերագարձէք. թշնամին շատ է, մեր
գործը՝ ծանր. բարեբախտաբար կորուստ քիչ ունինք. երեւի իրի-
կունը գիրքերը պիտի թողունք. գիւղը թող պարպուի. կուտող ո՞ր
ժերը շուտ կրնան հասնիլ ժողովուրդին:

— Հը՛, ի՞նչ է Պողէ, — հարցուց Օհան խնդալով:

— Չե՞ս գիտեր ի՞նչ է. շուն մըն ալ սատկեցաւ, — պատաս-
խանեց Պողէն:

— Չե՞քդ դալար, Պողէ՛. բայց ի՞նչ օգուտ, մէկը սատկեր է
կամ երկուքը. այս անտէր հրացանը մէկ անգամէն երբ կրակես,
պէտք է հազար զնդակ ցրուէ, որ դուրս ելլես այդ շուներու հետ...
Կոխը լաւ է. ա՛խ եթէ մենք ղէնք ունենայինք եւ զինէինք մեր կո-
րիւններն ու էզ վագրերը, տես թէ ի՞նչպէս կը բզկտէինք այս նա-
խիրը...:

— Լաւ կ'ըսես, Օհան՛, բայց դժբախտաբար չունինք. նորէն
հոգ չէ, մեզմէ իւրաքանչիւրը առիւծ մըն է. մեր մոնչիւնն իսկ
կը բաւէ որ թշնամին լեղապատառ դառնայ. չե՞ս լսեր Մամիկոն-
եանի, Վարդանի, Չոլոյի, Առքոյի, Արթինի եւ իրենց կորիւններու
մոնչիւնը խառնուած ղէնքի շրխկոցին հետ, իրենց վախէն երկինքէն
աստուածներն անգամ փախեր են. այս խաժամո՞ւժը պիտի դիմա-
նայ... Ը՛հ...:

— Հը՛, քաղէ Պողէ, քաղէ՛, ձեռքերդ կանաչ մնան. ճի՛շդ է,
թշնամին շատ է ու անընդհատ զնդակ կը թափէ, բայց մերոնք չեն
ձգեր որ ձորէն բարձրանայ:

— Օհան՛, այդ աւանակները աննպատակ է որ այդքան դըն-
դակ կը թափեն, եւ եթէ այդ զնդակները նպատակի մը հասնէին,
արդէն աշխարհ մարդ պիտի չմնար:

— Բայց մեր զնդակները պէտք չէ աննպատակ անցնին, Պո-
ղէ՛:

— Օ՛հ հօ՛, մեր զնդակները աստուածային ոյժ ունին ու դե-
րագոյն խորհուրդը շալկած՝ վատութիւնը կ'ուզեն սպաննել աշ-
խարհին մէջ, այս արեւին տակ. ո՛չ մէկու զնդակը ի դուր պէտք
չէ անցնի. հակառակ պարագային՝ կ'ենթարկուինք Մամիկոնեանի
պատիժին:

— Եթէ մեր զնդակները բոլորն ալ ի դուր չանցնին, նորէն
չեն բաւեր այս ջուրը կարգի գնելու...:

— Ինկոզներու ղէնքերը կ'օգտագործենք: — Այո՛, բայց ի
վերջոյ վատութիւնը մեզ պիտի խեղդէ:

— Ի հարկէ օր մը պիտի մեռնինք. ատիկա գիտենք. մահը
աչքերնիս առած ենք. այս խուժանը չէ՛ թող բոլոր խուժանները
դան, ի՛նչ կարեւորութիւն ունի...:

— Հը՛, Պողէ՛, շո՞ւտ մըն ալ սատկեցաւ, ապրի՛ս, այս ջո-
ւրը պէտք է հնձուի...:

— Պիտի ընենք որքան կարելի է...:

— Յարձակո՛ւմ, — կը պոռայ հրամանատար ձեւտէթը. —
ձե՛զ տեսնեմ, ի՛մ քաջեր, Աստուած եւ Մարգարէն ձեզի հետ: Ար-
ժեցուցէ՛ք դուք ձեզ. դուք Օսմանեան կայսրութեան պատիւն էք.
ոյժ տուէք ձեր բազուկին... Հիւսէ՛յն, Հիւսէ՛յն, ըսէ՛ք թող զնդա-
ցիները այս կողմ դարձնեն: Տելի՛ Ահմէտ, Տելի՛ Ահմէտ, թնդա-
նօթները թող այս ուղղութեամբ գործեն. Նիազի՛, յառաջ մղէ հա-
րիւրակդ. հարիւրապետ Շելքէ՛թ, քե՛զ տեսնեմ, կտրի՛ճ եղիր, հա-
զարապետի աստիճանին պիտի բարձրանաս: Չաւուշնե՛ր, օնպաշի-
նե՛ր, պատուանշան պիտի ստանաք: Չինուորնե՛ր, ձեզ տեսնեմ,
փրկեցէ՛ք կառավարութեան վարկը եւ մեր դրօշակի պատիւը:

— Այդ ի՞նչ խուճապ է. հը՞, ի՞նչ եղաւ, Ահմէ՛տ:

— Ի՞նչ եղաւ, Ալի օնպաշին դրախտ գնաց, — ըսաւ Ահմէտ
խռոված ձայնով մը:

— Հարիւրապետ Նիազին ալ հոզը դրկեց, — ըսաւ Ռաշիտ՝
սրտադող...:

— Տօ ի՞նչ կ'ըսէք. Մուսթաֆա չաւուշն ալ սրունքները կոր-
սընցուց, — աւելցուց Մետէթ հառաչանքով մը:

— Ա՛յդպէս է. խեղճ զինուորը աջ ու ձախ կը դլորուի, եւ սա-
կայն իրենց հոգը չէ. «յառա՛ջ» կը պոռան, առանց նկատի առնելու
որ շանորդի Հայերու զնդակները չեն ձգեր որ քալենք, — արտըն-

Ջալով վրայ բերաւ Մեհմէտը:

— Համախ'ն, Համախ'ն, — երկու բլուրի մէջէն կը պոռայ հազարապետ Նետիմ պէյ: — Տինտա'ր, ոյժերը բլուրի ձախ կողմէն թող յառաջանան. ձե'զ տեսնեմ, ընկրկիլ ամօթ է, յառա'ջ...: Ապրի'ս Ապտուլլահ, ա'յ շան տղայ, դուն ալ ինկար. քե'զ տեսնեմ, Օմա'ր հաւուշ, ապրի'ս, ահ ա'յղպէս, աճապարեցէք քանի այդ վախկոտ Հայերը չեն փախած. սուինի դացէք... սուինամա'րա...:

Ու գոռում-գոչում է. հող ու քար կը բզկտուին թնդանօթներու համազարկերէն: Ալուծի ծառերը փճացան եւ բլուրները ահօսուեցան. փոշիի փոթորիկին մէջէն զօրքը կը յառաջանայ, սուինամարտի կ'ուզէ անցնիլ: Հեծելազօրքը նոյնպէս կը մոնչէ ու կը թաւալի թեւերուն վրայ:

— Սլո'յ, Սլո'յ, պատուոյ խնդիր է, կանգ մի' առնեք, — կը պոռայ Հըյհաթէ Օսման՝ ձին մտրակելով: — Տե'ս, Մեհմէտ Ալին ի'նչպէս կը սուբայ. երկինքէն իջած ոյժ մըն է՝ Մարգարէէն զըրկուած, խի Զվերտը, ապրի' Զվերտը, հա' հա' հա' կտրեց դիրքերու գիծը եւ դերի պիտի վերցնէ այդ շուները: Տերվիշ աղային նայեցէ'ք. լեռները կը փոշիանան իր կտրիճներու ոտքերուն տակ. ո'ւր մնացին այդ անպէտ Հայերը... Ուլո'ւս, քե'զ տեսնեմ իկիբս. ամօ'թ է մեզի, որ շուարինք այդ ցեցոտ զողերուն առջեւ: Ահա Ծալամազը ի'նչպէս կը թռչի. Աստուծոյ աչքը վրան. ա'յնքան վառեր ու ջարդեր է այս շուներէն, ասո'նց պիտի խնայէ: Է'հ Ամարէ Խալտոյ, օձի ձագեր կան այստեղ, պիտի փճացնենք. դուք էք որ կ'ըսէիք, «Հայերը օձի ձագեր են. ուր որ տեսնենք, պէտք է փճացընենք»... ահա ահա, այս լեռնաշխարհին մէջ օձի ձագեր կան...:

— Օսմա'ն, Օսմա'ն, ինձի Գալէյ Ուսուֆ կ'ըսեն. ամօ'թ իմ կաթին, եթէ ասոնց հաշիւը կարգի չդնեմ: Գըզո'յ, ձիդ քչէ', այս շուներու դիակները մեր ձիերու պոչերէն պիտի քարշ տանք...:

Ու ահուելի փոթորիկ մը կը թաւալի դիրքերուն առջեւ ու շուրջը...:

— Մխո'յ, թշնամին չլթայազերծեց կատաղութիւնը. կա'մ ինքզինք պիտի ուտէ, կա'մ մեզ պիտի ուտէ, — ըսաւ Արմոն, որ թէ' կը կուէր եւ թէ գայլի աչքերով կը դիտէր թշնամիի շարժումները:

— Հո'զ մի ըներ, Արմո'յ, իրար պիտի ուտենք: Երեւի թշնամին սուինի պիտի դայ, աւելի շատ ճնշումը սաստկացուցեր է Ալծի դիրքերուն վրայ, եւ արդէն սուինի եկած է, ու դիրքերը

կ'ուզէ մտնել. մերոնց մաւզերները կը դործեն: Ի'նչ ահուելի որոտում է. կատարեալ դժոխք, ու այդ դժոխքին մէջ պէտք է մեռնի այդ խուժանը, վրէժի աստուածն է, որ գանոնք մեր ոտքը կը բերէ, որպէսզի քաւեն իրենց մեղքը: Անջրգի արտերու գիծն ալ յաջող է, ձորը փակեր են եւ կողէն կու տան, համազարկը կեդրոնացուցեր են քրտական հեծելազօրքին վրայ: Սլոյ, Մեհմէտ, Ալի, Զվերտ եւ մաս մը իրենց ղինուորներէն ինկեր են, ու մնացածը նահանջեր է դէպի ձորը: Գորշ ժայռի դիմացի լեռնամուտի դիրքերը նոյնպէս իրենց վրայ խուժող հեծելազօրքը ջարդեր եւ փախցուցեր են. Ծալամազ, Ամարէ Խալտոյ եւ ուրիշներ Գորշ ժայռի հովիտին մէջ ահահանքի ճանապարհն են բռներ, — ըսաւ Գուրգէն ուրախութեամբ եւ աւելցուց. — Ալիի դիրքերը նոյնպէս լաւ աշխատեցան, շանորդիք կը կարծէին որ սուինով պիտի ելլէինք իրենց դէմ. ողջ մնան մաւզերները, որոնց համազարկը սուինամարտը վիժեցուց...:

— Տղայ Զորո'յ, յարձակման թափը թուլցաւ. թշնամին կ'երեւի թէ կ'ընկրկի, — ըսաւ Կիրոյ, ահանջները սրած. — ահա տե'ս. գալարափողերը լեզունին փոխեցին, նահանջը կը հնչեցնեն...:

— Է'յ հէ'յ, թշնամին կը նահանջէ, — պոռաց Սողոն. — ըսէ'ք թող իրենց սատակները հեռերնին տանին, որ չպղծեն այս հողն ու ջուրը եւ շապականեն մեր մաքուր օդը:

— Այո', թշնամին կը նահանջէ դէպի Վաղբի մարդերը, — պոռացին բոլորը, եւ թքեցին նահանջող թշնամիին ետեւէն, ու սկսան երգել «Մեր վրայ գալուց նման էր անձեղ...»:

Ու «յարձակո'ւմ» կ'ազմկէին դիրքերը:

Մամիկոնեան այցելեց դիրքերը, շնորհակալութիւն յայտնեց իր քաջերուն, խրախուսեց գանոնք, բայց յարձակում չթողարտեց, այլ՝ «խնայեցէ'ք դուք ձեզի. տակաւին շատ դորձ ունինք» ըսաւ, ու Սուրէնին հրահանգեց դիրքերու վարիչները կանչել իրեն մօտ: Եւ եկան վարիչները:

Մամիկոնեան. — Գոհ եմ ձեզմէ. լաւ աշխատեցաք. բարին Աստուած այսօր ալ մեզ յաղթութեան արժանացուց. կը հաւատամ որ օր մը այսպիսի բախումներու մէջ եթէ մեռնինք, պատուաւոր պիտի մեռնինք, ինչպէս մեր այսօրուան զոհերը. երբե'ք չեմ ցանկար անպատիւ մահ մը, որ վայել չէ մեզի. ըսէ'ք ինձի, ի'նչ կորուստ ունինք այսօր:

Չոլոյ. — Այսօր ունինք տասնեւեօթ կորուստ. Ալծի բլուրներու գիծը ունեցաւ ութ կորուստ. Անջրգի արտերու գիծը հինգ. Գորշ ժայռի դիմացի բլուրներու գիծը երեք. Վարդանի ոյժերը

ունեցան մէկ կորուստ:

Արթին.— Այս դժոխքին մէջ տասնեւեօթ կորուստ մեծ բան մը չէ:

Վարդան.— Եթէ իւրաքանչիւր այսպիսի կռիւն մենք տասնեւեօթ կորուստով դուրս գանք, փառք տանք Աստուծոյ:

Մամիկոնեան.— Իսկ ի՞նչ կորուստ ունի թշնամին:

Առքոյ.— Թշնամի՞ն. թշնամին ցաներ է ինքզինքը այս ճորերու մէջ, բլուրներու կողին. ո՛վ կրնայ հաշուել, ո՛վ ժամանակ ունի գրադելու գիւղներով:

Չոլոյ.— Կը կարծուի որ աւելի քան հարիւր յիսուն, որոնցմէ մէկ հազարապետ, քանի մը սպայ, իսկ մնացածը զինուոր. ջրբառական ոյժերէն ինկած են Ալոյ, Մեհմէտ, Ալի, Ֆալամազ, Զըվերտ, Ամարէ Խալտոյ եւ ուրիշներ. առնուած զերիներէն այդ տեղեկութիւնները ճշգեցին Գարրիկ եւ Պետրոս, պարտելով գիւղներուն մէջ եւ ճանչնալով քիւրտ աշիրեթապետերը, առանց հաշուելու խուժանը...:

Մամիկոնեան.— Մեր զնդակներու մեծ մասը ի դուր է անցեր...: Այդ տասնեւեօթ հոգին որ կորսնցուցինք, իրենց մահուան մէջ անպատճառ յանցանքի բաժին մը ունին, այսինքն անխոհեմութիւն, անզուշուժիւն, տաքարիւնութիւն եւ անտեղի յանդգնութիւն:

Վարդան.— Կրնայ ըլլալ. Մամիկոնեան, դուք կ'ուզէք որ մենք աշխարհը կոտորենք, եւ մեզմէ որեւէ զոհ չտանք. ասիկա անկարելի է: Ինչքան զզուշուժիւն եւ պաղարիւնութիւն ալ պահենք, կրնայ զնդակ մը մեզ գտնել, եւ յետոյ այսօրուան սարսափելի փոթորիկին մէջ կ'ուզէի որ մեր իւրաքանչիւր զնդակը չվրէպէ՞ր. այդ ալ կարելի չէ:

Արթին.— Մամիկոնեան, ի՞նչ պիտի ընենք զոհերու դիակները:

— Պէտք է թաղուին իրենց դիրքերուն մէջ, — հրահանգեց Մամիկոնեանը:

Ու անոնք թաղուեցան իրենց դիրքերուն մէջ. եւ Մամիկոնեան կնքեց անոնց զերեզմանները «Հոս կը հանգչին մեր գոյամարտի քաջամարտիկ զոհերը...» ըսելով: Ու զինուորները անոնց գերեզմաններուն վրայ հրաժեշտի արցունքներ թափեցին:

Մամիկոնեան.— Պատրաստուեցէ՛ք, դիրքերը պիտի թողուք:

— Ինչո՞ւ. կանայք նոյնիսկ դժգոհ են, որ մենք Կուրդըքի

դիրքերը լքեցինք, — առարկեց Առքոն:

— Եթէ չլքէինք, այս դիժին վրայ ո՛վ պիտի կեցնէր թշնամին. վստահ եմ կրնեք պիտի կուռէին, եթէ դէնք ունենային, բայց դժբախտաբար չկայ, նկատի առէք որ մեր ոյժերուն մէկ մասը այսօրուան կռիւն չմասնակցեցաւ, որովհետեւ չէինք կրնար մեր թիկունքը բաց ձգել. ատոր համար Պետոյի ոյժերը Այդիի բլուրները բռնեցին: Մանուկի, Ախոյի, Կրպոյի ոյժերը Տափէի բլուրները պահեցին՝ Կուրդըք իջնող ճամբաներու վրայ հսկելու համար...: Զլքե՛նք դիրքերը, բայց երբ վաղը Կուրդըքէն զօրք իջնէ դէպի վար ու կտրէ մեր թիկունքը, ո՛վ պիտի կեցնէ:

— Այս ճակատէն թշնամին նահանջեց, գոյարար թէ վաղը յարձակման անցնի. մենք այժմ ազատ ենք՝ Կուրդըքէն իջնող ոյժին դէմ կանգնելու, բայց մեզմէ մաս մը պէտք է մնան այս դիրքերուն մէջ, — ըսաւ Առքոն:

— Կուրդըքէն իջնող ոյժը գոյարար է գապել. յարձար դիրքեր չկան. եւ երբ Կուրդըքէն ոյժը իջնէ, այս դիժին վրայ ալ թշնամին յարձակման կ'անցնի, եւ մենք չենք կրնար երկու ճակատ պահել. որով պիտի լքենք դիրքերը եւ շարժինք Անտոքի ուղղութեամբ. արդէն լուր գրկուած է զիւր որ պարպեն ու քալեն դէպի Անտոք:

Ու Մամիկոնեան իր ճերմակ նոյսը նստած, բռնեց գիւղի ճամբան. իր ոյժերը զինուորական կարգով կը հետեւին իրեն:

Ահա Վազքի մարդերուն մէջ, ուր նահանջող զինուորական եւ աշիրեթական ոյժերը կը հանդատանան, զինուորական վրանի մը տակ, հազարապետ ձեւյաթը ջղայնոտ ու ընկճուած, կ'երթայկու գայ, սիկար կը ծխէ ու կը մտածէ այդ օրուան զինուորական գործողութիւններու անյաջողութեան վրայ, որ իրեն արժեց այդքան կորուստներ: Մատներուն մէջ թուղթ մը կը դարձնէ, որ ըսպաննուած հայ ռազմիկի մը վրայէն առնուած է. երբեմն վրան կը նայի ու գլուխը կ'օրօրէ. «Կը յաւիտաբարեմ բոլոր կուռող ոյժերուն, որ իրենց կեանքը իրենց չի պատկանիր...: Անոնք որ անդգուշութեան եւ տաքարիւնութեան հետեւանքով, իրենց կեանքը վրայ կու տան, կը նկատուին դասալիք, այդպիսիներ իբր պատիժ, պիտի կրեն հետքը յեղափոխական զնդակին իրենց դիակին վրայ...»: Ու մտանիչ Արշակ կը թարգմանէ զայն իրեն: Ու իմաստը կը վերլուծէ այդ գրութեան. ասիկա գերազոյն անձնագոհութիւններէն ալ դուրս է. հասկնալի է թէ ինչո՞ւ բուռ մը քաջեր ա՛յդքան արիւթիւն ցոյց կու տան... յեղափոխական զնդակ... զարմա-

նալի բան... կոուտը իրաւունք չունի սպաննուելու. եթէ սպաննուի, կը նկատուի դատաւիք, որ կուի գիծէն շուտ կ'ուզէ դուրս ելլել. եւ ատոր համար պիտի կրէ իր մարմնոյն վրայ հեաքը յեղափոխական գնդակին...: Մամիկոնեա՛ն, ի՞նչ ծանր անուն է: Օ՛ր, եթէ մենք դաւադրարար կերած չըլլայինք այս ցեղը, ինչե՛ր կըրնային պատահիլ մեզի հետ. արդեօք ո՛րքան Մամիկոնեաններ կերած ենք...: Մամիկոնեա՛ն, ձեզիտէթ մը կանգնած է քու դէմդ այս նախիրով: Ի՞նչ կ'արժէ այս ջոլիրը քու քաջերուդ քով, որոնց իրաւունք չես տար սպաննուելու...: Խեղճ Նետիմը կերար. ուրեմն, դիս ալ պիտի ուտես. տեսնենք. բայց մենք շատ ենք. ի՞նչքան ալ հալինք, նորէն շատ ենք. եւ եթէ մենք հալելով ձեզ ալ հալեցնենք, ատիկա մեզի համար ո՛չ յաղթութիւն մըն է եւ ո՛չ ալ քաջութիւն մը. ամարդութիւն մըն է, եւ մեր գործը ձեզի հետ, հայ ժողովուրդի հետ, ամարդութիւնով սկսեր է ու այդպէս ալ պիտի շարունակուի...: Մամիկոնեա՛ն, այսքան ոյժով, այսքան քիչ մարդոց դէմ. եւ այսքան կորուստ, անհաւատալի է...: Այդ ի՞նչ արիւթիւն... եւ ուրիշ՞ այսքան քաջութիւն. արդեօք երկինքէն ինկած ոյժեր օդնեցի՞նք քեզի, թէ դուք արդէն այդքան ոյժ ունիք ձեր մէջ: Կը հաւատամ որ ձեր ցեղը ուժեղ է, եւ ատոր համար դաւադրարար կերանք զայն. ի հարկէ ձեզ ալ պիտի ուտենք, բայց ի՞նչ գինով, այսօրը ցոյց տուաւ...:

— Մուսա՛, Մուսա՛, — ձայնեց ձեզիտէթը, — կանչեցէ՛ք ինծի հարիւրապետ Ֆելզին, բոլոր սպաներն ու քրտական հեծելազօրքի պետերը, անմիջապէս թող զան գինուորական խորհրդակցութեան:

Ու եկան կանչուածները: Խորհրդակցական ժողով է...:

— Ի՞նչ բանի կը վերադրէք այսօրուան մեր գինուորական անյաջողութիւնը, — հարցուց ձեզիտէթ:

— Մենք ալ կը զարմանանք, հրամանատար պէյ, — ըսին աջէն ու ձախէն. — ըրինք մեր կարելին, տուինք ծանր կորուստներ. երեւի Աստուած մեզի հետ չէր, ատոր համար մեր զէնքը յաջողութիւն չգտաւ:

— Կորուստներու մասին մտածել աւելորդ է. յաջողութեան մասին պէտք է մտածել. այս լեռնաշխարհը վէրք մըն է պետութեան մարմինին վրայ. այդ վէրքը պէտք է դարմանուի. չյաջողեցանք այսօր, կը յաջողինք վաղը, եւ պէտք է յաջողինք:

— Անչո՛ւշտ, Ֆելզի պէյ, պէտք է յաջողինք, ատոր տարակոյս չկայ, բայց պէտք է յաջողինք որքան կարելի է քիչ վնասով:

Այսօրուան մեր անյաջողութիւնը անոնց ռազմական գիրքերու շնորհիւն էր, — ըսաւ էքրէմ պէյ, պետերը շոյելով:

— Այսօրուան մեր անյաջողութիւնը կու գայ անոնց տղամարդութենէն: Մենք միեւնոյն տղամարդութիւնը ցոյց չտուինք: Այդքան կորուստ որ տուինք, ո՛չ թէ յարձակման պահուն տուինք, այլ ընկրկումի պահերուն: Իւրաքանչիւր յարձակում, որ կը դործուէր, պէտք էր զարգանար եւ ոչ թէ անմիջապէս իր թափը կորսնցնէր: Յարձակման շղթայէն մէկ-երկու հոգի կ'իյնան. այդքան ալ անչուշտ պիտի ըլլար, սակայն պէտք էր գիմանալ, — վրայ բերաւ Նամըզ պէյ:

— Ընչո՛ւղ կ'ըսէ Նամըզ պէյը. յարձակման թափը չէր զարգանար եւ շուտով կը փշուէր: Քրտական հեծելազօրքէն մենք աւելի բան կը սպասէինք, բայց մեր յոյսերը չարդարացան, — գիտել տուաւ Հասան էֆենտին:

— Քիւրտ հեծելազօրքը բրաւ իր կարելին. աւելին՝ հնարաւոր չեղաւ ընելու, եւ զիտէք որ քիւրտ հեծելազօրքը ծանր կորուստներու ենթարկուեցաւ, քան կառավարական ոյժերը, — ատարկեց Ֆլիթ պան:

— Ի՞նչ պիտի ընենք վաղը, — հարցուց ձեզիտէթ:

— Պիտի շարժինք յաղթելու վճռականութեամբ, — ըսաւ Ֆելզի. — անոնք որ ինկան, ճամբայ բացին մեզի. մենք եւս պէտք է իյնանք, որպէսզի ուրիշները շարունակեն: Եթէ մեզի յաջողուի գործը վերջացնել, աւելի՛ լաւ: Ամօ՛թ է կորուստներու առջեւ շարիլ. մենք հրաման մը ունինք դորձադրելու, եւ պիտի՛ դորձադրենք: Եթէ մենք այդ թեթեւ կորուստներու առջեւ չձմած ենք, հապա ի՞նչ բանք անոնց, որոնք ամբողջ ցեղ մը կորսնցուցին: Ինչո՞ւ անոնք չձմած չեն եւ այդքան արիւթեամբ կը կուրին...:

— Անոնք կը կուրին, որովհետեւ ստիպուած են կուրելու, — ըսաւ Գոզէն: — Իրենց մահափճիւր տրուած է, պարտաւոր են կուրիլ. եւ կը կուրին, որովհետեւ հաշտուած են մահուան հետ, իրենց նպատակն է մեզ եւս իրենց հետ մեռցնել. իրենց այսօրուան յաջողութիւնը այս հոգեբանութեան մէջն է. այդ հոգեբանութիւնը կը պակսի մեզի, ինչպէս քիւրտ հեծելազօրքին, նո՛յնպէս կանոնաւոր գինուորին: Մենք աժան գինով կ'ուզենք յաղթել. ատոր համար չյաջողեցանք:

— Շիտա՛կ է Գոզէի մատնանշումը, — ըսաւ ձեզիտէթ. — ատիկա է մեր այսօրուան անյաջողութեան պատճառը. աժան գինով յաջողելու հոգեբանութիւն: Եթէ այդ բանը մեզի յաջողեցաւ

այլ տեղեր, դուք ալ գիտէք թէ ի՞նչ պայմաններու մէջ էր. հոս սակայն պայմանները կը փոխուին. պէտք է փոխուի եւ մեր հոգեբանութիւնը: Այդ նոր հոգեբանութիւնով վաղը ճամբայ պիտի ելլենք, յաղթելու վճռական կամքով, մանաւանդ վաղը օգնական ոյժեր կը ստանանք, եւ միեւնոյն ատեն Կուրդըքի գիծէն զօրաւոր ոյժեր վար պիտի հոսին, թշնամիի թիկունքը կարելու. որով՝ մենք այս կողմէն, Կուրդըքէն իջնող ոյժը թիկունքէն: Թշնամին երկու կրակի մէջ իյնալով պիտի ոչնչանայ: Ուրեմն գացէք պատրաստեցէ՛ք մեր զինուորական եւ աշխրեթական ոյժերը վաղուան կռիւին, որուն յաջողութեան չեմ տարակուսիր...:

Շէնքը գիւղը սուղի մէջ է. տասնեւեօթ զոհ է տուեր օրուան կռիւին մէջ. գիւղացիներ դժգոհ են, որ զոհերը չեն բերուած գիւղ, այլ տեղի վրայ թաղուած են:

Մամիկոնեան ջղայնացեր է. հրահանգը չէ գործադրուած, գիւղը չէ պարպուած:

— Ինչո՞ւ կը սպասէք... կ'ուզէք որ վաղը թշնամիին կե՞ր դառնաք. անմիջապէս պէտք է հեռանաք. ժամանակ չկայ կորսնցրնելու. մենք արշաւող ոյժերը կը դրաղեցնենք որ դուք հնարաւորութիւն ունենաք ճամբայ ելլելու: Զոհերու մասին մտածելը աւելորդ է. անոնք իրենց գործը վերջացուցին. ողջերու մասին մտածեցէ՛ք, որոնք նոյնպէս պիտի զոհուին այս կռիւններու ընթացքին...: Աճապարեցէ՛ք, դեռ լոյսը չբացուած ճամբայ կտրէք, որպէսզի խուսափիք վաղուան վտանգէն եւ գիւրացեցէ՛ք կռուող ոյժերու գործը...:

Ու գիւղը կը շարժի...: Մանր սրտով կը բաժնուին իրենց դարաւոր օճախէն եւ յոյս ալ չունին անգամ մըն ալ զայն տեսնելու...:

Ու անոնք կը բաժնուին իրենց տուներէն, վաղը՝ իրարմէ եւ օր մըն ալ՝ իրենց կեանքէն...:

— Սուրէ՛ն, վարիչները կանչեցէ՛ք եւ լուր տուէք Պետոյին, Մանուկին, Ախոյին, Կրպոյին, թող իրենց ոյժերով գիւղ իջնեն, — հրամայեց Մամիկոնեանը:

— Մամիկոնեա՛ն, սուրհանդակները որ եկան, ի՞նչ լուր բերին կեղբոսնէն եւ այլ ճակատներէն, — հարցուց Վարդան:

— Վարիչները հիմա պիտի հաւաքուին. պիտի տամ եկած տեղեկութիւնները, եւ պիտի մտածենք վաղուան մեր ընելիքի մասին, բայց մինչ այդ, հետեւեցէ՛ք որ գիւղը ամբողջութեամբ պար-

պուի: Հրահանգեցէ՛ք պահակներուն որ ուշադիր ըլլան: Վարիչները երբ դան, գիւղի հրապարակը թող հաւաքուին:

— Մամիկոնեա՛ն, վարիչները արդէն եկած են եւ գիւղի հրապարակը ձեզի կը սպասեն, — լուր տուաւ Զոլոն:

— Լա՛ւ, հիմա կու գամ. գիւղը ի՞նչպէս է, պարպուեցա՞ւ, — հարցուց Մամիկոնեան:

— Այո՛, պարպուեցաւ...:

— Կռուող ոյժերը ի՞նչ կ'ընեն:

— Զբաղած են խորովածով. կ'ուտեն, կ'երգեն, կը պարեն:

— Մամիկոնեա՛ն, հրամանը կատարուած է. եկած են եւ հետախոյզ մարմինները, — լուր տուաւ Սուրէն:

— Լա՛ւ...:

Ահա գիւղի հրապարակը. վարիչները հաւաքուած են, պիտի որոշուի վաղուան ընելիքը: Այդ այն հրապարակն է, ուր իշխանական ժողովներ տեղի կ'ունենային գիւղին գործերը վարելու համար եւ որ կը կոչուի «Մեծ Գրդոյի» հրապարակ: Եւ Մեծ Գրդոյի թոռն է, որ այսօր տուն կու տայ օրուան խնդիրներուն:

Մամիկոնեան սկսաւ գեկոյց տալ.— Ընկերնե՛ր, կեղբոսնէն հետեւեալ տեղեկութիւնները կան.

Ա. Ծովասարի գիծ.— Արժրունին ուժեղ կռիւներ է ունեցեր թուրք-բրտական ոյժերու հետ. երկուտեք կարելու կորուստներ կան: Արժրունիի ոյժերը անբաւարար են ամբողջ գիծը պահելու, թշնամին գանազան կէտերէ ջանացեր է ներս թափանցել, կարելու Արժրունիի ոյժերուն թիկունքը: Արժրունին ստիպուած նահանջեր է դէպի Անտք: Թշնամին իր յառաջխաղացքը կը շարունակէ...: Ժողովուրդը նախապէս հեռացուած է գիւղերէն. թշնամիի ոյժերուն մեծ մասը կը հետապնդէ Արժրունին, իսկ միւս մասը վառելով Քոփ, Աւկերմ, Գեղաչէն, Ծուշնամերկ գիւղերը, Աթանաղինէի հովիտով կը քայլ Սեմալի վրայ՝ միանալու Կուրդըքէն իջնող եւ Վաղքի մարդերէն եկող ոյժերուն հետ:

— Ա՛յ հա՛յ, ուրեմն մենք ինկած ենք աքցանի մէջ, եւ դեռ գիւղացիները չէին ուզեր լքել իրենց տունները, — ըսաւ Ախոն զըլուխը երեւցնելով:

Զոլոյ.— Տղանե՛ր, վաղը շատ ծանր օր մը պիտի անցընենք. մինչեւ իրիկուն արդեօք մեզմէ քանի՞ հոգի պիտի մնան...:

Մանուկ.— Մենք կռիւէն չէ որ կը խուսափինք, այլ կռիւը կը փնտռենք. միայն թէ ժողովուրդը կռիւի գիծէն հեռու պէտք է ըլլայ, որ չկայէ մեր ձեռքն ու ստքը:

Վարդան.— Ժողովուրդը հեռացուցինք եւ մենք այժմ ազատ ենք. գիւղը պիտի հրդեհենք եւ հեռանանք. թող թշնամին զայն չօգտապործէ:

— Վարդա՛ն, Վարդա՛ն, մինչեւ որ «մնաք բարով» չըսենք գիւղին, չենք հեռանար եւ ի պատիւ գիւղին, ուժեղ կռիւ մը պիտի մղենք ու այնպէս անցնինք, — ըսաւ Արթին՝ հրացայտ աչքերով գիտելով շուրջը:

Առքոյ.— Գիւղին մէջ չենք կրնար կռիւ մղել. այդ կռիւը պիտի մղուի գիւղէն դուրս, անտառներու գիծին վրայ:

Մանուկ.— Մենք զեռ այդ որոշումը չտունք. տրուելիք որոշումէն կախուած է թէ վաղուան կռիւը ո՛ւր պիտի ըլլայ. հիմա լսենք Մամիկոնեանը:

— Այրող գիւղերու բնակչութիւնը հեռացեր է գէպի Անտօք: Քոփի, Աւկերմի եւ Աղբիի ոյժերը Արծրունիի հետ են. Գեղաշէնի եւ Շուշնամերկի ոյժերը Իշխանազունին միացեր են:

Բ. Կուրդբի Տալազար գիծը.— Թշնամին Աթանազինէի հովիտով կը յառաջանայ. Իշխանազուն կը հրահանգէ իր ոյժերուն բռնել Կուրդբի-Տալազար գիծը. Ստեփոյ իր ոյժերով կ'անցնի Տալազարի թեւը, իսկ Իսոն Կուրդբի թեւը կը պաշտպանէ, Իշխանազուն մնացած ոյժերով կեդրոնը, Աթանազինէի ձորի վերի ընթացքի եւ երկու կողմի բլուրներուն վրայ:

Կռիւը կը սկսի:

Թշնամին ոյժ կու տայ զնոյսերային եւ թնդանօթային կըրակին, անտառները կը ջարդուին, եւ կ'անցնի յարձակումի. Իշխանազունը խիստ կերպով կը հրահանգէ կռուող ոյժերուն չձգել որ թշնամին անցնի գիւղերէն: Թշնամիի գլխաւոր ոյժը կեդրոնացած է հովիտի անցքին վրայ. հեծելազօրքը Տալազարի եւ Կուրդբի թեւերուն վրայ կը գործէ, որուն կ'ընկերանան եւ մաս մը հետեւակազօրք ու խուժան: Կիները՝ Խըզամ, Շուշան, Խըզալ թէ՛ հացի մատակարարութեան կը հսկեն եւ թէ կռուող ոյժերը կը խրախուսեն:

— Է՛հ, զնդակի տարափին, բարձրացած փոշիի ամպերու մէջ կը կռուինք. սրեցէ՛ք ձեր նայուածքը, որ զնդակ չվրիպի, — կ'ըսեն իրարու, — թշնամին պէտք է մեռնի մեր հարուածին տակ, կը կարծէ թէ իր զնդակի տարափովը մեղ պիտի սարսափեցնէ:

— Տղա՛ք, զարկէ՛ք, թող մեր հարուածէն կազկանձեն ու լըսեն, — կը պտտայ Խորէն՝ արիւնը աչքերուն մէջ, կատաղութենէն աղտաները իրար կը ծեծեն, եւ եթէ զնդակ մը վրիպի, հրացանին

կը հայհոյէ:

— Արա՛մ, նայէ՛ թէ թշնամին ի՛նչպէս կը հօտի եւ կը փրուուի. մեր իւրաքանչիւր համազարկին այնպէս մը կը ցրուի, ինչպէս ոչխարի հօտերը գայլերէն. եւ ի՛նչքան շատ են, կու գան հա՛ կու գան. կ'ընկրկին, նորէն կու գան. գիւղներ կոխկռտելով կու գան, կարծես գիւղերը պիտի մանեն: Տղա՛ք, ոյժ տուէք տասնոցին. հա այդպէս, հայկական զնոյսերն է, որ կ'որոտայ...:

— Խորէ՛ն, ի՛նչ կ'ընես, Խորէ՛ն, — ձայն կու տայ Նազարը. — տղա՛յ, գիւղերը կը լեցուին այլ շանորդիք. ոյժ տուր մաւղերին:

— Ի՞նչ կ'ընեմ, Նազա՛ր, կ'աշխատիմ հնձել, — ըսաւ Խորէն. այդ սրիկաներուն շեմ գիտեր ո՞վ հրաւիրապիւր զրկեր է, որ այդպէս վաղելով կու գան. քանի կը ցրուենք, նորէն կը խտանայ...: Մաղեցէ՛ք տասնոցներ, կարծես յարձակումի թափը կը կոտրի. ընկրկումի մէջ է:

— Թո՛ղ գան, թո՛ղ գան, — կը պտտայ Մկրտն, — իրենց համար նուէրներ ենք պատրաստեր...:

— Ա՛յ հա՛յ, Աւէն ալ նուէրներ էր պատրաստեր, քանի մը շուն զլորցուց, ու ինքն ալ քնացաւ, — ըսաւ Արտաշ: Հա Մկրտ՛յ, երեւի դուն ալ քնանալու միտք ունիս:

— Տօ՛, Արտա՛շ, ի՞նչ կ'ընես, քնանալու ժամանակ է. չէ՞ որ Իշխանազունը կու գայ, կը բարկանայ: Է՛հ վնաս չկայ, եթէ յաջողինք քանի մը շուն զլորցնել, հոգ չէ, անշուշտ օր մը պիտի քնանանք:

— Պայման չէ այդքան շուտ քնանալ Մկրտ՛յ, — մէջ մտաւ Արշակ: — Մենք մէկիկ-մէկիկ եթէ քնանանք, ո՞վ պիտի հսկէ:

— Մի՛ վախնար, հսկողներ շատ կան, միայն թէ զէնք ըլլայ:

— Հերիք է խօսիք, ուշադրութիւն ըրէք, զնոյսը չվրիպի, — գիտել տուաւ Նազարը:

— Իրաւունք ունիս. հապա ի՞նչպէս պիտի քաղենք այս բազմութիւնը եթէ զնդակները ի դուր անցնին, — ըսաւ Միհրան, եւ աւելցուց. — կտրիճ աշխատեցէք: Կեդրոնի ուժեղ գիմաղբութեան հետեւանքով, ճնշումը կեդրոնի վրայ թուլցաւ. եւ Իշխանազուն իր ոյժերէն մէկ մասը աջ ու ձախ թեւերուն վրայ նետեց, որովհետեւ Իսոյի եւ Ստեփոյի գիւղերը ծանր կացութեան մէջ են. հեծելազօրքն ու հետեւակազօրքը միասին յարձակումի են անցեր անոնց գիւղերուն վրայ: Տղանե՛ր, — կ'ըսէ Ստեփոն, — մէկ մասը ձեզմէ թող հեծելազօրքը զրաղեցնէ, իսկ միւսը՝ հետեւակազօրքը:

— Տօ՛, ի՛նչ կ'ընէք, աղանե՛ր, — սրտաց Շաւարշը, — զօրքը հիմա զիրքերը կը մտնէ:

— Լա՛ւ ալ կ'ընէ, — կը պատասխանէ Միհրան պաղարիւնութեամբ. — արդէն եկած ենք հոս զիրենք զիմաւորելու համար:

— Ո՛չ, պէտք է ջանալ հետու պահել. իւրաքանչիւր անգամ երբ մօտենան զիրքերուն, ահազին ոյժ սպառել կու տան մեզի. իսկ այս հեծելազօրքը ո՞ւր կ'երթայ. ահա՛, կ'ուզեն անցնիլ թիկունքը. կը կարծեն թէ զիւրին է մեր կրակին մէջէն անցնիլ. ահա այդպէս թաւազուր կ'երթաք: Դեհ եկէք մի՛ փախչիք. երեւի չէք զիմանար մեր կրակին. հասա մենք ի՛նչպէս կը զիմանանք ձեր կրակէ վարազոյրին, — կը խօսի Սմբատ բարձրաձայն ու կը հայհոյէ:

— Սմբատ, անոնց կրակէ վարազոյրը մեր շուրջ, մեր առջեւ եւ մեր ետեւ կ'իյնայ, — ըսաւ Շաւարշ խնդալով. — կը թուի թէ զժգոհ ես որ մեր վրայ չ'իյնար...:

— Ո՛չ, Շաւարշ, զժգոհ չեմ, բայց կ'երեւի որ հետեւակը միտք դրեր է անպատճառ մեզի հետ ողջագուրուիլ. ատոր ի՞նչ կ'ըսես:

— Պէտք է համազարկի տակ առնել. թող չորցած խտրի նըման թափին այս շուները:

— Ազրէ՛ր, ինչքան ալ թափին, նորէն կու գան: Սրիկաները կը կարծեն թէ զրախտ կ'երթան, — ըսաւ Արրէ՛ զժգոհ թոնով մը:

— Վնաս չկայ, Արրէ՛, — մէջ մտաւ Սամոյ, — թող մեր գնդակը ուտեն, ուր կ'ուզեն թող հոն երթան:

— Տօ մեղք չէ՞, այս շուները զրախտ երթան. ասոնք զժոխքի անգամ արժանի չեն, — պզուէց Գալուստը:

— Հը՞, Գալուստ, չըլլայ թէ կը նախանձիս, կը վախնաս որ քեզի տեղ չի մնար. մի՛ վախնար կը մնայ, եւ երթալու կարգը քեզի ալ կու գայ...:

— Ատիկա ես գիտեմ. դուն քու մասիդ մտածէ, որ զժոխքի մէջ ալ տեղ չունիս:

— Ի՛նչ պիտի մտածեմ, ինչո՞ւ, չե՞մ գիտեր որ միեւնոյն համբու ընկերներն ենք, — ըսաւ Սամոյ խնդալով:

— Փա՛ռք Աստուծոյ, շիտակ խօսք մը լսեցի բերնէդ. աս հրացանիդ ուշադրութիւն դարձուր. գնդակը չվրկպի. ժամանա՞կ գտար կատակի:

— Տղա՛յ, կռիւր առանց կատակի անհամ է:

— Առանց երզի ալ անհամ է. այսօր Մամբրէի ձայնը չի լըսուիր, ի՞նչ է պատահեր:

— Է՛հ, ձեր դործին նայեցէք. ո՛չ խօսելու եւ ո՛չ ալ երգելու ատեն է, — սաստեց Արզար բարկութեամբ:

— Իրաւունք ունիս, Արզա՛ր, մեռնելու ատեն է, բայց լաւ է երգելով մեռնիլ. եթէ երգելով չենք մեռնիր, գոնէ երգելով մեռցընենք, — պատասխանեց Մամբրէն. — իսկ դուն ի դուր կը բարկանաս. բարկանաս կամ ոչ, թշնամին կաշիդ պիտի քերթէ...:

— Տօ անպիտան, թշնամին եկած է բոլորիս կաշին քերթելու. մինակ իմս չէ. իսկ եթէ դուն տղամարդ ես, այս գնդացիները լսեցուր որ զլուխնիս տարին. ես մէկ-երկու անգամ փորձեցի, չյաջողեցայ. միայն հարկադրեցի որ տեղափոխուի...:

— Լա՛ւ, բայց ո՞ր մէկը լսեցնեմ, մէկ հատ չէ որ. մերոնք քանի մը անգամ լսեցուցին, բայց նորէն սկսաւ իր երգը:

— Ա՛հ, տղա՛ք, զիմացի գնդացիքը, որ մեզ շատ կ'անհանդրատացնէր, լսեց. ի՞նչ պատահեցաւ, — զարմացած հարցուց Օվէն:

— Կանաչ մնայ Արմէնի ձեռքը, Օվէ՛. դրախտ ճամբեց այդ շունը, — ըսաւ Արշակ. — իսկ այդ անպիտան փողահարները չե՞ն յոգնիր. խլացուցին մեր ականջները:

— Չանոնք թող Մուշոն լսեցնէ, իսկ սպաները ինծի ձգեցէք, — ըսաւ կտրիճ Վահանը՝ հպարտութեամբ մը, որ մէկ-երկուքը անոնցմէ պատուհասեր էր...:

— Տղանե՛ր, մեր ճակատի վրայ թշնամին թուլցաւ. բայց Իսոյի ճակատը ծանր վիճակի մէջ է, եւ տեսէք թէ կռիւր ի՛նչպէս կը փոթորկի զիրքերուն վրայ: Ահա հեծելազօրքը կտրեց զիրքերու զիծը. թիկունքը վտանգուած է. իսկ հետեւակազօրքի ալիքներ իրարու ետեւէ զիրքերու վրայ կը խուժեն. բարեբախտաբար Իշխանագունի զրկած ոյժերը հեծելազօրքի առջեւը կտրեցին, ուժեղ համազարկի տակ առին. եւ հեծելազօրքը ընկրկումի նշաններ ցոյց կու տայ:

— Այո՛, Իսոյի զիրքերու թիկունքը առ այժմ ապահով է. կը մնայ հետեւակազօրքը նահանջի հարկադրել: Զգո՛յճ պէտք է ըլլալ, թշնամին փոխն ի փոխ ճնշում կը բանեցնէ աջ ու ձախ թեւերուն եւ կեղրոնին վրայ՝ տկար կէտը գտնելու համար:

— Տղանե՛ր, ճնշումը Իսոյի զիրքերուն վրայէն թեթեւցաւ: Գալարափողերը յարձակման նոր ազդանշանը կու տան եւ զօրքն ու հեծելազօրքը ազմուկով դէպի կեղրոնի զիրքերը կը խուժեն...:

— Հը՞ Իսոյի գիրքերէն ի՞նչ լուր, Արտա՛շ, — հարցուց Ար-
չակ մտահոյ :

— Իսոն վիրաւոր է. կան քանի մը սպաննուած եւ քանի մը
վիրաւոր. Երկայն Սահակն ալ վիրաւորուեր է ուսէն. պառկեր է
գիրքին մէջ եւ «Ես ընկել եմ» կ'երգէ... : Ընկերներէն ոմանք յու-
ղումէն կու լան :

— Ո՛չ յուղումի եւ ո՛չ լալու ժամանակ է, առջեւնիդ նայե-
ցէք, թշնամին կը մօտենայ, — ըսաւ Նազար, — շանորդին գինովի
նման կ'օրորուի. մէկ աջ, մէկ ձախ, մէկ կեդրոն. առէ՛ք համա-
զարկի, թող գեղնած տերեւներու նման թափին. ա՛յ :

— Հը՛ Նազար, ի՞նչ եղաւ, — հարցուց Արտաշ : Չայն չկայ.
— աղա՛ք, Նազար գնաց դրախտ, — սրտի ցաւով ըսաւ Արտաշը :

— Դեռ ատենը չէ. ո՞ւր կը փախչի, — բարկացած ձայնով
մը ըսաւ Աստուրը. — Ի՞նչ դրախտ երթալու ժամանակ է. հապա
այս նախի՞րը, ո՞վ պիտի... — ու Աստուրը չըջեցաւ կոնակին :

— Օ՛ հօ՛, Աստուրն ալ գնաց, — պղտեց Արամ. տօ Աս-
տու՛ր, դրախտ երթալու ժամանա՞կը գտար, Նազարի վրայ կը
բարկանայիր, գուն ալ փախար... :

— Մէկը միւսին թող չնախանձի, — ըսաւ Մակար. — բոլորս
ալ պիտի երթանք, բայց մեզմէ առաջ պէտք է այս խուժանը ճամ-
բու գնենք. աշխատեցէ՛ք, ժամանակը չէ ինկածներով դրազելու.
ը՛հը՛, գնա՛, քու մէրը, անպատճառ այդ շունի գնդակն էր որ դպաւ
Նազարին :

— Ապրի՛ս, Մակար, լա՛ւ հասցուցիր, — ըսաւ Մելոն. —
ապա Աստուրի գնդակը ո՞վ նետեց. կարծեմ այս շունն էր, որ քիթ
ու բերնին գնաց... :

— Այո՛, Մելո՛յ, այդ շունն էր, շարունակենք. ա՛խ... :

— Հը՞ Մակար, ի՞նչ եղաւ :

— Եղա՛ւ... :

— Վա՛հ, — պոռաց Մելոն, — մեր ոյժերը իրարու ետեւէ
կը քնանան. թշնամին յամառութեան է կառչեր, տուէ՛ք համազար-
կի. ահ, այդպէս. մատաղ ձեր բազուկներուն. ի՛նչպէս կը տատան-
ուի... ընկրկումի մէջ է. դէպի ետ կ'երթայ... կը նահանջէ՛...
Աթանազինէի ձորով խելակորոյս կը փախչին. հեծելազօրքն ու հե-
տեւակը խառնուած են իրար. իրար կը հրեն, կը հրմշտկեն, իրար
կը արորեն : Իշխանագուն կը հրամայէ Աթանազինէի հովիտի երկու
կողմի բլուրներէն համազարկի տակ առնել ձորը : Ու Ստեփոյի եւ
Իսոյի ոյժերը կատաղած, իրենց կորուսաներու վրէժը կը լու-
ծեն... :

Չորոյ.— Ի՛նչքան կորուստ են ունեցեր մերոնք :

Մամիկոնեան.— Քսան եւ մէկ զոհ. իսկ թշնամիի կորուստ-
ները բաւական շատ են, որոնց մէջ կան հարիւրապետ մը, քանի
մը սպայ ու մէկ-երկու աշիրեթապետ :

Ախոյ.— Իսկ ի՞նչ տեղեկութիւն կայ Կեփինի, Կապլորի եւ
Տարկոշի դիժերէն :

Մամիկոնեան.— Տիգրիսի գետահովիտէն գինուորական եւ
աշիրեթական մեծ ոյժեր յարձակեր են այդ երեք կեդրոններուն
վրայ :

Կեփինի գիծին վրայ, Իշխանեանը ունեցեր է ուժեղ ընդհա-
րումներ. թշնամին ծանր կորուստներ է տուեր եւ նահանջեր. Իշ-
խանեանը ունեցեր է եօթ կորուստ :

Կապլորի գիծին վրայ, Խորխոռունին յաջողութիւններ է ու-
նեցեր. աւերեր է քանի մը քրտական դիւղեր, աւարի առնելով ոչ-
խարի հօտեր, եւ փճացուցեր գինուորական հետախուզիչ ջոկատ
մը. մերոնց կորուստն է ինը հօգի, որոնց մէջ է մեր երիտասարդ
յեղափոխական գործիչ Դաւիթ Մելիքեանը :

Չորոյ.— Ախո՞ս, ուրեմն Դաւիթն ալ գնաց :

Ախոյ.— Հոգ մի՛ ըներ, Չորո՛յ, մենք եւս պիտի երթանք :
Այս կրակը, որ բռնկեր եւ օղակեր է մեր լեռնաշխարհը, բոլորս
պիտի վառէ, բայց պիտի աշխատինք որ այդ կրակին մէջ իրենք,
հրճիգնները եւս վառին :

Մանուկ.— Ծա՛տ ճիշդ է. ով գէնքի հետ կը խաղայ, գէն-
քով պիտի երթայ :

Վարդան.— Ընկերներ, մեզի համար ուրիշ ճանապարհ չը-
կայ, բացի գէնքի ճանապարհէն : Պարզ է. թշնամին լեռնաշխարհը
պիտի բնաջնջէ, ինչպէս բնաջնջեր է հայկական բոլոր շրջանները :
Մեր տարբերութիւնը այն է, որ մենք մեր արեան գինը պիտի առ-
նենք իրենցմէ. այլ շրջանները հնարաւորութիւն չունեցան մեզի
պէս շարժելու եւ գոնէ իրենց արեան գինը առնելու. պիտի մեռ-
նինք, ատոր ո՛չ մէկ կասկած. բայց պիտի աշխատինք մեռցնել :
Ա՛հ, եթէ իւրաքանչիւրս բախտ ունենայինք մեր մեռնելէն առաջ
քանի մը հոգի մեռցնել ասոնցմէ, շատ հանգիստ սրտով պիտի մեռ-
նէինք : Մեր զոհերը հանգիստ սրտով մեռան, որովհետեւ իւրա-
քանչիւրը իրմէ առաջ քանի մը հոգի մեռցուց թշնամիէն :

Պետոյ.— Վարդա՛ն, այդ ճիշդ է, բայց այդ չի բաւեր. հայ-
կական բոլոր շրջանները ձրի դացին. մենք ո՛չ միայն մեր, այլ եւ

անոնց արեան տուրքն ալ պիտի առնենք. ահա թէ ինչո՛ւ Մամիկոնեան մեզի իրաւունք չի տար այնքան շուտ կռիւի գիծէն դուրս ելլելու:

Արթին.— Մենք շատ ուրախ պիտի ըլլայինք, եթէ այդ բանը մեզի յաջողուէր. բայց դժբախտաբար. չար աստղի տակ կարծես ծնած է մեր ազգը, եւ մենք ուզենք թէ չուզենք, պիտի ապրինք մեր ճակատագիրը:

Առքոյ.— Այդ մասին մտածել աւելորդ է, պիտի ընենք այն՝ ինչ որ կրնանք...:

Մամիկոնեան.— Ի հարկէ պիտի ընենք այն՝ ինչ որ կրնանք. ամենամեծ վատութիւնն է չընել այն՝ ինչ որ անհրաժեշտ է, երբ կրնանք ընել. եւ կը յուսամ որ մեզմէ իւրաքանչիւրը գիտէ թէ ի՛նչ պիտի ընէ ինքը:

Տարկոշեան գիծին վրայ.— Սասունին նոյնպէս ուժեղ կռիւնք է ունեցեր. դերազանց ոյժերու ճնշումին տակ մերոնք բաւական ծանր կացութիւն մը ապրեր են. եւ ի վերջոյ կարելի եղած է մեր քաջերու յանդգնութեամբ կացութիւնը փրկել. թշնամին պարտութեան մատնուած է, ծանր կորուստներ տալով: Մենք եւս ունեցեր ենք մեր կորուստները, որոնց մէջն է Գէորգը. Սպառնաց Տէրտէրի տղան, յեղափոխական անունով Մելէքմէվթ, եւ Մատին մենաստանի վանահայրը մեր Ստեփան վարդապետը, յայտնի արջասպան եւ յեղափոխական, որ ատեն մը Ս. Կարապետ կը մնար, Վարդան վարդապետի աջ բազուկը...: Այդ կռիւներու ընթացքին վիրաւորուեր է եւ Անին, գիրքերուն հաց եւ ջուր մատակարարած ատեն ու սպաննուեր է Սարէ անունով կտրիճ կին մը: Ինչպէս մենք, նոյնպէս բոլոր գիծերը, կեդրոնէն հրահանգ են ստացեր քաջուիլ դէպի Անտոք, որովհետեւ հնարաւոր չէ այդ մեծ շրջագիծին վրայ կռիւը շարունակել:

Չոլոյ.— Լա՛ւ, ի՞նչ պիտի ըլլայ Անտոքի ճակատագիրը:

Ախոյ.— Ինչ կ'ուզէ թող ըլլայ, մենք պիտի ընենք ինչ որ կարող ենք:

Վարդան.— Անտոքի ճակատագիրը, Չոլոյ, պիտի ըլլայ այն ինչ որ եղաւ Կուրդըքի, Ծիրնկատարի, Ծովասարի, Տարկոշի, Կեփինի, Կապլորի ճակատագիրը. իսկ մեր ճակատագիրը ա՛յն, ինչ որ եղաւ մեր դո՛հերուն ճակատագիրը...:

Մանուկ.— Տղա՛ք, պիտի քալենք, որքան կրնանք, պիտի քալենք այսօր դէպի Անտոք, վաղը՝ ո՞վ գիտէ դէպի ո՛ւր, որքա՛ն կանք, պիտի քալենք: Իսկ երբ ինկանք, որդէն ալ պէտք չկայ քալելու...:

Արթին.— Անշուշտ պիտի քալենք. իսկ երբ ստք չունենանք ի՞նչպէս պիտի քալենք...:

Ախոյ.— Այն ատեն կը նստինք:

Առքոյ.— Եթէ թեւ ունենանք եւ թռչինք, աւելի լաւ է. դո՛նէ այս դժոխքէն դուրս կու գանք:

Չոլոյ.— Մաքէդ հանէ, Առքո՛յ. այս դժոխքին մէջ պիտի հալինք. ո՞ւր պիտի երթանք որ ազատինք այս դժոխքէն:

Առքոյ.— Ձե՛ս գիտեր թէ ո՛ւր պիտի երթանք. պիտի երթանք Անտոք, ու անկէ ալ «ի վերին Երուսաղէմ»...:

Մանուկ.— Ատիկա ճիշդ է, այլեւս խօսք չի վերցներ...:

Մամիկոնեան.— Մեր հետախոյզ մարմինները եկան. Կուրդըքի հետախոյզ մարմինը կը տեղեկացնէ որ Մուշաչէնէն մեծ ոյժ մը շարժման դրուած է դէպի լեռնաշխարհ: Վաղը անոնց խուժումը պիտի տեսնենք դէպի գիւղ: Երկրորդ հետախոյզ մարմինը կը տեղեկացնէ որ Վաղքի մարզերու ոյժը մեծ պատրաստութեան մէջ է եւ հաւանաբար դեռ արեւը չծագած յարձակումի անցնի...: Մենք գիւղը պիտի հրդեհենք եւ անցնինք՝ անտառներու գիծը բռնելու. վաղուան մեր ինքնապաշտպանութեան գիծը պիտի ըլլայ Պաղ ջրերու աղբիւրներէն մինչեւ ձերմակ քարեր, եւ ձերմակ քարերէն մինչեւ Զվրնկի հովիտը, իսկ Զվրնկի հովիտէն մինչեւ Տալազար Իշխանազունի ոյժերը պիտի պաշտպանեն: Հիմա ժամանակն է շարժելու...:

Ու արիւնտ սրտով հրդեհեցին Շէնքը գիւղը, եւ անցան անտառներու գիծը:

Ի՛նչ դժբախտութիւն, երբ մէկը իր ձեռքով իր տունը կը վառէ...:

Պիտի վառի եւ իր կեանքը, որպէսզի ողբերգութիւնը ըլլայ ամբողջական...: Եւ ի՛նչ փոթորիկ պիտի խաղցուի այս հողերուն վրայ, երբ արեւը ծագի:

Արեւը ծագեցաւ...:

Կուրդըքէն դորքը հեղեղի պէս դէպի Շէնքը եւ Սեմալ կ'իջնէ, միեւնոյն ատեն արեւելքէն՝ Աթանազինէի ձորէն, արեւմուտքէն՝ Վաղքի մարզերէն կանոնաւոր թէ անկանոն զօրասիւններ կը յառաջանան: Երէկուան գիրքերը դատարկ դասն. «ուրեմն թշնամին տկար է որ գիրքերը լքեր է», կը մտածեն ոմանք. այդ իրողութենէն կը քաջալերուին, ու անոնք կը հետեցնեն որ դոյամարտի ոյժերը եթէ տեղ մը ամբացած են, այսօր կամ վաղը պիտի լքեն,

հոգ չէ թէ կորուստ կու տան, բայց եւ այնպէս լեռնաշխարհը պիտի մաքրեն. ու կը յառաջանան: Զօրք թէ «աշտիք» անցան Շէնքի եւ Սեմալի այրած գիւղերէն, իջան Տաշտքի եւ Քնֆայրի հովիտները. անցան ջուրը ու սկսան բարձրանալ. մէկ մասը գէպի անտառներու գիծը, իսկ միւս մասը՝ գէպի Տալազարի գիծը, ուր գոյամարտի ոյժերը իրենց կը սպասեն դարանամուտ...:

Կուրդըքէն իջնող ուժերու հրամանատարն է Շիւքրի փաշան. անցեր է գիրքերու վրայէն, առանց կռիւի եւ կը կարծէ որ գոյամարտի ոյժերը իր անունէն սարսափած գիրքերը լքեր են. կը հըպարտանայ եւ յոխորտանքով հրամաններ կ'արձակէ:

— Պէտք է փճացնել այս աւազակարոյնը եւ կը զարմանած թէ մերոնք ի՞նչպէս պարտուած են այս վախկոտներէն, որոնք առանց կռիւի լքեր են իրենց գիրքերը եւ փախեր...:

Վաղքի մարդերէն եկող ոյժերու հրամանատարն է ձեւտէթ, որ կը համակրի Մամիկոնեանին եւ կը ջանայ իր երեւակայութեան մէջ պատկերացնել, թէ ինչպիսի՛ մարդ մըն է այս նոր ժամանակներու հերոսը: ձեւտէթ նստած իր մոխրագոյն ձիին վրայ, հեռագիրտակը ձեռքը, անընդհատ կը խուզարկէ անտառներու գիծը, ու յանկարծ կը տեսնէ ճերմակ նոսրով ասպետը. իր շրթունքները կը կծէ, ձին կը կեցնէ ու կը սկսի երկար դիտել ճերմակ ձիւտորը, որ հանդարտ ու հպարտ իր հեռուորդներով անտառներու գիծը կը քննէր: Ասիկա է անպատճառ, — կը մտածէ ձեւտէթ, — այս ճակատի ինքնապաշտպանութեան պետը, Մամիկոնեանը. ի՞նչքան պիտի ուզէի խօսիլ իրեն հետ եւ սեղմել այդ քաջի ձեռքը, բայց ճակատագիրը մեզ իրարու դէմ հաներ է:

Իսկ Մամիկոնեան մտովի կ'ըսէր. «Ի՞նչքան ալ ոչինչ ըլլանք քու մեծութեանդ առջեւ, բայց եւ այնպէս մեր ոչնչութիւնը պիտի կլլէ քու մեծութիւնդ, որովհետեւ մեր ոչնչութիւնը մեծ է... իսկ քու մեծութիւնդ՝ փոքր...: Ահա կու գանք մենք բախումի. ի՞նչ աղէտ ես մեզի պահեր այսօր: Ա՛հ, եթէ այսօրուան կռիւին մէջ պիտի մեռնիմ, կ'ուզէի քու գնդակովդ մեռնիլ, որ արժեքաւորուէր իմ մահը, մեծ քաջի մը գնդակով եւ ո՛չ թէ հասարակ բազուկի մը»:

Աթանազինէի հովիտէն եկող ոյժերու հրամանատարը Նիազի պէյն է. կը զարմանայ որ գիրքերը լքուած են. «Զգո՛՛ջ եղէք», — կը թելադրէ իր ոյժերուն, — «Իշխանազունը անպատճառ մեզ թակարդ մը լարած է. գիծերը հեռացուցեր է, որպէսզի մեզ, աւելի հեռացնէ մեր խարխոխներէն. գիծերը պարպել տկարութեան նշան

ի, երէկուան գիծերու դէմ մենք նոր դասաւորումով պիտի քալինք, որովհետեւ ծանօթացանք այդ գիծերուն հետ. այսօր անպատճառ նոր գիծեր պատրաստեր են, որպէսզի օգտուաշորձեն մեր շիթութիւնը...:

Ու կռիւը սկսաւ...:

Աթանազինէի հովիտէն եկող, Կուրդըքէն իջնող եւ Վաղքի մարդերէն յառաջացող ոյժերը միահամուռ յարձակուած գործեցին գէպի անտառներու եւ Տալազարի գիծերը: Հեծելազօրքի եւ հեռուակազօրքի ալիքները իրարու վրայ կը թաւալին ու խուժանը կը վիտայ չորս կողմ. գոռում-գոչումով կը հոսին գէպի գիրքերը. թնդանօթածիլ ոյժերը Շէնքէն եւ Սեմալէն կը ոմբաւորեն գիրքերը՝ դիւրացնելու հեռուակազօրքի եւ հեծելազօրքի դժուրը. զօրքին հրահանգուած է արագ կերպով դրուել գիրքերէ, փճացնել կուսող ոյժերը ու հետապնդել այրուած գիւղերու բնակչութիւնը եւ անխնայ կոտորել՝ դեռ Անտոք չհասած...:

Երգ մը կը փոթորկի անտառներու գիծին վրայ. «Ամենայնակ մահը մի է»...: Հրամանատար ձեւտէթ լսեց ու ցնցուեցաւ այդ հրաշունչ երգի թոնէն. կը կարծէր որ հեծելազօրքի, հեռուակազօրքի եւ խուժանի այսքան ոյժի երեւումով՝ գոյամարտի ոյժերը եթէ չլքէին գիրքերը նոյնիսկ, գոնէ ընկճուած տարամազրութիւն մը պիտի ապրէին...: Եւ հրամայեց.

— Մուսթաֆա՛, ինձի կանչեցէք Արշաղը:

Կու գայ Արշաղը, Թուրքերու հաշուոյն աշխատող հայ մատնիչը:

— Արշաղ, ի՞նչ ազմուկ է որ կու գայ անտառներու գիծէն, — կը հարցնէ ձեւտէթ, աւելի եւս ուշադրութիւնը լուրջով գէպի անտառներու գիծը:

Արշաղ ծանօթացուց երգը. ձեւտէթ շրթունքները կծեց եւ իր աչքերուն առջեւ պատկերացաւ ճերմակ նոսրով ասպետը, իր ամբողջ մեծութեամբ ու հառաչեց. «Այս օրը երէկուան նման ադիտալի է...»:

Դեռ կռիւը չտաքցած, Շիւքրի փաշան այցելութիւն տուաւ ձեւտէթին եւ հեղինական թոնով մը հարցուց. «Ի՞նչ են ձեր եւ Նիազիի երէկուան պարտութեան պատճառները...»:

— Այսօր յայտնի կ'ըլլայ, փաշա՛ կ'ֆենտի, — պատասխանեց ձեւտէթ՝ պազարիւնութեամբ մը:

— Ինձի կը թուի թէ դո՛ւք. ի յառաջագունէ պաշտուածի հո-

դերանութիւն ունիք, — վրայ բերաւ Շիւքրի փաշան՝ արհամարհական քմծիծաղով մը:

— Ո՛չ, փաշա՛ կ'Ֆենտի, պարտուածի հողերանութիւն չունինք. յազմելու վճռակամութեամբ կը դորձենք. մեր առջեւ նշանաւոր սպանիկներ կան, սրոնց քաջութիւնն ու յանդուութիւնը կը պահպին մեր կուռուղ սյժերուն:

Շիւքրի. — Դո՛ւք երեւակայական քաջեր էք ստեղծեր ձեզի համար, ու անոնց առջեւ սարսափեր էք. Նիազի պէյ Իշխանագուն մըն է հաներ մէջանց եւ իր սյժերը Աթանազիէի ձորի մէջ փոեր. դուք ալ Մամիկոնեան մը, եւ Գորշ ձորի մէջ ահապին կորուստներու էք ենթարկուեր. այսօր պիտի տեսնէք թէ ի՞նչպէս կուի նման պիտի փշրուին ձեր հերոսները, եւ այդ ձեր հերոսներն են որ չորս կողմ առանց կռիւի լքեր են իրենց դիրքերն ու փախեր. եւ տակաւին այդ ստրուկներու մէջ հերոս կը տեսնէք...:

Ճեւտէթ. — Մենք ալ կ'ուզենք որ անոնք կուի նման փշրուին մեր հարուածներուն տակ. արդէն զանոնք փշրելու նպատակով է որ կը թափառինք այս լեռնային հանդոյցներու մէջ. բայց եթէ կուի տեղ ապաստած է կանգնած մեր գէմը, փաշա՛ կ'Ֆենտի, ի հարկէ մեր կուսնն ալ պիտի յոգնի, պիտի կոտորի...:

— Ապառա՞ժ... — սկսաւ բարձրաձայն խնդալ Շիւքրի փաշան, — ի՞նչ կ'ըսէք, ձեւտէթ պէյ, ապառա՞ժ... ստրուկներէ՞ն ալ ապաստած կարելի է երեւակայել. կը տեսնէք թէ այդ ապաստաները այսօր ի՞նչպէս պիտի փշրուին. կը յուսամ դուք եւս պիտի աշխատիք երէկուան պարտութիւնը սրբապրել, — ըսաւ եւ դժգոհ հեռացաւ:

Շիւքրի փաշա, հրամայեց թնդանօթածիղներուն սաստկացրնել կրակը, հեծելագորքի եւ հեռեակագորքի վարիչներուն հրաման զրկեց, որ երեք ժամէն եթէ դիրքերը չզրաւուին, զինուորական ատեան պիտի հանուին, իսկ ինքը իր ճերմակ ձին նստած՝ անցաւ Քնֆայնի գետը եւ բռնեց գէպի Շէխի ամառանոցներ երկարող լեռնամուտի ուղղութիւնը՝ հետեւելու համար կռիւներու ընթացքին:

Ու յարձակման փոթորիկը կը տարուի դիրքերուն եւ կը վարուի. գոռում-գոչում, թնդանօթներու որոտ, զնդացիքներու կռիւն, բազմահազար հրացաններու պայթում, զնդակներու վրժժիւն, փոշիի ամպերու թաւալում, եւ սակայն այդ ահուկի ժխորին մէջ կը լսուի երգը, որ կը պոթկայ դիրքերէն. «Նորէն եկել ենք պատերազմին տեղ...»:

Մոնչիւն ինկեր է դիրքերը, կատաղութիւնը շարունակ կ'աճի, յարձակման ալիքները կը բղկաւին, մարդ ու ձի թաւալլոր կ'երթան, բայց յարձակման թափը չի թուլնար, որովհետեւ հրամայուած է որ երեք ժամէն եթէ դիրքերը չզրաւուին՝ զինուորական ատեան պիտի հանուին վարիչ սյժերը...:

Տալագարի գիծին վրայ, Իշխանագուն ու իր կորիւնները թափը կոտրեցին Նիազիի հեծելագորքին ու հեռեակագորքին. «Ձե՛զ տեսնեմ, քաջե՛ր, երէկ աւելի ծանր ժամեր անցուցինք, կրտրի՛ճ եղէք, կեանքի եւ մահուան երգն է կ'երգենք...» կ'ըսէ Իշխանագուն իր սպանիկներուն:

Ու հեծելագորք եւ հեռեակագորք նորէն դրոհ կու տան, նորէն կ'ընկրկին, այս անգամ կը փորձեն Զվրնկի հովիտէն բարձրանալ, բայց կ'իյնան մէկ կողմէն Մամիկոնեանի, միւս կողմէն Իշխանագունի սյժերու կրակին տակ եւ կը նահանջեն գէպի Տաշտորի հովիտը...:

Մամիկոնեանի դիրքերը լարուած վիճակի մէջ են:

— Է՛յ հէ՛յ, թշնամին նոր քաջութիւն է ստացեր այսօր, — կ'ըսեն իրարու տղաներ, — ցոյց տուէք ձեր տղամարդութիւնը. երեւի օգնութեան եկող նոր սյժերը դեռ ծանօթ չեն մեր բազուկին, կը կարծեն թէ այլ տեղերու կապուած բազուկներու առջեւ են: Հնձեցէ՛ք, թող մեր հարուածի սյժէն դլորուին գէպի Քնֆայնի ձորը: Ա՛յ այդպէս... այդ շանորդի թնդանօթածիղները երեւի նոր կը փորձուին. զնդակը դիրքերէն շատ հեռու կ'իյնայ: Տղա՛ք, թրնդանօթները ծածկեր են ծառի ճիւղերով որ յայտնի չըլլայ, — կ'ըսէ Մամիկոնեան, հեռապիտակով նայելէ ետք:

Պետրոսին ու Գարբիկին յանձնարարուեցաւ թնդանօթները լուեցնել: Սասունցի կտրիճները թնդանօթները լուեցուցին շուտով եւ Շիւքրի փաշան շուտաւ՝ լեռնամուտի վրայէն գէպի գիւղը կը նայի թէ ինչո՛ւ թնդանօթները լուեցին...:

— Վարդա՛ն, Վարդա՛ն, — ըսաւ Պօղոս, ցոյց տալով գէպի Շէխի ամառանոցներ երկարող լեռնամուտի ձիււորը: — Նայէ՛, անպատճառ հրամանատարն է:

Վարդան երկար նայեցաւ եւ հրացանը ուղղեց գէպի ճերմակ ձիււորը եւ Շիւքրի փաշան իր ձիւն հեռ թաւալլոր գնաց գէպի Քնֆայնի ձորը...:

— Շիւքրի փաշան ինկա՛ւ, Շիւքրի փաշան ինկա՛ւ, — լուր տարածուեցաւ հեծելագորքի եւ հեռեակագորքի մէջ եւ զինուորա-

կանները, իրենք զիրենք ազատ զգալով այլևս պատերազմական ատեան հանուելէ, նահանջեցին զիրքերու լափող կրակին տակէն . . . :

Ճեվաէթ եւ Նիազի պէյերը, հակառակ իրենց պարտութեան եւ տուած ծանր կորուստներուն, լաւ արամազրութեան մէջ են, որոհեալ մեծախօսիկ Շիւքրի փաշայի սպանութիւնովը իրենց վարկը փրկուեցաւ եւ իրենց երէկուան պարտութիւնը ծածկուեցաւ այս նոր պարտութիւնովը, որ կ'իյնայ Շիւքրի փաշայի վզին: Նահանջող սյփերը ծխացող Շէնք եւ Սեմալ զիւզերու աւերակներու մէջ կանգ առին՝ հանդստանալու. այդ օրուան յարձակումը ձախող անցաւ, ինչպէս նախատեսած էր Ճեվաէթ պէյը:

Մամիկոնեան եւ Իշխանագունս, յարձակման հրաման չտուին իրենց սյփերուն, հակառակ անոնց պահանջին: Իրենց զոհերը իրենց զիրքերուն մէջ թաղելէ ետք, զբաղած են խորովածով, կ'ուտեն, կ'երգեն, կը պարեն: Զարմանալի կերպով մահը եւ կեանքը նոյնացեր են իրենց մէջ . . . :

Ահա Մամիկոնեան իր ճերմակ նոսր շորերը նստած զիրքերը կ'այցելէ. վարիչներուն եւ կուսող սյփերուն շնորհակալութիւն կը յայտնէ իրենց քաջութեան համար եւ միեւնոյն ատեն նաեւ ցաւակցութիւն՝ իրենց կորուստին համար: Ու հասնելով Զվրնիկի զիրքերը՝ լուր կը զրկէ Իշխանագունին՝ իրարու հետ ատենուելու: Իշխանագուն նոյնպէս զիրքերուն այցելութիւն կու տայ՝ իր կարծիք նոսր հեծած . . . :

Ճեվաէթ նստած է Կարմիր եկեղեցիի ստուերախիտ ծառերուն տակ, առուակի եզերքը. կը նայի հասող վճիռ ջուրի վէտովէտուածներուն եւ հպարտ կը զգայ ինքզինքը որ ճիշդ ելաւ իր նախատեսութիւնը. մասնիչ Արշակ քովն է, եւ անատներու գիծէն եկած երգերու եւ պարերգներու մասին ծանօթութիւններ կու տայ Ճեվաէթին:

Ու ահա երգը կը փոթորկի. «Մեր վրայ գալող նման էր անձեզ» երգը, որ կը թարգմանուի. Ճեվաէթ կը ցնցուի:

— Այդ ի՞նչքան արհամարհանք նետուած է մեր հասցէին, — կ'ըսէ եւ կ'աւելցնէ. — ճի՛շդ է, այսքան սյփերով եւ սակայն յարձակումը ձախող անցաւ ու Շիւքրի փաշան ալ դահաւիթ գնաց. մեծամիտ եւ ամբարտաւան փաշան, որ վայրագօրէն կերաւ հայկական զանազան շրջաններու բնակչութիւնը: Կը կարծէր որ նոյնը պիտի ընէ եւ հոս. չէր գիտեր որ անտիկ զիրքերէն աննական բա-

զուկներ գնդակ կ'արձակեն . . . «Կաւի նման պիտի փչրեմ» կը յորտար, բայց կաւի նման ինքը փչրուեցաւ . . . :

Աւելի ուժեղ երգ մը պոթկաց զիրքերէն. Ճեվաէթ սթափեցաւ իր միտքերէն եւ հարցուց.

— Արշա՛կ, ի՞նչ կ'երգուի . . . :

Ու Արշակ թարգմանեց. «Գոռաց որոտաց սարերի ասլան . . . »:

— Ա՛յ հա՛յ, ատիկա Գէորգի երգն է, հասկցայ, — ըսաւ Ճեվաէթ. — մեծ հերոս մըն էր Գէորգ Չաւուշ, . . . որ երկար ատեն զբաղցուց մեր կառավարութիւնը: Սուլուխի մէջ ծանր կռիւ մղեց, սպաննեց Քէօսէ պինպաշին ու ինքն ալ ինկաւ այդ կռիւին մէջ: Իսկ ո՞վ է Մամիկոնեանը, Արշա՛կ, — հարցուց Ճեվաէթ հետաքրքրութեամբ նայելով Արշակին:

— Մէկը Գէորգի զինուորներէն, որ Սուլուխի կռիւի մէջն էր:

— Հը՛մ, զլուխը օրօրեց Ճեվաէթ, — հասկցայ. Գէորգի հասցուցած սերունդէն է. աշակերտը դերազանցեր է ուսուցիչը, եւ ատոր համար զժուար է ասոնց հետ հեշտութեամբ հաշուակցիլ:

Ու Ճեվաէթ հեռազիտակը ձեռքը, սկսաւ անատներու գիծը ուշի ուշով քննել:

— Ա՛յ անիկա է, — բացականչեց ինքնիրեն. — ճերմակ նոսր սյփի վրայ նստած, անպատճառ քննական պատյախ ելած է. — Արշա՛կ, դուք անձամբ կը ճանչնա՞ք Մամիկոնեանը:

— Այո՛, պէյիմ, — ըսաւ Արշակ:

— Լա՛ւ, նայեցէք հեռազիտակով եւ բռէք ինծի թէ ո՞վ է այն ճերմակ ճիւղերը, որ կը պարտի զիրքերուն վրայ . . . :

Արշակ երկար նայեցաւ եւ դառնալով Ճեվաէթին ըսաւ.

— Պէ՛յ, ի՛նքն է, Մամիկոնեանը:

— Ինչպիսի՞ ազամարդ մըն է, — հարցուց Ճեվաէթ, հեռազիտակը աննելով Արշակի ձեռքէն:

— Պարթեւ հասակով զեղեցիկ երիտասարդ մըն է, ճկուն եւ արագաշարժ, բնական ուշիմութեամբ օժտուած, քաղցր լեզուով, սեւ արտայայտիչ աչքերով, երկար արտեւանունքներով, կլոր եւ թուխ դէմքով, սեւ մաղբրով, համակրելի եւ ազաւորիչ երիտասարդ մըն է:

— Լա՛ւ, իսկ իր անձնական քաջութեան մասին ի՞նչ դադար ունիս:

— Այդ մասին խօսիլ աւելորդ է պէյ իմ, որովհետեւ զէպ-

քերք իրենք կը խօսին...:

— Շիտա՛կ է, — ըսաւ ձեզմէք եւ սկսաւ հեռադիտակով նայիլ. — բայց ի՞նչ գիտէք Իշխանազունի մասին:

— Անիկա ալ նման մէկն է, պէ՛յ իմ, թերեւս տարբերութիւնը միայն տարիքի մէջ է:

— Հը՛մ, — ըրաւ ձեզմէք մասածկաւ. — իսկ ի՞նչ գինուորական կրթութիւն ստացեր են այս կռուող ոյժերը:

— Զինուորական կրթութիւն, — զարմացած բացականչեց Արշակ. — ոչ մէկ գինուորական կրթութիւն, թերեւս իրենց լեռներէն ներշնչուած են կամ իրենց արիւնէն, ինչպէս Գէորգ, եւ կամ յեղափոխական կրթութիւն ստացեր են. շիտակը չեմ գիտեր:

— Կը հաւատա՞ս որ լաւ կռուողներ են, — հարցուց ձեզմէք:

— Կը հաւատամ որ լաւ յիմարներ են, — պատասխանեց հայ մանանիչը:

— Հը՛մ, ինչո՞ւ չես համակրիր իրենց, — հարցուց ձեզմէք:

— Երբե՛ք:
— Ես ինքս կը համակրիմ, իսկ դուն ինչո՞ւ չես համակրիր, երբ ձեր ցեղի գոյութեան պայքարը կը մղեն այնքան արիարար:

— Իրենց յիմարութիւններով ցեղը վտանգի ենթարկեցին, պէ՛յ իմ. հիմա ալ գոյութեան պայքար կը մղեն. ատով չեն արգարանար...:

— Ի՞նչպէս պէտք է վարուինք ասոնց հետ...:
— Այնպէս, ինչպէս հրամայուած է...:
— Դուք ձեր կողմէն ի՞նչ պատիժ կը սահմանէք Մամիկոնեանին եւ Իշխանազունին:

— Պէտք է գնդակահարուին...:
— Ինչո՞ւ...:
— Որովհետեւ պետութեան գէժ կը գործեն:
— Բայց մի՛ մոռնաք, Արշա՛կ, որ պետութիւնը իրենց մահազօր տուած է...:

— Անպատճա՛ս, պէ՛յ իմ, իրենց յանցանքի համար արուած է այդ մահազօրը:

— Նկատի ունեցէք որ պետութիւնը այդ մահազօրը տարածած է եւ ձեր ամբողջ ժողովուրդին վրայ:

— Ժողովուրդ մը, որ նման անհնազանդներ կը ծնի, արժանի է պատիժի, պէ՛յ իմ:

— Լա՛ւ, ժողովուրդ մը, որ ձեզի նման վատասերածներ կը ծնի, ի՞նչ բանի արժանի է...:

Արշակ լռեց...:
— Լո՞ւտ էք, ինչո՞ւ չէք խօսիր, Արշա՛կ. յայտնի է որ դուք ձեր ցեղին անգամ մնասակար էք. ի՞նչպէս հաւատամ թէ մեզի օտակար կ'ըլլաք...:

— Անհնազանդներն ու խռովարարները պատժելու գործին մէջ, պէ՛յ իմ, մի՛ մոռնաք իմ մատուցած ծառայութիւններս:

— Դուք վախկոտ էք, Արշա՛կ, եւ ձեր թշուառ գոյութիւնը քաշքշելու համար՝ կը դաւաճանէք ձեր ցեղին, որ վարձատրուիք մեզմէ. ձեզի պէտքերը իրենց ցեղը վաճառքի նիւթ կը դարձնեն՝ ի ինչիր իրենց հիւանդոտ փառասիրութեան եւ անկուշտ ստամոքսին...:

Արշակ դունատուեցաւ եւ շրթունքները կծեց. «Կը հաւատամ որ այդպէս է» ըսաւ ընկճուած ձայնով մը. «Կը թուի թէ իմ երակներուս մէջ Թուրքի արիւն կայ եւ այդ է որ զիս կը մղէ դաւաճանութեան, ինչպէս ամբողջ թուրք ժողովուրդը եւ դուք, որ դաւաճանեցիք հայկական կեանքին...»:

Այս անգամ ձեզմէք շրթունքները կծեց. «Կը հասկնամ», ըսաւ, «մենք իրար կը լրացնենք. բայց ո՛չ, դուք աւելի վատ էք. մենք թուրք ենք, եւ յանուն մեր գոյութեան, դաւաճանեցինք հայկական կեանքին. բայց դուք յանուն ի՞նչ բանի կը դաւաճանէք. յանուն թրքական կեանքի՞ն, թէ ձեր սեպհական կեանքին...»:

— Ինձի կը թուի թէ, ես հայ անուան տակ, Թուրք մըն եմ:
— Այդ մեկ չի բուարարեր. դուք վատ մըն էք. մե՛ղք չէ Մամիկոնեաններուն եւ Իշխանազուններուն. անոնք ազնիւ թշնամիներ են. սղոմարդ են. քծնիլ, սողալ, դաւաճանել չեն գիտեր. անոնք մեռնին եւ դուք սպրիք յանուն ի՞նչ բանի...:

— Եթէ այդպէս է, այդ վճիռը կրնաք տարածել ամբողջ թուրք ժողովուրդի վրայ, որովհետեւ ես վերցուցած եմ թուրք նկարագիրը, որ է սողալ, քծնիլ եւ դաւաճանել. ձեր հողեկան յատկութիւնները ունիմ. կը մտածեմ ձեզի պէս, եւ եթէ ես անարժան եմ այս կեանքին, անարժան է եւ ամբողջ թուրք ժողովուրդը:

ձեզմէք երկար մտածեց. յայտնի էր որ յուզուած էր. երկար հառաչանք մը արձակեց եւ ըսաւ.

— Իրաւունք ունիք, բայց սկսած գործը պիտի շարունակենք... քանի որ սկսած ենք...: Վատերը իրար կ'արժեն. միայն տարբերութիւնը հոն է, որ ես կը համակրիմ իմ գէժ գործող քա-

ջերուն, իսկ դուք կ'ատէք. ուրեմն դուք ինձմէ աւելի վատ էք...:

— Դուք այդպէս կ'ըսէք, պէ՛յ իմ, որովհետեւ ձեր վէրքը խորունկէն չարիւնիւր. իսկ իմս խորունկէն կ'արիւնի. ես երկու հարուածի ծանրութիւն կը կրեմ, իսկ դուք՝ մէկ...:

Այդ պահուն ձեզմէ թին այցելութեան եկաւ հրամանատար Նիազին եւ ձեզմէ թին Արշակ խօսակցութիւնը ընդհատուեցաւ:

— ձեզմէ՛ թ պէ՛յ, երկուքնուս բախտն ալ կարծես միեւնոյն է. այս անյաջողութիւններուն կը զարմանամ. ինչի՞ վերադրելու ենք այդ ձախողանքը, — հարց տուաւ Նիազի պէ՛յ:

— Բայց կը մտնաք որ Շիւքրի փաշան մեզմէ բախտաւոր չելաւ... ինքը կորսնցուց իր զուլին անգամ. իսկ մերը տակաւին կը մնայ մեր ուսերուն վրայ: Մեր ձախողութիւնը, Նիազի պէ՛յ, ո՛չ թէ մեր զէնքի տկարութենէն կու գայ, այլ մեր թշնամիի արիւթենէն: Երկրորդ՝ իրենց գիրքերու անտարիկութենէն. երրորդ՝ թշնամիի այն հոգեբանութենէն, որ մահուան դատապարտուած է եւ որմէ խուսափիլ հնարաւոր չէ. ուզէ թէ չուզէ, պիտի մեռնի, եւ հաշտուած է մահուան հետ եւ մեզ ալ կ'ուզէ իրեն հետ մեռցընել...: Զորբորդ՝ որ յարձակողը մենք ենք եւ բնականաբար յարձակողը աւելի շատ կորուստանու կ'ենթարկուի... մենք այդ յարձակումները պիտի շարունակենք. ի հարկէ կորուստներ պիտի ունենանք, բայց վերջ ի վերջոյ թշնամին պիտի պարտուի...: Այսօր զինուորները այլեւս պիտի հանդատանան. վաղը միահամուռ ոյժերով յարձակման պիտի անցնինք. արդէն նոր ոյժեր քիչ յետոյ պիտի հասնին թէ՛ Տիգրիսի գետահովիտէն եւ թէ՛ Մուշաչէնէն: Կը յուսամ որ՝ վաղը եթէ թշնամին շիճացնենք նոյնիսկ, պիտի հարկադրենք նահանջել ուրիշ պաշտպանողական գիծերու վրայ: Թըշնամին պաշտպանողական կռիւ կը մղէ. անիկա պիտի նահանջէ, պիտի նահանջէ մինչեւ վերջին պաշտպանողական գիծը, իսկ անկէ յետոյ ո՛ւր պիտի երթայ... կա՛մ պիտի փճանայ, կա՛մ անձնատուր պիտի ըլլայ...: Աճապարելու շատ պէտք չկայ, բնականօրէն զէպքերը զէպի հոն կ'երթան:

Նիազի. — Բայց, ձեզմէ՛ թ պէ՛յ, կառավարութիւնը կը հրահանգէ որքան կարելի է շուտ վերջացնել լեռնաշխարհի գործը, որովհետեւ ներսէն մենք սպահով պէտք է ըլլանք, որպէսզի ամբողջ ոյժերը արտաքին ճակատներու վրայ նետենք:

ձեզմէ՛ թ. — ձի՛շդ է, կառավարութիւնը կը հրահանգէ, բայց հրահանգը գործադրելու համար ժամանակ պէտք է: Շիւքրի փա-

շան ալ որպէս թէ հրահանգը կը գործադրէր, բայց զուլսը վրայ տուաւ, ոչ թէ իր հերոսութեան բերումով, այլ փառասիրութեան մղումով: Ինչ որ է. ի՞նչ գաղափար ունիք ձեզի դէմ կուռոյ ոյժերու մասին:

Նիազի. — Կը հաւատամ որ լաւ կուռոյներ են, իրենց արիւթեան եւ քաջութեան վրայ կը հիանամ, այսքան կորով եւ վճռակամութիւն չէի սպասեր. հոս Հայը բոլորովին այլ նկարագրով կը ներկայանայ մեզի քան այլ տեղ. սխալ է, այլ շրջաններու Հայութեան չափանիշը ամբաժել լեռնաշխարհի վրայ:

ձեզմէ՛ թ. — Չեմ կարծեր, այլ շրջաններու Հայութիւնը այնպէս է, ինչպէս որ տեսանք, մենք գրինք գանտնք այդ վիճակին մէջ. բայց չկրցանք լեռնաշխարհը նոյն թակարդը ձգել. կ'ընդունինք միջափայլի ազդեցութիւնը, բայց յամենայնդէպս այլ շրջաններու Հայութիւնն ալ նոյնքան զիւրաւ պիտի չլլուէր, եթէ մեր ծանօթ խաղը չխաղցուէր: ձի՛շդ է, մեր առջեւ տղամարդիկ կան, ես ալ կը սքանչանամ անոնց արիւթեան վրայ. բայց պէտք է ըսել որ նոյն արիւթիւնը պիտի գտնէինք եւ ամէն տեղ: Գիտէ՞ք արդեօք թէ ձեզի դէմ կուռոյ ոյժերու հրամանատարը ո՛վ է:

Նիազի. — Այո՛, լսեր եմ, Իշխանագուն կ'ըսեն, որ մեծ հեղինակութիւն ունի իր ոյժերուն վրայ. լեռնաշխարհի մեծ իշխաններէն մէկն է, եւ եթէ չեմ սխալիր, ձեր դէմ կուռոյ ոյժերու հրամանատարն ալ Մամիկոնեան կը կոչուի...:

— Շիտակ է, — բաւ ձեզմէ՛ թ, եւ զրպանէն հանեց Մամիկոնեանի ստորադրութիւնը կրող ազգաբարութիւնը եւ ցոյց տուաւ Նիազի պէ՛յին:

Նիազին շրթունքները կծեց, զարմանալի դատաւ, եւ նայեցաւ ձեզմէ՛ թի աչքերուն մէջ, ուր տխուր ժպտ մը կ'ուրուագրուէր...:

ձեզմէ՛ թ. — Այո՛, մեր գործը սասնց հետ է. շատ ուրախ եմ, որ մեր գործը նման քաջերու հետ է: Մարդիկ կան, զորս չենք տեսած, եւ սակայն կը սիրենք, սիրելով մէկտեղ կը սպաննենք. ա՛յսպէս է. Մամիկոնեանի մը կը համակրիմ, բայց ատով մէկտեղ անոր մահը կը փնտռեմ. ինչո՞ւ, չե՛մ գիտեր, որովհետեւ հրամայուած է...: Ինչո՞ւ այդ համակրանքը Մամիկոնեանի մը հանդէպ արդեօք անոր համար որ մեր յարձակումները ետ մղեց եւ մեզի ծանր կորուստներ պատճառեց. ո՛չ, այլ անոր համար որ տղամարդ է, որ փտանդի առջեւ փախ չունի, որ աւելի բարձր է քան մարդը, որ գաղափարի մարդ է՝ արի, վճռական. իր իրաւունքն է գոյու-

Թեան պայքար մղել. հոյ չէ թէ մեզի գէմ է եւ թշնամի է :

Նխադի. — Ես ալ կը համակրիմ Իշխանազունին, զոր գժրախտարար չեմ ճանչնար. բախտի բերումով՝ մենք եզած ենք զերակատարները այս ողբերգութեան, ու կը ջանանք իրար փճացնել, թէ ինչո՞ւ, չեմ գիտեր... :

Ճեփակթ. — Պիտի քալենք. թո՛ղ ըլլայ ինչ որ պիտի ըլլայ... վաղը միահամուռ ոյժերով յարձակումի պիտի երթանք. բախտը ինչ որ վերապահած է մեզի թէ անոնց, այդ պիտի ըլլայ... : Իրաւունք ունի՞նք այդ մարդիկը մահուան գատապարտել. չեմ գիտեր. վճիռը վերէն տրուած է... կը հրամայուի վճիռը գործադրել... : Այս մարդիկ իրաւունք ունի՞ն իրենք գիրենք պաշտպանել. անչո՛ւշտ իրաւունք ունին. երբ մէկը իր իրաւունքը կը պաշտպանէ, չես կըրնար մեղադրել թէ տղէա է կամ անպիտան : Մենք մեր իրաւունքը կը գործադրենք, այսինքն զանոնք բնաջնջելու իրաւունքը, որ մեզի տրուած է — ուրկէ՞ տրուած է, չեմ գիտեր... : Իսկ անոնք ալ գիրենք պաշտպանելու իրաւունքը կը գործադրեն, եւ կարծեմ անոնք աւելի իրաւունք ունին, քան մենք. եւ ինչո՞ւ ջլաշնանալ կամ վիրաւորական խօսքեր նետել անոնց հասցէին, երբ իրենք գիրենք կը պաշտպանեն. կ'ատեմ բոլոր զանոնք, որոնք վախկոտօրէն կը փլին մեր հարուածին տակ... : Ես կը սիրեմ կուռոյ տղամարդը, որովհետեւ զինուորական եմ, եւ կը զնահատեմ արիութիւնն ու քաջութիւնը, որ զերագանցօրէն բարձր ու մտեմ յատկութիւններ են, շատ քիչերուն տրուած... : Այն շրջանները, որոնք մեր նենդութեան հետեւանքով կաւի նման փշրուելու վիճակի մը մէջ գրուեցան, խուժանի կատաղութիւնը սրեցին, եւ ո՛չ մէկ տեղ կարեկցութիւն չտեղծուեցաւ իրենց հանդէպ... : Եւ պէտք է ըսել որ մեղաւորը մենք ենք, որ ստեղծեցինք այդ աննախընթաց բարբարոսութիւնները, որոնց սկանառես եզանք... :

Նխադի. — Չխօսինք, ճեփակթ պէյ, մեր տղամարդու արժանապատուութիւնը կը վիրաւորուի. եզածը ո՛չ մէկ կերպով արգարանալի է... : Մութի մէջէն հարուածել կամ խտրելով հարուածել տղամարդու գործ չէ եւ մերոնք այդ յախտենական արատը բերին մեր ձակախին, որ շատոնց արդէն իր մաքրութիւնը կորսնցուցեր էր : Հոս, այս լեռնաշխարհին մէջ, երբ մեր առջեւ կուռոյ թշնամի մը կայ, ես ուրախ եմ որ կը կուռինք : Եւ ոչ թէ կապուած կարաւաններ յանձնուին ու դուք կոտորէք. ատոր մէջ ո՛չ տղամարդութիւն կայ, եւ ո՛չ ալ պատիւ... : Բայց պէտք է խոստովանիլ, որ մեր գէմ կուռոյները կարծես կո՞րի համար ծնած են. ատոր

ո՛չ մէկ տարակոյս. մեր այնքան ուժեղ յարձակումներուն՝ անոնք արիարար գիմադրեցին եւ փշրեցին մեր յարձակման օղակները : Եւ լսեցի՞ք մարտահրաւիրը, որ գիրքերէն իւրաքանչիւր կուռոյ մեղ կը նետէր. «Հոս ենք, տղամարդու նման կեցած եւ ձեզի կը սպասենք...» : Ի հարկէ, եթէ այդ կուռոյ տղամարդոց բազուկները կապուած ըլլային, մեր աւելածու Մեհմէտն ալ անպատճառ զանոնք պիտի ուտէր հերոսի թեւեր առնելով... : Այն կապուած բազուկները, զորս մենք կոտորեցինք զանազան շրջաններու մէջ, մի՛ կարծեր թէ անոնց մէջ Իշխանազուններ եւ Մամիկոնեաններ կը պակսէին. բայց այդպէս եղաւ... : Ինչ որ է, վաղը մենք յարձակման պիտի անցնինք. ի հարկէ Ֆեփի փաշան համաձայն է մեզի հետ վաղուան յարձակումին... :

Ճեփակթ. — Այո՛, Նխադի՛ պէյ, ինքն արդէն ինձի ըսաւ, որ վաղը միացեալ ոյժերով պէտք է առաջ շարժինք, որքան շուտ, այնքան լաւ... :

Նխադի. — Ուրեմն մնաք բարի : Պէտք է աճապարեմ, վաղուան համար կարգադրութիւններ ընելու :

Ճեփակթ. — Երթաք բարի. զո՛ւ՛յշ, զո՛ւ՛ չերթաք յեղափոխական գնդակի մը, — ըսաւ խնդալով :

Նխադի. — Հոյ չէ՛, չեմ կարծեր թէ անոնցմէ աւելի ըլլանք, զորս պիտի սպաննենք կամ որոնցմէ պիտի սպաննուինք... :

— Բայց ինչո՞ւ իրար սպաննել...
— Հրամայուած է... :

Մամիկոնեանի եւ Իշխանազունի հանդիպումը եղաւ անկեղծ եւ սրտաբաց :

— Բարի եկաք, ի՞նչպէս է Մամիկոնեանը :
— Բարի՛ տեսանք. շնորհակալ եմ. կը յուսամ Իշխանազունը լաւ է, — պատասխանեց Մամիկոնեան՝ Իշխանազունի ձեռքը սեղմելով :

— Հիմա կուհիմա լաւ ենք, բայց վերջը տեսնենք. ի՞նչ է այս որ կը կատարուի, Մամիկոնեան :

— Ինչ որ կը կատարուի, մեր կամքէն անկախ է. կ'աշխատինք զէպերը կեցնել, բայց դժուար է. ո՛չ պիտի կարենանք կեցընել, եւ ո՛չ ալ փոխել... գոյութեան պայքարի մէջ ենք. պիտի ընենք ինչ որ կրցանք եւ որքան որ հնարաւոր է... , — պատասխանեց Մամիկոնեան :

— Այո՛, պիտի ընենք, որքան հնարաւոր է. թշնամին անընդ-

հատ կ'աճի, իսկ մենք կը նուազինք. հետեւանքը պարզ է. թշնամին կը լեցնէ իր պակասները մարդու, ուտելիքի եւ ուղղամթերքի. իսկ մենք միջոց չունինք մեր պակասները հոգալու. մեր ունեցածը, մարդ թէ ուղղամթերք, սպասելէն ետք արդէն մեր հաշիւն ալ կը փակուի... յոյս ալ չունինք, որ դուրսէն մեզի օգնութիւն կընայ գալ. արդէն հնարաւորութիւն ալ չկայ ճեղքելու պաշարման օղակները եւ անցնելու արտասահման, լողալով այս արեան ծովէն: Ուրեմն այս արեան ծովուն մէջ խեղդուելու դատապարտուած ենք. չեմ կարծեր որ կառավարութիւնը զգաստութեան դայ եւ հըրաժարի հայ ժողովուրդը բնաջնջելու վճիռէն: Այս բնահանուր պատերազմին մէջ, ոյժ մըն ալ չկայ արտաքին, որ ճնշում բանեցնէ կառավարութեան վրայ եւ փոխէ անոր մտադրութիւնը: Ուրեմն մենք մնացեր ենք աշխարհէն անտեսուած, լքուած ու մոռցուած մեր դժբախտ ճակատագրին հետ...:

— Իշխանագո՛ւն, աշխարհի աչքը կոյր է. չի՛ տեսներ, եւ եթէ տեսնէ իսկ, համը է եւ չի՛ խօսիր...: Աշխարհէն սպասելիք բան մը չունինք, եւ ո՛չ ալ թուրքերէն: Մարդերը արուեստականօրէն շինուած են, որոնց մէջ ո՛չ խիղճ, ո՛չ զիտակցութիւն եւ ո՛չ ալ բարոյականութիւն կը խօսի. այն ինչ որ կը խօսին, կեղծ է, եւ ինչ որ կը դրեն, նոյնպէս կեղծ է...:

Արտասահմանի Հայութիւնը ի՛նչ վիճակի մէջ է, չենք զիտեր. եթէ ուզեն նոյնիսկ մեզի օղտակար ըլլալ, չեն կրնար, որովհետեւ ազատ չեն, իսկ օտարներուն շա՛տ հոգն է, թէ հայ ժողովուրդը կը բնաջնջուի...: Թուրքերը այդ որոշումը պէտք չէ որ տային, պատճառ մը չունէին. իսկ քանի որ տուած են, կը նշանակէ թէ մինչեւ վերջ պիտի քալեն. եւ արդէն յաջողած են իրենց ծրագրին մէջ. մնացեր է միայն լեռնաշխարհը. դայն եւս պիտի կլլեն...: Եթէ միայն կուռոզ ոյժերը ըլլային, կարելի էր ճամբայ մը բանալ դէպի արտասահման. բայց ժողովուրդը ի՞նչ պէտք է ընել: Հետեւարար որքան հնարաւոր է, կը պաշտպանենք մեր ժողովուրդը: Երբ այլեւս կարելի չէ, ժողովուրդին հետ կը մեռնինք. արդէն ժողովուրդին համար կ'ապրինք. առանց ժողովուրդի մեր կեանքը արժէքէ զուրկ է...: Դժբախտութիւնը հոն է, որ պէտք եղած դէպքը եւ ուղղամթերքը չունինք. թէ ոչ մեր վրայ եկող ոյժերուն հետ կարելի է չափուիլ, առանց նկատի առնելու անոնց թիւի գերազանցութիւնը. համեմատաբար մեր մէկ զոհին տեղ, անոնցմէ կ'առնենք մէկ քանիններ, եւ այդ համեմատութեամբ ալ պիտի քալէ կըռիւր, որքան ատեն զէնք ու փամփուշտ ունենանք: Թշնամին մեր

մահուան վճիռն է տուեր, բայց միեւնոյն ատեն տուեր է նաեւ ի՛ր մահուան վճիռը. մեր իւրաքանչիւր զոհի փոխարէն եթէ քանի մը զոհ կ'առնուի իրենցմէ, ուրեմն մահուան վճիռը, որ նետուած է մեզի դէմ, կը փոխադարձենք իրենց...:

— Այո՛, Մամիկոնեա՛ն, մեր շահը այն պիտի ըլլայ, ինչ կորուստ որ պատճառենք թշնամիին. դէպքերը մինչեւ հիմա լաւ ընթացան, եւ մեր կուռոզները արժեցուցին իրենք զիրենք. անոնք նորէն պիտի արժեցնեն իրենք զիրենք. բայց երբ զէնք եւ փամփուշտ պակսի, հերոսը արդէն կը դառնայ անխառն գառնուկ մը, ինչպէս այն բաղամթիւ հերոսները, որոնք կապուած բազուկներով գառնուկներու նման առաջնորդուեցան դէպի սպանդանոց: Հաւանաբար մենք եւս նոյն վիճակին ենթարկուինք ի վերջոյ, երբ սպառին մեր զինական միջոցները...: Խուժով թշնամին եթէ խոտի նման անգամ հնձուի մեր զիրքերուն առջեւ, այնուամենայնիւ մեր կոտորուած գերանդին անբաւարար է քաղելու այդ բոլորը, որ իրարու ետեւէ կը թաւալին դէպի լեռնաշխարհ...: Նայէ՛, այս ջուրը, որ լեցուած է մեր հրդեհուած զիւղերու մէջ ու շուրջ — հեծելազօրք, հետեւակազօրք, խուժան, որոնք կը վխտան մըջիւններու նման. անոնք մեծ դործի մը լծուած են, այսինքն մեզ բնաջնջելու՛ւ դործին... Եւ դեռ ա՛յլ ոյժեր, որոնք Մուշաչէնէն, Տիգրիսեան գետահովիտէն եւ ա՛յլ տեղերէն պիտի խուժեն լեռնաշխարհը, որ արդէն խիստ կերպով օղակուած է. ու օղակը անդադար կը սեղմուի: Այլ գիծերու վրայ նոյնպէս ուժեղ բախումներ եղած են — Մովսատի, Կեփինի, Կապլորի, Տարկոշի: Թշնամին ծանր կորուստներ է ունեցեր եւ նահանջեր, բայց նորէն աւելի թարմ ոյժերով վերադարձեր է եւ ճնշումը սաստկացուցեր մերոնց վրայ, որոնք հետզհետէ դէպի Անտոքի շուրջ կը փոխադրեն իրենց գիծերը, ինչպէս մենք: Վաղը անպատճառ ճնշումը պիտի սաստկանայ մեր վրայ, եւ մենք պիտի թողունք այսօրուան գիծերը ու պիտի քալենք դէպի Անտոք: Ու այսպէս թշնամին սեղմելով օղակը, մեզ պզտիկ տարածութեան մը վրայ պիտի պաշարէ...: Ընդէն է թէ մեր ոյժերը կ'ամփոփուին, բայց պիտի մղենք վերջին օրհասական կռիւները ու ապա լռենք... Իսկ ժողովուրդը բնականաբար պիտի ենթարկուի զօրքի եւ խուժանի վայրագութեան, կոտորուի կամ վաճառքի նիւթ դառնայ. ահա՛ թէ մեր դոյամարտը ի՛նչ ողբերգութեամբ պիտի վերջանայ: Մեծ քաջութիւններ արձանագրեցինք, դեռ մեծ քաջութիւններ եւս պիտի արձանագրենք: Զոհերու համեմատութիւնը կրնայ ընթանալ այնպէս, ինչպէս ցարդ ընթացաւ. թերեւ

ենթադրուածէն շատ աւելի ծանր հարուածներ տանք յարձակող ոյժերուն, բայց մենք պիտի սպասինք եւ ժողովուրդը պիտի ազդի ծանր խաչելութիւն մը...: Արդեօք մէկը որեւէ ատեն պիտի կախէ՞ իր գլուխը եւ նայի թէ ի՞նչ կատարուեցաւ այս հողերուն վրայ, եւ կամ պիտի խօսի՞ վերջէն եկող մարդոց ականջին թէ ի՞նչ բարբարոսութիւններ տեղի ունեցան այս լեռնաշխարհի հանդոյցներուն մէջ, ինչպէս Հայաստան աշխարհի բոլոր տեղերը, ուր հայ զանգուածները իրենց արիւնի մէջ խեղդուեցան...:

— Այո՛, Իշխանագո՛ւն, դժբախտարար վախճանը այդ է. աւելի ծանր պիտի ըլլար անշուշտ, եթէ առանց կռիւի այդ վախճանին երթայինք...: Միտիթարական միակ երեւոյթը այս յուսահատական կացութեան մէջ, թշնամիին հասցուցած մեր վնասն է. այլ շրջանները, ցաւ ի սիրտ, այդ բախան ալ չունեցան. որով անոնց հողեկան տառապանքը աւելի մեծ եղած ըլլալու է: Իւրաքանչիւրը մեզմէ, երբ մեռնի, իր խիղճը թեթեւցած կ'ըլլայ, որովհետեւ ինքն ալ, իրմէ առաջ, քանի մը թշնամիներ կեանքի գիծէն դուրս նետեր է...: Մենք կ'ընենք մեր կարելին. ո՛վ կ'ուզէ, թող տեսնէ, ո՛վ կ'ուզէ, թող կոյր ձեւանայ. ո՛չ ոք չի կրնար մեզազրել մեզ: Մենք կը մեռնինք հանդիստ սրտով, որովհետեւ կատարեցինք մեր տղամարդու պարտականութիւնը:

— Նայէ՛, Մամիկոնեա՛ն, մեր հրդեհուած տուները դեռ կը ծխան, մեր տուները կ'այրին եւ մենք հեռուէն կը դիտենք մեր տուներուն այրիլը: Ե՞րբ անգամ մըն ալ անոնք պիտի վերաշինուին, դժուար է ըսել. եւ ո՞վ պիտի վերաշինէ, այդ ալ դժուար է գիտնալ. ինծի կը թուի թէ մենք այլեւս այս կեանքի մէջ ո՛չ տեղ ունինք եւ ո՛չ բաժին: Հիւանդի մը հոգեվարքն է որ կ'ապրինք. հիւանդը ինչպէս կը կառչի իր կեանքին, չ'ուզեր որ խուսափի իրմէ կեանքը, մենք ալ այդպէս կառչեր ենք, չենք ուզեր կորսնցնել զայն, եւ ո՛վ կը ջանայ մեզ կեանքի գիծէն դուրս հանել, մենք ալ կ'աշխատինք զանիկա զրկել ապրելու իրաւունքէն...: Ու այդ պէտք է շարունակենք, որքան կը շնչենք...: Մեր կացութիւնը, Մամիկոնեա՛ն, այնքան յուսահատական պիտի չըլլար, եթէ մենք չկատարէինք երկու հիմնական սխալներ. առաջին սխալը Քրմապետեանի սպասողական քաղաքականութիւնն էր, որուն հետեւանքով կռուող ոյժերը ինկան շղթայի տակ եւ խլուեցան մեզմէ. մինչդեռ Գուրանի յեղափոխական խորհրդակցական ժողովը նախարարակ ըլլալու քաղաքականութեան կողմնակից էր, որ պիտի կանխէր թէ՛ զինաթափութիւնը եւ թէ՛ կռուող ոյժերու դաւադրա-

քան շղթայի տակ իյնալու անխորհուրդ խաղը...: Երկրորդ սխալը, Արցախեանի խոհեմութեան քաղաքականութիւնն էր, որ արգիլեց Մուշաշէնի զինուորական պահեստները գրաւելու ձեռնարկը...: Մենք շատ բան կորսնցուցինք այդ երկու սխալներու հետեւանքով: Ուրիշ պարագայ մըն ալ, հայկական շրջաններու այդքան հեշտութեամբ կուլ երթալն է որ սրեց թուրքին ու Քիւրտին ախորժակները եւ զանոնք քչեց մեր վրայ...:

— Իրաւունք ունիք, Իշխանագո՛ւն, եզա՛ն այդ սխալները, որ պէտք չէ որ ըլլային. այլեւս ի դուր է այդ մասին մտածել. սխալը սրբազրել կարելի չէ...: Գէղքերը զահավէժ կ'ընթանան, ինկած ենք հոսանքին առջեւ. որքան ալ գիմարենք, պիտի քըշուինք. տեսնենք թէ ե՞րբ պիտի շարտուինք դուրս այս կեանքի հունէն...:

Ու Մամիկոնեան հեռագրտակը ձեռք առաւ եւ նայեցաւ մըխացող Սեմալին, տեսաւ Իշխանագո՛ւնի տունը, որ կը ծխար: Այդ տունը նահապետական մեծ տուն մըն էր, որ հիմա կը վառէր, ինչպէս միւս տուները: Նայեցաւ Շէնքը գիւղը. տեսաւ իրենց տունը եւս, նոյն վիճակի մէջ, ինչպէս գիւղին բոլոր տուները: Բոլորն ալ կը վառէին մեծ բոցերով ու թանձր ծուխերով: Նայեցաւ Կարմիր եկեղեցիի ստուերախիտ ծառերուն, ուր շատ անգամ ինքը կը նստէր իշխաններու հետ, զանազան խնդիրներու կարգադրութեան համար, եւ ուր այժմ թշնամի զինուորականներ կը հանգստանային. տեսաւ որ անոնցմէ մէկը հեռագրտակով քննութեան կ'առնէր անտաններու եւ Տալազարի գիծերը: Ճեփտէթն էր. եւ ձեփտէթ ու Մամիկոնեան հեռագրտակով իրարու նայեցան. ձեփտէթ զինուորական բարեւ մը տուաւ, որուն Մամիկոնեան փոխադարձեց: Իշխանագո՛ւնը նկատեց.

— Ի՞նչ կայ, Մամիկոնեա՛ն, — հարցուց Իշխանագո՛ւնը:

— Ոչի՛նչ, — ըսաւ Մամիկոնեան, — մեր թշնամիները մեղի զինուորական բարեւ կու տան:

Եւ հեռագրտակը տուաւ Իշխանագո՛ւնին նայելու. Իշխանագո՛ւնը նայեցաւ:

— Այո՛, — ըսաւ, — յամենայնդէպս, քիչ շատ խելքը զլուխը զինուորական մը ըլլալու է. կանգնած ենք իրարու դէմ իրար մեռցնելու, եւ տակաւին իրարու բարեւ կու տանք:

— Հոյ չէ, — ըսաւ Մամիկոնեան, — ապիկա ո՛չ կ'ազդէ մեր զինուորական գործողութիւններու եւ ո՛չ ալ մեր ճակատադրի վրայ: Այժմ թո՛ղ տուէք ինծի, Իշխանագո՛ւն, որ մեկնիմ կարգադրութիւններ ընելու վազուան համար: Գիտեմ որ դուք ալ շատ

գրապած էք: Մենք այսօրուան գիրքերը պիտի լքենք եւ բռնենք աւելի նեղ շրջապիծ մը, որ կ'երկարի Տալազարի վերի բարձունքներէն մինչեւ Չայ, եւ Չայէն դէպի Պարպարի հովիտի վերին բարձունքները, մինչեւ Մերկեր եւ Գանիէ պաճի: Չայէն մինչեւ Տալազարի բարձունքները կը մնան ձեր ոյժերուն եւ Չայէն դէպի Պարպարի հովիտը, մինչեւ Մերկեր եւ Գանիէ պաճի՝ մեր ոյժերուն: Վաղը կռիւր աւելի կատարի պիտի ըլլայ քան նախորդ օրերը. բայց այս անգամ ալ կը յուսամ թշնամին ծանր կորուստներ ունենայ եւ նահանջէ, ու մենք յայթակահ մնանք անգամ մըն ալ եւ բախտ ունենանք իրարու հանդիպելու... Մնա՛ք բարի...:

— Երթա՛ք բարի, — ըսաւ Իշխանագուն ու բաժնուեցան իբարմէ՛ վաղուան կռիւին պատրաստութիւնները տեսնելու համար...:

Ֆելզի փառայի, ձեւաւթի եւ Նիազիի ոյժերը հրահանգ ըստացան յառաջ շարժելու: Եէնքէն եւ Սեմայէն թնդանօթածիզեր համազարկի տակ առին գոյամարտի ոյժերու երէկի գիրքերը. բայց գիրքերէն ձայն չելաւ: Հետեւազարքն ու հեծելազօրքը նոր կորոյսով մը սկսան շարժիլ, ու... գիրքերը պարպուած գտան...:

— Հը՛մ... — մտածեց Նիազին, — նոր թակարդ մը եւս...: Իսկ ձեւաւթի կը հաշուէ... — Եթէ կուան գիրքերը այսքան կորուստով մեզ ծախեցին. այսօրուան գիրքերը ի՞նչքան կորուստ պիտի արժեն մեզի...:

Սակայն Ֆելզի փառան ուրախ է. այն ինչ որ չկրցաւ ընել իր նախորդը՝ Երեքի փառան, ինքը ըրաւ, այսինքն գիրքերը գըրուեց, եւ այդպէս ալ պիտի տեղեկագրէ հարկ եղած տեղը, ի հարկէ մեծ վարձատրութեան ակնկալութեամբ...: Ֆելզի փառան հրամայեց որ հետեւազօրքն ու հեծելազօրքը առաջ շարժին, ինչպէս եւ թնդանօթածիզները: Աջ թեւին վրայ կը յառաջանան ձեւաւթի ոյժերը, ձախ թեւին վրայ՝ Նիազիի ոյժերը, իսկ կեդրոն՝ Ֆելզի փառայի ոյժերը: Հեծելազօրքը թէ՛ թեւերէն եւ թէ՛ կեդրոնէն, թնդանօթածիզերը կեդրոնի աջ ու ձախ թեւերուն վրայ կը քալեն:

— Գիշերուան ընթացքին թշնամին պարպեր է գիրքերը եւ մենք տեղեկութիւն չունինք. մեր հետախոյզները մեզի սխալ տե-

ղեկութիւններ առած են, — մոմոաց Ֆելզի փառան ինքն իրեն եւ ջղայնացած, «յառա՛ջ» հրամայեց իր ոյժերուն, «ո՛ւր որ է թշնամին, պէտք է գտնել եւ փճացնել...»:

Կեդրոնի ոյժերը Չայի ուղղութեամբ կ'ընթանան, Նիազիի ոյժերը դէպի Տալազարի վերի բարձունքները, ձեւաւթի ոյժերը դէպի Պարպարի հովիտ՝ Մերկեր եւ Գանիէ պաճի զոյուութեամբ կը յառաջանան, հեռագիտակով քննելով հորիզոնները, ու միևնոյն ատեն թնդանօթները կը ուժակոծեն զանազան կէտերը՝ գոյամարտի ոյժերը երեւան հանելու մտազրութեամբ...: Եւ սակայն Մամիկոնեանի եւ Իշխանագունի կողմէ հրահանգուած է իրենց գիրքերուն, որքան կարելի է, աննկատ մնալ, համբերել, ձգել որ թշնամին ապահով կերպով մօտենայ գիրքերուն եւ իրենք մէկէն ի մէկ անցնին մաւղէրի համազարկին, որպէսզի առաջին շարքը հընձուի եւ թշնամին ստրատիկէն ընկրկի...:

Ու թնդանօթածիզային խուզարկութիւններէ ետք, թշնամին ապահով կը մօտենայ գիրքերուն:

— Կու գա՛ն, կու գա՛ն, եւ ի՛նչքան շատ են, լեռ ու ձոր պատեր են մարդ ու ձիով. ի՞նչ կը փնտռեն, — պղտեց Պետրոսը՝ աչքերը լայն բացած:

— Ա՛յ հա՛յ, չե՞ս գիտեր թէ ի՛նչ կը փնտռեն, — պատասխանեց Գարրիկ խնդալով. — անաչէ՛ն, մեզ կը փնտռեն, երեւի թէ շատ են կարօտցեր:

— Անչո՛ւշտ, անչո՛ւշտ, երեւի թէ մեր կարօտէն խենթացեր են որ այսքան բազմութիւնով ինկած են լեռներ ու ձորեր, անպատճառ ձեռնդատարկ չեն եկած եւ շատ մը նուէրներ բերած ըլլալու են մեզի: Ուրեմն բերաննիս մաքրենք, որպէսզի մէկ-մէկ հրաչէկ գնդակ կլլենք, — ըսաւ Մխոն հայհոյելով եկող ջարդարար ջուրին:

— Մի՛ ջղայնանար, Մխո՛յ, հապա մեր նուէրները չես հարցրներ, զոր պատրաստեր ենք այդ թանկազին այցելուններուն համար: Օհաննէս խորոված կը պատրաստէ, Մուշոն թարմ սեր ու կարագ է բերեր, իսկ ես լաւագոյն պտուղները եւ լաւագոյն ըմպելիներն եմ ձարեր, զոր պիտի մատուակեմ իրենց, — ըսաւ Գուր-

դէն, մաւղէրը լեցնելով:

— Ի՞նչ կ'ուզէք ըսէք, եկողները այսօր ձեր մորթը պիտի առնեն ձեզմէ:

— Երեսուցի կ'ըսէ Տօնէն, կա՛մ մեր մորթը կ'առնուի, կա՛մ իրենցը. արդէն իրար մորթագերծ ընելու համար է որ շուն ու կատու կը խաղանք...:

— Ի՞նչ աներես են այս սրիկաները. երէկ ծեծը կերան եւ փախան, տակաւին չեն ամչնար, այսօր նորէն եկած են, այսինքն ի՞նչ ըսել կ'ուզեն:

— Ըսել կ'ուզեն, Սիմոն, պէտք է հոգիդ տաս, — ըսաւ Սողոմոն. — պատրաստուի՛ր հոգիդ տալու եւ մի՛ տրտնջար:

— Հոգիս տա՞մ... Ինչո՞ւ չէ. ես ի՞նչ ըրի, որ իրենք ինչ պիտի ընեն. թող բարեհաճին դալ, արդէն հոգիս քթիս ծայրը բերած եմ. իրենց յանձնելու համար, թող գլուխնին ուտէ:

— Ուտէ թէ չուտէ, ահա՛ կու գան առնելու:

— Ես ալ կու տամ, բայց կը ցաւիմ որ այդքան յոգնութիւն կրեր են, կտրելով սար ու ձոր. ի՞նչ հարկ կար, թող նամակ մը գրէին, ես իրենց կը գրկէի, առանց այդ յոգնութիւնը պատճառելու...:

— Տո՛յ, ի՞նչ կու տաս, Սիմոն, — հարցուց Չաքարը:

— Հոգիս պիտի տամ, Չաքար՛, այս շուներուն, չե՞ս տեսներ թողեր են իրենց տունն ու աեղը, բանն ու գործը, եւ ինկեր սար ու ձոր, ու հոգիս կը փնտռեն. չեմ գիտեր թէ ի՞նչ պիտի ընեն:

— Տո՛յ, անխելք, անոնք իրենց հոգիէն ձանձրացած՝ մեզ կը փնտռեն որ իրենց հոգին մեզի տան:

— Ի՞նչ, ծոյ ես թքեմ իրենց հոգիի վրայ. այս շուներու ազատ հոգին առնենք որ ի՞նչ ընենք. կոյսուղի՞ն նետենք...:

— Ո՛չ, գրախտ պիտի գրկենք:

— Չոզէ՛, Աստուած սիրես, այդ շուներու հոգին դժոխքին անգամ արժանի չէ, ուր մնաց գրախտ. խենթացեր ես, կ'երեւի, Չաքար՛:

— Ինչո՞ւ կը բարկանաս, Սիմոն, կա՛մ դուն պիտի առնես անոնց հոգին, կա՛մ անոնց պիտի տաս քու հոգին. ինչպէս կ'ուզես, ա՛յդպէս ըրէ:

— Եստ մի՛ խօսիք. թշնամին կը մօտենայ գիրքերուն, հիմա արդէն համազարկի հրամանը պիտի տրուի, ուշադրութիւն, — յանձնարարեց Միսոն:

— Ահա՛ տրուեցաւ համազարկի հրամանը, մաղեցէ՛ք մաւ-

ղէրները: Ա՛հ այդպէս, ի՞նչ որոտում է, եւ որոտումի հետ ի՞նչ մոնչիւն կու գայ գիրքերէն: — Գասպար՛, շարժէ՛ ձեռքերդ, պիտի հնձենք այս նախիրը, ա՛հ այդպէս, կեցցե՛ն մեր տղաները, խկապէս տղամարդու հարուած կու տան, մարդու սիրտը կը դովանայ, — ըսաւ Վարդան, որ արծիւի աչքերով կը դիտէր, չափելու համար համազարկի ազդեցութիւնը յարձակող ալիքներուն վրայ:

— Է՛յ չէ՛յ, — ձայն տուաւ Չոլոյ, խանդավառուած. — կռիւի պարն է որ կը խաղանք, լա՛ւ պարեցէք, տղա՛ք, ահա ցանցառացաւ առաջին շարքը, երկրորդն ալ պիտի ցանցառանայ. քաղեցէ՛ք, ոյժ տուէք ձեր բազուկներուն...:

— Տո՛յ, Ախո՛յ, ի՞նչ է. պոռակէն ճաթեցար, — դիտել տուաւ Պետոն. — տե՛ս, Առքոյի եւ Արթիւի ոյժերը ի՞նչ լուռ ու մունջ կ'աշխատին:

— Տղա՛յ, Պետո՛յ, կռիւը ազմկուս պէտք է ըլլայ, որ համառնես, ձայնդ ձգէ՛, թող թշնամին լեղապատառ ըլլայ. չե՞ս լսեր սա հեծելազօրքի ազմուկը եւ հետեւակազօրքի պոռչուածները. այդ բոլոր ազմուկը կ'ըլլայ իրարու քաջութիւն ներշնչելու համար:

— Այո՛, եւ քաջութեամբ ալ կը զլորուին, լա՛ւ է որ ամէն օր մեզի առատ մտացու կը գրկեն, — ըսաւ Սանդրոն խնդալով:

— Մի՛ խնդար, Սանդրո՛յ, այդ բոլորը, ինչ որ կու տան մեզի, սրիկաները տոկոսով է որ կու տան, այդ բանը պէտք է գիտնաս, — ըսաւ Թագոն դառն ժպտով մը: — Իրենք շա՛տ են առեր, Թագո՛յ, մենք կ'առնենք զինուած. բազուկներէն, իրենք կ'առնեն կապուած բազուկներէն կամ անդէն ու թշուառ բազմութիւններէն. **ասիկա ո՛չ տղամարդութիւն է, եւ ո՛չ ալ քաջութիւն**, այլ ամենացած տեսակի վատութիւն...: Հո՛ս, այս գիրքերուն առջեւ, առիւծնե՛ր պէտք է գան չափուելու, եւ ո՛չ թէ այս լըրճուկները: Եթէ մեռնինք նոյնիսկ, կ'արհամարհենք այս շուները, որ վատ են եւ անարի, — զրուցեց առիւծասիրտ Պետոն, եւ թքեց յարձակող ջուրին վրայ, մաղելով իր տասնոցը:

— Խօսելու ժամանակ չէ, — սաստեց Արթիւն. — թշնամին յարձակման ալիքները իրարու ետեւէ կը նետէ եւ գիրքեր կ'ուզէ մտնել. շարժեցէ՛ք բազուկնիդ:

— Այո՛, — ըսաւ Սեղբակ. — արդէն հոս նստեր ենք եւ իրենց կը սպասենք, — եւ շարժեց տասնոցը խուժող ուժերու վրայ, որոնցմէ երկուքը ինկան, խկ միւսները փռուեցան դետին, ու սկըսան արագ արագ կրակել: Ընչ մը արձակեց Սեղբակ ու իր զէնքը լռեց...:

— Ի՞նչ կայ, — հարցուց Միսոն. — ձայն չկայ, վա՛խ, Սեղ-

բակըր գնաց . . . :

— Տոյ սգւա, — բաւ Մլփէն. — Արքէն գնաց, ձայն մի՛ հաներ, գործիդ նայէ. քիչ մը վերջ մենք ալ կ'երթանք. կը տեսնես թէ ի՞նչպէս կու գան. այս ի՞նչ փոթորիկ է, աչք չենք կրնար բանալ. թշնամին չ'ընկրկիր որ շունչ մը ասնենք եւ տեսնենք թէ ի՞նչ կը կատարուի . . . :

— Գործի՛դ նայէ, շատ մի՛ մըթմըթար. հետաքրքրութեան ժամանակ չէ. ոյժ տուր գէնքիդ. չե՞ս տեսներ, սրիկաները իւրաքանչիւրիս գէ՛մ հազար հոգի են հաներ:

— Տօնէ՛, Տօնէ՛, ի՞նչ կ'ընես, գիրքերը մասն, տե՛ս, սուին կ'անցընեն հրացաններուն, գիտկները կոխկոտելով կու գան, — պղաւեց թեմոն, եւ տասնոցը մաղեց. նոյնը բրին եւ իր ընկերները: Սուինի եկող գինուորները գիտապատ ինկան, բայց ետեւի շարքը անցաւ համադարկի, եւ թեմոն «օ՛Ք» բրաւ ու ինկաւ կողքին:

— Տղայ Կիրո՛յ, թեմոն գնաց, — բաւ Սարգիս, վշտարեկ ձայնով մը:

— Ձայն մի՛ հաներ, Սարգի՛ս, գործիդ նայէ՛, ծանր կացութեան մէջ ենք. այդ ո՛րքան ոյժ կայ գէմերնիս. արդեօք Տալազարի գիծը գրաւուած է, որ բոլոր ոյժերը այս կողմ են թափուեր . . . :

— Այն կողմն ալ այսքան ոյժ կայ, ճի՛շդ կ'ըսէ Տօնէն. ո՛վ գիտէ իւրաքանչիւրիս գէ՛մ քանի՞ հոգի են հաներ, եւ տակաւին կու գան ու կու գան . . . :

— Թո՛ղ գան, թո՛ղ գան, ես ասոնց մէքը, — բաւ Սարգիս, տկոտաները կրճտացնելով իրարու վրայ, ու մաղեց տասնոցը. ահա մէ՛կ, երկու՛, երե՛ք, ու կատապութենէն թքեց տասնոցին: «Արիկա՛յ, երեք գնդակ պարապ գնաց» բաւ, «այս երեքը թող ըլլայ թեմոյի արեան գին»:

Կիրոյ.— Դուն հոգ մի՛ ըներ, Սարգի՛ս, թեմոն իր արեան տուրքը արգէն ասեր է, դուն քու արեան տուրքդ սո, քանի չես քնացեր:

— Տո՛յ խենթ ես, ինչ ես, քնանալու ժամանակ է, ահա անգամ մը եւս մէ՛կ, երկու՛. . . ա՛խ:

— Ի՞նչ եղաւ, Սարգի՛ս, — հարցուց Կիրոն. ձայն չկայ . . . հա՛ քնացա՞ր. տո՛յ պիտի չքնանայիր, մինչեւ երկու հասար հա՛, երե՛ք, չո՛րս . . . այս ալ թող ըլլայ քու արեանդ տուրքը:

— Կիրո՛յ, ի՞նչ կը հաշուես, — բաւ արիւնտ աչքերով Մանէն, — տնաչէ՛ն, մէկ-երկու-երեքը նո՞ր կը սորվիս, եղար գպրոցական աշակերտ:

Կիրոյ.— Մանէ՛, չե՛ս տեսներ, վարժապետը կու գայ, հաշիւ կը պահանջէ, դաս կը սորվիմ . . . դուն ալ հաշուէ ինծի հետ. այդ շանորդիք մեր տղաները մէկիկ-մէկիկ կը քնացնեն. դուն ալ քնացուր այդ շուները. ա՛հ, այդպէս, սպրի՛ս, Մանէ՛. սրիկաները գետինը կը ճանկոտեն, իսկ միւսները փախան. օ՛Ք, շունչ մը սունենք. տո՛յ, թաշկինակ ալ շունիմ որ երես սրբեմ. քրտինքը աչքերս կը լեցուի. ի՞նչ ահաւելի ճգնաժամ մը անցուցինք, երեւի բոլոր գիծերուն վրայ ճնշումը այդքան ուժեղ եղած է . . . :

— Այո՛, եւ ահա, Կիրո՛յ, ճնշումը կը թուլնայ. թշնամին կ'ընկրկի. տե՛ս, շանորդիք կը փախչին. պիտի ջանանք գնդակ հասցընել, որ երթան իրենց քիթ ու բերնին. ա՛հ, այդպէս մէկիկ կըրնակէն ծուխ ելաւ եւ ինկաւ. միւս շունը, տե՛ս, թէ ի՞նչպէս կը տապալակի. ահա այն խողը, որ կը փախչի, խփէ՛, սպրի՛ս, կոնակի վրայ ինկաւ. երեւի մէջքը կոտրեցաւ. լա՛ւ եղաւ, շանորդին կը փախչէր, եկած է թագաւորի հրամանը գործադրելու, եւ սակայն կը փախչի. անոնք որ թագաւորի հրամանը գործադրելէ դատալիք կ'ըլլան, ա՛յսպէս կը պատժուին . . . :

— Մանէ՛, շատ մի՛ խօսիր, — բաւ Կիրոն. — գլուխ կը ցաւցնես, տղա՛յ, ծարաւէն բերանս չորցեր է. շանորդի թնդանօթի սուժըր ուրիշ բան չգտաւ, մեր ջուրի ամանը տարաւ, ա՛խ, եթէ քիչ մը ջուր ըլլար ու խմէի, հարուածը ա՛լ աւելի շիտակ պիտի երթար:

— Ծարա՞ւ ես, ջուրի տեղ արիւն խմէ որ ուժեղնաս, — հեղնեց Մանէն:

— Արի՛ւն խմեմ. թքեմ ասոնց արեան վրայ. ասոնց արիւնը պիղծ է. ճի՛շդ է, պէտք է թափենք, բայց ո՛չ թէ խմենք, — պատասխանեց Կիրոն:

— Հապա լուսահոգի Տօնոյ Մակարը ի՞նչպէս խմեց Խալիլի պիղծ արիւնը, — հարցուց Մանէն:

— Մակարի սիրտը կարելի է տարաւ, բայց մեր սիրտը չի տանիր . . . :

— Կը լսե՞ս, Կիրո՛յ, երգի ու պարի ձայն կու գայ. Գարբիկն ու Պետրոսն են. ո՛վ գիտէ, քանի՞ շուն են գլորցուցեր որ այդպէս խանդավառուեր են:

— Գալար մնայ իրենց ձեռքը, կտրիճ տղաներ են, եւ ինչ ալ անուշ ձայն ունին. լա՛ւ կ'երգեն եւ լա՛ւ ալ կը պարեն, — բաւ Կիրոն:

— Իսկ երգիչ Մանոն ո՞ւր է, լեռնաշխարհի այդ կոունկը:

— Չե՞ս լսեր ձայնը, որ կու գայ, քիչ առաջ Գէորդի երգը

կերպէր, իսկ հիմա ալ մեծ Գրգոյի երգը կ'ըսէ . . . :

— Տղանե՛ր, ամբողջ գիծի վրայ թշնամին խուճապահար կը նահանջէ. տեսէ՛ք հեծելազօրքը ի՞նչպէս կը փախչի, գնդակ ետեւէն չի հասնիր. իսկ հետեւահազօրքը յայտնի է. սարսափէն ծունկերնին չի բռներ, որ արագ փախչին. տո՛յ, հարցուցէ՛ք անգամ մը թէ ո՞ւր կը փախչին այս շուները, ինչո՞ւ սկսան եւ ինչո՞ւ կ'երթան. հասկնա՛նք :

— Կ'ուզե՞ս հասկնալ, Աւէ՛, տե՛ս, ահա կը փախչին. հասի՛ր իրենց ետեւէն եւ հարցուր. արդէն Մամիկոնեանն ալ հետապնդելու հրաման տուած է. կը տեսնե՞ս, մեր ուղղմանը ի՞նչպէս մըրիկի նման թռան իրենց դիրքերէն. լա՛ւ է որ թշնամին Չայի հովիտով պիտի նահանջէ, երկու կողմի լեռնամուտերէն կրակի տակ պիտի առնուի, եւ կոտորուի . . . :

— Ի՞նչ անպատիւ նահանջ . . .

— Այնքան, որքան անպատիւ է յարձակումը կապուած բազուկներու վրայ . . . :

— Համա՛ր, վազէ՛, շատ մի արանջար. հիմա գնդակ մը կը հասնի եւ կը չորցնէ լեզուդ, — ըսաւ Ալին՝ հեւալով ու քրտնած :

— Ի՞նչ կ'ըսես, Ալի՛, յոգնեցայ. պիտի ազատուի՞նք արդեօք այսօրուան հետապնդումէն :

— Ոյժ տուր սրունքներուդ, պիտի ազատուինք, յոյսդ մի՛ կտրեր, Աստուած մեծ է :

— Ա՛յ հա՛յ, Փախրին ալ այդպէս կ'ըսէր, բայց քիթ ու բերնին գնաց եւ հողը հիմա կը ճանկուտէ այս ձորին մէջ :

— Ի՞նչ ընենք, ապո՛ւշ, շատերը հողը կը ճանկուտեն, դուն քեզի նայէ, չտեսա՞ր որ դիրքերու առջեւ չորցած տերեւներու նման կը թափէին. անխելք իշու գլուխները սուխամարտի կ'երթային . . . :

— Ապուշը իրենք չեն, ապուշը անոնք են, որ սուխամարտի հրաման կու տան. այս ի՞նչ տեսակ ուղղափարութիւն է, կարծես գիտամար բերած են՝ մեզ այս ձորերու մէջ կոտորել տալու . . . Մենք այս աժտահաներու դէմ գլուխ չենք կրնար ելլել. մարզիկ պողպատէ ձուլուած են եւ վախի գաղափար չունին. մեր գնդակի տեղատարափները կ'արհամարհեն, եւ մեր յորձանքները դիրքերու վրայ որքան ուժեղ ըլլան, այնքան հաճոյք կը ֆլան. ասոնք եթէ մեզի չափ ըլլային եւ մեր միջոցները ունենային, անպատճառ մեզի հում ու լում

կ'ուտէին. տո՛յ, այս ի՞նչ պատուհաս է, որ ելաւ մեզի դէմ : Աստուած հեռո՛ւ պահէ :

— Գիտե՛ս, Ահմէ՛տ, մեր ոյժերու մէկ մասը կտրեց դիրքերու գիծը եւ անցաւ ասոնց թիկունքը. անոնցմէ ի՞նչ լուր կայ, ի՞նչ եղան :

— Դժբախտաբար, Մեհմէ՛տ, ինկան թակարդ եւ կոտորուցան :

— Վա՛խ, ի՞նչ կ'ըսես. մե՛ղք այդ մատղաշ երիտասարդներուն :

— Այո՛, թշնամին դիտամար թոյլ կէտեր կը ձգէ որ մեր ոյժերը անխոհեմութեամբ յառաջանան եւ իշնան պաշարման օդակի տակ. այդպէս եղաւ Պարպարի հովիտ, Զրլընկի հովիտ, Մերկերու հովիտ, Չայի ձորը. շատ կորուստներ ունեցանք . . . :

— Տե՛ս, Հիւսէ՛յն, հեծելազօրքը ո՞ւր հասաւ, իսկ մենք դեռ ո՞ւր ենք :

— Ի՞նչ ընեմ թելո՛յ, փախչող փախչողի է. ով կրցաւ իր գլուխը ազատել. ո՛վ որո՛ւ մասին կը մտածէ. հեծելազօրքը պէտք է կռուի եւ մեր նահանջը դիւրացնէ :

— Սարսափէն կրնա՞յ կայնիլ եւ հրացան աշխատեցնել . . . :

— Իսկ ի՞նչ եղաւ քրտական հեծելազօրքը :

— Քրտական հեծելազօրքը. կա՛մ սառույցի նման հալեցաւ, կա՛մ նապաստակի նման փախաւ . . . :

— Նուրիի թնդանօթները ո՞ւր մնացին :

— Չե՛մ գիտեր, Քեպի՛մ, ետեւին ձիերէն ոմանք սպաննուցան, միւսները չեն կրնար քալել :

— Ուրեմն պիտի գերի իշնան :

— Չեմ գիտեր. եթէ հետապնդումը շարունակուի, աղիտալի պիտի ըլլայ. բայց արդէն իրիկուն կ'ըլլայ, եւ չեմ կարծեր որ թշնամին շարունակէ հետեւիլ մեզի . . . :

— Վերջապէս սա քանի՞երորդ անգամն է որ ծանր կորուստներ կու տանք, եւ այսպիսի խայտառակ պարտութիւններու կը մատնուինք : Աստուած հեռու պահէ մեզ աւելի վատթարագոյնէն . . . : Եւ սակայն չեմ կրնար հասկնալ այս խայտառակ պարտութիւններու պողանիքը . . . :

— Գաղտնի՞քը, վախկոտ եւ անարի էք :

— Բայց կարի՞ճ էիք, երբ կապուած բազուկներու դէմ կը կրուէիք :

Թէեւ նահանջող թշնամին սարսափահար կը փախչի, բայց հե-
տապնդումը թուլցաւ, որովհետեւ Մամիկոնեան կ'արդիւյէ աւելի ա-
ռաջ երթալ, եւ դոյսամարտի ոյժերը դժգոհ են...

Չոլոյ.— Թշնամին, որ այսպէս խուճապահար կը փախչի,
դժուար թէ որեւէ տեղ կանդ առնէ:

Ախոյ.— Ամօ՛թ է մեզի, եթէ թոյլ տանք որ այս լեռնային
նահանգներէն յաջողի անվնաս դուրս դալ. պէտք է փճացնենք...

— Այո՛, պէտք է այնպէս մը հարուածել, որ մէջքը կտորի, —
կ'ըսէ Վարդան, — որպէսզի անգամ մըն ալ չհամարձակի իր պիղծ
դոյութիւնը այս հողերու վրայ պարացնել...

— Տո՛յ, մի՛ փախչիք, մի՛ փախչիք, — կը պոռայ Գարբիկ. —
կեցէ՛ք, գոնէ միտսին կռիւի լաւ պար մը պարենք:

— Իրաւունք է, Գարբի՛կ, — կ'աւելցնէ Պետրոս. — հրացանի
պարը պարեցինք, հիմա ալ կռիւի պարը պէտք է պարենք, — ու ինք
եւ Գարբիկ կը սկսին կռիւի պարը պարել, ճի՛շդ հոն, ուր Շիւքրի
փաշան ինկաւ:

— Սո՛ւր ու ասպար, սուր ու ասպար, — կը պոռայ առիւծա-
սիրտ Պետոն, եւ Պետոն ու Ախոն, այդ երկու հոյակապ ազամար-
դերը, սուր ու ասպար կը խաղան դարձանալի ճկունութեամբ մը:

— Օ՛ ինչ լաւ է յողթութիւնը այսպէս տօնել, — բացաղանջեց
Վարդան, եւ թեւերը սոթթեց, մտաւ կռիւի պարի մէջ Առքոյին հետ,
ու պարը տաքցաւ:

Հեղհեղ պարի ելան Մանուկն ու Արթինը, Կրպոն ու Սանդ-
րոն, Չոլոն ու Մանոն, եւ ուրիշները...: Մամիկոնեան սպիտակ քա-
րերէն հեռադիտակով կը նայի, իսկ ձեւտէթ՝ կարմիր հողերու դի-
ժէն...: Նահանջող ոյժերը անցան Գորշ ձորը եւ Վաղդի Մարդեր
կանդ առին:

Գոյսամարտի ոյժերը թշնամի վիրաւորներու եւ ինկածներու
զէնքերը հաւաքելով, դարձան իրենց զիրքերը: Նոյն յաջողութիւնը
ունեցեր են Իշխանազունի ոյժերը. թշնամին նահանջելով ինկեր է Ա-
թանազինէի ձորը, բաւական վնասներու ենթարկուեր է եւ կանգ ա-
ռեր է Գեղաշէնի մէջ: Իսկ Ֆեւզի փաշայի ոյժերը ՔնՓայն գետի
ուղղութիւնը բռնելով անցեր են Ջիզաններու ձորը...

Ստեփոյի եւ Իսոյի ոյժերը մեծ գործ են տեսեր. Խորէն քանի
մը զինուորներ գերի բռնել է եւ սկսեր է անոնց հետ պար խաղալ

սպաննուած թուրք զինուորներու դիակներուն շուրջ. անոնք եւս մեծ
աւարով վերագարձեր են իրենց զիրքերը:

— Հը Խորէն, — կ'ըսէ Ստեփոն, — Իշխանազունը քու բռնած
գերիները կ'ուզէ:

— Գերիներ՛ր... գերիները զրկեցի ազահանք՝ աղ բերելու հա-
մար. քիչ յետոյ խորոված պիտի ուտենք, եւ աղ չունինք, — կ'ըսէ
Խորէն խնդալով:

— Ի՞նչ անխոհեմութիւն. Իշխանազուն կը յուսար անոնցմէ ո-
րոշ տեղեկութիւններ առնել:

Խորէն.— Ես արդէն պէտք եղածը առի, Իշխանազունին հա-
մար:

Ստեփոյ.— Լա՛ւ ուրեմն, եկո՛ւր եւ տեղեկացուր Իշխանազու-
նին, ինչ որ ունիս:

Մամիկոնեան զիրքերը աչքէ անցուց, շնորհակալութիւն յայտ-
նեց ռազմիկներուն իրենց աշխատանքին համար, եւ ցաւակցութիւն՝
իրենց ունեցած կորուստին. ու հրահանգեց՝ գոհերը թաղել իրենց
զիրքերուն մէջ, եւ ապա զիրքերու վարիչներուն հետ տեսնուեցաւ:

— Մամիկոնեան, մենք ինչ որ բրինք այս գիծին վրայ, առի-
կա դիտենք. Իշխանազունի յաջողութեան լուրն ալ առինք: Կը մնայ
մեզի բնիլ թէ ի՞նչ լուր ունիք կեղբոնէն, միւս գիծերէն եւ արտա-
սահմանէն, — հարցուց Չոլոն:

Մամիկոնեան.— Արտասահմանէն այժմ լուր չկայ, զրկուած
սուրհանդակները չեն վերագարձած. կեղբոնէն հետեւեալ տեղեկու-
թիւնները կը տրուին:

Ծովասարի գիծ.— Արժբունին Ծովասարէն նահանջելով ան-
ցեր է Սխտոբ քարի եւ Կրորշիկի բարձունքները. Աւիերմի եւ Քոփի
ոյժերը Փուրթոյի եւ Ստեփոյի զեկափարութեամբ, Կեւալիեանի
ձորի աջ կողմի լեռնամուտք բռնած են: Արժբունիի ոյժերը ձախ
կողմի լեռնամուտք. հետապնդող թշնամին չկարենալով լեռնամու-
տքէն բարձրանալ, Կիալիեանի ձորով սկսեր է յառաջանալ եւ ին-
կեր է Արժբունիի ու Փուրթոյի կրակին տակ, ջարդուեր ու նահան-
ջեր դէպի Աղրի: Քրտական հեծելազօրքը նոյնպէս բաւական վնաս-
ուեր է: Մենք ալ ունեցեր ենք մեր կորուստները: Նշանաւոր Մաքէն
սպաննուեր է: Յարձակման ընթացքին, իր արեան տուրքը առնելէ

ետք: Արծրունին փառաւոր թաղում մը կատարել տուած է Սխտոր-
քարի քով եւ դայն անուանած է յաւիտենական պահակ Կեալիեանի
ձորին . . . :

— Ափսո՛ս, — բացականչեցին բոլորը յուզուած, — եւ եթէ
այս փոթորիկներէն գուրս գանք, ուխտի պիտի գանք քու գերեզմա-
նիդ, ո՛վ Կիալիեանի յաւիտենական պահակ . . . :

— Ա՛հ, Չորո՛յ, արցունք կը տեսնեմ աչքերուդ մէջ, — նկա-
տեց Ախոն:

— Կու լամ կորուստը այն ոյժերուն, որոնք մեզի պէտք են եւ
սակայն կը լքեն մեզ ու կը հեռանան, — ըսաւ Չորոյ, դողացող ձայ-
նով մը եւ փղձկաց:

Մանուկ. — Երեւի տակաւին չճանչցաք Չորոյի սիրտը: Չորոն
թէ եւ քաջ է, բայց սիրտը փուխ է. անիկա գրեթէ ամէն օր կու լայ
մեր դո՛հերուն վրայ:

Վարդան. — Պէտք է հաշտուիլ կացութեան հետ. մենք եւս
վաղուան դո՛հերն ենք . . .

Առքոյ. — Մամիկոնեան, շարունակեցէք. ի՞նչ կայ միւս գի-
ծերէն:

Մամիկոնեան. — Կեփիմի գիծին վրայ ուժեղ կոխներ եղած
են: Անտքի ոյժերուն մէկ մասը անոնց օգնութեան զրկուած է. Իշ-
խանեանը մեծ քաջութիւն ցոյց է տուեր. իր ոյժերէն Կրպիկ, Ճանոն,
Շերոն ծանր կացութեան մէջ են եղեր. մինչեւ որ օգնական ոյժը հա-
սեր է, թրքական եւ քրտական ոյժերը ջարդուեր ու փախեր են Սպի-
տակ սարի շուրջ. մերոնք ունեցեր են քանի մը դո՛հեր. Տէր Տօնապետ
քահանան սպաննուեր է. Աջոն թեւէն վերաւոր է. Անթառամը ինկեր
է պաշարման օգակին մէջ եւ հրաշքով ազատուեր է: Մեր ոյժերը ի-
րենց գիրքերը կը պահեն:

Կապլորի գիծը. — Սոսիստունին շարունակ գիշերային յարձա-
կումներու կ'երթայ. երբեմն կ'իջնէ մինչեւ Տիգրիսի հարթավայրը.
Տիգրիսի վերին ընթացքին վրայ դանուած քրտական զիւղերը աւե-
րեր է: Բոլոր ճանապարհներն ու կամուրջները քանդեր է. ատոր հա-
մար թշնամին մեծ ոյժեր զրկած է այդ գիծին վրայ՝ Սոսիստունիի
ոյժերը շուտով հաշուեյարգարի ենթարկելու համար: Ծանր կոխ-
ներ եղած են, բայց Սոսիստունին եւ Մուշեղեան կարողացեր են պա-
հել իրենց գիրքերը: Կեդրոնէն զրկուած ոյժերը մինչեւ որ հասեր
են, թշնամին նահանջեր է դէպի Տիգրիսի հարթավայրը, ձգելով լեռ-
ներու եւ ձորերու մէջ իր սատակները . . . :

Տարկոշեան գիծ. — Սասունին ուժեղ յարձակման է ենթարկը-

ւեր:

Գոյամարտի ոյժերը գերմարդկային ճիւղեր են թափեր՝ խու-
ժումը կեցնելու, բայց թշնամին յաջողեր է սուինամարտի անցնիլ եւ
մանկ գիրքեր . . . Երկուտեք կորուսաները շատ են: Մինչեւ որ կեդ-
րոնի ոյժը կը հասնի, զժրախտարար Սասունին եւս կը վերաւորուի.
Վերաւոր Սասունին կը գտնեն թշնամիի գիակներով ծածկուած, իսկ
Անին հակառակ իր վէրքին, նորէն գիրքերու մատակարարութեան
գործով կը զբաղի. վէրքը կը մնայ անխնամ, կը վարակուի, կ'ունե-
նայ արեան թունաւորում ու կը մեռնի. կը թաղեն զինք Տարկոշեան
գիծին վրայ, ու Ազատեանը յուզուած կը պատգամէ. — «Հո՛ս, Տար-
կոշեալու բարձունքին թաղեցինք Լեոնաշխարհի գոյամարտի մայրը
եւ Տարկոշեան իշխանական տան պահակը: Գարեբը պիտի գան իրենց
յարգանքի տուրքը տալու այս մեծ նահատակին եւ անցնին . . . »: Ա-
նին առաջին անգամ լեոնաշխարհի կոխը ինքը անուանեց գոյամար-
տի կոխ, եւ ատոր համար կոչուեցաւ Գոյամարտի Մայր . . . : Անկա-
րելի կը գտնեն այլեւս Տարկոշեան գիծը պահել, եւ կը փոխադրուին
դէպի Անտք:

— Յարգա՛նք մեր Գոյամարտի Մօր, — պոռացին բոլորը. —
կ'երգնունք իր թարմ հողակոյտին վրայ ազամարդի նման տանիլ մեր
գոյամարտը իր վախճանին . . . :

Ախոյ. — Իսկ ի՞նչ եղաւ Սասունին:

Մամիկոնեան. — Սասունին փոխադրուած է կեդրոն եւ յանձ-
նուած Տօթթ. Ծաղիկեանի խնամքին: Ծաղիկեան անշուշտ իր կարե-
լին պիտի ընէ փրկելու Սասունիի կեանքը: Մենք, ինչպէս եւ Իշխա-
նազունը, ներկայ մեր գիրքերը պիտի պահենք, մինչեւ որ կեդրոնէն
նոր կարգադրութիւններ ըլլան. այժմ անցէք ձեր գիրքերը. խրախու-
սեցէ՛ք ձեր քաջերը, կերէ՛ք, խմեցէ՛ք, երգեցէ՛ք, պարեցէ՛ք եւ հան-
զըստացէ՛ք: Պահակները թող արթուն հսկեն. հետախոյզ խումբերը
պէտք է ջանան լաւ կատարել իրենց պարտականութիւնը: Ես պիտի
երթամ Իշխանազունը տեսնելու՝ Չայի բարձունքներու վրայ:

Ու Մամիկոնեան իր սպիտակ նժոյգին վրայ նստած, Իշխանա-
զունին այցելութեան գնաց:

Հանդիպումը եղաւ սիրալիր:

Իշխանազուն. — Ինչպէ՞ս է ձեր տրամադրութիւնը այսօր:

— Լա՛ւ, — պատասխանեց Մամիկոնեան, — բախտը այսօր ալ
քալեց մեզի հետ:

— Եթէ անպիտան չէ, գեւ շատ պէտք է քալէ մեզի հետ, ո-

բովճեաւե մեր ճախողութեան մէջ այս անմեղ ժողովուրդի բնաջըն-
ջումը կայ, — բաւ Իշխանազունը:

— Այո՛, Իշխանազուն, բայց բախտը երբեմն կոյր կ'ըլլայ
կ'ըսեն, եւ կրնայ ուղղութիւն փոխել, — նկատել տուաւ Մամիկոնե-
կան:

Իշխանազուն. — Ի՞նչ ընենք. աշխարհը դաւաճաներ է, թող
բախտն ալ դաւաճանէ. բաւական է որ մեր զէնքը չդաւաճանէ մե-
զի...:

Մամիկոնեկան. — Մեր զէնքի յաջողութենէն աւայժմ դո՛ւ ենք.
կ'աշխատինք ասկէ ետք ալ ամօթով չմնալ մեր լեռներու եւ մեր եր-
կինքին առջեւ, որովճեաւե միայն անոնք կը տեսնեն մեր աշխատան-
քը: Ինչպէ՞ս են ձեր ոյժերը:

Իշխանազուն. — Լաւ են, տրամադրութիւններն բարձր է. կ'ու-
տեն, կ'երգեն, կը պարեն. չէ՞ք լսեր. Շուշանի ձայնը ինկեր է պարի
մէջ եւ պարը կը փոթորիէ...:

Մամիկոնեկան. — Իսկ Խղամբ ի՞նչ կ'ընէ:

Իշխանազուն. — Խղամբ կատգամ գայլի նման կը ցատկուտէ աջ
ու ձախ. չիմա տղաներուն խորոված կը պատրաստէ. քիչ առաջ
Ստեփոյի հետ կոխի պարը կը խաղար: Իսկ ձերոնք ինչպէ՞ս են:

Մամիկոնեկան. — Մերոնք ալ լաւ են, նոյն բանով զբաղած են.
կոխէ հաճոյք կը զգան, իսկ երբ կոխ չկայ երգ ու պար է գործեր-
նին, որոնց կը մասնակցին եւ կիներ, որ անընդհատ կ'երթեւեկեն եւ
ամէն բան կը հասցնեն գիրքերուն. այսօրուան կոխին մէջ ինկող
ոյժերու զէնքերը կիներ կ'աշխատայնէին: Խուժէն եւ Սառէն էգ ա-
ռիւծի նման կը մանչէին եւ իրենց գնդակը չէր վրիպեր: Այլիանցի
Մաքէն զիրքէ զիրք կ'անցնէր եւ կոխի երգեր կ'երգէր եւ Պարպարի
հովիտը թակարգ ինկած թշնամիի ջարդը կը խրախուսէր... Գանիէ
պաճիւի եւ Մերկերու գիրքերուն վրայ հեծեյազօրքի եւ հեռեւակա-
զօրքի փոթորկոտ գրոհներուն: Մերոնք այնքան առնականօրէն կուրծք
տուին, հոտ մեծ բաժին ունէր Գասպարի տան Շամամի ներկայու-
թիւնը, որ թէ՛ կը կուտէր, թէ՛ կ'երգէր եւ թէ՛ կը խրախուսէր:
Չայի հովիտէն նահանջող թշնամիին հետապնդողներու առաջինները
Անդինէ, Ռնտոյ եւ Ռեհանն էին, որոնք չէին բաւականանար սօցան-
ներով նահանջող թշնամին, այլ վիրաւորներն ալ սուխնահար կ'ը-
նէին...: Կիներ քաջութեան եւ յանդգնութեան կողմէ վար չեն մնար
մեր կտրիճներէն եւ կարծես լուս մրցում մը կայ մէջերնին՝ առաջ-
նութիւնը իրարու ձեռքէն խլելու...:

Իշխանազուն. — Մամիկոնեկան, ինչպէս մենք, նոյնպէս կի-

ները, կ'ըմբռնեն մեր օրհասական կացութիւնը, եւ ունին նոյն տե-
սակէտը, թէ պէտք է մեռցնել եւ յետոյ մեռնիլ. փրկուելու յոյսը ա-
նոնք եւս չունին, եւ այս արտակարգ շարժումը, որ վարակեր է
մեզ, մահուան հետ հաշտուելէն կու գայ. կեանքի հետ մեր հաշիւ-
ները փակած ենք. պիտի քայլենք առնականօրէն ու հպարտ՝ դէպի
մեր խաչելութիւնը: Երբեք պիտի շինայենք մեր հարուածը թշնա-
միին...:

Մամիկոնեկան. — Այո՛, կիները եւս ըմբռնել են որ փրկութեան
ճանապարհ չկայ եւ հոգեփոփուեր ու արիացեր են. արիացե՛ր,
դարձեր են մէկ-մէկ գերբնական էակներ, լեցուած աստուածային
ցասումով ու վրէժխնդրութեամբ: «Վտանդի առջեւ պէտք է անթարթ
աչքով նայիլ», կ'ըսէր մեր Շաքէն. «Վտանդիւն է վտանգէն վախ-
նալ եւ վտանգը սաստկացնել»: Այո՛, վտանգը պէտք է արհամարհել,
եւ մերոնք գիտեն վտանգը արհամարհել. այս յաջողութիւնները, որ
մենք կ'ունենանք, վտանգը արհամարհել գիտնալու շնորհիւ է. չի
բաւեր միայն վտանգը արհամարհել, այլ պէտք է գիտնալ օգտագոր-
ծել մեր ոյժերն ու ժամանակը: Մերոնք թրծուեցան օրհասական կը-
ռիւներուն մէջ. անոնք գիտեն թէ ասկէ ետք, ինչպէս պիտի տանին
գոյամարտի կոխը. նոյն բանը եւ կիները գիտեն: Կացութիւնը գրե-
թէ մեր բոլոր գիծերու վրայ նոյն է, եւ կիներ իրենց կարողութիւնը
կամովին կ'օգտագործեն մեր գոյամարտին ի խնդիր. բոլոր գիծերու
վրայ ալ կիները մեծ գործ կը տեսնեն, եւ մենք շնորհակալ ենք ի-
րենց քաջայերանքէն, ինչպէս եւ իրենց խնամքէն: Կիներ անսպառ
աղբիւր են ոյժի, հաւատքի եւ քաջութեան: Անոնք են որ առնակա-
նութիւն կը վազցնեն մեր մէջ: Ահա՛, օրինակ Վիկտորիան, հեքիա-
թային այդ հերոսուհին, Շուշամերկի այդ համեստ, բայց առնա-
կան ու խիզախ աղջիկը, որ մեծ գործ կատարեց, Գեղաշէնի եւ
Շուշամերկի, Քոփի եւ Աւիերմի կոխներու մէջ: Անկէ է որ ներշնչ-
ուեցան մեր նշանաւոր Մաքէները, Խղամները, Օղիտաները եւ Նա-
զէները. անիկա տեսակ մը մեծ Շաքէի վերերեւումն է — յեղափո-
խութեան եւ ըմբոստութեան խորհրդանիշը: Անիկա է այժմ Արծ-
րունիի թեւ ու թիկունքը, ու Կեպիլեսանի ջարդին մեծ գործ է կա-
տարեր, ինչպէս Մաքէն, զոր գժբախտարար կորսնցուցինք: Եթէ
Մաքէն յաւիտենական պահակ կոչուեցաւ Կեպիլեսանի ձորին, ու Ա-
նան՝ մեր Գոյամարտի Մայրը, Վիկտորիան ալ յեղափոխութեան եւ
պայքարի խորհրդանիշ պիտի նկատուի...:

— Ըի՛չդ ես, Մամիկոնեկան, բայց մենք ի՞նչ պիտի կոչուինք,
— հարցուց Իշխանազունը խնդալով:

— Մենք յեղափոխութեան եւ զոյամարտի համեստ զինուորներէն ենք, Իշխանագո՛ւն, — պատասխանեց Մամիկոնեանը: — Մենք կրնանք ուրիշները զնահատել մեր կենդանութեան, իսկ մեզ ո՞վ ի՞նչպէս կ'ուզէ, թող այնպէս հասկնայ: Գիտեմ, ինչպէս Մամիկոնեան մը, նոյնպէս Իշխանագո՛ւն մը, իրենք զիրենք գեռ շատ պղտիկ կը տեսնեն, եւ եթէ զնահատանքի մը խօսք ալ լսեն աջէն ու ձախէն, հաւանաբար վիրաւորուին քան թէ բաւարարուին...:

— Կեցցե՛ս, Մամիկոնեա՛ն, բայց մի՛ մոռնար որ այդ արտա-կարգ համեստութիւնը շատ վնասեր է մեզի...:

— Գիտեմ, Իշխանագո՛ւն, շատ ցաւոտ հարցի մը վրայ մատդ գրիր, բայց այսօրուան չի վերաբերիր. լաւ կ'ըլլայ որ չմոռնենք անոր տխուր ծաղրերուն մէջ: Ի՞նչ լուր ունիք կեղբոնէն:

Իշխանագո՛ւն. — Այն՝ ինչ որ ձեզի տեղեկացուած է:

Մամիկոնեան. — Մասունիի մասին նոր տեղեկութիւններ չըկա՞ն:

— Ո՛չ, բայց կը կարծուի թէ վէրքը ծանր է:

Մամիկոնեան. — Մե՛ղք. արժեքաւոր ոյժ մըն է, որ գործի գիծէն դուրս կ'ելլէ:

Իշխանագո՛ւն. — Այո՛, յոյսերնիս ամբողջ Տօքթ. Մաղիկեանի վրայ է, եւ հաւանաբար Տօքթորն ալ շատ յոյս չունի...:

Մամիկոնեան. — Մասունիի ոյժերը հիմա որո՞ւ տրամադրու-թեան տակ են:

Իշխանագո՛ւն. — Կարծեմ յանձնուած են Ազատեանին եւ Գէորդին:

Մամիկոնեան. — Արցախեանի լաւատեսութեան մասին ի՞նչ կարծիք ունիք: Մինչեւ մեր գիմադրական կարողութիւնը սպառի արդեօք արտաքին սրեւէ ոյժ պիտի հասնի՞ մեզի օգնութեան:

Իշխանագո՛ւն. — Հաւատք չունիմ: Ռուսահայ կամաւորական շարժումները ազատ չեն, եւ ինքնազուլի գործելու քաջութիւն պիտի չունենան. իսկ ռուսական ոյժերը չեն հետաքրքրուիր մեզմով, այլ կ'ուզեն Հայաստանը առանց Հայերու...:

Մամիկոնեան. — Նորէն կ'անդրադառնամ Վահագնեանի երեք տեսակէտներուն վրայ, եւ կը գտնեմ որ այդ երեք տեսակէտներն ալ պէտք էր գործադրէինք: Առաջին՝ նախայարձակի քաղաքականու-թիւն. երկրորդ՝ Մուշաշէնի գրաւում. երրորդ՝ ամբողջ ժողովուրդը ճամբայ հանել, կռուողներու պաշտպանութեան տակ, եւ թշնամի օգակները ձեզքել ու անցնիլ արտասահման: Այս երեք տեսակէտնե-րուն ալ դէմ պային Արցախեան եւ իրենց պէս մտածողները, յոյս դը-

նելով ժամանակ շահելու քաղաքականութեան, այն յոյսով որ ռուսական ոյժերը, ինչպէս եւ հայ կամաւորական զունդերը, կարճ ժա-մանակի մը մէջ կրնան երեւիլ այս կողմեր... ժամանակ շահելու քաղաքականութեան հետեւանքները կը կրենք. կրեց եւ ինքը, Քըր-մապետեանն ալ: Իսկ ի՞նչպէս է Վահագնեանը:

Իշխանագո՛ւն. — Լա՛ւ է, ինքնապաշտպանութեան դիժերու տը-կար նկատուած կէտերուն օգնական ոյժ կը հասցնէ, զինապահեստ-ներուն կը հսկէ եւ ռազմամթերքի բաշխում կը կատարէ:

— Իսկ Արցախեա՞նը:

— Սուբհանդակներու ճանապարհը կը նայի, եւ ծրարիրներ կ'որոճայ:

— Հասցա Վիշապեա՞նը:

— Կեղբոնի ոյժերը կը կազմակերպէ:

Մամիկոնեան. — Ի՞նչ կ'ըսէք, Իշխանագո՛ւն. կ'ուզեմ յարա-բերութեան մէջ մտնել բանակի հրամանատարութեան հետ՝ յեղա-չրջում մը առաջ բերելու համար ասոնց մտայնութեան մէջ. թուրք գերիներէն անուած տեղեկութիւններու համաձայն՝ մեր դէմ գոր-ծող ոյժերու հրամանատար ձեւաւթը կը ցանկայ մեզի հետ տեսնը-ւիլ. չե՞նք կրնար արդեօք օդտաղործել այդ ցանկութիւնը: Եթէ չյա-ջողինք մտայնութիւնները փոխել, գոնէ ժամանակ կը շահինք:

Իշխանագո՛ւն. — Այո՛, գերիները այդպէս կ'ըսեն. կրնան եւ իրենց վախէն այդպէս ըսել, որպէսզի ազատ թողունք զիրենք իբր բանագնաց: Յարաբերութեան մէջ մտնել դժուար չէ, բայց չեմ կար-ծեր թէ ցանկացուած արդիւնքը տայ: ձեւաւթ մը կամ Նիսպի մը չեն կրնար փոխել պետական քաղաքականութիւնը. անոնք կանչուած են գործի՝ այդ քաղաքականութիւնը կիրառելու համար, եւ բնակա-նարար միջոցներ պիտի փնտռեն անոր իրականացումը զիւրացնելու: Թրքական նենգամտութիւնը ամէն տեղ նոյն է, միայն թէ միջաւայրի եւ ժամանակի հետ ձեւերը կը փոխէ: Ո՛վ գիտէ ինչ կայ այդ ցանկու-թեան տակ թաքնուած. յամենայն դէպս կարեւորութիւն տալու չէ, եւ եթէ փորձենք յարաբերութեան մէջ մտնել, այդ յարաբերութիւն-ներէն միայն շարիք կարելի է ակնկալել...: Չե՛մ կարծեր թէ վաղը յարձակման ենթարկուինք. վաղը հանդիստի օր մը պիտի ըլլայ. մեր դէմ գործող ոյժերը Գեղաշէնի եւ Շուշումերկի մէջ կը հանդստա-նան. Արժրուների դէմ գործող ոյժերը՝ Այրի, Քոփ եւ Աւկերմ գիւ-ղերու մէջ, իսկ ձեր դէմ գործող ոյժերը՝ Ծիծառներու ձոր եւ Վազ-քի մարզեր: Թշնամին ինք եւս հանդիստի եւ պատրաստութեան պէտք ունի. երեւի որոշ ժամանակ մը պիտի մնանք այս գիծերուն վրայ,

և առիթ պիտի ունենանք յաճախակի իրարու հանդիպելու: Եթէ Մամիկոնեանը ուզէ ինձի ընկերանալ, նպատակ ունիմ քննական պտոյտ մը կատարել մեր բոլոր զիճերուն վրայ եւ անցնիլ կեդրոն, ի հարկէ եթէ յարձակումներու շնթարկուինք:

Մամիկոնեան.— Լաւ եւ մտածեր, Իշխանագուն. ես ինքս ալ նման ալցելութեան մը միտք ունիմ. շատերը մեր կարիճներէն կռիւի զիճէն դուրս ելան, առանց անդամ մըն ալ իրար տեսնելու. նոյնը կրնայ պատահիլ եւ վաղը մնացածներուս համար. դոնէ անդամ մը եւս իրար տեսնելու նախ պիտի ըլլար այդ ալցելութիւնը. այդ տեսակէտէն, կրնորը մեզմէ աւելի բախտաւոր են, որովհետեւ անոնք յաճախ իրարու կ'ալցելին:

Ու Մամիկոնեան ճաշեց Իշխանագունի հետ, յետոյ ալցելեց Իշխանագունի ոյժերուն, խրախուսեց զանոնք, տեսնուեցաւ Շուշանի եւ Խրզամի հետ, շնորհակալութիւն յայտնեց անոնց, իրրեւ կանանց ներկայացուցիչներ, իրենց մատուցած ծառայութեան համար, ու վերադարձաւ իր քաջերուն քով:

Անցան մանր-մունր կռիւներու շրջան մը եւ Մամիկոնեան ու Իշխանագունը առիթ ունեցան իրենց հետեւորդներով ալցելելու Արծրունիին, Իշխանեանին, Խոսրոսունիին, Մասունիին եւ անոնց ոյժերուն. հանդիպեցան կեդրոն, տեսնուեցան Վահագնեանի, Վիշապեանի, Ասպետեանի, Արցախեանի, Ազատեանի հետ. ունեցան կարեւոր խորհրդակցութիւններ, որոնց ներկայ էր եւ Ծովինարը, յեղափոխութեան մայրը: Աչքէ անցուցին կեդրոնի ոյժերը, մատակարարութեան գործը, զինապահեստները, սուրհանդակային ցանցը, կանանց կազմակերպութիւնները, եւ վերադարձան իրենց զիճերուն վրայ ու ընդունուեցան խանդավառ ցոյցերով: Մէկ-քանի օր ետք, իրենց փոխադարձ ալցելութեան եկան Իշխանեան, Արծրունի, Խոսրոսունի, Արցախեան, Վահագնեան, Վիշապեան, Ասպետեան, Ազատեան՝ իրենց հետեւորդներով, որոնց մէջ էին նշանաւոր Վիկտորիան, Օղիտան, Աջոն, Անթառամ, Մարգրիտ, Նոյեմզար եւ ուրիշներ. հիւրերը ընդունուեցան զինուորական պատիւներով եւ հիւրասիրուեցան խորովածով, զինիով, երգով ու պարով...:

Ի՞նչ սրտաց ընդունելութիւն եւ ի՞նչ փոխադարձ սէր ու յարգանք: Ընդունելութիւնը եղաւ Չայ հովիտի բարձունքներուն վրայ. ներկայ էին նաեւ Իշխանագունի եւ Մամիկոնեանի վարիչ ոյժերը. մրցում եղաւ երգի, պարի, ոյժի եւ ճկունութեան: Շուշան, Մաքէն ու Նազէն իրենց զիլ ձայները ձգած էին, որոնց կը պատասխանէին Մանոն, Գարրիկ ու Թագոն: Խաղցան թեթեւ պար, ծանր պար, փափուրի, ճկութիւլ ու յետոյ կռիւի պար. եւ ապա սուր ու սապար. Վիկտորիան ու Պետոն, Խրզամն ու Ախոն, Օղիտան ու Չոլոն, Մանուկն ու Աջոն: Մասնակցեցան եւ Վահագնեան ու Մամիկոնեան, Իշխանեան եւ Վիշապեան, Իշխանագուն եւ Ասպետեան, Խոսրոսունին եւ Ազատեան եւ միւսները: Ի՞նչ հոյակապ է անոնց պարը, որուն ստջեւ աստուածներու պարն անգամ կը նսեմանայ...:

Անոնք խմեցին Իշխանաց ձորէն, Փառկիէն, Մաղտունէն, Գեղեր վանքէն, Ընկուզնակէն բերուած անմահական զինիէն եւ ըսին խրախուսիչ բաժակաճառեր:

— Խմե՛նք աստուածներու կենացը, — ըսաւ Վիկտորիան բուրբոյլին կերպարանափոխուած եւ հերարձակ, կարծես վրէժի աստուածուհիին մարմնացումն ըլլար...:

— Բայց ս՛ուր են աստուածները, — հարցուց Վահագնեան քրմ-ծիճազով մը:

— Հո՛ս, ի՛մ շուրջս, — պատասխանեց Վիկտորիան տիրական ձայնով մը եւ բոլորը պարպեցին իրենց գաւաթները եւ ծափահարեցին՝ «կեցցէ՛ Վիկտորիան» պոռալով:

— Խրզամ մը, Խրզամ մը կ'ուզենք լսել, — ըսին աջէն ու ձախէն, եւ Խրզամ գաւաթը ձեռքը, լուծեան մէջ, երկար եւ ուժեղ քրքիջ մը արձակեց ու գաւաթը պարպեց...:

— Խրզամը ամէն ինչ տուաւ, — ըսաւ Ախոն:

— Խրզամ խնդաց ամենուն քթին, — աւելցուց Վարդան:

— Լա՛ւ բրաւ, շա՛տ լաւ բրաւ, ապրի՛ Խրզամը, — պոռաց Չոլոն:

— Այո՛, արհամարհեց ե՛ւ կեանքը ե՛ւ մահը, — ըսաւ Վահագնեան:

— Կեցցէ՛ Խրզամը, — բացականչեցին բոլորը եւ խմեցին Խրզամի կենաց:

— Օղիտա՛ն կ'ուզենք, Օղիտա՛ն, — առաջարկուեցաւ:

Օղիտան սաքի կեցաւ զինիի բաժակը ձեռքը եւ երգեց «Մեր վրայ գալով...»:

— Ապրի՛ Օղիտան, — պոռացին եւ խմեցին Օղիտայի կենաց:

— Կարգը Աջոյին է, Աջո՛ն լսել կ'ուզենք, — առաջարկեցին ոմանք:

Աջոն ոտքի ելաւ, «Հուռա՛, հուռա՛, մեր քաջերու սուր շոգ-շողայ...» երգեց եւ գաւաթը պարպեց:

— Աջոյի կենաց, — պոռագին աջէն ու ձախէն եւ խմեցին Աջոյի կենացը:

— Օրիորդ Արծրունին ո՞ւր է, — հարցուցին ոմանք դիտմամբ: Օրիորդը խնդաց եւ վեր ցառեց:

— Հո՛ւ եմ, — ձայն տուաւ եւ շուրջը նայեցաւ:

— Ի՛նչ սքանչելի ազնիւ է. սպառազէն, աչքերէն կրակ կը ցառակէ. դէմքը կարծես ամբողջ մութ աշխարհ մը կը հրդեհէ. ու ախպէս պատգամեց.

— Գոյամարտի՛ հերոսներ, կեանքի եւ մահուան ասեղ պայքարին լծուած ենք ու կը խմենք. չմոռնանք մեր զոհերը, խմենք այն քաջերու կենաց, որոնք ինկան իրենց դիրքերուն մէջ, յանուն հայ ժողովուրդի յաւերժութեան եւ հոն կը մնան. խմե՛նք, կեայիեանի յաւիտենական պահակի՛ մեր անմոռանալի Մաքէի կենաց, որ Սխտոր քարի քով կը մնայ. խմե՛նք մեր Գոյամարտի Մայր Անիի կենաց, որ Տարկոյի բարձունքներու վրայ ինկաւ. խմե՛նք մեր վիրաւոր հերոս Սասունիի կենաց եւ մայթենք որ իր վէրքը շուտ դարմանուի. խմե՛նք մեր բոլոր կարիճ մարտիկներուն կենաց, որոնց սուրբը միշտ կարուկ եւ բազուկները պողպատ մնան...:

Իսուն կերպով ծափահարեցին Օրիորդ Արծրունին եւ խմեցին զոհերու յիշատակին...:

— Անգինը կ'ուզենք լսել, — ազմկեցին չորս կողմէն:

Ու անա Անգինը իր հոյակապ հասակով, դարերու ամբողջ գեղեցկութիւնը շալկած, արեւներէն ալ գեղեցիկ ու լոյսերէն աւելի պայծառ՝ արձանացած կանգներ է. իր արծուային նայուածքը հորիզոնները կը չափէ: Ան երգեց «Ամեկայն տեղ մաիը մի է...»: Որտապէս ծափահարութենէ մը ետք, պարպեցին իրենց գաւաթները ազլի ազատագրութեան համար զոհուողներուն յիշատակին:

Ու անա յանկարծ, մութի մէջէն — չը՛նկ, չը՛նկ, չը՛նկ — սուրը ասպարին դարնելով եւ երկելով, վազրի ոտուամներով ու ճկունութեամբ, Գասպարի տան Ծամամն է, որ սուր ու ասպարի պարը կը պարէ՝ կանչելով. «Ահա՛ կու գամ, ահա՛ կու գամ, պատրաստ

եղէք, ահա՛ կու գամ... Ահա՛ եկայ, ահա՛ եկայ, պատրաստ եղէք, ահա՛ եկայ... է՛հ, ո՛վ որ քաջ է, թող մէջտեղ գայ, ահա՛ եկայ, ահա՛ եկայ...»:

Վիկտորիան մէջտեղ ցառեց, սուրը ասպարին շիկացնելով՝ «Ե՛ս ալ եկայ, ե՛ս ալ եկայ, ո՛վ որ քաջ է թող մէջտեղ գայ...»: Ու դէմ դիմաց եկան այդ երկու կատաղի վաղբերը. իրար չափեցին, չափչփեցին, իրարու շուրջ սկսան դառնալ, փոթորիկի մը նման, ընդհանուր հիացումի մը մէջ: Անոնք երեւան բերին իրենց ճկունութիւնը, ճարպիկութիւնը եւ հարուածելու կամ հարուածի դէմ պաշտպանուելու վարպետութիւնը: Գնահատանքի ուժեղ ծափահարութիւն մը վերջ տուաւ անոնց խաղին, բայց խաղը վարակեց եւ ուրիշները, եւ սուր ու ասպարի ելան Վարդանն ու Պետոն, Ախոն ու Չոլոն, Օգիտան ու Աջոն, Մամիկոնեանն ու Վահագնեանը, Իշխանեանն ու Իշխանազունը, Խղամն ու Մարգրիտ, Խութէն ու Հուսէն եւ միւսները:

— Է՛հ, յոյնեցանք սուր ու ասպարի պարէն. կուտի՛ պար, կուտի՛ պար սկսինք, — ըսաւ Ասքոն եւ թեւերը քշտեց ինկաւ մէջտեղ:

Վարդանը առջեւ ելաւ, երգիչները սկսան, պարը աաքցաւ ու բոլորը մտան պարի մէջ, մարդիկ թէ կիներ խառն: Կողմերը կը փոթորկուին եւ իրար կու գան. գետինը կը դողայ անոնց ոտքերուն տակ, իսկ ձեռքերու ուժեղ բախումը կ'արձագանգէ լեւնամուտերու կողերուն. կարծես աշխարհներ կը քանդուին եւ աշխարհներ կը կերտուին այդ կուտին մէջ, որ կը թաւալի երգիչներու փոթորկալոյզ երգերովը:

Անոնք յոյնեցան երգելէն եւ պարելէն. այժմ նստեր են խորոված կ'ուտեն եւ գինի կը խմեն:

— Հիմա մենք կ'ուզենք ազամարդիկը լսել. կիները լսեցինք արդէն, — ըսաւ Վիկտորիան. — ով ինչ ըսելիք ունի, մտիկ կ'ընենք:

Արծրունի. — Կիները այնքան շատ բան ըսին, որ մեղի ըսելիք չմնաց արդէն: Գոյամարտի մէջ ենք, արիութեամբ պիտի տանինք կուրը, եւ եթէ մեռնինք, նորէն այն հաւատքը ունինք, որ հայ ցեղը պիտի չմեռնի. անիկա ինչպէս ծնեք է Գրգոններ, Գէորգներ, Ծաբէներ, Անիներ, Մաքէներ, նոյնպէս պիտի ծնի նորեր, որ պիտի շարունակեն հայ ցեղի ազատագրութեան գործը... Խմեցէ՛ք հայ ցեղի

յաւերժական գոյութեան կենաց :

— Այո՛, հայ ցեղի յաւերժական գոյութեան կենաց, — պոռացին բոլորը միասին, և պարպեցին իրենց գաւաթները :

— Իշխանազո՛ւնը կ'ուզենք, Իշխանազո՛ւնը, — ձայնեցին չորս կողմէն և բուն կերպով ծափահարեցին :

Ու Իշխանազունը խօսեցաւ :

— Մեր առջեւ ծանր օրեր կան. մեզ կը հարկադրեն անցնիլ մահուան կամուրջէն, իսկ մենք կ'ընդդիմանանք. կ'ուզենք որ մեզ հարկադրողները իրենք անցնին այդ կամուրջէն : Եթէ այդ հարկադրողները մեզմէ աւելի արժեքաւոր ըլլային, թերեւս այսքան մեղի դժուար չթուէր : Կը տեսնէք թէ սրո՞նք են, ամարդի թուրքերն ու Քիւրտերն են, սրոնց արդէն ծանօթ էք, և ինչպէս վարուէր էք կրօնի առաջին օրերէն մինչեւ հիմա, նոյն ձևով շարունակեցէք, որքան առեն կ'ապրիք... :

— Կեցցէ՛ Իշխանազունը, մեր լեռնաշխարհի փառքը, — աղաղակեցին և ծափահարեցին :

— Վահագնեա՛նը, Վահագնեա՛նը, — պոռացին բոլորը :

Ու Վահագնեան սօքի ելաւ : Այդ պահուն Օրիորդ Արծրունին անսպասելի կերպով, գեղեցիկ ձայնով մը երգեց. «Երկնէր երկին և երկիր», ի պատիւ Վահագնեանին :

Վահագնեան միջահասակ, բարեձեւ, նուրբ ու անական դիմադիծով, խրոխտ կեցուածքով, Վահագն աստուծոյ սերունդէն է կարծես, խառնած շանթ մըն է երկինքէն ինկած : Ծառ քիչ անգամ միաքրք, քաջութիւնը, յանդպնութիւնը, առաքինութիւնն ու անձնագոհութիւնը այդքան ներգաշնակ կերպով իրարու շողկապուած կ'ըլլան մարդ անհատին մէջ... Վահագնեան նախ շնորհակալութիւն յայտնեց Օրիորդ Արծրունիին և ապա բաւ :

— Եզրայրնե՛ր և քոյրե՛ր, շատ աշխատեցանք մեր զրօցիներուն հետ լեզու գտնելու, բայց գժբախտաբար չկրցանք իրար հասկընալ կամ չուզեցին մեզ հասկնալ : Երէկ կը զլանային մեզի ազատ ապրելու իրաւունքը : Այսօր կը զլանան գոյութիւն ունենալու իրաւունքը, և այս կռիւր լաւ էք որակեր Գոյամարտի կռիւ : Այս կռիւր պիտի տանինք սեղմուած ահուաներով, պրկուած բազուկներով, գաժան դէմքով, մինչեւ ուր որ կարողացանք : Ընենք ինչ որ կրնանք, ու այսպէս անցնինք հողարտ ու խրոխտ՝ այս անիրաւ աշխարհէն, առանց սարսափ զգալու և առանց ցաւելու որ կը թողունք այս կեանքը : Այս վայրկեանը, զոր կ'ապրինք, կ'որժէ ամբողջ դարերու ըստըրկական կեանքը : Մինչեւ մեռնինք, այսպէս ուրախ-զուարթ պիտի

ապրինք, երգելով ու պարելով պիտի կուսինք ու մեռնինք, արհամարհելով և՛ կեանքը, և՛ մահը և՛ թշնամին :

— Կեցցէ՛ Վահագնեանը, — բացականչեցին բոլորը ու ծափահարեցին :

— Մամիկոնեա՛նը կ'ուզենք, — առաջարկուեցաւ և ծայր տըւաւ խանգալաւ ծափահարութիւն մը :

Ու ձերմակ նժույգով ասպետը կանգնեցաւ. ի՞նչ հոյակապ կեցուածք. աստուածներ անգամ կը նախանձին... :

— Քաջե՛ր, — բաւ Մամիկոնեան, — կանգնած ենք մահուան առջեւ. անվա՛խ և անթարթ աչքերով պիտի նայինք մահուան, որ կը մօտենայ հաստատ և ամուր քայլերով : Վախ, աստանմունք, ընկրկում ներելի չեն տղամարդուն : Մեծ էք և՛ հոգիով, և՛ սրտով, և՛ մտքով : Պիտի քայլէք հրեզնէ փոթորիկներու մէջէն դէպի յաւիտենականութիւն : Այս ազականամ աշխարհը արժանի չէ ձեզի : Դո՛ւք աւելի մեծ կեանքի մը և աւելի արժեքաւոր աշխարհի մը համար ծնած էք : Անցնինք այս աշխարհէն, բռունցքը սեղմած, բարձր ձակատով և գաժան նայուածքով : Ո՛վ կարողացաւ տեսնել, թող բռէ. — Այստեղերէն մըրիկները անցան... :

— Կեցցէ՛ Մամիկոնեանը, — պոռացին ու ծափահարեցին :

— Քիչ մըն ալ Արցախեանը մտիկ ընենք, — ցանկութիւն յայտնեցին աջէն ու ձախէն :

— Այո՛, այո՛, — կրկնեցին ուրիշները :

Ու ահա Արցախեանը սօքի ելաւ, ջղուտ ու սնդակազմ, զուռ մաղերով, վաւժուուն աչքերով, ցորենազոյն դէմքով երիասարդ մը, որ բաւ :

— Ինկած ենք ծանր կռիւի մը մէջ և պիտի շարունակենք մինչեւ ծայրը : Որքան ոյժ ունենանք, պիտի հարուածենք անխնայ. եթէ յանկարծ փրկութեան ճանապարհ մը բացուի, դո՛հ պիտի մնանք : Ծառ անգամ ամենայնուհաստ կացութեան մէջ, չսպասուած յոյսը կը ծնի : Պիտի քայլենք, բայց բոլորովին ալ անյոյս չապրինք. ցեղը չի մեռնիր, ատոր կրնաք վստահ ըլլալ, եթէ մենք մեռնինք իսկ : Մեր մահը մահերու ամենէն ազնիւր պիտի ըլլայ, որ հերոսներուն յատուկ է, և մեզ պիտի անմահացնէ :

— Քալե՛նք բնիկերնե՛ր՝ անխախտ հաւատքով դէպի անմահութիւն : Յեղը, որ պիտի ապրի, երբե՛ք պիտի չմոռնայ իր հերոս գաւակները, ինչպէս չէ մոռցած իր անցեալի փառքերը : Այս աշխարհին մէջ իւրաքանչիւրին բան մը կը վիճակուի. ո՛չ միայն անհատի, այլև հաւաքականութեան. և մեզի ալ վիճակուած է այս կացութիւնը :

Պիտի կրնա՞նք փոխել, չե՞մ գիտեր, բայց պիտի տանինք համբերութեամբ եւ արիութեամբ: Ոյժ, կարողութիւն եւ յաջողութիւն կը մաղթեմ ձեզի այս դժնդակ պայքարին մէջ...:

Բուռն ծափեր եւ ապա «կեցցէ՛ Արցախեանը» աղաղակեցին միարեան:

Յետոյ յաջորդաբար խօսեցան Վիշապեան, Իշխանեան, Խոստուռնի, Ասպետեան, Աղատեան եւ ուրիշներ. արտասանուեցան խրախուսիչ բաժակաճառեր՝ ստեղծելով անսահման ոգեւորութիւն:

— Լա՛ւ, բայց վերջապէս ո՛ւր մնաց յեղափոխութեան մայրը, — հարցուց Իշխանեան:

— Այո՛, այո՛, — աւելցուց Վիշապեանը, — Ծովինա՛րը կ'ուզենք, Ծովինա՛րը, յեղափոխութեան մայրը:

— Ծովինա՛րը, Ծովինա՛րը կ'ուզենք, — կը պոռան աջէն ու ձախէն, բուռն եւ փոթորկոտ ծափահարութեան մը մէջէն. — կեցցէ՛ յեղափոխութեան մայրը, կեցցէ՛ Ծովինարը:

— Գժրախտաբար Ծովինարը պիտի չկարենայ դալ, — պատասխանեց Մամիկոնեան, — որովհետեւ քիչ մը անհանգիստ է: Երեք անգամ սուրհանդակ զրկեցինք. ցաւ է յայտներ որ պիտի չկարենայ դալ, ու իր մայրական օրհնութիւններն է զրկեր:

— Կեցցէ՛ յեղափոխութեան մայրը, — աղաղակեցին եւ դաւաթները պարպեցին Ծովինարի կենաց:

— Սուր ու ասպարի պար մը՝ ի պատիւ Ծովինարին, — առաջարկեց Վիշապեանը, եւ Վիկտորիան ու Օդիտան մէջտեղ ցատկեցին եւ կատաղի կերպով սուր ու ասպարի պարը խաղցան...:

Շամամ, Մաքէ եւ Շուշան կ'երգէին. անոնց յտակ ու վճիռ ձայները սուրբու շկահիւնին հետ կ'արձագանգէին լեռներու կողերուն:

— Չմոռնանք մեր վիրաւոր Սասունին, ցաւալի է իր բացակայութիւնը. կ'առաջարկեմ խմել իր կենաց եւ ի պատիւ վիրաւոր հերոսին՝ կռիւի պար մը պարել, — ըսաւ Իշխանեանը եւ պարպեց դաւաթը:

Ու կռիւի պարը սկսաւ. մէջտեղ ելան Վարդան ու Աւրոն, Ախոն ու Չորոն, Մանուկն ու Պետոն, Գարրիկն ու Մտեփոն, Վիշապեանն ու Իշխանեանը, Աղատեանն ու Խոստուռնի: Շամամ, Մաքէն ու Շուշանը կ'երգէին. Գարրիկը, Մանոն ու Մտեփոն կը պատասխանէին: Լեռը կը թնդար. հովիտները կ'արձագանգէին, կարծես աշխարհը կռիւի եւ երաժշտութեան մէջ կը թաւալէր: Անոնք չմոռցան խմել Գոյամարտի Մայր Անիի կենաց եւ աշխոյժ կերպով սուր ու աս-

պարի պարը խաղցան ի պատիւ մեծ նահատակին:

— Է՛հ, — լսուեցաւ Վահագնեանի ձայնը. — Ժամանակն է շարժելու. ահա՛ հիմա արեւը կը ծաղի. զիշերը ամբողջ միասին անցուցինք: Որքան ալ մնանք, իրարմէ չենք կշտանար: Գործը մեզ կը կանչէ. մնա՛ք բարի:

Ու իրարու հետ ողջազուրուեցան եւ նստեցան իրենց նժուղները: Առջեւէն Վիկտորիան եւ Օրիորդ Արծրունին կը ձիավարէին: Արեւը ծագեցաւ. անոնք բարձր ձայնով պոռացին. «փա՛ռք ծաղոց արեւին...»: Ու բոլորը հետեւեցան իրենց եւ միասին պոռացին. «փա՛ռք ծաղոց արեւին...»: Ապա սկսան երգել սուրբերը իրենց ուսերուն:

Մամիկոնեան եւ Իշխանագուն հետեւեցան հիւրերուն մինչեւ Կարմիր քարեր: Ճամբու դնելու ատեն Մամիկոնեանի ոյժերը իրենց զիրքերուն մէջ, զինուորական բարեւի կանգնած, հիացումով մը կը նայէին անոնց ետեւէն:

Անցան օրեր եւ եկաւ ծանր ու ծաւալուն բախումներու ժամանակաշրջանը:

Լեռնաշխարհը ուժեղ կերպով պաշարուած է եւ պաշարման օղակը հետզհետէ կը սեղմուի: Գոյամարտի ոյժերը որքան ալ յանդուրդն եւ խիզախ ըլլան, այդ անասելի բախումներուն մէջ պիտի հալին: Չորս կողմէն խուժան, հեծեղազօրք եւ հետեւափազօրք կը հոսին դէպի լեռնաշխարհը՝ մարելու համար ըմբոստութեան այդ խարոյկը: Գոյամարտի ոյժերը քիչ են, չեն բաւեր կեցնելու իրարու ետեւէ թաւալող ջարդարար ու աւերիչ ոյժերը: Գոյամարտը երկար չի կրնար տեւել: Լեռնաշխարհը անտեսապէս կը սպառի. զինուորական միջոցները կը հալին... Գոյամարտի ոյժերը, ինչպէս ու ժողովուրդը, Անտօքի փէշերուն վրայ հաւաքուած են: Ու Անտօքը հրարուի վրայ է. չորս կողմէն կրակի տակ առնուած՝ պիտի պայթի...:

Ահա Տարկոշեան բարձունքներէն, Կապլորի եւ Կեփինի դառիթափերէն, Ծովասարի կողմէ, Քոփէն, Աւկերմէն, Ազրիէն զօրք եւ խուժան կը շարժին Անտօքի ուղղութեամբ: Տափըզէն, Գեղաչէնէն, Շուշնամերկէն զօրասիւններ կը յառաջանան Աթանայինէի ձորով դէպի Տալազար: Ահա՛ Վաղբի Մարդերէն, Ծիծառնու ձորէն զօրքեր եւ աշխիրներ շարժման անցան: Շէյխի ամառանոցներէն, Պաղ ջրերու

անտառային բարձունքներէն, Կորչիկի հովիտէն, Ալեանցից լեռնա-
մուտերէն կը քալեն դէպի Մերկեր, Գանիեպաճի, ՔափրեշերիՓ-
խան:

Հեծելազօրքի, հետեւազօրքի եւ աշիրեթական ոյժերու միա-
համուռ ճիւղն է որ կը կատարուի...: Լեռնաշխարհի ճնշումը ար-
ժանապատուութեան խնդիր է դարձուցեր կառավարութիւնը: Լեռ-
նաշխարհը պէտք է մեռնի ինչ զնով ալ ըլլայ, եւ ատոր համար չորս
կողմէն զօրքերն ու աշիրեթական ոյժերը կը քշէ դէպի Լեռնաշխար-
հը:

Գոյամարտի ոյժերը իրենց դիրքերէն՝ կատաղի նոյւածքով,
կը դիտեն մարդկային այդ գանդուածները, որ կը թաւային Լեռնաշ-
խարհի բարձունքներէն դէպի հսկայ Անտօքի փէշերը, ուր մահուան
դատապարտուած ժողովուրդ մը իր ճակատադրին կը սպասէ...:

Ահա՛ Մամիկոնեանը, իր ճերմակ նոսրը նստած, դիրքերը
աչքէ կ'անցնէ. հեռադիտակով կը նայի. ամէն կողմ հետեւազօրք
ու հեծելազօրք կը վիտան ու դիրքերէն բոլորը հեռաքրքիր կը նա-
յին: Աշխարհը շարժեր է ու կու գայ...:

— Մը կ'երթայ այս ջուրը, որ այսպէս բռներ է սար ու ձոր.
Ի՞նչ կը փնտռեն, — արհամարհական ծիծաղով մը ըսաւ Վարդան:

— Չե՞ս դիտեր, Վարդա՛ն, մեր գլուխը կը փնտռեն, որ տա-
նին հոյ խաղան, — պատասխանեց Պետոն:

— Տո՛ւ այս բոլորը մեղի՞ համար է, չե՞ն ամ չնար այս շանոր-
դէք. այսքան ոյժ թափեր են այս լեռներու մէջ, — ըսաւ Չոլոն. —
ինչո՞ւ, մենք քանի՞ հողի ենք. իւրաքանչիւրիս դէմ հազար հողի են
հաներ. հէ՛յ-հէ՛յ, կեցցէ՛ թրքական վախկոտութիւնը եւ հայկական
արիւթիւնը: Եկէ՛ք, եկէ՛ք, հող չէ, դուք ըրէք, ինչ որ կրնաք, մենք
ալ կ'ընենք, ինչ որ կրնանք...:

— Չոլո՛ւյ, մի՛ բարկանար, արդէն կու գան անոնց կանչելու,
արդէն եկած են, սար ու ձոր լեցուցեր են եւ դեռ կու գան...: Պար-
տաւոր չես բոլորը հիւրասիրել. հիւրասիրէ որքան որ կրնաս: Քեզի
ո՞վ ըսաւ որ այս բոլորը հացկերոյթի հրաւերես, — ըսաւ Ախոն
խնդալով:

— Ախո՛ւյ, ի՞նչ կը գրուցես. տղա՛յ, այս շուները կ'ըտացնելու
համար ոչ մենք կը բաւենք եւ ոչ ալ մեր ամբողջ ժողովուրդը, —
ըսաւ Չոլոն:

— Է՛հ, ի՞նչ շուարեր եք, — ըսաւ Պղտիկ Պողոսը, — այս բո-
լորը եւ ինքս կ'ուտեմ եւ չեմ կ'ըտանար...:

— Փչէ՛, Պողո՛ս, փչէ՛, տնաչէ՛ն, ե՞րբ սորվեցար այդպէս ա-

նաստուած փչել, — ըսաւ Չոլոն ու բոլորը խնդալով:

— Գարբի՛կ, Գարբի՛կ, ձայնդ անուշ է, թո՛ղ սուր, թող զըն-
կըլտայ այս հորիզոններուն վրայ. կուի պար մը խաղանք, ու յե-
տոյ սկսինք կուի, — անաջարկեց Պետոն:

Գարբիկ իր գեղեցիկ ձայնը ձգեց. սագմիկները խելայեզօրէն
կուի պարը կը խաղան, ու պարը կը փոթորիկի բոլոր դիրքերուն վը-
րայ. Գանիեպաճիի վիզը Մաքէն սուր ասպարի խաղը կը խաղայ:
Տալազարի գիծին վրայ Իշխանագունի ոյժերը նոյնպէս կուի պարը
կը պարեն. Իսկ Սոլամ ձգեր է իր բարձրաձայն քրքիջը՝ նայելով այդ
անհամար ջուրիին, որ մըջիւնի կարաւաններու նման կը վիտայ ու
կը հոսի դէպի դիրքերը: Իշխանագունը հեռադիտակով արշաւող
ոյժերու շարժումներուն կը հետեւի եւ կարգադրութիւններ կ'ընէ:

Կորչիկի գիծին վրայ, Արծրունին արհամարհական քմծիծա-
ղով մը կը նայի խաժամութիւն, որ կը խլրտի եւ կը քայլէ դէպի վեր.
Վիկտորիան եւ Օրիորդ Արծրունին, սուր ու ասպարի պարը կը խա-
ղան, Օղիտան հրացանն ու տասնոցը կ'իւզուտէ, եւ կը պատուիրէ որ
լաւ աշխատին: Հեքիաթային աշխարհներէն կարծես եկած, հոյա-
կապ հասակով Քոսիայ Փուրթոն եւ Աւիկերմի Ստեփոն կուի պար
կը պարեն: Նշանաւոր Մաթոն, լուռ նստած կը նայի ջուրիին, որ կը
հոսի: Ուրիշները անհամբեր կուի կ'ուզեն, ձեռքերնին կը շփեն եւ
կ'երգեն:

— Ի՞նչպէս ես, Մարտոյ, — կը հարցնէ Սարգիսը, թեւերը
շարժելով:

— Լաւ եմ, — կը պատասխանէ Մարտոն, — հիմա գալարա-
փողերը կը հնչեն եւ մենք կը սկսինք կուի պարը խաղալ այս խու-
ժանին հետ:

— Բայց ծանր պիտի ըլլայ այսօրուան պարը, — ըսաւ Ակէն:

— Մեր բազուկները երկար են, ո՛վ հանդիպեցաւ՝ անոր հետ
կը խաղանք, — ըսաւ Մարտոն:

Կեփիլի գիծին վրայ Իշխանեան համակ շարժում է դարձեր.
Անթառամ ու Աջոն կուի երգեր կ'երգեն ու դիրքերու շուրջ կը դառ-
նան. Կրպիկ ու Հեպիկ, Շառոն ու Մանուկ, Համբոն ու Ճանոն թե-
թեւ պար կը պարեն. դիրքերը կը դողան ու փոշիի ամպեր կը բարձ-
րանան իրենց տրոփիւնէն: Վազարշաղը դիրքին կոթնած, եկող թըշ-
նամիին կը նայի ու կ'երգէ «Նորէն եկել ենք...»:

Կապլորի գիծին վրայ՝ Սոսիստունին գասաւորումներ կ'ընէ:
Թշնամին մասնաւոր ուշադրութիւն դարձուցեր է այդ գիծին, որ հը-
րոսակային խումբերով շրջաններ է փճացուցեր եւ շատ ոյժ է նետեր

այդ ճակատին վրայ: Նշանաւոր Շամամը, որ ազգրէն վիրաւորուած էր, նորէն գործի վրայ է: Ինք ու Նազէն, Սարէն, Կուլէն շարունակ գիշերային յարձակումներու կ'երթան, հակառակ Սոսիսոունի յորդորներուն, թէ «Սնայէ դուն քեզի, վիրաւոր ես»: Շամամը ջըղայնացած կը պատասխանէ. «Թշնամին մեր մահուան վճիռն է տըւած եւ դեռ կ'ուզէք հանգիստ նստիմ. ինչո՞ւ. միթէ մենք անպատի՞ւ ենք, թէ վախկոտ: Անոնք կ'ուզեն մեզ արմատէն փճացնել. պէտք է իրենք արմատէն փճացունին... Թող չկարծեն թէ այդքան զիւրաւ զիս պիտի ուտեն. դեռ շատերը թաւալլոր պիտի երթան իմ հարուածէս, ինչպէս որ դացեր են: Մենք պիտի ընենք ինչ որ մեր ձեռքէն գայ. մեր ընելիքը ո՛չ օրէնքի սակ կը մտնէ, եւ ոչ ալ խիղճի, այլ՝ աստուածային զերպոյն վրէժխնդութեան մէջ...»

Աւսն ու Շուսն, խորոված կ'ուտեն ու կը խնդան, նայելով հեռուէն եկող զինուորական եւ աշխրեթական ոյժերուն: Գիրքերու մէջ կուսող ոյժերը կ'երգեն, կը պարեն, ու թշնամիին մարտահրաւէր կը կարգան: Թաղոն կ'երգէ:

Տարկոշեան գիծին վրայ Ազատեան եւ Գէորդ իրենց ոյժերը զանազան ամուր գիրքերու վրայ կը դեռնուեն եւ կը յորդորեն պաղարին մնալ, բայց կատաղութիւնը եւ կու գայ անոնց մէջ: Աստուրը իր շնորհալի ձայնն է ձգեր, եւ պարը կը փոթորկի: Հերանոյշ եւ Գեղանոյշ սուր ու ասպար կը խաղան եւ կատաղութիւնը աւելի կը սրեն. «Գոյամարտի Մօր վրէժը դեռ պէտք եղած ձեռով չլուծեցինք, վրէժի՛ համար ծնած ենք, վրէժի՛ համար կ'ապրինք ու կուր կը փրկուենք»:

— Ահա կուր կու գայ, — ըսաւ կարճահասակ Աւդէ. շատ մի աճապարէք: Եթէ մենք կուր կը փնտռենք, կուր ալ մեզ կը փնտռէ: Ով որքան կրնայ թող վրէժ լուծէ, մինչեւ իր սիրտը զովանայ:

— Իսկ վիրաւոր Սասունիի վրէժը կը մոտնաս, Աւդէ՛. մենք պարտաւոր ենք մեր հերոսի վրէժը լուծել, — ըսաւ Շէրոն բարկացած ձայնով մը:

— Ի՞նչ կ'ըսես Շերո՛յ, — ձայն տուաւ Սաշոն. ի՞նչպէս կը մոտնանք Սասունիին վրէժը, այսօր, աե՛ս, եթէ Աստուած կամենայ, քանի՞ հողի պիտի զոհենք Սասունիի առողջութեան համար:

— Տոյ Մքո՛յ չձափահարե՛ս, — բարկացաւ Թաղոն. — չե՞ս տեսներ վարդէն եւ Սանամը մահուան պարը կը պարեն...:

— Ի՞նչ ընեմ մահուան պարը. կուրի պարը թող պարեն, — ըսաւ Մքոն ու սկսաւ «Հոյնինայ, նինայ, նինայ...» երգել եւ պարել:

— Հող մի՛ ըներ, Մքո՛յ, — մէջ մտաւ Մակար. — այսօր այնքան պիտի պարես կուրի պարը, որ քրտինքը հեղեղի նման հոսի վրայէդ...:

— Հա՛յ, հա՛յ, — բղաւեց Թուսն, — եթէ միայն քրտինք ըլլայ, վախցիր որ արիւնն ալ կը հոսի...:

— Հապա ինչո՞ւ եմ նստեր հոս. նստեր եմ որ արիւն հոսեցրնեմ, ատիկա կրնայ ըլլալ ուրիշի արիւն, կրնայ ըլլալ եւ իմ արիւնս: Չէ՞ք տեսներ Սասունին հոսեցուց ուրիշի արիւն, բայց հոսեցաւ իրն ալ. մեր բոլոր զոհերը այդ ճամբով քայեցին. մենք ալ այդպէս պիտի երթանք. բայց իմ սիրտս իր արիւնը տալու համար պէտք է հարիւր սիրտ պարպէ. տակաւին տասներեք սիրտ եմ պարպեր. միւսները պէտք են...:

— Կրնայ քու հաշիւդ սխալ ըլլալ, — Մքո՛յ, — նկատել տըւաւ Սերոբ. — գնդակը կոյր է, հաշիւ չի գիտեր:

— Թքնե՛մ ես այդ գնդակի վրայ, Սերո՛բ. այս խաժամուժէն քանի՞ հողի կ'իյնայ ինծի բաժին. մինչեւ ասոնք չուտեմ ո՞ւր պիտի երթամ:

— Կե՛ր, Մքոյ, կե՛ր, ինչո՞ւ կը բարկանաս, ո՞վ է բռներ ձեռքդ, — ըսաւ Յարէթը խնդալով. — կ'ուզես բոլորը կեր, աւելի լաւ, գոնէ բերը կը վերցուի մեր ուտերէն...:

— Հը՞, Ազատեան, ի՞նչ պիտի ընենք այս նախիրը, որ իրար հրձակելով կու գայ, — հարցուց Թեմոն իր արիւնոտ աչքերը Ազատեանի վրայ սեւեւելով:

— Թեմո՛յ, գիրքերուն կը նայինք, տեսնենք իւրաքանչիւր գիրք ի՞նչքան հիւր կրնայ ընդունիլ, — պատասխանեց Ազատեան. — այդ նախիրը, զոր կը ցուցնես, քեզի հիւր կու գայ. ի՞նչպէս կ'ուզես այնպէս վարուէ հետերնին. ազատ ես...:

— Հի՛ւր ըսիք, Ազատեան, ո՞, այդ ի՞նչ լաւ, պարկեշտ եւ պատուաւոր հիւրեր են: Պիտի հիւրասիրեմ Անտոքի վայրի այժեամներու խորովածով եւ Փարկիի պատուական զինիով, — ու բարձրաձայն խնդաց:

— Շատ մի խնդար, Թեմո՛յ, վերջը կրնայ լաւ չըլլալ, — դիտել տուաւ Յարէթը, — կա՛մ պիտի կերցնենք... կա՛մ պիտի կերցրնեն... տեսնենք թէ ո՞վ որո՞ւ պիտի կերցնէ...:

— Հանդարտ նստեցէք ձեր գիրքերուն մէջ, եւ սպասեցէք ազգանշանի, — հրահանգեց Ազատեան ու անցաւ...:

Երզն ու պարբ վերջացան . . . :

Բոլորը մտած են իրենց զիրքերուն մէջ անհամբեր վազրերունման, անխարթ աչքերով: Հրացաններն ու տասնոցները պատրաստ են. սուրերը մերկ առջեւնին դրուած, ահանջները սրած, ահուաները իրարու վրայ սեղմած, կուրծքերնին ուժեղ կ'ելեւէջէ, ազդանշանի կը սպասեն: Ոչ ոք իրաւունք ունի զէնք աշխատեցնելու, մինչեւ որ ազդանշանը արուի . . . :

Ու թշնամին կը յառաջանայ. յանկարծ վարարափողերը հնչեցին, թնդանօթները սրտապցին, գնդացիները սկսան իրենց երգը, հագար-հագար հրացաններ համազարկ բացին. հեծելազօրքը եւ հետեւազօրքը ազմուկով, գոռում-գոշումով յարձակման անցան ու կը վազեն . . . Աշիրեթական սյօթերը, խուժանը մերկ սուրերը օդին մէջ շողացնելով, անտակի սոնոցով զէպի զիրքերը կը հոսին ու կը կրակեն: Չորս կողմէն Անտօքը կը թնդայ, ծուխ ու մուխ կ'արձակէ . . . «յառաջ» կը գոռան հրամանատարները, «յառաջ» կ'ազմուկեն սպաները, «յառաջ» կը սպասն բոլորը ու կը վազեն, կը վազեն ու կը կրակեն զէպի զիրքերը:

— Այսօր փառքի եւ մահուան օրն է, պէ՛տք է այս աւազակարոյնը մեռնի, պէ՛տք է մեռնի աւազակարոյնը, պէ՛տք է մեռնի այս աւազակարոյնը, կը կրկնեն բոլորը: Նահանջ չկայ . . . Ընկրկում չըկայ . . . յառաջ կ'ազմուկեն ու կը վազեն . . . :

Ու մօտեցան զիրքերուն . . . :

Գոյամարտի սյօթերը կատաղութենէ կը հեւան եւ լարուած ուշազրութեամբ ազդանշանի կը սպասեն . . . :

Ու Մամիկոնեան տուաւ ազդանշանը. «Համազարկ» պոռացին զիրքերու վարիչները ու զիրքերը սրտապցին:

Նոյն բանը Իշխանապունի, Արծրունիի, Իշխանեանի, Սոսիսունիի եւ Ազատեանի զիծերուն վրայ. բոլոր զիրքերը համազարկի են անցեր. ուշազրութեան լարուածութիւնը կը սրի եւ կատաղի տրամազրութիւնը երթալով կ'աճի. յարձակման ալիքները իրարու ետեւէ կը զարնուին զիրքերուն, կ'ընկրկին ու նորէն թափ կ'առնեն, կը խուժեն . . . անգամ մը եւս ընկրկելու ու նորէն խուժելու . . . :

Անտօք իր փէշերով կը գողայ. փոթորիկի ծանր օդակ մը իր շուրջ կը զարարուի. երկուստեք համազարկեր, մոլորութներ, պոռչրութներ, հայհոյուչներ ու մարտահրաւիրներ, ազմուկի, սրտ-

տուժի, փոշիի ու կրակի մթնոլորտով մը կը պարուրեն ամբողջ լեռը ու ժողովուրդը ծունկի եկած կ'ազօթէ: Ծովինարը Արծրի ժայռին վրայ ելած, չորս կողմը կը դիտէ:

— Ազօթքի ժամանակը չէ, — հրաման արձակեց բարձրէն. — նայեցէ՛ք, ինչ որ պէտք է զիրքերուն, անմիջապէս հասցուցէք . . . :

Կեդրոնը խորհրդակցութեան մէջ է. կեդրոնի սյօթերը զիծերու վրայ պէտք է բաժնել: Ու որոշուեցաւ: Ասպեաններ իր սյօթերով Իշխանապունին օգնութեան դրկուեցաւ . . . Արամեանը իր սյօթերով՝ Սոսիսունիին, Վրէժեանը՝ Իշխանեանին, Թորգոմեանը՝ Արծրունիին, Աստեղեանը՝ Ազատեանին, Ֆարհատեան եւ Պետոյեան՝ իրենց սյօթերով՝ Մամիկոնեանին:

Կայծակեանը իր սյօթերով մնաց Վահագնեանի տրամազրութեան տակ. իսկ Մուրոյեանի սյօթերը յանձնուեցան Վիշապեանին՝ կեդրոնի պաշտպանութեան համար:

Ահա Մամիկոնեանի զիրքերուն վրայ ծանր ճնշում կայ. Գոյամարտի սյօթերը գերբնական ճիգ ի գործ կը դնեն յարձակման ալիքները փշրելու համար. վիրաւոր ասիւծի մօնչիւնն է ինկեր Ախոյին, Վարդանին, Չոլոյին, Առքոյին, Մանուկին, Պետոյին, Արթինին եւ իրենց կորիւններուն մէջ: Ալեանցից սյօթերը իրենք զիրենք կը բղկան կատաղութենէն: Ծամամն ու Մաքէն կռիւի երգեր կ'երգեն եւ զիրքէ զիրք կը ցատկուտեն: Գիրքերու շուրջ եւ վրայ բախումը հեազհեաէ աւելի ուժեղ ու կատաղի կը գտնայ. համազարկերու սրտէն ահանջներ կը խլանան. փոշին կը զժուարացնէ յատակատեսութիւնը:

— Է՛յ հէ՛յ, ս'ւր կ'երթաք, ս'ւր. շանորդիք կը կարծեն թէ ճաշատեղան ենք պատրաստեր իրենց, — կը պոռայ Արթինը:

— Չզէ՛, Արթին, ճզէ՛ թոյ գան, — կը պատասխանէ Գուրգէնը, — ահա՛ այսպէս կը հիւրասիրենք այդ բարեկամները:

— Ապրի՛ս, Գուրգէն, լաւ կը հիւրասիրես, կարծես զժողո՛ճ մնալու պատճառ մը պիտի չունենան այդ ազնիւ հիւրերը:

— Ի՛նչ ընեմ, Արթէ՛, պարտականութիւն է կը կատարենք, որ պէպի ամօթով չմնանք Մամիկոնեանի առջեւ . . . :

— Չե՛ղ տեսնեմ, կարիճնե՛ր, մաղեցէ՛ք տասնոցները, — կը խրախուսէ Վարդանը: Պազ պազ մի շարժիք, քաղեցէ՛ք այս մսէ անտառը, որ սճիր կ'որոճայ . . . Տո՛յ, զիրքը կը մանեն, Սողո՛յ, կը

քնանա՞ւ, — պոռայ Մուշոն. — Ի՞նչ կ'ընես, չե՞ս տեսներ:

— Չե՛մ քնանար Մուշո՛յ, Սիմոն քնացեր է... տեսա՞ր ինչ-պէս կոնակին գնաց, դիրք կ'ուզէր մանել մեր աւանակը. այնպէս մը չըջեցաւ կողէն առնուած հարուածէն, շունը եզան նման կը բառաջէ: Տո՛յ, ո՞ւր կու գան այդ շուները. Ծողի՛կ, շո՛ւա լեցուր տասնոցը, քանի հրացանը չէ պարպուած:

— Տղա՛յ, կը ծեծենք ու կը ծեծենք, բայց այդ սրիկաները խօսք չեն հասկնար. արիւննին աչքերնին առեր կու գան ու կը սատակին, — գոռայ Մուշոն, հայհոյելով այդ աւանակներուն:

— Ո՞ւր կ'երթայ այս հեծելազօրքը, — պոռայ Ալեանցից Մակարը, եւ Մակարն ու Մկրտն իրենց ոյժերով սկսան ծեծել հեծելազօրքը, որ Գանիեպաճի ետեւ կ'ուզէր անցնիլ:

— Տուէ՛ք համազարկի, — պոռայ Մաքէն, — եւ սուր ու սպարի յարձակումի գնաց: Գոյամարտի սպամիկներու համազարկին տակ՝ սպիտակ ձիաւորը քիթ ու բերնին գնաց. սեւ ձիաւորը կոնակին ինկաւ, կարմիր ձիաւորը կը քաշքշուի ձիու սասանդակէն: Համազարկ մը եւս եւ իրար խառնուեցան. սմանք ինկան, միւսները փախան...

— Թո՛ւ անպատիւներ, — պոռայ Մակարը. — ձեր մայրն ալ կը կարծէ թէ ազամարդ է ձեր:

— Ասոնք կապուած բաղուկներն ու անգէն ժողովուրդը գիտեն ջարդել: Երբ մեր կուսող ոյժերը սպառին, եկուր եւ տես, թէ Ի՞նչ կատաղութեամբ պիտի բզկտեն մեր անմեղ ու անղէն ժողովուրդը: Ես ասոնց մէկը... — բնաւ Մեծտոն, տուէ՛ք համազարկի, մեղք է որ ասոնք շնչեն Աստուծոյ օդը եւ խմեն Աստուծոյ ջուրը...:

— Անգամ մը սա հեռեւակազօրքին նայեցէք, յիմարը կը կարծէ որ դիրքերը պիտի մանկ, եւ որպէս թէ աչք չի թարթեր ու կու գայ: Ծանորդիք անպատճառ գալարափողերէն կը խարուին կամ հրամանատարներու խրախուսանքէն կը քաջալերուին: Չե՛ղ տեսնեմ, կարիճնե՛ր, գէնքերնիդ դարձուցէք թաւալող ալիքին վրայ. հեծելազօրքը փախաւ. հեռեւակազօրք եւս պիտի փախչի: Հա՛, մատաղ ձեր հողուն, ա՛յդպէս, — կը պոռայ Գարոն, վառօղի հոտէն զինովցած:

— Տղայ Սմբատ, ծանր կախ կայ Պետոյի դիրքերուն վրայ. հեծելազօրքն ու հեռեւակազօրքը ուժեղ յարձակումի են անցեր. կ'ուզեն կտրել Մերկերու գիծը եւ իջնել Պարպարի հովիտ: Մերձնք բաւական կորուստ ունին. Պետոն վիրաւորուած է:

— Ի՞նչ կ'ընես, Սամո՛յ, այդ շանորդիք գետ խելքի չեկա՞ն. անցեալ անգամ ալ ինկան Պարպարի հովիտ, բայց լաւ մը ջարդուե-

ցան. անպատճառ նոյն խաղը պիտի կրկնուի: Այդ Պարպարի հովիտը քաշողական ոյժ ունի. ասեն մը՝ լուսահողի Տօնոյ Մակարը եւ Արծիւեանը ջարդեցին թուրք ոյժերը այնտեղ: Հիմա ալ Մամիկոնեանի ոյժերը կը խաղան նոյն խաղերը:

— Ա՛յ եթէ այդպէս է, լաւ է. մենք մեր դիրքերուն վրայ յարձակման թափը կեցուցինք. կրնանք այդ կողմին օգնութեան երթալ:

— Ո՛ւ, թշնամին կրնայ նորէն մեր վրայ յարձակում չլթայաղերծել: Եթէ մեզի պէտք ունենան, Մամիկոնեան ինքը կը հրահանգէ: Վարդանի դիրքերուն վրայ նոյնպէս կուրի փոթորիկը կ'սնայ. Գարրի՛կ, Գարրի՛կ Ի՞նչ կ'ընես. թշնամին դիրքը կը մանկ, — պոռայ Պետրոս վիրաւոր առիւծի մը նման:

— Ա՛յ հա՛յ, — ձայն տուաւ Գարրիկ. — Տօնէն ու Ազամ քրնացեր են: Աղջի Սարէ՛, տասնոցները լեցո՛ւր. Պետրո՛ս, ոյժ տուր տասնոցին. ա՛յ այդպէս... Գնա քու մէկը. շանորդին կը կարծէ թէ հոս իրենց ախոռն է: Սա իշուն նայէ, քիթ ու բերնին գնաց. սպրի՛ս, Պետրո՛ս, այդ լիտին բաւական յանդուգն կ'երեւէր: Ազամ ու Տօնէն քնացեր են: Ծանորդի՛ք, ո՞ւր կը վազէք. այդպէս... քնացէ՛ք տեսնեմ: Պետրո՛ս, այսօր մերոնք լաւ կ'աշխատին: Վարդան, Պօղոս, Հայրոյ ու Արթին Մարգէի վրէժը առին. բայց մենք ալ Ազամի եւ Տօնէի վրէժը մասամբ առինք. մնացածը, Աստուած մե՛ծ է, — ու սկսաւ երգել «Թող մեր հրացանի...»:

Նո՛յն կատաղի յարձակումը Իշխանաղունի դիրքերուն վրայ եւ նո՛յն կատաղի դիմադրութիւնը դիրքերէն. Ստեփոյ, Իսրոյ, Ասրէն, Աւէ, Սարգիս, Վարդան, Գալուստ մրցումի մէջ են: Խղամն ու Ծուշանը կուրի երգեր կ'երգեն եւ սպամիկները կը խրախուսեն...: Ահա՛ հեծելազօրքի, հեռեւակազօրքի ու խուժանի ուժեղ գրոհը՝ Ստեփոյի դիրքերուն վրայ: Ղազարն ու Ասատըրը կրակ են կտրեր: Ի՛հ, — ձայնեց Մուրոյ, — Աստու՛ր, դիրքերը կը մանեն:

— Կը մանե՞ն. Ի՞նչպէս թէ կը մանեն, — պոռացին Կելպոյ տան Ասատըրն ու Մուրոյ տան Ղազարը ծունկի եկած, եւ ոյժ տուին մաղկերներուն: — Դէ՛հ, եկէք տեսնենք, ահա՛ այդպէս կը կտորեն ձեր ծունկերը, — եւ մի քանիներու անկումէն խանդալառուած, Ասատըր կեցաւ դիրքին մէջ, թշնամիին մարտահրաւէր կարգալու, արհամարհելով անոր գնդակի տեղատարափը եւ ինկաւ...:

— Հը՞ Ասատըր, քնացա՞ր, — ձայնեց Ղազարը, — ժամանակը չէ՛, տղա՛յ, ինչո՞ւ այդպէս անսպարեցիր:

— Ի՞նչ, քնացա՞ւ... — բաւ Խղամը, որ ուրիշ դիրքէ մը

կու գար. — քնացա՞ւ, ա՛հ, երեւի իմ ամուսինը յոգնած է. ես հո՛ւս եմ, — եւ մոնջեկով ծունկ տուաւ դետին, ու ահա՛ մէկ-երկու, — Աստու՛ւր, հանդիստ քնացիր, հոգ մի՛ ընէր. քու փոխարէն ես կը քընացնեմ այդ շուները:

— Կեցցէ՛ Սղամբ, — պոռացին Ղազարն ու Մուրոն եւ աւելի թափ տուին կռիւին: Գեղաշէնի Սարգիսն ու Շուշնամերկի Աւէն մըրբիկի նման ցրուեցին իրենց գիրքերուն վրայ թաւալող զօրքի ալիքները, բայց իրենք ալ ունեցան քանի մը զոհեր:

Կորշիկի գիծիմ վրայ Արծրունին հրաշք կը դործէ. Վիկտորիան, Օրիորդ Արծրունին եւ Օղիտան անդուստ կեն. թշնամին քանի կը փորձէ մօտենալ գիրքերուն՝ կորուսաներով ետ կը շարտուի՝ եւ գիրքերու մէջ յաղթութիւն կը տօնեն...: Գիրքերը կրակ կը ժայթքեն. թշնամին կ'ընկրկի դէպի Կեալիեասանի ձորը, ու նորէն մզում կ'առնէ մաղցելու դէպի վեր: Հսկաներու սերունդէն Աւեկերմի Սաեփոյ, Քոսիայ Փուրթոյ, Տէր Գարեգին, Ազրիի նշանաւոր Մաթոն ու Մարտոն իրենց կտրիճներով կը վիժեցնեն թշնամիի բոլոր փորձերը, մարտահրաւէր կը կարգան ու կռիւի պարը կը պարեն:

— Եկէ՛ք, — կը կանչէ երիտասարդ Սենոն. — հո՛ւս ենք. ձեզի կը սպասենք. եկէ՛ք եւ մեր մահաւճիւրը գործադրեցէ՛ք: Ահա՛ այս լեռնամուտերու վրայ եւ գիրքերու առջեւ ինկածները ձեզմէ առաջ եկողներն են, որ մեր մահաւճիւրը գործադրել կ'ուզէին, բայց իրենց մահը գտան... նոյնը պիտի ըլլայ եւ ձեզի համար...:

Կերիմի գծիմ վրայ Իշխանեան եւ իր կտրիճները ծանր կռիւի մէջ են. Կրպիկն ու Հեպիկը, Մանուկն ու Համբոն, Ճանոն ու Շերոն մեծ ճիգեր կը թափեն հարաւային գառիթափերէն խուժող հորդաները կեցնելու: Աջոն, Անթառամ, տիկին Ռպուշ յանդուզն ձեռնարկներու կ'երթան՝ անակնկալ պատուհասներ ստեղծելու թշնամիին: Ընկուզնակի, Սաղաունի, Գեղերվանքի, Սիվիթի, Փարկիի քաջերը ողի ի բոնն կ'աշխատին եւ անոնց ուժեղ գիմադրութեան տակ կը բշուին լեռնամուտերէն դէպի ձորեր... Ու Սաղանայ Թագոյի հոյսահապ ձայնը կ'որոտայ. «Տալոթիկի դաւակ եմ քաջ» կ'երգէ: Փարկիի Գէորդը կը պոռայ. — Տղա՛ք, գայլերու նման պէտք է բղկուել այս ուշխարի հօտերը...:

— Տո՛յ, սա հեծելազօրքին նայեցէք, Հաղոյի, Հաղբոյի, Սլիվանի, Պշերիկի, Հայնէի, Փարզինի, Լճէի, Տիգրանակերտի խածան շուներն են: Մեծփոր Փախրին, Հզնին, Հասան, Սեվտիմ, Մեհմէտ, Քատրին, Շելիխին, Պետրին, որոնք այդ շրջանները անասելի վայրագութեամբ մը կոտորեցին, կողոպտեցին եւ հրդեհեցին: Տուէ՛ք

համազարկի, թող թաւալոյր երթան, եւ արիւն փսխեն այդ շուները, — ըսաւ Սանդրոն ինքնիրմէ կլած:

— Սանդրո՛յ, Սանդրո՛յ, շատ աղմուկ մի՛ հաներ, — պոռաց Գեղերվանքի Մամսոնը, — աս'յ կը խրաչեցնես այդ շուները, ձեզ՛, թող մօտենան, որպէսզի գնդակի տակ հալեցնենք ասոնց անիմաստ գոյութիւնը: Թո՛ւ առնց պիղծ դոյութեան. մայրութիւնը յանցաւոր է որ այսպիսի պիղծ ծնունդներ նետեր է արելին տակ...:

Կապլորի գիծիմ վրայ Սոսիստունի եւ Մուշեղեան ծանր եւ անհաւասար կռիւի մտած են իրենց դէմ խուժող թշնամի ոյժերուն դէմ, որոնք կատաղութեամբ կը դարնուին գիրքերուն եւ գիրքերը կը ցնցուին: Աւոն եւ Ջուռոն կը խնդան. գիտեն այդքան ոյժ որ թափուեր է իրենց վրայ՝ իրենց գործած աւերներու եւ ջարդերու վրէժը լուծելու համար է:

— Սրիկանե՛ր, կ'ուզէիք որ ձայն հհանէինք եւ ուշխարի նման վիզերնիս գնէինք ձեր դանակին տակ, որ ձեր հաշուոյն գար...: Այսպէս կ'ընենք. այրեցինք քրտական գիւղերը, կոտորեցինք բնակչութիւնը, հեծելազօրքի խուժրերը, ինչպէս եւ փոխադրիչ խուժրերը փճացուցինք... Ձեզի ալ պիտի շինայինք, — մոմոաց Ջուռոն ակոսաներուն տակէն եւ պոռաց. — Տղանե՛ր, ոյժ տուէք համազարկի. թող այս շուները ոռնան:

— Է՛հ, Ջուռոն կապեր է, — բսին աջէն ու ձախէն: — Իրաւունք ունի, — մէջ մտաւ Աւէն. — թշնամին դեռ յանդրդնութիւն ունի քայլու մեր վրայ: Ինչո՞ւ ենք նստեր հոս. որպէսզի այս պղծութիւնը մահուան անդունդը գլորցնենք, քանի որ հակառակ այդքան կերած ձեծին տակաւին խելքը գլուխը չէ եկած...:

— Ա՛յ հա՛յ, Հասան պէկին նայեցէք, ձին այնպէս մը կը քէ, կարծես գիրքերը հիմա իր ձիուն ոտքերուն տակ պիտի փոշխանան: Շանորդի՛, — ըսաւ Ջեքոն եւ հրացանը ուղղեց. դնա՛ քու մէքը... լիտի՛, արիւն խմեցիր Տիգրիսեան դետահովիտ, հոս ալ պիտի փրսխես...:

— Հասրա Սատրղ պէյը տեսէք. ուրտեղ քիւրտի անպէտ լամուկ մը կայ, աղա ու պէկ է դարձեր: Սրիկանե՛ր, տղամարդու դընդակին առջեւ աղա ու պէկ եղէք, — մոլոտաց Մուրատը ակոսաներուն տակէն, ու պարպեց հրացանը:

Սատրգ շունի նման սոնաց ու թաւարդսր գնաց դէպի ձորը:

— Կեցցե՛ս, Մուրա՛տ, — պոռայ Գեւոն, քաջախերուած Սատրգի անկումէն, — միւսնե՛րը, միւսնե՛րը թող գան՝ իրենց աղամարդութիւնը ցուցնելու...:

— Հա՛, հա՛, հա՛, — բարձրաձայն խնդաց Մելոն. — Այդ շուները հազիւ հաւու միս ուտեն, աղջիկ խաղցնեն, ու անգէն ժողովուրդը կոտորեն. ասոնք ո՛ւր, գնդակի առջև քալել ուր...:

— Ո՛վ կ'ուզէ թող գայ, մի՛ խնայէք, — ըսաւ Սմբատը. — այս շուները վաղը մէկ մէկ աղա ու պէկ պիտի դառնան. քաղեցէ՛ք այս շուները. աղաներն ու պէկերը իրենք իրենց կը սատկին...:

— Հող մի՛ ըներ, Սմբա՛տ, — պատասխանեց Մելոն. անոնք արդէն իրենք իրենց պիտի անօթի սատկին, որովհետեւ Հայերու չընորճիւ կ'ապրէին. այսօր Հայր չկայ. իրենք աւելի շուտ պիտի մեռնին. պիտի մեռնին եւ թուրքերը: Այդ երկու ապերախա եւ անդամալուծ ցեղերը կ'ապրեցնէինք մենք: Այժմ մեր վրայ եկող այս ջոշիւրը քաղենք, յետոյ կը մտածենք...:

— Անշո՛ւշտ, անշո՛ւշտ, կա՛մ կը քաղենք կա՛մ կը քաղուինք, — մէջ մտաւ թորէն. — հիմա, հիմա կուան գործի մասին մտածենք. վերջը՝ վերջէ՛ն եկող գործի մասին կը մտածենք: Ձե՛զ տեսնեմ, կրտրիճնե՛ր, փառաւոր ճեճ մը քաշենք մեր առջևի խուժանին: Հա՛, այդպէս. ի՞նչ. թշնամին կ'ընկրկի՞. ո՛ւր կը նահանջէ: Է՛յ աղո՛ւշ, նորէն պիտի դառնաս: Կեցիր հաշուակցինք. բայց տեսէ՛ք, կը փախչի. մի՛ փախչիր, մեր գնդակը աւելի արագ կը վազէ...:

— Ի՞նչ կ'ընէ Շամամը, — դարմացած պոռայ Միքայէլը, աչքերը լույն բացած. — այդ ի՞նչ անխոհեմութիւն:

— Շամամը կ'ուզէ նահանջող ոյժին առջևը կարել, — ըսաւ Սհան, — բայց վտանգաւոր խաղ մը կը խաղայ...:

— Անիկա արդէն միշտ վտանգաւոր խաղերու կ'երթայ, — աւելցուց ծանրադուխ Ղուկէն. — անպատճառ փորձանք մը պիտի բերէ գլխուն:

— Փորձանքը բոյորիս գլխուն է, Ղուկէ՛, — պատասխանեց թուժոն: — Ձգայ այսօր, կու գայ վաղը. կարճես մենք փորձանքէն պիտի ազատինք. մեր փորձանքը որոշուած է, եւ մենք ատոր փոխարէն մեր կողմէ նոյնպէս փորձանք կը պատրաստենք մեզի փորձանք բերողներուն: Ասոնք, որ կու գան, արդէն մեր փորձանքն են. մենք այդ փորձանքը կ'ուզենք մեռցնել. ո՛րժ մեր բազուկներուն, լաւ աշխատեցէք. թշնամին արդէն կ'ընկրկի: Որքան մեռցնենք, այնքան լաւ:

— Ա՛հ, ի՞նչ պատահեցաւ. յարձակման հրաման կու տայ Խոստունին, — հարցուց Ջեքոն:

— Յարձակո՛ւմ, յարձակո՛ւմ, — պոռայ Ջուռոն. — Շամամը պաշարուած է գայլերու ձորին մէջ:

— Ի՞նչ, Շամամը պաշարուած է, — շուտօր լացականչեց թորէն, — եւ տակաւին կը սպասենք...:

— Յարձակո՛ւմ, յարձակո՛ւմ, — աղմկեցին բոլորը եւ համադարկի հետ յարձակումի անցան: Հետեւակազօրքն ու հեծելազօրքը խուճապահար կը նահանջեն, բայց Գայլերու ձորին մէջ ուժեղ կռիւ է. Խոստունին, Մուշեղեանը, Աւոն, Ջուռոն ու իրենց կարիճները վազրի ստուժներով հասան եւ բուռն համադարկի առին ձորի մէջ գործող թշնամին:

Թշնամին նահանջեց կորուստներ տալով, բայց Շամամ եւ իր եօթ հոգինոց խումբը արդէն ինկած էին, իրենց շուրջ փռելով բազմաթիւ թշնամի դիակներ:

Գայլերու ձորին մէջ թաղեցին Լեռնաշխարհի Գայլը եւ իր եօթ ընկերուհիները, արցունքի եւ հեծկլառութիւնով մէջ, ու Խոստունին հազիւ կրցաւ մէկ-երկու բառ խօսել անոնց հոգակոյտին վրայ, պատուոյ խօսք տալով անոնց՝ իրենց նման քալել արիւնոտ փոթորիկներու մէջէն գէպի նպատակը, առանց ընկրկելու...:

Ափսո՛ս մինչեւ հոս վիճակուած էր իրենց քալել...:

Բախտաւո՛ր են. միւս թշուառներու ճամբան աւելի տաժանելի է...:

Տարկոշեան գծին վրայ վայրագ կռիւ է. Ազատեանի եւ Գէորդի ոյժերը արիւն-քրտինք մտած դժուարաւ կրնան պահել դիրքերը, որ ուժեղ գրոհներու առջև կը սարսին: Թաթարն ու Փարէն վիրաւոր առիւծներու նման կը մոնչեն, Գէորդ խտացած շանթի մը կը նմանի, Հերանոյշն ու Գեղանոյշը այնքան ուժեղ կերպով լարուած են որ շունչ անգամ չեն կրնար առնել:

— Հը՞, Պաշո՛յ, — հարցուց Սասոն, — ի՞նչ կ'ըսես. լաւ կը պարե՞նք:

— Ա՛յ, հա՛յ. ատ ալ խօ՞սք է, անշուշտ լաւ կը պարենք, — պատասխանեց Պաշոն: — Տե՛ս այս դիակները, որ ինկած են դիրքերու առջև...:

— Իսկ գուն ի՞նչքան զոհեցիր Սասունիի առողջութեան հա-

մար, — հարց տուաւ Շերան :

— Մի՛ հարցներ, Շերո՛յ, դեռ քիչ է . . . :

— Հոգ մի բներ, — ըսաւ Մեծքիթ Մանէն, — պակասը մենք կը լրացնենք. եթէ չկրցանք, արդէն Գէորգը լրացուցեր է :

— Այդ գիտեմ, Գէորգը իր հաշիւը ունի, մենք ալ մերը . . . :

— Ի՛նչ հաշիւի խնդիր կայ, Սաշո՛յ, այստեղ մենք հաշուով պիտի չքալենք, այլ պիտի կոտորենք սրբան կրնանք. այս նախիրը, որ մտրակի տակ կը քշուի դէպի դիրքերը ի՛նչ բանի համար են, եթէ ոչ կոտորուելու, — ըսաւ Մքոն :

— Տղա՛ք, Մքոն երեւի դեռ չէ կշտացեր, — խնդալով վրայ բերաւ Յարէթը :

— Մքոն այդքան շուտ կշտացողներէն չէ, Յարէ՛թ, — ձայն տուաւ Թեմոն, — մինչեւ որ գնդակ մը չուտէ, չի կշտանար :

— Տղա՛յ, ձեռքերնիդ շարժեցէք, հիմա դիրքերը կը մտնեն, — պոռայ Թագոն : — չէ՞ք լսեր. գոռում-գոչում ինկեր է. Թաթարն ու Ֆարէն անպատճառ մեզի պէս նեղն են ինկած :

— Թաթարն ու Ֆարէն իրենց գործը գիտեն. մենք մեր գործին նայինք : — Մքո՛յ, կե՛ր, Մքո՛յ, կե՛ր, — ըսաւ Յարէթ ոյժ տալով մազէրին :

— Ահա՛ կ'ուտեմ, ահա՛ կ'ուտեմ, տոյ Յարէ՛թ, չհաշուե՞ս . . .

— Տոյ անպիտան, ժամանակ ունի՞մ քու գնդակին նայելու. գլորցո՛ւր սրբան որ կրնաս. դարար մնայ ձեռքդ . . . :

Ու երկու կողմի համադարկի սրտաները, որոնց կը միանան թնդանօթներու գոռոցը, գնդացիրներու կռիւնք, ականջ կը խլացրնեն : Հայհուհներ, հոնդիւններ, կատգածներու մարտահրաւիրներ սարսափ կ'ազդեն եւ փոշիի ամպերու մէջ մարդիկ խելագարուած իրար կը խեղդեն :

— Ֆարէ՛, Ֆարէ՛, ի՛նչ կ'ընես, — պոռայ Թաթարը, — դիրքերը կը լեցուին տեսէ՛ք, տեսէ՛ք, շանորդիք սուիններով կու դան :

— Հո՛ս եմ, հո՛ս, — ձայն տուաւ Ֆարէն. — ամուր կեցէք եւ մազէրները մազեցէ՛ք : Տղամարդու օր է այսօր. հա՛ այդպէս, կըտրի՞՞ աշխատեցէք. դիրքերը կը լեցուին, այսպէս իրենց դիակները կը լեցուին :

— Այս հեծելազօրքին նայէ, Թեմոյ, երեւի նոր քաջութիւն է հազեր, իրր թէ մեր ճանչցած քիւրախ լամուկները չըլլան, — ըսաւ Մքոն խնդալով :

— Հէ՛յ հէ՛յ, — բացականչեց Թեմոն, — հա՛ հա՛ հա՛ այն պոզ ճիւղորը Շաքիր ազան է :

— Իրա՞ւ կ'ընես, — հարցուց Մքոն, — տոյ լա՛ւ նայէ, Ալի ազան ալ մէջերնին չէ՞ :

— Ինչպէ՛ս չէ. Շաքիր ազայի կողքին, կարճիւր ձիււորն ալ Ալի ազան է, — վստահեցուց Թեմոն :

— Օ՛Ք լաւ սրս գտանք, Թեմոյ, նայէ՛ Ալի ազային . . . հը՞, ի՛նչպէս է :

— Մէջքդ դարար, Մքո՛յ, կոնակին ինկաւ զարնուած շունի մը պէս. դուն ալ նայէ Շաքիրին . . . դնա՛, քու մէրը. Ֆարդինի շրջանները քար ու քանդ ըրիք, հոս ալ հաշիւ կու տաք :

— Փա՛ռք Աստուծոյ, հետեւակազօրքը ընկրկուած մէջ է. իսկ հեծելազօրքը կ'ուզէ մեր թիկունքը անցնիլ : Տղանե՛ր, առէք համազարկի տակ այս ձիււոր շուները, — պոռայ Թաթարը :

Ու հեծելազօրքը չզիմանալով դիրքերէն ժայթքող կրակին, կորուստներ տուաւ ու փախաւ, ինչպէս հետեւակազօրքն ու խուժանը :

— Օ՛Ք շունչ մը առնենք, սիկար մը ծխենք, քիչ մը հանգրտանանք, սրիկանե՛ր, բուսական յոգնեցուցին մեզ, մինչեւ որ կարողացանք քիչ մը հեռու քշել, — մոմոաց Յարէթը :

— Ի՛նչ այդպէս ծոյլ-ծոյլ փոռուեր ես գետին. պատրաստուէ՛, Յարէ՛թ. հիմա նոր փոթորիկ մը պիտի փրթի. այս անգամ ի՛նչպէս պիտի քշենք, — ըսաւ Մքոն, հացի պատասուր կուլ տալով : — Թշնամին թարմ ոյժեր է ստացեր. յարձակման պիտի անցնի. Ազատեանը կը յանձնարարէ ըլլալ զոյճ, խնայել գնդակին. դիմանալ տղամարդու նման, շուտով՝ կեզրոնի սրտումով՝ Աստեղեանի ոյժերը կը հասնին օգնութեան :

Այս լուրը տարածուեցաւ դիրքերու մէջ եւ մեծ խանդավառութիւն ստեղծեց. կիները պէտք եղած ուտելիքները բերած էին դիրքերը. սկսան ուտել, երգել եւ պարել : Այդ խանդավառութիւնը կարճ տեւեց, որովհետեւ փափսուքի ու շուկի ձեւով Սասունի մահը սկըսաւ տարածուիլ դիրքէ դիրք :

Բոյր ճակատներու վրայ ալ, թշնամին նորէն ձախողեցաւ իր յարձակողականին մէջ ու հիմա գինուորական խորհուրդներ է դուժարեք կացութիւնը քննելու եւ պարտութեան պատճառները որոնելու . . . :

Ֆեւզի փաշան, ձեւտէթ եւ Նիազի պէյերը, դէպի Շէյխի ա-

մտանոցներ երկարող լեռնամուտին վրայ, ճերմակ վրանի մը տակ-
նստած, — հոն ուր Շիւքրի փաշան ինկաւ, — կը խորհրդակցին... :

Ֆեւզի.— Կը դարձանամ. ի՞նչքան ոյժ կայ մեր առջեւ, որ
այդքան մեծ գիմազբութիւն մը ցոյց կը տրուի:

Նիազի.— Ձե՛մ կարծեր թէ շատ բլլան, բայց թէ լաւ կուուող-
ներ են, ատոր տարակոյս չկայ:

Ֆեւզի.— Չարմանալի բան. ուրիշ^o սորվեցան ասոնք կուուե-
լու արհեստը, եւ ինչ լաւ ուղղամարութիւն ունին:

Ճեւտէթ.— Վարիչները հին, փորձառու յեղափոխականներ
են, փաշա՛ կֆենտի, եւ դաստիարակուած են նշանաւոր յեղափոխա-
կան Գէորգ Չաւուչէն. անպատճառ այդ յեղափոխական դաստիա-
րակութեան շնորհիւ է որ ասոնք այսքան լաւ կուուողներ դարձած
են:

Նիազի.— Ճիշդ է, յեղափոխական դաստիարակութիւնը ունե-
ցեր է իր նշանակութիւնը եւ վարիչները յայտնի յեղափոխականներ
են, ինչպէս Վահագնեան, Մամիկոնեան, Իշխանազուն, Արծրունին,
Խոջիստունին. բայց այդ կուուող ոյժերը բոլորն ալ յեղափոխական
չէին, ասոնք բնածին յատկութիւն մը ունին կուուի. իրենց միջա-
վայրի նկարագիրն ունին, կամ թէ առնական ցեղ մըն է, որ այս մի-
ջավայրին մէջ պահեր է իր հոգեկան առաքինութիւնները:

Ֆեւզի.— Յամենայն դէպս, մեր անյաջողութիւնները ո՛չ մէկ
ձեւով արդարանալի են, հակառակ որ գերազանց ոյժ ունինք — ուղ-
մամթերքի առատութիւն, թնդանօթներու եւ ցնդացիրներու օժան-
դակութիւն, որմէ բարեբախտարար թշնամին զրկուած է, եւ շարու-
նակ օղնական ոյժ ստանալ, — եւ նորէն մեր յարձակումները ձախ-
ղութեան կը մատնուին, եւ այդ բոլոր ճակատներու վրայ, Կարշիկի,
Կեփինի, Կապլորի, Տարկուչի գիծերուն վրայ ալ, նոյն անյաջողու-
թիւնը: Մեր ոյժերը պէտք էր աւելի զէնքի մարդ բլլային եւ կռիւի
վարժ, քան ասոնք: Եթէ Աստուած մի արասցէ, ասոնք մեր առաւե-
լութիւնները ունենային, ի՞նչ պիտի բլլար մեր վիճակը:

Նիազի.— Փաշա՛ կֆենտի, ասոնք եւս ունին որոշ առաւելու-
թիւններ. նախ յեղափոխական ուղղամարութիւն, որ բանակի ուղ-
մամարութենէն կը տարբերի. երկրորդ իրենց զիրքերու առաւելու-
թիւնը. առհասարակ անասիկ զիրքեր կը բռնեն, որ տիրապետող է.
եւ յետոյ իրենց կուուելու ձեւը. լուռ են, կրակ չեն բանար, մինչեւ
որ յարձակման ալիքը հասնի զիրքերուն առջեւ, եւ յանկարծ բոլորը
մէկէն համադարկ կը բանան. իսկ մենք բաւական հեռաւորութենէ,
կը սկսինք համադարկերու, այն յոյսով որ ցնդակի տեղատարափով

պիտի վախցնենք եւ փախցնենք, մինչդեռ անոնք հանդարտ նստած ի-
րենց զիրքերուն մէջ՝ կը խնդան մեր վրայ, որ ի դուր ուղղամթերք
կը սպասենք:

Ճեւտէթ.— Նիազի պէ՛լին լսածները ճիշդ են. կը մոռնանք մէկ
բան, որ այդ մարդիկ մահուան դատապարտուած են, եւ կ'ուղէք մա-
հալճիւրը գործադրել եւ չէք ուզեր որ զո՛հը ընդդիմութիւն ցոյց տայ:
Դուք անոնց ապրելու իրաւունքը առած էք, բայց չէք կրցած իրենք
զիրենք պաշտպանելու իրաւունքը առնել, ինչպէս որ բրինք այլ շըր-
ջաններու մէջ: Մարդիկ գիտեն որ պիտի մեռնին, եւ իրենք զիրենք
կը պաշտպանեն. գիտեն որ զիրենք մեռցնելու կ'երթանք. իրենք ալ
կ'աշխատին մեզ մեռցնել. իրենց յաջողութիւնը հոն է, որ կեանքի
հետ կտրած են իրենց կապերը, իսկ մերոնք կ'ուզեն ապրիլ, եւ ա-
տոր համար իրենք իրենց կը խնայեն: Մեր յարձակումները որքան
այ ուժեղ բլլան, երբ մեզմէ մէկ քանիններ իյնան, միւսները կը բա-
րոյայլբուին ու կը փախչին: Ահա՛ մեր պարտութեան պատճառը,
փաշա՛ կֆենտի:

— Հը՛մ, հասկնալի է, — ըսաւ Ֆեւզի փաշա. — ուրեմն ի՞նչ
պէտք է ընել. կեղբոնէն յանդիմանութիւն կայ, եւ կը ստիպեն որ
արագ կարգադրենք Լեռնաշխարհի հաշիւը... :

— Մէկ միջոց միայն կայ, փաշա՛ կֆենտի, — պատասխանեց
Ճեւտէթը. — խիստ կերպով պէտք է յայտարարել կուուող ոյժերուն,
թէ ով որ տատամսի, երեքայ, ընկրկի կամ նահանջէ, մահուամբ
պիտի պատժուի: Եթէ այդպէս շըլլայ, մեր բոլոր յարձակումները
պիտի ձախողին ծանր կորուստներով, առանց արդիւնքի... :

— Ճի՛շդ է, — ըսաւ Ֆեւզի, — միակ միջոցը այդ է:

— Ե՛ս ալ այդպէս կը կարծեմ, — աւելցուց Նիազին, — պէտք
է նոյն բանը թելադրել մեր միւս ճակատներու հրամանատարներուն,
որոնք նոյնպէս մեզմէ բախտաւոր չեն:

— Ի՞նչպէս թէ չեն, — ըսաւ Ճեւտէթ խնդալով. — հասցա Մեհ-
մէտ Ալի փաշայի յոխորտանքը ո՛ւր մնաց. «Մենք թշնամին պաշա-
րեցի՛նք Գայլի ձորին մէջ եւ բնաջինջ բրինք...»: Իրականին մէջ
ուժ կիներ են սպաննուած Գայլի ձորին մէջ, բայց այնտեղ Մեհմէտ
Ալի փաշան ձգեր է բազմաթիւ զիաւկներ. ահա թէ ի՞նչպէս գիտեն
տեղեկագրել եւ յոխորտալ... :

— Իրաւունք ունի, — ըսաւ Ֆեւզի փաշան քմծիծաղով մը, —
թշնամին բնաջինջեր է, հարիւրեա՛կ մը զո՛հ, շա՛տ է միթէ թշնամի մը
բնաջինջելու համար... :

— Ուրեմն պէտք է տեղեկացնել Բէուֆ պէ՛լին, որ Արծրունիի

դէմ կը դործէ, Զիա պէյին, որ Կեփինի գիծին վրայ է, Մեհմէտ Ալի փաշային, որ Կապլորի գիծին վրայ է եւ Թեատամ պէյին, որ Տարկուչի ճակատն է, միեւնո՛յն օր, միեւնո՛յն ժամուն եւ միեւնո՛յն վճռակամութեամբ ընդհանուր յարձակողականի անցնիլ՝ համադրական ոյժերով, առանց ընկրկելու ո՛րեւէ բանի առջեւ...: Բայց միեւնոյն ատեն ամենախիստ ազդարարութիւն ընել աշիրեթական ոյժերուն, որ գործին մօտենան ո՛չ թէ թալանի գիտաւորութեամբ, այլ կոտորու եւ յաղթելու հողերանութեամբ: Սուճապ յառաջացնողները անմիջապէս զնդակահարել...:

Փեւզի.— Պէտք է ճակատներու հրամանատարութեանց տեղեկացնել մեր որոշումը, ինչպէս եւ յարձակումի օրն ու ժամը: Կը յուսամ այս անգամ այդ խոչընդոտը հարթուի...: Անշուշտ այլ ճակատներու հրամանատարներն ալ կը մտածեն այդ մասին, որովհետեւ կեղբոնէն անոնց եւս յանդիմանութիւն եւ հարկադրանք կայ. եւ պէտք է ըսել որ բոլոր ճակատներն ալ նոր ոյժեր ստացեր են, նոր յարձակման համար...:

Այսպէս թշնամին անընդհատ նոր ոյժեր կը նետէ Լեոնաշխարհ, իսկ Գոյամարաի ոյժերուն ո՛չ մէկ օգնութիւն... Եզածն ալ բախումներու հետեւանքով կը ծծուի, կը շողիանայ, կը սպառի... Անյոյս է կացութիւնը. ո՛չ մէկ յոյս, ո՛չ երկրէն եւ ո՛չ երկինքէն...:

Հիմա երկու կողմն ալ, օգտուելով համեմատարար խաղաղ վիճակէն, երկուեքի մէջ են... Կը պատրաստուին... Մէկը վերջնական հարուածը տալու, իսկ միւսը որքան կարելի է՝ աժան շերթալու մտահոգութեամբ...:

Կեղբոնը խորհրդակցութեան մէջ է, զիմադրուելու համար նոր փոթորիկը, որ պիտի շղթայազերծուի: Խորհրդակցութեան կանչըւած են գիծերու հրամանատարներն ու զիբքերու վարիչները: Ու ահա Մամիկոնեան, Իշխանագուն, Իշխանեան, Արծրունին, Խոսրոսունին, Ազատեան իրենց օժանդակ ոյժերով լեցուեցան կեղբոն, ուր կը գտնուին Վահագնեան, Արցախեան, Վիշապեան, Ասպետեան, Աստեղեան, Թորգոմեան, Կայծակեան, Արամեան, Վրէժեան եւ ուրիշներ: Խորհրդակցութիւնը տեղի ունեցաւ Ընկուզի ձորի նշանաւոր Պետոյի տանը մէջ. խորհրդակցութեան կը մասնակցէին Լեոնաշխարհի յայտնի կիները եւ զայն կը վարէր յեղափոխութեան մայրը՝ Ծովինարը:

Վահագնեան.— Գնահատանք ունիմ ձեզի եւ ձեր զէնքի յաջողութեան. այս անգամ եւս թշնամիի ընդհանուր յարձակողականը փչրուեցաւ, բայց թշնամին նոր յարձակողականի մը կը պատրաստուի, որուն համար արդէն ստացեր է նոր ոյժեր: Անտարակոյս այս անգամուան յարձակողականը աւելի ծանր պիտի ըլլայ. ատոր համար կեղբոնի ոյժերը բաժնեցինք զիծերու վրայ: Կը մնան Կայծակեանի ոյժերը իմ տրամադրութեան տակ, որ տկար նկատուած կէտերու վրայ պիտի գործածուի. իսկ Մուրոյեանի ոյժերը՝ Վիշապեանի տրամադրութեան տակ, կեղբոնի պաշտպանութեան համար կամ չնախատեսուած անակնկալներ զիմադրուելու...: Կարգադրութեանց զիծերուն մէկ քանի օրուան պարէն մէկ անգամէն հասցնել, որովհետեւ տեսնուեցաւ որ պարէն փոխադրող կանանց եւ մարդոց խումբերը կոխներու ընթացքին բաւական կորուստ կ'ունենան: Մեր անտեսական միջոցները հետզհետէ կը նուազին. ատոր համար սկըսանք պարէնի խնայողութիւն ընել, իսկ սազմամթերքի տեսակէտէն մեր կացութիւնը լաւ չէ. զիտէք թէ իւրաքանչիւր յարձակում, մինչեւ որ փչրուի, ի՛նչքան կը սպառէ մեր սազմամթերքի միջոցներէն. ցաւ ի սիրտ պիտի ըսեմ որ մեր սազմամթերքը սպառելու վրայ է. պէտք է յանձնարարել կոտուղ ոյժերուն, որ խնայողութեամբ գործածեն իրենց ունեցածը. նոյնիսկ անկանոն զէնքերու համար վառօդ եւ զնդակ հասցնել կը գժուարանանք: Կանոնաւոր զէնքերու համար պատրաստի փամփուշտներ քիչ ունինք, իսկ դատարի փամփուշտները լեցնելու նիւթեր կը պակսին:

Ծովինար.— Զաւակնե՛րս, մենք արիութեամբ գործի սկսեցանք, արիութեամբ տարինք եւ արիութեամբ ալ պիտի վերջացնենք: Այս վիճակը երկար պիտի չտեւէ, ի հարկէ իր վախճանին կ'երթայ: Իմ կարիճները, որ զիտեն արիութեամբ կոտուի, զիտեն ե՛ւ արիութեամբ մեռնիլ. ձեր արիութիւնը չի գնահատուիր. ո՛չ երկինք եւ ո՛չ ալ երկիր չեն կրնար ձեզ գնահատել, եւ ո՛չ ալ որեւէ ատեն, որեւէ մարդ պիտի կարենայ ըսել, թէ դուք ի՛նչ ըրիք, ի՛նչ ոյժ, ի՛նչ եռանդ, ի՛նչ աշխատանք, ի՛նչ արիութիւն եւ ի՛նչ յանդգնութիւն երեւան ըրիք, որովհետեւ մարդկային ոյժէն վեր է եւ աստուածային ոյժէն ալ այն կողմ... Պիտի ընենք, ինչ որ ըրինք, եւ պիտի անցնինք ու երթանք, այս անգամ յաւիտենականութիւնը կարգի դնելու...: Թերեւս հոն ալ այս դժբախտ աշխարհի միջոցը կը տիրէ...:

Ներկաները հասկցան թէ ինչ ըսել կ'ուզէր յեղափոխութեան մայրը, յուզումով մը ծափահարեցին եւ միարեան պոռացին.

— Կեցցէ՛ յեղափոխութեան մայր Ծովինարը...:

— Տիրեց խորունկ լուսթիւն մը, որ տեւեց քանի մը վայրկեան, համապօր՝ լուս ազօթքի մը... Ապա Վիկտորիան, խորունկէն զգածուած, արցունքոտ աչքերով երգեց. «Թող շանթ մը ըլլամ ու կողմ խրիմ...»:

Արծրունի.— Թշնամին օդնական ոյժեր է ստացեր եւ յարձակման պատրաստութիւն կը տեսնէ. մենք ալ օդնական ոյժեր ենք ստացեր եւ ինքնապաշտպանութեան պատրաստութիւն կը տեսնենք: Որքան ատեն ռազմամթերք ունենանք, թշնամին պիտի չկարենայ մեր ինքնապաշտպանութիւնը խորտակել, իսկ երբ մեր ռազմամթերքը սպառի, մեր ինքնապաշտպանութիւնը ինքնին կը փշրուի...: Մենք կ'ընենք ինչ որ կրնանք. թշնամին ալ կ'ընէ ինչ որ ինքը կրնայ...:

Մամիկոնեան.— Այո՛, բայց թշնամին այնքան տմարդի է, որ իր կատաղութիւնը անպաշտպան ժողովուրդին վրայ կը թափէ. աշխարհի մէջ ամենամեծ վատութիւնն է այդ, զոր կարելի չէ որակել: Եթէ թշնամին արիարար մեզի դէմ կուռի, հպարտութեամբ պիտի սեղմեմ իր ձեռքը. վատօրէն անմեղ ու անզէն ժողովուրդը կտորորդը դրուելի է եւ կը զարմանամ թէ երկիրքն ու երկիրը ինչպէս կը վերցրնեն այդքան վատութիւն:

Իշխանագուն.— Մեր թշնամիէն ո՛չ ազնուութիւն, ո՛չ խիղճ, ո՛չ գիտակցութիւն եւ ո՛չ ալ արիութիւն պէտք է սպասել. մեր թշնամին վատթարագոյնն է որ կայ...: Հայկական բոլոր շրջանները կտորուած են. կին, ազճիկ, տղայ, մանուկ, օրորոցի երախայ, զառամած ձերուծի, բոլորը անխտիր ջարդուած են: Անշուշտ լեռնաշխարհն ալ նոյն բախտին պիտի ենթարկուի: Ի՞նչ կը սպասէք թշնամիէն: Թուրքն ու Քիւրտը բարենիներ են. անոնց համար անզէն եւ կապուած բազուկներ պէտք են, անսնարար յօշոտելու համար: Կը տեսնէք, թէ ինչ մեծ ոյժերով կը խուժեն մեր գիրքերուն վրայ եւ սակայն գիմանայու քաջութիւն չունին. կա՛մ կազկանձելով շանսատակ կ'ըլլան, կա՛մ խուճապահար կը փախչին, հակառակ իրենց ունեցած բոլոր առաւելութիւններուն, որովհետեւ գիրքերէն զնոյն կը սուլէ, շնայելով որ մեր իւրաքանչիւր զնոյնի դէմ, հազար զնոյն կը սուլէ: Իսկ վաղը երբ սպառին մեր գիմանական միջոցները եւ մեր գիրքերէն այլեւս զնոյն չսուլէ, այն ատեն տեսէ՛ք թէ այդ ողորմելի խաժամուժը ի՞նչ հերոսական խոյանքներով պիտի յարձակի մեր անզէն ժողովուրդին վրայ...:

Վարդան.— Այո՛, ինչ որ ալ ըլլայ, մենք պիտի պարենք թըշնամիին հետ. ով որ յոգնի, արդէն պարէն դուրս կ'ելլէ:

Սոսխոռունի.— Բայց այնքան շատ են, որ չես գիտեր որո՛ւ

չես պարել...:

Վիշապեան.— (Սնդալով). Ով որ հանգիպի, անոր հետ կը պարենք:

Ազատեան.— Ի հարկէ պիտի պարենք, մինչեւ խաղէն դուրս ելլենք:

Օգիտա.— Բայց պէտք է գիտնայ պարել. իւրաքանչիւր արձակուած զնոյն անպատճառ մէկը պէտք է խաղէն դուրս հանէ:

Օրիորդ Արծրունի.— Անտարակոյս մեր խաղի պայմանը այդ պէտք է ըլլայ. արդէն շատ զնոյն չունինք. այն ալ եթէ վրիպի, աղիտալի է:

Մարգրիտ.— Այդ մասին հոգ մի ընէք. մեր պարօգները լուր կը պարեն:

Ասպետեան.— Մենք մեր մահուան կը սպասենք. ան որ մեր մահը կը բերէ փաթթելու մեր վզին, եթէ կարողացանք, մենք ալ իր մահը կը փաթթենք իր վզին: Այն շրջանները ինչքան ալ հնազանդ գանուեցան եւ ինչքան ալ աւելիով բնագոտջ գացին պետութեան ցանկութիւններուն, սակայն մահը փաթթուեցաւ իրենց վզին: Մի կարծէք թէ եթէ բմբոստացած չըլլայինք եւ պետութեան պահանջներուն բաւարարութիւն տայինք, մահը պիտի կարենայինք հեռացնել մեզմէ. ո՛չ, տարիկա միտուած է եւ պիտի գործադրուի, ինչպէս գործադրուեցաւ այլ տեղեր: Մեհմէտ Ալին, Զիան, Բէուֆ, Բեսիմ պէյերը նենգամտօրէն ուզեցին մեզ թակարդը ձգել, ներման խոստումը չողացնելով մեր աչքին, որպէսզի զէնքերը վար զնենք: Բայց չյաջողեցան:

Իշխանեան.— Կոխը պիտի շարունակենք նոյն արիութեամբ: Մենք մեր խղճի եւ մեր ժողովուրդի առջեւ բաց ճակատ կանգնած ենք. բեր ենք եւ պիտի բնենք մեր կարելին: Շնորհակալ ենք մեր մայրերէն ու քոյրերէն, որոնց շնորհիւ կը տանինք այս Գոյամարտը եւ մինչեւ վերջ պիտի տանինք անսասան կամքով...:

Արցախեան.— Գոյամարտի պայքարէն չենք կրնար դուրս ելլել: Եթէ նոյնիսկ ձգենք թշնամին, ան չի ձգեր մեզ եւ պիտի ջանայ մեզ փճացնել: Իսկ մենք ալ պիտի ջանանք մեզ պաշտպանել: Գիտենք որ մեր նիւթական եւ ռազմական միջոցները անբաւարար են՝ երկար կռիւներ մղելու. բայց ուրիշ ելք չունինք: Մենք ինկած ենք երկրի խորքը. արտասահմանը հեռու է. պաշարուած ենք բազմաթիւ օդակներով: Արտասահման զրկուած մեր սուրհանդակներէն միայն մէկը եկաւ, որուն տուած տեղեկութեան համաձայն հայկական զօրագուններն ու սուսական բանակները կրնան երկու շարաթէն այս կողմերը

երեւիլ. բայց անցան շատ մը շարաթներ եւ սակայն չեկան...: Չեմ գիտեր թէ պիտի կարենա՞նք գիմանալ մինչեւ անոնց այս կողմերը երեւիլը: Յամենայն դէպս անոնք մեր կացութեան մասին դադարաբանին, եւ պէտք է որ աճապարեն...: Եթէ աշխարհը մեզ մոռնայ անգամ, չեմ կարծեր որ Անդրանիկ մոռնայ: Անդրանիկ հայկական գորագույնի մը դուրսը կանգնած է:

Պետոյեան. — Մենք պէտք էր որ սպասէինք մինչեւ որ անոնք գային մեզի. այլ մենք պէտք էր երթայինք դէպի անոնք:

Ծովինար. — Այո՛, եթէ միայն կուսուց ոյժերը ըլլային, ոչ թէ զիրքային, այլ շարժական կուսներու պիտի ձեռնարկէինք եւ անցնէինք: Սակայն ժողովրդական այս գանդուածը կրներու, աղջիկներու, մանուկներու, ի՞նչպէս շարժէինք մեզի հետ:

Պետոյեան. — Եթէ պիտի կոտորուէին, հոս ալ պիտի կոտորուին. խանդավառ չեմ այն յոյսով, թէ կարելի պիտի ըլլայ զիմանալ մինչեւ արտասահմանի ոյժերը հասնին, որովհետեւ կրնան արտասահմանի ոյժերը ուշանալ եւ կամ երեւիլ միայն այն ատեն, երբ արդէն մեզմէ ո՛չ ոք կայ:

Վիշապեան. — Այսօր այլեւս նման ձեռնարկ մը հաւանական չէ. ծանր կերպով պաշարուած ենք. թշնամին սահմաններուն վրայ երեւի ճնշումի եկած է. կ'ուզէ անմիջապէս Լեռնաշխարհի դործը վերջացնել, որպէսզի այս ոյժերը նեղ սահմաններու վրայ: Մենք օրհասական կուսներ կը մղենք եւ պիտի աշխատինք աւելի երկար գիմանալ. թերեւս բախար օգնէ եւ անակնկալ կերպով փրկութեան ճանապարհ մը բացուի...:

Խղամ. — Բացուի թէ չբացուի, մենք մեր կրցածը կ'ընենք:

Ծովինար. — Ոյժերու բաշխումը գիծերու վրայ արդէն կատարուած է: Կեդրոնը գիծերուն կը հասցնէ ինչ որ պէտք է եւ ինչ որ ունի իր ձեռքին տակ: Ժողովուրդի բարոյական կորուստը նոյնն է ինչ որ կուսուցներունը: Ամէն մարդ պիտի թէ ինչ պէտք է ընէ: Գացէ՛ք, իմ կարիճ տղաներ, յաջողութիւն ձեզի, ոյժ ձեր բազուկներուն, համբոյճներս ձեր հպարտ ճակատներուն:

Տիրեց խոր լուծիւն մը: Յետոյ մէկիկ-մէկիկ մօտեցան եւ յեղափոխութեան մօր ձեռքը համբուրեցին:

Ծովինար յուզուած բաւ.

— Չաւակն'րս, հանգստացէ՛ք, ճաշեցէ՛ք, երգեցէ՛ք, պարեցէ՛ք. քիչ յետոյ պիտի երթանք ձեր երկու եղբայրներուն՝ Հրայրին եւ Սերոբին այցելութեան, որ թաղուած են Ընկուզի ձորի եկեղեցիի հովանիին տակ: Ապա պիտի անցնինք Արծուի ժայռին քով, ուր

թաղուեցաւ մեր Գոյամարտի հերոսներէն Սասունին: Գուք կուրի մէջ էիք, բայց ձեր մայրը չմոռցաւ փառասէր թաղում մը ընել իրեն: Այժմ անոր հողակոյտին վրայ արծիւները կը հսկեն...:

Ու անոնք կերան, խմեցին, երգեցին, պարեցին եւ այցելութեան գացին Սերոբի եւ Հրայրի գերեզմաններուն: Ծովինար համբուրեց անոնց շիրիմները ու խունկ ծխեց, մինչ բարբրը զինուորական բարեւի կեցած էին: Տէր Սարգիսեան քահանայն օրհնեց գերեզմանները: Յետոյ բոլորը անցան Արծուի ժայռ, հոն եւս տեղի ունեցաւ նոյն արարողութիւնը:

Ապա Ծովինար իր մայրական օրհնութիւնը տուաւ իր արի գաւակներուն, որոնք սղջագուրուեցան իրաւրու հետ եւ իւրաքանչիւրը անցաւ կուրի իր գիծը: Ծովինար Արծուի ժայռի քարձունքէն կը հետեւէր ուղիներու շարժումներուն...:

Ահա նորէն լճուական եւ մեծ գործողութիւնները սկսան...: Թշնամին չորս կողմերէն համադրական ոյժերով յարձակումի անցաւ: Լեռնաշխարհը կը ցնցուի անընդհատ տեղացող հարուածներէն. գիրքերը գիմադրական գործին լծուած են՝ նո՛յն արիութեամբ եւ պաղարիւնութեամբ. գիծերու հրամանաւորները խոհեմութիւն կը յանձնարարեն եւ կը զգուշացնեն զո՛ր չեքթալ տաքարիւնութեան ու անխոհեմութեան: Թշնամիի ալիքները իջարու էտեւէ կը զարնուին գիրքերուն, կ'ընկրկին, նորէն կը զարնուին ու էա կը շարտուին: Փոշիի հսկայական ամպ մը կ'երկարի գիրքերուն հետ եւ կ'օղակէ Անտաքի շրջապատը: Այդ փոշիէ ամպին մէջ ոյժ էրու կատաղի բախումը կը ջանայ մէկը միւսը փշրել: Թշնամին որքան իր ճնշումը կը սաստկացնէ, գիրքերու գիմադրական յամառութիւնը այնքան կ'աւելնայ: Թնդանութիւն, գնդացիներու եւ հրացաններու որոտին մէջ կը լսուին մարտահրաւէր, հայհոյուչ, երգ ու մտախն, խլացուցիչ ժխոր մը խառնափնթոր ձայներու:

Հրամանատարներն ու սպաները անընդհատ գորքը կը քաջալերեն եւ «յառա՛ջ» կը պոռան: — Ահա՛ սքարտուեցան, ահա՛ փախան, ահա՛ կոտորուեցան, — կ'աղմկէ գորքը: — Անձնատո՛ւր, անձնատո՛ւր, է՛հ վատ Հայեր, այսօր ձեր վերջին օրն է, — կը լսուի չորս կողմէն, հաղարուս բերաններէ: Իրար կը խրախուսեն ու կը հոսին դէպի գիրքեր, ինկուզներու վրայէն անցնելով:

— Յառա՛ջ, սատանուելու ժամանակը չէ. այսօր պէտք է այդ

հաշիւը մաքրուի, յառաջ, — կը պոռան աշխրեթապեաները: — Լեռնաշխարհը իր ամբողջութեամբ կրակ ըլլայ նոյնիսկ, մենք պէտք է կուլ տանք... Է՛հ, ո՛վ որ փախչի, անարժան է եւ Մուհամմէտին եւ իր կնոջը: Մեր առջեւ մեր ճանչցած սարուկ Հայերն են, որոնք իրենց շուքէն անդամ կը վախնան... յառաջ, — կ'ազմկեն բոլորը ու կը վազեն...:

Իսկ զիրքերու արիութիւնը երթալով կ'աւելնայ:

— Խնայեցէ՛ք փամփուշտները: Այս յիմարները չեն գիտեր որ իրենց ազմուկին վրայ կը խնդանք կամ իրենց շատութիւնը կ'արհամարհենք.— Տղա՛յ, թշնամին կարծեաւ այսօր արիութիւն ցոյց կու տայ: Իր արիութիւնը իր ազմուկին մէջն է: Ընկրկելու արամազրութիւն չի ցուցներ... կ'երեւի ձանձրացեր է կեանքէն...:

Ա՛յսպէս կը խօսին Գոյամարտի ոյժերը ու կը խնդան՝ թշնամիի պոռչաութեանը մտիկ ընելով...:

Փեւղի փաշան, ձեւակթ ու Նիազի պէյերը հեռուէն կը գիտեն յարձակման դարգացումը եւ կը հրճուին... Յաղթական օր մըն է այս օրը, — կ'ըսէ Փեւղի փաշան՝ գոհ տրամադրութիւնով մը ձեռքերը շփելով:

— Այո՛, փաշա էֆենտի, — կը պատասխանէ Նիազի. — մեր յարձակման թափը երթալով կը սաստկանայ: Երեւի թշնամին անկարող է կեցնելու խուժանը...:

— Կանխահաս են այդ կործիրները: Պէտք է սպասել զէպքերու թաւալման, — կ'ըսէ ձեւակթ:

— Հեծելազօրքն ու հեռակազօրքը զիրքերու վրայ են ու կը սուր զիրկրնդխտան է:

— Պէտք է զիրքերը գրաւուին, որ յարձակումը նպատակին հասնի, — կը թելադրէ ձեւակթ:

— Անպատճառ զիրքերը այսօր կը գրաւուին եւ թշնամիին կուսող ոյժերը ամբողջութեամբ պիտի փճացուին, որովհետեւ նահանջելու ո՛չ տեղ ունին, եւ ո՛չ հնարաւորութիւն, — կ'ըսէ Նիազի:

— Աւելի ճիշդ՝ նահանջելու սովորութիւն չունին. ասիկա յեղափոխական դաստիարակութեան հիմնական կէտերէն մէկն է:

— Մեր ուզածն ալ այդ է, որ մնան եւ կոտորուին. այսօր պէտք է ըսել որ մերոնք լաւ կ'աշխատին. եւ ո՛վ ըսաւ թէ մերոնք չունին նոյն արիութիւնը, ինչ որ դուք յեղափոխական արիութիւն կը նկատ-

տէք...:

Ու սպաները կ'ազմկեն՝ սուրեր շողացնելով եւ բսելով.

— Ձեզ տեսնենք, քաջե՛ր, սպրի՛ն մեր քաջեր. վատ թշնամին արդէն լեղապատառ եղած է, գլուխը կորսնցուցեր է, չի գիտեր ուր փախչիլ: Փճացուցէ՛ք այդ խժի ձագերը, որ թշնամի են մեր օրէնքին եւ մեր պետութեան, եւ որոնք կ'ուզեն մեր հողն ու ջուրը խլել մեզմէ:

Ու բոլորը կ'ազմկեն.

— Փախա՛ն, հա՛, փախա՛ն, ահա՛ կը փախչին: Պիտի փճացուենք այդ շուները. ահա՛ փճացուցինք...:

Եւ զիրքերէն կրակ կը ժայթքէ. թշնամին ի դուր կը կարծէ, որ գնդակի տեղատարափէն, ազմուկէն, խուժումէն, Լեռնաշխարհի զիրքերը տեղի պիտի տան: Գոյամարտի ոյժերը անասան կեցած են հեղեղին դէմ: Կռիւի նոյն փոթորիկը աւելի ուժգնութեամբ կը դաւարուի Իշխանազունի, Իշխանեանի, Արծրունիի, Սոսխոտունիի, Ազատեանի գիծերուն վրայ, ուր կուսող ոյժերը, ինչպէս նաեւ օգնութեան եկող ոյժերը գերազոյն լարուածութեամբ մը եւ դիմադրական մեծ կորովով կանդնած են թշնամիի թաւալող ոյժերուն դէմ, խուժումը կեցնելու: Թշնամին կը ձգտի զիրքերը մտնել:

Վահագնեան իր ոյժերով, փոթորիկի նման, գիծերուն թիկունքը կը դառնայ. կը հետեւի կռիւի ընթացքին եւ տկար կէտերուն կ'օգնէ: Վիշապեանի ոյժերը աւելի նեղ շրջագիծի մը վրայ կը դառնան՝ անահնկալներ զիմադրաւելու համար, եւ կտայ կը պահեն կեդրոնի եւ գիծերուն մէջ: Արցախեան գիծերէն եկած տեղեկութիւնները մէկը միւսին կը փոխանցէ, Վիշապեանի միջոցաւ:

Թշնամիի ճնշումը երթալով աւելի կ'ուժեղանայ գիծերու վրայ. գիծերու հրամանատարները շարունակ զիրքէ զիրք կ'անցնին կացութիւնը քննելու եւ զգուշութիւն ու պազարիւնութիւն կը թելադրեն: Մանաւանդ օգնական նոր ոյժերը աւելի տաքարիւն են, կատաղութենէն չեն կրնար իրենք զիրենք պահել զիրքերուն մէջ. կ'ուզեն յարձակումի անցնիլ՝ արհամարհելով թշնամիի թիւն ալ ու անոնց գնդակի տեղատարափն ալ: Բայց զիրքերու վարիչները կը սաստեն ըսելով. «Արդէն անոնք կու գան զիրքերու առջեւ՝ մահուան գնդակը ուտելու. ի՛նչ պէտք կայ երթալու անոնց օտքը...»:

— Տո՛յ, ի՞նչ է պատահեր, որ թշնամին այդքան յամառութիւն ցոյց կու տայ այսօր, — կը խօսուի զիրքերուն մէջ:

— Ա՛յ հա՛յ, անպատճառ յամախակի պարտութիւններէ ամբըջնալով՝ այսօր երեւի վճռած է յաղթական դուրս գալ:

— Բոլոր գիծերուն վրայ կ'ըսեն թշնամին նոյն յամառութիւնը ցոյց կու տայ:

— Բայց բոլոր գիծերու վրայ ալ այդ յամառութիւնը մերոնց տղամարդութեան առջեւ պիտի փշրուի:

— Տղա՛ք, ստիպողական պատճառ մը պէտք է ըլլայ որ թշնամին առանց կորուստներու առջեւ կանց առնելու գիտկները կոխկրտտելով կու գայ...:

— Այո՛, երեւի վճռած է կա՛մ պիտի մեռցնէ կա՛մ պիտի մեռնի:

— Պէ՛տք է մեռնի, պէ՛տք է մեռնի, — կ'ազմկեն գիրքերը:

— Արդէն մեռնելու համար է որ կու գայ. քաղցէ՛ք այս անպիտան ջուրը, որ խելագարուած, իր մահը կը փնտռէ մեր գիրքերուն առջեւ. անոր յամառութիւնը ոչ թէ քաջութենէ կու գայ, այլ իր վախկոտութենէն: Եթէ նահանջէ, պիտի սպաննուի. եթէ առաջ գայ, նորէն պիտի սպաննուի... շուարե՛ր է... տուէ՛ք համազարկի: Այս ազտեղութիւնը պէտք է մաքրել, որպէսզի աշխարհը փրկուի հիւանդութեան համաճարակներէն, — ըսաւ Ախոն:

— Այսօր բախար մեզի կ'օգնէ, — աւելցուց Սանդրոն. այս սրիկաները մէկը միւսին կը նախանձին, եթէ իրենցմէ առաջ ստացեր է մահուան գնդակը:

— Տո՛յ ի՞նչ կ'ըսես, Սանդրո՛յ, — դողաց Չոլոն. — ասոնք մահուան գնդակ ստանալու ցանկութիւնով չէ որ կու գան, այլ մեզ մեռցնելու նախապատուութիւնը կ'ուզեն շահիլ...:

— Աւելի լաւ, — վրայ բերաւ Վարդան, — մենք արդէն մեր մահը կը փնտռենք եւ կ'ուզենք քաջերու գնդակով երթալ...:

— Ա՛յ հա՛յ, քաջ բազուկէն ստացած մահը անմահութիւն է արդէն, — բացականչեց Առքոն:

— Բայց կը կարծէ՞ք որ այս ջուրին մէջ գանուին հոգեկան կորով ունեցողներ, — հարցուց Արթինը:

— Կը տարակուսիմ, — պատասխանեց Մանուկ՝ գլուխը երերցընելով:

— Ահա՛ Բեսիմ պէյը, որ Տարկոշեան գիծին վրայ է. Մեհմէտ Ալի փաշան՝ Կապլորի ճակատը, Չիա պէյ՝ Կեփիինի գիծին վրայ, Բէուֆ պէյ՝ Կարշիկի դէմ, Նիսի պէյ՝ Տալազարի ուղղութեամբ, Ֆելի փաշան եւ Ճեւտէթ՝ Չայի եւ Մերկերու գիծերուն վրայ, եւ

անոնք անրնգհատ յարձակման հրաման կու տան եւ գալարափողերը կ'արձագանդեն. գնդացիներն ու թնդանօթները պէտք է կրակը սաստկացնեն. յարձակումը կանց պէտք չէ առնէ, մինչեւ որ գիրքերը չոչնչանան. սպանելուն հրամայուած է ընկրկողներն ու նահանջողները անմիջապէս գնդակահարել...:

Ու «յառա՛ջ» կը պոռան սպաները, «յառա՛ջ» կ'ազմկէ հետեւակազօրքն ու հեծելազօրքը. «ընկրկումը ամօթ է»...:

— Է՛հ, ո՞վ կը վախնայ այս ստրուկներէն:

— Պիտի փոշխացնենք այս անհաւատ շուները:

— Քայլ մը եւս, կա՛մ անձնատուր պիտի ըլլան, կա՛մ լեղապատառ պիտի փախչին:

— Պէտք է այս աղտոտ խոպերու հաշիւը շուտով կարգադրուի:

— Մինչեւ ե՞րբ պիտի գրապինք ասոնցմով. այդ լակոտները այսօր պէտք է մեր ոտքերուն տակ ոչնչանան:

— Քայլեցէ՛ք տեսնենք. մեր ձիերու ոտքերուն տակ պէտք է տրորուին ասոնց փորտախիւրքերը, կ'ըսեն աշիրեթապետները:

— Անշուշտ, անշուշտ, այդպէս պիտի ըլլայ, — կ'ազմկեն իրենց հեծեալ ոյժերը եւ թող հետեւակազօրքը չկարծէ թէ հեծելազօրքը իրմէ վար կը մնայ...:

— Ասիւծներու նման մանչեցէ՛ք, քաջե՛ր, — կը պոռայ Գող Ֆրթոն, — եւ թող ձեր ձայնէն այդ նապաստակները լեղապատառ ըլլան:

Ֆելի փաշա. — Ա՛հ, լեռ ու ձորը կ'ազմկեն, յարձակումը աւելի ու աւելի թափ կը ստանայ. այսօր Լեռնաշխարհի հաշիւը պիտի մաքրուի: Ի՞նչ կ'ըսէք, ձեւտէթ պէյ. կոխը լաւ կ'ընթանայ, այնպէս չէ՞. բայց մեր այսքան ուժեղ յարձակումներուն առջեւ պէտք է որ տեղի տային: Երեւի անոնք ալ օգնական ոյժ ստացած ըլլալու են:

— Հը՞, օգնական ո՞յժ. որտեղէ՞ն, — հարցուց ձեւտէթը:

— Չեմ գիտեր. թերեւս առարկէք թէ իրենց պահեստի ոյժերը կը գործածեն, բայց միթէ տակաւին չսպառեցին իրենց պահեստի ոյժերը: Ես ալ կը մտածեմ որ դուրսէն անկարելի է որ օգնական ոյժ ստանան: Այնքան խիստ կերպով պաշարուած է Լեռնաշխարհը, իսկ հայկական ամբողջ շրջանները կոտորուած են: Իմ կարծիքովս այսօր անձնատուր պիտի ըլլան՝ սպառած ըլլալով իրենց միջոցները — սազմամթերք եւ ուտելիք:

Ճեւտէթ. — Արդէն առանց կռիւի անգամ այս խիստ պաշարումը շարունակուի, անոնք սովամահ պիտի ըլլան. բայց որովհետեւ կառավարութիւնը կ'աճապարէ, մենք ստիպուած ենք կորուստներու գնով անգամ լսեցնել աւաղակներու այդ որջը...: Այդ հարկադրանքին տակ մենք առիթ կու տանք անոնց, որ օգտագործեն իրենց ոյժերն ու սագմամթերքը, վնասելով մեզի: Ինչ որ աննպատակ պիտի անցնէր, եթէ միայն պաշարումի քաղաքականութեամբ բաւարարուէինք...:

Ֆեւզի. — Ճիշդ է ձեր տեսակէտը, բայց ժամանակը չի թոյլատրեր մեզի այդ բանը: այս ոյժերը փոխանակ Լեւոնաշխարհով ըզբաղելու, ճակատներ պէտք է անցնին, ուր արտաքին թշնամին կը սպառնայ մեր գոյութեան, ատոր համար է որ կառավարութիւնը կ'աճապարէ...: Եւ ինչպէս յարձակողականը մեր գիծին վրայ կը պահէ իր ուժգնութիւնը, այդպէս ալ միւս գիծերուն վրայ. Թեախմէն, Բէուֆէն, Չիա պէյէն, Մեհմէտ Ալի փաշայէն անուած տեղեկութիւնները այդ կ'ըսեն... Եւ միեւնոյն ատեն կը տեղեկացնեն որ թըշնամին թուլութեան նշաններ ցոյց կու տայ ու ծանր կորուստներու ենթարկուած է... Թելադրեցի որ օգտագործեն թշնամիին տկարութիւնը եւ յարձակումը աւելի սաստկացնեն, առանց նկատի առնելու կորուստները. մենք եւս որոշած ենք այդ հաշիւը վերջնականապէս մաքրել՝ լսինք սուրհանդակներուն:

Ճեւտէթ. — Ըսելը գիւրին է, կարեւորը գործադրելն է:

Ֆեւզի. — Ճի՛շդ է, եթէ ոչ այսօր, գոնէ վաղը կամ միւս օր. յամենայն դէպս այս գործը պէտք է վերջանայ...:

Ճեւտէթ. — Այո՛, այդ գործը պիտի վերջանայ այն ատեն, երբ վերջանայ անոնց սագմամթերքը, եւ մեր յարձակողականը առիթ է, որ անոնք շուտ սպառեն իրենց սագմամթերքը:

Ֆեւզի. — Այդ ալ լաւ է. հետեւաբար ճնշումը պէտք է սաստկացնել, որպէսզի անոնց սագմամթերքի սպառումը շուտ կատարուի. այդ ուղղութեամբ արդէն անընդհատ հրաման կը տրուի, որ յարձակման թափը չթուլացնեն:

Գոյամարտի ոյժերու հրամանատարները անընդհատ իրենց դիրքերու վարիչներուն կը պատուիրեն զգոյշ ըլլալ եւ փամփուշտի խնայողութիւն ընել:

— Գնդակի յարզը պէտք է գիտնալ. իւրաքանչիւր գնդակ մէկը

հոգի ճանապարհելու սահմանուած է. մի՛ նայիք թշնամիին թէ առաւ գնդակ կը վատնէ. անիկա ունի. մենք չունինք. եղածը պէտք է գիտնանք ծախսել...: Անիկա եթէ ուզէ իսկ, չի կրնար գնդակը նպատակին հասցնել, պատահականօրէն կ'արձակեն դիրքերու ուղղութեամբ. իսկ երբ մօտենան, ձեռքերնին կը դողայ եւ գնդակը նորէն կը վրիպի...:

— Տղամարդու գնդակը պարսպ պէտք է անցնի, — ըսաւ Չոյն:

— Մեզք չէ՞ գնդակին որ պարսպ անցնի. հասցա ինչո՞վ պիտի հիւրասիրենք այս քաղմութիւնը, — վրայ բերաւ Ախոն:

— Հոգ մի՛ ընէր, Ախո՛յ, եթէ չկշտացան գնդակով, կանք գեռ եւ մենք, — սպտասխանեց Պեաոն:

— Արդէն մեզ ուտելու համար է որ կու գան. հասցա ինչո՞ւ կու գան, — ըսաւ Արթին խնդալով:

— Չէ՛, Արթի՛ն, չէ. ուտելու համար չէ, այլ համբուրելու համար է որ կու գան, — աւելցուց Առքոյ, պիտի որ սրբելով:

— Վա՛խ, վա՛խ, վա՛խ. չէ՞ք ըսեր, գիշեր-ցերեկ մեր կարօտը կը քաշեն այդ անպիտանները, — ըսաւ Վարդանը:

— Մեր կարօտը չեն քաշեր, մեր սարսափը կ'ապրին, — գիտել տուաւ Գարբիկը:

— Տո՛յ, ի՛նչ սարսափ: Եթէ սարսափէին չէին գար, — մէջ մտաւ Պեարոս:

— Ինչո՞ւ... կամոյթի՞ն կու գան. բոնի՛ կը բերուին:

— Իսկ այս քիւրտի լակտանե՞րը:

— Թալանի կու գան. բայց երբ կռիւ կայ, կը փախչին. այսօր չեմ գիտեր թէ ինչ է պատահեր. կարծես ըսել կ'ուզեն թէ մենք ալ տղամարդ ենք:

— Տուէ՛ք համադարկի, — պոսայ Առքոն, — թոյ չուներու նման ոտնան, ու հոգը ճանկոտեն: Այդ սրիկանները տղամարդ ըլլալու համար պէտք է քանի մը անգամ աշխարհ գան ու երթան: Տղամարդ են անդէն ժողովուրդի եւ կապուած բազուկներու համար, եւ ո՛չ թէ դիրքերու առջեւ, ուրկէ գնդակ կը սուլէ...:

— Տղամարդը, ըսաւ Մանուկ, — ո՛չ կապուած բազուկներուն կը մօտենայ եւ ոչ ալ անդէն ժողովուրդին. ասոնք բորենիներ են, որոնք գիտակներով կը սնանին:

— Ճի՛շդ է, — հաստատեց Մանդրոն. — կապուած բազուկներն ու անդէն ժողովուրդը թշնամիի առջեւ կենդանի գիտակներ են, զուրկ ինքնապաշտպանութեան կարելիութենէ:

— Է՛յ, չէ՛յ, կանչեցէ՛ք թող զան. աղամարդու արժէքը հոս
կը ճշդուի, — բաւ անհանդարտ Իսան, որուն աչքերէն կրակ կը
ժայթքէր:

— Հա՛, հա՛, հա՛, չե՞ս տեսներ, անաչէ՛ն, արդէն կու զան՝
իրար հրելով, հրմշակելով, մեծ աղմուկով ու բազմութեամբ կու զան՝
ու կու զան:

— Թո՛ղ զան, թո՛ղ զան. կա՛մ շանսատակ կ'ըլլան, եւ կա՛մ
նապաստակներու նման կը փախչին: Ո՞վ կը քշէ այս նապաստակները
մեր վրայ:

— Պետութիւնը:

— Կործանի՛ այդ պետութիւնը...:

Ահա՛ Գանիեպաճիի եւ Մերկերու գիրքերուն վրայ հեծելա-
գորքի եւ հետեւակապորքի կատապի յարձակումը: Մամիկոնեանի,
Փարհատեանի եւ Ալիանցից սյոթերը մեծ ճիգ կը գործեն կեցնելու
խուժումը... Մակարն ու Մկրոն ջլաջնացեր են որ թշնամին նախկին
զատէն չէ օգտուած:

Գասպարի տան թորոյ, Շամամի թորոյ եւ Տէր թորոս՝ վաղ-
րի նայուածքով թաւալող խուժանը կը զիտեն: Առքոն եւ իր քաջերը
կը խնդան որ գործ ունին նախիրի մը հետ, որ բառաչելով հովիւի
դաւազանին տակ կը յառաջանայ...

Գասպարի տան Շամամը սուրբ ասպարին կը շնկացնէ. — հա՛,
հա՛, հա՛, Մահմատոյ ու Հասանոյ հրացան կը գործածեն, — կ'ըսէ
ու կը խնդայ: Իսկ Ալիանցից Մաքէն կոխի երգեր կ'երգէ ու մար-
տահրաւէր կը կարգայ:

Փարհատեան պաղարիւնութիւն կը թելադրէ:

Մամիկոնեան համազարկ կը հրամայէ...:

— Քաղեցէ՛ք այս նախիրը, — կը պոռայ Մկրոյ ծունկը դետին
զարկած:

— Է՛յ, չէ՛յ, կ'աղմկէ Շամամի թորոն, — աղամարդու օր է.
ապրի՛ս զնդակ, կանա՛ջ մնայ նետողին ձեռքը. Ի՛նչպէս կը շրջէ ու
կ'անցնի...:

— Հա՛պա հա՛պա, աղամարդու օր է, — կը հաստատէ Գաս-
պարի տան թորոյ, — եւ այս խաժամուժը եկած է իր թոյլ ոտքերով
աղամարդութիւն խաղալու...:

— Տո՛յ ինչ կ'ըսէ Առքոն, — ձայն տուաւ Մակար. — Թշնա-

մին հիմա գիրքերը կը լեցուի:

— Առքոն իր սյոթերով կատապաճ զայլի ախորժակով կ'ուտէ.
զուն հող մի՛ բներ, — պատասխանեց Մեժտոն, — նայէ՛, չե՞ս նկա-
տեր որ թշնամին այսօր կամակորութիւն կը ցուցնէ:

— Այդպէս կ'երեւի Մեժտոյ. բայց մեր զնդակներու տարափին
տակ պիտի փչրուի անոր կամակորութիւնը:

— Իսկ իրենց զնդակներու տարափին տակ ի՞նչ կ'ըլլայ:

— Հողը կը բզկտուի, կը բարձրացնէ փոշի, քարերը կը ճա-
թըտին. օդին մէջ կը պարեն, շատ քիչ զնդակներ ալ մեղմէ զոհեր
կը խլեն:

— Յանցանքը զոհերունն է, տաքարին կը գանուին, զնդակի
դէմ կը ցցեն իրենք գիրենք՝ արհամարհելով թշնամին, բայց զնդակը
կոյր է:

— Ի հարկէ այդ տեղատարափէն մէկը պիտի դպի, շատ մի՛
տրտնջաք. չէք ուզեր ձեր մէկ զնդակը ի զուր անցնի, բայց կ'ուզէք
որ թշնամի բոյր զնդակները վրիպին. ինչո՞ւ, այդ շանորդիք կո՞յր
են:

Համազարկ կը հրամայուի...:

— Ձեզ տեսնեմ, կարիճներ, — կը խրախուսէ զանդուր մա-
ղերով եւ արծուէքիթ երիտասարդ Փարհատեան:

Ու սրտաուժ ինկած է գիրքերը. յարձակող ալիքները կ'երե-
քան, իրար կը խառնուին, կ'ընկրկին ու նորէն կը յառաջանան:

— Տե՛ս, թորո՛յ, տե՛ս, անիկա Ամար աղան չէ՞ որ ձիաւոր-
ները առաջ կը մղէ, — բաւ չեչոտ Մահակը:

— Այդպէս կ'երեւի, Մահա՛կ. անիկա է, — բաւ թորոն ու
պոռայ. — Է՛հ, Ամար աղա, պատանքդ հետդ բերա՞ծ ես... եւ հրա-
ցանը պարպեց...:

— Կեցցե՛ս, թորո՛յ, կեցցե՛ս, թաւալլոր զնայ այդ շունը ու
ձիաւորները շքեր են, — բաւ Մահակը ուրախութենէն գինովցած:

— Տուէ՛ք համազարկի տակ այդ շքած շուները... Ա՛հ, այդ-
պէս... դարս մնան ձեռքերնիդ. ի՛նչպէս թաւալլոր կ'երթան մարդ
եւ ձի:

— Տէ՛հ, ցոյց տուէք յամառութիւն, ինչո՞ւ կ'ընկրկիք, —
տկոտները կրճակելով կ'ըսէ Մակարը ու կը քաղէ:

— Այսօր հետեւակապորքն ալ աներես է դարձեր, որքա՛ն կը
ձեծուի, այդքա՛ն կը մօտենայ...:

— Թող մօտենայ, Չաքա՛ր. որքան մօտենայ, ա՛յնքան լաւ է.
զնդակը չի վրիպիր. ինք իր ոտքով կու զայ զնդակի դէմ. տակաւին

դժգոհ էս :

— Պա՛հ, Գալո՛յ, դուն ալ կը կարծես որ այնքան քաջ են եւ իրենց սրտո՛վ կու գան զնդակին զէ՛մ : Այս շուները հրեւոյ՛ է որ կը քշեն մեր վրայ :

— Այսօր մեր բոլոր զիրքերուն վրայ ալ ուժեղ եւ յամառ կը-
ռիւներ կան . թշնամին անպատճառ քաջութեան զինի է խմեր , — Ը-
սաւ Գուրգէն :

— Քաջութեան զինի է խմեր . է՛յ հէ՛յ , — բղաւեց Մխոն , —
թշնամին քաջութեան զինի է խմեր , բայց պիտի փոխէ : Գուրգէ՛ն ,
նայէ , այն սպան սուրը ձեռքը կը քայլ զօրքին հեռ ու կ'աղմկէ ,
հհը՛ . . . զէ՛հ հիմա աղմկէ . . .

— Ապրիս , Մխո՛յ , կոնակէն ինկաւ : Բայց ի՛նչ աղմուկ է ին-
կեր զիրքերուն մէջ :

— Այդպէս լաւ է . կոխը աղմուկ կ'ուղէ , եւ աղմուկը կոխը
կը տաքցնէ : Պետոյեանի ոյժերն են , մարտահրաւէր կը կարգան :

— Է՛հ , զգոյ՛շ : թշնամին միտք ունի Չայի զիրքերը խել մեղ-
մէ , եւ անցնիլ Պարպարի հովիտը , — պոռաց Պետոյեան , ըմբոստ
զիմազիժերով միջնասակ երխատարդ մը . — շարժեցէ՛ք ձեռքեր-
նիդ :

— Տղա՛յ , այս ի՛նչ սոսկալի տեղատարափ է զնդակի , լեռ
ու ձոր կը բզկտուին , իսկ թնդանօթի ուժերըրը գետինը կը պատանն ,
փոշի կը բարձրացնեն . աչք չեն կրնար բանալ . — Այսօր թշնամին
մահէն չի վախնար ու աներեր կու գայ :

— Տուէ՛ք համազարկի , — ջղայնութենէն պոռացին Ախոն ու
Չորոն , — տեսնենք թէ ի՛նչպէս չ'ընկրկիր . . . :

— Է՛հ , Գարրիկ , ո՞ւր ես . ձայնդ չ'ելլեր , — հարցուց Պետ-
րոս :

— Ժամանակը չէ . կը տեսնես զբազուած ենք այս շատ յարգելի
հիւրերով :

— Վնաս չկայ , հիւրեր երգէ ալ կ'ախորժին . կ'ըսեն՝ Ծամամի ,
Թորոյի եւ Այխանցից Մաքէին ձայնը մինչեւ Անտոքի կատարները կը
հասնի :

— Լուէ՛ , Պետրոս , կը լսե՞ս թէ ի՛նչ կ'ըսեն թշնամիները . « Հա՛
զաւակներս , հա՛ զաւակներս , թշնամին հա՛ փախաւ . հա՛ պիտի փախ-
չի , ձեզ տեսնեմ քաջերս , այսօր պիտի վերջանայ այս կեանքներու
հաշիւը . . . » : Սպաները այդպէս կը խրախուսեն զօրքը :

— Լսեցի , — Ըսաւ Պետրոս , եւ սկսաւ բարձր ձայնով պոռալ ,
որպէսպի թշնամիները լսեն . — հա՛ փախանք , հա՛ պիտի փախչինք ,

չո՛ւտ եկէք , քանի չենք փախած . է՛հ ահա՛ այսպէս կը փախչինք ,
այսպէս կը փախչինք , շրջի՛ր , շան տղայ , դուն ալ ինկիր . կը տեսնէք
թէ ինչպէս կը փախչինք :

— Ապրի՛ս , Պետրո՛ս , շատ ապրիս , — Ըսաւ Գարրիկ խանդա-
վառուած եւ ձայնը ձեռք « զէ՛հ զարկէք , զարկէք » :

— Գարրիկ նորէն բռնկուեցաւ , — Ըսաւ Չորոյ , — ի՞նչ կ'ը-
սես , Օսէ՛ :

— Իրաւունք ունի , որովհետեւ կոխը բռնկած է , Չորո՛յ ,
տեսնենք թէ քանինե՛ր պիտի հալին անոր տաքութեան մէջ , — Ըսաւ
ճանրախոհ Օսէն :

— Ով հալեցաւ , կը հալի , ով մնաց , կը թրծուի եւ կը դառնայ
պոզպատ :

— Մնալու համար պէտք է զգոյ՛շ ըլլալ եւ աշալուրջ ու մանա-
ւանդ պաղարիւն : Պետոյեան հաղիւ կրնայ իր ոյժերը դապել , որոնք
յարձակումի կ'ուզեն անցնիլ զնդակի այս տարափին տակ . ստիկա
քաջութիւն չէ . մեր կուռող ոյժերէն շատերը այդ անխոհմտութեան
զոհ գացին , հակառակ Մամիկոնեանի ազդարարութեանց : Երբոր
կատաղութիւնն ու տաքարիւնութիւնը կու գան , կ'անտեսեն ամէն
ինչ եւ կուրծք կը ցցեն զնդակի հեղեղին զէ՛մ : Իրաւունք ունի Մա-
միկոնեան այդպիսիները պատժելու յեղափոխական զնդակով՝ իրրեւ
դատալիքներ . մենք պէտք ունինք պաղարիւն խենթերու եւ ոչ թէ
տաքարիւններու . մահէն չ'ախնայը ըսել չէ թէ ամէն մարդ այդքան
շուտ ինքզինք պէտք է նետէ մահուան դիրկը : Մենք մեծ պարտակա-
նութիւն ունինք այս խուժանը ճամբու գնելու եւ տասր համար նըս-
տած ենք այս զիրքերուն մէջ :

— Աճապարեցէ՛ք , թշնամին զիրքերը կը լեցուի , — սաստեց
բարձրահասակ եւ գեղանի Չինոն , որ հրացանները կը լեցնէր . —
խօսելու ժամանակ չէ :

— Կեցցե՛ն այս կիները , մարակի նման միշտ կը շառաչեն մեր
ուսերուն վրայ , երբ կը գանդաղինք , — Ըսաւ Օսէն :

— Հա՛յ հա՛յ , — աւելցուց Չորոն , — զիրքերու մէջ խկական
վարիչները կիներն են , որոնք շատ անգամ անուշաղբիւրները կ'ապառ-
կեն , ի դուր զնդակ նետագները կը յանդիմանեն , վերաւորներու վէր-
քերը կը կապեն եւ ինկողներու զէնքերը վերցնելով կոխը կը շարու-
նակեն . . . Քի՛չ գործ կը տեսնեն միթէ Խութէն ու Խաթէն , Ռեհան ու
Սառէն , Անդին ու Ռոմէն , որ զիրք կը մանեն , կուռող ոյժերը կը
զոզան , վախնալով գիտողութենէ՛ մը կամ յանդիմանութենէ՛ մը :

— Տակաւին չէք զիտեր , որ կիները ձեզմէ վար չեն մնար , —

ըսաւ Չինոն, — կիները նոյնքան իրաւունք ունին աշխատելու, որքան
այրերը, եւ եթէ այրերը թուլանան կամ տատանին, կիները իրաւունք
ունին ապաստանելու, ինչպէս ըրին Անգլին, Քնքուշ եւ ուրիշներ, նոյնիսկ
չինասեցին իրենց ամուսիններուն: Վարդէն այնպէս մը շարտեց իր
ամուսինը դիրքէն դուրս, որ քիթ ու բերնին դնաց: Կոխի տաք ժա-
մանակ՝ թշնամին կ'աշխատի դիրք մտնել: փամփուշտ մը թուր է
ձեռքէն, փամփուշտ կը փնտռէ դիրքին մէջ եւ հրացանը չ'աշխատեցը-
ներ: կարծես վերջէն շի կրնար այդ փամփուշտը փնտռել, հրացանը
կ'առնէ ձեռքէն եւ ինքը կը սկսի կատարածի նման աշխատեցնել:

— Կեցցե՛ն կիները, — աղաղակեց Օսէն:

— Անշուշտ կեցցեն կիները, — ըսաւ Չինոն, — էդ վագրերը
աւելի կատարի են:

Նոյն կատարի կոխը Իշխանագունի դիրքերուն վրայ, ուր Իշ-
խանագունի եւ Ասպետեանի ոյժերը, առնականորէն կուրծք կու տան
թշնամիի գրոհներուն. Ստեփոն, Իսրոն, Սղամ, Շուշան, Սորէն ու
Քոթան, Գեղաշէնի Սարգիս, Շուշնամերկի Աւէն, Գարոյ, Պետրոս,
Սրբեանն Մուրոն կ'աշխատին իրար դերագանցել. Իշխանագուն եւ
Ասպետեան պաղարիւնութիւն կը յանձնարարեն: Տալաղարի դիժը
կը թնդայ ու կը կոտորուի. թշնամիի գինուորական ոյժը կը յառա-
ջանայ ու կ'ընկրկի, նորէն կը յառաջանայ ու նորէն կ'ընկրկի: Երկու
կողմէն ալ զոհերու թիւը երթալով կ'աճի...:

— Է՛յ, — պոռաց Կեալպոյտան Միսաք, — փոթորիկ կը փըն-
տրենք որ մըրիկ ցանենք. ու ահա կը ցանենք: Իւրաքանչիւր դիակ
որ կ'իյնայ, մեր գնդակի հունձքն է:

— Տաքցուցէ՛ք կոխը, — ձայն տուաւ Գարոյ Պետրոս, — կը-
ոխը որքան տաքնայ, այնքան հաճելի է: Այդպէս տղամարդու հար-
ուած տուէ՛ք որ թող թշնամին չճմի...:

— Տո՛յ Սարգիս, Սարգի՛ս, — բղաւեց Շուշնամերկի Աւէն.
Ի՞նչ կ'ընես. թշնամին կ'աշխատի դիրքերը մտնել:

— Հոգ մի ըներ, — ըսաւ Սարգիս պաղարիւն թոնով մը: —
Մինչեւ թշնամին դիրք մտնէ, մեր գնդակը արդէն իր կուրծքը մտած
կ'ըլլայ:

— Այս սարսափելի որոտումի եւ ազմուկի մէջ՝ մարդ կը խեն-
թանայ, — ըսաւ Արշակ քրտինքը սրբելով:

— Ի հարկէ կոխը այդպէս է, — սրտատախանեց Արտաշ. —

պէտք է դիմանայ: Շատերը ատկէ հաճոյք կ'առնեն: Չե՞ս լսեր Սո-
րէնի մոնչիւնը: Գարոյ Պետրոսի ձայնը աշխարհ է բռներ:

— Բնաւորութեան խնդիր է, Արտա՛շ. անձայն աշխատիլ աւե-
լի լաւ է քան ազմուկ հանելը:

— Ազմուկը թէ՛ եռանդը կը բազմապատկէ եւ թէ՛ կը վարա-
կէ...: Մեր թշնամին այսօր կատար է: Բլուրներէն կը բարձրանայ.
երբ կ'ընկրկի, բլուրներու արանքներէն կը հասի, ու նորէն կ'ընկրկի:
Փա՛ռք մեր զէնքին...:

— Իսկ սա հեծելազօրքին խաղերը չե՞ս ըսեր. անգամ մը կեղ-
րոնի դիժերուն վրայ գրոհ կու տայ, յետոյ փոխն ի փոխ աջ ու ձախ
թեւերուն, սրկէսղի քաշէ մեր ուշադրութիւնը, եւ հետեւակազօրքը
առիթէն օդտուելով մտնէ մեր դիրքերուն մէջ:

Կարշիկի գծիմ վրայ Արծրունին ապաստի նման կանգնած է:
Թորդոմեանի ոյժերը մեծ խանդավառութիւն առաջ բերին. կուրծ-
քարդ հաճոյք մըն է գարձեր իրենց համար, եւ կ'երգեն ու կը կըր-
ուին: Բէուֆ կատարութենէն ինքզինք կ'ուտէ. յարձակման ալիք-
ները կը բղկաուին ու կը քշուին լեռնամուտերէն ու ձորերէն վար-
բայց յարձակումը կը շարունակուի: Վիկտորիան եւ Օրիորդ Արծ-
րունին հրացանի որոտին կը միացնեն «Բամբ որոտան»ի հրաշունչ ե-
ղանակը: Օղիտան լարուած ուշադրութեամբ կը քողէ... Կեալիեսանի
ձորը Ստեփոյի եւ Փուրթոյի մոնչիւնը կ'արձագանդէ. Մաթոն, Մար-
տոն, Սունոն, Քենկոն արծիւի նայուածքով թշնամիի շարժումները
կը դիտեն ու կը ծեծեն: Թորդոմեանի ոյժերը անհանգիստ են, դիր-
քերը կը ճնշեն դիրենք, նեղ կու գան, կ'ուզեն հակադարձակման անց-
նիլ, բայց Թորդոմեան եւ Արծրունի կը սաստեն ըսելով. «Պահեցէ՛ք
ձեր արիութիւնը. ծանր օրեր ունինք...»:

— Է՛հ թշնամին այսօր արիութիւն կը խաղայ, — կ'ըսէ Սա-
նոյ:

— Լա՛ւ է, լաւ. մենք կ'ախորժինք արիութիւն ցոյց տուալ
թշնամիէն, — կ'ըսեն աջէն ու ձախէն:

— Այո՛, այո՛, տղամարդու նման կու դայ, բայց նապաստակի
նման կը փախչի, — ըսաւ Քենկոն:

— Բայց նորէն պիտի դայ, — աւելցուց Սանոն:

— Եւ նորէն պիտի փախչի, — կրկնեց Քենկոն:

— Է՛հ յետո՛յ, — խնդալով հարցուց Մաթոն:

— Յետոյ պիտի ըլլայ, ինչ որ պիտի ըլլայ...:

— Համազա՛րկ, — լսուեցաւ Արծրունիի ձայնը եւ դիրքերու

ազմուկը խեղդուեցաւ զէնքի սրտոման մէջ: Ուժեղ համազարկէն թշնամին ընկրկեցաւ զէպի ետ, ու ամբողջ գիրքերը ինքնաբերաբար խանդավառուած՝ «կեցցէ՛ Արծրունին» պոռագին: Վիկտորիան եւ Օրիորդ Արծրունին սուր ու ասպարի պարը պարեցին, Ստեփան եւ Փուրթոն՝ կռիւի պարը, որուն մասնակցեցան եւ թորդամեանի ոյժերը: Իսկ նշանաւոր Մաթոն սիկար կը ծխէ: Մարտոն կը սուշէ: Սանն գայլի աչքերով կը նայի նահանջող թշնամիին, իսկ Քենկոն կը հայհոյէ ու կը թքնէ անոնց ետեւէն...:

Կեփիմի գիծիմ վրայ Իշխանեան եւ իր կտրիճները արևն-քըր-աինք մտած են թշնամիի խուժանը կեցնելու համար. Վրէժեանի ոյժերը մեծ գործ տեսան եւ ամբացուցին իրենց գիրքերը, որ թնդանօթի սուժերէն քանդուած էին: Տիկին Ռեպուշ, Աջոն եւ Անթառամ պտոյտներ կը կատարեն գիրքերուն մէջ եւ կը քաջալերեն կուռող ոյժերը: Սաղաւնայ թագոն իր գեղեցիկ ձայնով — որ ատեն մը Սուրբ Յովհաննու վանքի կամարները կը թնդացնէր — «Գոռաց սրտաց...» կ'երգէ: Հեղինի Սանդրոն, Փարկիի Գէորդ, Գեղերվանքի Սամսոն՝ փափուրի կը պարեն:

Զիտ պէկ ջարդուած ու քշուած է. չի կրնար հեռուակազորքն ու հեծելազորքը հաւաքել նոր գրոհի մը համար:

- Է՛հ, — կը պոռայ Սանդրոն, — աղաներն ու պէկերը կ'ուզենք, թող հոս գան ազամարդութիւն եւ հպարտութիւն ծախեն...:
- Զարժեր դրազիլ այդ շուներով, — բաւ Գէորդ. — պարը շարունակեցէք, մենք հոս ենք. այ կ'ուզէ, կրնայ մեզ հոս գանել...:

Կապլորի գիծիմ վրայ կռիւները իրենց սաստկութեան հասած են: Մեհմէտ Ալի փաշայի հեծելազորքն ու հեռուակազորքը շարունակական յարձակումներու գնով՝ գիրքեր կ'ուզեն մանել: Սոսիսոսունիի ոյժերը ծանր կացութեան մէջ կը գիմարեն. Աւոն եւ Ջուսոն, Մուրաան ու Զեքոն, Էյոն ու Սազոն կրանիթէ գիմարութիւն ցոյց կու տան:

- Նայեցէ՛ք, սա քիւրաի լամուկներուն, — կը պոռայ Մուրաար. — սասկած Հասան պէյի եւ Մասրոզ պէյի վրէժը կ'ուզեն լուծել. իսկ սա հեռուակազորքը գեո Գոյլի ձորի ցուր կը ծամէ:
- Թող գան, Մուրա'տ. մենք այ իրենց կը սպասենք, որ սասկած աղաներու արեան տուրքը վճարենք: Այդ շանորդիք չե՞ն լսել թէ Աւոն ու Ջուսոն ի՞նչպէս կը խնդան իրենց վրայ, — բաւ Զեքոն:

— Հէ՛յ, թորէ՛, ի՞նչ կ'ըսես այս թղթէ հերոսներուն, — ձայն աւաւ Սմբատ:

— Թքէ՛ կը լղեն, — բաւ թորէն. — գնա՛, շան աղայ, Մեհմէտ Ալի փաշային աղ բեր:

- Հը՛, թորէ՛, ի՞նչ կայ, — հարցուց Օհան:
- Ի՞նչ պիտի ըլլայ, Օհան. կա՛մ պիտի ուտենք, կա՛մ պիտի ուտուինք...:

— Ակոսներդ սուր պահէ, թորէ՛. սրբան կրնանք, կ'ուտենք, եւ պէ՛տք է ուտենք...:

— Ա՛յ հա՛յ, ատոր խօսք չի կրնար ըլլալ. այսպէս պէտք է ուտել: Ու բաւ.

- Սմբա՛տ, շուն մըն ալ գնաց աղահանք...:
- Տո՛յ, մէկ հատով ի՞նչ կ'ըլլայ, թորէ՛, բաւ Մելոն. — իրարու ետեւէ պէտք է ճամբու գնենք այս խուժանը, որ կարենանք գլուխ ելլել:

— Ինչո՞ւ. այս շանորդիք դժո՞ւմ են որ իրարու ետեւէ կը դըլորցնէք, — խնդալով բաւ Սմբատ. — անոնց բազուկներն ալ կը գործեն: Կը տեսնէ՞ք, ո՛չ միայն գէնք կ'աշխատցնեն, այլ եւ թնդանօթ եւ գնդացիք: Ախ թէ մենք ալ ունենայինք, ի՞նչպէս պիտի չոգիացնէինք այս ջուրը:

— Տղա՛յ Ջուսոյ, — ձայն տուաւ Աւոն: — Այսօր մեր թշնամին միտքը դրած է շահանջել. բարին ըլլայ...:

— Այդպէս կ'երեւի, — բաւ Ջուսոն. — եթէ ինքը շահանջէ, մենք երբեք պիտի չնահանջենք, արդէն նահանջելու տեղ ալ չունինք:

- Է՛հ վե՞րջը...:
- Վե՞րջը, կա՛մ պիտի ուտէ, կա՛մ պիտի ուտուի եւ կա՛մ պիտի նահանջէ եւ ձեռուած շունի նման փախչի...:
- Վա՛հ, — ճշայ Աւոն զայրացած, բարձրանալով ծունկերուն վրայ: — Պիտի ուտէ մեզ... տուէ՛ք համազարկի, տեսնենք թէ ի՞նչպէս պիտի շահանջէ:

Ու մտնչիւն ինկաւ Ջուսոն. «Տղանե՛ր, ձե՛զ տեսնեմ. ամօ՛թ մեզի, որ թուրքի ու Քիւրաի լսկոսներ կը համարձակին մեր գիրքերու վրայ քայել եւ գէնք արձակել: Վա՛յ, վա՛յ, վա՛յ Ջուսոն եմ, գիւղեր հրդեհող, գունդեր ցրուող, Ջուսոն եմ: Մեհմէ՛տ Ալի, Մեհմէ՛տ Ալի, քու մէկը...: Դո՛ւն եկուր, դո՛ւն. ի՞նչ ես քէր այս ջուրը մահուան գնդակին սոջեւ: Ասոնք անարժան են Ջուսոյի գընդակին:

— Ջուռո՛յ, Ջուռո՛յ, աչքդ լս՛յս. օգնական ոյժ եկաւ մեզի
Ակերոնէն:

— Հը՞, օգնական ո՞յժ. ի՞նչ կ'ըսես:

— Այո՛, օգնական ոյժ. Արամեանի ոյժերը:

— Չրսե՞ս, առյ, չրսե՞ս, — խանդավառուած բղաւեց Ջու-
ռոն. — առ՛յ ի՞նչ ուսումնական մարդ ես. չերզե՞ս «Գէ՛հ, զարկէ՛ք,
զարկէ՛ք...»:

— Ի՞նչպէս չէ, ի՞նչպէս չէ, — ըսաւ Սմբատ ոգևորուած, ոյժ
տուաւ հրացանին եւ սկսաւ «Գէ՛հ զարկէ՛ք, զարկէ՛ք»ը երգել: Արամ-
եանի ոյժերը կատարած դայլերու նման համադարկ բացին խուժող հե-
ծելագորքի եւ հետեւակաղորքի վրայ, որ չչժամ կորուստներու ծան-
րութեան տակ, հարկադրուեցան նահանջել...:

Տարկոշեան գիծին վրայ՝ Աղատեանի, Գէորգի եւ Աստեղեանի
ոյժերը արիութեամբ կուրծք կու տան թշնամիի յարձակումներուն:
Թաթարն ու Ծարէն, Մքոն ու Թեմոն, Թաղոն ու Մանոն, Խաչոն ու
Շերոն, ոյժ առած Աստեղեանի ոյժերէն, այնպէս մը կը մոնչեն, որ
քարերն անգամ կը թռին: Հերանոյշն ու Գեղանոյշը թէ՛ կ'երգեն,
թէ՛ կը կուռին: Աստեղեանի ոյժերը չեն զսպուիր: Յարձակման կ'ու-
ղեն անցնիլ. «Բեսիմ պէ՛յ կատարած առաջ կը քչէ հեծելագորքն ու հե-
տեւակաղորքը եւ կը ջղայնանայ որ գոյամարտի ոյժերու դիմադրու-
թիւնը երթալով կ'աճի, փոխանակ նուազելու:

— Թաթա՛ր, ի՞նչպէս ես, — հարցուց Աւզէի Աղամ:

— Ի՞նչպէս եմ. առ՛յ Աղամ, էղկարտի քարերը ի՞նչպէս են:

— Էղկարտի քարերը ամուր են, Թաթա՛ր, — պատասխանեց
Աղամ խնդալով:

— Հա՞, ճիշդ ես, ա՛յդ քարերու նման եմ:

— Լա՛ւ, շա՛տ լաւ. իսկ Ծարէն ի՞նչպէս է:

— Առիւծի՛ պէս:

— Տո՛յ, ի՞նչ առիւծի պէս. Աստեղեանի ոյժերը եթէ հասած
չըլլային, այդ շուները մեզ դայլերու նման պիտի գղէին, — ըսաւ
Մքոն խնդալով:

— Այո՛, — աւելցուց Յարէթը, — Աստուած պահէ Աստեղեա-
նը եւ իր ոյժերը. եթէ հասած չըլլային, անպատճառ աղահանքի ճա-
նապարհը բռնած կ'ըլլայինք...:

— Լա՛ւ... բայց այս աւանակներու կարաւանները ի՞նչ բանի
համար են, որ մենք աղահանքի ճանապարհը բռնենք, — մէջ մտաւ
Մեծքիթ Մանէն:

— Կարգը մեզի ալ պիտի դայ, այդ մասին անհոգ եղէք, — ը-
սաւ Թեմոն. — Թող անգամ մը մեր գէնքը չգործէ. տեսէք թէ ի՞նչ
պիտի պատահի...:

— Ի՞նչ կ'ուզէ, թող պատահի, — զրուցեց Մքոն. — Այլ ու
Շաքիր աղաներ շանստակ եղան. քիւրա հեծելագորքը վրէժ ուղեց
լուծել, բայց քիթը ջարդուած փախաւ. Բեսիմ նորէն խայտառակ-
ուեցաւ եւ չի դիտեր թէ ի՞նչ զեկուցում տայ իր կառավարութեան:
Կեցցէ՛ հայկական գէնքը, — ու բոլորը խանդավառուած սկսան եր-
գել:

— Սո՛ւր ու ասպար, սո՛ւր ու ասպար, — պոռագին Խաչոն ու
Շերոն եւ ելան մէջտեղ. իսկ Աստեղեանի ոյժերը կուրի պարը կը
սարեն. Վարդէն ու Սանամ թելխաղ կը խաղան. Հերանոյշ եւ Գե-
ղանոյշ ծափ կը զարնեն. Գէորգ լուռ նստած կը մտածէ. Աղատեան
եւ Ասպետեան նոր յարձակում մը դիմադրուելու հնարաւորութիւն-
ները կը քննեն...:

Այսպէս, բոլոր դիժերուն վրայ յարձակումները կը շարունակ-
ուին: Գոյամարտի ոյժերը մեծ դիմադրութիւն ցոյց կու տան, բայց
հեղահեղ կը սպառին. թշնամին թէեւ կ'ընկրկի ու կը նահանջէ,
բայց շարունակ նոր ոյժեր կը ստանայ, ու յարձակումները կը կըրկ-
նուին, եւ այսպէս օրե՛ր... Թշնամին իր կորուստները կը դարձանէ,
բայց Գոյամարտի ոյժերը իրենց կորուստները չեն կրնար դարձանել
ու իրենց ոյժերը սպառելու վրայ են: Արդէն թշնամիի ուշադրութե-
նէն չի վրիպիր այդ պարազան. պիտի սկսի նոր ոյժերով յարձակու-
մը սաստկացնել՝ վերջնական հարուածը տալու համար:

Ֆեւրի փաշան ջղայնացեր է...

— Ի դո՛ւր կը ջղայնանաք, փաշա՛ էֆենտի, — ըսաւ ձեւտէթ
պէյ: — Դուք կը կարծէիք որ յարձակման առաջին օրն իսկ պիտի
վերջանար Լեռնաշխարհի դործը. բայց օրեր անցան, յարձակումը
թէեւ կը շարունակուի, սակայն մենք տեղքայլ կ'ընենք: Հող չէ.
կրնայ այս վիճակը դեռ տեսել. բայց վերջ ի վերջոյ իր վախճանին
պիտի երթայ:

— Այո՛, բայց դիս կը ջղայնացնէ այս յամառ դիմադրութիւ-
նը, զոր չենք կրնար խորտակել այսքան ոյժով: Գործը, ճիշդ է, իր
վախճանին պիտի երթայ, բայց ո՛չ թէ պիտի երթայ մեր ոյժով,

այլ պարզապէս թշնամիի զինական միջոցներու սպառումին հետեւանքով: Հետեւաբար, ի՞նչ արժեց մեր այսքան կորուստը: Եթէ ասոնք ունենային մեր զինական միջոցները, մենք կորսուած էինք. կարճես պողպատէ ձուլուած են, իւրաքանչիւրը մէկ-մէկ ապաւաժ է: Այս շարունակական գրոհներով չկրցանք իրենց տեղէն շարժել: Գնդակն անպամ չի համարձակիր մօտենալ իրենց: Իսկ մերոնք տեղեւներու նման կը թափին...:

Ճեւտէթ.— Հոգ չէ, փաշա՛ էֆենտի. այս օրերու յարձակումներու հետեւանքով անոնք գրեթէ սպառեցին իրենց զինական ուժերը: Ճիշդ է, մենք ալ ունեցանք մեծ կորուստներ: Յառաջիկայ յարձակումները, որ աւելի խիստ պիտի ըլլան, պիտի մաքրեն այդ հաշիւը...:

Ֆելզի.— Բոլոր գիծերու վրայ ալ նոյն կատաղի եւ յամառ գիմադրութիւնը: Նիազի պէ՛յ շուարած է. բաւական կորուստներ ունի: Բէնֆ վիրաւորուեք է: Իր յարձակումները կատաղի կերպով փչրուեք են: Ձիա պէ՛յ նոյնպէս, որեւէ յաջողութիւն ձեռք չէ բերած: Մեհմէտ Ալի փաշան նորէն ծանր կորուստներու ենթարկուած է Այծեամներու բլուրին վրայ՝ պաշարուելով: Բեսիմ հաղիւ կրցած է իր ուժերը բնաջնջուած արատել նահանջելով: Մենք, ճի՛շդ է, տեղքայլ կ'ընենք. բայց մեր կորուստներն ալ շատ են: Անշուշտ թշնամին ալ իր կորուստները ունի. բայց այս արտակարգ գիմադրութիւնը ե՞րբ պիտի խորտակուի...: Արդեօք թշնամին որեւէ տեղէ օգնական ուժ կը ստանա՞յ...:

Ճեւտէթ.— Օգնական ո՞ւժ. ո՞ւրիկէ պիտի ստանայ, փաշա՛ էֆենտի: Պահեստի ուժերն է որ կը սպառէ:

Ֆելզի.— Չարմանալի՛ բան. ի՛նչքան ուժ պէտք է ունենայ, որ այսքան յամառ եւ ուժեղ գիմադրութիւն ցոյց կու տայ: Երկինքէն օգնական ուժե՞ր կ'իջնեն, թէ երկրի ընդերքներէն կ'ելլեն:

Ճեւտէթ.— Երկար չի տեւեր, փաշա՛ էֆենտի, այդ գիմադրութիւնը կը խորտակուի... Մենք նոյն թափով շարունակելու ենք յարձակումը, առանց ընկրկելու կորուստներու առջեւ. մնացածը ինքնին կու դայ...:

Ֆելզի.— Անշուշտ յարձակումը պիտի շարունակուի, բայց քիչ կորուստներով նպատակին հասնիլ աւելի լաւ է...:

Ճեւտէթ.— Ի հարկէ, առանց կորուստի աւելի լաւ է, բայց հնարաւոր չէ:

Ֆելզի.— Ինչէ՞ն կը հետեցնէք, որ սպառելու վրայ է իրենց զինամթերքը, Ճեւտէթ պէ՛յ:

Ճեւտէթ.— Ըստ քաղուած տեղեկութիւններուն՝ յաճախ կը յանձնարարուի զիրքերուն խնայել փամփուշտը, եւ կուսող ուժերը փամփուշտի պակասէն կը տառապին...:

Ֆելզի.— Ուրեմն քանի մը օրէն կարելի է բոլորովին սպառած նկատել իրենց զինամթերքը:

Ճեւտէթ.— Անշո՛ւշտ:

Ֆելզի.— Պէտք է յարձակումներուն աւելի եւս թափ տալ, եւ լարուած վիճակի մէջ պահել զանոնք, որ աւելի շուտ սպառեն իրենց զինամթերքը:

Ճեւտէթ.— Այո՛, փաշա՛ էֆենտի:

Ֆելզի.— Այլ գիծերէն մեզի կը տեղեկացնեն, որ թշնամին տըկարութեան նշաններ ցոյց կու տայ. քանի մը օր յետոյ կ'իմացնէին թէ գիմադրութիւնը նոր թափ մը կը ստանայ: Այդ պատճառաւ է որ պահեստի ուժերնին շարժման մէջ նետեր են:

Ճեւտէթ.— Այո՛, եւ այդ պահեստի ուժերն ալ մեծ բան մը չեն: Անմիջապէս պէտք է տեղեկացնել ճակատներու հրամանատարութեանց, որ թշնամին յուսահատական գրութեան մէջ է, իր գիմադրական միջոցները սպառած են. պէտք է յարձակումը աւելի մեծ թափով շարունակուի ճակատներուն վրայ: Արդէն գործը իր վախճանին կ'երթայ քանի մը օրէն:

Ֆելզի.— Կը կարծէ՞ք որ քանի մը օրէն վերջանայ:

— Այո՛, քանի մը օրէն պիտի վերջանայ, եւ այս ժողովուրդը որ այնքան հերոսաբար կը կուռի, անխնայ պիտի կոտորուի մերոնց կողմէ, չեմ գիտեր թէ ինչո՛ւ...:

Ֆելզի.— Չէք գիտեր թէ ինչո՛ւ. ի՞նչպէս թէ չէք գիտեր...:

Ճեւտէթ.— Չե՛մ գիտեր...:

— Չէ՞ք գիտեր, որ կառավարութեան հրամանն է բնաջնջել Հայ ժողովուրդը:

— Այո՛, բայց թէ ինչո՛ւ համար է տրուած այդ հրամանը, չե՛մ գիտեր: Գիտեմ որ արժեքաւոր ցեղ մըն է, որուն մահալծիւր տալ մեզմէ վեր է. մենք ոչինչով բարձր ենք անոնցմէ. կռիւներու այս ընթացքը ցոյց կու տայ ցեղերու արժէքը: Եթէ վաղը անդթօրէն բղկտուին, ոչ թէ մեր քաջութեան շնորհիւ է, այլ իրենց զինական միջոցներու սպառման հետեւանքով: Եթէ մենք կերանք հայկական բոլոր շրջանները այնքան գիւրութեամբ, մեր քաջութեան շնորհիւ, զողջըրստաթի յողջըրսամետան, զողջըրսեղզզ մզք յոտ մզք:

Ֆելզի.— Ճեւտէթ, մի՛ յուզուիր: Արդեօք գիտե՞ս թէ ի՛նչ կը խօսիս:

ձեւակէթ. — Գիտեմ թէ ինչ որ կը կատարուի վատ է. վա՛տ է եւ անոնց համար, որ զո՛հ պիտի երթան մեր վատութեան. վա՛տ է եւ մեզի համար, որ իրապէս վատ ենք ու անարի... :

Ֆեւզի. — ձեւակէթ, չափաւորէ՛ ինքզինքդ. կը վախնամ որ անհաւասարակչութեան երթաս :

ձեւակէթ. — Փաշա՛ կֆենտի, ո՛ւր է մնացեր հաւասարակչու- թիւն, եւ այն ինչ որ կը կատարուի մեր շուրջը, արդեօք հաւասարակչուած մտքի գո՞րծ է... :

Ֆեւզի. — Չխօսինք այդ մասին. մենք չենք կրնար փոխել կա- ցութիւնը, բայց այս վիճակը պէտք է վերջ գտնէ :

ձեւակէթ. — Ես ալ կ'ուզեմ որ շուտ վերջանայ, որովհետեւ չեմ ուզեր աւելի տառապին այս մարդիկը, որոնց մահափճիւրը արուած է անիրաւ տեղ... Ասոնք արժանի են յարգանքի. ասոնք մարդ են : Ար- համարհանքն ու շարչարանքը վատերու համար է... :

Ֆեւզի. — Պատերազմական գործողութիւններու մէջ նպատակն է կարեւոր. միտք, խիղճ, գիտակցութիւն, ինչ որ մարդկային է, կը լռեն... Հոս մենք նպատակը կը հետապնդենք, այսինքն՝ Լեոնաշ- խարհը փճացնել՝ որքան կարելի է շուտ : Այս խնդրի մէջ մենք հա- մամիտ ենք. մնացածը այսօրուան չի վերաբերիր... :

ձեւակէթ. — Յարձակման թա՛փ պէտք է տալ, եւ խնդիրը կը վերջանայ, արդէն շարունակ օգնական ոյժեր կը հասնին, ինչ որ կը նշանակէ թէ կառավարութիւնը կ'ուզէ Լեոնաշխարհի հաշիւը շուտ կարգադրել, ինչ դնով ալ ըլլայ : Հաւանաբար արտաքին ճակատներու վրայ ճնշումը ուժեղ է, որ կառավարութիւնը կ'աշխատի ներքին ճա- կատը շուտ հաշուեյարգարի ենթարկել :

Ֆեւզի. — Կը կարծէ՞ք որ դուքսէն կրնայ ասոնց օգնութիւն գալ. հաւանաբար բմբոստ ոյժերը այն յոյսը ունենան, որ պէտք է դիմանան : Արտաքին ոյժերը անպատճառ օգնութեան կը փութան՝ ըլլայ այդ ուստական թէ հայկական... :

ձեւակէթ. — Կրնան անոնք այդ յոյսը ունենալ, բայց դժուար է, որովհետեւ ուստական ոյժերը շատ ալ նպատակ չունին Լեոնաշ- խարհը փրկել : Իսկ հայկական ոյժերը ազատ չեն ինքնազուլուի գոր- ծելու : Եթէ նոյնիսկ ինքնազուլուի գործելու ալ անցնին, դժուար է արտասահմանէն միջնու Լեոնաշխարհ հասնիլ : Ինչպէս մեր կառա- վարութիւնը Հայաստան կ'ուզէ առանց Հայերու, այդպէս ալ ուս- տական կառավարութիւնը կը ցանկայ «Հայաստան առանց Հայերու» : Ռուսն ու Թուրքը հակառակ որ իրարու թշնամի են, այդ կէտին մէջ իրարու համաձայն են, որովհետեւ երկուքն ալ իրար կ'արժեն : Թե-

բեւ մեր այսօրուան աշխատանքը ի հաշիւ Ռուսիոյ է... :

Ֆեւզի. — ձեւակէթ պէ՛յ, այդքան խորը իջնելու ոչ պատճառ ունինք եւ ոչ ալ հնարաւորութիւն : Հրամանը պիտի գործադրուի. յետոյ ի՞նչ կ'ըլլայ, թող ըլլայ, զիս չի հետաքրքրեր :

ձեւակէթ. — Արդէն հրամանը պիտի գործադրուի. իսկ յետոյ ինչ որ ըլլայ, մեր կամքէն անկախ պիտի ըլլայ : Մինչեւ հիմա ինչ որ կ'ըլլայ, միթէ մեր կամքովն է որ կ'ըլլայ :

Ֆեւզի. — Չե՞ս ուզեր որ այդ ըլլայ :

— Այո՛, չեմ ուզեր որ այդ ըլլայ :

— Բայց ինչ որ ալ ըլլայ, մեր շահուն համար է :

— Ո՛չ, ինչ որ ալ ըլլայ, մեր վնասին համար է... :

Ֆեւզի. — Չարմանայի մտայնութիւն ունիս, ձեւակէթ, չե՛մ կրնար հասկնալ քեզ. ի՞նչպէս թէ մեր վնասին համար է :

ձեւակէթ. — Փաշա՛ կֆենտի, ութ հարիւր տարուան պետու- թիւն ենք, այդ ութ հարիւր տարուան մեր աշխատանքը եղած է՝ մենք մեզ փճացնել : Մենք փճացուցինք մեզ... այս յամառութիւնն ալ նոյն փճացման շարունակութիւնն է, որ արագ թափով կը տար- ուի... Որո՞ւն հաշուոյն կ'աշխատինք. ի հարկէ ո՛չ մեր, այլ՝ ու- րիշի, ի վնաս մեզի : Ութ հարիւր տարուան մեր աշխատանքէն մենք ի՞նչ շահեցանք՝ կորուստէ գատ : Ո՛ւր են մեր կայսրութեան երկիր- ներն ու ժողովուրդները, եւ ինչո՞ւ երթային մեզմէ այդ ժողովուրդ- ներն ու երկիրները : Ինչո՞ւ աէր չկեցանք այդ երկիրներուն, չչէն- ցուցինք, այլ աւերեցինք, բնակչութիւնը կոտորեցինք եւ վերջն ալ զրկուեցանք թէ՛ ժողովուրդներէն եւ թէ՛ երկիրներէն : Այս նոյն յի- մարութեան շարունակութեամբ է որ կը զրկուինք այսօր այս ժողո- րդուրդէն. վազն ալ այս երկրէն... :

Ֆեւզի. — Այս երկրէն չզրկուելու համար է որ կը կատարուի այն ինչ որ յիմարութիւն կը նկատէք... :

ձեւակէթ. — Երկիրը արդէն մերն է, եւ ժողովուրդն ալ մերն է. ժողովուրդին յարգը չգիտցողը երկրին յարգն ալ չի գիտեր : Երբ- որ մէկը իր ժողովուրդը կը կոտորէ, անշուշտ երկրին ալ կը կոտորէ : Մենք կոտորեցինք մեր ժողովուրդները. կոտորեցինք եւ մեր երկիր- ները : Թէ՛ ժողովուրդները եւ թէ՛ երկիրները գացին մեր ձեռքէն : Հիմա, փաշա՛ կֆենտի, նոյն յիմարութիւնն է որ կը կրկնուի :

Ֆեւզի. — ձեւակէթ, դուք երեւոյթները կը տեսնէք, բայց խորքը չէք կրնար բմբռնել :

ձեւակէթ. — Սորքը, փաշա՛, ի՞նչ կայ : Սորքը եթէ ոչ խայ- տառակութիւնն ու յիմարութիւնը : Սուրի ոյժով տիրապետեցինք

երկիրներու. լաւ, բայց այդ երկիրներուն եւ ժողովուրդներուն տէր-
 չկեցանք, անընդհատ ճնշեցինք, թալլեցինք, կոտորեցինք, կողոպ-
 տեցինք, աւերեցինք, միշտ իբրեւ թշնամի վարուեցանք եւ թշնամի
 նկատեցինք զանոնք: Հետեւանքը այդ յիմարութեան եզաւ այն ինչ
 որ եղաւ... Դուք ինձի ըսէ՛ք, փաշա՛ կֆենտի, քանի՞ տարուան
 կեանք ունին Միացեալ Նահանգները. մօտաւորապէս հարիւր յիսուն՝
 գերութենէ նոր ազատուած, ցեղերու խառնուրդ մը: Ի՞նչ պատահե-
 ցաւ որ այսօր աշխարհի ամենէն քաղաքակիրթ, ամենէն հարուստ եւ
 զարգացած երկիրն է: Ինչո՞ւ թուրքիս, այս հսկայ կայսրութիւնը,
 ունենալով բոլոր հնարաւորութիւնները, — հանքային, բուսական,
 կլիմայական, աշխարհագրական, ջրարաշխական, արտադրական եւ
 մարդկային անապառ ոյժ, — սակայն չկրցաւ քալել անտեսական,
 ճարտարարուեստական, շինարարական, քաղաքակիրթական նոյն ճա-
 նապարհը եւ կատարել այն գործը, ինչ որ Միացեալ Նահանգները
 րին...: Մէկը իր հարիւր յիսուն տարուան մէջ ինչո՞ւ այնքան արագ
 առաջ կ'երթայ, իսկ միւսը իր ութ հարիւր տարուան մէջ ոչի՛նչ կըր-
 ցաւ ընել իբր շինարարական եւ քաղաքակիրթական գործ, այլ միայն
 աւեր, ազէտ եւ քայքայում...: Ինչո՞ւ, փաշա՛ կֆենտի. ո՞ւր է ա-
 տոր գազանիքը, եթէ ոչ մեր յիմարութեան մէջ: Այդ յիմարութիւնը
 ութ հարիւր տարիէ ի վեր կը փորէ մեր կայսրութեան հիմերն ու
 մեր գերեզմանը: Ո՞ւր են երկիրներ եւ ժողովուրդներ. իսկ այս յի-
 մարութիւնը որ դուխ-գործոցն է, տեսնենք թէ ո՞ւր կը տանի մեզ:

Ֆեւզի.— Ճեւտէ՛թ, հետունները չերթանք. չենք կրնար ետ
 դառնալ եւ ոչ ալ դէպքերու ընթացքը փոխել: Հրամայուած է քալել,
 եւ պիտի քալենք:

Ճեւտէ՛թ.— Այո՛, հրամայուած է քալել դէպի անդունդ, եւ
 դէպի անդունդ պիտի քալենք:

Բոլոր գիծերու վրայ յարձակումը կատարի թափով կը շարու-
 նակուի. թշնամին անընդհատ կ'աճի եւ առանց կանգ առնելու կո-
 րուստներու առջեւ, իրարու ետեւէ կը շղթայադերձէ յարձակման ա-
 լիքներ, որոնք մեծ ազմուկներով կը յառաջանան:

— Լեռնաշխարհը յուսահատած է... եւ ուղղամթերքը լրա-
 ցեր է... կռուող ոյժերը կոտորուած են... անձնատուր ըլլալ կ'ա-
 ռաջարկեն... այսօր ամէն ինչ կը վերջանայ... Ապրի՛ն մեր քաջերը,
 կեցցե՛ն մեր կարիճ զինուորները: Աստուծոյ աչքը ձեր վրայ, Մար-

գարէն ձեզ կը պաշտպանէ զնդակէն: Ո՛վ զոհուի, հայրենիքին հա-
 մար, արքայութիւնը պիտի ժառանգէ եւ հոն վարձատրուի... —
 այսպէս կը խրախուսեն հրամանատարներ, սպաներ, աշխրեթապե-
 տեր՝ իրենց ոյժերը եւ զանոնք առաջ կը մղեն:

Իսկ զիրքերու մէջ զոյսամարտի ոյժերը կրանիթէ ապառաժնե-
 րու նման ծանր նստեր են, առանց կարեւորութիւն տալու թշնամիի
 թիւին եւ անոնց պոռչառութիւններուն. զիտեն թէ ի՛նչ պիտի ընեն եւ զի-
 տեն թէ ի՛նչ պիտի ըլլայ... Ու կախը ծանր է, սր աւելի պիտի ծան-
 բանայ եւ երկար տեւէ...:

Ֆեւզին, ձեւակէթն ու Նիտպին իրենց ոյժերը կը քաջալերեն եւ
 կը հրահանակեն զիրքերը շուտ դրաւել՝ առաջնութիւնը շահելու հա-
 մար: Բէնֆ կրակոտ ճառ կը խօսի իր ոյժերուն. Զիան անձնական
 քաջութիւնով կ'ուզէ օրինակ դառնալ զօրքին ու աշխրին: Մեհմէտ
 Ալի փաշան մեծ վարձատրութիւններ կը խոստանայ. Բեսիմ պէյ կը
 սպաննայ մահուան դատապարտել բոլորը անխնայ, եթէ զիրքերը
 քանի մը ժամէն չգրաւուին...:

— Կայսրութեան արժանապատուութիւնը ձգեցիք... մեր զէն-
 քի վարկը կոտորեցիք... մեր տգամարդու պատիւը արատաւորեցիք...
 եւ մեզ խաղալիք դարձուցիք ափ մը ստրուկ Հայերու: Դարերը մեր
 զէնքի յաղթական փառքը կ'երգեն. իսկ դուք մշուշ նետեցիք անոր
 փայլին վրայ... Ի՞նչ պատահեցաւ որ նապատակի վախկոտութիւ-
 նը վարակեր է ձեզ: Յառա՛ջ տեսնեմ...:

— Յառա՛ջ, — կ'աղմկեն բոլորը, — վերջնական գրոհն է, —
 կ'ըսեն իրարու, — առիւծի նման պէտք է մոնչել եւ վազրի սստում-
 ներ ընել, ու ամէն ինչ կը վերջանայ...:

Հեծելազօրք, հետեւակազօրք, խուժան «յառա՛ջ» կ'աղմկեն.
 յարձակումը թափ կ'առնէ:

— Այսօր վերջին օրն է, թշնամին պիտի ոչնչանայ մեր սա-
 քերուն տակ... ամէն ինչ արդէն վերջացած է... — կը գոռան:

— Ա՛յ հա՛յ, ամէն ինչ վերջացած է... — մրթմրթալով ը-
 սաւ Ահմէտը քիթին տակէն. — քայլ մը եւս... համազարկ մը եւս...
 Ու դեռ ի՛նչքան քայլեր եւ համազարկեր պէտք են, որպէսզի վերջա-
 նայ: Չեր մէկըր մեանի. զինուորը կը խարեն, որպէսզի երթայ եւ կո-
 տորուի, անխի՛ղճ անաստուածներ:

— Ահմէ՛տ, — ճայն տուտ Մեհմէտ, — բերանդ գոցէ, մի՛
 խօսիր: Եթէ լսուի, անմիջապէս կը զնդակահարուիս. ինչուդ պէտք
 է, լռէ՛ ու քալէ՛: Ազօթէ՛ որ զնդակ մը քեզի չհանդիպի:

— Տոյ Մեհմէ՛տ, զնդակ մը կը հանդիպի. ազօթքո՞վ կը վրի-

պի... Այս քանի՛ օր է որ շարունակ յարձակումի կ'երթանք: Հա՛ փախան... հա՛ պիտի փախչին. հա՛ անձնատուր պիտի ըլլան. ու մենք է որ կը կատարուինք եւ կը փախչինք: Քեզի բան մը ըսե՞մ. ասանք փախչող պտուղ չեն. այս տեսակ պատուհաս տակաւին տեսած չենք. շանորդիք կարծես հողի չունին... փախը ի՛նչ է, չեն դիտեր: Պողպատը նոյնիսկ եթէ ըլլար գնդակի այս տեղատարափին տակ պիտի հալէր: Իսկ ասանք կ'արհամարհեն մեր թիւն ալ, մեր յարձակումներն ալ եւ մեր գնդակի տեղատարափներն ալ...:

— Է՛յ հէ՛յ, — բացականչեց Հաֆրը, — դուք ալ կը կարծէք որ ձեր ազմուկէն ասանք պիտի փախնան, նահանջեն կամ յանձնուին: Մեզ ճանճի տեղ անգամ չեն գներ. արդէն իրենց ուզածն ալ այն է, որ աւելի մեծ թիւով մօտենանք իրենց, որ աւելի շատ ուտեն մեզմէ...:

— Հապա ինչո՞ւ այս շանորդի հրամանատարներն ու սպաները մեզ կը խրախուսեն. հա՛ վերջացաւ, հա՛ պիտի վերջանայ, յուսահատեր են, սպառեր է իրենց սազմամթերքը, յարձակում մը եւս, արդէն կը փճանան... Եւ յարձակում յարձակումի ետեւէ կը դործուի, բայց ոչ կը վերջանան եւ ոչ ալ կը փճանան, ու մենք է որ կը կատարուինք...:

— Ապո՛ւշ, տակաւին չկրցա՞ր հասկնալ, թէ ինչ որ կը խօսին, սուտ է: Խե՛ղճ Իսմայիլ Չաւուշ, սուտերէն եւ վարձատրութեան խոստումէն գինովցած, սուրբ ձեռքը, տղամարդու նման կը փորձէր քալել... երբ գնդակ մը կերաւ, ճիշ մը արձակեց եւ քիթ ու բերնին գնաց: Որպէս թէ գի՛րք պիտի մանէր...:

— Հապա հարիւրապետ Շերիֆը չէ՞ք ըսեր. հազարապետ կ'ուզէր ըլլալ. «ձեզ տեսնեմ գաւակներս, այսօր փառքի եւ յայթանակի օր մը պիտի ըլլայ մեզի համար». կը պոռար, երբ գնդակէ մը ինկաւ կոնակին վրայ եւ բերանը բաց մնաց:

— Քանի՛, քանի՛ անգամներ, Իպրահիմ շաւուշ սպայ նեճիպը զգուշացուց, որ իրեն մտիկ ընէ, Հասան շաւուշի բախտին չենթարկուելու համար. բայց նեճիպ չյսեց: Ատրճանակով գինուորները առաջ կը մղէր եւ կը ստիպէր որ ի՛նչ գնով ալ ըլլայ, գիրքերը գրաւեն... Բայց գնդակէ մը թաւ գանկը, ու ինքն ալ կաւի նման փրլաւ...:

— Գնդակի առջեւ յոխորտալ չ'ըլլար. Բէուֆն ալ կը յոխորտար, բայց երբ գնդակ մը սրունքը տաղեց, յոխորտանքը չօղխացաւ: Չէր գիտեր ո՞ւր պահել ինքզինք? Իսկ խեղճ գինուորը մտրակի սլոթով կը մղեն գնդակի առջեւ եւ եթէ փորձէ խուսափիլ, նահանջե-

ցիւր ըսելով մահուան պատիժ կու տան:

— Քըլ Բեճէպ փոխանակ հրացանը աշխատցնելու, վախէն խնայարուեր էր. կը պոռար, կը հայհոյէր, չես գիտեր սրո՛ւ, մինչեւ որ գնդակ մը ծնօտը տարաւ...: Իսկ Տուրսունը իրր թէ տղամարդութիւն ցոյց կու տար. անպատճառ միտք ունէր շաւուշ դառնալու, երբ կուրը վերջանար: Բայց տակաւին կուրը չվերջացած, փորոտիքները դուրս թափուեցան...:

— Տղանե՛ր, Չոփուր Աթըֆը կատուեր էր: Քիչի շրջանը քար քարի վրայ չթողուց: Աթըֆ պէ՛յ էր գարձեր. կարծեց հոս ալ նոյն խաղը պիտի խաղար, բայց լղբած հաւու նման ինկաւ:

— Հո՛, հո՛յ, դուք Տէլի Հիւսէյնը հարցուցէք. Բալուի շրջանը ի՛նչ գաղանթութիւններ ըրաւ, ամբողջ ժողովուրդ մը կերաւ գայլի ախորժակով: Նոյն ախորժակով հոս եկաւ, բայց ախաները փշուրեցան, գնդակ մը սղնայարը ջարդեց եւ շունի նման կաղկանձելով սատկեցաւ...:

— Գող նաֆրը, Հայնէի եւ Լճէի շրջաններուն մէջ Աստուած էր գարձեր. կ'ուզէր հոս ալ իր քաջութիւնը ցուցնել. բայց վախէն կատուի նման կձկուեր էր, սրունքները կը դողային, որովհետեւ գիրքերէն գնդակ կը սուլէր, եւ ինչքան ալ աշխատեցաւ իր խոշոր կովու գլուխը պահել, չկրցաւ փրկել, եւ գզումի մը նման գնաց գնդակի մը հպումէն...:

— Ալի՛, — ըսաւ Մեհմէտ, — նկատե՞ր ես որ թշնամին աւելի ուշադրութիւն կը գարձնէ սպաներուն եւ հեծելազօրքին քան թէ հասարակ գինուորին:

— Այո՛, — պատասխանեց Ալին, — եւ եթէ մենք շատ չժօտենանք գիրքերուն, գրեթէ մեզմով չեն գրադիր. աւելի շատ իրենց հարուածը սպաներուն եւ հեծելազօրքին ուղղուած է, եւ ատոր համար հեծելազօրքի եւ սպաներու շատ կարուստներ ունինք:

— Իրաւունք ունին, — մէջ մտաւ Սէրտ. — գիտեն որ մեզ առաջ մղողները հրամանատարներն ու սպաներն են, իսկ քրտական հեծելազօրքի եւ խուժանի հանդէպ գայրոյթով լեցուած են: Անոնք էին որ կատարեցին եւ աւերեցին հայկական բոլոր շրջանները, որոնք անգէն եւ անպաշտպան էին. իսկ կանոնաւոր զօրքը նման ջարդերուն առիթ չէ ունեցեր եւ կամ շատ քիչ է մասնակցեր: Ատոր համար կանոնաւոր զօրքով շատ չեն գրադիր, եթէ չհարկադրենք գիրքեր...:

— Իսկապէս տղամարդ են, — ըսաւ Ալին:

— Ատոր ո՛չ մէկ տարակոյս, — աւելցուց Ահմէտ. — մե՛ղք են այլպիսիները մահուան դատապարտել:

— Ափսո՞ս որ մեզմէ չեն:

— Եթէ մեզմէ ըլլալին, կարելի էր որ մեզի պէս ըլլալին. ասոնք տարբեր արիւնէ են. կրանիթէ սիրտ ունին եւ պողպատէ են ձուլուած:

— Ահմէ՛տ, ի՞նչ է որ կը կատարուի. հեծելագորքը իրար անցեր է. ասա՛ կը նահանջէ, — ըսաւ Սէխա զող ելած:

— Ծիչդ է, անպատճառ ծանր կորուստներ ունի, գլուխը կորսնցուցեր է. տեսէք թէ ի՞նչպէս կը փախչին, ու մէկիկ-մէկիկ կը թափին...: Ծանորդիք Սնուսի, Վարդույի, Ալաշկերտի, Մալազկերտի, Պուլանուխի, Պիթիխի, Չխուրի եւ Մշոյ շրջանները առիւծի խոյանքներով ու դալլի ախորժակով կերան, բայց Լեոնաշխարհի ապառաժներու վրայ փշրուեցան իրենց աղանակները: Է՛հ, շանորդի՛ք, ո՞ր կը փախչիք, ո՞ր. ասա՛ հոս է որ առիւծի նման պէտք է մը որնչէք, — աղանակը կը ճտեղծուի ըսաւ Սէխա:

— Սէխա, այդ շրջաններու մէջ ժողովուրդը անդէն էր. գէնքերն ու երիտասարդութիւնը կառավարութիւնը քաշած էր դաւադրութեամբ. միայն կալին կանայք, որ սարսափէն կու լալին... երախտներ, որ փախէն կը ճշալին, իրենց մայրերուն փէշերէն կախուած: Կալին աղջիկներ, որ եղնիկներու նման կը դողալին, կու լալին ու կը փախչին անյոյս, աջ ու ձախ: Այդ շրջաններու մէջ գընդակ չէր սուլեր ու Ահմոն ու Մամոն, Մհէն ու Խմոն առիւծ էին դարձեր: Հոս, հսկաներ կան ապառաժներու մեծութեամբ ու ծանրութեամբ, որոնք զիրքերը նստած են ու զնդակ կը նետեն...: Ահմոն ու Մամոն, Մհէն ու Խմոն ու մենք ծակ կը փնտռենք գլուխնիս պահելու համար: Պէտք է խոտտոլանիլ որ տղամարդ են, եւ սակայն իրենց միջոցները ահար են...: Եթէ վաղը Լեոնաշխարհը մեռնի, ոչ ոք թող հպարտանայ թէ ես մեռցուցի... Լեոնաշխարհի մահը կու գայ իր զինամթերքի սպառումէն, եւ մեր փրկութիւնը այդ զինամթերքի սպառումին մէջն է...:

— Թեւո՛յ, Թեւո՛յ, Երվէչին նայէ, ի՞նչպէս քիթ ու բերնին գնացեր է. շան տղան կը կարծէ թէ Սնուս, Վարդույ եւ Մշոյ զաշարն է, ուր ձին կը խաղցնէր գիակներուն վրայ:

— Ա՛յ Մհէ, ժամանակն է Երվէչին նայելու. ձին քէ եւ կաշիդ աղատէ... չե՞ս տեսներ թէ ի՞նչքան Երվէչներ ինկան:

— Հը՞, Թեւո՛յ, ի՞նչ կ'ըսես, ինձի կը թուի թէ մենք վախկոտ

ենք. ո՞ր մնաց մեր տղամարդութիւնը...:

— Հիմա ժամանակը չէ այդ մասին խօսելու...:

— Յայանի է որ վատ ենք եւ քաջութիւն չունինք. ո՞ր կրէկուան մեր հպարտութիւնը, եւ ո՞ր այսօրուան մեր խեղճութիւնը:

— Ի՞նչ յիմար-յիմար կը խօսիս. հո՛ն, ուր այնքան մեծ գործ տեսանք, այնքան դժուարութիւններ չկալին մեր առջեւ. կանանց ճիչը, մանուկներու լացը, աղջիկներու աղաչանքը, ծերերու պաղատանքը մեր գործունէութեան չկրցան լուրջ խոչընդոտ հանդիսանալ... Իսկ հո՛ս, երբ անառիկ զիրքերէն զնդակ կը սուլէ, ի հարկէ պիտի մտածենք ի դուր չկորսնցնելու մեր գլուխը:

— Հասկնալի է, ինչ որ բրինք՝ տղամարդութիւն էր. չի մոռցուիր. ո՞ր պիտի ազատինք ասոնց վրէժխնդրութենէն...:

— Ինչո՞ւ այդպէս կը մտածես, կ'երթանք մեր դիւզերը եւ ազալի նման կ'ազրինք: Մինչեւ որ անգամ մըն ալ այդ շրջաններու մէջ Հայեր երեւին, դարեր կ'անցնին...:

— Բայց ո՞ր կը փախչինք. կառավարութիւնը պիտի հարկադրէ նորէն վերադառնալ զնդակին դէմ...:

— Մենք շատ շրջաններ մաքրագործեցինք. այս շրջանն ալ կառավարութիւնը թող մաքրագործէ: Մինչդեռ կառավարութեան նըպատակն է կոխի ծանրութիւնը նետել մեր վրայ եւ աշխրեթական ոյժերը փճացնել... Արդէն մեր ոյժերն են որ ծանր կորուստներու ենթարկուեցան, եւ թշնամիի կրակը աւելի մեր վրայ կ'ուզուէր, քան թէ կառավարական ոյժերուն...:

— Իրաւունք ունին կառավարական ոյժերը. չբրին այն բարբարոսութիւնները, ինչ որ մենք բրինք հայ ազգարնակչութեան գըլխուն. բոլորովին ի դուր տեղ եւ յանուն ի՞նչ բանի, եթէ ոչ յանուն յիմարութեան... Կառավարութիւնը Հայերու բնաջնջումէն ետք, կրնայ վաղը մեր բնաջնջումը հետապնդել՝ նոյնիսկ մեր տուններուն մէջ... եւ ատիկա աղետալի պիտի ըլլայ...:

— Ատիկա կրնայ ըլլալ... եւ մենք սխալ գործեցինք, անդամանելի՛ սխալ...: Մեր գերեզմանը փորեցինք եւ այդպէս ալ պիտի մնանք:

Կոխը երթալով վայրայ բնոյթ կը ստանայ. յարձակումները կը ստատկոնան: Թշնամին կ'ուզէ զիրքերը գրաւել, իսկ գոյամարտի ոյժերը լարուած վիճակի մէջ կեանքի եւ մահուան կոխը կը մղեն...:

յաջողութիւններ ու ձախողութիւններ, փոխն ի փոխ իրարու կը յաջորդեն. գիրքերը ծանր կորուստներու գնով կը մնան:

Վահագնեան իր ամբողջ արիութիւնը մէջտեղն է հաներ. փոթորիկի նման կը դառնայ ու կը դառնայ գիրքերու թիկունքը, եւ ճեղքուած դիրքէ մը յառաջացող թշնամին հարուածելով՝ գիրքերը կը վերակենդանացնէ: Թշնամին յաջողեցաւ Մերկերու գիծէն անցնել Պարպարի հովիտը, բայց ջարդուեցաւ Վահագնեանի սյտերէն: Թըշնամին յաջողեցաւ Կիւլիեանի հովիտէն բարձրանալ Կարչիկի կռուող սյտերու թիկունքը, բայց ինկաւ Վահագնեանի կրակին տակ եւ սչնչացաւ: Թշնամին ջանաց Կեփինի եւ Կապլարի գիծերը շրջափակ պաշարման տակ առնել, բայց նորէն չյաջողեցաւ եւ փճացաւ Վահագնեանի հարուածներուն տակ. սակայն թշնամիի ճնշումը կը սաստկանայ. գիրքերը ծանր կացութեան մէջ են. կռիւը խիստ է: Վիթխարի Անտաքը իր շրջապատովը, կարծես հիմքէն կը շարժի եւ սրտումի ու ծուխի մէջ կը հեւայ...: Ժողովուրդը կ'աղօթէ եւ մեղուաջան աշխատութեամբ գիրքերուն ինչ որ պէտք է, կը հասցնէ: Կանայք աւելին կ'ընեն, քան ինչ որ մարդկային է, օգնելու կռուող սյտերուն: Գիրքերու մէջ են, ե'ւ կը կռուին, ե'ւ կը խրախուսեն: Ծովինար Արծուի ժայռէն, արծուի նայուածքով կը դիտէ շուրջը եւ հրահանգներ կու տայ կանանց խմբակներուն...:

Ահա Մամիկոնեանը, աւելի պաղարիւն եւ աւելի առնական, երթալով կը մեծնայ վտանգին հետ. գիրքերը աչքէ կ'անցնէ. դո՛հ է. դիտէ թէ իր քաջերը այն են, ինչ որ է ինքը, այսինքն՝ վտանգին հետ կը մեծնան...:

— Է՛հ, նոր չէ որ կու գանք պատերազմին դաշտ, եւ նոր չէ որ կանգնած ենք մահուան առջեւ, — մոնչելով կ'ըսէ Վարդանը իր կորիւններուն: — Չե՛ղ տեսնեմ, ի՛մ քաջեր, բրէք ձեր կարելին... , — աչքերը կը շոյան եւ դէմքին վրայ կ'ուրուազծուի ժպիտ մը, որ աւելի բարձր է ե'ւ կեանքէն, ե'ւ մահէն:

— Մենք հոս ենք, եւ պատրաստ կուրծք տալու բոլոր տեսակ վատ խուժաններուն: Եւ եթէ մենք կը սպաննենք այս ջոխիւրը, ա՛յն հաւատքով ու համոզումով է որ վատութիւնը կը սպաննենք այս աշխարհին մէջ, — կը պատասխանէ իր կարիճներէն մէկը:

— Է՛հ, մահը մա՛հ է. օր մը առաջ, կամ օր մը վերջ՝ միեւնո՛յնն է, բայց տղամարդու նման մեռնիլը ամենէն լաւն է, — մոնչելով բաւ յանդուզն Ախոյ. — ահա կանգնած ենք հոս, եւ գիտենք մեր ընկիւթը: Ո՞վ կ'ուզէ՝ թող գայ...:

— Այո՛, աւելցուց Չոլոն, — մենք շատ ենք տեսեր այսպիսի փոթորիկներ, եւ սրբան ալ ուժեղ ըլլան, այնքան աւելի կորով կ'ունենայ տղամարդը:

— Իսկ ի՞նչ կ'ըսես Քիւրտերուն համար, — հարցուց Աբրէն:

— Անոնք հաշուի չեն գար. բոլորովին անպէտք են. զանոնք պատժելը այս երկրին համար բարիք մը պիտի ըլլայ, — պատասխանեց Գուրգէն:

— Միթէ նոյնը չե՞ն նաև Թուրքերը:

— Այո՛, նոյնպէս անարժան են այս երկրին...:

Թուրքերը վատ են եւ անընդունակ լաւ բանի. միայն գիտեն ժողովուրդներու կեանքը թունաւորել եւ շարիք տարածել... Մենք պարտաւոր չենք գողերը, աւազակները, մարդասպանները, սճրագործները եւ անդամալքծները մեր թիկունքին վրայ աղբեցնել, եւ կամ մեր իրաւունքներն ու ժառանգութիւնները անոնց թողուլ...:

— Իսկ ի՞նչ է մնացած այս աշխարհի վրայ:

— Աշխարհը հրդեհի տուղները յիմարներն են, իսկ մնացածները՝ այդ յիմարներու գո՛հերը:

— Տէ՛հ, քաջե՛ր, կտրիճ աշխատեցէք, — ձայն տուաւ Արթին. — Տղա՛ք, ձեր պատիւը բարձր բանեցէք. մի՛ մոռնաք Ծովինարի խօսքը՝ ճակատանիդ միշտ բարձր պէտք է մնայ...:

— Ա՛յ հա՛յ, — ըսին սաղմիկները, — աշխարհի վրայ ոչ մէկ ճակատ պիտի ըլլայ մեր ճակատի նման բարձր, որովհետեւ ոչ մէկ ճակատ մեր ճակատի նման մաքուր է...:

— Այո՛, այո՛, — ըսին աջէն ու ձախէն, — եւ ո՛չ իսկ Աստուծոյ ճակատը, որ այսքան աղէտ եւ աւեր կը տեսնէ եւ սակայն լուռ է...:

— Ի հարկէ լուռ է, — ինզպայ Սարգիս, աւելցնելով. — Տղա՛ք, արդեօք կը մտածէ՞ թէ ի՛նչ կը անօրինէ:

— Մինչեւ աղը հասաւ, մատաղը դնաց. հիմա մենք մեր գործին նայինք. անոր կարգադրութեա՞նք պիտի սպասենք, — ըսաւ Սրգոն ու բղաւեց. — Գնա՛, շանորդի, գնա՛՛ դրախտը վայելէ: Ուղածդ ալ կարծեմ այդ էր...:

— Ի՞նչ է, Սրգոյ, թէ՛ մարդը կը սպաննես, եւ թէ՛ վրան կը խնդաս...:

— Չէ՛ Արո՛յ, չէ. բարի ճանապարհ կը մաղթեմ. գիտես որքան կ'ուրախանամ, ասոնք դրախտ ճամբելով եւ բարի ճանապարհ մաղթելով...:

— Հազա եթէ քե՛զ ճամբեն:

— Անշուշտ պիտի ճամբեն, բայց կը վախնամ որ սրիկաները բարի ճանապարհ չմաղթեն, այդ ինձի մեծ ցաւ մը պիտի ըլլայ:

— Տղա՛ք, չէ՛ք հարցներ. Չայի մեր գիծը ճեղքուեր է. Պետոյանի ոյժերը բաւական կորուստ ունեցեր են. թշնամին յաջողեր է անցնիլ Պարպարի հովիտ, բայց Վահագնեանի ոյժերը ջարդեր են գանոնք, մանաւանդ մեծ գործ աեսեր են Պօղոսն ու Մհոն:

— Ապրի՛ն մեր կտրիճները, սպրի՛ Վահագնեան, որ միշտ անակնկալ կերպով տկար կէտերուն կը հասնի: Օր մը առաջ անոնք փրկեցին մեր Գանիեպաճիի գիրքերը: Թշնամին, որ շուրջառիկ շարժումով մը անցեր էր դիրքերուն ետեւ, ջարդուեցաւ Վահագնեանի կողմէ, բայց զժրատարար այդ կռիւին մէջ մեր Շամամն ալ սպաննուեցաւ, իր անխոհեմութենէն, սուր ու ասպարի յարձակում գործելով. նոյնպէս Ալեանցից Մակարի քանի մը կտրիճները հող կորսնցուցինք, հակառակ Ծարհատեանի, Գասպարտան Թորոյի եւ Շամամի Թորոյի իրաւներուն, որ կը թելադրէին պապարիւն մնայ: Մամիկոնեան իրաւունք ունի բարկանալու, որովհետեւ տաքարիւնութիւնը աւելի շատ մեղի կը մնասէ քան թշնամիին:

— Արո՛յ, այս ի՛նչ մոնչիւն է ինկեր գիրքերը, կը լսե՞ս Վարդանի, Ախոյի, Չոյոյի, Մանուկի, Արթինի ձայները: Թշնամիի յարձակումները իրարու կը յաջորդեն. ծանր օր մըն է: Շանորդիք ընկըրկում ցոյց չեն տար. լեան ու ձորը կարծես կը շարժին. հողն ու քարը կը բզկտուին: Ի՛՛հ չէ՛յ, աշխարհի վերջն է...:

— Սրգո՛յ, գործիդ նայէ. աշխարհի վերջն է թէ սկիզբը, մեղ չի հեռաբբեր: Մեր գործը հիմա կռիւն է. ո՛վ գնդակէ ինկաւ, արգէն իր վերջն է:

— Ըհ՛ր՛, — բրաւ Սրգոյ, — մէկի վերջ եւս...

— Լա՛ւ է, շարունակէ՛:

— Ըհ՛ր՛, ահա մէկ եւս... ա՛յ...:

— Ի՞նչ եղաւ, Սրգո՛յ:

— Եղա՛ւ...:

— Ի՛՛հ, եթէ անոնք չեն բեր՝ երթա՛ս բարի, ես կ'ըսեմ որ սիրտդ չցաւի: Բայց դեռ չուտ էր:

— Ի՛՛հ, բարեւ բրէ Մամիկոնեանին, եթէ գայ, բսէ՛ թող չբարկանայ:

— Լա՛ւ, հանդի՛ստ քնացիր. կրնայ ըլլալ քիչ վերջ ես ալ քրնանամ. այսօրուան ծանրութիւնը երեւի շատերս պիտի քնացնէ...:

— Արո՛յ, քնացուր, բայց զգո՛՛յ չըքնանաս. մնաք բարի...:

Կռիւի փոթորիկը կատաղութեամբ կը մոնչէ Իշխանազունի, Արծրունիի, Իշխանեանի, Խոտխոտունիի եւ Աղատեանի գիծերուն վրայ: Գիծերու հրամանատարները աւելի կարծր ու դաժան են դարձեր. գիրքերու վարիչները աւելի ուժեղ եւ հզօր. իսկ կառուող ոյժերը աւելի ճարպիկ ու ճկուն: Կռիւք իր ծայրագոյն սաստկութեան է հասեր եւ ուժգնութեամբ կը շարունակուի...: Իշխանազունի գիրքերը կը թնդան. թշնամի թնդանօթներու, գնդացիներու եւ հրացաններու համազարկերու սրտէն, փոշիի ամպերը, բզկտուած հողի շերտերը եւ քարերու կտորներու վժժիւնը կը խեղդեն կառուող ոյժերը, որոնք հոյակապ լարուածութեամբ մը կը անքան՝ թշնամիին խութումը կեցնելու: Նիազի պէյ անընդհատ յարձակման հրաման կուտայ: Զինուորական ալիքները կը նօսրանան ու նորէն կը խտանան... հեծելազօրքը կը ցանցառի... ու նորէն կը լեցուի...:

— Ի՛՛հ, — պոռայ Գարոյ Պետրոսը. — աղանե՛ր, կռիւք տաքցեր է, կտրի՛ճ եղէք, չհալիք, ձե՛ղ տեսնեմ, ձեր հրեղէն շունչովը հալեցուցէք այս ջուրը:

— Անշուշտ կ'աշխատինք հալեցնել, — ըսաւ Փոլկետան Միսաք, եւ մաւղչրը շաղ տուաւ: — Արդէն իրար հալեցնելու համար է որ դէմ դէմի եկած ենք:

— Պը՛ռ, — բրաւ Կեարպոյտան Վարդանը, եւ մաղեց տանուցը. — Ասոնք իրենց կարճ խելքով, կը կարծեն թէ մեզ պիտի վախցընեն: Վա՛յ շանորդիք, վա՛յ, երեւի դեռ չճանչցաք մեզ: Հող չէ, կը ճանչնաք կամաց-կամաց:

— Տղա՛ք, ի՞նչ է մուսին ընկեր ձեզի. լեղապատառ ըրիք այս մարգիկը: Արդէն առանց գնդակի կը մեռնին. դոնէ խնայեցէք գընդակին, — ըսաւ Ստեփոյ խնդալով:

— Ստեփո՛յ, Ստեփո՛յ, թող տուր, — ձայնեց Խերէն. արդէն այդ շունները մեռնելու համար կու գան. ձգէ՛ թող մեռցնեն: Ո՞վ ըսաւ իրենց որ գան մահուան գնդակի առջեւ եւ զլորուին:

— Մարգի՛ս, Մարգի՛ս, — կանչեց Շուշնամերկի Աւէն. ի՞նչ կ'ընես. ձայնդ չ'ելլեր. անաչէ՛ն, չհայհոյե՛ս:

— Ժամանակը չէ, Աւէ՛. կը տեսնես զրազած եմ. եկող խութանին հետ հաշիւներ ունինք կարգադրելու: Նայէ այս սպային, որ նախիրը կը քչէ գէպի գիրքերը... Ա՛ռ, շան աղայ, մտից տոմս մը քեզի եւ գնա դրախտ:

— Տո՛յ Սարգիս, մեր գիրքերու մէկ մասը ճեղքուած է՝ կ'ըսեն. թշնամին Զվրնկի ձորէն եւ Բլուրիկի ձորէն անցեր է թիկունքը, բայց հանդիպեր է Վահագնեանի ոյժերուն եւ ջարդուեր: Սակայն

մեզմէ եւ Ասպետեանի ոյժերէն բաւական կորուստ կայ. Արշակն ու Արտաշը սպաննուեր են:

— Ի՞նչ կ'ըսես, Աւէ! Ասպետեանի ոյժերը ճիշդ է որ քաջ են, բայց տաքարիւն են. իրենց տաքարիւնութիւնն է զիրենք սպաննէր. գոնէ մերոնք պէտք էր պաղարիւն ըլլային. ի՞նչպէս է պատահեր:

— Թշնամին լեցուեր է զիրքերը, կուրծք կուրծքի եկած են, սուին ու դաշոյնն է գործեր...:

— Իսկ զիրքերը հիմա ի՞նչ վիճակի մէջ են:

— Դիրքերը մերոնք վերականգնած են. վահագնեանի ոյժերէն մէկ մասը մնացեր է, որ զիրքերը պահեն մինչեւ իրիկուն...:

— Արդէն իրիկունը կը մօտենայ. կտրիճ պէտք է ըլլան. չըլլա՛յ թէ նորէն զիրքերը գրաւուին: Տե՛ս հեծելազօրքն ու հետեւա- կազօրքը կը տարուերին ըլուրներէն ձորեր, ձորերէն՝ ըլուրներ: Համազարկերու տակ կ'առնուի ու նորէն կը ցրուի. շանորդին կար- ծես մտոցեր է նահանջի ճանապարհը: Հաւանաբար մեռնելու քաջու- թիւնն է ներարկուեր այդ շուներուն...:

— Մեր ուզածն ալ այդ է, որ շիախշին մահուան դնգակէն. քաղկէնք որքան կրնանք, որովհետեւ մենք ալ օր մը պիտի քաղուինք եւ մեր հաշիւները պիտի փակուին: Է՛հ, Սղոմի քրքիջը ի՞նչպէս կ'արձագանդէ. ասիկա ամենամեծ արհամարհանքն է դէպի թշնամին եւ դէպի մահը: Հասցա՛ Շուշանը, որ առանց յոգնելու կ'երգէ: Ի՞նչ անսպաս ձայն ունի. իր երգերը եռանդ եւ կորով կու տան ու մահը կը քաղցրացնեն:

— Եւ լաւ է երգելով մեռնիլ, մեր բոլոր զիրքերուն մէջ երգն ու պարը կոխին հետ կը քալեն: Գասպարի տան Շամամ սուր ու աս- պարի պարը կը պարէր եւ յարձակում կը գործէր Գանիեպաճիի աղ- բիւրէն զիրքերը մանող թշնամիին վրայ ու սպաննուեցաւ... Բայց կոխը մեզմացաւ, թշնամին կարծես ընկրկումի նշաններ ցոյց կու տայ:

— Ո՛չ, իրիկուն է, եւ հանդիստի դալարափողն է որ կը հըն- չէ...:

— Լա՛ւ է, մենք եւս հանդիստի պէտք ունինք, պէտք է կաղ- դուրուինք, որպէսզի վաղը պարենք պարերու մեծագոյնը:

Կոբշիկի գիծից վրայ, Արծրունի եւ Թորգոմեան հրեղէն գուն- տի նման կը թաւալին զիրքէ զիրք. զիրքերը կը քանդուին ու նորէն

կը շինուին: Թշնամին ծանր ճնշում կը գործէ եւ զիրքերը նոյնքան ծանր դիմադրութիւն ցոյց կու տան. Վիկտորիան, Օրիորդ Արծրու- նին եւ Օղիտան շիկացած երկաթի կը նմանին: Աւկերձայ Սաեփոն, Քոփայ Փուրթոն, Մաթոն ու Մարտոն, Սարգիսն ու Սանոն, Արշոն, Մելոն, Արոն ու Պօղէն լարուած մեքենաներու կը նմանին. իրենց մոնշիւնը լեռ ու ձոր կը թնդացնեն:

Բէուֆ պէյը կտայեր է. կը հրամայէ սպաներուն եւ աշխրե- թասպետերուն մարակի տակ առաջ քշել հեծելազօրքն ու հետեւա- կազօրքը, իսկ զնոյնցիրային զինուորներուն կը պատուիրէ ի հարկին նահանջող ոյժերը տալ զնոյնցիրներու կրակի...:

Ու յարձակման ալիքներէ կը զարնուին զիրքերու եւ կ'ընկը- կին. — «յառա՛ջ» կը պոռայ Բէուֆը, «յառա՛ջ» կ'աղմկեն սպաներն ու աշխրեթասպետը, եւ երկուստեք, խլացուցիչ աղմուկի ու ժխորի մէջ, կռուող ոյժերը կ'աշխատին իրար զգեանել...:

— Է՛հ, — ձայն տուաւ Մաթոն, — կոխը իր գազաթնակէտին հասած է. ձե՛զ տեսնեմ, քաջե՛ք, ձեր թաքուն ոյժերը երեւան բե- րէք...:

— Յնցեցէ՛ք ինքզինքնիդ, — մոնչեց Սաեփոն, — այս սղտոր հեղեղը պէտք է մաքրուի:

— Վա՛հ, վա՛հ, վա՛հ, մենք տղամարդ ենք, եւ տղամարդու օրն է այսօր, — գոչեց Փուրթոն, — ինչպէս ամպոս օդը դայլին է:

— Այո՛, շիտակ կ'ըսէ Փուրթոն, — մենք նստեր ենք հոս՝ ա- բիութիւն ցոյց տալու: Իսկ այս խաժամուժը, որ ոճիրը ահաաներուն տակ առեր է ու կու գայ, ի՞նչը ցոյց տալու համար է. իր հրէջ զէ՞մ- քը: Թ՛քնեմ այդ դէմքին, — ըսաւ Մարտոն երեսը թթուեցնելով:

— Վատութիւնը ցոյց տալու համար է, Մարտո՛յ, — պատաս- խանեց Սանոն, — եւ վատութիւնը այսպէս կը սպաննենք. ոյժ տը- ւէք համազարկի. թող բզկտուի այս հեղեղը... Ահա՛ այսպէս կը ըս- պաննենք վատութիւնը. կը տեսնե՞ք թէ ինչպէս կ'ընկրկի ու թաւալ- գլոր կ'երթայ...:

Եւ համազարկի որոտէն ու արդիւնքէն, Օրիորդ Արծրունին ողբերուած երգեց «Շարժեն հրեշտակք թեւս լուսափողփող...»:

— Օրիորդ Արծրունիի ձայնն է, Պօղէ՛, — ըսաւ Արշոն եւ եր- կուքը միասին պոռացին. «Կեցցէ՛ Օրիորդ Արծրունին եւ իր ընկերներ Վիկտորիան ու Օղիտան»:

— Կեցցեն՛ մեր քաջերը, — պատասխանեցին անոնք խանդա- վառուած եւ ոյժ տուին համազարկին՝ նահանջող թշնամին զգեանե- լու... Թշնամին թէեւ յամառութիւն կը ցուցնէ, բայց իր յամառու-

Թիւնը պիտի խորտակուի մեր համազարկին տակ, — ըսաւ Վիկտորիան ինքնավստահ շեշտով մը:

— Մի՛ աճապարեք, Վիկտորիա. կը տեսնե՞ս այն մութ զանդուածը, որ կը շարժի. օգնական ոյժ է, որ կը հասնի թշնամիին, — նկատել տուաւ Օդիտան:

— Հոգ չէ, — մէջ մտաւ Օրիորդ Արծրունին՝ քմծիծաղով մը. — անոնք եւս պիտի ծեծուին այս դիրքերուն առջեւ ու... նահանջեն:

Կեփիցի գիծից վրայ՝ Ջիա պէյ իր պարտութեան վրէժը լուծելու համար, խիստ կերպով առաջ կը մղէ հեծելազօրքն ու հետեւակազօրքը, որոնք դիրքերու կատաղի դիմադրութեան առջեւ կ'ընկերկին ու նորէն կը յարձակին:

— Ի՞նչ զնով ալ ըլլայ, դիրքերը այսօր պէտք է դրաւուն. ընկերկուծը ներքի չէ. այս խաղը պէտք է այսօր վերջանայ. բոլոր ճակատները յաջողութեան մէջ են. մեր ճակատի վրայ կռուող մեր ոյժերը իրենց քաջութեամբ վար պէտք չէ մնան միւսներէն: Ձեր արիւթիւնը պիտի վարձատրուի նաև երկրի վրայ, երկինքէն առաջ...:

Այսպէս կը խրախուսէր Ջիան իր ոյժերը:

Եւ բոլորը — հեծելազօրք, հետեւակազօրք, խուժան «յառա՛ջ» կ'աղմկեն, ու ձորերէն, լեռնամուտերէն, պուրակներէն կը թաւալին դէպի դիրքերը՝ ընկրկողներու շարքերը խտացնելու:

— Վա՛հ, — ըսաւ Շերոն բերանարաց, — Համբո՛յ, նայէ՛, կու գա՛ն ու կու գան, անընդհա՛տ կու գան՝ հետեւակ, ձիաւոր, խուժան: Ո՛ւր կ'երթան այս անպիտանները:

— Ձե՞ս գիտեք, Շերո՛յ, թէ ո՛ւր կ'երթան. կու գան մեր հողին առնելու, — պատասխանեց Համբոն ծիծաղելով:

— Պա՛հ, տոյ մեր հողին ո՛րքան սուղ է եղեր, որ ա՛յսքան մարդ շարժման մէջ է դրուած:

— Ի՞նչ կարծեցիր, Շերո՛յ, — բղաւեց Սաղանայ Թազոն, — հերոսի մը հողին առնելու համար հազար մը ջիւնի կարաւան դեռ քիչ է:

— Հը՛մ, հասկցայ, — ըսաւ Շերոն. — տոյ Շերո՛յ, քու մէրը մեանի. մայրդ քեզ ծնած է, որպէսզի այս խուժանը գայ քու հողի՞դ առնէ... Է՛հ Աստուած, նայեցաւ վեր, այս քու հրամանն է... կ'ընդունի՞ս: Ա՛յ հա՛յ, գիտեմ չես ընդունի՞ր... ես ալ չեմ ընդունիր: Ով որ զղջայ, թող անոր մայրը լայ, — թեւերը սոթթեց դիրք մը-

տաւ. — դէ՛հ, թող գան, ու ձեռք նետեց հրացանին, դէ՛հ, թող գան, ես ասոնց մէրը...:

— Հը՛, Շերո՛յ, ի՞նչ ես ջղայնացեր, — հարցուց Սանդրոն:

— Ջղայնացեր է որ եկող խուժանը իր հողին կ'ուզէ. եւ ինք չ'ուզեր տալ, — ըսաւ ձանոն ցնցելով Շերոյի թեւը. — Երեւի տակաւին չես ձանձրացած ապրելէն:

— Տոյ Շերո՛յ, սխալ ես հասկցեր, եկող խուժանը ձանձրացեր է իր կեանքէն. քեզ կը փնտռեն որ իրենց հողին առնես, — գրուեց ֓արկիի Գէորդը՝ ծխախոտ մը հրամցնելով:

— Տոյ Գէո՛րդ, անէ՛ծք իրենց եւ իրենց հողին. ձանձրացայ, ո՛րը առնեմ, ո՛րը թողու՛մ: Տղա՛յ, ի՞նչքան անամօթ են այս սրիկաները: Ասոնց պիղծ գոյութենէն մարդ կը դարձի:

— Գարշիս թէ չգարշիս, ասոնք քու հողին պիտի առնեն, — խօսեցաւ Գեղերվանքի Սամսոն՝ Շարոն ջղայնացնելու մտօք:

— Թող ձեզի չմօտենան. իմ հողին առեր են, փնտս չկայ. ես արդէն շատ ալ գո՛հ չեմ իրմէ...:

— Էղսո՛յ, Էղսո՛յ, — պոռաց Ղուկասը, — ջուր հասցո՛ւր. տղաները ծարաւ են:

— Հա՛ ձեզի մատաղ. կտրի՛ճ աշխատեցէք, տո՛յ, չէ՞ք ամբընար ու կ'ըսէք ծարաւ ենք: Հա՛, հա՛, հա՛, հա՛. այսքան խմելիք արին կայ ձեր առջեւ եւ դեռ կ'ըսէք ծարաւ ենք: Ի՞նչ անկուշտ մարդիկ էք. աշխատեցէ՛ք. Իշխանեան եւ Վրէժեան համազարկ կը պոռան: Ինձի իրաւունք տրուած է, որ ով որ գանդաղ շարժի, պիտի ապտակեմ: Դուք անդամ մը տեսէք թէ Աջոն, Տիկին Ռեզուչը եւ Անթառամը ի՞նչպէս կ'աշխատին. կատաղի վագրերու նման աջ ու ձախ կը բզկտեն. ասոնց հետ գրեթէ չեն կրնար մրցել Հեպիկն ու Կրպիկը եւ Վրէժեանի ոյժերը:

— Վա՛հ, — բղաւեց Սանդրոն. — Էղսո՛յ, ի՞նչ կ'ըսես. ուրեմն մենք կ'ինքերէն վա՛ր կը մնանք...:

— Ի՞նչ կը վերաւորուիս, Սանդրոյ, — ձայնեց Գէորդը. — չե՞ս գիտեր որ էգ գայլերը աւելի կատաղի կ'ըլլան. հող չէ, մեր քոյրերն են, եւ եթէ քոյրը կը դերազանցէ եղբայրը, ատիկա մեծ պատիւ մըն է եղբոր համար, որ նման քոյր ունի:

— Ուրեմն, կեցցեն՛ մեր քոյրերը, — պոռաց Թազոն, — որ մեզի ոյժ ու եռանդ կը ներշնչեն, — եւ սկսաւ «Կուուեցէք տղերք»ը երգել:

— Ապրի՛ս, Թազո՛յ, — վրայ բերաւ Շերոն. — ի՞նչպէս կը զնկլտայ ձայնդ. ահա՛, ահա՛ մատաղ մը ձայնիդ. կը տեսնե՞ս, շունը

ի՛նչպէս կը ճանկուտէ զեախնը...:

— Չե՛ղ տեսնեմ քաջեր, խրախուսեց էղսոն, ծարաւ էիք, ջուր հասցուցինք. քիչ վերջ հացն ալ կու գայ. աշխատեցէ՛ք, մատա՛ղ ըլլամ ձեզի: Բարձր բռնէք ձեր պատիւը...: — ու էղսոն կ'ուզէր ջուր անցընել միւս գիրքերը, երբ գնդակէ մը ինկաւ...:

— Վա՛յ, էղսոն ինկաւ, — ըսաւ Ղուկասը:

— Ի՞նչ, էղսոն ինկա՞ւ, — հարցուց Գէորգը, այլայլած:

— Տո՛յ ես ասոնց մէրը... դեռ կեցած էք, ձայնեց թաղոն. առէ՛ք համազարկի. ափսոս չէ՞ր մեր էղսոն: էղսոն կ'արժէր ասոնց հազարը: Ը՛հր՛, գնա՛, սրիկա՛յ եթէ դու չէիր, անպատճառ քեզի նըման մէկն էր, որ էղսոն գորեց...:

— էղսոն ինկաւ, գուք ողջ մնաք, — ձայնեց Սանդրոն. ի՛նչ հող կ'ընէք: Մենք ալ այդ ճանապարհով կ'երթանք, միայն թէ աշխատեցէք աժան չերթալ...:

— Ինչո՞ւ աժան պիտի երթանք, — բարկացաւ Գէորգը. եկող թշնամին ի՛նչ է: Չէ՞ որ մեր արեան գինն է. պարտաւոր է շատ վըճարել, որպէսզի մեր կեանքը տանք... Բայց, տղա՛ք, փոթորիկ մը կը դառնայ, Վրէժեանի գիրքերուն վրայ. թշնամին կարծես գիրքերն է մտեր:

— Այո՛, սուինաւոր գինուորները իրարու ետեւէ գիրքերը կը լեցունին, — հաստատեց Ղուկասը. — ծանր է կացութիւնը. ըրէ՛ք ինչ որ կրնաք:

— Է՛հ — պոռայ Շերոն, — որպէսզի մեր գէնքը դարձնենք այն կողմ, թշնամին պէտք է վտարենք մեր գիրքերու առջեւէն: Չեղ տեսնեմ, շարժեցէ՛ք ձեռքերնիդ: Ա՛հ այդպէս... ա՛հ այդպէս... սպրի՛ք: Բայց կացութիւնը նոյնպէս ծանր է թէ՛ Կրպիկի, թէ՛ Հեպիկի եւ թէ՛ Ռրպուշի գիրքերուն մէջ: Կսիւր խելայեղօրէն կը փոթորկի... Աստուած օգնէ մեզի...:

— Սանդրո՛յ, Սանդրո՛յ, — ձայնեց Փարկիի Գէորգը. — աւազակներու ձորի բերանը ձեռեցէք: Դիրքերը խուժող զինուորները այդ կողմէն է որ կու գան: Թշնամին լեռնամուտերէն յարձակում է գործեր. Վրէժեանի ոյժերը զբաղած են եղեր անոնցմով եւ անտեսեր են աւազակներու ձորը, ուրկէ յատաջացեր է թշնամին աննկատ եւ յանկարծակի լեցուեր է գիրքերը:

— Է՛հ, տղանե՛ր, ամօ՛թ է մեզի որ թողունք լեցունին գիրքերը, — որոտաց Գեղերփանքի Սամսոնը՝ ոյժ տուած մաւղէրին: — Դեռ չմեռանք. ո՞ւր կ'երթաք, ո՞ւր. շանորդիք կը կարծեն թէ մենք հոս կը քնանանք...:

— Կը քնանա՞նք. ո՞վ ըսաւ թէ կը քնանանք, — ձայն տուաւ թաղոն. — Հոս նստած՝ կատաղի նայուածքով մեր որսին կը սպասենք: Կը քնանա՞նք... քնանալու ժամանակ է, ի՛նչ կ'ըսես, Համրո՛յ:

— Թշնամին այսօր մեր համազարկերուն կարծես կարեւորութիւն չի տար, անպատճառ վճուած է գիրքերը դրաւել:

— Ես իր վճիռը... — ահաաներու տակէն մոլորաց Սանդրոն: — Հաղիւ մեր գիտկներու վրայէն դրաւէ գիրքերը. շարժեցէ՛ք բացուկնիդ, Աստուած մեծ է:

— Այդ ի՛նչ հահելի գոռում-գոչում է ինկեր գիրքերը. որո՞ւ մայրն է կու լայ արդեօք: Չկրցանք մեր գէնքերը դարձնել այն կողմ, մերոնց կացութիւնը անպատճառ շատ ծանր է, այսօր թշնամին շատ կը նեղէ մեզ: Տղա՛ք, Յարդիուների Մլքէն եւ Ընկուզնակայ Սաֆոն ի՛նչ կ'ընեն, — հարցուց Համրոն:

— Անոնց ոյժերը լաւ կ'աշխատին, ամբողջ հեծելազօրքը իրենք կը զբաղեցնեն եւ չեն ձգեր որ անցնին մեր թիկունքը: Բայց Վրէժեանի գիրքերու վրայ կուր շատ ծանր է: Գիրկընդխառն բնոյթ է ստացեր. սուին եւ գաշոյն կը գործեն. իսկ մերոնք աւելի շատ ոյժ կու տան մաւղէրին:

— Տղանե՛ր, թշնամին կ'ընկրկի. ի՛նչ պատահեցաւ. կարծես թէ կը նահանջէ, — ըսաւ Համրոն զարմացած:

— Այո՛, թշնամին կը նահանջէ Վրէժեանի գիրքերէն, — պոռաց Սանդրոն. — անպատճառ Վահագնեանի ոյժերը օգնութեան հասան:

— Ճի՛շդ է, — ազազակեց Սամսոն, — մէկ մասը մեզմէ թող մեր առջեւի ոյժերը զբաղեցնէ, միւս մասը Աւազակներու ձորը թող ձեռէ, որովհետեւ թշնամին այդ ուղղութեամբ կը նահանջէ: Թաղո՛յ, թաղո՛յ, ձայնդ ձգէ, թշնամին վերջապէս կը նահանջէ:

— Այո՛, բայց նախ գիրքերէն լուր մը առնենք, տեսնենք թէ մերոնք ի՛նչ վիճակի մէջ են, որ այնքան ծանր ժամեր անցուցին:

— Է՛յ չէ՛յ, դեռ շատ ծանր ժամեր պիտի անցընենք, մինչեւ որ հալինք. բայց մենք ալ մեր կարողին կ'աշխատինք թշնամին հալեցընել: Եւ այս ջոխիւրը, որ մարախներու բազմութեամբ կու գայ, մեզ հալեցնելու համար է:

— Ճի՛շդ է, Վահագնեանի ոյժերը օգնութեան հասան եւ փրկեցին Վրէժեանի գիրքերը. Վրէժեանի ոյժերէն բաւական կորուստ կայ, Վրէժեան ինքը վիրաւոր է: Տիկին Ռրպուշ սպաննուած է. թըշնամին նոյնպէս ծանր կորուստներ ունի:

- Իսկ մի՞ւս գիրքերէն...
- Տակաւին լուր չկայ...

Կապլարի գիծը հրաշքի գնդակներու տարափին տակ կը տնքայ ծուխի եւ մուխի մէջ: Առսխոռունիի եւ Արամեանի ոյժերը քրտնաթոր կը հեւան կռիւի սաստկութենէն: Մեհմէտ Ալի փաշան Այծեամներու բլուրի եւ Գայլի ձորին արտառ կ'ուզէ սրբել իր ճակատէն, ու ազաքը անընդհատ առաջ կը մղէ: Երբեմն սպաննալով, երբեմն խրատուսելով, երբեմն խաբելով... զօրք, հեծելազօրք, խուժան, վայրենի ազազակներով, պոռչաութիւններով եւ հայհոյութիւններով կը թաւալին դէպի գիրքերը:

- Հը՞, Թորէ՛, այս անգամ ի՞նչ կ'ըսես: Թքէ՛ կը լղզեն: Թքէ՛ կը լղզեն. ո՞ւր է. ապա չեն լղզեր այդ շանորգիք, — ըսաւ Սմբատը:
- Տո՛յ ուժով թքէ՛, ուժով թքէ: Եթէ չլղզեցան, դու կը լղզուես, — պատասխանեց Թորէն խնդալով:
- Թորէ՛, եթէ գործը այսպէս քալէ, բոլորս ալ կը լղզինք:
- Ա՛յ հա՛յ, ատոր խօսք չկայ. չլսէ Ջուռն, յետոյ կը բարկանայ:

— Ինչո՞ւ պիտի լղզենք, — ձայն տուաւ Օհան. — չէ՞ որ թրծուեցանք ու դարձանք պողպատ:

- Հա՛, շխտակ կ'ըսես, Օհան, բայց պողպատը եթէ չի լղզիր, կը ժանդոտի. արդէն քիչ մնացեր է որ ժանդոտինք:
- Հոգ մի՛ ըներ, մինչեւ ժանդոտինք, դեռ շատ մարդ պիտի լղզեցնենք:
- Շատ մի՛ խօսիք, — զգուշացուց Մելոն: — Հիմա ուր որ է, ցատկոտան գայլը կու գայ եւ ձեր քիթ ու բերանը կը ջարդէ:
- Տո՛յ ցատկոտան գայլ մի՛ ըներ, Աստուծոյ պատուհաս ըսէ. այս ուրկէ՞ եկաւ. ատիկա Շամամէն ալ անսիրտ է:

- Տղա՛ք, նազէէն լուր չկայ, գիշերը անյայտացեր է, չի գիտցուիր թէ ո՞ւր է գացեր:
- Ուր որ է, ձայն կու տայ. անպատճառ մեծ գործի մը լրծուած է. դուք ձեր գործին նայեցէք:
- Է՛հ, Աշխարհ-անցում է, Ջուռոյ. ի՞նչ պիտի ընենք այս արիւնի եւ կրակի փոթորիկին մէջ, — հարցուց Աւէն:
- Աշխարհանցում է... Ո՞վ անցաւ՝ կ'անցնի, ո՞վ մնաց՝ նորէն կ'անցնի: Աշխատինք մեր հարուածը տալ. ո՛ւր բարակ է, թող

հոն կտրի, — ըսաւ Ջուռն:

— Այս ի՞նչ գազանութիւն է. միթէ՞ աշխարհ եկանք, մա՛րդ սպաննելու համար: Ինչո՞ւ, մենք սփռազործնե՞ր ենք, — ջղայնացած ըսաւ Աւէն:

— Ո՛չ, մեզ կը հարկադրեն. սփռ հարկադրողներն են ամենամեծ սփռազործները, որ պէտք է պատժուին: Մենք սփռազործներն է որ կը պատժենք, եւ այս բոլորը, որ անընդհատ մեր գիրքերու վրայ կը խուժեն, սփռ գործելու համար է որ կու գան, եւ մենք պարտաւոր ենք այդ սփռազործները քաղել: Շարժեցէ՛ք ձեռքերնիդ. գործ մըն է որ կը կատարենք, որ Աստուծոյ կամքին հակառակ չէ, որ Աստուծոյ գործն է եւ որ սակայն մեզի ձգուած է:

— Տո՛յ ի՞նչ կ'ըսես, Ջուռո՛յ. երեւի բերանդ Աւետարան կայ, — զարմացած ըսաւ Աւէն:

— Ի՞նչ կը դարձանաս. ճիշդ է, բերանս Աւետարան կայ, բայց ձեռքս ալ գէնք կայ:

— Ո՞վ ըսաւ թէ մենք աշխարհ եկած ենք մարդ սպաննելու համար, — մէջ մտաւ Սմբատ բարկացած: — Մենք վատութիւնն է որ կը սպաննենք: Ասոնք որ կու գան, ոչ թէ մարդ են, այլ մարդու ձեւին տակ բորենիներ, որոնք մարդու միտով կը սնանին, եւ եկած են մեր միտը ուտելու... Ի՞նչ պէտք է ընէ մէկը, երբ վայրի գազան մը կը յարձակի իր վրայ: Միթէ՞ ինքզինքը պաշտպանելը սփռ է: Մենք յարձակումի ենթարկուած ենք ի դուր եւ ինքզինքնիս է որ կը պաշտպանենք:

— Պաշտպանէ՛ ինքզինքդ, ո՞վ ձեռքդ բռներ է: Բոլորս ալ, որ հոս ենք, մեզ պաշտպանելու համար եկած ենք: Մաղեցէ՛ք եւ քաղեցէ՛ք. Աստուած ձեզի հետ: Քանի որ Աստուծոյ գործն է, կը դիւրացրնենք՝ չարերը պատժելով: Ահա այսպէս, տեսա՞ք, կոնակին գնացու կը տապալակի: Այն գանդուածը, որ հաւանաբար իննսուն քիւրջ կը կշռէ, եւ սակայն կաթիլ մը ո՛չ խիզ՝ ունի եւ ո՛չ ալ խելք, — ըսաւ Ջեքոն՝ հրացանը պարպելով:

— Տղա՛ք, խօսելու ժամանակ չէ, — նկատեց Մուրատը, — լուռ ու ուշադիր աշխատեցէ՛ք, կացութիւնը ծանր է: Համազարկ կը հրամայուի...

— Մուրատ՛ա, թէ կացութիւնը ծանր է, այդ գիտենք, եւ որքան ալ աշխատինք, թշնամին այս գիրքերը պիտի գրաւէ, որովհետեւ այսքան քիչ ոյժերով անկարելի է շարունակ աճող խուժանին դէմ կենալ, ինչպէս եւ անկարելի է այս միջոցներով ասոնք փճացրնել: Մենք կ'ընենք մեր կարելին ու կ'անցնինք, որպէսզի մենք մեզ

չմեղադրենք, թէ վատի նման անցանք այստեղերէն... Մեր իւրաքանչիւր կոտուրը հերոս մըն է. այդ ճիշդ է, բայց մեր իւրաքանչիւր զէնքին զէմ հաղար զէնք կ'արձակուի եւ այդ նոյնիսկ պատահական արձակուած զնդակներէն մէկը կրնայ մեզի բաժին իյնալ: Հոս մեր նպատակը յայթիկ չէ, այլ սրբան կարելի է, շատ զոհ խել, միայն ասիկա պիտի ըլլայ հատուցումը մեզի զէմ գործուած անիրաւութեան:

— Ճի՛շդ ատոր համար, կ'ըսեմ՝ ուշադիր եղէք, Ջեքո՛յ, որպէսզի զնդակը ի դուր չանցնի: Ծանր կռիւ է գիրքերուն վրայ. թըշնամին երեւի սուինամարտի պիտի անցնի. մերոնք ոյժ տուած են մաւղէրին. Արամեանի ոյժերը գոռում-գոչումի մէջ են: Մուշեղեանի բամբ ձայնը կ'որոտայ գիրքէ գիրք եւ Պոստոուենին համազարկ կը հրամայէ...

— Տղա՛ք, ոյժ տուէք համազարկին, — պոռայ Ջուռոն, — Աստուծոյ գործն է որ կը կատարենք այս ապականութիւնը մաքրելով...:

— Այո՛, այո՛, Աստուծոյ գործն է որ կը կատարենք սպաննելով վատութիւնը: Ճի՛շդ կ'ըսէ Ջուռոն, — աւելցուց Սմբատ:

— Ապրի՛ք, տղանե՛ր, ապրի՛ք, տղանե՛ր, կտրիճ աշխատեցէք, — քաջալերեց Ջուռոն, ոգևորուած համազարկերու սրտէն:

— Տո՛յ Ջուռոյ, գիրքերը լեցուեցան, — պոռայ Աւէն. — արդէն Արամեանի գիրքերուն վրայ գիրկընդխառն կռիւ է:

— Ոյժ տուէք մաւղէրին, — սրտայ Մելոն, — ո՛վ զնայ, ո՛վ մնայ. պիտի ըլլայ, ինչ որ պիտի ըլլայ:

— Ի՞նչ. գիրքե՛րը լեցուեցան. պատրաստեցէք դաշոյնները եւ սուրբը. կեանքի եւ մահուան հարցը պիտի վճռուի այս գիրքերուն վրայ եւ գիրքերուն մէջ, — պատգամեց Ջուռոն մարդարէական ձայնով մը:

Եւ հակառակ դոյամարտի ոյժերու գերազոյն ճիղին, թշնամին առանց րնկրկելու կորուստներու ծանրութեան առջեւ յաջողեցաւ մտնել Կապուրի գիրքերը, եւ սուին ու դաշոյն անցան գործի. տասնոցներն ու ատրճանակները կ'ընկերանան անոնց, երբեմն՝ ահառներ... բռունցքն ու աքացին, հայհոյուչն ու պոռչուրը իրար խառնուած են. կոտուրները իրար կը բղկանն եւ արիւնքամ կ'իյնան՝ ծանր հոնգիւններ արձակելով: Մեհմէտ Ալի փաշան Այժեամներու բլուրներէն խրախուսանքի խօսքեր կ'ընէ եւ հրահանգներ կ'արձակէ. զօրքը երթալով կը թանձրանայ գիրքերու վրայ. Պոստոուենի եւ Արամեան իրենց կտրիճներով մահուան կռիւ կը մղեն. մաւղէրնե-

րու համազարկը երբեմն ճնշումը կը թեթեւցնէ, բայց շատ անգամ ասիթ չկայ մաւղէրները լեցնելու, եւ անոր տեղ սուր ու դաշոյն կը գործէ: Պոստոուենի, Արամեան, Մուշեղեան իրենք զիրենք կը գերազանցեն, իրենց ոյժերը՝ նայնպէս, թէ՛ իրենք զիրենք կը պաշտպանեն եւ թէ՛ մահացու հարուած կու տան թշնամիին: Իւրաքանչիւրը անոնցմէ քանի մը տեղէն վիրաւոր է. արիւնով ներկուած են. իրենց սաքերուն տակ գիւղիներ կը տրորուին, ու թշնամիէն զոհեր կը խլեն եւ զոհեր կու տան:

— Ի՛հ, — պոռայ Ջուռոն, որ եօթ տեղէն վիրաւորուած էր. — այսքան զոհ իմ հոգի՞նք համար է. — եւ դաշոյնը իրեց սպայի մը կուրծքը այնպիսի թափով մը որ սպան կոնակի վրայ ինկաւ եւ ինքը հարուածի ոյժէն չըջեցաւ սպայի վրայ եւ երբ փորձեց բարձրանալ, երկու կողմէն սուիններ ծակեցին կողերը ու անշունչ փռուեցաւ սպայի գիւղի վրայ, բայց եւ սուինահարգներն ալ ինկան իր վրայ, մէկը Աւէի կողմէն, իսկ միւսը Ջեքոյի սուրէն:

Պոստոուենին վիրաւոր ասիւծի նման կը մոնչէր եւ երբ գիրքէ գիրք կ'անցնէր, պաշարուեցաւ խումբ մը զինուորներէ, զոր քաղեց մաւղէրով, բայց ժամանակ չունեցաւ մաւղէրը լեցնելու. ձեռքը նետեց սուրին եւ զեռ սուրը շքաշած մահացու հարուած մը ստացաւ կուրծքէն ու ապառաժի մը նման չըջեցաւ: Արամեան օդնութեան հասաւ. հարուածողը տեղն ու տեղ կ'փեցաւ Արամեանի դաշոյնի հարուածին տակ, բայց Արամեան ալ վիրաւորուեցաւ սրունքէն...: Այդ պահուն կատարուեցաւ անսպասելին. Վահագնեանի ոյժերը հասան, եւ գիրքերը խուժող թշնամին ծանր կորուստներ տալով՝ նահանջեց զէպի Այժեամներու բլուր ու Գայլի ձոր...:

Մեհմէտ Ալի փաշան հեծելազօրքի մէկ մասը գաղանի գրկած էր չըջառիկ շարժման՝ Պոստոուենի ոյժերու թիկունքը անցնելու համար, բայց հանդիպեցան Վահագնեանի ոյժերուն եւ ձեծուելով նահանջեցին: Տեսնելով հեծելազօրքի նահանջը, բմբոնեց որ ձախողած է հեծելազօրքի գործը: Ապա Վահագնեանի ոյժերու երեւումէն վախնալով, նահանջի փողը հնչեցուց՝ հետեակազօրքը փրկելու համար քնաջնջումէ: Թշնամին, ճիշդ է, ծանր կորուստներով նահանջեց, բայց ծանր կորուստներ ունեցան եւ դոյամարտի ոյժերը. Պոստոուենին ինկած էր, ինկած էր եւ իր ոյժերու մէկ մասը: Արամեանը վիրաւոր եւ իր ոյժերու մէկ մասը սպաննուած: Նազէն, որ թրքական զինուորի հագուստով գացեր էր թրքական ոյժերու մէջ՝ Մեհմէտ Ալին սպաննելու, չէր յաջողած: Անոր թիկնապահ Ահմէտ Համաին սպաններ եւ փախեր էր: Հետապնդուելով թրքական

ոյժերէն, ուսէն վերաւոր, արիւնլուայ, հասաւ զիրքերը, և տեսնելով այդքան կորուստ, բարկացաւ.

— Թոյլ էք աշխատեր. իմ մտրակը հեռանալով ձեր ուսերէն, աւելի շատ պարով զբաղած էք եղեր քան թէ կոխով...:

Եւ իրիկունը իր թեւերը տարածեց յողնած ոյժերու վրայ ու սեւ վարագոյր մը փռեց՝ այդ ահաւոր ողբերգութիւնը ծածկելու համար...:

Վայրայտ կոխ մը կը թաւալի Տարկոշեան գիծին վրայ. հեծելազօրքն ու հետեւակազօրքը խիտ շարքերով կը յառաջանան, մէջտեղէն խուժանը վայրենի պոռչառքներով կը շարժի, որուն առջեւէն Պրոն, երկարահասակ և ջղուտ քիւրտ մը, փորձուած սուր ու ասպարի կուռին, սուր ու ասպար կը խաղայ և խելայեղօրէն դէպի զիրքերը կը վազէ, արհամարհելով գոյամարտի ոյժերը: Բայց Գէորգի գնդակը ծակեց անոր կուրծքը, շուռ դարձաւ ինքն իր վրայ և ինկաւ կոնակին: Սուր ու ասպարը թռան ձեռքէն և ինկան աջ ու ձախ: Հետեւակազօրք, հեծելազօրք, խուժան, բարձրադազակ գոռում-դոշումներով, արշաւեցին դէպի զիրքերը և ինկան համազարկի տակ... զիրքերէն նոյնպէս բարձրացաւ աղմուկ մը, հայհոյուչի և մարտահրաւիրի, հակազդելու թշնամիի վայրենի պոռչառքներուն: Ոյժ տուին մազէրին:

— Հը՞, Թաթա՛ր, — ըսաւ Աւզէյ Աղամ. — էղկարտի ժայտերը ի՞նչպէս են:

— Տո՛յ տղայ, այս գնդակի տեղատարափին՝ ժա՞յտ կը դիմանայ. կը բղկտուի իրարմէ:

— Երեւի այսօր քու թանձր կաշիդ ալ այդ գնդակի տեղատարափէն պիտի ծակծկի. զգո՛ւշ եղիր:

— Է՛հ, ի՞նչ բնեմ. թող ծակծկեն ու ծակծկեն: Արդէն շանորդիք ատոր համար է որ կու գան: Հրամայուած է...:

— Հոգ մի՛ բներ, Թաթա՛ր, — մէջ մտաւ Փարհէն, — դայլի ժանիքները աւելի սուր են քան ոչխարի կոտորէնը: Մինչեւ մեր մորթը գզեն, շատ մորթեր պիտի գզուին:

— Է՛հ, — բղաւեց Սպազանաց Ակէն, — եթէ էղկարտի քարերը փխրուն են, Սպազանաց ժայտերը աւելի ամուր են:

— Իսկ ի՞նչ կ'ըսես Տարուրիկի ժայտերուն, — հարցուց Արմբատը:

— Հա՛յ, հա՛յ, — կանչեց Ակէն. — Թաթարի գլուխին նման չոր են և Փարհէի սակորներուն նման կարծր:

— Սմբա՛տ, Սմբա՛տ, — ձայնեց Թաթարը. — երգ մը երգէ, ո՞ր օրուն կը պահես. կարելի է այսօր մեռնինք. գոնէ երգելով մեռնինք:

— Շիրտակ կ'ըսէ Թաթարը, — աւելցուց Ակէն, — երգելով կոռուիլ հաճելի է: Սկսի՛ր տեսնենք:

— Ահա՛ կը սկսիմ, — ըսաւ և երգեց «Մեր վրայ քալող»...:

— Տո՛յ առիւծ ենք եղեր, չէի գիտեր, — ըսաւ Փարհէն խրնդալով:

— Ո՛չ, — զրտել տուաւ Թաթարը. — Առիւծէն աւելի զօրաւոր և աւելի բարձր: Խեղճ Առիւծը ի՞նչ պիտի ընէր այս գնդակի տեղատարափին տակ:

— Է՛հ, Յարէ՛թ, այսօր ո՛վ պիտի երթայ ազահանք, — ըսաւ Մեծքիթ Մանոն, քիթը վեր քաշելով:

— Ո՛վ գնաց, թող երթայ. ա՛յդ է կը մտածես. ուշ կամ կանուխ, բոլորիս ճանապարհն ալ այդ է, — պատասխանեց Յարէթը:

— Տղանի՛ր, այսօր ծանր օր է, և տղամարդ պէտք է որ վերցնէ այդ ծանրութիւնը: Պրկեցէ՛ք ձեր բազուկները, — թելադրեց Խաչոն:

— Խաչո՛յ, ի՞նչ կ'ըսես. այս քաջերէն աւելի տղամարդ ո՞ւր կարելի է գտնել. կը լսե՞ս մոնչիւնը, որ ինկեր է զիրքերը, — խօսեցաւ Շերոն:

— Տղա՛յ Մքոյ, ի՞նչ կ'ընես, — պոռայ Թեմոն, նեղն ինկած ու քրտնած:

— Չե՞ս տեսներ թէ ի՞նչ կ'ընեմ, — ձայն տուաւ Մքոն, մազեց մազէրը և մէկ-երկու գինուոր փոռեցան զիրքին առջեւ. — տե՛ս, թէ ի՞նչ է կ'ընեմ:

— Տո՛յ, ժամանա՞կ ունիմ նայելու. շանորդիք չեն ձգեր որ աչք բանանք:

— Քանի որ նայելու ժամանակ չունիս, քաղէ՛. պիտի աշխատինք ցրուել այս սեւ ամպը, դեռ միւսը չհասած: Կը տեսնե՞ս հեռուէն այն թանձր ու սեւ ամպը, որ կը յառաջանայ:

— Անցէ՛ք համազարկի, — դոռաց Միրոն. — շանորդի Բեսիմ հետու է կեցեր, և այս կաւէ մարդիկը կը քշէ մեր վրայ, — ըսաւ ու մազեց մազէրը և մէկ-երկու կաւէ մարդ գլորցուց, ու սկսաւ «Դէհ գարկէք, գարկէք» երգել. ապա արիւնտ աչքերով հեծելա-

գորքը փնտուեց, ըսելով. — Սրբիկանե՛ր, այսօր մեր դիրքի առջեւ չեկաք:

— Հոգ մի՛ ընեք, Միրոյ, — ըսաւ Թեմոն, — ինկած են Աստեղեանի դիրքերու առջեւ եւ լաւ մը կը ծեծուին: Ահա՛, ահա՛. կը տեսնե՞ս. կ'ընկրկին ու կը փախչին:

— Ոյժ տուէք համազարկի, ցրուենք մեր առջեւի սեւ ամպերը, քանի նոր հեղեղ չէ հասած: Ահա՛ համազարկի տակ, թշնամիի ճընշումը կը թեթեւայ. ընկրկումի նշաններ ցոյց կու տայ, կը նահանջէ:

— Կը նահանջէ, — ըսին իրարու, եւ կրակը սաստկացուցին. Գէորգ կատաղութենէն ինքզինքը շիրցաւ գոպել. ցատկեց դիրքէն խումբ մը գինուորներու ետեւէն, առաւ տասնոցի տակ. երկուքը անոնցմէ ինկան, իսկ միւսները փախան եւ դիմացի մացառէն համազարկ մը բացուեցաւ Գէորգի վրայ եւ Գէորգ երեքալով ինկաւ շընչասպառ:

— Վա՛րխ, Գէո՛րգը ինկաւ, — տարածուեցաւ լուրը դիրքերու մէջ:

— Տուէ՛ք մացառին, — պոռաց Սաչոն, եւ մացառը համազարկի տակ առնուեցաւ ու մացառը լռեց:

— Ափսո՞ս, Գէո՛րգն ալ գնաց, — ըսաւ Յարէթ, արցունքները կուլ տալով:

— Այո՛, եւ տղամարդու նման գնաց, — պատասխանեց Միրոն. — մենք բոլորս ալ պիտի երթանք: Կորուսաներու ծանրութեան տակ պէտք չէ ընկճուիլ. ատոր հետ շատոնց պէտք է հաշտուած ըլլանք... Ահա՛ թշնամին նոր ոյժ ստացաւ եւ յարձակման պիտի անցնի: Պէտք է դիմանանք, շատ ծանր պիտի ըլլայ մեր գործը եւ շատ դժուար պիտի ըլլայ անոնց խուժումը կասեցնել, եթէ իրիկունը մեզի օգնութեան չհասնի:

— Եւ ճիշդ ատոր համար էր որ Ագատեան եւ Աստեղեան՝ նրկաւի առնելով կացութեան ծանրութիւնը, սուրհանգակ զրկեցին կեդրոն, որպէսզի օժանդակ ոյժ հասցնեն: Հաւանաբար Վիշապեանի ոյժերը մեզի օգնութեան գան. իսկ Վահագնեանի ոյժերը անպատճառ ուրիշ ճակատներու վրայ զբաղած կրնան ըլլալ. բայց պիտի աշխատինք դիմանալ, մինչեւ օգնութիւն հասնի, — ըսաւ Մանոն ակոսաները իրարու վրայ սեղմելով եւ հրացայտ աչքերով նայելով ջրի իրին, որ կը խլրտի եւ կը մօտենայ դիրքերուն:

Ու յարձակումը շղթայազերծուեցաւ աւելի կատաղի թափով: Գոյամարտի ոյժերու դիմադրութիւնը նոյն թափով կ'աճի. սակայն

թշնամիի ճնշումը մեծ է դիրքերու վրայ: Դիրքերը ծանր կացութեան մատնուած են: Ագատեան եւ Աստեղեան զգուշութիւն եւ քաջութիւն կը յանձնարարեն. «Գէորգի տաքարիւնութենէն զգուշացէք», «հիմա օգնական ոյժ կը հասնի», «Դիրքերու պատիւը չձգենք»:

— Այո՛, այո՛, — ըսաւ Շերոն. — բայց հնարաւոր չէ խուժումը կեցնել. ո՛չ երկրիւղ, ո՛չ ընկրկում, բայց թշնամին այնքան շատ է, որ որքան ալ մեր բազուկները երկարենք, չենք կրնար օղակել լուրը:

— Հոգ չէ, — աւելցուց Թաթարը, — թող մտնեն դիրքերը. իրար շատ ենք կարօտցեր. քիչ մը համբուրուինք:

— Ա՛յ հա՛յ, — ձայնեց Ֆարհէն խնդալով, — այդ շանորդիք բու կարօտէ՞ք հալումաչ կ'ըլլան, Թաթա՛ր, եւ քեզ տեսնելու համար է որ ինկեր են սար ու ձոր եւ կու գան նոյնիսկ կեանքերնին վրայ տալով:

— Հերի՛ք է, — գոչեց Մեծքիթ Մանէն. — գէնք գործածելէն յսկնեցանք, քիչ մըն ալ սուր եւ գաշոյն խաղցնենք:

Եւ թշնամին լեցուեցաւ դիրքերը. կռիւր վայրազ ձեւ մը առաւ. դիրքերն իրարէն է... գաշոյն, սուր ու սուին կը գործեն. գէնք գործածելու հնարաւորութիւն այլեւս չկայ, կռիւր իր բարձրագոյն կէտին վրայ է... Իւրաքանչիւր գոյամարտի սպարիկի գէմ, քանի մը թշնամի գինուորներ կան: Առիւծի նման կը մոնչեն, աջ ու ձախ կը բղկտեն, բայց դժուար է բոլորին հասնիլ եւ մէկիկ-մէկիկ կ'իջնան՝ վերաւոր եւ ուժասպառ: Վիշապեանի ոյժերը թէեւ հասան, բայց քիչ մը ուշ: Ուժեղ համազարկ բացին խուժող թշնամիին վրայ. թշնամին ընկրկեցաւ ծանր կորուսաներով, բայց գոյամարտի ոյժերն ալ շատ գոհեր տուին: Աստեղեան եւ իր քաջերէն շատերը սպաննուեցան. Ագատեանի ոյժերէն ինկան յայտնի կուռուցներ Յարէթ, Սրմբատ, Միրոն, Մանոն, Հրանոյշ, Գեղանոյշ եւ ուրիշներ: Ինկաւ եւ Թաղան, որ լուռ կը քաղէր, ինկաւ եւ Թեմոն, որ թշնամիի պատուհասն էր...:

Թշնամին նահանջեց. իրիկունը վրայ հասաւ...:

Լուսնեակ դիշեր է... Կեդրոնը ծանր սրտով ժողովի նստած է Ընկուզի ձորի եկեղե-

ցիւի հովանիին տակ, Հրայրի եւ Սերորի գերեզմաններուն շուրջը: Բոլորն ալ տխուր են. գիծերու վրայ ծանր կորուստներ են ունեցեր: Հետագայ ողբերգութեան նախօրեակը կ'ապրին: Լուռ են եւ կը ըստան Վահագնեանի զեկուցումին...:

Ծովինարը նստեր է Սերորի եւ Հրայրի գերեզմաններուն մէջտեղ. գլուխը կախ ու մտածկոտ, համբիշ մը կը դարձնէ մատներուն մէջ. անոր աջ ու ձախ նստած են Կաթէն եւ Կեթան — մէկը իր աղջիկը եւ միւսը իր հարսը՝ լուռ եւ ընկճուած... Հոն են Իշխանագուն, Մամիկոնեան, Ասպետեան, Արցախեան, Ազատեան, Վիշապեան, Իշխանեան եւ Վրէժեան, Մուշղեան վիրաւոր, Արամեան, Պետոյեան, Փարհատեան եւ յայտնի վարիչներ ու ռազմիկներ:

Ու ահա եկան Վահագնեանն ու Թորգոմեանը: Հոն էին եւ կանանց ներկայացուցիչները՝ Մարգրիտ, Նոյեմզար, Շուռէ, Պլպուշ եւ ուրիշներ:

Բոլորը լուռ են, մտախոհ, գլխահակ. ոմանց աչքերէն արցունք կը հոսի, ու կը լսուին հառաչանքի ձայներ... Ծովինար գլուխը բարձրացուց, նայեցաւ շուրջը վայրկեան մը եւ յետոյ Վահագնեանին ըսաւ.

— Քեզ կը սպասէինք. ի՞նչ ունիս մեզի բսելիք մեր գիծերէն...:

Վահագնեան սաքի կանգնեցաւ. յայտնի էր որ շատ յոգնած էր այդ անակաւն ու զեղեցիկ սղամարդը: Կը նմանէր Վահագն աստուծուն, որ այդ պահուն, լուսնի կաթնաթոյր շոգերու տակ լողանք կ'առնէր կարծես: Դէմքին վրայ թախիծը նկատելի կը դառնար: Ու խօսեցաւ.

— Գիծերէն տեղեկութիւն կ'ուզէք. ինձմէ առաջ անշուշտ տեղեկութիւններ եկած են ձեզի գիծերէն: Գրեթէ ես ալ նոյնքան բան գիտեմ, որքան դուք. գիծերու կացութիւնը ծանր է. ծանր կռիւներ անցան գիծերու վրայ: Մերոնք աւելի քան արժեցուցին իրենք գիրենք: Ընչդ է, թշնամին մեծ կորուստներու ենթարկուեցաւ, եւ սակայն մենք եւս ծանր կորուստներ ունեցանք: Այս անգամ ալ թշնամին հարկազրեցինք նահանջի, բայց մենք ալ ուժասպառ ինկանք, եւ կարելի չէ նոյն գիծերը պահել: Դժուար է նկարագրել կռիւի այն փոթորիկը, որ պայթեցաւ գիրքերուն վրայ եւ խից մեզմէ շատ մը թանկագին զոհեր: Դժուար է նկարագրել իւրաքանչիւր ռազմիկի առնական արիւթիւնը՝ այդ փոթորիկին մէջ. անոնք թշնամիին ծանրը վնասներ տուին՝ ի՞նչալէ առաջ:

Անոնք որ այսօր, այս ժողովէն կը բացակային, հեռացան մեզ-

մէ. դժբախտարար մեզմէ հեռացաւ մեր սիրելի հերոս Արծրունին, իր բազուկներով եւ կորիւններով: Ուշ էր երբ Կապլորի գիծէն անցանք Կորչիկ: Թշնամին ուժեղ յարձակում է գործեր լեռնամուտքէն, զբաղեցնելով մեր կոուսող ոյժերը: Իսկ Կեալիեսանի ձորէն, ահա կին զինուորներ է անցուցեր գաղտնի, սրոնք աննկատ բարձրացեր եւ բաժնուեր են երկու ճիւղերու, ետեւէն պաշարելով մեր Կորչիկի գիրքերը: Ծնչումը առջեւէն եւ ետեւէն շատ ուժեղ է եղած. մերոնք յանկարծակիի եկած են եւ կատաղի կերպով պաշտպաներ են իրենք գիրքենք: Թշնամին հակառակ իր կորուստներուն, ճնչումը սաստկացուցեր է: Արծրունին քանի մը տեղէն վիրաւոր, նորէն մեծ գործ է տեսեր, բայց վերջապէս պաշարման օղակը այնքան կը սեղմուի իր շուրջ, որ շորս կողմէն ստացած սուիւնի հարուածներէն կ'իջնայ: Վիկտորիան ոյժ կու տայ տասնոցին՝ առջեւի խուժումը կեցնելու: Ետեւէն սուրի մը հարուած կը ստանայ աջ թեւին եւ տասնոցը կ'իջնայ ձեռքէն. ձախ ձեռքով սուրը կ'աշխատի գործածել, ետեւէն նոր հարուած մը կը ստանայ ձախ թեւին: Ձախ թեւը եւս կը կախուի. առջեւէն գիրք խուժող զինուորները սուիւնահար կ'ընեն զինք կուրծքէն: Ու Վիկտորիան հազիւ թուք մը կը նետէ զինուորներու երեսին եւ կը շրջի... Այսպէս մեռաւ Լեռնաշխարհի «պայքարի խորհրդանիշը»... Օրիորդ Արծրունին իր գիրքին վրայ խուժող զինուորներով զբաղած կ'ըլլայ. ետեւէն երեք գնդակ կը ստանայ ու կ'իջնայ... Այսպէս կորսնցուցինք Լեռնաշխարհի այդ սքանչելի այժեամբը: Իսկ Օղիտան չափազանց լարուած ըլլալով առջեւի զինուորներուն հետ կուռելով, որ ետեւէն սուրի հարուած մը կը ստանայ վիզին եւ գլուխը կը կախուի կուրծքին վրայ... Այսպէս զրկուեցաւ Լեռնաշխարհը իր կատաղի վագրէն: Շատ մը թշնամի գիտիկներ ինկած էին իրենց շուրջը. անոնք ըրին շատ աւելին, քան ինչ որ իրենցմէ կը պահանջուէր...: Նոյն ծանր կացութեան կը մատնուին եւ միւս գիրքերը: Աւերմի Ստեփոյ, Քոփայ Փուրթոյ, Ազրիի Մարտոյ, այդ հսկաները գառապեղ ինկած առիւծներու նման կը մոնչեն ու բազմաթիւ զոհեր խլելով թշնամիէն, արիւնաքամ կ'իջնան: Երբ մեր ոյժերը հասան, հարկազրեցինք թշնամին նահանջել: Փրկեցինք գիրքերը, բայց արդէն ուշ էր... Մեր ռազմիկներէն շատերը հեռացեր էին...:

Ծովինար յուզուած մտիկ կ'ընէր եւ արցունքները կը սրբէր. Կաթէն ու Կեթան կու լային: Ժողովականները ծունկի եկած, գլխահակ արցունք կը թափէին, իսկ Ժողովուրդը, որ խմբուած էր ժողովատեղիին շուրջ, հառաչանքի ձայներ կ'արձակէր, կու լար ու կ'աղօթէր...: Ծունկի եկած եւ ինքնաբերաբար բոլորը միասին երգեցին

«Տէ՛ր ողորմեա»... , որով ընդմիջուեցաւ Վահագնեանի զեկուցումը : Գիշերուան այդ լուսեան մէջ՝ լուսնկայի շողերու ներքեւ , «Տէ՛ր ողորմեա» թեւ առաւ ու թաւալեցաւ զէպի ձորեր ու լեռներ . եւ այդ զգլխիչ երաժշտութեան տակ՝ հոգն ու քարը միասին կու լային . կարծես ժողովուրդի մը արիւնտա կեանքի վերջարանն է որ կը կատարուէր . . . :

Մեղեղին վերջացաւ . տիրեց ծանր լուսթիւն մը . ոչ սք կը խօսի . Վահագնեան օտքի կանգնած , վերացած կը նայի : Ծովինար աչքերը սրբելով՝ ըսաւ Վահագնեանի . — Ծարունակեցէք :

— Մեր միւս գիծերու հրամանատարները հոս են . անշուշտ իմ գալէս առաջ անոնք ձեզի տեղեկացուցեր են , ինչ որ կատարուած է իւրաքանչիւր գիծի վրայ : Բոլոր գիծերու վրայ ալ կոխները եղած են շատ ուժեղ եւ մեր ոյժերը գերմարդկային ճիգեր են երեւան բերեր . . . : Կեփինի գիծին վրայ գժրախտարար - կորսնցուցիչք Տիկին Ռեպուշը , Հեպիկը , Էդսոն , Սանրմը , Անթառամը , Փարկիի Գէորդը , Գեղեղմանքի Սամսոնը , Սագտունայ Թադոն եւ ուրիշներ : Վրէժեանի ոյժերէն շատերը , իսկ ինք Վրէժեան վիրաւոր՝ ձեր մէջն է :

Կապլուրի գիծին վրայ կը ցաւիմ ըսելու որ կորսնցուցիչք նշանաւոր Սոսիստունին , յայտնի Զուսոն , Աւէն , Զեքոն , Մեյոն , Մուրատը , մեր նշանաւոր գիշերային պատուհասը՝ Նազէն եւ Արամեանի ոյժերէն շատերը , իսկ ինք Արամեանը , որ ձեր մէջն է , վիրաւոր է . . . :

Տարկոշեան գիծէն՝ Վիշապեան եւ Այրատեան ձեզի տեղեկացուցած պէտք է ըլլան , որ կորսնցուցիչք երիտասարդ եւ կորովի Ատանգեանը , յայտնի ռազմիկ Գէորդը , Հերանոյշն ու Գեղանոյշը՝ այդ երկու աննման ազջիկները , եւ մեր կորիճ մարտիկներէն՝ Շերոն , Յարէթը , Միրոն , Մանոն , Սմբատը , Թադոն , Թեմոն եւ ուրիշները . . . :

Մամիկոնեանի գիծին վրայ կորսնցուցիչք մեր սքանչելի Ծամամը , Ալեանցից կորիճներէն շատերը . Մամիկոնեանի ոյժերէն՝ Ղազարը , Արթինը , Կրպոն , Տօնէն , Յակորը , Փարհատեանի ու Պետոյեանի ռազմիկներէն մի քանիները , իսկ ինք Փարհատեանը երեսունեութ տեղէն վիրաւոր է :

Տարգարի գիծին վրայ , Իշխանագունի եւ Ասպետեանի ոյժերէն ռազմաթիւ կորուստներ ունինք : Մանրամասնութիւնները Իշխանագունն ու Ասպետեանը ըսած կ'ըլլան : Ահա՛ կացութիւնը մեր գիծերուն : Ծանր կորուստներ ենք ունեցեր . խուսափիլ անկարելի էր , ինչպէս եւ անկարելի է այդ գիծերը պահել : Վաղը աւելի ծանր օր մը

պիտի ապրինք : Ի՞նչպէս պիտի զիմապրուենք . այդ մասին պէտք է մտածել : Պէտք է ըսել որ բուն կոխներու հետեւանքով , սպառեր է եւ մեր ռազմամթերքը : «Սնայուցութեան քարոզչութիւն»ը նման բուն կոխներու մէջ , որոնք այս վերջին շարաթները կը մղուին , այլեւս անգոր է . . . : Հետագայ կոխները աւելի կատաղի պիտի ըլլան . մեր ռազմամթերքը հազիւ թէ քանի մը օրուան բաւէ . . . :

Եւ Վահագնեան յոյնած՝ նստեցաւ Հրայրի գերեզմանաքարին օտքը : Հրայր իր յեղափոխական ուսուցիչը եղած էր , որուն հանդէպ մեծ յարգանք ունէր :

Տիրեց խոր լուսթիւն մը . երբեմն կը լուսէին հառաչանքի ձայներ եւ աղօթքի մրմունջներ . ժողովուրդը բազկատարած կ'աղօթէր . իսկ ժողովականները գլխահակ եւ մտածկոտ , խօսելու սիրտ չունէին : Նորէն Ծովինար գլուխը բարձրացուց եւ ըսաւ .

— Ինչո՞ւ է չէք խօսիր . գիտեմ որ ընկճուած էք կորուստներու ծանրութեան տակ : Այդ կորուստները արդէն պիտի ըլլային : Բոլորս ալ այդ ճամբու վրայ ենք . կը ցաւինք անշուշտ , բայց ցաւը կացութիւնը չի փրկեր . ինչո՞ւ է վիճակուեր մեզ այս կացութիւնը : Ո՞վ է մեղաւորը , եւ եթէ կայ գերագոյն ոյժ մը , որ կը պատժէ անիրաւութիւն գործողներն ու մեղաւորները , թո՛ղ անիկա պատուհասէ այդպիսիները , երբ մենք չենք կրնար , — յուզումէն ձայնը կը դողար : Պահ մը լռեց , աչքերը սրբեց , նայեցաւ ժողովուրդին , որ ծունկի եկած հառաչանքներ կ'արձակէր : Նայեցաւ ժողովականներուն , որ լուս կը խոկային . . . Յանկարծ լուեցաւ զիլ ձայն մը , ուժեղ ու սրբուն . Ծուռէն էր , որ կորուստներու ծանրութեան տակ ընկճուած՝ ի պատիւ զոհերուն եւ վիկտորիային , երգեց Վիկտորիայի երգած երգը . «Թող շանթ մը ըլլամ . . . » :

Երգի տպաւորութիւնը ծանր էր . տեղի տուաւ լացի պոսթ-կումներու եւ հառաչանքի . . . տեսակ մը յուսարեկութեան :

Բայց անսպասելիօրէն վրայ հասաւ Սղամի հոյակապ քրքիջը , որ կը լուսէր Ընկուզի ձորի եկեղեցիի ձորէն , եւ չէզոքացուց երգի տպաւորութիւնը :

— Ոտքի ելէ՛ք զաւակներս , — ըսաւ Ծովինար . — Ժամանակ չէ տատանուելու , պէտք է աշխատիլ եւ զիշերը օգտագործել , որ պատրաստուինք վաղուան փոթորիկին : Տեղափոխեցէ՛ք գիծերը աւելի նեղ շրջանակի մը վրայ , որ ինքնապաշտպանութեան գործը աւելի զիւրին ըլլայ . զօրծը արդէն իր վախճանին կ'երթայ . . . : Քիչ մը եւս համբերութիւն . ոյժ տուէք ձեր սրունքներուն . կարճ է ճանապարհը եւ մենք կ'անցնինք յաւիտենականութեան . . . :

— Նոր չէ որ կացութեան ծանրութիւնը կ'ըմբռնենք, — ըսաւ Իշխանազունը, — եւ նոր չէ որ մահուան առջեւ կանգնած ենք: Անխոցելի պատնէշներու մէջ չենք եւ ոչ ալ աներեւոյթ զրահներով պաշտպանուած: Գնդակի տարափին տակ կռիւ կը մղենք. անշուշտ որ մէկը այդ գնդակներէն կրնայ հանդիպիլ եւ մեզի. հոս ոչ զարմանալու բան կայ եւ ոչ ալ ընկճուելու...: Մեր վաղուան գործին նայինք, քանի ուշ չէ: Գիծերը պահել կարելի չէ. ճակատները պէտք է սեղմել...:

— Այո', — ըսաւ Վահագնեան. — գիծերը պէտք է տեղափոխել Անտոքի փէշերուն վրայ...

— Իսկ յետո՞յ, — հարցուց Վիշապեանը խնդալով:

— Յետո՞յ. յետոյ կը մտածենք, եթէ ժամանակ ունեցանք մըտածելու, — պատասխանեց Ազատեանը:

Գիծերը պէտք է փոխել հետեւեալ ձեւով. պէտք է բռնել Անտոքի հարաւային եւ արեւմտեան փէշերը, Պարպարի հովիտի երկու լեռնամուտերը, հարաւ-արեւելեան կողմէն, Կեայիեսանի հովիտի երկու կողմի վերի բարձունքները, արեւելեան կողմէն՝ Ընկուզի ձորի գետակի միջին ընթացքի երկու կողմի լեռնաշղթաները, այսինքն Ընկուզի ձորի գիւղէն վար: Իսկ հիւսիսէն՝ Կրեքոյի բարձունքներ եւ Կարմիր քարեր: Ճակատները ասկից աւելի կը ճատել կարելի չէ:

— Մտնանշուած ճակատները լաւ են, — ըսին միտքերան:

— Համաձայն ենք Մամիկոնեանի ցոյց տուած դիրքերուն:

— Ուրեմն, — աւելցուց Մամիկոնեան, — հիմակուրնէ դիրքերը պէտք է պատրաստել եւ կռուող ոյժերը բաժնել նոր ճակատներու վրայ: Այդ ալ Վահագնեանի գործն է, ինչպէս որ յարմար կը դատէ...:

— Այո', այո', — հաւանութիւն տուին ժողովականները. — Վահագնեանը թող կարգադրէ:

— Ապրէ՛ք, զաւակնե՛րս, — ըսաւ Մովսէսը, — անմիջապէս գործի անցէք. ճակատները թող տեղափոխուին. դեռ արշալոյսը չըրացուած՝ դիրքերը պատրաստ պէտք է ըլլան՝ անակնկալի չզալու համար: Սուրհանդակներ զրկեցէք դիրքերը՝ կռուող ոյժերուն նոր կարգադրութիւնը տեղեկացնելու: Աշխատող բազուկները թող երթան՝ նոր դիրքեր պատրաստելու: Երբ կռուող ոյժերը տեղափոխուին, պատրաստ պէտք է գտնեն դիրքերը. Չոհերը թաղեցէ՛ք իրենց դիրքերուն մէջ, եւ տուէք իրենց ձեր վերջին յարգանքը:

Ժողովուրդը լարուած ուշադրութեամբ մտիկ կ'ընէր նոր կարգադրութիւնը, անգամ մը եւս ինքնարեքար ծունկի եկաւ եւ «Տէր,

կեցո՛ղու զհայս...» երգեց, որուն մասնակցեցան բոլորը ծնրազիր: Ապա հաւատքով գօտեպնդուած՝ ելան եւ մօտենալով ժողովականներուն ըսին.

— Մենք կ'երթանք նոր դիրքեր պատրաստելու:

Ու կին, նորամարդ, աղջիկ, տղայ, բահ ու բրիչ առած՝ չորս ուղղութեամբ վազեցին նոր դիրքեր պատրաստելու՝ կռուող ոյժերուն համար:

Մովսէսը օրհնեց զանոնք եւ ճամբու դրաւ:

— Առաւօտուն մենք նոր դիրքերու վրայ կ'ըլլանք. ատիկա կը կատարուի, բայց քիչ մըն ալ նայինք թէ Արցախեան ի՞նչ լուր ունի արտասահմանէն, — ըսաւ Իշխանեան:

— Գծախտարար ոչ մէկ լուր, — պատասխանեց Արցախեան. — մեր զրկած սուրհանդակները չվերադարձան. կա՛մ չեն հասած, կա՛մ չեն կրնար վերադառնալ...: Այնպէս ինչպէս օղակուած է Լեռնաշխարհը, նման բազմաթիւ գինուորական շղթաներ կան՝ մինչեւ ռուսական թէ պարսկական սահմանները: Թուրքիոյ սահմաններու վրայ կռիւը ի՞նչ ձեւ կ'ընթանայ, չենք գիտեր: Ո՛ւր մնացին ռուսական ոյժերը եւ հայ կամաւորական գունդերը, չենք գիտեր: Մեր կացութեան մասին արտասահման տեղեկութիւն ունի: Այսքան ժամանակուան ընթացքին կը յուսայինք որ ռուսական ոյժերը եւ հայ կամաւորական գունդերը պիտի կրնային իջնել այս կողմերը եւ ճնշումը թեթեւցնել մեր վրայէն. բայց, ինչպէս կը տեսնէք, մինչեւ այսօր ո՛չ ձայն եւ ո՛չ ձուլ:

Վահագնեան. — Ռուսական ոյժերու վրայ աւելորդ է յոյս դրնել: Անոնք կ'ուզեն Հայաստան առանց Հայերու. այս է անոնց քաղաքականութիւնը: Եթէ կարենան իսկ, պիտի չզան, մինչեւ որ ամբողջ Հայութիւնը կոտորուի: Իսկ հայ կամաւորական գունդերը քաջութիւն չունին ինքնազոյս գործունէութեան անցնելու... եւ կամ ժամանակի անհրաժեշտութիւնը չեն ըմբռներ... դուք Ռուսը չէք ճանչնար, եւ առանց ճանչնալու հաւատք ունիք անոնց վրայ: Անտեղի է ձեր այդ հաւատքը. մեր յոյսը միայն մենք ենք. եւ եթէ մէկը կայ, որ պիտի օգնէ մեզի, այդ ալ մենք ենք: Գոհ եմ որ մենք բրինձ մեր կարելին, եւ պիտի ընենք մեր անկարելին...:

— Այո', — պտուցին աջէն ու ձախէն. — մենք կ'ընենք մեր կարելին եւ կ'անցնինք թքնելով բոլորի երեսին...:

— Յաջողութիւն ձեզի՛ր, զաւակնե՛րս, — ըսաւ Մովսէսը. — գացէ՛ք եւ ըրէք ձեր կարելին. այդ կը սպասեն ձեզմէ թէ՛ ձեր ժո-

դովորդը եւ թէ՛ ձեր նահատակ եղբայրները: Իմ մայրական օրհնութիւնը ձեզի հետ: Երթա՛ք բարի...:

— Ո՞ւր է Լեոնաշխարհի հերոսական խոյանքն ու յանդգնութիւնը, — պիտի հարցնեն կոյրերը:

— Վատութիւնը անկարող է մատուցուած ծառայութիւնը գընահատելու...:

Աւ դէպքերը իրենց վախճանին կը մօտենան...:

Թշնամին խանդավառուած է. հակառակ իր կորուստներուն եւ նահանջին, անիկա մեծ յաջողութիւն մը կը նկատէ, որ երէկուան կռիւներու ընթացքին, կրցաւ բոլոր գիծերուն վրայ ալ, զիրքերը մանել եւ մեծ վնասներ հասցնել գոյամարտի կռուող ոյժերուն: Անիկա գիշերուան ընթացքին իր կորուստները դարձանեց, ստանալով նոր ոյժեր, եւ կը մտածէ որ եթէ նման հարուած մը եւս տրուի, արդէն գոյամարտի ոյժերու հաշիւը կը փակուի... Ահա՛ դեռ արշալոյսը չբացուած, թշնամին բոլոր ճակատներու վրայ ալ յարձակումի անցաւ: Գոյամարտի ոյժերը իրենց նոր գիծերուն վրայ պատրաստ են... Թշնամին խանդավառութիւնը աւելի թափ առաւ երբ երէկուան գիծերը պարպուած դտաւ. ասիկա արդէն տկարութիւն է եւ պարտութեան նախանշան... «Թշնամին փախեր է» լուրը սկսաւ տարածուիլ, հեծելազօրքի եւ հետեւակազօրքի մէջ սղեւորութիւն ստեղծելով. հրամանատարները կը խրախուսեն եւ առաջ կը մղեն զօրքը, վարձատրութեան խոստումներով: Ո՞ւր պիտի փախչին այդ աւագակները, եթէ ոչ Անտոքի փէշերուն վրայ, ու Անտոքի փէշերն ալ գիրենք չեն կրնար փրկել. իրենց հաշիւը այսօր կը մաքրուի. չորս կողմէն ուժեղ գրոհ մը եւ Անտոքը հիմն ի վեր պիտի շրջենք այդ շուներու գլխուն...:

Անտոքը կը թնդայ չորս կողմէ տրուած համազարկին տակ. ծանր կռիւ է:

Գոյամարտի ոյժերը գերազոյն երկունքի մէջ են խուժանը կեցընելու, եւ այդ դժուար է ու դժնգակ...:

— Հը՞, ի՞նչպէս կ'ընթանայ կռիւը, — հարցուց Յեզի փաշան ձեռակէթ պէյին, Չայի գրաւուած գիրքերուն վրայ կանգնած:

— Լա՛ւ կ'ընթանայ, փաշա՛ էֆենտի, — պատասխանեց ձեռակէթը. — վախճանին կը մօտենանք...:

— Ինձի ալ կը թուի թէ վախճանին կը մօտենանք:

— Այո՛, օղակը սեղմուած է, ինչ որ ցոյց կու տայ կռուող ոյժերու սակաւութիւնը. կռիւի սկզբնաւորութեան լայն շրջադիժ մը ունէին, զիրքերը Կուրդըքի վրայ էին. աստիճանաբար շրջադիժը նեղցաւ, Կուրդըքէն փոխադրուեցաւ Կուրդըք Անջրդի արտերու գիծ, յետոյ Անտառներու գիծ, անկէ վերջ Չայի եւ Մերկերու գիծ. այսօր ուրիշ գիծ մը, վաղը Անտոքի սաք, իսկ միւս օրը արդէն ամէն ինչ հաշուեյարդարի կ'ընթակուի... Ահա՛ թէ ինչպէս ընթացան դէպքերը եւ հասան իրենց վախճանին... Գիծերու յաջորդական փոփոխումը այդ բոլոր ճակատներուն վրայ, հետեւանքն է իրենց ոյժերու անբաւարարութեան. երէկուան կռիւները կ'երեւի ծանր կորուստներ են պատճառեր իրենց եւ հաշուած են որ հնարաւոր չէ այլեւս այդ գիծերը պահել, ու գիծերը տեղափոխուած են:

— Այո՛, եւ մեզմէ աւելի շատ կը հպարտանան Բէուֆ, Մեհմէտ Ալին եւ Բեսիմ, որոնք իրենց գիծերու հրամանատարները ըսպաննած են:

— Հպարտանալու տեղի չկայ. իրենք թող նային իրենց կորուստներուն: Այդ մարդիկ երկաթէ ձուլուած չեն, որ գնդակի այդ տեղատարափին տակ անխոցելի մնան. գնդակ մըն ալ ի հարկէ իրենց բաժին պիտի իյնայ, բայց իւրաքանչիւրը այդ մարդոցմէ, քանինե՛ր կերած է իրենցմէ. ասիկա թող նկատի առնեն եւ յետոյ հպարտանան...:

— Այո՛, կերանք կ'ըսեն հպարտութեամբ, բայց թէ ի՞նչ են կերցուցեր, այդ չեն ըսեր...: Ինչ որ է, այս մարդիկ մեզ շատ յոգնեցուցին. այսքա՛ն յամառ գիմադրութիւն... իրապէս արժեցուցին իրենց մահը: Որքան ալ թշնամի ըլլանք, չենք կրնար չհիանալ իրենց կորովին, քաջութեան եւ արիութեան վրայ. տակաւին մինչեւ հաշուեյարդարը տեսնենք ի՞նչ կորուստներ պիտի ունենանք...:

— Ատոր տարակոյս չկայ. որքան ատեն փամփուշտ ունին, պիտի օգտագործեն, եւ երբ սպառի, արդէն իրենք ալ սպառած պիտի ըլլան...: Իսկ միւս ճակատներէն ի՞նչ լուր:

— Բոլոր ճակատներն ալ միեւնոյն ժամուն յարձակման են անցեր. բոլորն ալ գիծերը պարպուած են գտեր. յանձնարարուեր է ըզգոյշ շարժիլ, մինչեւ ծանօթանան նոր գիծերուն հետ: Կռիւը սկսեր է եւ հետզհետէ կը ծանրանայ. Անտոքը կը թնդայ, կարծես երկրաշարժի ցնցումէ բռնուած է...:

— Էստ կ'ըլլար, եթէ երկրաշարժէ մը բռնուէր եւ մեզ բոլորս ալ թողէր իր հրաշքի լաւաներուն տակ, ու մեզ խնայէր տեսնելու այն ծանր ողբերգութիւնը՝ որ մեր առջեւն ունինք...

— Ի՛նչ կ'ըսէք, ձեռակ'թ պէյ. մենք շա՛տ աւելի ծանր ողբերգութիւններ տեսանք. այն ատեն քու խիղճդ չընդլզեցաւ. իսկ հոս ինչո՞ւ էք ինկեր ձեր խղճին ազդեցութեան տակ:

— Համակրանք ունիմ այս քաջերու հանդէպ, որոնց մահը երբե՛ք չեմ ցանկար...

— Համակրանք. այդ ի՛նչ բանաստեղծական համակրանք է. եւ այդ համակրանքը անո՞ր համար, որ ա՛յդքան ծանր կորուստներ խլեցին մեզմէ...

— Ատոր մէջ իրենք չեն մեղաւոր. մեղաւորը մե՛նք ենք:

— Նորէն մենք ինկանք սխալ գեանի վրայ. այն ինչ որ կը կատարուի, անհրաժեշտութեան հարկադրանքն է:

— Ո՛չ թէ անհրաժեշտութեան, փաշա՛ կֆենտի, այլ յիմարութեան...

— Ի՛նչ կ'ուզէք հաշուեցէք, այս կացութեան մէջ մենք միայն գերակատարներ ենք:

— Ոչ միայն գերակատարներ, այլեւ զոհեր: Այս կացութիւնը ստեղծողները խարդախ եւ ասկերախ մարդիկ են, որոնք ցեղ մը կը բնաջնջեն, որմէ միայն բարիք են տեսեր: Ի՞նչ բարիք ենք տեսեր Քիւրտերէն, զորս կը քաջալերենք կոտորելու երկրի արտադրութեան եւ շինարարութեան սիւները. այդ վայրենի, խարդախ, զոզ ու աւազակարարոյ ժողովուրդը, որ ո՛չ կ'արտադրէ, ո՛չ կը ստեղծագործէ, յանուն ի՞նչ բանի կը քաջալերուի, որ կոտորէ խաղաղ եւ աշխատասէր ժողովուրդ մը. որպէսզի այս երկիրը խոպան մնայ եւ պետութիւնը սնանկանա՞յ: Մենք իջած ենք այն գիծին՝ ինչ գիծի վրայ կը գտնուին վայրենի եւ աւազակարարոյ Քիւրտերը: Քի՞չ են Հայերու մատուցած ծառայութիւնները այս երկրին, եւ անոնց վարձատրութիւնը ա՞յս է: Միթէ քի՞չ են եւ այն ծառայութիւնները, որ Հայեր մատուցին Ռուս խարդախ եւ ազէտ ժողովուրդին, եւ անոնց վարձատրութիւնը ա՞յն է որ կ'ուզեն «Հայաստան առանց Հայերու»: Եւ մենք Հայաստանը կը մաքրագործենք Ռուսերու հաշուոյն. փաշա՛ կֆենտի, սա անհրաժեշտութիւն է, թէ յիմարութիւն. եւ եթէ ցեղ մը կայ կոտորելիք, այս վայրենի եւ անպէտ Քիւրտերն են... աւելի ճիշդ, թուրքերը, որ ընդարձակաժառանգ կայսրութիւն մը փճացուցին իրենց յիմարութեան հետեւանքով: Ինծի կ'ըսէք, թէ ինչո՞ւ ինկած եմ խղճիս ազդեցութեան տակ: Իմ խիղճը երբե՛ք մեռած չէ. ես

կորուստը կու լամ անմեղ ժողովուրդի մը, որուն մահուան մէջ իմ ժողովուրդի մահը կը տեսնեմ...

— ձեռակ'թ, նորէն խորունկէն սկսար ակօսել. հարկ չկայ այդքան խորերը իջնելու...

— Անոնք, որ այս կացութիւնը ստեղծեր են, փաշա՛ կֆենտի, անոնք են որ խորունկէն կ'ակօսեն, առանց հասկնալու, որ այդ ակօսները իրենց գերեզմանները պիտի դառնան: Հայերը կը մեղադրուին իրրեւ խռովարարներ. պարզ զրպարտութիւն մըն է, յիմարներու կողմէ նետուած. Հայերու յանցանքը այն է, որ նախատեսելով կայսրութեան փլուզումը, կը զգուշացնէին Պետութիւնը, որ փոխէ իր յոռի վարչակարգը. այդ զգուշացումն է, որ կը նկատուի խռովարարութիւն. ահա թէ ի՛նչ է Հայերու յանցանքը: Հայ յեղափոխութեան նպատակն ալ նոյնը եղած է. մենք ապերախ գտնուեցանք այդ յեղափոխութեան հանդէպ, որ կ'ուզէր երկրի քայքայուած կեանքը վերանորոգել, Օսմանեան կայսրութիւնը պահել իր հզօրութեան եւ իր իրաւունքին մէջ: Ահա՛ թէ ինչպէս կը վարձատրենք մեր իսկական բարեկամները, որոնց հասցէին, կոյրեր եւ քաղաքական ստահակներ շատ մը մեղադրանքներ յօրինեցին, հայկական կեանքը պատուհասելու նպատակով, ի հաշիւ ուրիշներուն...: Այս ազէտը, որ մեր աչքին առջեւ տեղի պիտի ունենայ եւ որմէ այնքան կը սարսափիմ, որովհետեւ անոր մէջ կը տեսնեմ ահաւոր ազէտ մը, որ պիտի գայ թուրք ժողովուրդի կեանքին վրայ. եւ այս, չնորհիւ այն յիմարներուն, որոնք որպէս թէ խորունկէն կ'ակօսեն, իրենց ցեղային հունտերը չմեռցնելու համար...

— ձեռակ'թ, ասոնք ճակատի վրայ լուծուելիք հարցեր չեն. ճակատին վրայ ինչ կայ ընելիք՝ մենք այդ պիտի ընենք...

Ահա Կրեկոյի եւ Կարմիր քարերու գիծը Մամիկոնեանի եւ Պետոյեանի ոյժերն են կեցած:

Պարպարի հովիտի վերին ընթացքի երկու կողմի լեռնամուտերը Գասպարիտան թորոյի, Այեանցից Մկրոյի, Շամամի թորոյի եւ Գարհատեանի ոյժերն են, որոնք նոյնպէս Մամիկոնեանի հրամանատարութեան ներքեւ կ'իյնան:

Ընկուզի ձորի գետակի միջին ընթացքի երկու կողմի լեռնային բարձունքներուն՝ Իշխանաղունի եւ Ասպետեանի ոյժերն են:

Կեալիսեանի վերին ընթացքի երկու կողմի լեռնաշղթաներուն՝ Արծրունիի, Թորգոմեանի եւ Վիշապեանի ոյժերն են:

Անտօքի արեւմտեան փէշերուն՝ Սասունիի, Ագատեանի եւ Աստեղեանի ոյժերը:

Անտքի հարաւային դառիթափերուն՝ Իշխանեանի, Սոսիսու-
սունիի եւ Արամեանի ոյժերն են:

Իսկ Վահագնեանը իր ոյժերով պիտի շրջի գիծերու թիկունքը,
հրահանգներ պիտի տայ, հետեւի կռիւի ընթացքին եւ տկար կէտե-
րուն պիտի օգնէ...:

Կանանց ոյժերը նորէն իրենց գիծերուն մաս պիտի կազմեն,
օգնելով կուուող ոյժերուն եւ մատակարարելով հաց եւ ջուր:

Անդին, Կաթէ, Սառէ, Ռեհան եւ Զինոյ իրենց ոյժերով Մա-
միկոնեանի գիրքերուն վրայ պիտի աշխատին:

Սղամ, Շուշան, Սրբայ, Զոզան, Շաքէ իրենց ոյժերով Իշխա-
նագունի գիրքերուն վրայ պիտի աշխատին:

Վարդէ, Մեյմոյ, Շոդեր, Լեյլան, Էդոսյ եւ իրենց ընկերները
Վիշապեանի եւ Թորդոմեանի գիրքերուն վրայ պիտի աշխատին:

Կիւլէ, Հղիկ, Մարթա, Եւա, Քիչնոյ ու իրենց ոյժերը Իշխան-
եանի եւ Արամեանի գիրքերուն վրայ պիտի աշխատին:

Մարկըրիթ, Նոյեմպար, Հուռէ, Մեյտոյ ու Պլաու Ագատեանի
եւ Աստեղեանի գիրքերուն վրայ պիտի աշխատին:

Մաքէ, Բընտոյ, Սաչէ, Սաթուգարէ եւ իրենց ընկերները Պար-
պարի հովիտի լեռնամուտերու գիրքերուն վրայ պիտի աշխատին:

Վիրաւոր Վրէժեանը եւ Արամեանը խումբ մը երիտասարդնե-
րով պիտի հսկեն ներքին կարգապահութեան եւ զինամթերքի բա-
ժանման:

Իսկ Մովինար, Կաթէն եւ Կեթան կանանց ներկայացուցիչներու
հետ մատակարարութեան գործին վրայ պիտի հսկեն:

Այս կարգադրութիւնները եղան զիշերուան ընթացքին եւ գի-
ծերը պարպելէ առաջ, իրենց գոհերը թաղեցին փառաւոր կերպով
մը, իրենց գիրքերուն մէջ:

Արծրունին, Վիկտորիան, Օրիորդ Արծրունին, Օղիտան, Ստե-
փոն, Փուրթոն, Մարտոն եւ միւսները թաղուեցան Կորչիկի գիծին
վրայ, եւ Վահագնեանը յուզուած իր հրաժեշտի խօսքը ըսաւ.

— Հո՛ւս, Կեայիեսանի յաւիտենական պահակէն քիչ վեր, կը
թաղենք մեր անման հերոսը՝ Արծրունին, Մովսասարի քաջարի գա-
ւաղը եւ իր գէնքի ընկերները՝ Վիկտորիան, Լեռնաշխարհի պայքարի
խորհրդանիշը, Օրիորդ Արծրունին, մեր լեռնապայքի այդ կտրիճ
այծեամբ, Օղիտան, մեր ահարկու վազրը եւ հոյակապ Փուրթոն,
Ստեփոն, Մարտոն ու իրենց կորիւնները: Կորչիկը ուխտատեղի է
մեզի եւ վերջէն եկող բոլոր հայ սերունդներուն համար: Երթաք բա-
րի, ընկերներ՝. աստուածներու նման անցաք... կը յուսանք մենք ալ

նոյն ձեւով գալ՝ ձեզի հասնելու, առանց ամշնալու ձեզմէ...:

Կեփինի գիծին վրայ թաղուեցան յայտնի ռազմիկներ Հեպիկ,
Գէորգ, Սամսոն, Թադոն, Անթառամ, Էդսոն, նշանաւոր Տիկին Ռը-
պուշը:

Իշխանեանը ծանր սրտով հողը նետեց անոնց վրայ. «Յարգանք
եւ հիացմունք ունինք մեր դոյամարտի հերոսներուն հանդէպ, որոնք
ինկան այս ծանր կռիւին: Երանի՛ թէ մեզի եւս վիճակուէր նման
փառաւոր մահ մը: Երթա՛ք բարի, ընկերներ՝, շնորհակալ ենք ձեր
մատուցած ծառայութեան համար: Պիտի աշխատինք ձեզի նման.
պիտի չմոռնանք ձեզ. ցտեսութիւն...»:

Կապլորի գիծին գոհերը թաղեցին իրենց գիրքերուն մէջ:
Մրրկային հերոս Սոսիսուսունին թաղուեցաւ Կապլորի գաղաթին վը-
րայ, ծաղկեայ դազաղի մը մէջ, եւ Մուշեղեանը արցունքոտ աչքե-
րով իր բաժանումի խօսքը ըսաւ.

— Կապլորի գաղաթին թաղեցինք մրրկային հերոս Սոսիսու-
սունին, Դուբանի մեծ գաւաղը, Ալիճանայ Տիգրանը, որու վրայէն
փոթորիկները պիտի անցնին եւ հերոսի շունչը պիտի տանին աշ-
խարհներ, որ եկող սերունդները ներշնչուին անկէ եւ կուրին բըռ-
նութեան ու վատութեան դէմ... Կապլորը սրբացաւ, իր գաղաթը
մեծ յեղափոխականի մը յաւիտենական հանգստավայրը եղաւ եւ իր
լանջերը՝ բնակավայր վատութեան դէմ կուուող քաջերուն՝ անման
Զուռոյին, Աւէին, Զեքոյին, «գիշերային պատուհաս» անդուզական
Նազէին եւ իրենց ընկերներուն: Երթա՛ք բարի, ընկերներ՝. եթէ մենք
թուլանանք, թող ձեր արհամարհանքը նետուի մեր երեսին եւ թող
մեր ազնիւ Նազէի խարազանը շաչէ մեր ուսերուն...:

Տարկոշեան գիծին վրայ թաղուեցան Տարկոշեան քաջերը —
Գէորգ, Շերոն, Յարէթ, Միրոն, Մանոն, Թեմոն եւ Հերանոյշ ու
Գեղանոյշ՝ այդ երկու կտրիճ աղջիկներն ու կորովի Աստեղեանը:
Ու Ագատեան անոնց գերեզմանին վրայ հաղիւ կրցաւ ինքզինքը դըս-
պել, երկու խօսք ըսելու համար.

— Տարկո՛շ եւ Անտո՛ք, դո՛ւք ահանաւես եղաք այն անցքե-
րուն, որ տեղի ունեցան այս հողերուն վրայ. ըսէ՛ք եկող բոլոր սե-
րունդներուն թէ ի՛նչպէս ինկաւ դոյամարտի մայրը եւ թէ ի՛նչպէս
ինկան այս քաջերը: Ու դուրդուրացէ՛ք անոնց վրայ, որ ձեր զուակ-
ներն են, ձեզի նման հպարտ եւ խրոխտ...:

Նոյնպէս Չայի եւ Տալաղարի գոհերը թաղուեցան իրենց գիր-
քերուն մէջ. եղան զինուորական պատիւներ, եւ կուուող ոյժերը իրենց

վերջին յարգանքը տուին իրենց նահատակներուն ու անցան իրենց նոր գիծերուն վրայ...

Ու ծանր կռիւ է...

Մամիկոնեանը զիրքէ զիրք կ'անցնի՝ հասկնալու համար զիրքերու վիճակը:

— Քաջէ՛ր, զիտէք ձեր ընելիքը. աւելորդ կը դռնեմ որեւէ խօսք. արժեցուցէ՛ք ինքզինքնիդ, — ըսաւ Մամիկոնեան:

— Անշուշտ, — ըսին կուռուղները. — զիտենք թէ ի՞նչ պէտք է ընենք. կը վստահեցնենք Մամիկոնեանը, որ պիտի ջանանք աւելին ընել քան ինչ որ ըրինք:

— Ծնորհակալ եմ: Ձեր վարձատրութիւնը ձեր կեանքը սուղ ծախելուն մէջն է...

— Կեցցէ՛ Մամիկոնեանը, մեր Լեւոնաշխարհի մարտական սփին, — պոռային զիրքերը խանդալատ:

— Հր՞, Չորո՛յ, — ըսաւ Վարդանը. — կը տեսնե՞ս այն սեւ զանդուածը, որ կը շարժի. ի՞նչ կ'ըսես, այսօր որո՞ւն մայրը կու լայ:

— Որո՞ւն մայրը կու լայ, թող լայ: Վարդա՛ն, մեր մայրը շատոնց է լացեր. այլևս արցունք չունի: Նմա՛ն սեւ զանդուածներ շատ ենք տեսեր. արդէն հոս կեցած՝ այդ սեւ զանդուածին կը սպասենք:

— Հա՛յ հա՛յ, — ձայն տուաւ երիտասարդ եւ առիւծասիրտ Պետոն, որուն ստացած վէրքերը դեռ նոր էին լաւացեր եւ եկած էր զիրքը. — կա՛մ պիտի գզենք, կա՛մ պիտի գզուինք:

— Պետո՛յ, Պետո՛յ, գզելու համար սուր ահուայ պէտք է ունենայ, — ըսաւ Ախոն, որ կատաղի նայուածքով սեւ զանդուածը կը զիտէր. — վախնամ մեր ահաւանները չբաւեն այս զանդուածը գզելու...

— Ի՞նչ է պատահեր, — մէջ մտաւ լրջախոհ Մանուկը. — դեռ երիտասարդ էք, սուր եւ սմուր ահաւաներ ունիք, չէ՞ք կրնար այս շուարած ոչխարի հօտերը խեղդել:

— Ինչո՞ւ է, — աւելցուց Մանուկը, — այնպէս կը խեղդենք,

որ իրենց քիթէն եւ բերնէն դայ. արդէն մեր զործը ի՞նչ է, եթէ ոչ խեղդել...

— Ես ասոնց մէջը, — ջղայնացած ըսաւ Աւքոն, — եթէ ասոնք հաւու չափ խելք ունենային, իրենց տուներէն չէին շարժեր. չէ՞ս գիտեր ո՛ր շունն է փափսացեր ասոնց ահանջին եւ ասոնք եկած են այս լեռներու մէջ սատկելու:

— Եղածը եղած է, Աւքո՛յ. մի՛ ջղայնանար: Եկած են եւ մեզ կը փնտռեն: Խանդալատուած են որ մեր զիրքերը պարսպ են գտեր. անշուշտ կը մտածեն որ փախեր ենք մեր վախէն. ձայն մի՛ հանէք, սպասեցէ՛ք, մինչեւ որ Մամիկոնեան ազդանշանը տայ, — յանձնարարեց Չորոն:

— Սկսան թնդանութներով խուզարկութիւն կատարել մեր հետքը գտնելու համար: Պէտք է կենդանութեան նշան ցոյց տալ. թող մօտենան զիրքերուն, որպէսզի համազարկի տակ խոտի նման թափին, — ըսաւ Պետոն:

Պարպարի հովիտի երկու կողմի բարձունքներու վրայ կուռուղ ոյժերը անհամբեր կը սպասեն թշնամիին: Մարդէ խոհեմութիւն կը յանձնարարէ, Ծամամի թորոն դժգոհ է որ լարուած վիճակը երկար եթէ տեւէ, ուժասպառ կ'ընէ մարդս. բախումը պէտք է շուտ ըլլայ, որպէսզի հաշուեյարդարն ալ շուտ դայ...

— Մի՛ աճապարեր, — կ'ըսէ Ալեանցից Մկրտն. — բախումը չ'ուշանար. կը տեսնես, թշնամին արդէն կը մօտենայ. լեռ ու ձոր կը սեւկտայ. այդ բոլորը անպատճառ սիրահարուած են քու հրաշալի ձայնիդ:

— Հա՛յ հա՛յ, — ձայն տուաւ Գասպարտան թորոն. — ձայնի՞ն թէ կաշիին:

— Ի՞մ կաշին թանձր է, թորո՛յ, դժուար թէ ասոնց ահաւանները խրին:

— Ակուայ չի խրի, գնդակ կը խրի, — ըսաւ Մարդէն խնդալով:

— Ես գնդակէն չեմ ախորժիք, տղանե՛ր, ատոր համար գրնդակը ինձմէ հեռու կը փախչի:

— Գնդակը քեզմէ հեռու կը փախչի, իսկ դուն չես կրնար գնդակէն հեռու փախչիլ. գնդակը որ եկաւ, չի հարցներ թէ ո՛վ ես, ի՞նչ ես. կը ծակէ ու կ'անցնի: Կ'ըսեն թէ Խոտխոտունին անխոցելի էր, բայց ի վերջոյ գնդակը գտաւ զինք:

— Ձուրի կուժը ջուրի ճամբան կը կոտրի. գնդակ նետողն ալ գնդակ կը ստանայ, — ըսաւ Ալեանցից Մկրտն:

— Շիրտակ է, — հաստատեց Գասպարտան թորոն. — սուր վերցնողը սուրով կը կորսուի, ինչպէս կ'ըսէ Աւետարանը. այդպէս չէ՞, տէ՛ր հայր:

— Տէր թորոսը մեր գէնքի յաջողութեան համար կ'աղօթէ հիմա եւ ժամանակ չունի խօսելու:

— Է՛հ, դիրքերը մտէք եւ պատրաստ եղէք. տեսնենք այս օրը ի՛նչպէս պիտի գլորցնենք, — ըսաւ Մարգէն:

— Օրը անպատճառ պիտի գլորուի. ով հետ գլորուաւ, արդէն կը գլորուի, — պատասխանեց Շամամի թորոն:

— Հոգ մի՛ ընէք, տղա՛ք, օրը յաջող գլորցնելու համար է որ Տէր թորոսը այդքան վերացած եւ ջերմեռանդ կ'աղօթէ...:

Ահա Իշխանագունի եւ Ասպետեանի դիրքերը Ընկուզի ձորի գետակի միջին ընթացքի երկու կողմի լեռնամուտերուն վրայ: Իշխանագուն հրահանգներ կու տայ եւ կուռողները դիրքերը կը յարգարեն: Խղամ իր նշանակալից քրքիջն է ձգեր՝ դիտելով հեռուէն թըշնամի զանգուածը, որ կը շարժի: Իսրոն եւ Ստեփոն փամփուշտ կը բաժնեն: Գեղաչէնի Սարգիսը եւ Շուշնամերկի Աւէն հրացաններ կ'իւզոտեն. Գարոյ Պետրոս տասնոցը կը քննէ եւ կը պոռայ.

— Է՛հ սպանե՛ր, տաք կռիւ պիտի ունենանք. գէնքերը քննեցէք. չըլլա՛յ թէ կռիւի տաք միջոցին ծուլութիւն ընեն:

— Մեր ձեռքին մէջ գէնքը իրաւունք չունի ծուլութիւն ընելու, — ըսաւ Շաւարշը. — անմիջապէս կը կոտրենք:

— Ի՛նչպէս կը կոտրենք. եթէ կոտրենք՝ մենք ալ կը կոտորուինք, Շաւարշ, — խօսեցաւ Արմէնը. — առանց գէնքի ի՞նչպէս պիտի շարժուինք այս ջուրին հետ: Զէնքի վրայ պէտք է դուրսդուրալ, մեր ինքնապաշտպանութեան միակ միջոցը այդ է: Ա՛հ, եթէ ուրիշ միջոցներ ալ ունենայինք, ի՛նչպէս պիտի շարժինք եւ մտնինք այս մտէ անտառը:

— Այո՛, սպանե՛ր, ձեր քաջութեան հետ դուք պէտք էր ունենայիք եւ պէտք եղած գէնքը, որպէսզի կարենայիք այս անբարոյական աշխարհին հասկցնել թէ ի՛նչպէս կը պատժեն վատութիւնը, — ըսաւ Ասպետեան՝ խորունկ հառաչանք մը արձակելով...:

— Ասպետեա՛ն, — ձայնեց Գարոյ Պետրոսը, — այս աշխարհին մէջ ամէն ինչ հակառակ շրջուած է. փոխանակ վատութիւնը ըսպաննելու, բարութիւնը կը սպաննեն:

— Այո՛, որովհետեւ մարդիկ վատ են, եւ վատերը պէտք է որ մեռնին, բայց ո՞վ պիտի մեռցնէ, երբ բոլորը վատ են. չե՞ս կար-

ծեր որ ջրհեղեղ մը եւս անհրաժեշտ է:

— Ինչո՞ւ, Աստուած այնքան անխեղ է որ տանի այս վատաներածները եւ գլխուն փորձանք ընէ, — ըսաւ Գարոյ Պետրոս՝ բարձրաձայն խնդալով եւ թքնելով վատերու հասցէին...:

Կեալիեսանի հովիտի վերին ընթացքի, լեռնամուտերուն վերայ Արծրունիի, թորդամեանի եւ Վիշապեանի սլոթերը դիրքերը կ'ամրացնեն: Վիշապեան, այդ հուժկու աղամարդը, կը խրախուսէ.

— Մեր մայրերը մեզ ծնան այսպիսի ծանր ու դժնդակ օրերու համար. պիտի դիտնանք արժեցնել մեր մայրերու կաթը. Արծրունին եւ Խոտխոտունին միշտ ձեր աչքի առջեւ թող ըլլան. ներշնչուեցէ՛ք անոնցմէ եւ աշխատեցէ՛ք նմանիլ անոնց: Մենք անոնցմէ աւելի չենք, եւ եթէ պիտի երթանք անոնց միանալու, գոնէ բաց ճակատով երթանք...:

Նշանաւոր Մաթոն կը խնդայ, սիկարը բերնին:

— Ի՞նչ կը խնդաս, — հարցուց Սանոն:

— Թեւերս պիտի քշեմ եւ մարդ սպաննեմ: Այս ի՛նչ բարբարոս աշխարհի մէջ ինկած ենք, — պատասխանեց Մաթոն դժգոհութեամբ մը:

— Այո՛, կա՛մ պիտի սպաննենք, կա՛մ պիտի սպաննուինք: Աւելի ճիշդ, ե՛ւ կը սպաննենք, ե՛ւ կը սպաննուինք:

— Երկնային կարգադրութի՞ւն է:

— Ո՛չ, երկրային:

— Թրքական...:

— Բոլո՛ր ուղեղները պղծուած են եւ ոչ թէ միայն թրքականը:

— Այո՛, բայց թրքականն է որ կը պատուհասէ:

— Իսկ քրտակա՞նը:

— Անիկա անուղեղ է:

— Այն ուղեղները, որոնք շարը կը խորհին, պէտք է պայթեցընել:

— Այն ատեն պէտք պիտի ըլլայ ամբողջ մարդկութիւնը պայթեցնել:

— Լա՛ւ է որ փճանայ այս մարդկութիւնը, որովհետեւ անարժան է այս կեանքին. անիկա պղծեց ե՛ւ կեանքի իմաստը, ե՛ւ գեղեցկութեան խորհուրդը:

— Մեզի ինչ որ վիճակուած է, այն պիտի ընենք. ուրիշ բանի մասին խօսելու ժամանակ չունինք: Թշնամին երախը բաց կը մօտե-

նայ. պէտք է փշրել անոր ատամները: Ինչո՞ւ յուզուած էք. թէ մարդ կը սպաննենք, լաւ կ'ընենք. ասոնք մարդ չեն. եթէ մարդ ըլլային, մեզ սպաննելու պիտի չգային: Եւ որքան կրնանք, պիտի ըստաննենք: Եթէ Աստուած կը մեղադրէ, թո՛ղ ինքը ամէնայ, որ այս չարիքը նետած է կեանքին մէջ...

Տարկոշեան գիծիւ վրայ Արցախեան եւ Աղատեան դիրքերը կը շրջին եւ կը խրախուսեն կռուող ոյժերը.

— Կորուստներու ծանրութեան տակ պէտք չէ ընկճուիլ. ընդհակառակն աւելի պէտք է արիանալ, վրէժն առնելու համար անոնց, որոնք ինկան, եւ անոնց՝ որոնք պիտի իյնան...:

— Այո՛, արդէն այդպէս կտակեցին մեզի մեր քաջերը, որոնք այս ծանր կռիւներուն ինկան, — ըսաւ մէկը:

— Կ'իյնանք եւ մենք. բայց կ'ընենք ի՛նչ որ կրնանք, — ըսաւ միւսը:

— Անտարակո՛յս, — աւելցուցին ուրիշներ :

— Պիտի ընենք ինչ որ կրնանք:

— Ինչ որ ալ ընենք, պիտի իյնանք...:

Ու վայրագ կռիւը կը մղուի բոլոր դիժներուն եւ բոլոր դիրքերուն վրայ. թշնամին կատաղի յարձակումի է անցեր, կ'ուզէ Անտոքը հիմն ի վեր շրջել... Եւ անոր փէշերուն վրայ թառած թէ՛ կռուող ոյժերը եւ թէ՛ ժողովուրդը ոչնչացնել... Զինուորականներն ու աշխրեթապետները կը խրախուսեն իրենց ոյժերը եւ կը յորդորեն գանոնք անխնայ ըլլալ: Գալարափողերը շարունակ յարձակումի հրամանը կը շեփորեն. «յառա՛ջ» կ'ազմկեն բոլորը ու դիրքերը զփոխքի մը ծանրութիւնը կ'ապրին... Ֆեւզի եւ Մեհմէտ Ալի փաշաները, ինչպէս եւ Բէուֆ, Զիա եւ Բեսիմ պէյերը, յաղթական տրամադրութիւններով գեղուն, առատ վարձատրութիւններ կը խոստանան զօրքին, ե՛ւ երկրի վրայ, ե՛ւ երկինքի մէջ: Ճեւաթ եւ Նիսպին, լուռ ու մտախոհ, գէպերուն կը հեռուին...:

Ու կռիւը ծանր է... յարձակող ալիքները իրարու ետեւէ կը թաւալին. աշխրեթական ոյժերը աւելի եւս կացութիւնը կը ծանրացրնեն: Գիմադրական ոյժերը հետզհետէ կը սպառին գերագոյն յարուածութեան մը մէջ: Անկարելի է խուժումը կեցնել եւ դիրքերը պահել. դիրքերու վրայ թէ շուրջ, կատարեալ սպանդանոց է:

Մամիկոնեան, Իշխանապուն, Իշխանեան, Վիշապեան, Ասպետեան, Մուշեղեան, Ազատեան, Արցախեան եւ իրենց ոյժերը, իրենց ամբողջ ծանրութիւնը հրապարակ նետած են, եւ Վահագնեան, այդ հուժու աղամարդը, մրրկի նման կը դառնայ Անտոքի շուրջ՝ դիրքերու վրայ, եւ սակայն դիրքերը կը ճարձատին: Անտոքը կը թնդայ ծուխի եւ մուխի մէջ: Գոյամարտի ոյժերը իրենց գերագոյն ճիգը կը սպառեն, եւ ժողովուրդը կ'ազօթէ...:

— Յառա՛ջ, — կը պոռան հրամանատարներն ու աշխրեթապետները:

— Յառա՛ջ, — կ'ազմկեն զօրքն ու խուժանը:

Արիութիւն կը յանձնարարեն գոյամարտի ոյժերու հրամանատարներն ու դիրքերու վարիչները... ու աստուածներն անգամ այդքան կորով ու արիութիւն պիտի չկարենային ցուցնել:

— Հը՞, փաշա՛ էֆենտի, — ըսաւ ձեւաէթը Ֆեւզիին, որ հեռադիտակով կը հետեւէր գէպերու զարգացման եւ սակայն գոյնը նետել սկսած էր, — ի՞նչպէս կ'ընթանայ կռիւը...:

Ֆեւզի.— Դիրքերու վրայ կռիւը ծանր հանդամանք է ստացեր. ինչ կը կատարուի չեմ գիտեր: Պէտք էր որ դիրքերը առնուած ըլլային մինչեւ հիմա:

ձեւաէթ.— Երբ կռիւը կը շարունակուի, կը նշանակէ դեռ կը դիմադրեն:

Ֆեւզի.— Օ՛ր այդ դիմադրութիւնը, ի՛նչ աղէտներ հասցուց մեզի, բայց վերջապէս ե՞րբ պիտի խորտակուի...:

ձեւաէթ.— Երբ ռազմամթերքը սպառի. իսկ ի՞նչ կ'ըսեն սուրհանդակները:

Ֆեւզի.— Սուրհանդակներ՞ըր... բոլոր ճակատներն ալ ծանր դիմադրութեան հանդիպեր են. բայց կ'աշխատին դիրքերը դրաւել կորուստներու դնով...:

Բէուֆ ծանր կորուստներ է ունեցեր, եւ սակայն կռիւը դիրքերու վրայ է. աւելի շատ քրտական հեծելազօրքն է վնասուեր:

Մեհմէտ Ալի փաշայի եւ Զիա պէյի ոյժերը յաջող վիճակի մէջ են. կը տեղեկացնեն որ թշնամիի դիմադրութիւնը կը տկարանայ եւ

յոյս կը յայտնեն որ քանի մը ժամէն կարելի պիտի ըլլայ իրենց առջեւ գտնուող ըմբոստ ոյժերը ամբողջովին մաքրել...

Բեսիմ պէյի ոյժերը նոյնպէս մեծ քաջութիւն ցոյց տուած են. Բեսիմ ինք անձամբ յարձակումի դասեր է եւ թեթեւ վէրք մըն ալ ստացեր է թեւէն: Նիազի պէյը նոյնպէս լաւ աշխատեր է. եւ կը կարծուի որ վերաւոր է: Մեր ճակատի կացութիւնը յայտնի է. ծանր կռիւ կայ զիրքերու վրայ: Ի՞նչ կորուստներ ունինք, տակաւին յայտնի չէ. բայց երեւի մեր սպաներէն ոմանք ինկած են:

Ճեւտէթ. — Հոգ չէ, փաշա՛ էֆենտի, կ'իյնայ ե՛ւ սպան, ե՛ւ զինուորը. կրնանք նահանջի ենթարկուիլ, նորէն ետ դառնալ, ինչպէս որ եղաւ շատ անգամ, բայց եւ այնպէս այդ բոունցքը պիտի ջարդուի:

Ֆեւզի. — Այո՛, ճեւտէթ պէյ, բայց այդ բոունցքը արժեց աւելին քան ինչ որ կ'արժէր:

- Ո՛չ, պիտի արժէ ա՛յն, ինչ որ կ'արժէ:
- Այո՛, բայց հաշիւը այսօր կը փակուի:
- Մինչեւ իրիկուն յայտնի կ'ըլլայ...
- Կը կարծէք որ մինչեւ իրիկուն դիմանա՞ն:
- Հաւանաբար...

Ֆեւզի. — Ուրեմն յարձակման թափը պէտք է սաստկացնել, — ու հետագիտակով նայելով, — չեմ կարծեր որ մինչեւ իրիկուն դիմանան. մերոնք ընկրկում ցոյց չեն տար: Հեծելազօրքը կարծես կրտրեց զիրքերու զիծը եւ անցաւ: Գոյամարտի ոյժերը գերի պիտի իյնան:

- Ճեւտէթ. — Ձեմ կարծեր թէ գերի իյնան, այլ պիտի փճանան:
- Ֆեւզի. — Անչո՛ւշա:
- Ճեւտէթ. — Բայց ո՛չ գերի իյնալով, այլ կուռելով:

— Հը՞, Քեմա՛լ, ի՞նչ լուր ճակատներէն, — հարցուց Ֆեւզի փաշան սուրճանդակին, որ բարեւի կեցած էր իր առջեւ:

Քեմալ. — Ճակատներու վրայ ամէն ինչ լաւ կ'ընթանայ, փաշա՛ էֆենտի. Բէուֆ պէյի ոյժերը վճռական հարուած տուեր են թըշնամիին, որուն զիրքերու մէկ մասը գրաւուած է: Կռիւը կատաղութեամբ կը շարունակուի միւս զիրքերուն վրայ: Մեհմէտ Ալի փաշայի եւ Ջիա պէյի ոյժերը իրենց ճակատը հաշուեյարգարի ենթարկած են, թշնամիի զիրքերը գրաւեր են եւ թշնամիին գրեթէ ամբողջութեամբ բնաջնջեր են. հազիւ թէ մի քանի հոգի յաջողեր են փախչիլ: Այժմ մտադիր են երկու թեւի բաժնուիլ. մէկը Բէուֆ պէյի,

Իսկ միւսը՝ Բեսիմ պէյի գէմ կոուոզ թշնամի ոյժերը թիկունքէն հարուածելու համար: Գժբախտաբար մեր կորուստներն ալ թեթեւ չեն. Ջիա պէյը սպաննուած է:

- Մե՛ղք, — ըսաւ Ֆեւզին:
- Ափսո՛ս, — բացականչեց ճեւտէթը:

Բեսիմ պէյի ոյժերն ալ յաջողութեան մէջ են, թէեւ քրտական հեծելազօրքը ընկրկում ցոյց տուեր է, բայց Բեսիմ զանոնք զնդացիրային կրակի տակ առնելով յառաջ մղած է: Թշնամիին այդտեղ ալ մեծ կորուստներու ենթարկուած է. Նիազի պէյի ոյժերն ալ մեծ քաջութեամբ կռուած են. թշնամիի զիրքերուն մեծ մասը գրաւուած է եւ Նիազին կը կարծէ որ զիմագրութիւնը դադրելու վրայ է, — վերջացուց Քեմալը:

- Լա՛ւ, — ըսաւ Ֆեւզին եւ դառնալով ճեւտէթին. — Ի՞նչ կ'ըսէք, գործերը լաւ կ'ընթանան, չէ՞:

— Այո՛, փաշա՛ էֆենտի. կը յուսամ որ այս յոյնութենէն շուտով կազդուրուինք:

— Իսկ խեղճ Ջիա պէյը չվայելեց իր յաղթութեան պատուը. նորէն Մեհմէտ Ալիի բախտն է որ կը ժպտի:

- Այո՛, եւ ո՛վ գիտէ, հպարտութիւնը որ աստիճանի հասած է. արդեօք ի՞նչ տեղեկագրեր է որ կ'որոճայ հիմա:

— Աճապարելու ժամանակ է, ճեւտէթ պէյ, մենք եւս պէտք է մաքրենք մեր ճակատը:

- Այո՛, փաշա՛ էֆենտի, — ըսաւ ճեւտէթը:
- Ուրեմն դուք գէպի Կարմիր քարեր, իսկ ես կը մեկնիմ Պարպարի հովիտը:
- Լա՛ւ, փաշա՛ էֆենտի:



Անտօքը ծանր հոգեվարք մը կ'ապրի... զիրքերէն ոմանք ճեղքուած են, եւ ճեղքերը լեցնելու համար զինուած ոյժեր կը պակսին: Վահագնեան որքան կը փորձէ կարկանել, անօգուտ է. կոուոզ ոյժերը հեռագհետէ կ'իյնան եւ տեղը չի լեցուիր: Իսկ ռազմամթերքը արդէն սպառեր է:

Մամիկոնեան, ճերմակ նժոյգով ասպետը, աւելի քան դաժան է դարձեր. իր կորիւնները կ'իյնան աջ ու ձախ, ճակատը կը կոտորուի. կը խրախուսէ մնացածները որ ճիգ ընեն՝ ինկողներու պակասը լեցնելու: «Հերոսները ընկրկում չեն ճանչնար» կ'ըսէ:

— Եւ սակայն աստուածներն իսկ պիտի փախչէին այս դժոխքէն, Մամիկոնեան, — ըսաւ Վարդան՝ քրտնած:

— Ի՞նչ պիտի ընէին աստուածները այս դժոխքին մէջ, — աւելցուց Չորոն դէմքը կապարի գոյն առած բարկութենէն:

— Է՛հ, — ըսաւ յանդուզն Ախոն, — Պետոյի եւ Արթինի նման հսկաներ են ինկած. կանանց ոյժերէն Սառէի, Ռեհանի եւ Մաքէի նման անփոխարինելի կորուստներ ունինք: Տատանումը ներելի չէ. ճիշդ ըրէք աւելի մեծ ըլլալու քան ինչ որ էք...:

— Հոգ մի՛ ընէք. եթէ աշխարհը ուժանակ մը ըլլայ եւ մեր գլխուն պայթի, աչք չենք թարթեր, — ըսաւ արիասիրտ Առքոն. — աշխատեցէք հատ մը աւելի գլորցնել, քանի զեռ յաւիտենականութեան ճանապարհը չէք բռնած...:

— Հը՞, Մամիկոնեան, — ձայն տուաւ Մանուկը. դժուար է այս դժոխքը կարգի դնել, որ այդքան քաջեր լափեց մեզմէ: Ըսէ՛ աեսնենք, մեր միւս ճակատներէն ի՞նչ լուր կայ:

Մամիկոնեան. — Ճակատներու վիճակը, Մանուկ, ծանր է. նուազագոյն ոյժերով անկարելին կ'ընենք. բայց չենք կրնար խուժումը կեցնել. թշնամին երթալով կ'աճի թէ՛ մարդու եւ թէ՛ ոռոգմամբ թերքի կողմէ: Մենք նուազագոյնի իջեր ենք, եւ ինչ որ ամենէն անհրաժեշտն է, կը պակտի, այսինքն ոռոգմամբերք չկայ... Իշխանագունի դիրքերու մէկ մասը դրաւուած է, եւ իր լաւագոյն ոյժերէն շատերը ինկած են, ինչպէս Գեղաշէնի Սարգիս, Շուշնամերկի Աւէն եւ ուրիշներ. կանանց ոյժերէն՝ յայտնի Շուշանը, Պղալ, Չողան, որոնք վար չէին մնար մեր լաւագոյն կառուողներէն:

Մեր դիրքերու վիճակը գիտէք. կորսնցուցինք անզուգական Պետոն, Արթինը, Գասպարտան Թորոն, Ալեանցից Մկրտն ու Մակար, Տէր Թորոս եւ ուրիշ կտրիճներ. կանանց ոյժերէն կորսնցուցինք ըսքանչելի Ռեհանն ու Սառէն, յայտնի ոռոգմի երգիչ Մաքէն ու Մեյրոն: Չեմ գիտեր մինչեւ իրիկուն պիտի կարենա՞նք պահել ճակատը. կեղբոնը տրամադրելի ոյժ չունի. Վահագնեան շուարած է թէ ո՛ր ճեղքին հասնի. գիմաղբական բոլոր թուժերը իրարու ետեւ կը քանդուին. եւ թշնամին երթալով ճնշումը կը սաստկացնէ:

Կեալիեսամի գիծիմ վրայ Վիշապեանի եւ Թորգոմեանի ոյժերը ծանր կորուստներ ունին. թշնամին դիրքերը մտած է եւ դիրկընդխառն կռիւը կը շարունակուի: Ինչո՞վ պիտի վերջանայ, տակաւին յայտնի չէ. կառուող ոյժերէն Սեղբակը, Օվանէսը, Յարէթն ու Յակոբը ինկած են. ինկած են եւ Շողերն ու Լեյլան՝ այդ կտրիճ աղ-

Չիկները:

Իշխանեանի, Արամեանի եւ Մուշեղեանի դիրքերը վտանգուած են. կը կարծուի որ դիրքերը բոլորովին անցած պէտք է ըլլան հիմա թշնամիի ձեռք: Երկուստեք ծանր կորուստներ կան. Իշխանեանը վիրաւոր է, Արամեան սպաննուած. Աջոն ու Մարթան նոյնպէս: Իսկ կառուող ոյժերէն որո՞նք ինկած են եւ որո՞նք աղատած են, տակաւին յայտնի չէ:

Տարկոշեան գիծիմ վրայ Ազատեան եւ Արցախեան կը ջանան խուժումը կեցնել. նոյնպէս ծանր կորուստներ ունին եւ սակայն դիրքերը տակաւին կը պահեն: Կառուող ոյժերէն ինկած են Կարոն, Ակէն, Թադոն, Էդոն, Աղամ եւ ուրիշներ, իսկ կանանց ոյժերէն Մարգրիտ, Պլոյուլ եւ Զիւնէն... Սակայն ճշգրիտ տեղեկութիւններ կը ստանանք, երբ իրիկուն ըլլայ. հիմա պիտի ջանանք դիրքերը պահել, մինչեւ իրիկունը վրայ հասնի...:

Մանուկ. — Այդ բոլորը արդէն պիտի ըլլար. մեր օրն ալ կը մօտենայ. բնական մահով մեռնելու յոյսը կորսուած է. մենք արդէն շատոնց պատրաստուած ենք մահուան... Քալենք աղամարդու նըման, թող ըլլայ ինչ որ պիտի ըլլայ:

— Հա՛յ հա՛յ, քալեր ենք մինչեւ հիմա, նոյնպէս պիտի քալենք ասկէ ետք, — ըսաւ Ախոն:

— Լա՛ւ կ'ըսես, բայց եթէ թողուն որ քալենք, — աւելցուց Չորոն խնդալով:

— Մինչեւ ո՛ւր պիտի քալենք, արդէն հասանք գաղաթը. յետո՞յ, — հարցուց Առքոն խորհրդաւոր թոնով մը:

— Յետո՞յ. մինչեւ աստղերը, — վրայ բերաւ Վարդան՝ երկինքը ցոյց տալով:

— Իսկ մենք ի՞նչ ենք որ. աստղերէ՞ն աւելի պայծառ եւ աւելի մաքուր, — քմծիծաղով մը ըսաւ Մանուկը, — եւ հո՛ն պիտի երթանք:

— Առնականօրէն երգենք մեր մահուան երգը, եւ թող տիեզերական գոյութիւնը ամէնայ այն վատութեան համար, որ ստեղծագործեր է այս աշխարհի վրայ, — ըսաւ Գաբրիէլ, յուզուած ձայնով մը:

Սակայն դիրքերու գիմաղբական կարողութիւնը հետզհետէ կը թուլնայ եւ քաջութիւն կը ներշնչէ յարձակող թշնամի ոյժերուն, որոնք առաջ կը քշուին դէպի դիրքերը: Հրամանատարներն ու աշխրեթապետերը սիրտ առած՝ դիրքերու գիմաղբական թուլութենէն, իրախուսանքի, դնահատանքի եւ վարձատրութեան խօսքեր կ'ընեն.

իսկ գալարափողերը աւելի բարձր կը հնչեն...

Հարիւրապետ Քեազիմ վարձատրութեան հեռանկարէն զինով-
ցած, կ'ուզէր կարմիր քարերու դիրքերը տրորել, բայց Գուրգէնի
գնդակը զիմաւորեց զայն եւ Քեազիմ կաղկանձելով կռնակի վրայ
ինկաւ. իսկ Մուհետտին պէյ կատաղութենէն ակռաները կը կրճատէր
եւ զոհերը անասնօրէն բղկտելու վճռականութեամբ, դիրքերը կը
ջանար մանել. բայց Խորէնի գնդակէն թաւալուր զնաց ու հողը կը
ճանկուտէ. եւ քանինն'ը այդպէս:

Ջրկիր ճաֆարի ականջին փախսացեր են որ հասարակ զինուո-
րի վիճակէն պիտի բարձրացնեն տասնապետի աստիճանին ու յիմարը
կը կարծէ որ աներեւոյթ զրահներով պաշտպանուած է անհաւատնե-
րու գնդակէն: Գինովի նման կը վազէր գէպի դիրքերը եւ Ախոյի գըն-
դակէն քիթ ու բերնին ինկաւ:

Այսպէս գոյամարտի ոյժերը, անմարդկային լարուածութեամբ
մը, ուժասպառ եւ արիւնաքամ, կը ջանան դիրքերը պահել, մինչեւ
իրիկունը գայ... Եւ եկաւ իրիկունը, ու մութը իր թեւերը տարա-
ծեց եւ վայրագ կռիւը կանգ առաւ:

Վահագնեան նախապէս կացութեան ծանրութիւնը նկատի առ-
նելով, առաջուրնէ վիրաւոր վրէժեանին յանձնարարած էր նոր դիր-
քեր պատրաստել տալ Անտոքի փէշերուն վրայ: Մութը կոխելուն պէս
հրահանգեց անմիջապէս բոլոր դիրքերը պարպել եւ անցնիլ նոր դիր-
քեր:

— Ի՞նչ...

Ու աղմուկ բարձրացաւ դիրքերուն մէջ.

— Հրահանգ կայ դիրքերը պարպել:

— Դիրքերը պարպե՞լ: Պա՛հ, հապա այսքան կորուստ որ տը-
ւեր ենք այս դիրքերուն համար, ի՞նչպէս պարպենք:

— Ինչո՞ւ պարպենք. դաւաճանութիւն բրած կ'ըլլանք մեր զո-
հերուն, որոնք այս դիրքերու համար ինկան:

— Պիտի երթանք նո՞ր դիրքերու մէջ մեռնելու, հոս կը մեռ-
նինք. ինչո՞ւ թշնամին մտածէ, որ մենք դաւաճանեցինք ե՛ւ մեր դիր-
քերուն ե՛ւ մեր զոհերուն...:

— Մեր ոյժերը անբաւարար են պահելու ներկայ դիրքերը:
Պիտի ամփոփուինք, աւելի ծանր հարուած տալու թշնամիին: Ծի՛ղդ
է, հոս մեռեր ենք թէ հոն, միեւնոյնն է, բայց հրահանգը պիտի գոր-
ծադրենք, եւ որքան հնարաւոր է, պիտի աշխատինք սուղ ծախել
մենք զմեզ:

— Այո՛, հոն հնարաւորութիւն կ'ունենանք աւելի արժեցնել
մեզ, քան հոս, ուր պայմանները աննպաստ են դարձեր այլեւս:

— Լա՛ւ, երթանք. բայց եթէ վաղը նոր դիրքերն ալ ստիպ-
ուած ըլլանք լքել, ո՞ւր պիտի երթանք:

— Ո՞վ զիտէ մեզմէ քանինն'ը նոր դիրքերը լքելու հար-
կադրանքին տակ պիտի գտնուին:

— Եթէ կզան սմանք, որ հարկադրուեցան նոր դիրքերը եւս
լքել, անշուշտ պիտի երթան Աստուծոյ պատրաստած դիրքերը:

— Պէտք է աճապարել, քանի ուշ չէ:

— Ի՞նչ պիտի բնենք զոհերը:

— Որոշուած է իւրաքանչիւրը իր դիրքին մէջ թաղել...:

Եւ իւրաքանչիւրը իր դիրքին մէջ թաղուեցաւ...:

Ահա՛ Սղամը, իր իմաստալից քրքիջն է ձգեր Սարգիսի, Աւէի,
Շուշանի, Չոզանի, եւ միւսներու գերեզմաններուն վրայ ու ձայնը
գիշերային լուսութեան մէջ կը գնկլտայ՝ Ընկուզի ձորի լեռնաշղթանե-
րու կողերուն...:

Իշխանագուն եւ իր քաջերը, լացին կորուստը այդ հերոսնե-
րուն... ու տուն իրենց վերջին բարեւը:

Ահա՛ Անգին եւ Չինոն մահուան պարը կը պարեն՝ Պետոյի,
Արթինի, Մառէի, Ռեհանի եւ միւս կտրիճներու գերեզմաններուն
չուրջը եւ Մամիկոնեան ու իր սաղմիկները արցունք կուլ տալով՝
հազիւ կրցան մրմնջել «մնաք բարի»...:

Կեայիեասնի գիծին վրայ թաղուեցան Սեդրակը, Օվանէսը,
Յարէթը, Շոզերն ու Լեյլան եւ միւս զոհերը: Վարդէն ու Մեյմոն
բաժանումի երգը երգեցին յուզուած: Վիշապեանը իր հրաժեշտի
խօսքը բրաւ, վշտարեկ ու տխուր ձայնով մը՝ արցունքներու մէջ:

Պարպարի գիծին վրայ Շամամի Թորոն, իր հոյակապ ձայ-
նով, հուժկու կռիւի երգ մը երգեց նշանաւոր Մաքէի, Գասպարտան
Թորոյի, Տէր Թորոսի, Ալեանցից Մկրոյի, Մակարի եւ միւս նահա-
տակներու շիրիմներուն վրայ, իրբեւ հրաժեշտի խօսք...:

Տարկոչեան գիծին վրայ Հուռէն զիլ ձայնով մը Վիկտորիայի
սիրած երգը երգեց. «Թող շանթ մը ըլլամ...»: Մարգրիտի, Պլպու-
լի, Կարոյի, Ակէի, Թադոյի եւ միւսներու հողակոյտերուն վրայ՝

Ազատեան, Արցախեան եւ իրենց ոյժերը վերջին խոնարհութիւնը ըրին եւ անցան իրենց նոր զիրքերը:

Կեփինի գիծին վրայ Փեփրան եւ Եւան սուգի երգեր երգեցին Արամեանի, Աջոյի եւ միւսներուն շիրիմներուն վրայ եւ հաուող ոյժերը ծանր սրտով բաժնուեցան իրենց նահատակներէն:

Գիշերուան ընթացքին Վահագնեան այցելեց բոլոր նոր գիծերն ու նոր զիրքերը, տուաւ հրահանգներ եւ ըրաւ խրատութիւն խօսքեր:

— Ռազմիկ ընկերներ, թշնամին ճնշեց մեզ եւ սեղմեց Անտոքի կողերուն վրայ: Դուք գիտէք թէ ի՞նչպէս եկանք մինչեւ հոս: Դուք գիտէք թէ այդ կռիւը մեզի պարտադրուեցաւ: Հազար ինն հարիւր տասն եւ հինգին, Փետրուար չորսին Լեոնաշխարհը մտաւ կըռիւի: այսօր Յուլիս քսանեւերկուք է. ուրեմն ամբողջ վեց ամիս մենք գոյամարտի կռիւ է կը մղենք թուրք կառավարութեան դէմ, որ մեր ժողովուրդի մահաւճիւր տուած է: Այդ վեց ամսուան մէջ մենք պահեցինք եօթ ճակատ, վեց յաջորդական գիծերով, իւրաքանչիւր գիծի վրայ մնացինք ըստ կարելոյն՝ մէկ, երկու կամ երեք շարաթ եւ աւելի, մղելով փոխն ի փոխ պաշտպանողական եւ յարձակողական կռիւներ: Այսօր կեցած ենք մեր վերջին պաշտպանողական գիծին վրայ ու պիտի ընենք մեր կարելին: Մենք հրաշքներ գործեցինք թըրքական եւ քրտական խոշոր ոյժերուն դէմ, որոնք մեզի դէմ կը գործէին պետական բոլոր միջոցներով... Դժբախտաբար մենք չունեցանք մեզի օգնութեան եկող ոյժեր: Երկրի Հայութիւնը կոտորուած է... Իսկ արտասահմանի Հայութիւնը ի վիճակի չէ... Ի վիճակի եղողներն ալ ո՛չ քաջութիւն ունեցան եւ ո՛չ գիտակցութիւն, եւ գիտէին որ օրհասական կռիւի մէջ ենք՝ միջոցներէ զուրկ... եւ սակայն անտեսուեցանք: Ինչո՞ւ լքուեցանք աշխարհէն, չեմ գիտեր: Ո՛չ ոք թող չփորձէ իր անտարբերութիւնը եւ անբարեացակամութիւնը արգարացնել... Մեր ունեցած միջոցներով տարինք կռիւը եւ հասանք հոս: Գիտէք թէ ի՞նչ անփոխարինելի կորուստներ ունեցանք: Վաղը աւելի ծանր կռիւներ պիտի ունենանք. ձեզմէ իւրաքանչիւրը հերոս մըն է, եւ պէտք չէ հերոսի ձեր հմայքին վրայ արատ գայ: Կը ցաւիմ ըսելու որ մեր ռազմամթերքը սպառած է. այն ինչ որ ունինք, տեղին պէտք է գիտնանք գործածել: Ծանապարհը կարճ է. անթարթ աչքերով պիտի քայլենք դէպի մահ, որմէ չեմ կարծեր որ որեւէ մէկը մեզմէ վախնայ...:

Վահագնեանի խօսքերուն տպաւորութիւնը մեծ էր եւ բոլորը միասին սրտանց պոռացին. «Կեցցէ՛ Վահագնեանը, մեր Լեոնաշխարհի հանճարեղ զեկավարը»:

— Հը՞, ի՞նչ կ'ըսես, Գուրգէ՛ն, ինչպիսի՞ տղամարդ է Վահագնեանը. թող իր մայրը՝ Գոմսայ հարսը միայն հպարտանայ որ հերոս եմ ծներ, — ըսաւ Մխոն:

— Ատոր ոչ մէկ տարակոյս, Մխո՛յ, — պատասխանեց Գուրգէն. — իր զէնքի ընկերները բոլորն ալ լաւ են եւ իր շունչին տակ հաուողներն անգամ մէկ-մէկ հերոս կը դառնան:

— Հազա Մամիկոնեա՞նը չէք ըսեր. արդեօք աշխարհը կընա՞յ Մամիկոնեան մը եւս ծնիլ, — ըսաւ Չաքարը:

— Իւրաքանչիւրը առանձին մեծութիւն մըն է, Չաքա՛ր, Կորիւնը եւ իր ընկերները նոյն յեղափոխական դպրոցի ծնունդներն են, որոնց մէջ կայ Հրայրի հեռատեսութիւնը, Գէորգ Չաւուշի յանդըրնութիւնը եւ Մեծ Գրգոյի անձնագոհութիւնը: Մենք ալ նոյն կռիւին մէջ թրծուած մարտիկներ ենք:

— Բայց բան մը կայ, Գուրգէ՛ն, որ կը մտնաք, ա՛յն որ անոնց արիւնը ազնուական ու ասպետական է: Շատ քիչեր կընան անոնց մեծութեան հասնիլ. մանաւանդ պղտոր արիւն ունեցողները սողունի վիճակէն վեր չեն կրնար բարձրանալ, ինչպէս մեր վրայ խուժող խաժամուժը:

— Լեոնաշխարհին մէջ մենք գրեթէ պղտոր արիւն չունինք, բայց չերթանք արեան քննութեան, որ մեզ հեռուներ պիտի տանի... Ըսէ՛ք տեսնենք, վաղը որո՞ւն հարսանիքն է:

— Վաղը բոլորիս հարսանիքն է, Մխո՛յ, միայն թէ կտրիճ եղէք եւ լաւ պարեցէք, — ըսաւ Գուրգէն:

— Անշուշտ պիտի պարենք եւ կատաղի կերպով պիտի պարենք: Կարծեմ այդ պիտի բլլայ մեր վերջին պարը, — մարդարէական ներշնչումով մը պատգամեց Չաքարը...:

Առաւօտ է. գորք, հեծկազօրք, խուժան շարժման անցան. գիշերուան ընթացքին՝ գոյամարտի ոյժերու կողմէ լքուած զիրքերը գրաւեցին եւ յարձակման անցան դէպի նոր զիրքերը...:

Կռիւը արտակարգ սաստկութեամբ մը սկսաւ: Ողբերգութեան վերջին արարուածն է որ կը խաղցուի. երկու կողմերն ալ անխնայ են եւ դաժան:

Անտօքը որոտումի մէջ կը սարսի ու կը հեւայ, իր կողերը կը

բղկաութիւն չորս կողմէն եկած համազարկերէն եւ խուժող յորձանքները ամէն կողմէ կը գայարուին, Անտոքի կողերն ի վեր. զօրքը գըրաւեց Ընկուզի ձորի պատմական գիւղը, հրդեհեց եւ անցաւ դէպի Անտոքի հիւսիսային փէշերը: Անտոքը ցատումէն կը ցնցուի եւ հուր կը ժայթքէ. անոր կողերուն վրայ ջրիբը կ'ոռնայ, կատաղութիւն կը ծամէ եւ դէպի վեր կը մագլցի:

Կոխը ծանր է:

Հրամանատարներ, սպաներ, աշիրեթապետեր իրենց ոյժերը կը խրախուսեն.

— Ճիգ մը եւս, ամէն ինչ կը վերջանայ... ասիկա անոնց վերջին կայանն է... այսօր անոնց վերջին օրն է... չորս կողմէ կը ծեծուին, արդէն փճանալու վրայ են... Ինչպէս բոլոր դիրքերը իրարու ետեւէ զբաւուեցան, ասիկա եւս կը գրաւուի եւ ամէն ինչ կը վերջանայ...: Այսօր անոնց արժանի պատիժը պիտի ստանք... Խուսափելու ճար չունին...: Ոստում մը եւս, դէ՛հ քաջեր, եւ գործը լրացած է: Գուք արժանի էք ամէն գնահատանքի եւ վարձատրութեան: Պետութիւնը ձեր մատուցած ծառայութիւնը արդէն նկատի առած է...»:

Ու զօրքը, աշայիր, խուժան, վարձատրութեան խոստումէն դինովցած, վայրենի պոռչուութեամբ կը մագլցին կողերն ի վեր Անտոքի, որ գայրոյթէն կը տնքայ եւ հուր կը ժայթքէ... Գոյամարտի ոյժերու հրամանատարներն ու դիրքերու վարիչները, իրենց սակաւաթիւ ոյժերով, խրոխտ կերպով կը դիտեն չորս կողմէ յառաջացող եւ բարձրացող հորդանքերը եւ իրենց շեշտակի հարուածը կու տան ու ջրիբը թաւարդուր կ'իջնէ դէպի ձորեր ու նորէն կը մագլցի դէպի վեր...:

— Առքո՛յ, — ձայն տուաւ Գուրգէն. — դիրքերնիս աննպաստ է: Պէտք է փոխենք, որովհետեւ Կարմիր քարերէն ուժեղ թրնդանոթները մեզ շատ կ'անհանգստացնեն:

— Փոխենք. բայց ո՞ւր երթանք: Սա վերջին հանգրուանն է. այստեղէն ելնել ժողովուրդի մահը տեսնել ըսել է: Իսկ ես չեմ ուզեր ժողովուրդի մահը տեսնել. հոս այս դիրքերուն մէջ պիտի մընանք, որքան ալ աննպաստ ըլլայ...:

— Ճիշդ է, մենք բոլորս ալ չենք ուզեր ժողովուրդի մահը տեսնել, բայց միայն դիրքը պէտք է փոխենք, որպէսզի կարենանք կոխը շարունակել, — առարկեց Գուրգէն:

— Ո՛չ, որոշուած է... հոս պիտի մնանք, — պատասխանեց Առքոն կարուկ եւ վճռական ձայնով մը:

— Այո՛, հո՛ս պիտի մնանք, — ձայնեցին ուրիշները եւ ոչ ոք կարող է մեզ այստեղէն հեռացնել:

— Լա՛ւ, — ըսին Արմէնն ու Արամը. — քանի որ վճռած ենք դիրքերը չլքել, պէտք է գոնէ թնդանոթները լռեցնենք: Ահա մենք կ'երթանք թնդանոթները լռեցնելու՝ Առքոյի հաւանութեամբ, որ մեր երկու դիրքերուն վարիչն է:

Ու այդ երկու կորիճները մերկացան, մալղէրները առին, անցան Ընկուզի ձորէն եւ ուղղուեցան դէպի Կարմիր քարեր, աննկատ բարձրացան դառիվերը, մացառներու, թաւուտներու, թուփերու եւ դաղերու մէջէն զգուշութեամբ, վագրի ճկունութեամբ, երբեմն սողալով, երբեմն պահուրակով, վերջապէս մօտեցան թնդանոթներուն եւ երկուքը միասին համազարկ բացին: Թնդանոթաձիգներէն ոմանք ինկան, միւսները փախան անակնկալի եկած եւ զարհուրած... Եւ այդ երկու կորիճները Կարմիր քարերէն թնդանոթները գորցուցին դէպի Ընկուզի ձորը...: Յանդուզն քայլ էր, բայց կացութիւնը չըփրկեց... Անոնց տեղ թշնամին նոր թնդանոթներ գետեղեց, որ սկսան իրենց աւերը գործել աննպաստ դիրքերուն վրայ:

— Գուրգէ՛ն, մեր կորիճները լռեցուցին թնդանոթները, բայց նորերը եկան եւ անոնց խանգարիչ գործը կը շարունակեն, — ըսաւ Մխոն:

— Այո՛, բայց դժբախտաբար հրացանի գնդակը չի հասնիր որ լռեցնենք, — պատասխանեց Գուրգէնը:

— Ուրեմն պէտք է փոխել դիրքը:

— Ո՛չ, որոշուած է, հոս պիտի մնանք...:

Ու ծանր կոխ է:

Երկու կողմերն ալ վճռական են ու դաժան: Արշաւող ոյժերու ալիքները իրարու ետեւէ կը նետուին դիրքերու վրայ, կ'ընկրկին ու նորէն կը նետուին: Մոնչիւնը ինկեր է Մամիկոնեանի, Իշխանազունի, Իշխանեանի, Վիշապեանի, Ազատեանի, Ասպետեանի եւ Արցախեանի դիրքերը. կարծես աշխարհը պիտի քանդուի շառաչիւնի եւ ճարձատիւնի մէջ: Գոյամարտի հերոսները այդ աղիտալի ժխորին մէջ, իրենց մահուան երգը կ'երգեն: Մովինար ջղային վիճակի մը մէջ, Արծուի ժայռին դէպքերուն կը հետեւի: Ժողովուրդը թէ՛ կ'ա-

գօթէ եւ թէ ամէն ինչ գիրքերը կը հասցնէ կռուող քաջերուն: Վրէժ-
եան կարգապահութեան կը հսկէ...:

Ու կռիւը ծանր է...:

Հակառակ գերագոյն ճիգերուն՝ գիրքերը կը ճարճատին...
Դիմադրութիւնը կը թուինայ եւ գոյամարտի սպառնալիցները հետզհետէ
կը մարին... Վայրենի ժխորն ու սրտը աշխարհն է բռներ: Երկինք
եւ երկիր կը դողան...: Անտօքը ծանր-ծանր կը տնքայ ու հուր կը
ժայթքէ, եւ երեք օրէ կռիւը նոյն սաստկութեամբ կը շարունակուի:
Վահագնեան, այդ արի տղամարդը, դադար չունի. թուրքիկ մար-
տական խումբով մը, անընդհատ գիրքերու շրջապիծին վրայ կը
դառնայ. անկարելին կը փորձէ, բայց կարելի չէ քանդուած գիրքերը
վերակենդանացնել...: Գիրքերը ցանցառացեր են. կռուող ոյժերը,
որոնք տակաւին չեն ինկած, փամփո՛ւշտ կ'ուզեն, զէ՛նք կ'ուզեն,
զնդակ կ'ուզեն: Կանոնաւոր զէնքերու մեծ մասը փճացաւ կամ մնաց
առանց փամփոշտի: Ճարահատ՝ գործածութեան դրուեցան անկա-
նոն զէնքեր. վասուղ ու զնդակ կը սպակոխին. զնդակը երկու մասի բաժ-
նուեցաւ, ու յետոյ չորսի, ու ապա փոքր ու կլոր քարեր գործած-
ուեցան իրրեւ զնդակ. ամենէն վերջ, գիրքերու քով դանուած խոշոր
քարերը սկսան գլտորել զէպի վեր բարձրացող թշնամիին վրայ: Ծա-
տերը նման խոշոր քարեր գլտորած ատեն՝ վիրաւորուելով վահագնէժ
ինկան քարերու հետ, ինչպէս Չինոն, Մարթան, Սանամը, Մեյրոն եւ
ուրիշներ: Անկարելի է այլեւս խուժուած կեցնել: Նշանաւոր Առքոն,
իր երկու տասնեակներով, աննպաստ գիրքերէն դուրս չելան եւ թըն-
դանօթի ուսմբերուն զո՛հ գացին՝ իրենց գիրքերուն մէջ: Ինկան իր
բոլոր սպառնալիցները — Գուրգէն՝ սրուն աջ թեւը թռաւ թնդանօթի
ուսմբէն, Մխոն՝ սրուն սղնախարը ջարդուեցաւ, Արմէն, սրուն եր-
կու սրունքները փշուրեցան, Արամ, սրուն կուրծքը բղկուեցաւ,
Չաքար, սրուն գլուխը թռաւ ուսերու վրայէն եւ միւսները, ինչպէս
եւ ինքը՝ Առքոն, թնդանօթի ուսմբերէն կտոր-կտոր եղան: Այսպէս
մնացին իրենց գիրքերուն մէջ եւ շտեսան այն ինչ որ կը սպասէր ժո-
ղովուրդին:

Վահագնեան ինքնիրմէ ելած՝ կը փորձէ գիրքերը վերակենդա-
նացնել. կը դառնայ ու կը դառնայ, բայց ի զո՛ւր: Դիմադրական բո-
լոր գիրքերը քանդուեր են. կռուող ոյժերը իրենց կարելին ընելով
ինկեր են: Մամիկոնեանի, Իշխանագունի, Իշխանեանի, Վիշապեանի,
Ազատեանի գիրքերը գրեթէ ամալացեր են: Ծատ քիչ թիւով կռուող
ոյժեր են մնացեր, որոնք անկարելին կը փորձեն կիսամիջոցներով:

Վահագնեան ըմբռնեց կացութեան ամբողջ ծանրութիւնը, որ

պիտի վերջանայ անասելի ողբերգութեամբ մը. վեր ցատկեց Անտօքի
հիւսիսային գիրքի մը վրայ, կեցաւ բարձր ժայռի մը կատարին,
նայեցաւ ջուրին, որ կատաղութենէն ուռած՝ զէպի վեր կը մազըլ-
ցէր, զխտեց լեռնավայրի հեռաւոր հորիզոնները եւ ուժեղ կերպով
թքեց ե՛ւ ջուրին վրայ ե՛ւ հորիզոններէն այն կողմ... Ու լուռ, մը-
տախտ, արձանացած՝ կեցաւ բարձր ժայռին վրայ, կարծես լուծե-
լու համար ս'յն, ինչ որ կը կատարուի՝ արեւի՛ն տակ, երկրի՛ն վրայ,
ու յանկարծ ինկաւ, հեռուէն եկող համազարկերէն...:

Ահա այդպէս ինկաւ հերոսը, որ ատեն մը սաւառնեցաւ Կով-
կասի լեռներուն վրայ ու յետոյ Տարօնի աշխարհին մէջ, ապա Լեռ-
նաշխարհի մէջ ու Անտօքի կատարին, եւ արեւի շողին պլլուած՝ ար-
գար ցատումով մը զնաց զէպի վեր, յաւիտենականութիւնը կարգի
զնելու...:

Գոյամարտի գիրքերը հետզհետէ կը լսեն... Չօքը քաջութիւն
ստաւ, անցաւ Ընկուզի ձորի գիւղէն, ուրկէ նահանջեր էր եւ սկսաւ
բարձրանալ Անտօքի փէշերը... Ահա Ընկուզի ձորի եկեղեցիին ե-
տեւ, Հրայրի եւ Սերոբի գերեզմաններուն մէջտեղը, նստած է Իշ-
խանագունը, ս'վ գիտէ, վերջին հրաժե՞շտը տալու անոնց գերեզման-
ներուն, թէ անոնց հետ խորհրդակցելու աղէտին շուրջ: Ընկուզի ձո-
րի եկեղեցիի աջէն ու ձախէն, զինուորական խումբեր կը շարժին:
Իշխանագունը գլուխը վերցուց, տեսաւ երկու կողմէն սպառնալից տակ
է. մէկ ձեռքով հրացանը, իսկ միւսով տասնոցը գործածեց. տաս
հոգի զինուորներէն ինկան, ինք եւս երկու թեւէն վիրաւորուեցաւ,
հրացան եւ մազէր ինկաւ աջ ու ձախ, այդ ծանր վայրկեանին, Իշ-
խանագունի ոյժերը վերէն, գիրքերէն համազարկ բացին զինուորնե-
րու վրայ եւ վար իջան. զօրքը փախաւ զէպի ձոր. բայց կտրիճ Օ-
հանը բերանէն վարնուեցաւ եւ գիտապաստ ինկաւ, միւսները անմի-
ջապէս վիրաւոր Իշխանագունի թեւերն ինկան, արիւնլուայ վիճակի
մէջ զայն բարձրացուցին գիրքերը: Այդ արիւնաքամ վիճակին մէջ՝
Իշխանագունը հարցուց թէ ի՛նչ լուր կայ Վահագնեանէն: Ստեփոն
կեղծեց, ըսելով.

— Վահագնեանը լա՛ւ է:

Մինչդեռ Վահագնեանը ժամ մը առաջ սպաննուած էր:

— Մի՛հրա՛ն, — կանչեց Իշխանագունը, — տղա՛ս, գրէ՛՛ Վա-
հագնեանին որ այս ճակատի կացութիւնը ծանր է, թող մասնաւոր

ուշադրութիւն դարձուի այս կողմը...

Ու Միհրան դրեց...

Աղէտի շուկները հասան Մամիկոնեանին: Մամիկոնեան փոթորիկի մը նման անցաւ դիրքերէն, սարսափեցաւ երբ տեսաւ որ դիրքերը գրեթէ ամայացեր են. լսեց Վահագնեանի մահը, աւելի եւս ծանր ճնշուեցաւ, ետ դարձաւ անապարանքով, Իշխանագունի դիրքերը, դատաւ Իշխանագունը արիւնջուայ վիճակի մէջ: Վիրաւոր առիւծի նման մռնչեց. «Եւ սակայն դիրքերը պէտք է պահել...» ըսաւ եւ անցաւ միւս դիրքերը՝ աղէտը իր ամբողջութեան մէջ տեսնելու եւ աղէտին հետ մեծնալու...

Վիշապեանի, Իշխանեանի, Ազատեանի, Ասպետեանի, Արցախեանի դիրքերը գրեթէ ամայացեր են. հսկաներ ինկած են իրենց դիրքերուն մէջ եւ յաւիտենական քունը կը քնանան: Արցախեան լսեց Վահագնեանի մահը ու սահմուկեցաւ: Վահագնեանի մահը ցնցեց ամբողջ Անտոքը. կռուող ոյժերը թէ ժողովուրդը չչամած մնացին հարուածին ծանրութեան տակ: Գիմադրութեան ողնայարն էր, որ խորտակուեցաւ, ու ամէնքը լքուած ու որր զգացին իրենք գիրենք...

— Ափսո՛ս մեր Վահագնեանը, — լսուեցաւ բոլոր շրթունքներէ՝ ողբի, լացի ու հառաչանքի հետ...:

— Ափսո՛ս մեր մեծ զեկավարին... Աշխարհը կ'արժէր...:

— Եւ սակայն Վահագնեան մը պէտք է մեզի, — ըսին աջէն ու ձախէն. — Ազատեանը փորձեց Վահագնեան մը ըլլալ, բայց անգործ զգաց ինքզինքը եւ գործը մնաց Մամիկոնեանին:

Իրիկուն է: Չարաչուք ու տխուր գիշեր մը թեւածեց Անտոքի վրայ: Կռուող ոյժերու մնացորդները դիակներու մէջէն տակաւին քանդուած դիրքերը կը պահեն: Ժողովուրդը թառած Անտոքի կողերուն, կորուստներու ծանրութիւնը կը սպայ եւ վաղուան մղձաւանջը կ'ապրի:

Հրամանատարները Անտոքի հիւսիսային լանջին վրայ, ժողովուրդին հետ լուսնի լոյսին տակ, շուրաւ միմեկի մէջ, կը մտածեն թէ ի՞նչ պէտք է ընեն վաղը:

— Անկարելի է այլեւս որեւէ կազմակերպուած գիմադրութիւն՝ ճակատի ձեւին տակ, — ըսաւ Մամիկոնեանը:

— Ուրեմն ի՞նչ պէտք է ընել, — հարց տուաւ Վիշապեանը:

— Կացութիւնը ծանր է եւ գժուար է որեւէ ճամբայ ցուցնել,

— պատասխանեց Ազատեանը:

— Իսկ վաղը ի՞նչ պիտի ըլլայ այս ժողովուրդի վիճակը, — խօսեցաւ Վարդան:

— Անխուսափելի է. ժողովուրդը պիտի ջարդուի, քանի որ հընարաւոր չէ որեւէ գիմադրութիւն կազմակերպել, — հառաչանքով մը ըսաւ Ասպետեան:

Վիշապեան. — Պէտք է ժողովուրդին պարզել իսկական կացութիւնը եւ թելադրել որ ամէն մարդ իր գլխուն ճարը նայի:

Արցախեան. — Այո՛, պէտք է ձգել ամէն մարդ իր բախտին ուրիշ ելք չկայ...:

— Ո՛չ, — ըսաւ Վարդան, — պէտք չէ լքել ժողովուրդը. ժողովուրդին հետ պէտք է մեռնիլ. ահա՛ միակ ելքը...:

Մամիկոնեան. — Քանի հնարաւոր չէ գիմադրութիւն կազմակերպել, պէտք է կռիւի բնոյթը փոխել, թուուցիկ մարտական խումբերով տանիլ կռիւը եւ կռիւը այդ նեղ շրջագիծէն հանել եւ տարածել Լեւոնաշխարհի հանդուցներուն վրայ. կռուող ոյժերը եւ ժողովուրդը, որքան հնարաւոր է, պիտի աշխատին այս գիշերուան ընթացքին անցնիլ թշնամիի թիկունքը: Այդ մարտական խումբերը, որոնք եթէ յաջողին պաշարման գիծէն անցնիլ, թշնամին պէտք է հարուածեն թիկունքէն, որպէսզի ճնշումը թեթեւայ Անտոքի վրայէն...:

Վիշապեան. — Գժուար է պաշարման օղակը ձեզքել եւ անցնիլ: Այս գանդուածը ի՞նչպէս պիտի շարժի եւ ո՞ւր պիտի տեղաւորուի, որ խուսափի վաղուան ջարդէն:

Վարդան. — Չենք կրնար ժողովուրդը շարժել, պէտք է մնանք անոր հետ, եւ անոր բախտը բաժնենք:

Արցախեան. — Պէտք է աշխատինք աղէտէն բան մը փրցնել եւ ոչ թէ ամէն ինչ աղէտի տալ:

Ասպետեան. — Մինչեւ հիմա ըրինք մեր կարելին՝ ժողովուրդը պաշտպանելու համար. հիմա անկարելիին տոջեւ կը դանուինք: Պէտք է ըսենք ժողովուրդին որ իր գլխու ճարը տեսնէ, կարելի է այսպիսով շատերը բախտ ունենան իրենք գիրենք ազատելու վաղուան անխուսափելի ջարդէն: Ի՞նչ վիճակի մէջ ալ ըլլանք, օր մը աւելի ապրելու ցանկութիւնը չի մեռնիր մարդուն մէջ:

Մամիկոնեան. — Միակ միջոցը այս պատագեղէն դուրս գալու, ցրուելն է, եթէ նոյնիսկ այդ ըլլայ գիշերային յարձակման գնով: Գիշերուան այս պահուն, գորք թէ աշխրեթական ոյժեր հանդիստի մէջ են. աննկատ կերպով գանազան տեղերէն պէտք է անցնիլ կամ

համազարկով ճամբայ բանալ, որովհետեւ զօրքը զիշերային հետապընդումներէ կը խուսափի:

— Պէտք չէ լքել ժողովուրդը, պէտք է կենալ ժողովուրդին հետ, եւ անոր ճակատագիրը բաժնել, — յուզումով մը ըսաւ Վարդանը:

Վիշապեան. — Այո՛, վատութիւն է լքել ժողովուրդը. բայց նոյնքան վատութիւն է չմտածել փրկել ինչ որ կարելի է:

Արցախեան. — Պէտք է ընտրել երկու չարեաց փոքրագոյնը, ինչպէս կ'ըսեն:

Վարդան. — Երկու չարեաց փոքրագոյնը, այն է մնալ ժողովուրդին հետ եւ անոր հետ մեռնիլ: Ժողովուրդը մեռնելէն ետք, մենք մնացեր ենք ի՞նչ նշանակութիւն ունի:

Ասպետեան. — Վարդա՛ն, ճի՛շդ է ըսածդ, ժողովուրդը մեռնելէն ետք մենք ոչինչ կ'արժենք: Թշնամին սեղմեր է մեզ նեղ օդակի մը մէջ եւ կ'ուզէ մէկ հարուածով բոլորս միասին մեռցնել: Մենք մեր կարելին պիտի ընենք մէկ հարուածով չիյնալու, եւ հետեւաբար պիտի խուսափինք հարուածէն, պիտի ցրուուինք եւ թշնամիին վնասելու առիթներ ու պայմաններ փնտռենք. անցնող օրերու նման ճակատ ստեղծել եւ ինքնապաշտպանութեան կռիւ մղել՝ հնարաւոր չէ, որովհետեւ ոչ գէնք ունինք եւ ոչ սողմամբերք: Ժողովուրդը կըրնայ անտարբեր դնուիլ՝ մտածելով որ ինքնապաշտպանութիւնը կազմակերպուած է, բայց դժբախտաբար ինքնապաշտպանութիւնը կազմակերպուած է ու խորտակուած: Պէտք է կացութիւնը պարզել ժողովուրդին. եւ ըսել որ վերահաս վտանգէն խուսափելու համար՝ ինքն իր մասին մտածէ, քանի որ կուտոյ ոյժերը սպառած են: Այս կացութեան ոչ սք պատասխանատու է մեզմէ. մենք չփնտռեցինք ազգայն, եւ սակայն ազգայն եկաւ փաթթուեցաւ մեր վրին:

Ազատեան. — Ժամանակ չկայ երկար խորհրդակցութիւններու: Պէտք է աճապարել, քանի ուշ չէ:

Վիշապեան. — Պէտք է աշխատիլ պաշարման վիճակէն դուրս գալ եւ ապաստանիլ աւելի ապահով վայրեր, մինչեւ որ տեսնենք թէ երբ կ'անցնի այս փոթորիկը:

Մամիկոնեան. — Իւրաքանչիւր թուուցիկ խումբ իր յարմար նկատած վայրէն պէտք է ջանայ դուրս գալ եւ ապաստանիլ իրեն ծանօթ եւ ապահով լեռնային գօտիներու մէջ. վաղը մեր կարելին պիտի ընենք՝ ճնշումը թեթեւցնելու Անտոքի վրայէն. չեմ կարծեր թէ այս զիշերուան ընթացքին Անտոքը կարենայ պարպուիլ: Հետեւաբար ժողովուրդի մէկ մասը պիտի մնայ՝ անոնց օգնելու համար: Պա-

շարման գօտիէն դուրս ելլող ոյժերը պէտք է թշնամին կռնակէն հարուածեն, որպէսզի շփոթութեան մասնուի, եւ պաշարման օդակին մէջ գտնուածները փախչելու հնարաւորութիւն ունենան: Անկէ ետք իւրաքանչիւր թուուցիկ խումբ պիտի ջանայ խուսափիլ կռիւէ, ժամանակ չահելու է մինչեւ որ տեսնենք թէ ինչո՛վ կը վերջանայ այս ողբերգութիւնը: Հետեւաբար Անտոքի գրաւումէն ետք բանակը եւ աշիրեթական ոյժերը իրենց զօրքը վերջացած նկատելով, քաշուին Լեռնաշխարհէն. այն ատեն թերեւս հնարաւոր ըլլայ ուրիշ կերպ մտածել...:

Վարդան. — Բանակ թէ աշայիր, մինչեւ որ ամբողջութեամբ չմաքրեն Լեռնաշխարհը, պիտի չհեռանան: Յրուուած վիճակի մէջ աւելի շուտ կը կոտորուինք քան եթէ հաւաքաբար ըլլանք. ազատուելու հնարաւորութիւն չկայ. եթէ նոյնիսկ պաշարման օդակէն ալ դուրս ելլենք, նորէն պիտի սրեւէ տեղ պաշարուինք եւ իյնանք: Քանի որ այդպէս է, հոս ժողովուրդի կողքին կը մնանք: Ինչ եղաւ ժողովուրդը, կ'ըլլանք եւ մենք. գոնէ մեր խիղճը հանդիստ կ'ըլլայ, որ չլքեցինք ժողովուրդը:

Մամիկոնեան. — Ժողովուրդը չէ որ կը լքենք, Վարդա՛ն, այլ ժողովուրդը պաշտպանելու համար կռիւի բնոյթը կը փոխենք. վաղը արդէն պիտի կատարուի այս ժողովուրդը. վաղուան հարուածը թեթեւցնելու համար է որ կը մտածենք: Վաղը կռիւը պիտի վերջանայ, եթէ պաշարման օդակի մէջ մնանք: Պաշարման օդակէն դուրս ելլել, կռիւը երկարաձգել կը նշանակէ:

Արցախեան. — Ժողովուրդի կողքին կանգնինք կ'ըսէք, Վարդա՛ն: Ի՞նչ եղաւ ժողովուրդը, նոյնը կ'ըլլանք եւ մենք. գոնէ մեր խիղճը հանդիստ կ'ըլլայ որ ժողովուրդը չլքեցինք: Բայց այն ատեն ժողովուրդի խիղճը հանդիստ չ'ըլլար. այն ատեն պիտի ըսեն. — Եթէ մեր ապահովութեան համար, ինքնապաշտպանութիւնը կազմակերպած չէինք, ինչո՞ւ մեզի չըսիք որ ամէն մարդ իր գլխուն ճարը նայէր: Մենք մահուան հետ շատոնց հաշտուած ենք. բայց այնքան ալ գիւրբին պէտք չէ յանձնուինք մահուան. մենք մեզ փրկելու համար չէ որ պաշարման օդակէն դուրս կ'ուզենք ելլել, այլ մահը յետաձգելու համար եւ որպէսզի ժամանակ ունենանք քիչ մը աւելի զոհեր խելելու թշնամիէն:

Վարդան. — Նոյն զոհերը հոս եւս կրնանք խելել. ո՞ւր պիտի շարժենք այս զանդուածը. այն օրը որ պէտք էր շարժէինք, դէժ էիք. իսկ այսօր արդէն հնարաւոր չէ...:

Վիշապեան. — Վաղը այս ժողովուրդը պիտի կատարուի: Ի՞նչ-

պէս պաշտպանենք, եւ ի՞նչո՞վ պաշտպանենք: Կոռուող ոյժերը սպա-
ռեցին իրենց միջոցները եւ ինկան: Ճիշդ է մեծ թիւով երիտասար-
դութիւն մը ունինք, բայց ի՞նչ օգուտ, երբ զէնք չունինք. բռունցքը
չօգնէր մեզի. հետեւաբար պիտի ըսենք ժողովուրդին, որ ամէն
մարդ իր գլխուն ճարը մտածէ, եւ այդ՝ քանի ուշ չէ:

Ազատեան. — Անմիջապէս Վրէժեանին տեղեկացնել որ յայտա-
բարէ ժողովուրդին՝ պաշարման դատիկն դուրս ելլել, որովհետեւ
վազուան դիմագրութիւնը անբաւարար պիտի ըլլայ թշնամիի խու-
ժումը կեցնելու. ժողովուրդը վտանգի տակ է. իր գլխուն ճարը թող
տեսնէ: Միեւնոյն ատեն դիրքերը սպասող ոյժերուն պէտք է յայտ-
նել որ պատրաստուին ճամբայ ելլելու: Իշխանագունին, Իշխանեա-
նին եւ Մովսիսարին յայտնել մեր որոշումը եւ ըսել որ աճապարեն
տակաւին չլուսցած...:

Ասպետեան. — Լա՛ւ. իսկ ի՞նչ պէտք է ընել զոհերուն դիակ-
ները:

Մամիկոնեան. — Իրենց դիրքերը իրենց գերեզմաններն են ար-
զէն. միայն մեծ հերոսի դիակը պէտք է թաղել, որովհետեւ թշնա-
մին պիտի ճանչնայ եւ պիտի խոշտանդէ հերոսի մարմինը:

Ու հերոսը թաղեցին Անտօքի կատարին: Մամիկոնեան ար-
ցունքոտ աչքերով յուզիչ ճառ մը խօսեցաւ.

— Հոս, Անտօքի կատարին, թաղեցինք մեծ զեկավարը, որ-
պէսզի հսկէ աշխարհին վրայ եւ չթողու որ, կատարուն անիրաւու-
թիւններ...:

Եւ սակայն մեծ զեկավարը ի՛նք զոհ գնաց անիրաւութեան,
ինչպէս եւ շատերը: Նոյնպէս զոհ պիտի երթան նաեւ միւսները...:

Քանզուած դիրքերուն մէջ ինկող ռազմիկները, իրենց լերգա-
ցած արիւնին մէջ կը քնանան. իսկ մնացած կտրիճները, յոգնած ու
վիրաւոր, վազուան անյոյս կռիւին համար, կը ջանան դիրքերը վե-
րանորոգել...:

— Հը՛, Սերո՛ւր, ծանր կռիւներ ունեցանք. ծանր կորուստներ
խլեցինք. բայց եւ ծանր զոհեր տուինք: Ի՞նչ պիտի ըլլայ ստոր վեր-
ջը, — ըսաւ Մլքէն:

— Վե՞րջը. կեզրոնը կը մտածէ...:

— Տո՛յ, տնաչէն, ալ կեզրո՞ն մնաց: Վահագնեանի եւ Դու-
բանի քաջերէն շատերը գացին եւ իրենց հետ տարին ամէն բան...:

— Ինչ կ'ուզէ, թո՛ղ ըլլայ. պիտի գլորցնենք մինչեւ գլոր-
ուինք. ասկէ զատ ուրիշ ընելիք չունինք:

— Այս շանորդիք այնքան շատ են. թիւ ու համբանք չունին.
զո՛վ գլորցնես, եւ զո՞վ թողուս, եւ ինչո՞վ գլորցնենք: Մեզմէ բան
չմնաց. կը տեսնես, առիւծներուն բոլորն ալ մահուան դիրկը անցեր
են: Վաղը ո՞վ պիտի մոնչէ այս դիրքերէն:

— Մոնչող առիւծներ շատ ունինք, բայց դժբախտաբար զէնք
չունինք եւ մահուան դատապարտուած ենք: Իւրաքանչիւրիս մօտ
քանի մը փամփուշտ է մնացեր. վաղն այդ ալ կը սպառենք եւ յետոյ
կը լռենք այնպէս ինչպէս մեր ընկերները լռեր են. ասկէ այն կողմը ալ
բան կա՞յ...:

— Ո՛չ:

— Ուրեմն ընենք, ինչ որ կրնանք, եւ անցնինք: Վահագնեանն
անդամ գնաց, մեր մնալը այլեւս ի՞նչ կ'արժէ...:

— Ճի՛շդ է. հազա՛ր ափսոս Վահագնեանին:

— Եւ միայն Վահագնեա՞նը. հասցաւ Իշխանագո՞ւնը՝ երկու
թեւէն վիրաւոր: Իշխանեան, Վրէժեան, Ֆարհատեան նոյնպէս վի-
րաւոր են: Ի՞նչ հսկաներ կորսնցուցինք. Արծրունին, Խոսրոսունին,
Սասունին, Աստեղեանը, Ստեփոն, Փուրթոն, Աւէն, Ջուռոն, Արթինն
ու Պետոն, Առքոն, Սարգիսը: Կանանց սքանչելի խումբը, Վիկտոր-
իան, Օղիտան, Շամամը, Նազէն, Աջոն, Չինոն, Գեղանոյշը, Հե-
րանոյշը, Շողերն ու Լէյլան, Անէն: Ո՞ր մէկը ըսեմ մեր սքանչելի
ռազմիկներէն: Ի՞նչ կրնան ընել. Մամիկոնեան, Վիշապեան, Արցախ-
եան, Ասպետեան, Մուշեղեան, Ազատեան քանի մը կտրիճներով ո՞ր
ճակատը պահեն. մանաւանդ զինամթերք չկայ...: Թշնամին դիտէ որ
մեր միջոցները սպառեր են, ատոր համար անզուսպ է դարձեր, ո-
րովհետեւ անզէն ժողովուրդ մը կայ իր դէմ. եւ մենք ի՞նչպէս պիտի
փշրենք այդ վայրենիներու ահուաները: Ա՛խ, եթէ զէնք ունենայինք,
եւ զինէինք մեր անզէն երիտասարդութիւնը, տես թէ վաղը ի՛նչպէս
պիտի մոնչէին այս դիրքերէն, ու կրակ թափէին այս յիմարացած
հորդաներու գլխուն: Այնպէս մը պիտի շողէին որ սակորները փըշ-
րուէին: Բայց ի՞նչ օգուտ, զէնք չկայ, եւ մենք մի քանի փամփուշտ-
ներով կեցեր ենք հեղեղին առջեւ...:

— Է՛հ, — պոռաց Մուշոն, որ տարբեր դիրքէ մը կու գար, իր
սիկարը վառելու. — մէկ հողի ալ եթէ մնայ, պիտի ընէ ա՛յն, ինչ որ
ըրեր ենք մինչեւ հիմա...:

— Իսկ առանց փամփուշտի ի՞նչ պիտի կարենանք ընել:

— Այն ատեն կ'ընենք մեծ Ղեկավարին նման. կը կանգնինք

զնդակի տեղատարափին առջեւ, եւ արհամարհական թուք մը կը նետենք, ե՛ւ ջուլիբին, ե՛ւ աշխարհին վրայ: Եւ կամ Խզամի նման կը նետենք արհամարհական քրքիջ մը ու կ'անցնինք...:

— Ի՞նչ է ըրեր Խզամը:

— Չէ՞ք լսած. դարմանալի՛ բան. կատաղութեամբ կռուեր է Իշխանազունի մէկ դիրքին մէջ. աջ կողմը Սեղբակ, ձախ կողմը՝ Յակոբ, կը խրախուսէ այդ երկու քաջերը ու ինք ալ կը կռուի: Սեղբակ կը զարնուի: «Հը՞ լոնցիր», կ'ըսէ: «Յակոբ՝ ոյժ տուր հրացանին» — կ'ըսէ: Քիչ վերջ Յակոբ եւս կը զարնուի: «Ա՛յ հա՛յ, դո՛ւն ալ լոնցիր Յակոբ», կ'ըսէ. արիւն կը խուժէ աչքերը, վիրաւոր առիւծի նման կը սկսի մոնչել եւ զնդակ թափել. կը լրանայ իր փամփուշտը, Յակոբի եւ Սեղբակի քով գտնուած փամփուշտներն ալ կը վառէ, կը մնայ առանց փամփուշտի. կը սկսի ջարդել հրացանները որ դերի չիյնան թշնամիի ձեռքը: Յետոյ ոտքի կը կայնի դիրքին մէջ, հրացայտ աչքերով կը նայի ջուլիբին, կուրծքը կու տայ անոնց զնդակի տեղատարափին եւ կը ձգէ իր նշանաւոր քրքիջը. ու համազարկերէն կ'իյնայ Սեղբակի դիակին վրայ... Ահա՛ այսպէս մեռաւ մեր նշանաւոր Խզամը, մենք ալ ճի՛շդ այդպէս պիտի մեռնինք. կուրծքերնիս բաց՝ թունքներուն վրայ... Տղամարդու նման մեռան մեր թէ՛ մեծ, թէ՛ փոքր հերոսները: Անոնք ըլլա՛ն կին թէ՛ մարդ, արժեցուցին իրենք զիրենք, մանաւանդ կիները: Ուրկէ՛ այդքան կորով եւ արիւթիւն:

— Քաջ են մեր մայրերն ու կիները. քաջ են եւ իրենց զաւակները. մենք նոյնպէս պիտի արժեցնենք մեր մահը, որպէսզի համարձակ նայինք իրենց երեսներուն, առանց ամճնալու, — ըսաւ Մլքէն:

— Ա՛յ հա՛յ, արիւնով մկրտուած ենք եւ արիւնով պիտի երթանք, այս է վիճակուած մեզի այս դժբախտ աշխարհին մէջ, — ըսաւ Սերոբը: — Չէ՞ք տեսներ, բոլոր դիրքերուն մէջ մեր հերոսները իրենց արիւնի մէջ են քնացեր. մենք նոյնպէս մեր արիւնի մէջ պիտի քնանանք:

— Ատիկա պարզ բան է, Սերո՛բ. բայց պէտք է թշնամին ալ իր արիւնին մէջ քնացնենք, — վրայ բերաւ Մուշոն:

— Անշուշտ, ատիկա պիտի ընենք որքան կրնանք...:

— Հը՞ ինչ կ'ընէք, — հեռուէն ձայնեց Տիգրանը. — հրահանդ կայ, պէտք է շարժինք. աճապարեցէք քանի ուշ չէ:

— Ո՞ւր պիտի շարժինք, — հարցուց Սերոբը:

— Դիրքերը պիտի թողունք. ալ ո՞ւր պիտի շարժինք, չեմ գիտեր, — պատասխանեց Տիգրան:

— Շարժելու տեղ չէ մնացեր, տնաչէններ, չէ՞ք տեսներ Առքոն իր կտրիճներով դիրքերու մէջ մնաց շարժելու տեղ չունենալուն համար, — ըսաւ Մուշոն. — Արդէն Անտոքի կատարն ենք. աստիճան ալ չունինք որ երկինք բարձրանանք, քանի որ երկրի վրայ տեղ չունինք...:

— Չե՛մ գիտեր. ա՛յդպէս հրամայուած է Մամիկոնեանի կողմէ. անշուշտ ինք, Մամիկոնեանը մեզի պիտի ըսէ թէ ի՛նչ պիտի ընենք, եւ կամ ո՞ւր պիտի երթանք...:

— Լաւ, դիրքերը թողունք, բայց մեր հերոսներու դիակները ի՞նչ ընենք. մեր թանկագին ընկերներն են, որոնց հետ պարեցինք, երգեցինք, խմեցինք, միասին կռուեցանք. այժմ թողունք եւ հեռանա՞նք. պիտի բսեն որ մեր ընկերները դաւաճանեցին մեզի, — հառաչանքով մը ըսաւ Մլքէն:

— Անոնց հոգիները, Մլքէ՛, անմահ են: Պիտի ընկերանան մեզի եւ ոյժ տան մեզի: Իսկ անոնց մարմինները պիտի լուծուին հայրենի հողին հետ, եւ հերոսութեան երգեր երգեն հայ սերունդներուն, որոնք պիտի ապրին այս հողերուն վրայ... Հիմա պէտք է աճապարել, քանի ուշ չէ: Հետեւորար վերջին բարեւը տանք մեր նահատակ ընկերներուն եւ մեկնինք, — ըսաւ Տիգրանը:

Ու անոնք իրենց վերջին բարեւը տալին իրենց հերոսներուն ու մեկնեցան՝ այլ տեղեր իյնալու համար...:

— Դիւբաւ պիտի հնձէինք այս ջուլիբը, եթէ գէնք ունենայինք, — ըսաւ Տիգրան բռունցքները սեղմած:

— Այո՛, եւ որովհետեւ չունինք, մենք պիտի հնձուինք այնպէս, ինչպէս հնձուեցան այլ շրջաններու մեր արեւակիցները, — աւելցուց Մուշոն վշտարեկ սրտով...:

Ահա՛ վրէժեանի կողմէ գրկուած մարդիկ եկան ու յայտարարեցին ժողովուրդին որ ջանայ գիշերուան ընթացքին պաշարման դժուարեաններէն զուրս գալ, որովհետեւ վաղուան դիմադրութիւնը անբաւարար պիտի ըլլայ թշնամիի խուժումը կեցնելու: Ուստի պաշարման օդակի մէջ գտնուած ժողովուրդը վտանգի տակ է. իւրաքանչիւրը իր դըրժուն ճարր պէտք է նայի, քանի ուշ չէ...:

Ու իրարանցում, փափսուք, շուարում...:

— Ի՞նչ կ'ըսես, աղջի՛ Սառէ. կ'ըսեն դիրքերու մէջ գտնուող բոլոր կռուողները սպաննուած են: Ոչ գէնք կայ, ոչ փամփուշտ կայ: Վաղը թշնամին այս ժողովուրդը պիտի կտտարէ, եւ կ'ըսուի ժողովուրդին որ իր գլխուն ճարր նայի եւ պաշարման օդակէն դուրս ելլէ...:

— Ծուշա՛ն, ի՞նչ ընէ խեղճ ժողովուրդը, ի՞նչպէս դուքս ելլէ այս կրակէ օղակէն. մէկ չէ, երկուք չէ, հազա՛ր, հազարնե՛ր են. ո՞ւր պիտի երթան, ո՞ւր պիտի պահուին, ի՞նչպէս պիտի ազատեն իրենց գլուխը. աւելի լաւ է տեղին վրայ մնան. ինչ որ կը կատարուի թող կատարուի... :

— Մեր կուուոյ եղբայրներն ու քոյրերը որքան կրցան, պաշտպանեցին մեզ եւ ինկան : Մենք անոնցմէ աւելի չենք. մնացեր ենք անոյժ եւ անպաշտպան. ապրիլը մեզի համար այլեւս աւելորդ է, — ըսաւ Վարդէ քոյրիկը եւ սկսաւ ապուրը խառնել, որպէսզի շուտով հասցնէ անօթի փոքրերուն :

— Վարդէ՛, շիտակ կ'ըսես, բայց ի՞նչ պիտի ըլլան այս փոքրիկները. մենք չնորհակալ ենք մեր կուուոյ եղբայրներէն եւ քոյրերէն. այսօր անոնք չկան. ձգեցին մեզ որր ու դացին. մենք պէտք է մտածենք ասոնց մասին, — ըսաւ հօրքուր էղսոն, երեսը խաչ հանելով եւ Աստուած կանչելով :

— Մենք ալ մատաղ պիտի ըլլանք անոնց, որոնք մեզի համար մատաղ եղան : Վահագնեանի նման հսկաներ են շրջեր, մեր ճղճիմ կեանքի՞ մասին պիտի մտածենք. ի՞նչ կրնանք ընել մենք այս պրզտիկներուն համար. թող Աստուած նայի այդ անմեղներու երեսը, եւ փրկէ զիրենք այս կրակէն, ինչպէս փրկեց Սեղբակը, Միտակը եւ Արեթնազովը :

— Երկար բարակ մտածելու ժամանակը չէ, աշխատեցէ՛ք ձեր գլխուն ճարը նայիլ, — ըսաւ Երկար Տիւն. — փորձեցէք հեռանալ այս տեղերէն : Ի՞նչ անդամալոյժի նման նստեր էք. մեր անտառները շատ, լեռները՝ անտառիկ, ձորերը՝ խորունկ : Գրչերը ասիթ մըն է որ անցնիք պաշարման դիմէն. ով ինկաւ, արդէն կ'իյնայ. ով անցաւ, տեղ մը կը կծկուի, մինչեւ որ տեսնենք թէ Աստուած ի՞նչ դուռ կը բանայ... :

— Ա՛յ Տիւն, Աստուած եթէ դուռ մը բանար, այդքան կըրտրիճներ չէին իյնար. Աստուած եթէ դուռ մը բանար, գոնէ զէնք կուտար այս կարիճներուն, որոնք առիւծի սիրտ ունին, բայց զէնք չունին : Թագստոցը մեզ չի փրկեր, քանի որ անդէն ենք. մեզ պիտի դրանեն եւ սպաննեն. աւելի լաւ է որ մեր տեղէն չշարժինք եւ սպասենք մահուան, — ըսաւ Զարէ :

— Ո՛չ, սխալ է, — ջղաշնացած պոռայ Ծոզիկը. — ի՞նչ ըսել է նստիլ եւ սպասել մահուան : Պէտք է շարժինք. պէտք է խուսափինք մահէն, եւ մահը թող յոգնի վազելով մեր ետեւէն : Գուք կ'ուզէք այս վատ եւ դահճիկ թշնամիին գործը՞ զիւրացնել, եւ անոնց ինայիլ

մեր ետեւէն վազելու յոգնութիւնը : Մենք պիտի ելլենք այս պաշարման դօտիէն : Ով մեզի հետ կու դայ, թո՛ղ քալէ :

— Իսկ ի՞նչ կը մտածեն տղամարդիկ եւ երիտասարդները, — հարցուց Քնքուշը :

— Անոնք եւս մեզի պէս կը մտածեն, — պատասխանեց Փեյրան. — պաշարման դիմէն դո՛ւքս դալ. արդէն ժողովրդական խումբերը սկսեր են շարժիլ : Աճապարե՛նք, քանի ուշ չէ, ատանց ճայնի եւ անչուկ : Զուր տեղը չէ որ հրահանգուած է ժողովուրդին հեռանալ, որովհետեւ սպասած են բոլոր միջոցները եւ ինքնապաշտպանութիւնը ճակատի ձեւին տակ կազմակերպելու հնարաւորութիւն չկայ, կը հասկնաք, իւրաքանչիւրը ինքն իր մորթը թող աշխատի ազատելու : Ինչո՞ւ մինչեւ հիմա չըսուեցաւ ժողովուրդին որ իր գլխուն ճարը նայի, որովհետեւ տակաւին զիմադրութիւն կազմակերպելու միջոցներ կային, իսկ այժմ ամէն ինչ սպասած է, եւ կուուոյ հերոսները մէկը միւսին ետեւէն շրջեր են. չէ՞ք լսեր միթէ որ ամէն տուն սուգ ու շիւան է : Այս դժբախտութեան մէջ ոչ ոք մեղադրելու իրաւունք ունինք. ամէն մարդու կը մնայ ինքն իր անձին տէրը կենալ : Դէ՛հ, շարժեցէ՛ք տեսնենք... :

— Աղջի Չիւնէ՛, ի՞նչ կ'ընես. ամէն մարդ իր հոգին ազատելու ետեւ է. դուն գեւ նստեր եւ ճերմակեղէն կը լուսա :

— Հիմա կը վերջանայ : Այս ազատ ճերմակեղէնները ո՞ւր տանինք :

— Զղէ՛, պէտք չեն. հոգին աւելի քաղցր է : Ո՞ր ուղղութեամբ շարժինք :

— Աշխատինք Տալուրիկի կողմ անցնիլ եւ Զինկոյի քարայրին մէջ պահուիլ... :

— Իսկ Մելոն եւ Սրգոն ի՞նչ եղան :

— Անոնք Այիանցից լեռներ պիտի ապաստանին. իւրաքանչիւրը իրեն ծանօթ վայրեր կ'ուզէ ապաստանիլ. ամանք կեփին, ուրիշներ կապուր, մէկ մասը Մովսասր : Ուրիշներ Շէնրզի եւ Սեմայի անտառները :

— Տղա՛յ, այս ի՞նչ իւրաքանցում է... վատ բան է զէնք չունենալ : Այս ժողովուրդը գոհ պիտի երթայ ոչ թէ թշնամիի ժողովարդութեան, այլ պարզապէս զէնքի չզոյութեան : Ա՛յ թէ զէնք ունենային, ի՞նչպէս թշնամի հորդանները պիտի փոշխանային այս առիւծներու գուպարին տաջեւ, ինչպէս որ եղաւ մինչեւ հիմա... Ծատերը արդէն որոշեր են պաշարման օղակէն դուրս չելլել. քարով, փայտով, խաչերկաթով, ակիչով, բահով, բրիչով, մանդաղով, կեռով,

կացինով պիտի պաշտպանեն իրենք զիրենք, հոգ չէ թէ մեռնին, միայն թէ թշնամին չունենայ այն հրճուանքը թէ փախեր են, — քսաւ Սամոն:

— Վա՛հ, — քսաւ Գրմի Համզէն, — ես Համզէն եմ, Համզէն եմ, արջ սպաննոյ Համզէն եմ, ամօթ իմ կաթին, եթէ տեղէս շարժիմ: Ի՞նչ, մայրս զիս ծնած է փախչելո՞ւ համար, եւ այն ալ Թուրքի ու Քիւրտի լամուկներէն, որոնց թքամ, կը սատկին: Ուրեմն ինչո՞ւ ամբողջ աշխարհը չթքայ Համզէի երեսին. ո՛չ, ես հո՛ւ եմ: Ո՛վ կ'երթայ, բարի ճանապարհ. ես հո՛ւ եմ, եւ կուրծքս բաց է թշնամիի գնդակին ու սուրին առջեւ, — եւ խղաց իր շապիկը ու բացաւ կուրծքը:

— Ա՛հ, Համզէ՛, — բղաւեց Սեվիթի Սամոն. — ես գայլ նազէի կաթն եմ ծծեր, մի՞թէ ես եմ փախչողը փոթորիկէն. գայլի սերունդ եմ եւ փոթորիկ կը փնտռեմ, թքնեմ կեանքի վրայ: Ես կեանքի հետ կը խաղամ այնպէս, ինչպէս մայրս նազէն: Կեանքը ի՞նչ արժէք ունի ինձի համար. անիկա միջոց մըն է յանդուզն եւ արի գործեր կատարելու համար, ինչպէս որ ըրինք եւ ինչպէս որ պիտի ընենք: Ես ալ հոս եմ եւ հո՛ւ պիտի մնամ...:

— Սխալ էք, տղանե՛ր, — քսաւ ծանրախոհ Մանոն, — պաշարման օղակէն դուրս ելլել, փախչիլ ըսել չէ. ընդհակառակն, մեծ քաջութիւն է: Ընչդ է, մահուան հետ կը խաղանք, բայց թշնամին ալ մեռցնելու պիտի աշխատինք: Հիմա առիթը թշնամիինն է. պիտի մտածենք խուսափիլ անոր հարուածէն, որ մահացու է, ջանալ առիթը մեր ձեռք անցրնել, սրպէսզի մենք մահացու հարուած տանք իրեն...:

— Է՛հ, առի՛թ պիտի փնտռենք... ճանճրացանք ալ. առիթը որո՛ւն է, թող անիկա իր հարուածը տայ: Մենք խուսափող չենք հարուածէն եւ արդէն պատրաստեր եմ կուրծքս, — քսաւ Համզէն կուրծքը ցցելով...:

— Յայտնի է որ մենք իրար չենք հասկնար, — քսաւ Մանոն:

— Ուրեմն ամէն ոք թող իր գիտցածը ընէ. մնա՛ք բարի...:

— Ո՛ւր կ'երթաք, ո՛ւր: Միթէ մենք ինկոյ առիւծներէն աւելի՞ ենք, որոնք մեզի համար մեռան, — պոտաց Սամոն ջղայնացած:

— Մի՛ ջղայնանար, Սամո՛յ, կ'երթանք մեռնելու, — պատասխանեց Մանոն. — բայց մեռնելու համար աւելի նպատաւոր պայմաններ կը փնտռենք, սրպէսզի հնարաւոր ըլլայ մեզի հետ մեռցնել թշնամիներէն մի քանիները:

— Լա՛ւ, երթա՛ք բարի, յաջողութիւնը ձեզի հետ. իսկ մենք

հոս կը մնանք վաղուան արիւնտա հարսանիքը խաղալու, որուն մէջ անչուշտ զոհերը մենք ենք...:

— Այո՛, եւ ով այստեղ մնայ, վաղը թշնամիի դաղանութեան մտացու կը հայթայթէ:

— Իսկ ով հեռանայ, անիկա եւս թշնամին որսորդ կը դարձնէ:

— Բայց շատ անգամ որսը կերած է որսորդը: Մենք պիտի ընենք այդ:

— Այդ ընելու համար, հարկաւոր է զէնք, եւ այդ զէնքը չը կայ...:

— Իսկ ի՞նչ կը մտածեն մեծերը, — հարցուց ծեր եւ հիւանդ Արբէն, իր պառկած տեղէն շարժելով:

— Մեծե՞րը. մեծ թէ պզտիկ, — քսաւ Սամոն, — մէկ բան կը մտածեն. եւ այդ բանը զէնքն է, որ սակայն չկայ. ատոր համար է որ մեծերը հրահանգեր են ժողովուրդին՝ հեռանալ այս վայրէն, որ վաղը սպանդանոց պիտի դառնայ...:

— Սպանդանո՞ց, — բարձրաձայն խնդաց Արբէն. — Ամբո՛ղջ աշխարհը սպանդանոց է եւ ո՛չ միայն այս վայրը: Ո՛ւր ալ երթանք, զանակը կը ստատէ մեզի, քանի որ զէնք չունինք:

— Իսկ ի՞նչ պիտի ընէ զինեալ ոյժերու այն մասը, որ տակաւին կը մնայ զիրքերուն մէջ, — հարցուց Ասոն:

— Անոնք եւս պաշարման օղակէն դուրս պիտի ելլեն եւ թիկունքէն թշնամին պիտի զարնեն որ ճնշումը թեթեւցնեն Անտրի վըրայէն, — պատասխանեց Դաշոն:

— Եթէ այդպէս է, չեմ կարծեր որ բոլորը մեկնին. նորէն մաս մը պիտի մնայ՝ ներսէն զրազեցնելու համար թշնամին, — վրայ բերաւ Ասոն:

— Չէ՛, Ասոյ, չէ՛, — խօսեցաւ Համզէն: — Ի՞նչ ըսել է ձեր գլխուն ճարր նայեցէք. զինեալ ոյժերը եթէ պաշարման օղակէն դուրս կ'ելլեն, իրենց գլխուն ճարն է որ կը տեսնեն: Ժողովուրդն ալ պէտք է իր գլխուն ճարը տեսնէ ո՛վ ինչպէս կ'ուզէ...:

— Չեմ կարծեր ժողովուրդը ձգեն կրակին մէջ եւ իրենք հեռանան, — առարկեց Դաշոն:

— Ուր որ ալ երթան, կրակէ թէ՛ ներս, թէ՛ դուրս, բոլորս ալ պիտի վառինք այս կրակէն: Ո՞վ պիտի մարէ եւ ինչո՞վ պիտի մարէ, երբ զէնք չունինք: Բայց պատճառ չըլլանք ոեւէ մարդու. ինչպէս ըսուած է, թող ամէն մարդ իր գլխուն ճար ընէ, — աւելցուց Համզէն:

Անտոքի լանջերուն վրայ թառած ժողովուրդը ծանր մղձաւանջ մը կ'ապրէ: Յարաշարժ վիճակի մէջ է: Փսիսութիւններով կը խմբուին ու կը ցրուուին:

Կը լսուին՝ «Կ'երթամ, չե՛մ երթար... չարժի՛նք. չե՛նք շարժիր... դուրսը աւելի վառ է քան ներսը... պիտի լքեն մեզ. ո՛չ պիտի չլքեն... մահը մահ է, հոս թէ ալլ տեղ, միեւնոյն է... օ՛Ֆ մենք արդէն մեր կեանքէն ձանձրացեր ենք... ո՛վ կ'ուզէ, թո՛ղ երթայ. ո՛վ չ'ուզեր, թող մնայ... ամէն մարդ իր գիտցածը թող ընէ. մէկը միւսին պատճառ թող չըլլայ... Ինչքան ալ երթան, մէկ մասը պիտի մնայ...»:

Ու այսպէս ժողովուրդի մէկ մասը թերահաւատ դանուեցաւ կամ կամօսին պատրաստուեցաւ մահուան եւ եղած տեղէն չշարժեցաւ, եւ գիշերը անցուց պարի եւ երգի մէջ: Համդէի եւ Սամոյի ձայները աշխարհը կը լեցնէին. Մովինարը նոյնպէս պաշարման դօտիէն չհեռացաւ, հակառակ բոլոր թախանձանքներուն ու խնդրանքներուն, եւ Կաթէի ու Կիթայի հետ Արծուի ժայռին վրայ իր վախճանին սպասեց...:

Գիշերուան մթութեան մէջ Անտոքի զանազան կէտերէն հրացանի ձայներ կը լսուին. կուուող ոյժերն են որ պաշարման օդակէն կը փորձեն դուրս ելլել. անոնց կը հետեւի մեծ մասը ժողովուրդին: Ոմանք անոնցմէ ինկան պահակներու գնդակներէն. ինկան եւ պահակները, ու շատերը կրցան անցնիլ պաշարման օդակը: Մամիկոնեանի նախատեսութիւնը ճիշդ էր. զօրք եւ աշիրէթ գիշերային հետապնդումներէ կը խուսափին. միայն տկար նկատուած կէտերու վրայ ոյժ կեդրոնացուցին... Սակայն ժողովուրդի մէկ մասը եւ կուուող ոյժերու մէկ մասը չկրցան դուրս ելլել պաշարման օդակէն, եւ սպասեցին վաղուան ահաւոր սրբերգութեան...:

Պաշարման օդակէն դուրս ելլող ոյժերէն նշանաւոր Մաթոն իր մարտիկներով անցաւ Կեայիեանի ձորի վարի ընթացքի հանգիստեցող լեռները: Իշխանաներ իր ոյժերով անցաւ Այծեամներու բլուրները. Իշխանագունի ոյժերը Տարազարի քարձանքներու վրայ դիրք բռնեցին: Մամիկոնեանի ոյժերը Չայի լեռնամուտերու վրայ կանգ առին: Սասունիի ոյժերը Մանդոն առաւ եւ անցաւ գէպի Տարկոչ, Բեսիմ պէյի թիկունքը:

Վիշապեան, Ազատեան, Ասպետեան իրենց ոյժերով անցան Ալիանցից անտառները. յայտնի Մճոն ու Պօզոսը, Գուրանի Վարդանն ու Մխոն, իրենց կտրիճներով մնացին Կեայիեանի ձախ կողմի բարձունքներուն վրայ՝ պաշարման դօտիի մէջ, Հեղինի Վահան եւ իր

քաջերը՝ աջ կողմի լեռնաշղթային վրայ, նոյնպէս պաշարման դօտիին մէջ:

Արցախեան իրեն հետ առնելով կարգ մը ոյժեր պաշարման օդակէն դուրս ելաւ, գնաց թագնուեցաւ Չինկոյի քարայրին մէջ եւ մնաց անյայտ...:

Զօրք թէ աշայիր գիշերուան ընթացքին Անտոքի զանազան կէտերէն նետուած հրացաններու ձայներէն արթնցած, հսկողութիւնը զօրացուցին...:

Ֆեւզի փաշան, ձեւտէթ եւ Նիսպի պէյերը, Ընկուզի ձոր գիւղի յայտնի Պետոյի տան առջեւ, վրանի մը մէջ, վաղուան ընելիքի մասին կը խորհին...:

ձեւտէթ. — Ծառ բան չունինք ընելիք. գիծադրութիւնը վերջացած պէտք է նկատել. օրուան ընթացքին անոնց բոլոր գիրքերը գրեթէ լուսթեան մատնուեցան, ինչ որ ցոյց կու տայ թէ իրենց գիտական միջոցները սպառեր են...:

Նիսպի. — Ո՛չ միայն գիտական միջոցները, այլեւ իրենց կրօնուող ոյժերն ալ փճացեր են. մեր քաջարի զինուորները անոնց բազմաթիւ գիրքերը գրաւեր եւ տեսեր են որ այդ գիրքերուն մէջ կուուող ոյժերէն եւ ո՛չ մէկը կենդանի է. բոլոր հրացանները կոտորուած են եւ ոչ մէկ փամփուշտ...:

Ֆեւզի. — Զարմանալի՛ բան. ի՛նչ կորով եւ արիւթիւն. ուրկէ՞ այդքան յանդգնութիւն եւ վճռակամութիւն եւ թերեւս շատերը վերջին փամփուշտը իրենք իրենց պահեր են: Ուրեմն եթէ անոնք առատ զէնք եւ փամփուշտ ունենային, մեր սակորները պիտի փոշիէն այս ձորերուն մէջ:

ձեւտէթ. — Ատոր տարակոյս չկայ. եթէ անոնք առատ զէնք եւ փամփուշտ ունենային, մենք երբե՛ք պիտի չկարենայինք ոտք դնել Լեռնաշխարհ:

Նիսպի. — Բայց նորէն շատ յոգնեցուցին մեզ եւ շատ դոճեր խլեցին մեզմէ:

ձեւտէթ. — Այո՛, եւ այդ ալ իրենց իրաւունքն է:

Ֆեւզի. — Եւ այդ բոլորը վաղը պիտի հասուցանեն աւելիով:

ձեւտէթ. — Դժբախտաբար այո՛...:

Ֆեւզի. — Եւ ինչո՞ւ դժբախտաբար:

ձեւտէթ. — Անգէն ժողովուրդի վրայ ձեռք վերցնել, փաշա՛ էֆենտի, տղամարդութիւն չէ:

Ֆեւզի. — Բայց հրահանդ է:

Նիսպի. — Կը լսէ՞ք. զէնքի ձայներ կու գան. չըլլայ թէ գիշե-

բային յարձակման մը ենթարկուինք :

Ճեւտէթ .— Չեմ կարծեր :

Ֆեւզի .— Սուլէյմա՛ն, ճշդէ՛ թէ ի՛նչ զէնքի ձայներ են որ կու գան, — եւ դառնալով ձեւտէթին . — Երեւի կը մտնաք թէ ինչքան նահատակներ տուինք՝ այս Լեռնաշխարհը ընկճելու համար . հիմա շնորհիւ մեր զինուորներու քաջութեան եւ անձնագոհութեան՝ ընկճեցինք Լեռնաշխարհը : Կը մնայ հիմնապէս մաքրագործել՝ ապագային նոր պատուհասներ չունենալու համար : Մեր առջեւ որքան ալ անդէն ժողովուրդ մը գտնուի, չէ՞ որ մաս կը կազմէ ընդհանուր Հայութեան եւ Հայութեան համար տրուած վճիռը պիտի տարածուի եւ իրենց վրայ . . . :

Ճեւտէթ .— Գիտեմ, եւ ես չէ որ պիտի կեցնեմ . իմ անձնական համոզումն է որ անդէնի վրայ զէնք վերցնել տմարդութիւն է . . . :

Ֆեւզի .— Հայրենիքի դերագոյն շահը այդ կը պահանջէ :

Նիազի .— Դուք նորէն կը վերագառնաք ձեր հին վէճերուն . թող տուէք, հոսանքը ինքնին կ'ընթանայ . . . :

Ճեւտէթ .— Բայց, փաշա՛ կֆենտի, մենք չէ որ ընկճեցինք զիրենք, այլ իրենց զինական միջոցները զիրենք ընկճեց : Եթէ կը յիշէք, բազմաթիւ անգամներ ձեզի ըսած եմ որ կը պարտուին, երբ իրենց ռազմամթերքը սպառի . եւ ահա իրենց ռազմամթերքը սպառած է . որով պարտութիւնը ներսէն է եւ ո՛չ դուրսէն : Եթէ անոնք զէնք ունենային, պիտի կարենային հաղարներ զինել, որոնք նոյնքան լաւ պիտի կուէին քան այն կուռուղները, զորս տեսանք եւ որոնց զէմ մեր եւ աշխրեթական ոյժերը շատ տկար են : Դուք տեսաք թէ այդքան քիչ ոյժերով ի՛նչ կատաղի դիմադրութիւն ցոյց տուին ամիսներ շարունակ եւ բազմաթիւ զոհեր խլեցին մեզմէ . շատ անգամ ալ պարտութեան մատնեցին : Ինչքան ալ թշնամի ըլլանք, չեմ կրնար չխոստովանիլ որ այս ժողովուրդը քաջ է . . . :

Ֆեւզի .— Դուք զինուորական էք, գիտեմ, կը համակրիք կըռուող տղամարդուն, բայց մերոնց տղամարդութիւնն ալ մի՛ անտեսէք . . . :

Նիազի .— Անչո՛ւշտ :

Ճեւտէթ .— Չեմ անտեսեր . կը ցաւիմ որ մեզմէ ալ դացին շատ տղամարդիկ : Տղամարդը ծնած է կռուի համար : Երբ կռուի մէջ կ'իյնայ քաջարար, կ'արժեցնէ իր մահը . եւ այդ է իր ճամբան : Բայց նման տղամարդու համար, անդէնի վրայ ձեռք բարձրացնելը ծանր է . . . :

Նիազի .— Տղամարդու արժանապատուութիւնը կրնայ ընդվր-

զիլ . բայց հրահանգի գործադրութեան պարտաւորութենէ ալ չի կըրնար խուսափիլ :

Ֆեւզի .— Այո՛, ի՞նչ կայ, Սուլէյմա՛ն :

Սուլէյման .— Փաշա՛ կֆենտի, թշնամին կը փորձէ պաշարման օղակէն դուրս ելլել : Ընդհարում ունեցեր է պահակներուն հետ եւ պահակներէն ոմանք սպաննուած են :

Ֆեւզի .— Է՛հ, յետո՞յ :

Սուլէյման .— Կը կարծուի որ շատ մը կէտերու վրայ թշնամին նոյն փորձը կատարեր է . բայց թէ պաշարման օղակէն յաջողած են դուրս ելլել՝ յայտնի չէ . . . :

Ֆեւզի .— Ի՞նչ կ'ընեն հազա սպաները :

Սուլէյման .— Անմիջապէս այդ կէտերուն վրայ զինուոր կեդրոնացուցեր են եւ արթուն կը հսկեն . . . :

Ֆեւզի .— Լաւ . — Դառնալով Նիազի եւ ձեւտէթ պէյերուն . — Ի՞նչ կ'ըսէք ասոր . . . :

Ճեւտէթ .— Պարզ է որ վաղուան վտանդէն խուսափելու համար՝ պիտի փորձեն պաշարման զիծէն դուրս ելլել :

Ֆեւզի .— Անմի՛տ փորձ . բայց ո՞ւր պիտի կրնան ազատիլ մեր ձեռքէն :

Նիազի .— Վտանգը շատ անգամ մարդը կը մղէ յանդուզն ձեռնարկներ ընելու . . . :

Ֆեւզի .— Այս մարդիկը տակաւին կեանքէն ձեռք չքաշեցին . նման անհամ տանջանքով ու ցաւով լեցուն կեանք մը վիճակուած է իրենց . կը կարծենք թէ այս ժողովուրդը արի է . պէտք է որ ուրեմն արիութեամբ վերցնէր իր մահավճիռը, եւ ոչ թէ զարնուէր աջ ու ձախ՝ խրտնած եղներու նման . . . :

Ճեւտէթ .— Ի՞նչ ըսել կ'ուզէ փաշա կֆենտին . այսինքն պէտք էր որ չընդվզէր մահուան վճաին զէմ, գլուխ ծռէր, եւ մենք մեր սուրբ իջեցնէինք անոր վզին, խնդայինք անոնց վատութեան վրայ, որ կուէ ամաններու նման կը փշրուին մեր հարուածներուն տակ, ինչպէս որ գոհ գացին հայկական բազմաթիւ շրջանները մեր տմարդութեան, նենդութեան եւ վատութեան : Ինչո՞ւ պիտի չհասցնէին մեզի այսքան վնաս . ինչո՞ւ պիտի չմատնէին մեզ այսքան խայտառակ պարտութիւններու . ինչո՞ւ պիտի չարհամարհէին մեզ իբրեւ վախկոտներ, որ թաւալլոր կ'երթայինք անոնց հարուածներուն տակ, եւ մեր թնդանօթները դերի կ'իյնային ու կը գլորուէին կարմիր քարերէն զէպի վար : Ինչո՞ւ խնայէին Շիւքրի փաշաներուն, Չիա պէյերուն, սպաներուն, աշխրեթապետներուն, մեր հեծելազորքի ջոկատներ-

բուն, փոխադրելի գունդերուն, քրտական զիւղերուն, որ փճացան ա-
նոնց տղամարդու հարուածներուն տակ, եւ կամովին դային ու յանձ-
նուէին մեր սուրին... Այս բախումները, փաշա՛ էֆենտի, ցոյց տը-
ւին ցեղերու արժէքը... Մենք չէ որ պիտի ճշգրենք այս ցեղին ար-
ժէքը: Եթէ անհամ ասնջանքով ու ցաւով լեցուն կեանք մը վիճակ-
ուած է իրենց, մեղաւորը մենք ենք եւ ո՛չ թէ իրենք. եւ եթէ հայկա-
կան շրջանները կաւի նման փշրուեցան մեր հարուածներուն տակ,
ատիկա կը պարտինք մեր տմարդութեան, վատութեան եւ ցածու-
թեան, եւ ո՛չ թէ մեր տղամարդութեան...:

Նիսպի.— Մենք ճակատի մարդ ենք, եւ ճակատի խնդիրները
կը լուծենք: Թիկունքի խնդիրները ճակատի վրայ չեն լուծուիր: Ի՞նչ
լուր ունի փաշա էֆենտին՝ Մեհմէտ Ալի փաշայէն, Բէուֆ եւ Բեսիմ
պէյերէն:

Ֆեւզի.— Անոնք եւս ունեցեր են բազմաթիւ կորուստներ, բայց
եւ այնպէս դրաւեր են թշնամիին բոլոր դիրքերը: Տրամադրութիւն-
նին լաւ է. միայն թէ Բեսիմ եւ Բէուֆ պէյերու եւ աշխրեթապետե-
րու միջեւ քիչ մը լարուածութիւն կայ, որովհետեւ աշխրեթապետ
ոյժերը ծանր կորուստներու ենթարկուած են, եւ աշխրեթապետը
Բէուֆն ու Բեսիմը կը նկատեն պատասխանատու այդ կորուստնե-
րու՝ իրբեւ զոհեր իրենց ձախող սաղմավարութեան: Սակայն Մեհ-
մէտ Ալին իր ճկուն լեզուով կրցեր է լարուածութիւնը հեռացնել՝
լամբադրելով կեղծ տեղեկադրեր թէ Լեոնաշխարհի ընկճումը կը
պարտինք աւելի աշխրեթապետ ոյժերուն եւ որ կարգ մը աշխրեթա-
պետեր արժանի են ամէն զնահատանքի եւ վարձատրութեան...:

Ճեւտէթ.— Կատարեա՛լ լարախաղաց...:

Նիսպի.— Ճկուն է, կիրքերը գիտէ լուեցնել...:

Ֆեւզի.— Հա՛, Սուլէյման, ի՞նչ կայ:

Սուլէյման.— Փաշա՛ էֆենտի, Իսմայիլ Չաւուշ վիրաւոր կին
մը դերի բռնած է, երբ կը փորձէր պաշարման օդակէն դուրս ելլել:
Փաշա էֆենտին կը ցանկա՞յ արդեօք որ իր ներկայութեան հանուի:

Ֆեւզի, Ճեւտէթ եւ Նիսպի շուարած իրարու երես նայեցան...
եւ յետոյ՝

— Լա՛ւ, — ըսաւ Ֆեւզին, — թող բերուի...:

Ու ներս բերուեցաւ վիրաւոր եղնիկ մը: Ալէ՛ն էր, Շէնըզ գիւ-
ղէն իշխանի մը աղջիկը, սրունքներէն վիրաւոր, մազերը ցաք ու ցը-
րիւ, փէշերը արիւնոտ, գայրացած դէմքով, շանթահարիչ նայուած-
քով գեղունի մը, որ լուռ կանգնեցաւ վրանի սիւնին քով՝ հրացայտ
աչքերով նայելով երեք զինուորականներուն, որոնք սիկարի ծուխին

մէջ կորսուած էին:

Սարսուռ մը անցաւ այդ երեք զինուորականներու սրտերէն.
կարծես կը փախնան թէ պիտի հալին անոր սպաննացայտ նայուած-
քին տակ: Վերջապէս Ֆեւզին ժպտելով հարցուց.

— Աղջի՛կս, ի՞նչ է անունդ:

Պատասխան չկայ...:

Ճեւտէթ.— Կարելի է, փաշա՛ էֆենտի, թուրքերէն չի գիտեր.
Թոյլ տուէք կանչել Արշաւիրը:

Եւ կանչուեցաւ Արշաւիրը:

Ֆեւզի.— Արշաւիր, խօսեցո՛ւր այս աղջիկը. տե՛ս, ի՞նչ տե-
ղեկութիւն կրնաս տանել իրմէ:

Արշաւիրի անունը լսելուն պէս՝ Ալէն ցնցուեցաւ. շատ անգամ
յսեր էր այդ անունը եւ գիտէր թէ Արշաւիր անունով դաւաճան մը
կայ...:

Արշաւիր.— Աղջի՛կս, ի՞նչ է անունդ, — հարցուց մեղմու-
թեամբ մը:

Ալէ.— Գուք հա՞յ էք:

Արշաւիր.— Այո՛:

Ալէ.— Ի՞նչ է ձեր անունը:

— Արշաւիր:

Ալէ.— Ա՛հ, դուք այն դաւաճան Արշաւի՞րն էք, եւ տակաւին
կ'ապրի՞ք: Գուք պէտք է որ մեռնիք, — եւ անսպասելիօրէն խոյա-
ցաւ Արշաւիրի վրայ ու սկսաւ բռունցքով հարուածներ իջնեցնել անոր
գանկին:

— Սատկի՛ր, շո՛ւն, — մորտաց տկոսներու տակէն կատաղու-
թեամբ եւ ամբողջ ուժով սկսաւ սեղմել անոր կոկորդը, բայց Սու-
լէյման եւ Իսմայիլ Չաւուշ հազիւ կարողացան Արշաւիրը ազատել ա-
նոր ճանկերէն:

Ֆեւզի, Ճեւտէթ եւ Նիսպի զարմացած իրարու կը նային:

Ճեւտէթ.— Սխալը մեղմ է. պէտք էր միւս անունով կանչը-
ւէր:

Ֆեւզի.— Այո՛, Պեհճէթ պէյ, հարցաքննեցէք այս աղջիկը
մեղմութեամբ:

Պեհճէթ.— Չէ՛, աղջիկս, ես հայ չեմ. թուրք եմ. գիտմամբ
ըսի թէ հայ եմ որ քու վախդ փարատի:

— Ուրեմն դուն ստախօ՞ս ես:

— Ո՛չ, բայց քու վախդ փարատելու համար այդպէս ըսի, ես
թուրք եմ եւ անունս Պեհճէթ է:

Այլ — Ստեղծիք որ իմ վախս փարատի, բայց ո՞վ է քեզ հաշուի առնողը :

Արշաւիր թարգմանեց այդ խօսքերը : Ֆեւզի, ձեւակէթ եւ Նիազի իրարու նայեցան, գլուխներն օրօրեցին եւ շրթունքներն կծեցին :

Արշաւիր — Բայց չըսիր մեզի քու անունդ :

Այլ — Ի՞նչպէս կ'ըլլայ որ դուք այդքան լաւ հայերէն կը խօսիք : Օ՛, Թուրքը անարժան է մեր զեղեցիկ լեզուն իր բերանը առնելու . . . :

Արշաւիր թարգմանեց այդ խօսքը եւս եւ զինուորականները դուրսնին կախեցին ու քրտնեցան : Սուլէյման եւ Իսմայիլ մոլտացին, բայց ձեւակէթի յանդիմանական նայուածքը սասանեց զանոնք :

Արշաւիր — Այդ յանդիմանութիւնն ալ վերցուցի. բայց ինչո՞ւ մեզի չես ըսեր քու անունդ :

— Ինչո՞վ կը հետաքրքրէ քեզ իմ անունս : Ես անուն չունիմ, — ըսաւ Այլն գայրացած :

— Լա՛ւ, կրնա՞ս ըսել մեզի թէ ո՞ւրկէ կու գաս եւ ո՞ւր կ'երթաս, — հարցուց Արշաւիր :

— Անտաքի լանջերէն կու գամ եւ կ'երթամ Մուշ, — պատասխանեց Այլն :

— Մո՞ւշ :

— Այո՛ :

— Բայց ի՞նչ գործ ունիս Մուշ. այնտեղ Հայ չէ մնացեր. բոլորը հեռացեր են :

— Մի՛ ստեր, ո՛չ թէ հեռացեր են, այլ կոտորուած են . . . :

Արշաւիր — Անտաքի լանջերուն վրայ ժողովուրդ շատ կա՞յ . . .

Այլ — Շատ կային, բայց ո՛չ ոք մնաց, վերջինը ես էի. վերադարձուցայ սրունքէս, չկրցայ քայլել եւ ինկայ ձերոնց ձեռքը :

Արշաւիր — Բայց ո՞ւր գացին այդ բոլորը :

Այլ — Այդ բոլորը գացին Մուշ :

Արշաւիր — Ի՞նչպէս երան պաշարման օգտակէն :

Այլ — Չանպահան կէտերէն աննկատ կերպով անցան. շատ ուշ պահակներէն ոմանք նկատեցին, անոնք ալ զնդակահարուեցան :

— Անոնք ի՞նչ նպատակով կ'երթան Մուշ :

Այլ — Վաղը յարձակում պիտի գործուի Մուշ վրայ եւ Մուշը պիտի գրաւուի . . . :

— Կուուող սյօժերը շա՞տ են :

— Շա՛տ :

— Բայց ձեր կուուող սյօժերը կոտորուեցան եւ դիրքերը լսեր

են . . . :

Այլ — Դիրքերը լքեցինք, եւ ոչ թէ լսեցին. աւելի մեծ եւ ծաւալուն կռիւներու պիտի ձեռնարկուի . . . :

Արշաւիր — Ձէնք շատ ունի՞ք :

Այլ — Ամբողջ ժողովուրդը զինուած է :

Արշաւիր — Եթէ այդպէս է, ինչո՞ւ ուրեմն զիմադրութիւնը հեազհեաէ կը թուխայ . . . :

Այլ — Որոշուած էր այդքան զէնք շարժման դնել, եւ այդքան զէնք կը գործէր ձեր դէմ :

Արշաւիր — Ո՞վ որոշած էր :

Այլ — Մեծ զեկաւարը :

Արշաւիր — Ո՞վ է այդ մեծ զեկաւարը :

Այլ — Մեծ զեկաւարը. չէ՞ք զիտեր. քաջերուն քաջը, մէկը որ երբեւիցէ աշխարհը ծնած բլլայ, Վահագնեա՛նը :

Արշաւիր — Վահագնեա՞նը. հը՛մ. իսկ Մամիկոնեա՞նը :

Այլ — Ձեր դէմ գործող սյօժերու հրամանատարն է, եւ հիմա իր ձերմակ նժոյգը նստած՝ իր քաջերը կ'առաջնորդէ զէպի Մուշ :

Արշաւիր — Դուք չկրցաք Լեւոնաշխարհը պաշտպանել : Այս անգամ Մուշը գրաւելու յիմարութիւնը կը գործէք :

Այլ — Այդ ձեզի չի վերաբերի : Ձեր կէք ձեր տուն ու տեղ եւ եկեր էք Լեւոնաշխարհի մէջ կը թափառիք : Ինչո՞ւ կ'անհանգստացրնէք մեզ. զէնքի շատաչօվ ուղեցինք ստատել ձեզ որ վերադառնաք ձեր տեղերը, բայց դուք այնքան անխելք էք որ չհասկցաք այդ. ի՞նչ կը փնտռէք այս լեռներու մէջ : Վաղը բոլորիդ սակորներն ալ այս ձորերուն մէջ պիտի փախն :

Արշաւիր — Մենք այս յոյնութիւնը կը կրենք ձեր յիմարութեան երեսէն. եւ պէ՞տք էր այնքան կորուստ տալինք թէ՛ մենք եւ թէ՛ դուք : Ո՞վ է մեղաւորը. մեղաւորը դուք էք, որ ըմբոստանալու յիմարութիւնը գործեցիք կոտաւարութեան դէմ, որ բոլորի հայրն է . . . :

Այլ — Ո՞ր կոտաւարութեան անունով կը խօսի Պեհճէթը :

Արշաւիր — Օսմանեան կոտաւարութեան :

Այլ — Անկցի այդ կոտաւարութիւնը, որ զնշուններու կոտաւարութիւնն է, որ ո՛չ ձերն է եւ ո՛չ ալ մերը. ան կատարած գազանի մը նման երկրի գաւակները կը յօշոտէ. այդպիսի հրէշ կոտաւարութիւն մը պէտք է որ մեանի . . . :

Արշաւիր — Լռէ՛, անդգամ. ի՞նչ յանդգնութիւն, ո՞վ դրաւ այդ յիմար լեզուն քու բերանդ, թշուառակա՛ն . . . :

Ալէ — Չեմ մեղադրեր, որովհետեւ թուրքը սովոր չէ լսել ճշմարիտ խօսքը: Մենք եւ դուք մեռեր ենք, ի՞նչ օգուտ կայութիւնը չի փոխակերպ: կառավարութիւնը պէտք է մեռնի, որպէսզի այս անշքնչեղի մթնոլորտը մաքրուի...:

Արշաւիր — Եթէ այդ թունաւոր լեզուդ գործածելէ չզազրիս մտրակը պիտի շտապէ ուսերուդ վրայ, քա՛ծ:

Ալէ — Լռէ՛, լի՛րր. քածը ձեր կիներն ու մայրերն են, որ ձեզի նման լիտիներ ցկներ են... Արդէն ձեր ցեղային ժառանգութիւնն է՝ գորաւորի առջեւ քծնիլ, իսկ տկարի հետ մտրակով խօսիլ: Քանի՛, քանի՛ զերիններ բռնեցինք ձեզմէ, որոնք հարցաքննութեան ատեն իրենց վախէն լեզուներն կը բռնուէր, կը նուազէին: Գուն մէկն ես անշուշտ անոնցմէ եւ սակայն հոս մտրակով կը խօսիս, սոցո՛ւն...:

Արշաւիր կատաղութենէն ինքնիրմէ ելած, մէկ-երկու ապտակ իջեցուց Ալէի երեսին, եւ սակայն Ալէի բռունցքէն քիթ ու բերանը աբրինտոնեցան: Իսմայիլ եւ Սուլէյման քանի մը մտրակ իջեցուցին Ալէի ուսերուն, որ կատաղութեամբ դառնալով թքեց անոնց երեսին...:

Ճեւաէթ, որ Ֆեւզիի եւ Նիսպիի հետ կառավարութեան զրկուելիք տեղեկագիրը կը պատրաստէր, գլուխը վերցուց եւ ջղայնացած ըսաւ.

— Թատրո՞ն կը խաղաք այնտեղ, թէ հարցաքննութիւն կ'ընէք: Պեհնէթ պէ՛յ, հարցաքննութիւնը մեղմութեամբ տարէք. կարծեմ զեռ գործը խարազանի չհասաւ...:

Արշաւիր — Պէ՛յ իմ, այս լիտին կը համարձակի հայհոյել պետութեան...:

Ֆեւզի գլուխը վեր վերցուց եւ տեսաւ Պեհնէթի արիւնտա դէմքը եւ՝

— Այս ի՞նչ վիճակ է, — հարցուց թէ՛ զարմացած եւ թէ՛ ջրղայնացած:

— Փաշա՛ կֆենտի, այս քածը կը յանդուրի ձեր ներկայութեան եւ ձեր վրանին տակ ապտակել ձեր հարցաքննիչը, — պատասխանեց Պեհնէթը:

— Ա՛հ, կը ցաւիմ որ Սուլէյման եւ Իսմայիլ մեզի պատուհաս են բերած. ի՞նչ յանդուրութիւն, — ըսաւ Ֆեւզին:

— Թո՛ղ տուէք, փաշա՛ կֆենտի, այս քածը ձեծի տակ սաակեցնել, — ըսաւ Սուլէյման վիրաւորուած:

Ֆեւզի — Ո՛չ, զեռ հոն չհասանք, — եւ դառնալով Պեհնէթ պէյին հարցուց.

— Լրացա՞ւ ձեր հարցաքննութիւնը:

Արշաւիր — Այո՛, փաշա՛ կֆենտի:

Ֆեւզի — Լա՛ւ, նոյնութեամբ տուէք ձեր հարցաքննութեան արդիւնքը:

Եւ Պեհնէթ տուաւ իր զեկոյցը նոյնութեամբ: Նիսպին պլշած աչքերով կը նայի: Ճեւաէթ խոր մտածումներու մէջ է ինկեր, իսկ Ֆեւզին երթալով ջղային կը դառնայ...:

— Այս քածը, փաշա՛ կֆենտի, — աւելցուց Պեհնէթը, — սարսափներէն կորսնցուցեր է ինքզինքը եւ ավեղցիփեղ կը խօսի...:

Ֆեւզին, Նիսպին եւ Ճեւաէթը շուտաւ իրարու կը նային. զեկոյցը ծանր տպաւորութիւն եւ շփոթութիւն ստեղծեց...:

— Ճեւաէթ, սա ձեր դպրոցին կը պատկանի, — ըսաւ Ֆեւզին: Ճեւաէթ — ճշմարտութիւնը ամէն տեղ նոյն է, փաշա՛ կֆենտի:

— Պեհնէթ պէ՛յ, ըսէ՛ք այդ աղջկան որ իր տեղեկութիւնները ճիշդ չեն: Մեզի ճիշդ տեղեկութիւններ թող տայ Անտոքի վիճակի մասին եւ թող շտախոյէ մեզ որ խարազանով խօսեցնենք զինքը: Եթէ այս անգամ ալ սոսէ, զինք պիտի նկատենք լրտես, եւ իրրեւ լրտես պիտի պատժենք:

Ալէ — Պեհնէթ պէ՛յ, ըսէ՛ք փաշա կֆենտիին որ խարազան գործածել վայել չէ: Ըսուեցաւ ինչ որ ճիշդ է. սակայն միայն թուրքերուն տրուած է, իրր ցեղային արժէք. զիս պիտի նկատէք լրտես եւ իրր լրտես պիտի պատժուիմ... — եւ սկսաւ խնդալ բարձրաձայն. — Չեր ի՞նչը լրտեսելու համար, երբ ամէն ինչ մեզի յայտնի է: Գուք Հայ ժողովուրդը կ'ուզէք բնաջնջել, որպէսզի հայ հողը սեպհականացնէք, բայց երբեք դուք պիտի չյաջողիք: Գուք կոյր էք, եւ ճրջմարտութիւնը չէք տեսներ. ճշմարտութիւնը այն է, որ ձեր պետութիւնը քայքայումի մէջ է եւ ես արդէն կը տեսնեմ այդ խարխուլ եւ անբարոյական շէնքին փլուզումը...:

— Հը, Պեհնէթ պէ՛յ, ի՞նչ նորութիւն, — հարցուց Ֆեւզին, գլուխը բարձրացնելով տեղեկագրի վրայէն:

Արշաւիր նոյնութեամբ թարգմանեց լրտեսը, եւ աւելցուց.

— Նոյն թեղի վրայ կը դարնէ, եւ բարձրէն կը թռի, փաշա՛ կֆենտի:

— Սուլէյման, Իսմայիլ, խարազանեցէ՛ք այս աղջիկը, տեսնենք թէ ի՞նչպէս պիտի փոխէ իր լեզուն...:

Սուլէյման եւ Իսմայիլ սկսան խարազանել. Ալէն ցաւը սեղմելով տկոսաներուն տակ, հարցուց.

— Պեհնէթ պէ՛յ, սա ձեր փաշայի հրամանն է...:

— Այո՛, ձեր յամառութիւնը կտարելու համար է :

— Յայտնի է . ձեր փառան ձեզմէ աւելի վատ է եւ ի՛նչ կարելի է սպասել Թուրքէն, բացի վատութենէ . . .

— Սո՛ւս, անզգամ, — սաստեց Պեհճէթ :

— Լռէ՛, ստահա՛կ, — փոխադարձեց Ալէն :

Ու մտրակները կը շառաչեն Ալէի ուսերուն : Սուլէյման կատաղութեամբ մտրակը Ալէի գլխուն իջեցուց՝ Թուրքերուն յատուկ հայհոյանքներու հեղեղով մը : Ալէն անմիջապէս դարձաւ, շառաչուն ապտակ իջեցուց նախ Սուլէյմանի երեսին, ապա Իսմայիլին, եւ կատաղած վազրի մը նման դուրս ցատկեց վրանէն . դրան վրայ կեցող պահակին ուժեղ բռունցք մը տուաւ . պահակը կոնակին ինկաւ . խլեց զէնքը ձեռքէն եւ անցաւ . պահակը ինկած տեղէն վեր ցատկեց, Սուլէյմանի եւ Իսմայիլի հետ վազեցին Ալէի ետեւէն՝ դայն բռնելու : Ալէն քննեց հրացանը, տեսաւ որ լեցուն է . քիչ մնաց որ բռնուի . դարձաւ եւ հրացանը պարպեց . պահակը, որ ամենէն առաջ էր, գետին ինկաւ արիւնջուայ . իսկ Իսմայիլ եւ Սուլէյման, որոնք առանց զէնքի էին, գետին պռակեցան իրենց վախէն : Ալէն եղնիկի արագութեամբ, հակառակ իր վէրքերու ցաւին, իր ճամբան շարունակեց . զէնքը նետեց Ընկուզի ձորի հովիտին մէջ եւ գիշերուան խաւարին ու մացառներուն մէջ կորսուեցաւ : Իսմայիլ եւ Սուլէյման աճապարանքով զէնքերը առին եւ հետապնդումի ձեռնարկեցին . մի քանի զէնք եւս պարպեցին եւ սկսան աջ ու ձախ պոռալ թէ լրտեսը փախաւ . . . Բայց ի գո՛ւր . . . :

Ալէն Ընկուզի ձորի հովիտի ընթացքին հետ, մացառներու մէջէն, զգուշութեամբ, աճապարանքով, երբեմն պահուելով, երբեմն սողալով, երբեմն վազելով յաջողեցաւ պաշարման օղակէն դուրս ելլել . . . : Իսկ Իսմայիլ Չաուշ ի դուր պաշարման տակ առեր է հովիտի ընթացքին երկու կողմերը, այն յոյսով որ առաւօտուն, ուր որ ալ ըլլայ, անպատճառ պիտի ձերբակալէ «քած»ը . . . :

Ֆեւզի, ձեւտէթ եւ Նիսպի իրարու կը նային, այս անօրինակ յանդիմութենէն շքամ, չփութ վիճակի մը մէջ են . տեղեկազրի պատրաստութիւնը յետաձգեցին . Ֆեւզին ջղայնացած կ'երթեկէ վրանին մէջ՝ մտածելով . «Անճարակները որսը փախցուցին» . . . : Ճի՛շդ են արդեօք տրուած տեղեկութիւնները . հաւանական է որ լրտես էր . պէտք է անմիջապէս ստացուած տեղեկութիւնները տեղեկացնել Մեհմէտ Ալի փաշային, Բէուֆ եւ Բեսիմ պէյերուն, ու հեծելազօրքի ջսկատներ զրկել, զէպի Մուշ գացող ճամբաները քննելու : Այդ բազմութիւնը անպատճառ ուր որ ալ ըլլայ, պիտի տեսնուի . . . :

Նիսպի .— Փաշա՛ կ'Ֆենտի, այդ բոլորը դիւրին են . այդ աղջիկը սարսափներու հետեւանքով խենթեցեր է, եւ խենթի մը դառանցանքները հաշուի պէտք չէ առնել . միայն խենթութիւնն է որ նման յանդուզն ձեռնարկներու կը մղէ իր դո՛ւր : Այդ աղջիկը բնականոն վիճակէն դուրս է . ուստի իր տուած տեղեկութիւնները ճիշդ չեն . . . :

ձեւտէթ .— Լեռը ծանր վիճակի մէջ է . անշուշտ կը զգայ այն ծանր սղբերգութիւնը, որ վաղը իրեն կը սպասէ : Սուսափելու համար այդ վտանգէն՝ բնականաբար պիտի փորձէ այդ պաշարումէն դուրս գալ : Եւ այս աղջիկը մէկն է անոնցմէ . ի հարկէ վախը մեծ աղղեցութիւն ունեցեր է անոր հողեկան վիճակին վրայ, եւ ինչ որ կ'ընէ կամ կը խօսի, ո՛չ թէ գիտակցաբար է, այլ բնազդաբար . ապրած սարսափներուն հետեւանքն է :

Ֆեւզի .— Լա՛ւ, ընդունինք որ այդ այդպէս է . ուրեմն լեռ գտնուողները բոլորն ալ նոյն հողեկան վիճակը ունին . . . :

Նիսպի .— Վաղը երբ լեռը գրաւուի, այն ատեն յայտնի կ'ըլլայ, թէ ի՛նչ է անոնց հողեկան վիճակը :

ձեւտէթ .— Ի՞նչ պիտի ըլլայ անգէն ժողովուրդի մը հողեկան վիճակը մահուան առջեւ, որքան ալ արի ըլլայ . յամենայն դէպս մահուան առջեւ կրնայ տկարութեան նշաններ ցոյց տալ . . . :

Ֆեւզի .— Իսկ այս աղջիկը ինչո՞ւ անընկճելի մնաց, երբ մահուան առջեւ կը գտնուէր եւ սակայն մահով պատժեց մեզ եւ մահէն խուսափեցաւ : Ո՞ւր կրնաք գտնել այդքան հողեկան արիութիւն ու կորով :

Նիսպի .— Ո՞ւր պիտի խուսափի մահէն . մերոնք բոլոր ճամբաները փակած են :

ձեւտէթ .— Այդ թող չմտահողէ ձեզ, փաշա՛ կ'Ֆենտի . հաշուենք թէ անիկա յաջողի պաշարման օղակէն դուրս ելլել, ո՞ւր պիտի երթայ : Ո՞ւր ալ երթայ, նորէն մեր գնդակին դո՛ւն է : Չսպաննուեցաւ այս ձորին մէջ, պիտի սպաննուի ուրիշ ձորի մը մէջ . . . :

Ֆեւզի .— Ինչ որ է, վաղը Անտոքը պէտք է գրաւել, ի՛նչ գնով ալ ըլլայ . հերիք է կառավարութիւնը յանդիմանէ մեզ իրրեւ գանդաղ շարժողներ . . . :

Նիսպի .— Վաղը Անտոքը կը գրաւուի, փաշա՛ կ'Ֆենտի . այլեւս տարակոյս չկայ . . . :

ձեւտէթ .— Վաղը Անտոքը կրնայ գրաւուիլ, բայց չեմ կարծեր թէ մեր գործը վերջանայ . խուսափողներ անպատճառ պիտի ըլլան, եւ մենք անոնց հաշիւը մաքրելու համար ստիպուած պիտի ըլլանք անոնց ետեւէն վազելու . . . :

Ֆեւրի.— Միայն թէ Անտոքը գրաւուի, ինչ որ իրենց վերջին կայանն է: Եթէ խուսափողներ եւ լեռնային զանազան հանգոյցներու մէջ ապաստանողներ կան, այդ մաքրագործումն ալ կը ձգենք աշխրեթական ոյժերուն...:

Նիսպի.— Այո՛:

Ֆեւրի.— Ուրեմն, դացէք եւ վաղուան վերջնական հարուածի պատրաստութիւնը տեսէք: Խրախուսեցէք զօրքն ու աշխրեթը, որ վաղը գործը կը վերջանայ, լեռը կը գրաւուի, ըմբոստ տարբերը կը բնաջնջուին, եւ մենք այս յոգնութիւններէ կ'ազատինք... Ու իւրաքանչիւրը իր աշխատանքին վարձատրութիւնը կը ստանայ...:

Առաւօտ է: Տխուր եւ ազիտայի օր մըն է, որ կը բացուի Լեռնաշխարհին վրայ: Զօրք թէ աշայիբ չորս կողմէն շարժեցաւ: Գոյամարտի ոյժերուն երկկուան գիրքերը պարապ դառն. բացի դիակներէն եւ կոտորուած դէնքերէն. իրենց կատաղութենէն դիակները սկըսան յօշոտել. եւ սպա սոսք անցան. ոչ մէկ գիմաղբուրութիւն եւ ոչ իսկ ձայն: Ու յանկարծ տեսան ժողովուրդը, որ ըստ սովորականին գրանգած է օրուան մտահոգութիւններով, եւ ահա ուժեղ համազարկեր իրարու ետեւէ չորս կողմէն. ո՛չ մէկ գիմաղբուրութիւն...: Սուճապ, իրարանցում... փախուստ... ճիչ... սարսափ... աղաղակ... Զինուոր թէ խուժան քաջութիւն ստացան: Ուրեմն վերջացած է դիմաղբուրութիւնը եւ ո՛չ մէկ փորձ. առիւծ դարձան եւ անցան կատաղի ոստումներու՝ իրենց որսը բղկոտելու համար, անզուսպ դազանութեամբ՝ ի խնդիր վարձատրութեան...:

Սարսափելի է անդէն եւ խուճապահար բազմութիւններու փախուստը — մարդ, կին, ծեր, երեխայ, աղջիկ, աղայ, կաղ, կոյր, իրար խանոտած. ճիչ, աղաղակ, դռոււմ-գոչում, որոնց կը մասնակցին չուներու խումբերը՝ սանալով կամ հաշելով, ոչխարի հօտերը՝ աջ ու ձախ մայելով, ձիերու երամակները՝ վրնջելով. նախիրները՝ սունկերնին յայն բացած կը փնջան, կը բառաչեն ու բոլորը կը վազեն. խոչիւնը կու գայ իրենց ոտքերէն, խոչիւնը չորցած խտերու ծղօններէն: Քարերը կը ցատկատեն ու կը վժժան եւ կը վազեն իրենց հետ: Կը վազեն քրանած, հեւասպառ՝ մարդ թէ անասուն: Գիտեն որ անասելի ողբերգութիւն մըն է որ կը կատարուի...: Այդ բոլորը հեղեղի պէս Անտոքի հարաւային լանջերէն կ'իջնեն թաւալելով դէպի Կեալիեասանի ձորը: Խոցուցիչ ու փշաքաղոզ ժխոր մը բռնել է աշխարհը, ու կ'արձագանգէ Կեալիեասանի հովիտի կողերուն եւ Անտոքի լանջերուն վրայ: Այդ արձագանգին աւելի ոյժ կու

տան բազմահարկ հրացաններու զարկերը եւ զօրքի ու աշխրեթի վայրենի պոռչուածքներն ու հայհուհները... Ու հեղեղը կը հոսի անընդարազելի ուժգնութեամբ, իրար հրելով, հրմշակելով, կոխկրտակելով՝ Կեալիեասանի ձորն ի վար...:

Տեղի վրայ թողուցեր են ինչ որ ունին եւ կը փախչին. բազմաթիւ օճախներ կը ծխան, խորովածը կը վառի կրակին վրայ, ապուրի պուտուկը կ'եռայ, հացը մոխրախառն կրակին մէջ կ'այրի. խմորը կիսովին չաղուած՝ այնպէս կը մնայ, ճերմակեղէնները հաղի թէ թրջուեր են, ջուրի մէջ են: Սաչը դեռ չէ մաքրուած. ոչխարի գլուխ մը կրակի վրայ կը խանձուի. կերակուրը կը մխայ...:

Զօրք ու աշխրեթ յաղթական կ'արշաւեն...:

Արծուի ժայռէն Մովինար տեսաւ այդ բոլորը՝ սիրաւ առած ախոսներուն տակ. եւ ահա որոտացին Մովինարի, Կաթէի եւ Կեթայի մաւղէրները. զօրքէն քանի մը հոգի ինկան. զօրքը անակնկալի եկած նահանջեց. բայց շուտով ետ դարձաւ եւ կրակը կեղբոնացուց Արծուի ժայռին վրայ:

— Վերէն, վերէն, — պոռացին սպաներէն սմանք, եւ մաս մը գինուոր մալլեցցաւ Անտոքի լանջերը, վերէն հարուածելու համար Արծուի ժայռը: Մովինար Կեթային յանձնարարեց աջ կողմը, Կաթէին՝ ձախ կողմը պաշտպանել. իսկ ինք վերէն հարուածող ոյժը կը գրաղեցնէ:

Երեք կողմէն եկած ուժեղ համազարկերուն տակ՝ ինկաւ Կաթէն. ինկաւ եւ Կեթան. զարնուեցաւ եւ Մովինարը, ու թաւալելով ինքն իր վրայ՝ գլորուեցաւ Արծուի ժայռէն եւ ջարդուփչուր ինկաւ Սասունի գերեզմանին վրայ... Այսպէս մեռաւ յեղափոխութեան մայրը, եւ մնաց անթաղ... ու խորտակուեցաւ Սասնոյ իշխանական տունը...:

Այո՛, մնաց անթաղ, որպէսզի յաբուրթիւն առնէ, թերեւս անգամ մը եւս անթաղ մնալու համար...:

Կեալիեասանի հովիտի ձախ կողմի բարձունքներուն վրայ յայտնի յեղափոխական Բուլենց Մճոն եւ Պօղոս, Դուրանի Վարդան եւ Մխոն կատաղի կռուի բռնուած են զօրքի եւ աշայիբի հետ՝ ճնշումը թեթեւցնելու համար Կեալիեասանի ձորին վրայ. բազմաթիւ դոհեր խիցին թշնամիէն եւ իրենք ալ զոհ գացին այդ անողոք կռուին: Կեալիեասանի աջ կողմի լեռնաշղթային վրայ՝ Հեղնի Վահան, Սանդրոն,

Մքոն եւ ուրիշները տղամարդու նման հարուածեցին թշնամին. տը-
 ւին քանի մը զոհեր: Ծանր վնասներ հասցուցին Մեհմէտ Ալի փաշայի
 զինուորներուն եւ զիշերուան մթութեան մէջ հեռացան տարրեր ուղ-
 զութեամբ: Այժմեամներու բլուրէն Իշխանեանի ոյժերը, Տալազարի
 կողմէ Իշխանագունի ոյժերը, Չալի եւ Պարպարի հովիտի բարձունք-
 ներէն Մամիկոնեանի ոյժերը, Գանիեպաճիէն եւ Ալիանցից լեռնե-
 րէն, Վիշապեանի, Ազատեանի եւ Ասպեանի ոյժերը, իսկ Տարկոշ-
 ներէն Մանգոյի ոյժերը հարուածեցին թշնամին թիկունքէն: Թշնա-
 մին շիթութեան մատուցեալ եւ ճիւղաւորուցեալ: Սակայն Անտոքի
 ճնշումը չանտեսեց. այսպէս կռիւը նեղ շրջագիծի մը վրայէն ինկաւ
 աւելի լայն շրջագիծի մը վրայ. ու կատաղի թափ մը ստացաւ: Թշնամին
 վախցաւ որ ինկած է պաշարման օղակի մէջ, կամ օղական
 ոյժ եկած է զուրսէն գոյամարտի ոյժերուն: Բայց թիկունքէն եկած
 ճնշումը թեթեւ բլլալով՝ մտածեց որ զիշերուան ընթացքին պաշար-
 ման օղակէն զուրս ելած ոյժերն են որ զիրենք թիկունքէն կը հար-
 ուածեն, որպէսզի Անտոքի վրայէն ճնշումը թեթեւցնեն. եւ սակայն
 թշնամին չանտեսեց Անտոքը...:

Բայց ահա՛, ամենէն ահեղ գօտեմարտը տեղի կ'ունենայ Կեա-
 լիեսանի ձորին մէջ, ուր վայրագօրէն, կռիւն ու ջարդը իրար են
 խառնուած...: Չորս կողմէն ժողովուրդը քշուցաւ դէպի ձորը, ու
 չորս կողմէն զօրքն ու աշայիրը համազարկերէ կտք, երբ տեսան զի-
 մազբութիւն չկայ, անցան սուրի, սուինի եւ դաշոյնի՝ յօշոտելու
 այդ հսկայ գանդուածը, որ մէկէն ի մէկ ներքին դերագոյն մղումով
 մը պոսթկաց՝ կարծես երկրաշարժի ցնցումէ բռնուած, ալիքներ նե-
 տեց եւ յարձակեցաւ զօրքի եւ աշիրէթի վրայ: Ժողովուրդ, զօրք ու
 աշիրէթ իրար խառնուած են. գոռում-գոչում, վայրի ճիշեր, անաս-
 նական մարտօքներ, հայհուհներ կը յուրին: Ապա սկսան գործել
 խաշերկաթը, ալիշը, լողը, մանգաղը, կեռը, բահն ու բրիշը, դա-
 շոյնն ու դաւադանը, քարը, ատրճանակը, բուռնցքն ու ալուաները եւ
 աքային...:

Ժողովուրդը կատաղած ու փրփրած իր օղակներուն մէջ՝ մեծ
 թիւով զօրք ու աշիրէթական ոյժեր գրկեց, որոնք զէնք գործածելու
 հնարաւորութենէ զրկուեցան եւ զիմեցին սուինի, սուրի, դաշոյնի,
 բայց ջարդուեցան ժողովուրդի հարուածներուն տակ անխնայ...:
 Համզէն, Սամոն, Գալէն, Եերոն, Մոսէն եւ իրենց բնկերները, որոնք
 կողմակերպեցին այդ տարերային պոսթկումը եւ այդ մեծ թակար-
 դը, առիւծի նման կը մոնչէին աջ ու ձախ, առանց նկատի առնելու
 իրենց վէրքերը, եւ շատ մը կարիճ կիներ, ինչպէս Սանամ, Քնքուշ,

Բոմէ, Մարէ, Տիւոյ, Վառէ: Կատաղած ու վիրաւոր վաղրերու նման,
 փողոտեցին ժողովուրդական ալիքներու մէջ ինկած զօրք թէ աշի-
 րէթ...: Այդ խառնարանէն զուրս մնացող զօրք թէ աշիրէթ շուարեր
 են. ինչ ընելը չեն գիտեր. կը գիտեն այդ կատաղած բազմութիւնը,
 որ իրար կը զգեն, կ'արիւնտտին ու կը թաւալին. չեն կրնար մէջը
 մտնել եւ չեն կրնար համազարկի տալ, որովհետեւ իրենց ոյժերը եւս
 պիտի իյնան այդ համազարկերէն. ստիպուած նահանջի զալարափո-
 դերը հնչեցուցին: Աշիրէթապետերը իրենց ոյժերը ետ կանչեցին,
 որպէսզի զօրք թէ աշիրէթ այդ կլանող թակարդին մէջ չիյնան...:

Ժողովուրդէն ինկան շատերը. շատ մը մանուկներ ոտքերու
 տակ ճզմուեցան ու մեռան: Թշնամին եւս բազմաթիւ կորուստներ
 ունեցաւ. թշնամիի նահանջը ողբերկեց ժողովուրդը, որ մտածեց.
 «Մենք արդէն մեռած ենք. այս շուներն ալ պէտք է մեռցնենք մեզի
 հետ, որ անարժան են Աստուծոյ արեւին եւ ջուրին»: Երիտասարդնե-
 րէն եւ կիներէն շատերը ինկած զինուորներուն զէնքերը վերցնելով,
 յարմարագոյն գիրքերը բռնեցին եւ ժողովուրդին յանձնարարեցին
 շարժիլ ձորի ընթացքին հետ, եւ անցնիլ անտառներու գօտին:

Ու սկսաւ ծանր կռիւ մը չորս կողմէն խուժող զօրքի եւ խու-
 ժանի դէմ: Դիմազրոյ ոյժերը սպառեցին իրենց փամփուշտները, եւ
 ինկան թշնամիի ուժեղ համազարկերէն... Թշնամին նորէն անցաւ
 խոյանքի, բայց այս անգամ զգուշացաւ ժողովուրդի ալիքներուն մէջ
 մտնել. եւ համազարկերու ոյժով կ'ուղէ մաքրել հաշիւը այդ կատ-
 ղած բազմութեան, որ կը քալէ ալուաները սեղմած եւ կը թափի:
 Թշնամին հետզհետէ կը խտանայ, նոր հասնող ոյժերը անտեղեակ
 քանի մը ժամ առաջ տեղի ունեցած թակարդէն, մտան ժողովուրդի
 ալիքներուն մէջ, սուրով ու դաշոյնով յօշոտելու, բայց արժանացան
 նախկիններու բախտին...:

Կեալիեսանի երկու կողմի լեռնաշղթաներէն զօրք թէ աշայիր
 կը յառաջանան ձորի ընթացքին հետ եւ վարէն կ'ուղեն փակել ձորը
 եւ կտրել փախուստի միակ ճանապարհը: Սակայն նշանաւոր Մաթոն
 իր ոյժերով, եւ Աւտանայ Արամը իր կարիճներով հանդիպակաց լեռ-
 ներէն ձեռնեցին ձորի երկու կողմերը. բայց պահեցին ճանապարհը եւ
 ժողովուրդէն շատերը առիթ ունեցան գժոխքի ձորէն զուրս գալ եւ
 ապաստանիլ անտառներու գօտիին մէջ...:

Իրիկունը վրայ հասաւ, եւ մութը թեւերը տարածեց այդ դար-
 հուրանքին վրայ. Կեալիեսանի ձորը արիւնով ներկուած է. լեցուած
 է հազարաւոր դիակներով. ծանր վիրաւորներու հոնդիւններն ու
 տնքոցները քարերն անգամ կը հալեցնեն: Սպաննուեցաւ Արջասպան

Համզէն, որ կը պոռար .

— Տղանե՛ր, արժեցուցինք մեր կեանքը . մահը այլեւս հարսանիք է . . . :

Ինկաւ Սամոն, որ կ'որոտար՝ «Գայլի կաթ եմ ծծած, մահը կը փնտռեմ, բայց մահը ինձմէ կը փախչի . . . » : Ինկան Գալէն, Շերոն, Մոսէն եւ իրենց ընկերները, որոնք թշնամիին կը պոռային՝ «Հո՛ս կնք եւ ձեզի կը սպասենք . . . » : Ինկաւ գեղանի Սանամը, որ կոխի երգեր կ'երգէր եւ ծանր լողով թշնամիի գլուխները կը ջարդէր : Ինկաւ Բոմէն, որ խաչերկաթով թշնամիի թեւերը կը կտրէր . ինկաւ յաղթանդամ Տիլոն, որ սուրի մէկ հարուածով վիզերը կը կտրէր : Ինկան եւ շատ մը կտրիճ կիներ, որոնք լաւագոյն կռուողներ եղան այդ արիւնոտ ձորին . եւ իւրաքանչիւր թշնամի գինուոր կամ ոչ գինուոր, զոր կը զարնէին, կը պոռային . «Այսպէս շանսատակ կ'ընենք այն բոլոր վատերը, որոնք կը յաւակնին մահը մեզի բերելու . . . » :

Անոք թէեւ պարտուեցաւ ու պարպուեցաւ, սակայն կոխն ու ջարդը իրար խառնուած՝ գալարուեցաւ ու թաւալեցաւ Լեոնաշխարհի հանդոյցներուն մէջ ամբողջ ամիսներ : Զօրք թէ աշայիր անընդհատ դարձան ու գարձան Լեոնաշխարհի շրջապիծին մէջ, խուզարկելով ձորեր, հովիտներ, անտառներ, մացառներ, լեռներ, բլուրներ, որպէսզի ո՛չ ոք այդ բժրոստ ժողովուրդէն չկարենայ խուսափիլ մահէն : Եւ սակայն շատերը կրցան անցնիլ դէպի Քանայ լեռներ ու այլուր . . . :

Թուուցիկ մարտական խումբեր եւ ժողովուրդի մեծ մասը ջանացին խուսափիլ հետապնդումներէ, իւրաքանչիւր գիշեր փոխելով իրենց թաքստոցները մէկը միւսէն ութ-տաս ժամ հեռու . բայց եւ այնպէս տեղի ունեցան բազմաթիւ կատաղի կոխներ՝ լեռնային գանդան հանդոյցներուն մէջ եւ այդ կոխները հարեցուցին թշնամիէն շատեր եւ հարեցան իրենք եւս . . . :

Զօրք թէ աշիրէթ չմոռցան դիակները կողոպտել, եւ ապա յօշտել . չմոռցան փճացնել բերքերը, պտղատու ծառերը, ոչխարներն ու նախիրները, վայրի բանջարեղէնները : Աւերեցին ամբողջ Լեոնաշխարհը, որպէսզի Լեոնաշխարհի հանդոյցներուն մէջ ապաստանածները եթէ սուրէն խուսափին նոյնիսկ, անօթութեան զոհ դառնան . . . Փորձեցին նոյնիսկ անտառները հրդեհել, վախնալով անտառներու մէջ հետապնդում կատարելէ, բայց չյաջողեցան :

Ահա վերաւոր Իշխանեանը Կեփինի բարձունքներուն վրայ պաշարուեցաւ . զօրք թէ աշայիր պաշարման օդակը կը սեղմէ . . . :

— Իշխանեա՛ն, Իշխանեա՛ն, այսօր ո՞ւր պիտի ազատես ինքզինքդ, — կ'ըսէ լայնբերան Կենճոն՝ ծանօթ աշիրեթապետ մը . — շատոնց քու գլխուդ ետեւ կը պտրտիմ : Հերիք է յոգնեցնես մեզ . չէի կարծեր որ այդքան վախկոտ ես . ամօ՛թ է քու պատուոյդ որ ըսենք թէ Իշխանաց ձորի իշխանը մութ ու ազտոտ ծակերու մէջ կը կրծկուի :

— Կենճո՛յ, Կենճո՛յ, — պոռաց հին Փետայի Կրպիկը՝ Իշխանեանի եղբայրը . — յորձունքը բերանէդ կը թափի, չես կրնար բերանդ կառավարել . քեզի՞ է մնացեր Իշխանեանի գլուխի ետեւէն պտրտիլ : Իշխանեանը հօս է . ազամարդ ես, եկո՛ւր եւ առ :

Կենճոն վերաւորուած՝ խրախուսեց իր աշիրը, եւ սուրի արշաւի դնաց . բայց Կրպիկի զնդակէն դանկը պայթեցաւ, եւ զլորուեցաւ ու ինկաւ առուի մը մէջ, եւ ծածկուեցաւ ցեխով :

— Ահա՛ Իշխանեանի գլուխը, չո՛ւն . Իշխանեանի գլխու ետեւ պտրտողը այսպէս կը սաակի . — ըսաւ Կրպիկ :

Իշխանեան բռնուեցաւ վայրագ կոխի մը, որ տեւեց ամբողջ օրը, ինք եւ իր ոյժերը ինկան ծանր կորուստներու դնով : Ինկաւ յայտնի յեղափոխական Կրպիկը, Աղճէն, Ճանոն, Մրդէն, Մուրոն եւ ուրիշներ . կռատուեցաւ նաեւ իրենց հետ եզոյ ժողովուրդը՝ կատաղի մարտնչումներէ ետք, նման Կեալիեանի ահեղ դատեմարտին :

Ծովասարի լանջերուն վրայ, նշանաւոր Մաթոն իր ընկերներով երկար կռիւներ մղեց եւ մեծ փնսներ հասցուց թշնամիին : Ահա պաշարման տակ ինկած է եւ աշիրեթապետ ՈւսրՖ յոխորտանքով մը կը կանչէ .

— Մաթո՛յ, Մաթո՛յ, հերիք է կատղած արջի նման շուռ գաս, եւ մահէն խուսափիս : Որոշուած է որ մեռնիս, եւ պիտի մեռնիս . ի դուր մեզ մի՛ շարջարեք . . . աղամարդը մահէն չի վախնար . . . :

— Է՛հ, — ձայնեց Մաթոն . — ՈւսրՖ, երեւի հօրդ վրէժը կ'ուզես լուծել, դեռ մտրակիս պալարները հօրդ թիկունքին վրայ կ'երեւին . ատիկա դաս մը պէտք էր ըլլար քեզի : Բայց անխելք ես : Թէեւ արժանի չես հարուածիս, սակայն քանի որ շանսատակ կ'ուզես ըլլալ, չեմ գրկեր քեզ այդ պատուէն :

Ու սկսաւ կոխը . ՈւսրՖ եւ իր մարդոցմէ շատերը ինկան . ինկան եւ զօրքէն բաւական մարդ, բայց Մաթոն եւ իր ընկերներն ալ

զոհ գացին, երբ իրենց ուղղամթերքը սպասեցաւ . . . :

Մովսսարի գաւակներն էին, եւ ինկան Մովսսարի լանջերուն վրայ . . . :

Տարկոչեան հանդոյցներուն մէջ Մանգոն ու իր ընկերները դաժան կռիւներ մղեցին եւ ամբողջութեամբ կոտորուեցան՝ արժեցնելով իրենք զիրենք: Տարկոչեան ուղղամթերքն էին եւ բաց ճակատով գացին Տարկոչեան նահատակ քաջերուն միացան:

Իշխանագունի ոյժերը Տալազարի վրայ պաշարուեցան, բայց յաջողեցան ճեղքել պաշարման օղակը. թէեւ շատերը ինկան, բայց միւսները զիակաները կոխկռտելով անցան Աթանազինէի անտառները եւ իրենց հետքերը կորսնցուցին: Թշնամին փորձեց անտառը հրդեհել, սակայն հրձիղները սպաննուեցան Իշխանագունի ոյժերէն:

Ահա՛ ճերմակ նժոյգով ասպետը, պաշարուած Պաղ ջրերու անտառին մէջ: Դեռ արեւը չձագած ինկաւ պաշարման օղակին մէջ: Երկար մաքառումներէ եւ թափառումներէ ետք, իբրեւ ասպհով ասպաստանարան նկատեց Պաղ ջրերու անտառը, որուն աջ կողմը՝ Պաղ ջրերու մարգին մէջ՝ հեծելազօրքի, իսկ ձախ կողմը՝ հետեւակազօրքի բանակատեղիներն են, ու զիշերով մտաւ Պաղ ջրերու անտառը իր կորիւններով, եւ չզիտցաւ որ իրենց անցքը տեսնուած է: Դեռ արեւը չձագած հեծելազօրքի, հետեւակազօրքի եւ աշիրեթական ոյժերու կողմէ ծանր կերպով կը պաշարուի:

Մամիկոնեան ու իր կորիւնները դառագեղ ինկած առիւծներու կը նմանին. չորս խումբի բաժնուեցան՝ իւրաքանչիւր խումբ ճակատ մը պահելու համար, եւ հրացանները սկսան երգել. Գարրիկ, Շէնըգի սոխակն ու քեաթիպը, իր անուշ ձայնը ձգեց . . . : Մոնչիւն ձգեր է Շէնըգի իշխաններէն Գրգէյտան Վարդանը, այդ հուժկու տղամարդը, որուն ոտնաձայնէն հողն անդամ կը դողար: Մելքէն, Սաչոն, Սերորը մարտահրաշք կը կարգան: Պօղոս եւ Ադամ պարի երգեր կ'երգեն. իսկ Մամիկոնեան պաղարիւնութիւն կը յանձնարարէ.

— Ի՛մ քաջեր, գնդակի խնայողութիւն. դեռ արեւը չձագած՝ կռիւր սկսած է. օրը երկար է. չորս կողմէն խստիւ պաշարուած ենք: Թշնամին անընդհատ կը խտանայ. չեմ գիտեր պիտի կարենա՞նք օրը իրիկուն ընել: Օրը երկար է, ամառուան օր է. զգո՛յճ եղէք. այսօր մեր վերջին օրն է. պիտի երգենք մեր մահուան երգը, եւ այնպէս մը պիտի երգենք, որ սարսափի թշնամին եւ ամչնան երկիրնք, երկիր եւ Աստուած . . . :

Ու կռիւր ծանր է . . . :

Պաշարուածները կ'երգեն եւ կը կուռին. թշնամիի համազար-

կերէն ծառերը կը ջարդուին. կրակ կը թափի, հրդեհը ինկաւ անտառ, որ կը ճարճատի: Ու զէնքերը յողնած կը անքան վիրաւորներու հետ: Գարրիկը զարնուեցաւ, իր երգը խառնելով անքոցին հետ: Չարնուեցաւ եւ Վարդան, այդ առիւծը, որ կրթնած քարի մը կը անքայ. վէրքերը կը զիտէ եւ հրացանը կը կոտրէ, որ չիյնայ թշնամիի ձեռքը: Մէկիկ-մէկիկ կ'իյնան Մամիկոնեանի ուղղամթերքը: Հայկական զէնքի ձայնը հետզհետէ կը մարի: Ահա՛ զարնուեցաւ Սաչոն. Մլքէն կը ձայնէ. «Մի՛ աճապարեր, միասին երթանք . . . »:

Փամփուշտները կը սպառին: Չարնուեցաւ Պօղոս, իսկ Ադամ կը պոռայ.

— Է՛հ, ո՞ւր կ'երթաս. դեռ գործ ունինք . . . :

Ու Մամիկոնեան կը խրախուսէ.

— Կտրի՛ճ եղէք, իմ քաջեր:

— Լա՛ւ, — ձայնեց Տիգրան, — բայց փամփուշտ, փամփուշտ, զէնքը առանց փամփուշտի ոչինչ է. թշնամին կը համարձակի մօտենալ, որովհետեւ փամփուշտ չունինք. եւ քաջերը, որոնք կը մեռնին, առանց փամփուշտի են մնացեր:

Ու . . . բառը մնաց բերանը. Տիգրան զարնուեցաւ Սերորի կողքին, արիւնը խուժեց Սերորի աչքերը եւ ըսաւ.

— Է՛հ, գնչունե՛ր, ինչ որ ալ ընէք, նորէն գնչու պիտի մնաք: Տեսաւ ճաղատ Ամարը ծառի մը ետեւ կծկուած եւ ըսաւ.

— Ամա՛ր, Ամա՛ր, քու ճաղատ գանկդ, — եւ հրացանը պարպեց:

Ամար եզան նման բառաչելով կռնակի վրայ ինկաւ, բայց Սերորը ինքն ալ զարնուեցաւ . . . :

Հայկական զէնքի ձայնը լռեց . . . Մամիկոնեան ցնցուեցաւ այդ լռութենէն. հասկցաւ որ փամփուշտը սպառած է. շրջան մը ըրաւ, կռուող ոյժերու վիճակը տեսնելու եւ դտաւ շատերը սպաննուած. ու մանք վիրաւոր եւ առանց փամփուշտի մնացեր է մինակ. վերադարձաւ իր տեղը, կրթնեցաւ ծառի մը արմատին, քրտինքը սրբեց, սիկար մը վառեց, ու ցասկոտ նայուածքով զիտեց չորս կողմը. թշնամին համազարկ համազարկի ետեւէ կու տայ, եւ սակայն չի համարձակիր առաջ շարժիլ՝ վախնալով թակարդէ մը, հակառակ որ հայկական զէնքը լռեր է . . . :

Ու հրդեհի բռնուած անտառին մէջէն Մամիկոնեանը ձայն տըլաւ.

— Է՛հ, կռուող ոյժերը ինկան, մինակ եմ. եկէք, եւ զիրքերը յանձն առէք . . . :

Քիչ մը յետոյ նորէն ձայնեց .

— Ի՛հ, եւ Մամիկոնեանն եմ . իմ քաջերը լուցին, մնացեր եմ մինակ . եկէ՛ք, եւ դիրքերը յանձն առէ՛ք . . . :

Մամիկոնեան անունը ուսմբի մը պէս պայթեցաւ . ախրեց սարսափ մը . զօրք թէ աշիրէթ եւ նահանջեց, եւ ճղակոտոր անտառը տուաւ համադարկի : Մամիկոնեան վիրաւորուեցաւ, բայց չինկաւ . սկսաւ անհող սիկարը ծխել, եւ արեւուն թեքումը դիտել . ու ինքն իրմէ ելած, իրրեւ անտառի յաւերժական ոգի մը, արձանացած հըրդեհուած անտառին մէջ, կրթնած հաստարմատ ծառի մը, որուն ճիւղերը կը ճարձատին, այսպէս պատգամեց .

— Ողջո՛յն նորածագ արեւին եւ հայկական քաջակորով զարմին, որ պիտի ապրի սակէ ետք ալ այս նահատակներու հողիովն ու շունչովը : Մամիկոնեանը կրնայ բաժնուիլ իր մարմնէն, բայց իր միտքն ու հողին պիտի մնան այս աշխարհին վրայ յանուն պայքարի եւ ի խնդիր արդարութեան, որքան ատեն անիրաւութիւն եւ անարգարութիւն կայ այս դժբախտ երկրի վրայ . . . :

Ու Մամիկոնեան նորէն ձայնեց .

— Եկէ՛ք . մինակ եմ մնացեր . քաջերը քնացեր են . . . :

Չօրք եւ աշիրէթ քանի մը համադարկ եւս տուին, ջարդուած եւ բռնկած անտառին, եւ սկսան առաջ շարժիլ, վստահ ըլլալով որ ամէն դիմադրութիւն վերջացած է : Մամիկոնեան արհամարհական նայուածք մը նետեց շարժող ջոյրին վրայ, եւ վերջին հարուածը տուաւ ինքն իրեն, ու ինկաւ անշունչ, ծառի արմատին քով :

Ահա այսպէս ինկաւ ճերմակ նժոյգով ասպետը, իր վաթսուն կտրիճներով, խլիլով զօրքէն եւ աշիրեթական ոյժերէն բազմաթիւ զոհեր . . . :

Մամիկոնեա՛նը . . . Ի՛նչ հոյակապ մեծութիւն . . . :

Անոր առջեւ կը նսեմանան թագակիր աւազակները եւ ինքնազաւ ու ամբարաւան գողերը . . . :

Ամբողջ Լեոնաշխարհը զերեզման մըն է դարձեր . . . ձորեր, լեռներ, հովիտներ, անտառներ, մացառներ արիւնով ներկուեր եւ դիակներով լեցուեր են : Ու ի՛նչ վայրագութիւններ գործադրուած են խեղճ զոհերուն վրայ . . . :

Աչուն է : Չօրքը քանի մը անգամ եւս դառնալով Լեոնաշխարհի հանդոյցներուն մէջ, դիմադրական բոյները եւ մարտական թուռցիկ

ոյժերը կտորելէ ետք՝ հեռացաւ Լեոնաշխարհէն : Մաքրագործումի գործը կտաւարութիւնը թողուց աշիրեթական ոյժերուն, տալով անոնց գէնք, սաղմամթերք եւ վարձատրութեան խստամտներ . . . Եւ ահա աշիրեթական ոյժերը, դիշեր ու ցերեկ, կը շրջագային Լեոնաշխարհի բոյր վայրերը՝ մաքրագործումը ամբողջացնելու համար : Ահա՛ Չրվրնիկի հովիտը, ուր այնքա՛ն դիակներ ինկան կատաղի մարտընչումներէ ետք : Ահա՛ Չրխառի հովիտը, Պարպարի հովիտը, Տուքնի հովիտը, ուր ինկան յայտնի իշխաններ՝ Գալէի Արթին, Չօրոյտան Կրպոյ, Արթնիտան Պետրոս եւ իրենց հետ եղողները՝ սաք կոխներէ ետք, ուր սպաննուեցան Պապճանցի Շրվէշ, Գող Էմին, Խուլրայ Սերտոն եւ ուրիշները : Ահա՛ Միծառներու ձորը, ուր պաշարուած երիտասարդները ծանր հարուածներ հասցուցին աշիրեթական ոյժերուն, բրին իրենց կարելին եւ մեռան . . . :

Անոնց մէջ էր եւ քաջարի եզնիկը՝ Ալէն . . . :

Ահա Խարձն Գոմերու հովիտը, ուր նշանաւոր յեղափոխական Չաթոյի առիւծասիրտ տղան՝ Լեւոն պաշարուեցաւ եւ տասնեակ մը կերաւ աշիրեթական ոյժերէն, բայց սպառեցաւ իր փամփուշտը եւ ինկաւ . . . Ահա՛ մորմենիներու մացառը, Պաղ ջրերու մարդին հանդիպակաց լեռան վրայ, ուր Հայաստանեայց Եկեղեցիի ներկայացուցիչը, Սեմայի ճարտասան Տէր Կարապետը, որ պաշարուեցաւ : Կատաղի մոնչիւնով մը գէժ դրաւ աշիրեթական ոյժերուն, արորեց ամբողջ մացառը, հարուածելով չորս կողմ, սպաննեց մեծ փոք Փախը եւ եօթ հոգի ալ անոր մարտիկներէն : Ապա վերջին զնգակը տուաւ իրեն :

Ահա՛ Գայլի հովիտը եւ Պապճանցից հովիտը, ուր քիւրտ Սալեհ (քրտացած հայ մը նախկին Յակոբ անունով), սուրը ձեռքը, աշայրի առջեւ ինկած, ամէն տեղ փուշ ու մացառ կը խուզարկէ, եւ անխնայ կը կտորէ ով որ պատահի :

— Ի՛հ, Օվանէ՛ս, Օվանէ՛ս, Նորէրտա՛ն Օվանէս, ո՞ւր պիտի փախչիս, — կ'ըսէ կատգամ Սալեհ . — այսօր վերջին օրդ է :

Օվանէս ցորենի ձոր դիւզի դիւզապետն է, եւ քրտացած Յակոբը, այդ դիւզի նախկին Հայն է, որ սիրահարուելով քիւրտ ազնկայ մը՝ քրտացած է : քրտանալէն առաջ, Գէորդ Չաւուշի, Ազամի եւ Լեւոնի հետ կը պարտէր . քրտանալէն ետք, հեռացաւ Հայերու հետ շփում ունենալէն :

Օվանէս, իր եղբայրը Բարսեղ, իրենց ընտանիքներն ու զաւակները, ինչպէս եւ իրենց գիւղացիներէն շատերը Գայլի հովիտին մէջ կարմրեցան աշիրեթական գաշոյնի եւ սուրի տակ, որովհետեւ

զէնքը առանց փամփուշտի չզործեց եւ բռունցքը, քարն ու փայտը շատ չօղնեց իրենց :

Ահա՛ Ալոջակի եւ Տաղբընիկի անտառներուն մէջ Գամոյի Սատոյ՝ յեղափոխական Չաթոյի եղբայրը, ամէն օր արիւն կը խմէ՝ իր վրէժը յազեցնելու համար : Այդ հսկան սարսափ ձգած է քրտական ոյժերու վրայ, որոնց մասնաւոր խումբեր յատկացուած են այդ «չարիք»ը մէջտեղէն վերցնելու համար . զինք հետապնդող ոյժերէն շատերը կերաւ, մինչեւ որ ծանր հիւանդ ինկաւ եւ նուազած վիճակի մէջ՝ սպաննուեցաւ Քիւրտերէն :

Այիանցից ձորերը, Յունի հովիտը, Տալուրիկի լեռնալանջերը ի՛նչ արիւնտ ողբերգութիւններու հանդիսատես եղան . . . :

Ահա՛ Սպաղանքի, Էղկարտի, Խլճոյի ժայռերուն վրայ ի՛նչ աղիքներ թափուեցան : Խուլբայ հովիտը ինչե՛ր չտեսաւ . . . Գնդալայ Հելինէն ի՛նչքան մարդ զահաւիժուեցաւ . . . Ահա Կուրղըքի լանջերուն վրայ, Գրգէի տան սարը, Մոսէի տան սարը, Գնէյիտան սարը քանի՛, քանի՛ զեռահաս երիտասարդներու խմբակներ անխնայ կոտորուեցան, որոնց հայրերը իրենց թաքստոցներէն լսեցին անոնց ճիչերը, եւ սակայն չկրցան օգտակար ըլլալ անոնց, որովհետեւ զէնք չունէին եւ կամ զէնքը առանց փամփուշտի էր : Ի հարկէ վերջէն իրենք եւս զո՛հ գացին թշնամիի արիւնտ սուրին : Ինչե՛ր տեսան Մովասարի, Կեփինի, Կապլորի, Անտոքի, Կուրղըքի, Տարկոչի կողերն ու հովիտները : Աթանազինէի ձորէն ի՛նչ արիւններ վազեցին . . . :

Ահա՛ Ամպրէի Կեալին . ի՛նչքան քաջագործութիւններ երգեց . հոգ էր որ Մոսկէտան Կարապետ, Կեազկազքներու վրայ, սպաննեց Լաճքանայ յայտնի աշխրեթակաւ Գալէյ Ուսրֆը, եւ փախուստի մասնեց ամբողջ աշխրեթական ոյժերը : Հոգ էր որ նշանաւոր ռազմիկ Չուրն, իր երեսուն քաջերով, պաշարուեցաւ աշխրեթական ոյժերէն, կոտորեց եւ անցաւ՝ միայն եօթ զոհեր տալով, եւ հո՛ղ էր որ զարկաւ իր հօրեղբոր աղան Յովհաննէսը . . . :

Յովհաննէս երկու կոնքէն կը վիրաւորուի, չի կրնար շարժիլ : Որպէսզի շանցնի թշնամիներուն ձեռքը եւ վայրագօրէն չչարչարուի, Չուրն այդ դժնդակ վայրկեանին չկրցաւ մերժել Յովհաննէսի խրնդրանքը, սեղմեց իր սիրտը, դնդակ մը տուաւ Յովհաննէսի զանկին, ու անցաւ՝ իր արցունքները կուլ տալով . . . :

Հակառակ այդ խիստ հետապնդումներուն, Լեռնաշխարհի

հանգոյցներուն մէջ մեծ թիւով ժողովուրդ կայ տակաւին, որ կը տառապի անօթութենէ, մերկութենէ, հիւանդութենէ, անձրեւէ, ձիւնէ, ցուրտէ, որոնք կարծես թշնամիին հաշուոյն կ'աշխատին . . . Շատերը ցուրտին, անօթութեան եւ հիւանդութիւններու զո՛հ գացին . շատերը հիւանդ վիճակի մէջ չկրցան հետապնդումներէ խուսափիլ, եւ նուազած վիճակի մէջ սպաննուեցան, ինչպէս նշանաւոր Սատոն, Էզոն, Կիրոն, Յակորը, Ղաղարը, Առքոն, Պօղոսը եւ շատ շատերը :

Աչո՛ւն է, ձմեռնամուտ ու ցուրտ :

Կացութիւնը անտանելի է :

Բնութեան խստութիւնը, անօթութիւնը, հիւանդութիւնները, քայքայեցին աննոց Փիղիբակներ . հոգեկան կորովը տկարացաւ եւ միտքը բթացաւ . . . Շատերը մահը աչք առին . կտոր մը հաց ձեռք բերելու համար՝ իջան քրտական զիւղերը եւ սպաննուեցան . . .

Բնութեան խստութիւններու հետ աշխրեթական ոյժերը հեռագհեաէ հեռացան Լեռնաշխարհէն . հետապնդումները մեղմացան . փախտականները թէեւ իրենց ապաստանարաններէն սկսան ելլել եւ շուրջերնին նայիլ, բայց ոչինչ կրցան ձարել ուտելու համար :

Կառավարութիւնը նկատի առնելով աշխրեթական ոյժերու հեռագհեաէ հեռանալը Լեռնաշխարհէն եւ հետապնդումներու թուլանալը, բնութեան խստութիւնները եւ փախտականներու անտանելի կացութիւնը, խորհեցաւ նոր թակարդ մը լարել՝ մահէն խուսափաները ձեռք բերելու համար . . . Անիկա մասնաւոր մունետիկներ զըրկեց Լեռնաշխարհի զանազան վայրերը . անոնք գացին եւ կանչեցին .

— Է՛հ, աչքերնի՛դ լոյս . ներման հրաման եկած է . մենք եղբայրներ ենք . կառավարութիւնը ձեզի համար ամէն ինչ պատրաստեր է, ե՛ւ ուտելիք, ե՛ւ հագուստ, ե՛ւ բնակարան : Եկէ՛ք, հերիք է որքան տառապեցաք : Ձեր տառապանքը վերջ գտած է . ձեր մտքին անգամ զպչող մը պիտի չըլլայ : Եղբայրնե՛ր, եկէ՛ք, կերէ՛ք, խմեցէ՛ք, վայելեցէ՛ք : Ահա՛ շարակաւորները ձեզի համար հաց, միս, պանիր, սիկար, հագուստ բերած են : Կառավարութիւնը իր զաւակները չի մոռնար . բան մըն էր պատահեցաւ ու անցաւ : Հիմա ներում է . արդարութիւն եւ եղբայրութիւն է, աչքերնի՛դ լո՛յս, ազատութի՛ւն է . . . :

Ու մունետիկներ ամէն օր շրջեցան ու կանչեցին .

— Աչքերնի՛դ լոյս, ազատութիւն է, ներում կայ . եղբայրնե՛ր ենք, եւ ո՛չ ոք ձեր վրայ պիտի համարձակի չեղ աչքով նայիլ . . . :

Շարակաւորներ իրենց բռնները կը դնեն զանազան տեղեր ու

կը հեռանան, որպէսզի փախտականները օգտուին... Ու օրեր շա-
րունակ այդպէս. բազմաթիւ շարահաւորներ կը բերեն հաց, միս,
ծխախոտ, սրանիք, օճառ, հաղուստ, կօշիկ, դուլպայ, եւ մունետիկ-
ները աչքի լոյս կը կանչեն եւ ներման աւետիսը կու տան՝ կրկնելով.

— Կառավարութիւնը ամէն օր ձեզի պէտք եղածը կը հասցնէ,
ձեզի համար ամէն բան պատրաստուած է. մի՛ վախնաք, եկէ՛ք եւ
վախելիցէ՛ք, ինչպէս ձեր եղբայրներէն շատերը եկած են եւ կ'ուտեն,
կը խմեն ու կը սպառին...:

— Է՛հ, աչքերնի՛դ լոյս, ազատուեցանք, — սկսաւ խօսքը շքր-
ջան ընել Լեոնաշխարհի բոլոր հանգոյցներու մէջ. — Ազատութիւն
է. ներման հրամանը եկած է, այլեւս մեր մազին դպչող չկայ. կա-
ռավարութիւնը մեզի հաց, միս, ծխախոտ, սապոն, հաղուստ, կօ-
շիկ, դուլպայ դրկած է: Կառավարութիւնը մեզի համար ամէն բան
պատրաստած է, եւ մեզի կը սպասեն:

Մունետիկներ շարունակ աչքիլոյս կու տան եւ ազատութեան
աւետիսը կը հաղորդեն: Մասնաւոր շարահաւորներ ամէն օր ուտելիք
կը բերեն Մուշէն մինչեւ հոս, «մեզի համար», եւ թէ... «կուր
վերջացեր է: Ազատութիւն եւ եղբայրութիւն է»...:

— Հը՛, ազատութիւն է. կառավարութիւնը դիտմամբ կ'ուզէ
մեզ ապրեցնել, որպէսզի մինչեւ վերջ մեր կորուստներու սուղը ապ-
րինք ու տառապինք: Թ՛քնե՛մ այդպիսի ազատութեան վրայ. ասկէ
ետք մեզի համար ապրիլը ի՛նչ կ'արժէ, երբ մեր շուրջը կը նայինք,
դատարկ է: Ո՛ւր են մեր ջահիլ-ջիւանները, մեր կտրիճ երիտասարդ-
ները, մեր անուշ եւ քնքուշ հարսները, մեր սիրուն աղջիկներն ու
տղաները: Այս բոլորը կորսնցնելէ ետք, ազատութիւն է, եկուր եւ
ապրիր. թո՛ւ այդ ազատութեան, տուողին ալ, բերողին ալ, անո-
ղին ալ: Պէ՛տք չէ այդ ազատութիւնը, ո՛ր ամենակարող մահ, ո՛ւր
ես գուն... — ըսին շատերը:

— Ո՛չ, — ըսին ուրիշներ, — մենք պէտք է ապրինք. կը ցա-
ւինք որ այդ կորուստները ունեցանք. կը ցաւինք որ եղան այդ բոլոր
դէպքերը. բայց մնացածները պէտք է որ ապրին. կորուստը ետ չի
դառնար. բայց անոր տեղը կարելի է լեցնել, միայն թէ ապրինք:
Ափսո՛ս որ անոնք դացին. թերեւս բախտ չունէին ազատութիւնը տես-
նելու...:

— Ապուշներ՛ր, — մուրացին սմանք. — եւ կը կարծէք որ ձեզի

ազատութիւն տրուած է ու դուք ազատու՞ծ էք: Ասիկա պարզ թա-
կարդ մըն է՝ մահէն խուսափողները մահուան սաքր տանելու հա-
մար: Չօրք եւ աշիրեթական ոյժերը չկրցան մաքրագործումը ամ-
բողջացնել. ահա՛ նոր ձեւ մը գտած է կառավարութիւնը, մնացած
խլեակները բնաջնջելու համար...:

— Մենք արդէն անօթութենէ, ցուրտէ, մերկութենէ, հիւան-
դութիւններէ կը կոտորուինք: Եթէ կառավարութիւնը մնացածներու
բնաջնջումը կը հեռապնդէ, գործը կը թողու բնութեան, որ այդ
պահասը կը լրացնէ, բայց երբ կառավարութիւնը մունետիկներ կը
հանէ, շարահաւորներ կը դրկէ, եւ այդ ոչ թէ մէկ կամ երկու օր,
այլ օրեր շարունակ, կը նշանակէ թէ այլեւս բնաջնջելու խնդիր չկայ,
այլ բնաջնջումէ ազատելու համար մնացածը, օգնութեան ձեռք կ'եր-
կարէ: Այդ ձեռքը որքան արխնատ ըլլայ, պէտք չէ մերժել, որով-
հետեւ այդ ձեռքը կտրելու հնարաւորութիւն չունինք...:

— Ըի՛ղջ է, այդ ձեռքը կտրելու հնարաւորութիւն չունինք,
բայց կրնանք արհամարհել եւ վրան թքել...:

— Արհամարհեր ենք, կամ վրան թքեր ենք, ի՛նչ նշանակու-
թիւն ունի. նորէն վիասուողը մենք ենք: Անդամը ո՛չ արժանապատ-
ուութիւն ունի եւ ոչ գիտակցութիւն: Մենք պէ՛տք է ապրինք, որ-
պէսզի օր մը կատարուած շարիքը դարձանենք...:

— Գուք կրնաք այդպէս մտածել. իսկ թշնամին աւելի հեռու-
ները կը մտածէ. վաղը նորէն քու դէմքը չտեսնելու համար է որ այս
բոլոր կեղծիքը ծրագրեր է...:

— Մենք արդէն մեռած ենք, բայց քաղենք, տեսնենք թէ ո՛ւր
կը հասնինք: Ես պիտի երթամ տեսնեմ թէ ի՛նչ կայ այս բոլորի տա-
կը...:

— Անխոհեմութիւն է. մենք միամիտ ենք. չենք կրնար կառա-
վարութեան խաղերը հասկնալ: Ձեր երթալը պիտի քաջալերէ շատե-
րը, որ նոյնպէս պիտի գան եւ իշնան թակարդը, իսկ թակարդէն
դուրս ելլելը դժուար է:

— Թակարդէն դուրս թէ ներս, մենք կորուսած ենք. դոնէ ա-
նօթի փորով չմեռնինք. անգամ մը որ կշատանանք, յետոյ մեռնինք.
այդ-ատեն մահը թեթեւ կ'ըլլայ: Անօթի փորով մեռնիլը ամենածանր
բանն է, որ կայ... Եթէ ներման հրամանը ճիշդ է, պէտք է տարած-
ուած ըլլայ ամէն տեղ: Այդ հաշուով ոչ որ ձեռք պիտի բարձրացնէ
մեր վրայ. ուրեմն ազատ ենք մեր ուզած տեղը երթալու եւ փոխա-
նակ Մուշ երթալու, կ'երթանք մեզի ծանօթ եւ տարիներու բարեկամ
Քիւրտերուն քով, ինչպէս ալ ըլլայ, կտոր մը հաց կրնան տալ մեզի,

եթէ իրապէս կառավարութեան ներուժը կեղծ չէ...:

— Ուր կ'ուզէք, զաջէք, վտանգը միշտ ձեր առջեւ ցցուած է. կը նախընտրեմ լեռները մնալ՝ անօթի, ծարաւ, ցուրտէն տառապիլ, հիւանդութենէ մեռնիլ կամ հետապնդումի զոհ դառնալ, քան թէ իմ ոտքերով երթալ, կտոր մը արիւնտա հաց մուրալ՝ արիւնտա ձեռքերէ, եւ յետոյ իյնալ դանակի տակ... Երեւի տակաւին չճանչցաք Քիւրտերը, այդ ծանօթ եւ տարիներու «բարեկամ» Քիւրտերը...:

— Բայց այս վիճակը տանելի չէ:

— Այո՛, եւ սակայն սարկութենէն լաւ է:

— Կը մտնաք որ եղբայրական փողն է, որ կը շեփորուի լեռներէն:

— Ո՛չ, բարեկամներ, դաւադրական փողն է որ կը հնչէ, ըզդուչացէք եւ մի՛ երթաք...: Մի՛ խարուիք, այս բոլորը անոր համար է, որ մեզ մահուան ոտքը տանին:

— Այլեւս չենք կրնար տանիլ այս վիճակը, հալումաչ ենք եղեր անօթութենէն, հիւանդութենէն, ցուրտէն: Մարդու վիճակէն դուրս ելած ենք. մեր կմախքացած էութիւնը այլեւս ի՞նչ բանի պէտք կու գայ. արդէն ամէն օր հաղարներ կը մեռնին, երթանք, թող վերջ մը դնեն այդ ողբերգութեան...:

Այսպէս վիճեցան փախստականները՝ անօթի, ծարաւ, կմախքացած, մերկ, ցուրտէն զոզահար, հիւանդութիւններէ հիւժուած, քայքայուած, եւ կորուստներու ծանրութենէն ընկճուած, չդիմանալով այլեւս իրենց անտանելի կացութեան, հաւատացին ներման առասպելին, եւ կտոր մը հաց ունենալու եւ տաք տեղ մը պառկելու հետանկարէն մղուած, հետզհետէ իջան Լեռնաշխարհի բարձունքներէն դէպի Դափրղ եւ անկէ ալ Մուշ, աւելի շատ համոզուելով անոնց խօսքին, որոնք աւելի շուտ իջան Դափրղ, կերան հաց ու միս, հազան նոր հազուստ ու կօշիկ, պառկեցան իրենց համար պատրաստուած տաք սենեակներու մէջ, եւ ապա դրկուեցան Լեռնաշխարհը՝ միւսները համոզելու համար...:

— Ի՛նչ էք կեցեր. եկէ՛ք, կերէ՛ք, խմեցէ՛ք, հազէ՛ք եւ պտըտեցէ՛ք: Աշխարհը փոխուած է. ո՛չ ոք ձեզի բան կ'ըսէ, աննդատու կայաններ հաստատեր է կառավարութիւնը. խոշոր կաթսաներով միս եւ փիլաւ կ'եփուի: Առատութեամբ հաց եւ կերակուր կը բաժնուի. հազուստեղէն եւ կօշիկ կու տան. լաւ սենեակներ եւ անկողիններ կը

տրուին... Տեսէ՛ք, մենք ի՛նչպէս ենք. օրական երեք անգամ կերակուր կ'ուտենք, տաք սենեակներու եւ մաքուր անկողիններու մէջ կը պառկինք: Այս հազուստները, ճերմակեղէնները եւ կօշիկները բոլորը կառավարութիւնը տուած է. առաւօտունէ մինչեւ իրիկուն կը պտըտինք, ուր որ ուզենք կ'երթանք եւ ո՛չ ոք մեզի բան կ'ըսէ. ընդհակառակն ամէնքը կ'ուզեն մեզ հիւրասիրել, ըլլայ թուրք թէ քիւրտ, ժանտարմ թէ պետական պաշտօնեայ. բոլորն ալ լաւ են մեզի հետ, եւ բոլորն ալ կը ցաւին որ դուք տակաւին այս նեղութիւնը կը քաշէք...: Կը վախնաք որ կրկնուի՞ն հին օրերը... Այդ անցա՛ւ. այսօր ազատութիւն եւ եղբայրութիւն է: Ահա մենք կ'երթանք. ով որ կ'ուզէ, կրնայ ընկերանալ մեզի...:

Ու սկսան ալիք-ալիք հոսիլ դէպի վար, դէպի Դափրղ, ուր կաթսաներով միս եւ փիլաւ կ'եփուի, ուր հազուստ եւ կօշիկ կը տրուին, ուր տաք սենեակներ եւ մաքուր անկողիններ կան... եւ ինչ որ ամենէն աւելին է... լաւ վերաբերմունք:

Լեռնաշխարհը նոր ողբերգութիւն է ստացեր. կմախքացած մարդիկ դողալով իրենց սրունքներուն վրայ, ելած են իրենց թաքստոցներէն, ականջնին սրած, աչքերնին կը չփնն եւ հեռունները կը նային. «է՛հ, ազատութիւն է, թշնամութիւնը վերջացեր է. ընդհանուր ներում է. աչքերնիդ լո՛յս... կառավարութիւնը ամէն օժանդակութիւն կ'ընէ, տուն կու տայ, հող կու տայ, հազուստ, սերմնացու եւ լծկան կու տայ: Հաց ու միս կու տայ եւ ինչ որ պակաս է, ինքը կը հոգայ, մինչեւ որ ժողովուրդը գտնէ ինքզինքը: Է՛հ, ժողովուրդ, աչքերնիդ լո՛յս, քալեցէ՛ք դէպի նոր կեանք...»:

Ու ժողովուրդը թեւ առած, դէպի նոր կեանքը կը քայլէ, հակառակ անոր որ աջէն ու ձախէն փորձառու դլուխներ կը զգուշացընեն, կը խրատեն, կը թախանձեն, ըսելով. «Մի՛ երթաք, եղբայրներ՛ր, կամովին մի՛ երթաք սպանդանոց. այս բոլոր խօսքերը, խոստումները, օժանդակութիւնները, անոր համար են որ ձեզ ձեր ոտքով դանակի բերան տանին: Մի՛ երթաք...»:

Բայց ո՞վ է մտիկ ընողը. ցուրտը, անօթութիւնը, հիւանդութիւնները կը մտրակեն եւ առաջ կը մղեն յուսալքուած ու հիւժուած բազմութիւնները, որոնք կ'երազեն կաթսաներով միս ու փիլաւ, հաց ու հազուստ, տաք սենեակ եւ մաքուր անկողին...:

Ու ժողովուրդը կը քայլէ դէպի նոր կեանք... դէպի Դափրղ, ուր կառավարիչ թահիրը ժպիտով մը կ'ընդունի զիրենք. նոյնիսկ կը բարեհաճի իրենց վիճակը հարցնել, կը ցաւի որ այդքան նեղութիւններ քաշած են. կը հսկէ կաթսաներուն, ուր կերակուր կ'եփի, կը

յանձնարարէ մատակարարողներուն, որ կերակուրը հաւատարապէս
բաշխուի եւ ո՛չ ոք չանտեսուի... նորեկներուն կը խոստանայ հա-
գուստ եւ կօշիկ բաժնել, ինչպէս որ տրուած է իրենցմէ առաջ եկող-
ներուն. կը հրահանգէ որ անմիջապէս օճառ բաժնուի, նորեկներ չո-
գանք առնեն, մաքրուին եւ տեղ պատրաստուի իրենց համար որ հան-
գրատանան...:

Օ՛, վատութիւն, ի՞նչքան նենգութիւն եւ դաւադրութիւն ու-
նիս...:

Այո՛, բորենին դեռ չէ կշտացեր արիւն լակելէ...:

Թահիր խորամանկ է ու նենգամիտ, ինչպէս է ամէն Թուրք.
անիկա միշտ նորեկ կարաւաններէն խմբակներ կ'առնէ, որոնց կը
հագցնէ, կը կերցնէ եւ դիտմամբ կը դրկէ Լեոնաշխարհը՝ մնացած-
ները համոզելու համար: Անիկա նոյնիսկ նորեկներէն տեղեկացաւ
շատերու մասին, որոնք մահէն խուսափած են, եւ կը մնան Լեոնաշ-
խարհի հանդոյցներուն մէջ, մանաւանդ ծանօթ իշխաններու մասին,
զորոք ձեռք բերելու համար՝ Թահիր մասնաւոր պատիւներ ըրաւ,
դրկելով Լեոնաշխարհ անոնց համար ձիեր, խորոված, հաւեր, գա-
թաներ, շիշերով գոնեակ, անուշահոտ օճառներ, տուփերով լուա-
դոյն սիկարներ, եւայլն, եւայլն, եւ մեծ իշխաններէն ոմանք՝ հակա-
ռակ իրենց հեռատեսութեան, լեռներէն իջան եւ ինկան թակարդ...:

Իշխաններու երթը աւելի համոզիչ պարագայ մը եղաւ փա-
խըստականներու համար, որոնք սկսան աւելի մեծ թիւով շարժիլ
դէպի Դափրդ:

Թահիր երբ լսեց մեծ իշխաններու ոմանց դալը, կառավարա-
կան պաշտօնեաներով եւ ոստիկանական խմբակով մը դիմաւորելու
դնաց: Հանդիպումը եղաւ սրտաշարժ. համբոյրներ եւ յուզիչ խօս-
քեր փոխանակուեցան արտասուքներու մէջ: Ու այդ երեւոյթը թեւ
առաւ դէպի Լեոնաշխարհ, եւ ամենէն ուժեղ մղիչ ազդակը եղաւ՝
փախտականները Լեոնաշխարհէն դէպի վարերը շարժելու...:

Ազատեան եւ Ասպետեան, Կարմիր քարերէն արցունքոտ աչքե-
րով կը նային կարաւաններու ետեւէն, որ կը շարժին դէպի Դափրդ:

— Այս ժողովուրդը ինքնարեւարար դէպի մահը կ'երթայ, —

ըսաւ Ազատեան հառաչանքով մը:

— Դժբախտարար այո՛, — պատասխանեց Ասպետեան. — Ի՞նչ
կրնանք ընել. զգուշացուցինք, բայց ի դուր. անօթի են, մերկ են,
թշուառ են, հիւանդ են, անպատասպառ են: Այլեւս չեն կրնար տակալ
այս խայտառակ վիճակին, ու կ'ուզեն որ վերջ մը գտնէ այս վիճա-
կը, որ մահէն աւելի ծանր է: Փոխանակ օրը հազար անգամ մեռնե-
լու, կ'ուզեն մէկ անգամ մեռնիլ, եւ ազատիլ այս անտանելի կացու-
թենէն:

— Գոնէ իշխանները չեքթային: Վիշապեանի եւ Իշխանագունի
երթը զիս կը զարմացնէ. արդեօք հողեփոխութի՞ւն մը կատարուե-
ցաւ, թէ գիտնալով դէպի մահը կ'երթան: Իրենց երթը դժբախտարար
քաջալիւրեց ժողովուրդը, որ տարերային թափով դէպի մահը կ'եր-
թայ...:

— Այո՛, Իշխանագուն եւ Վիշապեան գիտակցօրէն դէպի մահը
կը քայլեն. անոնք գիտեն որ կառավարութիւնը իրենց գլխուն ետեւ
կը պտըտի, եւ կամովին կ'երթան իրենց գլուխը տալու...: Անոնք
որքան գիտեմ, հեռատես են եւ կ'ըմբռնեն ամբողջ խաղը, բայց թէ
ինչո՛ւ գացին այդ խաղին գո՞հ դառնալու՝ չեմ գիտեր. եւ դժբախտա-
բար զիրենք այդ մտադրութենէն ետ կեցնելու մեր բոլոր խնդրանք-
ները չօգնեցին: Իսկ ի՞նչ կ'ըսեն իրենք. ժողովուրդը առանց մեր
կամքին կ'երթայ, մենք չկրցանք կեցնել ժողովուրդի երթը. հետե-
ւարար մենք իբրեւ ժողովուրդի դաւակ՝ պիտի քայլենք ժողովուրդին
հետ եւ պիտի բաժնենք ժողովուրդի ճակատագիրը: Մենք ժողովուր-
դէն աւելի չենք. առանց ժողովուրդի մենք արդէն մեռած ենք, եւ
մենք կ'ուզենք ժողովուրդի հետ մեռնիլ: Տեղ կայ որ մենք կ'առաջ-
նորդենք ժողովուրդը, բայց տեղ ալ կայ որ ժողովուրդը կ'առաջ-
նորդէ մեզ: Հոս ժողովուրդն է որ կ'առաջնորդէ մեզ. թերեւս իր
փրկութեան համար գո՞հ կը պահանջէ եւ մենք գոհերն ենք ժողովուր-
դի փրկութեան այնպէս, ինչպէս այդքան թանկագին գոհեր, որ տը-
ւինք այդ նպատակին. գիտենք որ մեր գլուխի գոհարերութիւնն ալ
պիտի չփրկէ ժողովուրդը, բայց թող չըսուի թէ լքեցին մեզ:

Ազատեան. — Հասկնալի է թէ իրենք եւս շատերու նման գերա-
զոյն գոհարերութիւններու սխալանքին մէջ ինկան: Շատ անգամ գե-
րազոյն գոհարերութիւնները ծայրայեղութիւններու սահմաններէն
անցնելով՝ կը վրիպին իրենց նպատակէն եւ բացասական արդիւնքնե-
րու կ'երթան, մանաւանդ երբ ժամանակի եւ մտայնութիւններու հա-
մեմատ չէ գաստուորուած: Վիշապեանի եւ Իշխանագունի այս գերազոյն
գոհարերութիւնը այս տեսակէն է:

Ասպետեան. — Վիշապեանը եւ Իշխանագունը պէտք չէր այդ շերագոյն զոհարերութեան երթալին. պէտք չէր երթալին այն արիւնոտ ձեռքը սեղմելու, որ մեր ամբողջ ժողովուրդը բնաջնջեց եւ վաղը պարանը պիտի սեղմէ իրենց վիզին... Գիտեմ այդ զոհարերութիւնը ժողովուրդին համար բրին. բայց ժողովուրդը չօգտուիր անկէ, այլ թշնամին է որ կ'օգտուի: Թշնամին իր ցանկութեան հասցնելու աշխատանքը մեր կողմէ պէտք չէ կատարուի... Իսկ իրենք կ'առարկեն թէ «գիտենք որ թշնամին մեզ կը փնտռէ, եւ ատոր համար շատերը պիտի ճնշէ, պիտի նեղէ, որպէսզի մեր տեղը ցուցնեն: Խնայելու համար այդ շարժարանքները շատերուն, մենք կամովին կ'երթանք, որովհետեւ թշնամին մեզ հետապնդելի պիտի չզգալի եւ մեր պատճառով շատերը պիտի գտնուին իրենց թաքստոցներուն մէջ եւ կոտորուին... Մեր երթալով — քանի որ թշնամին գիտէ թէ ողջ ենք — թերեւս հետապնդումները Լեոնաշխարհի մէջ դադրին, եւ շատերը ազատուին այդ շարունակական հետապնդումներէ: Մենք գիտակցաբար կ'երթանք դէպի մահ, դոնէ խնայելու անոնց, որ մեր պատճառով պիտի շարժարուին, եւ փրկելու Լեոնաշխարհը հետախուզութիւններէ, որոնց հետեւանքով շատերը պիտի մնասուին... Մենք մահէն խուսափելու հնարաւորութիւն չունինք: Քանի որ այդպէս է, պէտք է գիտնանք օգտապարճել զայն. բայց պէտք է ըսել ժողովուրդին որ մեզի չհետեւին. ի հարկէ անոնք որ գացին՝ գացին. անոնք որ պիտի երթան, պէտք չէ երթան...:

Ազատեան. — Իրենց երթը արդէն բաւական է որ ժողովուրդը քալէ իրենց ետեւէն: Չորրօնք պէտք է համոզել որ չերթան, քանի որ իրենք չլսեցին ուրիշներ ի հարկէ չեն լսեր. իսկ անոնք որ պիտի չերթան, համոզես անգամ չեն երթար. միթէ անոնք որ չեն երթար, մահէն կը վախնան, թէ գերագոյն զոհարերութեան գիտակցութիւն չունին: Բայց ոչ, այս մտայնութիւններու եւ այս պայմաններու մէջ զոհարերութիւնը իր նպատակին պէտք է հասնի. աննպատակ անցնող եւ բացասական արդիւնք տուող զոհարերութիւնները ո՛չ քաջալերելի են եւ ո՛չ գնահատելի... Չեմ քննադատեր Իշխանագունը, Վիշապեանը կամ միւսները, բայց թէ ի՞նչ հոգեփոխութիւն կատարուեցաւ իրենց հետ, այդ չեմ գիտեր. չեմ կրնար ըսել թէ խարուեցան կեղծ խոստումներէն: Անոնք լաւ կը ճանչնան Թուրքը. չեմ կրնար ըսել թէ անփորձ են. ո՛չ, փորձառու են եւ հեռատես... Արդեօք Վահագնեան, Մամիկոնեան, Արծրունին, Մասունին, Խոսրոսունին, Իշխանեանը եթէ մնացած ըլլալին, այս կացութեան մէջ ի՞նչ ուղղութեան պիտի հետեւէին: Պիտի երթալի՞ն Իշխանագունի եւ Վիշապ-

եանի ճանապարհով, թէ պիտի մտածէին մեզի պէս:

Ասպետեան. — Չե՛մ գիտեր, բայց գիտեմ մահը լեռներու վրայ աւելի լաւ է քան թէ գնատաններու խորը՝ թուքի եւ նախատինքի մէջ, կամ ճամբաներու վրայ հայհոյանքի եւ հրմշտուքի տակ: Ինչո՞ւ Իշխանագունը եւ Վիշապեանը նախընտրեցին մահերու ամենէն վատը... Արդեօք իրենց հերոսի արժանապատուութիւնը չի՞ վիրաւորուիր: Հերոսները ինչպէս վեր են ժողովուրդէն, իրենց մահն ալ վեր պէտք է ըլլայ հասարակ մահերէն: Մի՞թէ անոր համար նախընտրեցին մահերու ամենէն վատը, որովհետեւ այդ վիճակուեցաւ ժողովուրդին... թէ անոր համար որ հաւատացին ներման խոստումին... կամ պարտուեցան տառապանքի ազդակներէն, այսինքն անօթութիւն, ցուրտ, հիւանդութիւն, անյուսութիւն, անորոշութիւն, եւայլն, եւայլն, որոնք խորտակեցին իրենց անհասականութիւնը, հոգեկան եւ բարոյական կորույթ եւ մղեցին այն ճամբուն, որ գիրենք կը տանի մահերու վաթարագոյնին...: Օ՛, չեմ կրնար հաւատալ թէ խարուեցան, ինչպէս չեմ կրնար հաւատալ թէ պարտուեցան... բայց թէ ինչո՞ւ ատին այդ քայլը, չե՛մ գիտեր...:

Ազատեան. — Մեր կեանքը պէտք էր որ բան մը արժէր. մենք աշխատեցանք եւ մեր կեանքը բան մը արժեց. նոյնպէս մեր մահը բան մը պէտք է որ արժէ. չենք երթար մահուան, եթէ գիտնանք որ այդ մահը բան մը պիտի չարժէ: Իշխանագունը եւ Վիշապեանը արժեցուցին իրենց կեանքը, բայց իրենց մահը, դոր կը նախատեսեմ, դրժբախտաբար չեմ կարծեր որ արդիւնք մը տայ, եւ կը ցաւիմ ատոր...:

Ասպետեան. — Թերեւս անոնք ալ կը ցաւին մեր մտայնութեան ու յամառութեան վրայ, որ անօթի, ծարու, մերկ, անպատասպար, անյոյս, հիւանդ, ձմեռուան ստոնամանիքներուն եւ բնութեան խրտուիւններուն ենթակայ՝ չենք մտածեր վերջ մը դնել այդ տառապանքին, եւ տակաւին մեզմէ խլուած կեանքի մը փէշերէն կտոցած ենք. կեանք մը, որ չ'արժէր այդ տառապանքը...:

Ազատեան. — Լա՛ւ, այսինքն ի՞նչպէս վերջ տանք. հաւատա՞նք ներման խոստումին եւ երթանք մահերու ամենէն անարդարանք կրքերէն...: Եթէ Մամիկոնեան ողջ ըլլար, պիտի ըսէր. — Արի՛՛ կոչք, միայն կոխի բնօթի փոխուած է: Եթէ Թուրքի եւ աշիրէթի դէմ էր այդ կոխը, այսօր՝ անօթութեան, ցուրտին, բուքին, ստոնամանիքին եւ բնութեան խտուրթիւններուն: Պէտք է տակալ, հրել, հրմշտուկել: Գոյութեան պայքար է. վա՛յ պարտուողին. օ՛, Մամիկոնեան, ի՞նչ կ'ըլլար եթէ անգամ մըն ալ բախտ ունենայինք քեզ տեսնելու,

աննման ընկեր... :

— Ճի՛շդ է, գոյութեան պայքար է, Ազատեա՛ն, եւ պարտուողը մենք ենք, որովհետեւ զուրկ ենք պայքարի զէնքերէ. իսկ մեր ներքին դիմադրական կորուսն ալ մեր Ֆիզիքականի հետ կը հիւծի... :

— Կրնանք պարտուիլ Ֆիզիքայէս, բայց մեր բարոյական կորուրէր երբեք պիտի չընկճուի. ամենէն ծանրը եւ ամենէն աղիտալին հոգեկան պարտութիւնն է, որմէ այնքան կը խորշկին թէ՛ մեծ ղեկավարը՝ Վահագնեան, եւ թէ՛ Մամիկոնեան, որովհետեւ ազգի մը մահը, անոնք կը գտնէին ո՛չ թէ Ֆիզիքական պարտութեան մէջ, այլ՝ հոգեկան... :

Ասպետեան.— Իրաւունք ունին. արդեօք հոգեկան պարտութիւն մը սպրեցա՞ն Իշխանագունն ու Վիշապեանը. կ'ամչնամ այդպէս մտածելու: Վերջապէս չեմ գիտեր պատճառը անոնց երթին... : Ինչ որ է, մենք մեր ճամբան քայլենք. դուցէ ամէն մարդ իր ճակատագրին կ'երթայ... : Չմեղադրենք ո՛չ ոք. ամէն ոք իր ուղածին պէտքով ընէ, քանի որ թշնամին խորտակեց մեր հաւաքական կամքի եւ հաւաքական մտածողութեան շղթաները, եւ քանի որ իրաւունք տրւինք իւրաքանչիւր մարդուն իր գլուխը ազատելու մասին մտածելու, ուրեմն ամէն մարդ պիտի քայլ այն ճամբէն, զոր ինքը կը նախընտրէ, ու մենք ալ կը քայլենք մեր ճանապարհը, զոր մենք լուսագոյնը կը նկատենք... : Բայց այս անակը աշխարհին մէջ բոլոր ճամբաներն ալ արիւնտա են: Սաղազութեան ճանապարհը կը փնտռենք, ան ալ չենք գտներ... :

Այսպէս Լեոնաշխարհի ժողովուրդը իջաւ Դափրդ, ու կառավարիչ Թահիրը գիրենք կը հիւրասիրէ համազամ կերակուրներով... :

Իշխանագունը եւ Վիշապեանը պետական հիւր են. անոնք երեք օր վայելեցին Թահիրի հիւրասիրութիւնը եւ ապա շքերթով մը զըրկուեցան Մուշ: Այդ բոլոր պատիւները անոր համար որ Լեոնաշխարհէն իջնող ժողովուրդը հաստատ համոզում գոյացնէ ներման անկեղծութեան վրայ, կասկածներ չծնին, որպէսզի դաւադրութենէ խուսափողներ չըլլան:

Թահիր վերջին անգամ մըն ալ ուտելիքներով եւ դանդաղ իւրեղններով բեռնաւորուած շալակաւորներ եւ մունետիկներ գրկեց Լեոնաշխարհ, որպէսզի եթէ տակաւին կան այդ հանգոյցներուն մէջ ապաստանածներ՝ վար իջնեն, բայց մունետիկները եւ շալակաւոր-

ները վերադարձան առանց նոր զոհեր բերելու իրենց հետ, եւ տեղեկացոյցին որ Լեոնաշխարհը գրեթէ մարդ չէ մնացեր. շատերը հիւանդութիւններէ մեռած են, որոնց գիտկները կը տեսնէինք՝ աջ ու ձախ ցանցնուած: Իսկ եթէ ըլլան նոյնիսկ քանի մը հոգիներ այս ու այն ծաղը կճկուած, անոնք եւս սովամահութեան դատապարտուած են:

Պորամանկ Թահիր տխուր գէմք մը հաղաւ, աչքերուն մէջ արտասուքը լճացաւ, ու հառաչանքով մը ըսաւ. — Մե՛ղք որ այդ կըտրիճները կամովին իրենք գիրենք սովամահութեան դատապարտեր են. այդքան աշխատեցանք, բայց չկրցանք իրենց կեանքը փրկել. չեմ գիտեր թէ ինչ ո՞ւր այնքան յամառօրէն կառչեր են սխալ մտայնութեան մը, ու չեն հաւատար մեր այնքան անկեղծ վերաբերմունքին եւ ոչ ալ կառավարութեան ներման յայտարարութեան. կը ցաւիմ, խորապէ՛ս կը ցաւիմ: Բայց դո՛ւք ըսէք, ալ ի՞նչ կրնանք ընել՝ համոզելու համար գիրենք, որպէսզի հրաժարին այդ ինքնասպանութենէն... :

Ու Թահիրը սկսաւ լալ կորուստը անոնց, որոնք մնացին Լեոնաշխարհ՝ բուքի, ցուրտի, սառնամանիքի մէջ՝ հիւանդ, անպատրաստ ու անօթի... Շատերը մունետիկներէն ու շալակաւորներէն նոյնպէս սկսան լալ, ո՛չ թէ անոր համար որ իրենց եղբայրները մընացին Լեոնաշխարհը՝ անպատասպար, անօթի, ծարաւ եւ անյոյս, այլ անոր համար որ այդ սրտցաւ արարած Թահիրը կու լայ: Թահիրը կու լայ որ եղան մարդիկ, որ... խուսափեցան եւ չինկան իր լարած թակարդին մէջ: Իսկ մունետիկներն ու շալակաւորները կու լան որ Լեոնաշխարհ գտնուածները իրենց յիմարութեամբ եւ յամառութեամբ ցաւցոյցին սիրտը այդ «անկեղծ» արարածին... :

Թահիր յաջող խաղաց իր դերը. այն ինչ որ չկրցան գինուորական եւ աշխրեթական ոյժերը ընել, Թահիր յաջողեցաւ ընել: Լեոնաշխարհի բնակչութիւնը, որ խուսափեցաւ գինուորական եւ աշխրեթական սուրէն, կամովին եկաւ Թահիրի սուրին բերանը՝ հմայուած անոր նուազէն... Թահիր մեծ վարձատրութիւններու ակնկալութեամբ՝ լարեց իր ամբողջ մեքենայութիւնները եւ յաջողեցաւ, բայց ամբողջական յաջողութիւնը աւելի լաւ է... : Եւ կը ցաւի որ տակաւին լեոնային հանգոյցներու մէջ կան մարդիկ, որոնց գոյութիւնը կրնայ վաղը յաչս կառավարութեան նսեմացնել իր յաջողութեան մեծութիւնը եւ ազդել վարձատրութեան քանակին վրայ... :

Իր պատուական հիւրերը՝ Իշխանագունն ու Վիշապեանը՝ մեծ յարգանքներով ճամբու գնելէ ետք, Թահիր ճերմակ ձի նստած, Լեո-

նաշխարհէն իջնող բազմութեան մէջ կը պտրտի . բարեւներ կու տայ , վիճակնին կը հարցնէ , կարգապահութեան եւ մաքրութեան կը նայի , հարցուփորձ կ'ընէ ոմանց , որ շրջայ թէ որեւէ մէկը զիրենք անհանգրստացնէ , կամ որեւէ բանի պէտք ունի՞ն :

Թեթեւ յանդիմանութիւններ կ'ընէ մատակարարութեան գործին լծուողներուն , որպէսզի պոյճ ըլլան , որպէսզի որեւէ մէկը չանտեսուի Կը սաստէ պաշտօնեաները , որ Լեոնաշխարհէն եկողներէն հիւանդներուն մասին իրեն լուր չէ տրուած , եւ կամ առանց կօշիկի մնացած են ոմանք , եւ տակաւին կօշիկ չէ տրուած անոնց . ու յետոյ կանգ կ'առնէ ժողովուրդի մէջ եւ կը հրահանգէ որ ժողովուրդը հաւաքուի իր շուրջ : Ու բարձր ձայնով մը Թահիր խօսեցաւ .

— Միրելի՛ դուստիներս , շատ ուրախ եմ որ կրցայ ձեզ փրկել Լեոնաշխարհի տառապալից կեանքէն . ինչ որ կրնայինք ընել , շինարարներէ՛ք՝ ուտելիքի , հագուստի եւ մաքրութեան տեսակէտով : Եթէ պակաս բաներ մը մնային , կը խնդրեմ որ ներողամիտ ըլլաք : Այս կայանը հազիւ կրնայ այդքան ընել այսքան բազմութեան . միշտ յանդիմանած եմ անպոյճ պաշտօնեաները եւ հրահանգած եմ որ ուշադրութիւն ընեն ձեր կարիքներուն : Հետեւած եմ թէ՛ մատակարարութեան եւ թէ՛ այլ նիւթերու բաշխման գործին , որպէսզի որեւէ մէկը ձեզմէ զրկուած չմնայ . աշայուրջ հսկած եմ որ շրջայ թէ մէկը համարձակի ձեզ անհանգստացնել կամ նեղութիւն պատճառել , եւ միշտ այլ բան եմ ձեզի որ եթէ բանի մը պէտք ունենաք եւ կամ եթէ մէկը ձեզ անհանգստացնէ , անմիջապէս ինծի տեղեկացնէք : Հիմա , դուստիներս , դուք կարաւան առ կարաւան պէտք է փոխադրուիք Մուշ : Հոն խոշոր սննդատու կայաններ եւ պատասխարաններ պատրաստուած են ձեզի համար . այս կայանը չի կրնար այսքան բազմութիւն տարեցնել , մանաւանդ տեղ պէտք է բանանք անոնց , որ նոր պիտի գան : Ի հարկէ , դուստիներս , պէտք է զխնայ որ կառավարութիւնը մինչեւ վերջ ձեզ այսպէս պիտի չինամէ : Կառավարութիւնը ձեզի պիտի յատկացնէ զիւզեր , լծկաններ , սերմնացու , որպէսզի դուք լծուիք աշխատանքի , բայց որովհետեւ զէպքերու բերումով — անէ՛ծք այդ զէպքերուն որ մայրն ու որդին իրարու զէմ հանեցին — դուք այսօր զրկուած էք ամէն բանէ , կառավարութիւնը ինք պիտի հոգայ այդ բոլորը , մինչեւ որ դայ աշխատանքի մամանակը եւ դո՛ւք որ աշխատասէր ժողովուրդ մըն էք , պիտի լծուիք գաշտային աշխատանքի եւ գառնաք ինքնապահ . . . : Պատրաստուեցէ՛ք , ուրեմն կարուան առ կարաւան իջնելու զէպի Մուշ . ի հարկէ պետական պաշտօնեաներ պիտի գան կարգադրութիւններ ընելու : Ձեզի պիտի ընկերանան ուտիկաններ , որ ճանապարհին որեւէ յիմար ձեզի նեղութիւն չտայ .

բայց խնդրեմ ուր որ երթաք չմոռնաք ձեր բարեկամը : Ի՛մ դուստիներս , երթա՛ք բարի , Աստուած ձեզի հետ . . . :

— Շնորհակալ ենք , — աղմկեցին չորս կողմէն . — Աստուած երկա՛ր կեանք տայ մեր մեծ բարեկամ Թահիր փաշային : Ի՛նչպէս կարելի է մոռնալ այն խնամքը զոր ըրիք մեզի : Ուր ալ երթանք , աղօթող ենք ձեր կեանքին համար , եւ պարտական ենք ձեզի . . . :

Թահիր շնական քմծիծաղով մը հեռացաւ , մտքին մէջէն ինքնիբերէն ըսելով . « ամէն ինչ կատարեալ է . . . » :

Ու ժողովուրդը կարաւան առ կարաւան զրկուեցաւ Մուշ , ու ձեւի համար հիւրասիրուեցաւ քանի մը օր , եւ յետոյ երխտասարգութիւնը աշխատանքի պատրուակին տակ զրկուեցաւ Մուշէն զէպի Պիթլիս գացող ճանապարհին վրայ աշխատելու . . . եւ կոտորուեցաւ վայրազ ձեւերով . . .

Իսկ կիները եւ երախտները Ս . Կարապետի շրջանի զիւզերը տեղաւորելու համար՝ ճամբայ հանուեցան , բայց Եփրատ գետի եզերքը հրացանագարկ եղան եւ ջուրը թափուեցան : Անոնց մէջ էին Եէնըզի իշխանական տուններէն նշանաւոր Եւան եւ Շարէն :

Իշխանազունը — Սեմարայ մեծ իշխան Քեաթիպ Մանուկը — Մշոյ զինուորական մարզազաշտին վրայ գնդակահարուեցաւ . զիսկը ինկաւ էրդրում գացող ճանապարհի եզերքին եւ մնաց անթաղ :

Իսկ Վիշապեանը — Կեալիէկուզանի Քեաթիպ Կիրակոսը — զնտաններու մէջ խեղդեցին , եւ զիսկը անյայտ մնաց : Լեոնաշխարհէն իջնողներէն քիչերը միայն նախատեսեցին դուր եւ Մուշէն փախան նորէն զէպի Լեոնաշխարհը՝ անօթութեան , ցուրտին , բուքին եւ սառնամանիքներուն յանձնելու իրենք զիրենք : Ու Լեոնաշխարհը անգամ մը եւս գարձաւ խուզարկութեանց եւ հետապնդումներու թատերավայր , մանաւանդ աշիբեթական ոյժերու կողմէ :

Ժողովուրդի վայրէջքը զէպի Դափրզ պատճառ գարձաւ որ ժողովրդական հոսանք մը եւս ուղղուի զէպի քրտական զիւզերը՝ իւրաքանչիւրը իր հին ծանօթ բարեկամ Քիւրտերու քով : Քիւրտերը հակառակ իրենց բոլոր վայրագութիւններուն՝ նախապէս հիւրասիրեցին իրենց հին բարեկամները , բայց երբ լսեցին զէպի Դափրզ գացող ժողովուրդին վիճակուած ճակատադիրը , իրենք եւս սկսան մաքրողործել իրենց հիւրերը : Անոնք նախապէս հիւրասիրեցին՝ կարծելով որ կառավարութեան ներման խոստումը անկեղծ է . բայց երբ կառավարութիւնը իր հիւրերը այդպէս վատարար խողխողեց , իրենք եւս վար չմնալու համար՝ գոհնիկ , ցած եւ անբարոյական այդ կառավարութենէն , նոյնպէս վարուեցան . շատ քիչեր եղան , որոնք չմոռ-

ցան հին բարեկամութեան ազն ու հացը եւ պահեցին իրենց հիւրերը : Տըլըզ գիւղը ամբողջութեամբ կոտորեց իր հիւրերը, որոնց շնորհիւ կ'ապրէր : Հասոն հիւրասիրեց իր քառասուն տարուան բարեկամները, բայց անոնց քնացած ատենը սպաննեց դանոնք :

Դուզոյ Ամար առիթէն օգտուելով ուղեց իր հիւրերը մահմե-տական դարձնել, բայց չյաջողեցաւ եւ անխնայ կերպով սպաննել տուաւ յայտնի Ասպետեանը՝ իր յիսուն տարուան բարեկամը, իր գաւակներով եւ տնեցիներով, ինչպէս եւ Լեոնաշխարհի նշանաւոր հե-րոս մեծ Գրգոյի աղջիկը, գեղանի եւ հոյակապ Հրանոյշը, որ խիստ կերպով մերժեց մահմետական բլլայ եւ թքեց ու ապտակեց այն բո-լորը, որ նման առաջարկ մը կ'ընէին իրեն : Եէնըզի իշխանական տուներու զաւակները, որոնք կռիւներէն ու կոտորածներէն ազատ-ուած էին, Տըլըզ գիւղի անպիտան ու ապիկար Քիւրտերէն սպաննե-ւեցան : Աղչասայ Կեայի մէջ ալ շատերը սպաննուեցան ապերախտ Քիւրտերէն, միայն Ռըզկոն՝ Աղչատայ Կեայի իշխանը, որուն գերի ինկած զաւակներուն կողմի ընթացքին խնայեցին գոյամարտի կրո-ւող ոյժերը, առ ի վարձատրութիւն իր քով հիւր եկողներուն խնա-յեց : Լաճքանները Օսմանէ Հէյհաթի եւ Գայէյ Ուսրֆի աշայիրը հի-նէն թշնամի էին եւ անխնայ վարուեցան : ս'չ ոքի կեանքը չազատե-ցին : Կիւրասարի Աւտոյ Կուլոյ փորձեց շատերու կեանքը ազատել, բայց չյաջողեցաւ եւ ինքն ալ սրտի ցաւէն մեռաւ . . . :

Վելիբեցիները նոյնպէս վատ վարուեցան : անոնք ծոյլ, դատար-կապորա եւ մուրացիկ են եւ կը կարծէին որ իրենց գոյնախտութիւնը Հայերէն կու գայ . . . : Պատգանցիներ, Պարանցիներ, Խիանցիներ, Ռեզոտանցիներ, Պապճանցիներ, Եղատուներ, Հաւետաններ եւ Տա-րօն-Տուրուբերանի ու Տիարպեքիբի զանազան շրջաններու աշայիր-ները բոլորն ալ պատճառ մը չունենալով հանդերձ՝ թշնամի դար-ճան, այն յոյսով որ Լեոնաշխարհի մաքրագործումը ի հաշիւ իրենց է եւ թէ իրենք տէր պիտի դառնան Լեոնաշխարհին, իսկ միեւնոյն ա-տեն օգնելով կառավարութեան՝ կառավարութեան վստահութիւնը կը շահին . . . ատոր համար ամէն վայրագութեան գիմեցին՝ Լեոնաշ-խարհը բնիճելու եւ բնակչութիւնը բնաջնջելու համար, մինչդեռ Լեոնաշխարհի բնակչութիւնը եւ այլ տեղերու Հայութիւնը այդ գը-ժընդակ եւ ճգնաժամային օրերուն՝ բարեացակամ կեցուածք մը կը սպասէր Քիւրտերէն . . . Միայն Եեկոյի տուները մեղմ գանուեցան, եւ իրենց խնամքին տակ առին կարգ մը թշուառներ ու պահեցին : Նոյնպէս Պոլղոյի աշայիրներէն ոմանք իրենց ծանօթ Հայերը պահե-ցին : Կոտորածներու ընթացքին Լեոնաշխարհի ժողովուրդը նկատ-

ունեցաւ իրր աւար : դեղեցիկ կիներն ու աղջիկները տարուեցան իրրե-քմահաճոյքի զոհեր . . . եւ միւսները անխնայ մաքրագործուեցան . . . :

Իսկ անոնք որ մնացին Լեոնաշխարհի հանգոյցներուն մէջ, կը-րեցին անօթութեան, ցուրտի, հիւանդութեանց եւ ձմեռուան սառ-նամանիքի բոլոր խտութիւններն ու դաժանութիւնները : Որքան ալ իրենց հողեկան կորովով եւ գիմաղբտական ոյժով մաքրուեցան, սա-կայն եւ այնպէս շատերը զոհ գացին, բայց չհաւատացին ներման խոստումին եւ ոչ ալ դիջում ըրին արիւնոտ ձեռքերէ կտոր մը հաց մուրալու . . . : Անոնք անցուցին իրենց գոյնախտ գոյնութիւնը քարան-ձաւներու, խորունկ ձորերու եւ անտառներու խոռոչներուն մէջ, կրծելով ծառերու կեղեւներն ու արմատները, երբեմն սրսալով վայրի կենդանիներ՝ չափազանց դուշուութեամբ, որովհետեւ յաճախ զէնքի մը պայթումը, հետախուզութիւններու եւ հետապնդումներու տեղի կու տար : Ատոր համար ուժեղ փութորիկներու ժամանակ դուրս կ'ել-լէին իրենց ապաստանարաններէն : Բուք ու բորանին, այգպիսի օրեր Լեոնաշխարհը սպահով էր : աշիրեթական ոյժերը նման օրերուն չէին շրջեր : միայն պարզ ու պայծառ օրերը կ'ելլէին մարդորսութեան եւ զոհերու ականջները կը ներկայացնէին կառավարութեան՝ վարձատ-րութիւն առնելու համար . . . :

Այս անտանելի կացութեան մէջ՝ անոնք կարծես իրենց գըժ-րախտութեան գիտակցութիւնը չունին : Ուրիշներու գոյնախտու-թեամբը կ'ապրին : Անոնք երկար ատեն սպացին կորուստը Լեոնաշ-խարհի հսկաներուն եւ ժողովուրդին :

Վահագնեան, Մամիկոնեան, Իշխանեան, Արամեան, Վրէժ-եան, Մաթոյ, Մարտոյ, Պօղոս, Մճոյ, Աւէ, Ջուռոյ, Արթին, Առ-քոյ, Մովսիսարն ու Անին, Մաքէներ ու Եամամներ, Վիկտորիաներն ու Օպիտաները եւ բազմաթիւ նահատակներու անունները միշտ ի-րենց շրթունքներու վրայ էին : Կը պատմէին անոնց քաջագործու-թիւնները ու կը ցաւէին անոնց կորուստը : Ու հիմա ալ սուգը կը պա-հեն անոնց, որոնք իջան Մուշ եւ կոտորուեցան . . . մանաւանդ Իշխա-նապունի եւ Վիշապեանի կորուստը՝ Լեոնաշխարհի այդ հսկայ սիւ-ներուն, որոնցմէ այնքան խնդրեցին չերթալ, մեծ ցաւ պատճառեց այդ խեղճներուն, որոնք մահուան առջեւ իրենց ցաւը չեն լար եւ ուրիշներու ցաւով տարուած են : Անոնք տեղեկութիւն ունին այն ինչ որ պատահած է գէպի Դափրղ եւ Մուշ գացող ժողովուրդին : Թա-կարդէն խուսափողները պատմեր են . . . Նոյնպէս տեղեկութիւն ունին նաեւ անոնց մասին, որոնք իջան քրտական դիւղերը եւ կոտորուեցան իրենց բարեկամ Քիւրտերէն : անոնցմէ շատ քիչեր յաջողեցան փախ-

չիլ մահէն ու նորէն ապաստանիլ Լեռնաշխարհը՝ յանձնելու իրենք զիրենք բնութեան դաժանութիւններուն, քան թէ թշնամիի սուրին...

Ահա՛ Ազատեան, այդ յարաշարժ եւ ճկուն ազամարդը, կը պտըտի երբեմն լեռնային հանդոյցներու մէջ: Կ'այցելէ հոս ու հոն, ապաւինածներուն, կը խրախուսէ, բսելով:

— Մեր լեռներուն մէջ անօթի ու ծարաւ մեռնիլ աւելի լաւ է, քան թէ երթալ թշնամիի սուրբ եւ նախատինքի ու անարդանքի մէջ մեռնիլ: Այստեղ մահը բարձր ու վսեմ է, որքան բարձր ու վսեմ են մեր լեռները: Այստեղ մահը անկեղծ է եւ մաքուր, որքան մաքուր են մեր լեռներու օդն ու ձիւնը. մեր լեռները հուժկու են, մենք անոնց ոյժը պէտք է ունենանք. մեր բնութիւնը խիստ է ու դաժան. չէ՞ որ մենք իր գաւակներն ենք, նոյնքան խիստ եւ դաժան պէտք է ըլլանք: Մենք մեծցած ենք այս բուր ու բորանին մէջ: Կտրիճ եղէք, այս միջավայրի եւ այս կլիմայի գաւակներն ենք, ու վարժուած ենք քայլել միջավայրի եւ կլիմայի հետ. պէտք է զիմանալ...: Եթէ մեռնինք նոյնիսկ այս ազատ բնութեան մէջ, այս մաքուր օդին ու ձիւնին մէջ, մահը նոյնքան մաքուր է, եւ արդէն ապականած մահէն խուսափելու համար է որ այսքան կը տառապինք...:

— Պէտք է խորշիլ ապականած մահէն...:

— Թէեւ մարդկութիւնը ապականած է, եւ միշտ պիտի ապականէ մահը...:

Ահա կատաղի Չոլոն, որ Ամպրէյ Կեալիի, պաշարման օգակը ճեղքեց ու անցաւ, ենթարկուեցաւ խիստ հեռապնդումներու՝ անբնական բնականութեան հետեւանքով, հեռոյճեակ իր ոյժերէն մէկ մասը ինկաւ, ու մէկ մասը ցրուեցաւ. մնացեալները կորսնցուցին զիրար: Չոլոյ, Պետոյեանի եւ Նորէի հետ ինկաւ Կաունիի անտառին մէջ. անոնք յաջողեցան յանկարծակիի բերել զիրենք լրտեսողները ու խեղդել գանոնք. բայց այլեւս անկարելի ըլլալով ցուրտին, բուքին, անօթութեան զիմանալ՝ հիւր գացին իրենց բնակը Նորէի եղբոր տունը, այսինքն ջարդարար-քրտապաճ հայ Սալեհին, որ սուրբ ձեռքը, աշխրեթական ոյժերու առջեւ ինկած, Գայի եւ Պապճանցից հովիտները մաքրագործեց վայրագութեամբ... Այդ քրտապաճ Հայն էր, որ առաջին անգամ կը բարձրանար Անտք՝ զիմարութեան խորտակումէն ետք, զօրքի եւ աշայիբի առջեւ ինկած՝ ջարդի նախաբայրը կ'աննէր...:

Չոլոն հիւր գնաց ջարդարարին, որովհետեւ իր ընկերներէն՝ Նորէն՝ վստահելի եւ կտրիճ ազամարդ մը, ջարդարարի եղբայրն էր: Անոնք պահեցին իրենց զէնքերը անտառին մէջ եւ միայն Չոլոն տանոց մուկէրը խրեց գօտիին տակ, ու իջան ջարդարարին տունը. ջարդարարը Չոլոն տեսնելով՝ ցնցուեցաւ, բայց պահեց իր պաղատելու թիւնը, եւ կեղծ քաղաքավարութեամբ մը «բարի էք եկեր» ըսաւ ու տեղաւորեց գանոնք ախոտ, որպէս թէ եկող գացող շատ կ'ըլլայ եւ ոչ ոք չտեսնէ զիրենք. եւ ուշ տեսն միայն անոնց՝ քիչ մը ապուր տուաւ...:

Չոլոն լաւ չտպաւորուեցաւ Սալեհի վերաբերմունքէն.

— Է՛հ, Նորէ՛, թակարդը ինկանք. քու եղբայրդ խաղ մը պիտի խաղայ, եւ նոյնիսկ քեզի ալ պիտի չխնայէ, — ըսաւ Չոլոն յուզուած:

— Ձեմ կարծեր, — պատասխանեց Նորէն՝ մտածկոտ եւ դըլխահակ:

— Փախանք անձրեւէն հանդիպեցանք կարկուտին, — աւելցուց Պետոյեանը:

Չոլոյ. — Տղաներ, զգոյշ եղէք, փոթորիկը անպատճառ պիտի պայթի, բայց թէ ի՞նչ ձեռով, չեմ գիտեր, եւ ի՞նչ ձեռով պէտք է զիմարաւել, դժուար է ըսել. ստնաձայներէն յայտնի է որ երթեւեկը շատ է, ինչպէս եւ փափսուքները, այդ բոլորով մեր գլխու ջուրն է, որ կը տաքցնեն. որքան ալ յոգնած ըլլանք պէտք է քնանանք...:

Պետոյեան. — Բնանալու մասին կարելի՞ է մտածել, երբ մէկը ինկած է դայիին որջը:

Նորէ. — Ձե՛մ կարծեր թէ մինչեւ հոն երթանք: Եթէ պիտի չհիւրասիրէ մեզ, անպատճառ պիտի ըսէ՝ հեռացէ՛ք այստեղէն:

Չոլոյ. — Ծնորհակալ կ'ըլլանք, Նորէ՛, եթէ այդքանով ապաւինք, բայց իմ հոտառութիւնս զիս չի խաբեր. խաղ մը կը դառնայ եւ պէտք է զգոյշ ըլլալ...:

Պետոյեան. — Լա՛ւ, զգոյշ ըլլանք, բայց ի՞նչ կրնանք ընել:

Չոլոյ. — Ձեւ մը պէտք է գտնել այս թակարդէն դուրս գալու համար...:

Պետոյեան. — Դժուար թէ այս թակարդէն դուրս գանք. մենք կամովին եկանք եւ մէջը ինկանք:

Նորէ. — Մտահոգիչ պարագայ է, բայց ոչ յուսահատական: Կը հաւատամ որ եթէ ձեզի փնտսեն, ինձի եւս չեն խնայեր: Իսկ եթէ ինձի խնայեն, ձեզի ալ պիտի չփնտսեն...:

Ու այսպէս անոնք մինչեւ առաւօտ, այդ ախոտին մէջ, վտան-

դի սպասնայիքին տակ, չկրցան քնանալ:

Առաւօտուն, երթեւեկներ եւ փոփոխութիւնք աւելի շատցանք ըստ չէին դիտար թէ ի՞նչ կը կատարուի. մինչեւ կէսօր անօթի մնացին. կէսօրէ վերջն էր որ անոնց բերուեցաւ մէկ-մէկ կտոր փոշեխտան կորեկի հաց, զոր դժուարաւ կերան:

Չորոյ.— Այս ի՞նչ ձեւի հիւրասիրութիւն է. այս վերաբերմունքն արհամարհանք եւ թշնամութիւն կը հօտին:

Պետոյեան.— Այդպէս կ'երեւի. քրտական գիւղերը լեցուած են հայկական աւարներով. հոս չունենալու խնդիր չկայ, այլ պարզ չկամութիւն... դոնէ Սալեհ իր եզրօրը խնայէր...

Նորէ.— Յայտնի է որ իմ եւ ձեր մէջ ո՛չ մէկ տարբերութիւն, որքան ալ թշնամի ըլլանք, վերջապէս հիւր ենք, եւ իրենք պէտք էր յարգէին աւանդական հիւրասիրութիւնը:

Չորոյ.— Աշխարհը իրար է անցեր, եւ տակաւին Նորէն կը ըստպասէ որ մարդիկ իրենց հիւրասիրութեան մէջ չթերանան: Հը՛ր բարեկամ, ժամանակները այնպէս մը փոխուեցան ու պղծուեցան, որ հայրը որդին չի ճանչնար, եղբայրը կը դաւաճանէ եղբօրը, եւ Նորէն կը կարծէ թէ, է՛հ ինչքան ալ ըլլայ, իր եղբայրն է, եթէ ուրիշին չի խնայեր, դոնէ իր եզրօրը չի դաւաճաներ: Ատիկա կու գայ միամբողջութենէ, եւ կը ցաւիմ ըսելու որ Նորէի հաշիւը սխալ է... Մենք պէտք էր անտառէն վար չիջնէինք:

Նորէ.— Հաւանարար, բայց իմ մասին չէ որ կը ցաւիմ. կը ցաւիմ որ թերեւս պատճառ եղայ որ ձեր կեանքը վտանգուի. կը խնդրեմ որ չըլլայ թէ մտածէք, որ վատ նկատումներով բերի ձեզ հոս...:

Չորոյ.— Գիտեմ թէ կը ճնշուիք. այդ մասին մտածելը աւելորդ է. եւ կասկածիլն ալ ամօթ է: Թակարդէն ելլելու ճարը պէտք է մտածել. որքան վտանգուած է ձեր կեանքը նոյնքան վտանգուած է եւ քուկդ...:

Այդ պահուն ներս մտան երեք գինուած Քիւրտեր, եւ առաջարկեցին որ Նորէն եւ Պետոյեանը իրենց հետեւին, եւ թէ Սալեհի կողմէ կարգադրուած է որ Սլոյի տունը պիտի փոխադրուին այդ երկուքը, որովհետեւ հոս երեքը միասին պահելու հնարաւորութիւն չկայ...:

Չորոյ, Նորէ, Պետոյեան իրարու երես նայեցան խորհրդաւոր կերպով ու վախ մը համակեց գիրենք...:

Չորոյ.— Տղաներ, խաղը սկսաւ...:

Պետոյեան.— Այո՛, այս բաժանումը լաւ նշան չէ...:

Նորէ.— Եղածէն բան մը չեմ հասկնար...:

— Է՛հ, քալեցէ՛ք, տեսնենք. ի՞նչ շուարած իրարու երես կը նայիք. երեւի շատ էք կարօտեցր իրար. շատոնց է իրար չէ՞ք տեսած: Վնաս չկայ. թերեւս մտածէք որ այլեւս իրարու չէք հանդիպիր. առոր համար այդպէս երկար իրարու կը նայիք, — ըսաւ քիւրտ մը շնական քրքիջով:

Չորոյ.— Կը լռե՞ս թէ ոչ. հիմա այնպիսի բռունցք մը կ'ուտես, որ քիթ ու բերանդ կը ջարդուին, յիմա՛ր արարած. քեզի կատակի նի՛ւթ դարձանք:

— Է՛հ, բարեկամ Չորոյ, — մէջ մտաւ ուրիշ քիւրտ մը մեղմութեամբ. — Ոնդրեմ չվիրաւորուիք. ասիկա արդէն խօսիլ չի դիտեր, իր բնաւորութիւնը այդպէս է:

Պետոյեան.— Քանի որ այդպէս է, լաւ կ'ընէ որ լռէ. ամէն մարդ չ'ախորժիր այդ ձեւի խօսակցութենէն:

— Սլո՛յ, Սլո՛յ, հիմա քեզ ոտքերուս տակ կ'առնեմ եւ շանսատակ կ'ընեմ: Ծո՛ւն, ի՞նչպէս կը համարձակիս այդպէս խօսիլ. չե՞ս ճանչնար մեզ: Եթէ խօսիլ չես գիտեր, մի՛ խօսիր, — ըսաւ Նորէն ջղայնացած:

Սլոյ.— Նորէ՛, վիրաւորական բան մը չըսի, բայց այդ վիրաւորանքը, զոր դուք ինծի կը հասցնէք, կը լռեմ ի պատիւ մեծ եղբօրդ Սալեհին:

Ալոյ.— Նորէ՛, մի՛ բարկանար. ձեզի համար կարգադրութիւններ եղած են Սալեհի կողմէ եւ ձեր շահուն համար: Մտահոգուելու տեղի չկայ, եւ ոչ ալ շուարելու պատճառ մը: Ժամանակը չէ գանդաղ շարժելու. կ'ուզենք որ ոչ ոք տեղեկութիւն ունենայ ձեր հոս ըլլալու մասին: Մենք որքան գործը գաղտնի կը տանինք, դուք այնքան ազմուկ կը հանէք որ հրապարակուի: Այդպէս չ'ըլլար: Վաղը աշայիրները կրնան մեզ մեղադրել որպէս հայ հիւրասիրողներ, իսկ եթէ կառավարութիւնը լսէ, արդէն կորսուած ենք: Մենք, ճի՛շդ է թէ ձեզ կ'ուզենք պահել, բայց դուք ալ պատճառ մի դառնաք մեր կորստեան՝ ձեր տաքարիւնութեամբ եւ անխոհեմութեամբ...:

— Է՛հ, Ալո՛յ, աղէկ քարոզ կը կարդաս. Սալեհ չի կրնար մեզի կտոր մը հաց կերցնել, առոր համար է որ մեզ աջ ու ձախ կը բաժնէ, — խօսեցաւ Նորէն՝ դժգոհութեամբ մը գլուխը երերցնելով:

Ալոյ.— Ոչ թէ չի կրնար, այլ ձեզ պահելու գաղտնիքը մէջտեղ չհանելու համար կ'ընէ այդ բաժանումը: Կը տեսնէք որ դիշեր թէ ցերեկ Սալեհի տունը պարպալ չի մնար. խումբ մը կ'երթայ, ուրիշ մը կու գայ: Հոս կրնա՞ս մարդ գաղտնի պահել. կարելի չէ՛...:

Չորոյ.— Լա՛ւ, Նորէ՛, դուն եւ Պետոյեան պիտի հետեւիք այս մարդոց. ուր որ տանին պիտի երթաք. այսպէս է կարգադրեր Սալեհը: Իսկ ես իրեն հիւր պիտի մնամ. գացէ՛ք եւ տեսնենք թէ ի՛նչ կայ ասոր տակ. քանի որ եկած ենք այս մարդոց քով, պիտի ենթարկուինք անոնց հիւրասիրութեան օրէնքներուն, բայց զգո՛ւ՛ չէ եղէք, Աստուած ձեզի հետ, երթա՛ք բարով, կրնայ ըլլալ որ անգամ մըն ալ իրար չտեսնենք...:

Պետոյեան եւ Նորէն ազդուելով այդ բաժանմունքէն, յուզուած, արցունքոտ աչքերով, վիզերնին ծռած, մտահոգ հետեւեցան այդ երեք զինեալ Քիւրտերուն, ու առաջնորդուեցան Սոյոյի տունը, որ լեռնամուտի մը վրայ էր, կէս ժամ հեռու այն ձորէն, ուր ինկած էր Սալեհի տունը, եւ ցուրտ փրփրած մարազի մը մէջ տեղաւորեցին զանոնք, ուր անօթի-ծարաւ, յուսահատ կը տկոտանէր ցուրտէն, կը մըտածէն, իրարու հարց կու տան թէ ի՛նչ պիտի ըլլայ ասոր վախճանը:

— Վախճա՞նք, վախճա՞նք. պարզ է: Եթէ անոնք կրցան Չորոն ուտել, մենք կորսուած ենք. իսկ եթէ չկրցան, մենք փրկուած ենք: Մեր կեանքը կախուած է Չորոյի կեանքէն: Հիմա կը մնայ մեր ամբողջ ուշադրութիւնը լարել հասկնալու թէ ի՛նչ կը կատարուի վառ Սալեհի եւ Չորոյի միջեւ, — ըսաւ Պետոյեանը:

— Այո՛, — հաստատեց Նորէն, — բայց մինչ այդ՝ դոնէ այս շանորդիք բան մը տային ուտելու. ամօթ է վերջապէս, հիւր ենք եկած իրենց, եւ շատ ալ անձանօթներ չենք: Սրիկաները կը կարծեն թէ ճաշեր եւ եկեր ենք. չեն գիտեր որ աւելի շատ անօթութիւնը հարկադրեց մեզ վար իջնել լեռներէն եւ անտառներէն՝ ի խնդիր կտոր մը հացի եւ ատոր համար է, որ իրենց բերանին հտոր կը շնչենք...:

Պետոյեան.— Ողբերգութիւնը կատարեալ է, — խնդաց եւ ակոսաները սկսան իրարու վրայ կափկափել ցուրտէն. ամբողջ մարմնով կը դողայ:

— Իրենց հիւրասիրութիւնը հարկաւոր չէ մեզի, միայն թէ կարենայինք այս գառապեղէն դուրս ելլել... Ի՛նչ օգուտ, մեր գէնքերը մեզի հետ չեն... Այս անել վիճակէն դուրս գալու համար պէտք է սպասել եւ իմանալ թէ Չորոն ի՛նչ ձեւով խնդիրը պիտի լուծէ:

Ու անոնք անօթի, ծարաւ, փրփրած մարազին մէջ, ցուրտէն կը դողան եւ կը սպասեն թէ ի՛նչ կրնայ կատարուիլ ձորին մէջ...:



Նորէի եւ Պետոյեանի հեռանալէն ետք՝ Չորոն մնաց մինակ,

Սալեհի ախոտին մէջ եւ ինկաւ ծանր մտածումներու մէջ: Հետզհետէ աճող կատաղութենէ մը ջգայնացաւ. սկսաւ ուժեղ զարնել սիրտը. քրտինք մը ողնուկեց ամբողջ մարմինը. աչքերը կը շողան. մազերը ցցուեցան. բարկութենէն ակոսաները իրար կը արծրեն: Լարուած վիճակ մը կ'ապրի. կ'երթայ ու կու գայ ախոտին մէջ. ձեռքը սեղմած մաւղէրին վրայ, որ խրուած է գօտիին տակ, եւ որ իր միակ յոյսն է: Ծուրջը կը նայի. գիտէ որ վտանգը պիտի գայ, բայց ո՞ր կողմէն պիտի գայ, եւ ի՞նչ ձեւով պիտի գայ, որպէսզի չկորսուի: Կը ըստատեմ վտանգին եւ միւսնայն ասեմ կը մտածէ թէ ի՛նչ եղան իր ընկերները... Ահա յանկարծ ներս մտաւ երկարահասակ քիւրտ մը, ոտքէն մինչեւ գլուխը զինուած ու ըսաւ.

— Հը՞, բարեկա՛մ Չորոյ, Սալեհը քեզ կ'ուզէ, հետեւեցէ՛ք ինձի...:

Չորոն վերէն վար չափեց եկողը, կատաղութիւնը թափ տաւ, մտածեց խաղն է որ կը սկսի. մազերը փուշ-փուշ եղան, գէմքը կապարի գոյն ստացաւ, աչքերը անօրինակ կերպով փայլատակել սկըսան, նայուածքը շեշտակի նետեց քիւրտին. քիւրտը անոր նայուածքին ծանրութենէն ամբողջ մարմնով սկսաւ դողալ: Ապա Չորոյ չոր ու խիստ թոնով մը հարցուց թէ ի՛նչ կայ...:

— Չե՛մ գիտեր, — կակաղեց քիւրտը, — Սալեհը քեզ կ'ուզէ: Չորոյ.— Ի՞նչ, Սալեհը զե՞ն կ'ուզէ. ի՞նչ պիտի ըսէ: Ինչ որ պիտի ըսէ, թո՛ղ գայ ու հոս ըսէ:

— Չե՛մ գիտեր թէ ի՛նչ պիտի ըսէ, բայց զիս զրկեցին որ դամ քեզ կանչեմ: Խնդրեմ ընկերացէ՛ք ինձի: Ջգայնացած կը տեսնեմ քեզ. պատճառ մը կա՞յ արդեօք որ այդպէս ջգայնացեր ես, իմ կարծիքովս ինչ որ ալ ըլլայ, քու շահիդ համար է...:

Ու Չորոն կը մտածէ... գլուխը տարաւ ու բերաւ. քրտինք մը մէկ կու տայ մէկ կ'առնէ, գոյն մը կ'երթայ, մէկ կու գայ. շնչատութիւնը կը գժուարանայ, կարծես պիտի խեղդուի. սիրտը ուժգին կը զարնէ. սակայն խնդիր մըն է, որ պէտք է լուծուի ու ժամանակը քիչ է...:

— Լա՛ւ, — ըսաւ քիւրտին՝ արհամարհանքով մը. — քայէ՛, տեսնենք թէ ի՛նչ պիտի ըսէ այդ ձեր Սալեհը:

Ու անոնք միասին տունէն դուրս ելան եւ կողք կողքի քայլեցին. մին ծրագրուած գաւաղորութեան գործադրութիւնը կ'որոճայ եւ ակոսաները կը կծրտէ, իսկ միւսը կը զգայ թէ գաւաղորութիւն մը կը գառնայ իր շուրջ եւ կը մտածէ թէ ի՛նչպէս վիճեցնէ: Ու իր կատաղութիւնը չի կրնար զոպել... Գիշերուան ընթացքին առատ ձիւն ե-

կած է, եւ հետք անգամ չկայ քայելու, անոնք պիտի բարձրանան բլուրն ի վեր, որուն կողին վրայ ալուճի ծառերու խումբ մը կայ. հոն է որ Սալեհ իր մարգերով կը սպասէ Չորսին: Ու հոն երթալու համար միայն մէկ հետք կայ, եւ ահա վէճ մը ծայր կու տայ...: Երկարահասակ քիւրտը կը ստիպէ Չորսն որ քայլ առջեւէն, որպէսզի ետեւէն հրացանազարկ ընէ. իսկ Չորսն դիտնալով քիւրտին մտադրութիւնը կ'ուզէ որ քիւրտը քայլ առջեւէն: Վէճը երկար կը տեւէ: Ո՞վ պիտի քայլ առջեւէն. մէկը միւսը կը ստիպէ: Սակայն որոշումը գործադրելու համար՝ քիւրտը կը համարձակի ուժեղ մը բռնել Չորսի ուսէն, ցնցել եւ առաջ մղել, սպասնալից թոնով մը հրամայելով.

— Քայլէ՛ տեսնեմ...:

Չորսի համբերութիւնը կը համնի եւ կատաղութիւնը կը յորդի. անմիջապէս մաւղէրը կը քաշէ եւ ամբողջ ուժով կը պոռայ.

— Քայլէ՛ առջեւէս, թէ ոչ շանսատակ կ'ընեմ. շո՛ւն, դո՛ւն ես որ դիս թակարդի մէջ պիտի ձգես. քայլէ՛ տեսնեմ, դուն եւ քու շուն Սալեհը ի՛նչ պիտի ըսէք ինձի: Մի՛ դողար, քայլէ՛, ձեր բոլորի մէրը... Դո՞ւք է որ պիտի ուտէք զիս. — ու աքացի մը տուաւ քիւրտի կոնակին, որ քիթ ու բերնին դնաց ձիւնի մէջ: Ապա հրացանը խեց ձեռքէն: Քիւրտը ինկած տեղէն բարձրացաւ եւ դողդղալով կակաղեց.

— Ես ուղեցի քեզի պատիւ ընել...:

— Թ՛քնեմ քու վրայ ալ, քու պատուիդ ալ. տեղէդ չչարժիս. շանսատակ կ'ընեմ, — ըսաւ Չորս, ու սկսաւ դէպի բլուրը բարձրանալ, մինչեւ մէջքը խրելով ձիւնի մէջ:

Չորսի ձայնէն Սալեհ ցնցուեցաւ. տեսաւ թէ ի՛նչ կը կատարուի, եւ իր ընկերներով ալուճի մացառներէն վար իջաւ, թաւալաղլոր պոռալով.

— Է՛հ բարեկամ Չորս, ի՞նչ է պատահեր. ջղայնացեր ես. լեզապատառ ըրիր մեզ. սպասէ՛, տեսնենք թէ ի՛նչ է քու ցաւդ: Ո՞վ արդեօք քու ձիւնդ էջ ըսաւ: Միթէ՛ տսիկա մեր հիւրասիրութեան փոխարինութի՞ւնն է:

— Ո՛չ դուն եւ ո՛չ քու հիւրասիրութիւնդ: Դաւաղբարար կ'ուզես զի՞ս սպաննել: Տեղէդ մի՛ շարժիր, թէ ոչ շանսատակ կ'ընեմ քեզ, — ու մաւղէրը ուղղեց. — Ո՛չ ոք տեղէն չչարժի, — ու ինք ճամբան կը շարունակէ դէպի բլուրն ի վեր...:

Սալեհը սթափեցաւ. — ա՛յ հա՛յ, պոռաց, նոր չէ որ մենք իրար կը ճանչնանք. դուն արդէն սպերախտ ես, եւ անխիղճ, եթէ այդպէս չըլլար, քու հօրեղբոր տղան Յովհաննէսը չէիր սպաններ...:

— Է՛հ ձգէի զինք վիրաւոր վիճակին մէջ քու ձեռքը, որպէսզի վայրագութիւն խաղալիք անոր վրայ, ինչ որ փորձեցիր, Գայլի եւ Պապճանցից հովիտներու զժրախտներուն վրայ: Քեզի պէս շունբուն, մենք ուրիշ ձեւով հիւր կու գայինք, բայց դնա եղբորդ սաքք համբուրէ... — ու նորէն սասանց. — ո՛չ ոք չհամարձակի տեղէն շարժիլ, անմիջապէս կը դնողահահարեմ, — ու մաւղէրին հետ կատաղի նայուածքը ուղղած Քիւրտերուն, բարձրացաւ բլուրն ի վեր, խրելով մինչեւ ծունկերը ձիւններուն մէջ:

Վերջապէս հասաւ դազաթը՝ քրանած ու յողնած: Մրրեց քըրտինքը, լայն շունչ մը առաւ: Արեւը մայր մանելու վրայ է ու ցուրտ: Բլուրի դազաթէն թքեց Քիւրտերու վրայ, որոնք անշարժ կեցած, ալուճի մացառին առջեւ, մեղադրանքի խօսքեր կ'ընէին.

— Է՛հ, բարեկա՛մ Չորս, իրաւունք չունիս մեզ այդպէս վիրաւորելու, բայց քանի որ կը մերժես մեր հիւրասիրութիւնը, դնա՛, մենք մեր հիւրերուն վրայ ձեռք չենք վերցնիր...:

Քիւրտերը գաշոյնէ եւ սուրէ գատ դէնք չունէին իրենց վրայ, միայն երկարահասակ քիւրտը հրացան ունէր, ան ալ Չորսն առած էր ձեռքէն: Ատոր համար մեզմ կը խօսէին իրենց վախէն:

— Ա՛յ հա՛յ, ձեռք չէ՛ք վերցնիր. դուք կա՛մ դաւաղբարար մարդը կ'ուտէք, եւ կա՛մ անգէն ժողովուրդ պէտք է, որ ձեր թուրքերան տաք, անասնարար յօշոտէք եւ հպարտանաք...: Դուք թուրքերէն աւելի վատ եւ աւելի ցած էք: Կոխներու մէջ տեսնեք ձեր աղաները, պեկերն ու թոսունները, որոնք հոտած սոխ մը անգամ չարժեցին, եւ առանց հարուածի կը սասկէին իրենց վախէն...: Անպատիւնե՛ր, դուք ձեր հիւրերուն վրայ ձեռք չէ՛ք վերցնիր...: Ապա ի՞նչ եղան այն բոլոր Հայերը, որոնք իրենց երկար տարիներու բարեկամ Քիւրտերու քով հիւր գացին՝ այս ծանր ու զժրախտ օրերուն, եւ սակայն ո՛չ մէկը կայ անոնցմէ, — ըսաւ Չորսն, թքնելով այդ ձեւի հիւրասիրութեան վրայ...:

— Անոնք եւս ձեզի պէս արհամարհեցին իրենց եղած հիւրասիրութիւնը, վիրաւորեցին քրտական ասպետական ուղին եւ ատոր համար մերժուեցան իրենց բարեկամներու կողմէ, — ըսաւ քիւրտերէն մէկը:

— Լուէ՛, աւանա՛կ, մի՛ ստեր. ի՛նչ քրտական ասպետական ուղի կը ճառես: Քիւրտը եթէ ասպետական ուղի ունենար, նենդութեան, դաւաղբութեան, վատութեան եւ սճրագործութեան ճահիճին մէջ չէր մխրճուեր մինչեւ կոկորդը: Եթէ մէկը հոտառութիւն ունենայ եւ խուսափի ձեր նենդամտութենէն եւ դաւաղբութենէն, այս

անդամ կը մեղադրէք որ արհամարհեց ձեր հիւրասիրութիւնը: Թըք-
նեմ աշղպիտի հիւրասիրութեան վրայ, դուք այս ձեւով չէ՛ք կրնար
խուսափիլ ձեր կատարած սճիրներու մեղքը քաւելէն: Երբ որ ալ բլ-
լայ, պիտի պատժուիք. ի դուր մի փորձէք ձեզ արդարացնել, թէ
արհամարհեցի՞ն ձեր հիւրասիրութիւնը: Գեատին մտէք դուք ալ, ձեր
հիւրասիրութիւնն ալ:

— Ա՛հ յայտնի է որ դուք կը խօսիք Աստուծանի նման, — բա-
ցականչեց Սալեհ, — քանի որ անոր արիւնէն կայ ձեր մէջ: Աստու-
ծանն ալ նման անտեղի լուսանքներ եւ կշտամբանքներ կը թափէր աջ
ու ձախ, մինչեւ լուսուցին զինք... Մեր հիւրասիրութիւնը ձեր աչ-
քին չ'երեւիր. փոխանակ շնորհակալութիւն յայտնելու ձեզի արուած
խնամքին եւ հացին, դեռ կը նախատէք... Ի հարկէ Գուտոյ Ամարը
ուրիշ կերպ չէր կրնար վարուիլ...:

— Սալեհ, Սալեհ, Գուտոյ Ամարն ալ քեզի նման չուն մըն է.
չառ լաւ տեղեկութիւն ունինք Քիւրտերու հիւրասիրութեան մասին:
Գու՛ք, Գուտոյ Ամար, Ամարէ Մհէ, Պապճանցի Ծառէշ, Թիանցի
Փլիթ, Բշղոտանցի Սերտոյ, Պաքրանցիք ու Պատպանցիք, Այման-
ցիք ու Լաճկանցիք, Խուրեցիք եւ Թիանցիք, Սասունցիք եւ Պէլէք-
ցիք, ինչպէս եւ Ծարգինի, Տիգրանակերտի, Հազոյի, Հազրոյի,
Կենճայ ու Լճայ, Սլիվանի, Պշերիկի, Վարդոյի, Խնուսի, Ալաշկեր-
տի ու Մանազկերտի, Պուրանդի, Չխուրայ, Մշոյ եւ Մշոյ դաշտի,
Պիթլիտի, Պարզանայ եւ Թիգանայ Քիւրտեր՝ ազա ու պէկ կոչուած
չուներ, զիտենք թէ ի՞նչ հիւրասիրութիւն բրբիք: Մենք չենք մոռնար
այդ բոլորը. այդ բոլորը ձեր քիթէն պիտի գայ: Սրիկանէ՛ր, դուք
բոլորդ առանց պատճառի, կատաղութեան ախաէն բռնուած՝ Հայու-
թեան բնաջնջումը ձեզի գերադոյն նպատակ դարձուցիք, եւ ի՞նչ
վայրագութիւն ու դազանութիւն չմնաց որ չըրիք այդ անմեղ ու ան-
զէն ժողովուրդին: Վաղը այդ բոլորը նոյն ձեւով ձեզմէ կ'անուուի...
Մի՛ կարծէք, որ ձեր արիւնտ աղաները պիտի չջարդուին. շատ-
շատ դուք կրնաք այսօր հպարտանալ թէ «մենք բրբինք. ինչ որ ձեր
ձեռքէն կու գայ, մի՛ խնայէք»... Լա՛ւ, տղամարդ եղէք որ չզղջաք,
երբ մեր հարուածը գայ: Ես կամովին եկայ ու ինկայ թակարդը,
բայց չկրցաք ուտել. ահա՛ կ'երթամ, ընկերներս տղատ ձգեցէք. եթէ
անոնց մազին գալչիք, պիտի վերագառնամ, բայց այս անգամ, ո՛չ
թէ իրբեւ հիւր...:

— Գնա՛, մեր հիւրասիրութիւնը չենք ուզեր արիւնտակել, բայց
մենք դեռ պիտի հանդիպինք իրարու, — ըսաւ Սալեհ՝ սրտնեղ-
ուած...:

— Երբեւ մենք շատ ենք հանդիպեր իրարու, բայց դուն վա-
խէ՛դ՝ դէմքդ ցոյց չես տուած, վկայ Ամարէյ հովիտը...:

Ու Չոլոն շարունակեց իր ճամբան, մտաւ անտառ. ցուրտ էր,
բութ ու բորան. արեւը մայր մտաւ եւ մութը կոխեց: Գայլերը կ'ոռ-
նան. անթի է ու ծարաւ. կատաղութիւնը մոռցուցեր է ամէն ինչ.
կը քայլ գէպի լեռները. աղաները սեղմած, մազէրը պատրաստ
ձեռքին մէջ, աչքերը յարաշարժ կերպով շուրջը կը խուզարկեն. եւ
կը մտածէ թէ ի՞նչ եզան իր բնկերները...:

Այսպէս, մերժուած ու հալածուած, այս դաւաղիր եւ նենգա-
միտ աշխարհէն, բնութեան արհաւիրքին ու ստոնամանիքին մէջէն՝
կը քայլ գէպի վեր... ու իր ոտքերուն սակ կարծես կ'ոչնչանան աշ-
խարհի փոսքերը, թաղերն ու դահերը... Եւ փոթորիկները ահեղա-
գոչ կը մոռնեն...:

Եւ սակայն Խշոյի տունը կը սպասեն իր մահուան, որպէսզի
հաշիւը մաքրեն իր ընկերներուն: Ու Խշոյի տունը իրարանցումի մէջ
է.

— Ի՞նչ կը կատարուի, — ըսաւ Խշոյ Ալիին, որ գէպի ձորը կը
նայէր ազմուկին հետեւելու համար: — Յայտնի է մէկը Սալեհի
ձայնն է, իսկ մի՛ւսը. միւսը կը թուի թէ Չոլոյի ձայնն է. երբեւ
դռանմարտը սկսած է, տեսնենք թէ ինչո՞վ կը վերջանայ...:

Ալի.— Չոլոյի ձայնը չեմ ճանչնար, բայց անձանթ ձայն մըն
է, որ կու գայ աւելի ուժեղ ու խրոխտ, քան Սալեհինը:

Խշոյ.— Մտահոգիչ պարագայ... հաւանաբար ճնշումի եւ ցա-
ւի սակ է, որ այդ ձայնը այնքան ուժեղ կը փրթի:

Ալի.— Բայց այդ ձայնին մէջ ինքնախառն չեչա մը կայ,
յայթական գունաւորում մը ունի, եւ ոչ թէ ճնշումի կամ ցաւի տակ
փրթած ճիշի կը նմանի. կը տարակուսիմ որ Սալեհ ինչքան ալ կա-
տաղի եւ արիւնաբոս ըլլայ, կրնայ այդ չին յեղափոխական եւ փոր-
ձառու գայլը ուտել...:

Խշոյ.— Տարակուսելու տեղի չկայ, Սալեհ նոյնքան փորձուած
գայլ է, մանաւանդ որ Չոլոն ինկած է թակարդի մէջ եւ անգէն է...:

Ալի.— Բայց ազմուկը երթալով որոտումի ձեւ կ'առնէ եւ ամ-
բողջ ձորը կ'արձագանդէ: Ի՞նչ կը կատարուի, չեմ գիտեր. կը սպա-
սենք որ անոր գործը վերջանայ, որպէսզի ստոնց հաշիւը մաքրենք...:

Խշոյ.— Ալի՛, շո՛ւտ, Մհէն զրկէ՛, որպէսզի մեզի լուր մը բե-
րէ, թէ ի՞նչ կ'ըլլայ ձորին մէջ, իսկ մեր բարեկամները ի՞նչպէս են
եւ ի՞նչ կ'ընեն մարազին մէջ:

Ալի.— Ի՞նչ պիտի ընեն. լուռ նստած են, եւ ցուրտէն կը դո-

դան. քիչ առաջ հաց ուղեցին, եւ տակաւին չգրկուեցաւ:

Սոյս.— Ինչ պէտք կայ հացի, քանի որ քիչ վերջը իրենց հա- շիւր պիտի մաքրուի, եւ իսկապէս ասոնք յիմար են. ինչո՞ւ պիտի գային եւ իյնային մեր ճանկը:

Այլ.— Պատճառը նորէն է. կը կարծէ որ եղբայրը զինք պիտի հիւրասիրէ. չի գիտեր որ եղբայրը իրեն անգամ չի խնայեր, ո՛ւր մնաց ուրիշներուն, եւ թերեւս Աստուածն է որ կ'ուզէ ասոնք բնաջինջ ըլլան, եւ կը զրկէ մահուան սաք...:

Սոյս.— Այո՛, Աստուծոյ ազէտը կայ այս մարդոց վրայ, բայց զարմանալի է որ անգէն են. ի՞նչ ըրին արդեօք իրենց զէնքերը:

Այլ.— Կ'ըսեն թէ իրենք երբեւիցէ զէնք չեն ունեցած. ի հար- կէ չեմ կրնար հաւատալ. բայց Չորսն ի՞նչ ըրած է իր զէնքերը. դոնէ Չորսն պէտք էր ունենար:

Սոյս.— Ո՛վ որ ալ ըլլար, ի հարկէ անգէն պիտի դար. բայց այդ չի նշանակեր որ ասոնք զէնք չեն ունեցած. ասոնց զէնքի ձայնէն այսօր ամբողջ քրտական աշխարհը կու լայ... եւ ի՞նչ կորուստներ տունք, ի՞նչ աղաներ ու թոսուններ, մինչեւ Լեոնաշխարհը ճնշե- ցինք: Ու հիմա ալ եկած են եւ հիւրասիրութիւն կը փնտռեն... Լաւ է որ անգէն եկած են. ատոր համար ասոնք ուտելը դժուար չէ: Բայց զարմանալի է որ ցաւի գաղափար չունին. կոտորածներու ըն- թացքին այնքան մարդ որ կերանք, ճիշ մը անգամ չարձակեցին, երբ դաշոյն կը իրուէր եւ սուրը կ'աւուսէր. միայն մէկ-մէկ թուք կը նե- աէին մեր երեսին: Գուտոյ Ամար, Օսմանէ Հէյհաթ, Գալէյ Ուսըֆ, Ամարէ Մհէ, Շաւէշ, Սերտոյ, որքա՛ն մարդ կերան. ո՛չ ոք ճիշ մը արձակեց բացի թուք մը նետելէն... Գուտոյ Ամարը Ասպետեանն ալ կերաւ, բայց քնացած տանը. ի՞նչ ընէր. իր ակօսները շատ թոյլ էին Ասպետեան մը ուտելու համար, եթէ այդպէս չընէր... Անիկա երկար ժամանակ է որ Ասպետեանի ընտանիքը կը պահէր իրրեւ յի- սուն տարուան բարեկամներու, եւ յաջողեցաւ վստահութիւն ներշնչել Ասպետեանին որ վար իջնէ լեռներէն: Այդ հերոսը իջաւ լեռներէն եւ քնացած տեղը սպաննուեցաւ, ու իրմէ ետք սպաննուեցան իր բո- լոր ազգականներն ու գաւակները. եւ այդ գոհհիկ ոճիրին համար Գուտոյի Ամար կը կարծէ թէ մեծ վարձատրութիւն մը պիտի ստա- նայ կառավարութենէն:

Այլ.— Վատ բան է մէկու մը վստահութեան կրթնիլ եւ անոր հովանիին տակ քնանալ ու քնացած տեղը սպաննուիլ... Ասպետեանը հերոս մըն էր մեծ Շաքէի կաթը ծծած, որուն առջեւ շատերը ծուռիկ եկան եւ սակայն քնացած տեղը զնաց... Իսկ Չորսն Ասպետեանէն

վար չի մնար. տեսնենք Սալեհ ի՞նչ ձեւ պիտի հաշիւը մաքրէ...:

Սոյս.— Այո՛, վստահութիւն է, բայց այդ վստահութիւնը մենք կառավարութենէն սորվեցանք: Կառավարութիւնը անպատճառ մեզ պիտի հետապնդէր, եթէ հայկական կեանքին դէմ այդ վստահութիւնը չգործէինք... Իսկ Չորսյի պարագան զիւրին է. անշուշտ որ Սալեհ զինք պիտի ուտէ, եթէ իրապէս անգէն է:

Այլ.— Բայց չէ՞ք կարծեր որ վաղը կառավարութիւնը կրնայ նոյն վստահութիւնը եւ մեզի դէմ գործել:

Սոյս.— Կրնայ ըլլալ... ինչ որ է, սկսած ենք եւ պիտի շարու- նակենք, վերջը ինչ կը պատահի, թող պատահի. մաքրագործումը պէտք է ամբողջացնել...:

Այլ.— Ձե՛մ կարծեր թէ մինչեւ վերջ պիտի կարենանք շարու- նակել մաքրագործումը... շատ-շատ պիտի փճացնենք մեր ձեռքը ին- կածները, իսկ ասոնք որ հետու են, անոնց ի՞նչ պէտք է ընել:

Սոյս.— Այդ մասին ալ կառավարութիւնը թող մտածէ:

Այլ.— Կառավարութեան կարելի չէ վստահիլ. վաղը կրնայ այս բոլոր եղածներուն յանցանքը մեր վրայ նետել եւ մեզ ալ ջար- դել. արդէն կոիւններու ընթացքին կառավարութեան նենգամտու- թիւնը յայտնի եղաւ. անիկա կը խնայէր զօրքին եւ աշխրեթական ոյ- ժերը առաջ կը մղէր, որպէսզի կոտորուին... եւ քիչ չեն մեր կո- րուստները. աղաներու եւ պէկերու մէջքը կոտորեցաւ...:

Սոյս.— Այո՛, մեր կորուստները շատ են. բայց չէինք կրնար շմասնակցիլ. ատոր փոխարէն մեր շահն ալ մեծ է: Հայերու ամբողջ ունեցած հողն ու ջուրը մեզի մնաց, չհաշուելով իրեղէններն ու գոյ- քերը, ոչխարի հօտերն ու նախիրները:

Այլ.— Բայց տեսնենք թէ պիտի վայելե՞նք...:

Սոյս.— Է՛հ, հիմա կը վայելենք, վերջն ալ կը մտածենք...:

Իսկ կիսափուլ մարագին մէջ՝ Պետոյեանն ու Նորէն, ցուրտէն ու անօթութենէն կը տառապին ու կը մտածեն թէ ձորին մէջ ի՞նչ կրնայ պատահիլ Չորսյին:

— Ըհը՞, — ըրաւ Պետոյեան. — Նորէ՛, Չորսյի ձայնն է որ կու գայ, խաղը սկսաւ, եւ եթէ յաջողի ինքզինքը ազատել, մենք ալ փրկուած ենք...:

Նորէ իր ականջները սրեց եւ՝

— Այո՛, — ըսաւ, — Չորսյի ձայնն է. Աստուած բարին կա- տարէ. ի՞նչ կը պատահի... յայտնի է որ ջղայնացեր է:

Պետոյեան.— Երեւի շատ են բարկացուցեր որ այդպէս կը պո- սայ, ախոռէն հանուած է անպատճառ. եթէ ախոռին մէջ ըլլար, ձայն

պիտի չգար. քանի որ ձայնը ուժեղ է, կը նշանակէ խնդիրը տակաւին վէճի մէջ է: Եթէ յանկարծակի յարձակէին եւ դաշունահարէին, ձայնը շուտ պիտի մարէր. բայց ձայնը երթալով աւելի ուժեղ կը դառնայ. կը նշանակէ թէ ո՛չ կաշկանդուած է, եւ ո՛չ վիրաւոր: Չարմանալի է որ զէնքի ձայնը չի լսուիր: Ինչքան զիտեմ, իր մաւղէքը քովն է. երեւի այնքան ճարպիկ դանսուած է, որ կանխեր է զէնքի գործածութիւնը:

Նորէ. — Եթէ յանկարծակի կաշկանդուած չըլլայ, լաւ է: Ատուած տայ որ յաջողի այս թակարդէն անմնաս դուրս գալ, բայց տեսնենք որ այս շանորդիք մեզի հետ ի՞նչպէս պիտի վարուին: Գոնէ կտոր մը հաց տային, անօթի մեռանք. ուզեցինք ալ եւ չզրկեցին:

Պետոյեան. — Ահա մէկը կու գայ, կարծեմ Ալին է:

Նորէ. — Այո՛, Ալին է:

— Հը՛, ի՞նչպէս էք, — հարցուց Ալին. — երեւի շատ էք պաղեր. կը դողաք. գոնէ քիչ մը կրակ վառէիք:

— Վրանիս կը խնդաս, Ալի՛, այդպէ՞ս կը հիւրասիրեն Ատուծոյ ճամբորդը. փայտ տուի՞ք որ կրակ վառէինք. կտոր մը հաց ուզեցինք, ան ալ չզրկեցիք, — ըսաւ Նորէ՛՝ դժգոհութեամբ:

Ալի. — Է՛հ, ի՞նչ ընենք. պատրաստ չկար. մինչեւ որ շաղկեցին եւ եփեցին, ժամանակ անցաւ: Առէք այս հացը եւ առանց ուշանալու ճամբայ ելէք, որովհետեւ կը վախնանք որ չենք կրնար ձեզ հոս պահել: Չոյն արդէն հեռացաւ, գացէք եւ հասէք իրեն: Չեր հոս գալը հասկցուած է կարգ մը Քիւրտերու կողմէ, որոնք թէ՛ ձեզի կը սպառնան եւ թէ՛ մեզի. ատոր համար Սալեհը լուր զրկած է որ շուտով ճամբու դնենք ձեզ:

Նորէ. — Սալեհը ե՞րբ լուր զրկեց:

Ալի. — Քիչ առաջ. Մհէն եկաւ այնտեղէն:

Նորէ. — Դուք լսեցի՞ք Չոյոյի ձայնը, որ ձորէն կու գար. ի՞նչ է պատահեր: Այդ մասին Մհէն բան մը չըսա՞ւ...:

Ալի. — Չոյոյին հասկցուցեր են որ վտանգուած ես, հեռացի՛ր: Ատոր համար վիրաւորուեր է եւ ըսեր է թէ «ձեզի հիւր եկանք այս սառնամանիքին, եւ դուք կը մերժէք մեզի ձեր հիւրասիրութիւնը, պատրուակելով որ վտանգուած էք»: Բայց ճիշդ չէ. եթէ ձեր կեանքը վտանգուած չըլլար, ո՛չ մենք ձեզ կը հեռացնէինք եւ ո՛չ Սալեհը՝ Չոյոն: Բայց չենք ուզեր որ մեր պատճառով ձեր կեանքը վտանգուի, եւ ո՛չ ալ ձեր պատճառով՝ մեր կեանքը: Հովն առաւ, ժամանակն է, հեռացէ՛ք: Թող ո՛չ ոք ձեզ տեսնէ:

Նորէ. — Հեռանա՛նք. բայց ո՛ւր այս ատեն...:

Ալի. — Այդ ձեր գիտնալիքն է. միայն թէ հեռացէ՛ք...:

Պետոյեան. — Նորէ՛, խօսիլ աւելորդ է. պէտք է հեռանանք, քանի ուշ չէ. կրնան յանկարծ փոխել իրենց միտքը, քայլէ՛, քանի դըլուխնիս վրայ չենք տուած...:

Աւ ճամբայ ելան կռուելու բուքի, ցուրտի, սառնամանիքի զէմ՝ մահէն հեռանալու համար: Արեւը մայր մտաւ եւ անոնք խաւարին մէջ անհեաացան... Ի՞նչ տաժոնելի ճամբորդութիւն: Գիշերուան մութին ու փոթորիկին մէջ մոլորեցան անոնք. դարձան ու դարձան՝ իրարու նմանոց նոյն անտառներու ու լեռներու մէջ. ամէն ինչ թանձր ձիւնով ծածկուած էր, որ ոռնացող փոթորիկէն կը բզրկուուի ու կը նետուի օդին մէջ՝ թանձրացնելով գիշերային խաւարը: Աւժգին հովը շնչել անգամ չի տար...:

Մեծ դժուարութեամբ անոնք յաղթահարեցին այդ բոլորը եւ օրերով թափառելէ ետք, հազիւ կրցան հասնիլ Լ՛նկուզի ձորի աւերակ գիւղը, ուր գտան Չոյոն հիւանդ վիճակին մէջ՝ կիսափուլ տան մը անկիւնը կծկուած:

Եւ Լեռնաշխարհի հանդոյցներուն մէջ ի՞նչ տառապանքներու ենթարկուած են այդ հերոսները, զորս մարդկային վատութիւնը մատներ է այս անառնելի վիճակին, եւ բնութիւնը իր խառութիւններով մարդկային վատութեան պակասն է որ կը լրացնէ: Կարծես վատութիւնն ու բնութիւնը իրարու հետ դաշնակցած ըլլան, խաղալու այս մեծ ողբերգութիւնը, որ չես գիտեր յանուն ի՞նչ բանի տեղի կ'ունենայ եւ որ չ'որակուիր...:

Լ՛նկուզի ձորի աւերակներուն մէջ, ինչպէս եւ բոլոր Լեռնաշխարհի աւերակ գիւղերուն մէջ, որոնք լեռնային անառիկ հանդոյցներու վրայ եւ կամ խորունկ ձորերու մէջ կը գտնուին, փախստահանները տաժոնելի հողեվարք մը կ'ապրին...:

Ահա Պետոյեան եւ Ծարհատեան շարաթ մըն է որ վայրի կատուի մը միտով կ'ապրին: Եւ երբ լրացաւ միտը, մորթն է որ փոխն ի փոխ կը կրծեն. ոմանք իրենց տրեխները կը նետեն կրակի վրայ, որպէսզի կակուղնայ եւ կարելի ըլլայ բան մը ակոսներով փրցնել կաշիէն: Ուրիշներ բուռ մը կորեկ կը նետեն իրենց բերանը՝ քաղցը լրանցնելու համար: Ե՛կնրդի լեռներուն մէջ ապաստանածները չորթան մը կը ծամեն: Սեմալայ շրջանին մէջ գտնուածները աւրուած չողգամով մը, կամ մրսած գեանախնձորով մը կ'անցնեն: Եւ շնամերկի

անտաններուն մէջ մարդիկ կազնի ծառերուն շուրջը կը մաքրեն ձիւնէն, որպէսզի ձիւնի տակ գտնուած վայրի կաղիններով ապրին: Մպագանաց ձորերու մէջ չորցած բոյսերու արմատներով եւ երբեմն ալ որսացուած վայրի այծերով կը սնանին: Տարւորիկի լեռներու մէջ գազի ճիւղերով, եւ շատ քիչ անգամ ալ սպաննուած արջի միտով... Ծովասարի կողերուն վրայ չորցած կանկարի ցօղուններ կ'օգտագործեն:

Կեփինի հովիտներուն մէջ առաջուրնէ մօրթուած ոչխարներու ոսկորները կը հաւաքեն, կը խաշեն եւ ջուրը կը խմեն: Ծառերը սատկած շուներու դիակները կերան. եղան ոմանք որ նոյնիսկ մեռած մարդերը ուղեցին օգտագործել, բայց թոյլ չտրուեցաւ...:

Այդ անտանի կացութեան մէջ իրենց միակ մխիթարութիւնը այն է, որ քրտական շրջաններէն մահէն խուսափածները կու գան եւ կը տեղեկացնեն քրտական շրջաններու իրարանցումը, թէ... ոռւսական ոյժերը անցեր են թրքական սահմանը... Թուրքերը կը նահանջեն... Ռուսերը մօտ օրէն կը կարծուի թէ իջնեն մինչեւ Մուշ... Քիւրտերը պատրաստութիւն կը տեսնեն՝ փախչելու դէպի Տիգրանակերտ եւ այլուր... Այդ իրարանցումի եւ սարսափի մէջ՝ անոնք չեն մոռնար մաքրագործել մինչեւ այդ ատեն իրենց մէջ գտնուած Հայերը, զորս իրենց համար գիշեր թէ ցերեկ կ'աշխատցնէին: Յաճախակի կրկնուած նման լուրեր, շուկներ, խօսքեր՝ քրտական դիւզերէն ճողոպրած Հայերու կողմէ: Կենդանութեան նոր հով մը կ'անցնէր այդ խլեակներու վրայէն, որոնք սկսան զանազան ուղղութեամբ հեռախուզիչ խումբեր զրկել՝ ստուգելու լսածները եւ նոր տեղեկութիւններ բերելու... Անոնք վերջապէս համարձակութիւն ունեցան հեռախուզիչ խումբ մը զրկելու դէպի Մուշ...:

Ու քիչ մը ապահով զգալով իրենք զիրենք՝ սկսան շրջիլ Լեռնաշխարհին մէջ, որսորդութիւններ ընել, որսալով՝ արջ, գայլ, նապաստակ, աղուէս, վայրի այծ, գետերու մէջէն ձուկ եւ վերջապէս ինչ որ կրցան գտնել. նոյնիսկ սկսան իրարու այցելութեան երթալ, իրարու հետ ողջագուրուիլ, իրար խրախուսել եւ իրարու յոյս ներշնչել, անցնող դժբախտ օրերու պատմութիւնները ընել, քիչ մը հպարտանալ, հերոսական գործերու առթիւ, քիչ մը տխրիլ, ունեցած կորուստներուն վրայ, եւ մանաւանդ նոր ու գեղեցիկ օրերու հեռանկարով դօտեպնուիլ...:

Ու ահա գեղեցիկ օր մը, Մուշ գացող հեռախուզիչ խումբը վերագարձաւ Լեռնաշխարհ եւ հրացանաձգութեամբ — լեռնային դանազան հանդուցներուն վրայ — աւետեց Լեռնաշխարհին ոռւսական ոյժերու մուտքը Մուշ, եւ թուրք-քրտական ոյժերու նահանջն ու աղգարհակչութեան խուճապահար փախուսար...:

Ու ի՞նչ ոգևորութիւն տիրեց այդ հիւժած եւ կմախացած մարդոց մէջ, իրենց սրունքներուն վրայ դողալով՝ ծածկուած քուրջերու մէջ: Անոնք աւետեցին այդ մեծ աւետիսը Լեռնաշխարհի բոլոր անկիւններուն մէջ: Ու ձորերէն, անտաններու խորերէն, քարանձառներէն, ժայռերու մէջէն, հովիտներէն ու բլուրներէն՝ այդ խրլեակները ստուերներու նման սկսան շարժիլ, աջ ու ձախ նայիլ, յօրանջել... աչքերնին լայն-լայն բացած հեռուոր հորիզոններուն վրայ, ու կամաց-կամաց սկսան քով քովի գալ, կազմել իրենց դժբախտ կարաւանը, եւ բռնել Մուշի ճամբան...:

Թէեւ յոյնած եւ ուժասպառ, բայց նոր յոյսով համակուած... ասիկա վերջին կարաւանն էր, որ կը թողուր Լեռնաշխարհը, որ թատր դարձաւ մեծ հերոսութիւններու, ինչպէս եւ մեծ սղբերգութիւններու...: Լեռնաշխարհը գատարկուեցաւ, ո՛վ գիտէ անգամ մըն ալ ե՛րբ պիտի լեցուի...:

Արիւնի, աւերի, սարսափի, կոտորածի, վայրադ կռիւներու եւ դազանութիւններու մէջէն անցնող այդ կարաւանը, որ մնաց անօթի ու ծարաւ, տարաւ բնութեան բոլոր դժուարութիւնները, ցրնցոտիներու, վայրի կենդանիներու եւ կրճուած մօրթերու մէջ ծածկուած ու բոլորովին վայրենացած, կանգ առաւ Կուրդքի Լեռնաշրջի թային վրայ, ուր ատեն մը Մամիկոնեան, Իշխանագուն եւ իրենց կորիւնները կը մոնչէին...: Անոնք սրահ մը կեցան, երկար շունչ մը առին, երկիւղածութեամբ, յուզումով եւ տխրութեամբ դիտեցին Տարօնի աշխարհի աւերակները, եւ լսուեցան հեծկլտութիւն ու հառաչանքի ձայները...:

Ազատեան արցունքոտ աչքերով քանի մը խօսք բաւ.

— Տղանե՛ր, ահա՛ մեր առջեւ Տարօնի աշխարհը՝ իր տխուր աւերակներով, գատարկ ու ամալի... Չկայ ժողովուրդը. կոտորուած է... Ահա՛ մեր ետեւ կը թողունք Լեռնաշխարհը, նո՛յնպէս աւերակ, գատարկ եւ ամալի...: Ժողովուրդը կոտորուած է... մենք վերջին մնացորդներն ենք այդ հոյակապ ժողովուրդին: Այդ հսկայ գանդուածէն մնացեր ենք մատի վրայ համբուածներս, որ այսօր դժբախտարար, հարկադրուած ենք լքել Լեռնաշխարհը, եւ իջնել Տարօնի դաշտը, աւերակներու եւ ոսկորներու վրայ լալու... Աւերակ-

ներէ եւ սակորներէ կը փախչինք, աւերակներու եւ սակորներու մէջ կ'երթանք: Հայաստան աշխարհը դարձեր է սակորներու եւ աւերակներու կոյտ մը... Գիտէ՛ք, թէ ի՞նչպէս կոտորուեցաւ Տարօնի աշխարհը, եւ գիտէ՛ք, թէ ի՞նչպէս կոտորուեցաւ Լեւոնաշխարհը: Տառապանքի տեսակէտով Տարօնի հարթավայրի տառապանքը երկար շաւեց. Լեւոնաշխարհի տառապանքը երկար եղաւ. Լեւոնաշխարհը հնարաւորութիւն ունեցաւ մեռնելէն առաջ իր արեան ատուրքը առնել թշնամիէն. Գուրանը այդ հնարաւորութիւնը չունեցաւ դժբախտաբար, որովհետեւ զո՛հ գնաց թշնամիի դաւադրութեան եւ նենգութեան, ինչպէս հայկական միւս շրջանները: Գուրան ծաւալուն հակազդեցութիւն մը չկրցաւ ընել, որովհետեւ առնուած էին իր ոյժերը իրմէ, այլ ցոյց տուաւ միայն կզզիացած ընդդիմութիւններ գիւղերու մէջ, ինչպէս Աւրան, Ալվառինջ, Առաղ, Աղջան, Պաղլու, Գոմեր, Խլլաղաճ: Երկար շաւեց: Մուշը տեւեց շարաթէ մը աւելի, իսկ բաւական երկար տեւեց Սուրբ Կարապետի անտառային շրջանը եւ Քանայ լեռնային շրջանը. այդ մասին պատմութիւնը անշուշտ օր մը պիտի խօսի... Թշնամին Հայութիւնը բնաջնջելու որոշումը տուաւ, սեպհականացնելու համար Հայաստան աշխարհը: Իր այդ ծրագիրը գործադրելու համար՝ դիմեց նենգութեան, խարէութեան, դաւադրութեան եւ յաջողեցաւ հայկական շրջանները առանց դժուարութեան մաքրագործել...:

Լեւոնաշխարհը նախատեսեց դաւը եւ ձրի զո՛հ չերթալու համար, հարկադրուեցաւ ինքնապաշտպանութեան կռիւ մղել, զոր մերսնք շատ իրաւամբ որակեցին Գոյամարտի կռիւ: Մեր Գոյամարտի կռիւր սկսաւ հազար ինն հարիւր տասնհինգին, Փետրուարի չորսին. մեր պաշտօնական դիմադրութիւնը, ճակատի ձեւին տակ, տեւեց ամբողջ վեց ամիս. ամբողջ վեց ամիս մենք կրցանք եօթ ճակատ պահել թշնամիի գերագանց ոյժերուն դէմ, մեր կիսամիջոցներով ծանր կռիւներ մղել, ծանր կորուստներ հասցնել, ծանր կորուստներ տալ, մինչեւ որ սպառեցան մեր միջոցները եւ ինքնապաշտպանութիւնը ինքնաբերաբար խորտակուեցաւ հազար ինն հարիւր տասն եւ հինգին, Յուլիսի քսանեօթին: Մենք այլեւս ի վիճակի չէինք ճակատի ձեւին տակ ինքնապաշտպանութեան կռիւ մղելու: Պաշտօնական դիմադրութիւնը տեղի տուաւ պարտիզանական կռիւներու, եւ ջարդն ու կռիւր իրար խառնուեցան ու թաւալեցան Լեւոնաշխարհի բոլոր հանդիպներուն վրայ եւ մաքառումը տեւեց ամբողջ եօթ ամիս, եւ այդ եօթ ամիսը աննկարագրելի հերոսութիւններու եւ աճարկու ողբերգութիւններու ժամանակաշրջան մը եղաւ Լեւոնաշխարհի համար,

որ կրանեց ամբողջութեամբ մեր ժողովուրդը, ինչ որ դուք գիտէք... Յճա այսօր, հազար ինն հարիւր տասն եւ վեց Փետրուարի տասնեւեօթն է, երբ մենք բախա կ'ունենանք Մուշ իջնելու: Ռուսական ոյժերը եւ հայ կամաւորական զուգերը գրաւեր են Մուշ քաղաքը եւ թշնամին սարսափահար փախեր է...: Չարմանալի է որ ամբողջ մեր օրհասական կռիւներու ընթացքին մենք մնացինք միմակ ու լ՛Քուած... Մեր ճգնաժամը եղաւ երկար եւ տաժանելի, եւ ո՛չ ոք մտածեց մեր մասին... Այսօր այ ո՛չ ոք թող մտածէ մեր մասին, եւ ո՛չ ոք թող փորձէ տէր կանգնիլ մեզի: Մեր տէրը մենք ենք... Նոր կեանք մը կը սկսի մեզի համար, եւ մենք աւելի եռանդով մեր գործը պէտք է որ շարունակենք, այսինքն թշնամին պատժելու գործը. այդպէս կը թելադրեն մեզի Տարօնի աշխարհի աւերակները, եւ մեր բազմահազար նահատակներու անթաղ սակորները: Վատ եւ ցած պիտի ըլլանք, եթէ չաշխատինք մեր նահատակներու վրէժը լուծել. նոյնքան վատ եւ ցած պիտի ըլլանք, եթէ թողունք որ հայրենի հողը ուրիշներուն սեփականութիւն դառնայ... Կը մանենք նոր կեանքէ մը ներս: Ի՞նչ կը սորտէ մեզի, չեմ գիտեր. բայց կը թելադրեմ ըլլալ զգոյշ, չանջատուիլ իրարմէ, հաւաքաբար մտածել, հաւաքաբար գործել, չենթարկուիլ աջէն ու ձախէն եկող դիտումնաւոր փոփոխութիւններու, մանաւանդ չընկճուիլ, որ կրնայ մեզ կորուստի մասնել...»:

Կուրգրքի լեւոնաշխարհին վրայ՝ անոնք, մօտաւորապէս չորս հարիւր հողի, վայրենացած վիճակի մէջ, ինքնաբերաբար ծունկի եկան, հանդիսաւոր երգում բրին, չմոռնալ հայրենի հողը, լսել նահատակներու ձայնը, մնալ իրարու հաւատարիմ եւ հաւաքաբար թըշնամին պատժելու գործը շարունակել, կորովի կերպով եւ անխնայ...:

Ու սաքի կեցան, շարժելէ առաջ, անոնք երեք համազարկ արււին... Առաջին համազարկը Լեւոնաշխարհի հերոսական ժողովուրդին ի պատիւ, որ այդ աճեց Գոյամարտին մէջ ինկաւ, եւ ըսին իրենց մնաք բարովի խօսքը Լեւոնաշխարհին ու Լեւոնաշխարհի հերոսներուն, յուզումով եւ արցունքաւ աչքերով...:

Երկրորդ համազարկը ի պատիւ Գուրանի նահատակուած ժողովուրդին, եւ Կուրգրքի լեւոնաշխարհէն միարեւոյն պոռացին. — Ողջո՛յն Տարօնի աշխարհին...:

Երրորդ համազարկը ի պատիւ վերածնող Հայութեան, եւ բոլորը միաձայն կանչեցին. — Ողջո՛յն վերածնող Հայութեան, որ յաւերժական է եւ անմահ, հակառակ բոլոր վատութիւններու, շարութիւններու եւ արիւնոս փոթորիկներու...:

Ու անոնք Կուրգրքէն սկսան կամաց-կամաց իջնել դէպի վար,

դէպի՛ Մուշ: Անոնց առաջնորդներն են յայտնի Ազատեան, Չորոյ, Պետոյեան, Ֆարճատեան, Գարոյ Պետրոս, Շամմար Թորոյ, Շէնըզի Պետրոս եւ Հայրոյ, Սեմայայ Ստեփոյ եւ Բորոյ, Այեանցից Մարգէ եւ ուրիշները: Ու անոնք զացին նոր պայմաններու մէջ մղելու գոյամարտը՝ Երևան բերելով իրենց արիութիւնն ու յանգդնութիւնը այլ հորիզոններու վրայ՝ ազատութեան եւ անկախութեան արշալոյսի ճանապարհը բանալու համար...:

Ուժեղ բախումներու մէջ Լեւոնաշխարհի փշրուած, հերոսական շղթային օգակները նո՛յն արիութեամբ Հայաստանի այլ հորիզոններուն վրայ հայկական կեանքի ազատութեան եւ անկախութեան շէնքը պիտի կերտեն: Անոնց հետ է Լեւոնաշխարհի ինկած հերոսներու՝ Վահագնեանի, Մամիկոնեանի, Արծրունիի, Սոսիստունիի, Բշխանեանի, Ասպետեանի, Սատունիի միտքն ու կամքը: Ի՞նչ նշանակութիւն ունի եթէ Բշխանազունը զնդակահարուած է Մշոյ գինուորական դաշտին վրայ եւ դիակը անթաղ մնացեր է՝ զէպի Կարին գացող ճանապարհի եզերքին, կամ Վիշապեանը խեղդուած է եւ իր մարմինը անյայտ է: Այն ինչ որ մնաց հոն, այն չէ որ կ'արժէ, այն ի՛նչ որ հեռացաւ անոնցմէ, ա՛յն է որ կ'արժէ, եւ այն է որ կը քալէ իրենց կորիւններուն հետ, արիւնտ փոթորիկներու մէջէն՝ ի խնդիր հայկական կեանքի վերակառուցման...:

Եւ սակայն արիւնտ փոթորիկները աննախընթաց սաստկութեամբ մը պիտի թաւային կեանքի ճամբաներուն վրայ եւ աշխարհները արիւնի ու աւերի պիտի վերածեն...:

Ապրողան ցոյց պիտի տայ կեանքի երթը...: